



ԵՐԵՆԻԿ  
ԵՄԻՐԱՅԱՆ

# ԿԱՐՄԱՆԸ

ԵՐԿՈՒ ԳՐԲՈՎ

«  
«  
այսպիսին  
հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ 1968

Նկարիչ՝ Ռ. Պ. ՆԱՍՈՒՇՅԱՆ

Խմբագրիչին՝ Ա. Ս. ՀԻՇՈՅԱՆ  
Ս. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Дереник Карапетович Демирчян

**Вардананк**


Книга вторая

7—3—3

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1968





**Մ**ախարարների Պարսկաստան գնալուց հետո խոռվքն ու խառնաշփոթը տարածվեց ողջ Հայոց աշխարհում: Հայ նախարարները Արտաշատի ժողովի վճիռներից հետո քաշվեցին իրենց աշխարհները և անցնելով առօրյա գործերին՝ սպասում էին Պարսկաստանի լտերին:

Երկրում ստեղծվեց մի խառնակ, անորոշ, անտանելի վիճակ: Երկու տերեր՝ իրար թշնամի՝ իրար դեմ լարված սկսեցին իրենց հակամարտ գործը:

Վեհմիհր հազարապետը, Գենշապուհը և Որմիզդ մոզպետը, որ Այրարատյան գաշառվայքի ըմբոստ ժողովրդից զգուշանալով քաշվել էին Սյունիք՝ նախարարների Պարսկաստան գնալուց հետո գլուխները կրկին հանեցին իրենց որջերից և սկսեցին հարկահանների հետ դուրս գալ, շրջել երկիրը, սեղմելով օղակը ժողովրդի վրին:

Բռնադատման և հալածանքի ենթարկվել էին ոչ միայն վանքերը, այլև շեներն ու ավանները, վերջը՝ քաղաքներն ու անգամ մայրաքաղաքը: Հարկը հանվում էր անհաշիվ, տասնապատիկ, ծեծով ու սպանություններով: Նպատակը հուսահատության հասցնելն էր և ստիպելը հավատադրացության:

Այս ճնշումների հետևանքն այն եղավ, որ ոչ միայն բողոքող և դիմադիր մարզիկ՝ ինչպես արտաշատցի և ակոռեցի շինականներն էին՝ այլև շատ սերիշներ՝ հեռու-մոտիկ վայրերից փախած թափառում էին տեղից տեղ և ելք որոնում փրկության: Նրանց կարելի էր հանդիպել ճանապարհներին, շեներում, ուր խմբված

պանգատվում էին, բողոքում, զայրանում պարսիկների և նախարարների դեմ:

Ի՞նչ է լինելու սրա վերջը — ոչ ոք չգիտեր: Ո՛չ կաթողիկոսը, որ տարակուսած նստել էր էջմիածնում, ո՛չ Ատոմը, որ անստույգ վիճակում շէր իմանում ինչ բանի ձեռնարկի: Նա պարզ տեսնում էր ժողովրդական զանգվածների անհանգստությունը և ջանում էր կանխել որևէ տարերային պոռթկում, քաջ գիտենալով, որ դա կհամարվեր ապստամբություն և պարսիկ բերդակալները Արտաշատ, Զարեհավան և այլուր առիթ կհամարեին հարձակվել նախարարական ցանուցիր ուժերի վրա, խեղդել բնում ամեն ինչ: Եվ քանի որ միաժամանակ Ատոմը չգիտեր, թե ինչ զորքերով և ինչ նպատակով են շարժվում երկրի վրա ուրաջյալ նախարարները, նա առայժմ ուժերն էր նշում, հաշվարկում, խմբում՝ արքունական զորքի համար՝ ինչպես պատվիրել էր Վարդանը: Նախարարները՝ թե ուխտյալ և թե կողմնակիներ՝ շատ անտարբեր ու տարտամ, հաճախ դժկամ էին վերաբերվում տերունական զորքի գործին: Միայն Ղևոնդ Երեցը ուրիշների հետ շրջում էր շեններն ու ավանները և բորբոքում ժողովրդի առանց այն էլ բորբոքված դիմադրական ցասումը:

Դրությունը տագնապալից էր, և տագնապը առավելապես սաստկանում էր նախարարներից լուր չստացվելու պատճառով:

Երկրում խաղաղ խռովք էր և շարագուշակ խաղաղություն:



Մամիկոնեից տիկինը ապրում էր ավելի մեծ տագնապի վիճակ: Նրան շատ անհանգստություն էր պատճառում, բացի իր ամուսնու ճակատագիրը, որ մտահոգել էր համայն Հայոց աշխարհը, նաև իր սկեսրոջ առողջական դրությունը, որ ճիշտ է, մի փոքր թեթևացել էր, բայց կասկածելի էր, որ նա կդիմանար հետագա ցնցումներին: Նա, որպես ողջ տոհմի հարգևոր մայրը, ապրում էր ծանր օրեր: Իր ժամանակ նա իմացավ Հազկերտի դաժան հրամանը՝ ընդունել զրադաշտը կամ գնալ պատասխան տալ նրա ատյանի առաջ. նրանից չթաքցրին նաև, որ Վարդանը արդեն գնացել է Պարսկաստան: Նա պահանջում էր ամեն բան հայտնել իրեն: Եվ սովոր էր նրանից որևէ բան ծածկել, որ դուրս էր գալիս խաբել

նրան: Իսկ դա չէր համարձակվի ոչ ոք: Մամիկոններից Մեծ Տիկինը տոհմի ոգին էր, նրա խիղճը: Նա մայրն էր մի զորավարի, որին երկրի հեռավոր վայրերում անգամ սրբացնում էին: Այդպիսի մի մարդու մորը պետք էր հայտնել ամեն բան:

Եվ ահա, շնայած իր ցնցված հոգու վտանգներին՝ նա տեղյակ ամեն անցողարձի՝ նստած անկողնում, սպասում էր իր զավակին:

Կարմիր լույսը աշտանակում պլպլալով դողդողացնում էր նրա կերպարանքը, երբ ներս մտավ Մամիկոններից տիկինը՝ հարցնելու նրա առողջութունը:

— Մեծ Տիկին, ի՞նչ կուզես, — հարցրեց Մամիկոններից տիկինը՝ բարև բռնած կանգնելով նրա մահճի մոտ:

— Լուրերն ասա, ի՞նչ գիտես, — խուլ խոսեց Մեծ Տիկինը՝ կոացած իր ծնկների վրա:

— Լուրեր չկան դեռ. ուշանում են:

— Հո չե՞ն նահատակվել... — փորձող աչքերով խորը նայեց Մեծ Տիկինը Մամիկոններից տիկնոջը:

— Ոչ, Մեծ Տիկին...

— Բռնավորը խեղճ է՝ դրել խեղճ զավակներին, — գուցե Մեծ Տիկինը...

— Ո՞վ գիտե, Մեծ Տիկին, աստված ապավեն, գուցե փրկվեն:

— Ձոհրա՞կս ուշացավ, — հառաչեց Մեծ Տիկինը:

— Հասվե՞հաս է, Մեծ Տիկին, օրերը լցվեցին, — ասաց Մամիկոններից տիկինը՝ մտահոգվելով ինքը՝ թե ինչու համար է գալիս Ձոհրակը:

— Մահը դոնից ներս է եկել: Տեսնեմ Վարդանիս ու Ձոհրակիս՝ հետո մեռնեմ... Գիշերս Մուշեղ Սպարապետն էր եկել. ներս մտավ, նստեց մահճին, գանգուրները թափ տվեց վրաս, ասաց՝ «Սպարապետի հոգին վառքի մեջ է»:

Մեծ Տիկինը հանկարծ սրվեց, հայացքը փայլեցրեց և կույրի պես, որ նայում է ու չի տեսնում, նայեց Մամիկոններից տիկնոջ աչքերից այն կողմ թափանցող հայացքով:

— Հա՞...

— Ի՞նչ է, Մեծ Տիկին:

— Վարդանիս ձայնն է...

Մամիկոններից տիկինը գլուխը կախեց: Նրան ազդում էին մարգարե կնոջ խորհրդավոր աչքերը, կարկառուն դեմքը: Հինա-

վուրց կաղնու պես կուացած ու գոս՝ նա իր ոսկրոտ ձեռները տա-  
րածել էր օդի մեջ՝ շոշափելու համար ինչ-որ կերպարանքներ:

Մամիկոնեից տիկինը չգիտեր ինչպես հանգստացնել պառա-  
վին, որ գերեզմանների աշխարհումն էր զգում իրեն: Տիկինը փոր-  
ձել էր և գիտեր, որ նրան ոչ մի կերպ հանգստացնել չի կարելի:  
Պառավը ուշիմ էր և խստապահանջ: Նա չէր վախենում ոչ մի ճըշ-  
մարտությունից և չէր ընդունում ոչ մի մխիթարանք ու հորդորում:

— Տո՛ւր գիրքը, — ձեռը մեկնեց դեպի ս. գիրքը Մեծ Տիկինը:

Մամիկոնեից տիկինը տվեց գիրքը, և պառավը դրեց գիրքը  
կրծքին ու մնաց մի պահ այդպես: Հետո ասաց.

— Գնա՛ օթևանդ:

Մամիկոնեից տիկինը դուրս ելավ նրա մոտից ճնշված ու եր-  
կյուղած:

Եվ նոր էր դուրս եկել նա Մեծ Տիկնոջ մոտից, որ խլրտոց լըս-  
վեց ամրոցի դարբասի մոտ: Դուրս եկավ պատշգամ և մթան մեջ  
նկատեց կանանց կերպարանքներ: Նրանք իջան նժույզներից պա-  
հակ հեծյալների օգնությամբ: Սենեկապետը վազեց ներքև:

— Շուշանիկ տիկինը Անահիտ ու Աստղիկ օրիորդների հետ, —  
հայտնեց սենեկապետը վերադառնալով ու կրկին իջնելով ներքև,  
եկողներին առաջնորդելու վեր:

Մամիկոնեից տիկինը ուրախացավ: Շուշանիկ տիկինը Անա-  
հիտի և սրա բրոջ՝ Աստղիկի հետ բարձրացավ սանդուղներից:  
Նրանք ողջագուրվեցին:

— Հիվանդ ես եղել, Անահի՛տ, իմացա, — գուրգուրեց Անահի-  
տին Մամիկոնեից տիկինը և ձեռքը բռնած ներս տարավ, — Աստ-  
ղիկ, ի՛նչ մեծացել ես, արի:

Նստեցին, սկսեցին փոխադարձ հարցուփորձը:

Շուշանիկ տիկինը պատմեց Ռշտունյաց ամրոցի անցուդարձը  
և ասաց, որ լուր չկա նաև այնտեղ:

— Մեծ Տիկինն է տվալտանքի մեջ, ի՛նչ անեմ՝ չգիտեմ, —  
ասաց Մամիկոնեից տիկինը:

— Մե՛նք շենք դիմանում, նա ինչպե՛ս անի, — հառաչեց Շու-  
շանիկ տիկինը:

Նա վեր կացավ գնաց Մեծ Տիկնոջ մոտ:

Անահիտը՝ ինչպես սովոր էր՝ մոտեցավ նստեց Մամիկոնեից  
տիկնոջ ծնկների մոտ բարձին: Մամիկոնեից տիկինը մեղմ շոյեց

նրա գանգուրները և սկսեց դիտել նրան: Այս անգամ դիտեց նրան որևէ սիրող երիտասարդի աչքով: Եվ մտածեց, որ Արտակը շատ ընտիր ճաշակ ունի: Անահիտի մուր ու նրբնի հոնքերը գրչանկարի պես նրա լուսնկա դեմքին անկրկնելի շուք էին տվել: Նա հեքիաթական ձյունն մի էակ էր կարծես, որ հովից կարող էր փոշիանալ օդի մեջ:

Շուշանիկ տիկինը եկավ և տխուր հայտնեց, որ Մեծ Տիկինը անհանգիստ է որդու կարոտից:

— Ի՞նչ էիր անում Մասիսում, Անահիտ,— հարցրեց Մամիկոնեի տիկինը:

— Մի մատյան կազմեցի, տիկին,— պատասխանեց Անահիտը հուզված ձայնով, կարծես դրանով նա անզգուշաբար մատնեց իր հոգու ինչ-որ մի գաղտնիքը,— գրեցի Մովսեսն Խորենացու վիպերգությունից դրվագներ և ծաղկեցի:

— Կավ նվեր է... — ասաց Շուշանիկ տիկինը և ժպտաց յուրովի:

Մամիկոնեի տիկինը չհասկացավ ոչինչ: Անահիտը կարմրեց և դուրս գնաց: Աստղիկը հետևեց նրան:

— Սա ի՞նչ է դառել, խեղճ թռչնիկս,— ասաց Մամիկոնեի տիկինը:

Շուշանիկ տիկինը պատմեց Անահիտի վիճակը և նրա սրտի գաղտնիքը: Մամիկոնեի տիկինը աչքերում թախծալի ժպիտ խաղաց: Նա հառաչեց.

— Տեսնես ի՞նչ բախտ է սպասում խեղճուկներին: Արտակն էլ ազնիվ երիտասարդ է:

— Վարդերը բացվեցին ձմեռվա բուքերին. որքա՞ն է նրանց կյանքը,— հառաչեց Շուշանիկ տիկինը:

Մամիկոնեի տիկինը վեր կացավ և զնաց դեպի պատուհանը, նայեց դուրս: Գիշերը իր խավարով լի աչքերը լայն բացեց նրա առաջ: Ոչինչ չէր երևում:

Հանկարծ կայծակը զարկեց ինչ-որ մի տեղ, հեռավոր լեռների բավիղներում, և ամպը բարկացած մոմուաց: Սկսվեց տեղատարափ:

— Վա՛յ ճանապարհի ուշացածներին,— ասաց Մամիկոնեի տիկինը և գլուխն օրորեց:

Նա երկար նայում էր անձրեկին, և նրա սիրտը սուր ու խոր ճմլվում էր ու տխրում:

— Ի՞նչ եղան, լո՞ւր շեկավ,— մրմնջաց նա, շարունակելով նայել խավարի մեջ:

— Աստծուն իրեն է միայն հայտնի,— խոսեց Շուշանիկ տիկինը:

Անահիտն ու Աստղիկը վերադարձան. Անահիտը՝ ձեռք ծոցի մեջ, ուր ինչ-որ մի իր էր պահել: Նա լսելով տիկինների խոսակցությունները՝ շուգեց խանգարել և աննկատելի շարժումով նստեց Շուշանիկ տիկնոջ ծնկների մոտ: Աստղիկը նստեց նրա մոտ: Մամիկոնեից տիկինը ետ շրջվեց և հարևանցի նայելով Անահիտին՝ իր մտքերով տարված՝ դիմեց Շուշանիկ տիկնոջ.

— Ա՛խ, աղջիկս, ինքն էլ մի օր դադար չունեցավ, մի օր չնստեց տանը, դրահը, ասեմ, կարգին չհանեց վրայից: Այսքան տարի ձեր մայրն եմ, նրա կինը՝ մի օր ձեզ բուրբուր շտեպս մեր տան հարկի տակ, նրան էլ ձեր միջին: Մի՛շտ դուրսը, մի՛շտ պատերազմներում, մի՛շտ աստանդական, կյանքն այդպես մաշեց գնաց:

— Ի՞նչ անենք, մայրիկ, Մամիկոնեից տոհմի պատիվն էլ այդ է:

— Բան չեմ ասում, աղջիկս, պատիվը որ վերցրիր՝ պարտքն էլ հետն է: Մեզ գոհն է հարմարական: Մենք ազգի ծառաներն ենք: Ես բախտն եմ ասում: Եթե ոչ՝ իհարկե, թող նահատակվենք՝ միայն պատիվը բարձր պահենք:

— Իհարկե, մայրիկ, թող շասեն, թե Մամիկոնյանները պարտք մնացին ազգին. լավ է՝ ազգը մնա պարտք, և մենք էլ ազգ պարտքը չպահանջենք:

— Էհ, Շուշանիկ, ես որ հարսնացա՝ Գնունյաց տիկինն ասաց. «Դստրի՛կ, շեն տուն ես հարս գնում»: Ասացի. «Ինչո՞վ է շեն Մամիկոնեից տունը»: Ասաց. «Մամիկոնյանները ազգի ծառան են»: Նրա խոսքն եմ ասում: Ծնորհակալ եմ աստծուց: Թող աստված ինձ ու հորդ պարտական չթողնի ազգի առաջ, ճակատներս բաց մըտնենք գերեզման՝ ուրիշ էլ ուրախություն չունեմ: Մենք Մամիկոնյան ենք:

Շուշանիկ տիկինը մի մատյան վերցրեց և սկսեց թերթել:

— Նա չի ընդունի զրադաշտը, — ասաց լի հավատով Մամիկոնեից տիկինը, — հազար կտոր կլինի՝ չի ընդունի: Գիտեմ բնավորությունը: Գիտեմ՝ կստիպի բռնավորը ուրացման: Տա աստված, դիմանա նեղության:

— Հեռի՛ իրենից, մայրիկ, — հառաչեց Շուշանիկ տիկինը և մատյանը թափով դրեց ծնկներին, — հեռի իրենից: Մամիկոնեից սոհմը հող ու մոխիր կդառնա:

Մամիկոնեից տիկինը երեսը խաշակնքեց.

— Ապա՛... Աստված ինքը օգնական պահապան:

Հետո բազուկները տարածեց դեպի երկինք.

— Տե՛ր աստված, խնդրում եմ մեղավոր բերանովս. կենդանի է՛ թող անպարտ գա, անպարտ է՛ կենդանի գա:

Մամիկոնեից տիկինը շոքեց, սկսեց աղոթել:

Շուշանիկ տիկինը, Անահիտն ու Աստղիկը հետևեցին նրան: Երբ վերջացրին աղոթքը, Անահիտը հեծկլտաց և ընկավ բարձին:

— Մի՛ լար, աղջի՛կս, — գուրգուրեց նրան Շուշանիկ տիկինը, — աստված մեծ է, կզան բոլորը անբիծ ու կենդանի:

— Գիտեմ, Շուշանիկ տիկին, իհարկե, անբիծ ու կենդանի կզան, ապա ինչպե՞ս պիտի գան, ուրացա՞ծ... բայց կենդանի՞ են...

— Կենդանի՛ են, աղջի՛կս, մի՛ կասկածիր...

Հանկարծ ամրոցի զամփոռները բամբ հաչեցին և վազեցին դեպի գիշերային խավարը: Դարբասի պահակներն անհանգստացած առաջ գնացին:

Մթան քողի տակ ինչ-որ սևինքներ խլրտացին և եկան ծածկըվեցին դարբասի մոտ: Դարբասը հին ձայնով ճռնչաց, և ներս մտան հեծյալներ, որոնց նժույզների տրոփից երևում էր, որ շատուր չէին:

— Զոհրա՛կս, Զոհրա՛կս, — լսվեց լացի-ուրախության ձայնով Յուզաբերի գոչոցը:

Բակում իրար անցան: Մամիկոնեից տիկինն ու Շուշանիկ տիկինը աղջիկների հետ դուրս վազեցին: Մարխի լույսերը անձրևից մարելու մոտ՝ հազիվ լուսավորեցին եկվորներին: Մամիկոնեից տիկինը առաջինը ներքև վազեց և չնայած անձրևին՝ թափով գրկեց

մի ջլուտ և նիհար, բարձրահասակ երիտասարդի: Շուշանիկ տիկինը նույնպես վազեց և խլեց մոր գրկից երիտասարդին:

— Զոհրա՛կը, Զոհրա՛կը,— լավում էր շորս կողմից ձայներ:

Զոհրակին վերև բերին, իսկ սպասավորները իջեցրին նժույգներից նրա բեռներն ու իրերը:

Եկան ներս: Զոհրակը խիստ նայեց մորը, քրոջը, հարևանցի՝ Անահիտին ու Աստղիկին և անձրևաջուրը շոշափելով իր զգեստի վրա՝ կանգնեց անվճռական:

— Քրջվել ես,— մորմոքալով ասաց Մամիկոնեից տիկինը:

— Հա՛, մի փոքր...

— Դե գնա, փոխի՛ր հագուստդ,— շտապեցրեց մայրը:

Զոհրակը ոչինչ չպատասխանեց և մռայլ ու հոգածու նայեց շորս կողմ՝ մի բան հիշել կամեցողի պես դարձավ մի սեպուհի, որ ամրոցից դուրս տեղավորված զորագնդից էր և դիմավորել էր նրան:

— Զորագունդն ինչո՞ւ Զարեհավանում չէ... նրանք կմտնեն Բագրևանդից, իսկ սրանք այստեղ քաշվել են վրանները: Գլուխս չի մտնում...

— Սպասում են Սպարապետին,— ասաց սեպուհը:

— Հայրիկը չի՞ եկել,— հարցրեց Զոհրակը մորը:

— Դեռ ոչ:

Զոհրակը մռայլ գլուխը տարավ բերեց.

— Հազիվ պրծնի՛ Հազկերտի ճիրաններից: Եվ ինչո՞ւ ուշացրիք ինձ կանչելը: Կգնայի հետը, թե փորձանք էր՝ միասին կլինեինք: Մի բան կանեի:

— Լավ, գնա հագուստդ փոխիր, թրջված ես,— ասաց Շուշանիկ տիկինը թեթև ժպիտով և կարոտալի հայացքով շոյելով զորական եղբորը, որ այրական տեսք էր ստացել Հունաստանում և հասակավորի հովեր էր առել:

— Հիմա, հիմա: Հա՛, Մեծ Մայրի՛ս ինչպես է: Արթո՞ւն կլինի:

— Գնա մոտը, չի քնում նա... — ասաց Մամիկոնեից տիկինը:

Զոհրակը արագ գնաց Մեծ Տիկնոջ մոտ: Նրան հետևեցին բոլորը: Երբ նա ներս մտավ, Մեծ Տիկինը գոչեց և դողահար գրկեց նրան.

— Զայնի՛դ մատաղ, եկա՞ր, ձագո՞ւկս...

Մեծ Տիկինը հեծկլտաց:

— Մի լար, Մեծ Մայրի,— ժպտաց Ջոհրակը,— լացը թշնամոս մորը պիտի տանք:

— Հապա՛ որ, հապա՛ որ... զինվորյա՛լ մանուկս, հասակի՛դ մատաղ, զենք-զրահի՛դ մատաղ:

Մեծ Տիկինը զրկից բաց չէր թողնում Ջոհրակին: Ջոհրակը որբան հնարավոր էր մեղմ՝ իր պողպատ մատների համար՝ բռնեց Մեծ Տիկնոջ ուսը.

— Հետո՞, ա՛նձդ ինչպե՛ս է, ա՛նձդ:

— Վա՛յ, կամա՛ց, գառնո՛ւկս, կմեռնեմ,— խուլ ծիծաղով ուցավով ասաց Մեծ Տիկինը:

— Մի մեռիր, Մեծ Մայրի, հաղթենք՝ հետո. ես ինքս կգամ գուսանով, պարով, շուքով կթաղեմ քեզ:

— Հա՛, գառնուկս, հա՛, մատա՛ղս... Երանի չէ՞ր, անուշ հող ածես սրտիս, քնեմ ես էլ...

Ու կարոտալի վեր նայեց մյուսներին.

— Հապա ի՞նչ, հողն անուշ է. հայրենին անուշ է...

Այդ պահին նրա աչքովն ընկան Անահիտն ու Աստղիկը.

— Անահի՛տս, այն մյո՛ւսը, եկե՛ք, մոտեցե՛ք, երեսներդ համբուրեմ, ծաղիկնե՛րս...

Անահիտն ու Աստղիկը մոտեցան, Մեծ Տիկինը դողահար համբուրեց նրանց: Հետո աչքերը հռոնց նրանց.

— Աչքներդ կյանք չե՛ն մտել, ապա մի նայեցե՛ք աչքերիս մեջ՝ բան տեսնեմ:

Մեծ Տիկինը խոր նայեց Անահիտի ու Աստղիկի աչքերի մեջ, ապա նաև Ջոհրակի աչքերի մեջ.

— Չէ՛, կենդանի են զինվորյալներս՝ Վարդանս, Արտակներս, Ներշապուհս, Գաղիշոս...

Ապա վեր նայեց Մամիկոնեից և Շուշանիկ տիկիններին.

Ամենքն էլ իմ որդիքն են: Տա՛ր աստված, գային, տեսնեի շորս կողմս բոլորված, աշխարհը խաղաղ, ազգ ու ազինքը խոնգար: Ի՞նչ անեմ, բռնավորը շար է, կործանում է բերում աշխարհին: Գրա համար է գնացել զինվորյալս, որ ազգ ու ազինքին խաղաղություն բերի: Թող աստված առաջ օտար աշխարհներին խաղաղություն տա, հետո Հայոց աշխարհին: Է՛, գնացեք:

Բուրբը մեկ-մեկ համբուրեցին Մեծ Տիկնոջ ձեռքը և գուրսեկան նրա օթևանից:

— Մեծ Մայրիս մեր տան սյունն է... — խոհուն եղանակով շշնջաց Ջոհրակը, որի զվարթ տրամադրությունը փոխվել էր Մեծ Տիկնոջ խոսքերից:

Մամիկոնեից տիկինը Ջոհրակին տարավ թրջված զգեստը փոխելու: Իսկ Շուշանիկ տիկինը աղջիկներին տարավ իր մոտ:



Երկար ժամանակ լուրերի ընդհատվելը նախարարների վիճակի մասին՝ սկսեց խիստ անհանգստացնել Հայոց աշխարհը: Հովսեփ կաթողիկոսը, որ եպիսկոպոսներին կարճ ժամանակով արձակել էր իրենց աշխարհները, ժողովրդին արթուն պահելու, հրաման ուղարկեց կրկին հավաքվել Արտաշատ:

Լուրերի ուշանալը շարագուշակ էր այլևս: Թերևս նախարարները բանտարկված են կամ նահատակված: Գուցե և զորք է ուղարկել Հազկերտը, և զորքը ճանապարհին է: Անձկությունը խեղդում էր կաթողիկոսին: Նա սկսեց տազնապել:

Այնժամ նա սուրհանդակ ուղարկեց երկրում մնացած նախարարներին՝ հատկապես ու խստագույնս պատվիրելով անմիջապես գալ Արտաշատ՝ խորհելու և արհավիրքը կանխելու.

«Եթե չգաք՝ համարեցեք, որ վախճանն է Հայոց աշխարհի»:

Արտաշատն ապրում էր տարտամ, սրտմաշուկ օրեր: Սովորաբար աղմկալի մայրաքաղաքը լռել, քաշվել էր ինքն իր մեջ: Փողոցներում շարժում չկար: Միակ աշխույժը, որով լցնում էին փողոցները, դարբիններն ու պղնձագործներն էին իրենց չկլկոցներով: Նրանք էլ վաղ փակում էին իրենց արհեստանոցները և խրմբվում արհեստանոցների շարքի ծայրին մի նեղլիկ փակուղիի մեջ, որ կազմվել էր այգիները պատվարող բարձր պատերով: Քաղաքի պարիսպների վրա, բուրգերն էին ելումուտ անում պարսիկ և հայ զինվորները՝ խեթ ու թշնամաբար նայելով իրար: Բերդապահը տարակուսած նայում էր պարսիկների կողմը և զլուխը տարուբերում: Քաղաքացիք ևս ատելութամբ էին նայում պարսիկներին և հանդիպելիս անեծքներ մոմռում:

Այս տարտամ սրտմաշուկը ավելի ծանրացնում էին զանազան շենների պարսիկ հարկահաններից փախած և թափառական

դառած շինականներն ու վանականները, որ խմբեր կազմած շրջում էին քաղաքում և շրջակայքում և լցնում շուրջը տազնապով ու տարակուսանքով: Դրանց մեջ էին ոչ միայն Սյունյաց աշխարհից և Մասյաց Ոտնից եկած վանականների խումբը Գրիգորիոս վանականի և Ակոռիի և այլ վայրերի շինականները՝ Առաքելի գլխավորությամբ: Այդպիսի խմբերն սկսում էին իրար հետևից դուրս գալ շենքից ու վանքերից և լցվել մայրաքաղաք՝ օգնություն ըստանալու:

Երեկոյան ստվերները սողացին այգիներից ու հովիտներից: Արտաշատը ապրում էր իր տխուր օրվա վերջին ժամերը: Քաղաքադռանը մարդիկ շարժվեցին: Նոր էր դուռը փակվում, որ իր թիկնապահների հետ, փրփրակալած նժույգների դոփերով ներս մտավ Ատոմ Գնունյաց նախարարը:

Նա կանգ առավ դռանը այն՝ արքունական տան, որտեղից նախարարները մեկնելուց հետո տեղավորվել էր կաթողիկոսը՝ իբրև մարմնական իշխանության տեղապահ: Ատոմին ընդառաջեց սպասավորը, և նրանք գնացին ներս: Կաթողիկոսը տխուր նստած էր հատակին փռած օթոցներին: Նա վեր կացավ և սիրագործով ընդունեց նախարարին, որը մի փոքր կարմրեց և կաթողիկոսի աջն առնելով՝ մնաց կանգնած: Սպասավորը բարձ մատուցեց նախարարին: Կաթողիկոսը նայեց նրան տազնապալի հայացքով և ասաց.

— Կուրբըր լուռ եմ, իշխանիկս, վտանգյալ եմ և տազնապյալ, ոչինչ բարի վախճանի հույս չունեմ:

— Անշուշտ գործը շրջվել է հակառակ կողմը,— ասաց Ատոմը:

Կաթողիկոսը դառնությամբ ծեծեց գլուխը.

— Վա՛յ այն աշխարհին, որի հավատարիմներն էլ իր դեմ պիտի կանգնեն... Մամիկոնեից տե՛րը, Արծրունյաց տե՛րը, Հապարապե՛տը, Արտակ Մոկա՛ցը...

— Դեռ մի դնիր վճիռն այդպես, հոգևոր տեր, թող գա՛ն դեռ, տեսնենք ի՛նչ հավատի են դեռ,— սպառնալի շեշտով խոսեց Ատոմը:

— Առաջ ես կմեռնեմ, հետո նրանք կուրանան... — վճռական եղանակով ասաց կաթողիկոսը:

— Դեռ լուրը թող ճշմարտվի, հոգևոր տեր, դեռ շմեռնե՛նք,

դեռ կովենք: Մի կասկածիր այս մասին, հոգևոր տեր, հետախույզներ եմ ուղարկել, — շարունակեց Ատոմը, — պարտական շենք մնա Հայոց աշխարհին... — հետո շարախինդ նայեց հատակին, — բայց լո՛ւրը ուշանում է, ուշանում եմ ե՛ս...

— Ի՞նչ բանի, — հարցրեց կաթողիկոսը տխուր հույսով:  
Ատոմը ինքն իրեն խոսելու պես ասաց ցածր.

— Պիտի կազմեմ դիմադրությունը, հո շենք թողնի մտենն երկիրը թշնամու զորքով:

Կաթողիկոսը ծնկները ծեծեց.

— Եվ ձեռդ պիտի բարձրանա՞ նրանց վրա...

— Ես զորական մարդ եմ, հոգևոր տեր, խնայելու իրավունք չունեմ:

Կաթողիկոսը մռայլվեց, մտածեց այդ մասին և ապա քննող հայացքը դարձրեց դեպի Ատոմը:

— Բայց կարո՞ղ եք մնացած հավատարիմներդ, պատրա՞ստ եք:

— Ռազմիկի համար պատրաստ-չպատրաստ չկա, հոգևո՛ր տեր: Պատերազմն եկա՞վ՝ հարկ է ընդունել:

Ատոմը ինքն էլ դառն մտքերի մեջ ընկավ:

— Իմ սիրտն էլ է կրծում կասկածն ու վարանքը: Մի՞թե Մամիկոնեից տերն ու Արտակ Մոկացը կուրանան իրենց խիղճը: Բայց կոփվը մահու է, կենաց չէ:

Սրտապնդիչ էր նայելը գեղատեսիլ նախարարին՝ իր ոսկե-նկար սաղավարտով, ականակուռ սրով, սլացիկ նոճենի հասակով: Նրա դեմքին շողում էր կուռ վճիռը, անընկճելի կամքը, նուրբ խելքը և կովելու, հաղթելու կիրքը:

Փողոցից մեծ բազմության ոտնադոփեր լավեցին: Ատոմը գրեաց դեպի պատուհանը: Հապշտապ, գրեթե վազելով գալիս էին Ղևոնդ Երեցը, Եզնիկը և Եղիշեն: Նրանց ուղեկցում էին հեծյալ պինվորներ, որ երևում էր, հեռվից էին գալիս: Նրանք պատառու-ված էին, սևացած, շորացած: Բազմությունը ողողել էր նրանց: Նրանք մոտեցան, և բազմության միջից մեկի ձայնը պատռեց թանձրացած օդը:

— Գուժկա՛ն, գուժկա՛ ա՛ա՛ն...

Ատոմը դուրս գնաց պատշգամ. նրան հետևեց կաթողիկոսը: Ղևոնդ Երեցը իր ուղեկիցներով եկավ դեպի կաթողիկոսը.

— Հոգևոր տե՛ր, լսի՛ր գուժկան բոթը... եկա՛վ սատա-  
նան...

Բազմության մոմոտը սրի պես կտրեց մի շարագուշակ ճիշ, որ  
գալարափողի պես ժանգոտ, կերկերածայն ձգվեց հրապարա-  
կում:

— Վա՛յ զարմին Հայկա, վա՛յ զարմին Հայկա...

Բազմությունը ալիք տվեց, և այդ ալիքը ճեղքելով դուրս ցայ-  
տեց մի կերպարանք, որից բազմությունը՝ ինչպես կրակից, վա-  
խեցավ: Դա երկարահեր, մազմորուքի մեջ կորած, փոշեթաթախ  
մի մարդ էր: Նրա քուրձի ծլանգները կախ ընկած շոշափում էին  
գետնի փոշին: Նա սևացած դիակի էր նման և ոսկրոտ ձեռքերը  
բազկատարած ոռնաց ու չոքելով՝ գետնից հող վերցրեց ածեց գըլ-  
խին: Ապա երբ մոտեցավ Ատոմին և կաթողիկոսին, կրկին գոչեց.

— Վա՛յ զարմին Հայկա, վա՛յ զարմին Հայկա:

Կաթողիկոսը նայեց նրան և դողահար ու խստածայն հրա-  
մայեց.

— Տո՛ւր գույժը...

Գուժկանը թափով չոքեց գետնին և ողբածայն գուժեց՝ մերթ  
կաթողիկոսին դիմելով, մերթ ժողովրդին.

— Լսեցե՛ք, լսեցե՛ք, հոգևո՛ր տեր, ժողովո՞ւրդ հայոց... Լսե-  
ցե՛ք գույժը բոթաբեր. ուրացա՛ն մեր սուրբ հայրերի հավատը,  
խավարի որդիք գրվեցին... մարզպանը, Մամիկոնեից տերը, Հա-  
վարապետը, Արծրունյաց տերը, Ռշտունյաց տերը և մյուսները,  
մնացյալները, ամենքը... — ողբաց գուժկանը և օձիքը պատա-  
ռոտեց:

Բազմությունը խուլ մունչաց, լավեցին կանանց անեծքները,  
կաթողիկոսը արձանի պես քարացավ, Ատոմը գունատվեց, նայեց  
չար հայացքով: Մթնոլորտը ծանրացավ, ճնշեց թանձր լուսթյունը:  
Այդ ժամանակ մայրաքաղաքի գլխավոր աշտարակից սուր հլորա-  
ձայն կերկերաց գալարափողը: Դա արյաց զորագնդի փոխհարն  
էր: Այնտեղ իմացել էին լուրը և ահա դրանով ուրախացած՝ ալի-  
տեցին զրադաշտի հաղթանակը: Չարագույժ հնչեց այդ շեփորը:  
Կաթողիկոսը խաշակնքեց բազմության, բազկատարած դիմեց դե-  
պի վեր և ձայնեց.

— Մի՛ թուլացնեք ոգիներդ. մեր ոգին զբրավի ք մեզ:

Կաթողիկոսը ներս գնաց Ղևոնդ Երեցի և նրա ուղեկիցների հետ և ապա նրան հետևեց գուժկանը, որը հենց հողերի միջից փոշեթաթախ բարձրացավ սանդուղներով և մյուսների հետ մտավ ներս, սրահը, նստեց հատակին և սկսեց օրորվել, սգալ, մազերը փետել:

Կաթողիկոսը նստեց և դիմեց տխրատեսիլ կանգնած գուժկանին.

— Բոլորեքյա՞ն են ուրացել՝ ասում ես...

— Բոլորեքյա՞ն, հոգևոր տե՛ր, բոլորեքյա՞ն... Երկրպագեցին արևին, հարազատացա՞ն Հազկերտին և այժմ մոգերի բազմության հետ, արյաց գորքերով գալի՞ս են:

Կաթողիկոսը գլուխը կախեց: Հետո զայրացած շարժումով դիմեց գուժկանին:

— Ե՛կ, արի՛, նստի՛ր մոտս, ե՛կ, ողբա՛ գլխիս գուժգ գիշեր-ցերեկ, և դուք նստեցեք շուրջս, սգակի՛ց բուեր Հայոց աշխարհին:

Ղևոնդ Երեցը, Եզնիկը և Եղիշեն նստեցին կաթողիկոսի մոտ և գլուխները կախեցին: Գուժկանը նստեց կաթողիկոսի առջև և փոշին թափ շտվեց իր գլխից ու վրայից ի նշան սգո, Կաթողիկոսը այլայլվեց, դարձյալ ծնկները ծեծեց և ապա ձեռները տանելով գուժկանի գլխին ու քուրձին, թաթախեց նրա փոշու մեջ, թափեց փոշին իր գլխին և սկսեց իր գլուխը ծեծել:

— Եկեք, ժողովվեցե՛ք գլխիս,— ողբաց նա,— ողբացե՛ք ավերակն Հայոց աշխարհի:

Շուտով և զրսից լսվեցին տրտունջներ, ողբաձայն երգեր և հառաչանքներ: Լսվեց կանանց լաց ու կոծ:

— Է, վե՛րջը, շա՛տ պիտի քաշենք այս նեղութունը...

Բոլորը նայեցին դեպի այդ խրոխտ ձայնը: Դա Առաքելն էր:

— Ինչացո՞ւ է այս կոավոց-գովոցը: Արհամիթքը եկավ՝ սրա ճարը վեր կենալն է:

— Իշխաններ կան մնացած, կկուվեն, Առաքել, հույսդ մի՛ կըտորի,— ձայն տվեց մեկը:

— Կկուվեն, շեն կովի՛ արյունը մեզնից է, արհամիթքը մեր գլխին է, մերը մենք պիտի անենք: Գայլի շլիկնքը նրանից է հաստ, որ իր գործը իր ձեռով է տեսնում: Դե՛, ո՞վ է զինվորյալ, եկե՛ք:

— Բոլորս,— գրոհեց դեպի նա հոծ բազմութիւնը:

Առաքելը դիմեց դեպի կաթողիկոսի օթևանը, բազմութիւնը գնաց հետևից և սկսեց մտնել ներս, և այդ թվաց այնպես բնական, ինչպես բնութիւն մի մեծ աղետի ժամանակ մարդիկ իրար սեղմվեն, խմբվեն, շնայեն մեծն ու փոքրը:

— Ի՞նչ եք կամենում,— արթնանալով իրեն պաշարող մտքերից՝ խոժոռ հարցրեց Ատոմը բազմութիւնը:

Նրան իսկույն չպատասխանեցին:

— Խոսեցե՛ք, ի՞նչ եք կամենում,— կրկնեց Ատոմը և դարձավ ուղղակի Առաքելին, որ աչքերի տակով ինք նայում էր նրան և ապա, երբ հայացքը շրջեց մյուսների վրա և տեսավ, որ իր առջև կանգնել են շինականները, այլայլված դեմքերով, և գիտենալով, որ ոչ մի օգուտ չի բերի ո՛չ նրանց սաստելը, ո՛չ վռնդելը, ո՛չ անգամ ոչնչացնելը՝ եթե նա կամենար էլ՝ նրանց այդ անլուր հանդըգնութիւն համար՝ զայրացավ: Ու մինչ նա կրկին կխոսեր՝ Առաքելը կոպիտ ձայնով հարցրեց.

— Իշխան՛, մեր դավաճանները թշնամիների հետ այսպես հենց պիտի գան ու ջնջե՞ն մեզ:

— Հետո՞... — խոժոռվեց Ատոմը:

— Սա հարցնում եմ, իշխան, զորք ուղարկո՞ւմ ես նրանց դեմ, թե՞ ոչ:

— Դու... դո՛ւ գիտե՞ս,— չվերջացրեց Ատոմը խոսքը:

— Իշխան,— հանգիստ և արհամարհական եղանակով ասաց Առաքելը,— եթե մեր նախարարները թողել են մեզ, ուրացել են երկիրը, ասա մենք տեսնենք նրանց դատաստանը...

— Աստվա՛ծ ճշմարիտ,— վճռական մունչաց շորս կողմից բազմութիւնը:

Ատոմը լավ գիտեր զինվորյալի բարոյական անսահման իրավունքները, բայց և այնպես նրան ուղղակի կաշկանդեց, խեղդեց ոչ այնքան զայրույթը, որքան ապշեցումը, զարմանքը այս անլուր հանդըգնութիւնից: Ապա նա աչքերը խոժոռեց և սպառնալի վեր կացավ դանդաղ: Հասկացվեց, որ նա պետք է պատժեր Առաքելին: Բայց կաթողիկոսը, որ ավելի ճիշտ ըմբռնեց գազազած շինականի պոռթկման ներքին ուժը, կանխեց Ատոմին և ձեռքը բարձրացրեց.

— Թո՛ւյլ տուք, իշխանի՛կ, հանուն աստծո՞ւ... Սա այն չէ, սա այլ է...

Ատոմը շհամոզվեց, բայց հարգեց կաթողիկոսին մի պահ և սպասեց՝ զայրույթից անհամբեր:

Կաթողիկոսը դարձավ Առաքելին և մյուսներին:

— Որո՞ իրավամբ եք այդպես հանդգնում անարգել ձեր տե-  
րերին, շինականներ: Հանե՛լ եք ահը ձեր սրտներից:

Առաքելը առաջ եկավ.

— Հոգևոր տեր, թշնամին, թշնամին՝ գալիս է, հարազատն էլ թշնամի դառած՝ գալիս է: Մնացածներն էլ քաշվել՝ աշխարհքը թո-  
ղել են կրակի մեջ: Հիմի ի՞նչ ահ, ի՞նչ իրավունք, ի՞նչ տեր, ի՞նչ ծառա, հիմի մենք կջնջենք ամեն ինչ երկրի երեսից...

— Մենք ենք հիմի մեր հայրենիքի տերն ու ծառան:

→ Մերն է Հայոց աշխարհքը, — լսվեց բազմության միջից:

Ատոմը արագ մոտեցավ Առաքելին և զայրույթից գունատված մոմոաց.

— Դու զինվորյալ ես, դրա՞ համար ես դառել ապերասան...:

Առաքելը իր անդիմադրելի երկաթե հայացքը գամեց Ատոմի աչքերի մեջ:

— Ողջ ժողովուրդն է զինվորյալ... — մոմոաց նա խուլ ըս-  
պառնալիքով:

Ու մինչև Ատոմը մի բան կաներ այս կարգ ու օրենք անցած մարդուն՝ դրսից մեծ աղմուկ լսվեց:

Ներս վազեց սպասավորը:

— Իշխա՛ն...

Այնտեղ ինչ-որ բան կատարվեց: Դուրս նայեցին:

Բազմության մեջ նժույգ հեծած մի մարդ մարդկանց ոտի տակ գցելով և մտրակի հարվածներով ճանապարհ էր բացում դեպի ար-  
քունի ապարանքը: Նրա զայրալի, կաս-կարմիր դեմքը և բուռն շարժումները ցույց էին տալիս, որ խիստ կատաղած է կատարվող դեպքերից: Դա Վասակի պալատական բարձրաստիճան պաշ-  
տոնյան էր, նրա քարտուղարը, որի մասին լուր էր տարածվել, որ ուրացել է: Բազմությունը շրջապատեց նրան և սկսեց աղմկել.

— Ի՞նչ է մտրակում, ի՞նչ է ուզում...

— Ցրվեցե՛ք, ապստամբներ: Ո՞վ է ձեզ իրավունք տվել հա-  
վաքվել, — գոռաց Վասակի քարտուղարը և սկսեց մտրակով ավելի ուժեղ հարվածել մարդկանց:

Կաթողիկոսի օթեանից դուրս թափվեցին Առաքելն ու հետին-  
ները և անհանգիստ, զարմացած նայեցին կատարվող դեպքին:

— Իմացե՛ք, խո՛զի ճուտեր, որ քանի ձեր տերերը ուրացած  
են՝ ողջ Հայոց աշխարհը ուրացած է: Ո՛ւմ դեմ եք այստեղ դուրս  
եկել հիմա... Քաշվեցե՛ք:

— Դու- է՛լ ես ուրացած,— հարցրեց Աբրահամ պապիկը այ-  
լայլվելով:

— Ուրացած եմ հոգով, սրտով,— պատասխանեց Վասակի  
բարտուղարը շեշտված համարձակությամբ և մտրակեց Աբրահամ  
պապիկին: Առաքելը ցած վազեց սանդուղներից, հարձակվեց բար-  
տուղարի վրա, երկաթե մատները գցեց նրա թևին և դեմքը դաժան  
ու խոժոռ կծկելով՝ գիրթ քաշեց զարկեց գետին.

— Վերջացրե՛ք շանը...

Բազմությունը մոնչաց, հարձակվեց ուրացողի վրա և սկսեց  
բարկոծել մոլեգին: Նժույզը խրտոնեց, ոտի տակ գցեց մի երկու-  
սին և փախավ, քարկոծողները իրենցով ծածկեցին ինքնադատաս-  
տանի զոհին, որ այլանդակվեց մի վայրկյանում: Փոշի, ընդհատ  
անհասկանալի բառեր, հարվածողների նվոց, կանանց լաց ու կոծն  
ու ոմանց էլ կատաղի ճիչերը — այս ամենը այնպես արագ պոռթ-  
կացին ու անցան, որ մինչ Ատոմը կամ կաթողիկոսը կհասնեին  
արգելելու՝ ամեն ինչ վերջացած էր: Դիակը համարյա ծածկված  
էր կուտակված քարերով:

Ատոմը, որ դուրս էր եկել կաթողիկոսի հետ, այդտեղ տեսավ,  
և այն առաջին անգամ իր կյանքում, թե ինչ բան էր ուսմկի ցա-  
սումը, թե ինչպես ուսմիկը դուրս էր եկել ինքն իրենից, ըմբոստա-  
նում էր, ոչնչացնում, և ոչնչացնում էր թաքուցյալ դառն մաղձով,  
թեժ ատելությամբ դեպի իշխանավորը և թե ինչպես բարձրացել՝  
քանդում, քշում տանում էր ամենքին, ամեն ինչ... «Ահա՛ թե  
ինչ կանեն՝ եթե...», — մտածեց Ատոմը: Նա փորձեց սանձահարել  
բազմությունը, մանավանդ կոպիտ ու հանդուգն Առաքելին, մի  
քայլ արեց, նայեց ուրացողի դիակին և քստմանեց, բայց և ինչ-որ  
ներքի՛ն տարակուսանքից, թե՞ քաջ զորականի սառնարյունով  
զօպեց իրեն: Նա նկատեց, որ բազմության միջից շարախնդաց  
նայում էին պարսիկ հրամանատարը իր զինվորներով և բերդա-  
պետ Ավետիքը հայ զինվորներով. Ատոմը կորցնում էր իշխանա-  
կան դիրքը և նա ատելություն զգաց դեպի ուսմիկները, որ այդպես

Հանդգնորեն անարգեցին իշխանութունը, կարգ ու օրենք: Ու մինչև նա ներքին ուժեղ հոգեկան կռվի մեջ էր ինքն իր հետ՝ Առաքելը բարձրաձայն ասաց քարկոծողներին.

— Ջնջե՛ք, սրբե՛ք այդպես... Հայրենիքն ուրացողին չկա իշխան— ուամիկ, տեր— ծառա:

— Չկա՞ ա՞,— մոնչացին ամեն կողմից մոլեգնած ձայներով:

Այստեղ արդեն կարծես խարանեցին Ատոմի իշխանական ինքնասիրութունը: Արյունը գլուխը խփեց և ձեռք իրոք տարավ սրին: Կաթողիկոսը խլեց նրա դաստակը և արգելեց.

— Ի սե՛ր ամենակալին, իշխան, հանդուրժի՛ր, ժամ չէ՛: Մի՛ մտնիր անմեղների արյունը:

Բայց Ատոմը չհանգստացավ: Նա ավելի խաչթվեց, երբ Առաքելը վեր եկավ սանդուղներով դեպի կաթողիկոսը և մոլեգին պահանջեց նրան:

— Օրե՛նք հանիր, ով հայրենիքն ուրանա, ջնջվի՛...

Կաթողիկոսը մոռալվեց.

— Դու շինական, պահանջում ես, որ ավերա՞կ դարձնեմ Աշխարհն հայոց:

Մինչ Ատոմը կանդրադառնար այս հանդգնութան՝ ինչպես հսկայական մի շենք անսպասելի հանկարծ փլչի՞ բազմութունը վրա թափվեց կատաղի:

— Հայրենին ուրացողին մա՛հ...

— Ո՛ւր են գալիս, ո՛ւր են բերում թշնամիներին:

— Իրենք հերիք չէին, հիմի էլ բռնավորի՞ն են բերում շլինքներիս լուծ:

— Ատելի՛ գարշելիները...

— Դժոխքի բաժի՛ն, կորչե՛ն գնան:

— Դեմերն առե՛ք, թե չէ՛՝ մենք կանենք:

— Չենք թողնի ոտ դնեն երկիրը. կջնջե՛նք:

Պոռթկաց բազմութունը մի վայրկյանում գնալով սխրագործության, գտնելով ինքն իրեն և իր մեծ ուժը:

— Հոգևո՛ր տեր, — կրկին համառ ու հանգիստ ձայնով ասաց Առաքելը: — Մեր նախարարները դավաճանեցին մեզ, էլ նրանք մեզ համար չկան: Մենք ենք դուրս գալու թշնամու դեմ գինվորյալ: Օրենք հանի՛ր՝ տերը ծառային, ծառան՝ տիրոջը՝ հորը, մորը, զավակին, կնոջը, եղբորը, ջնջե՛նք դավաճան, թշնամի, մեծ, փոքր,

ամեն ինչ: Հանի՛ր օրենքը, թե չէ՛ մենք կհանենք, այն ժամանակ վա՛յ դավաճանին:

Ատոմը կտրատում, ուտում էր իրեն: Մեկ այրվում էր կրքից՝ սրածեղ իր դեմ խռնված այդ խելահեղ, օրինազանց մարդկանց, բայց մյուս կողմից նրան կաշկանդում էր հոգևորների, կաթողիկոսի սարսափով ենթարկվելը բազմությանը: Նա ատելությամբ և վիրավորանքով տեսավ, թե ինչպես Ղևոնդ Երեցն ու Եզնիկը, ապա և Եղիշեն մեկ-մեկ առաջ եկան դեպի կաթողիկոսը և դիմեցին նրան.

— Հոչակի՛ր օրենքը, տեր, ճշմարիտ է ուսմիկը:

— Օրհնի՛ր տեր, ձայն բազմաց՝ ձայն աստծո, ճշմարիտ է ասված՝ «Տերը՝ ծառային, ծառան՝ տիրոջը»,— պնդեց Ղևոնդ Երեցը:

Ատոմը զսպվեց:

Մի պահ լռեցին. սպասեցին: Կաթողիկոսը, ապրելով ներքին ուժեղ կոփվ՝ ինքն իրեն խոսելու և խորհելու պես ասաց.

— Քայքայվե՛ց մեր զորությունը: Հավատարիմներն ուրա՜ցա՛ն, ուսմիկը ցասումնե՛ց:

— Հանի՛ր օրենքը, տեր հոգևոր,— խստացավ Առաքելը,— վե՛ր կաց, վե՛ր կացրու քո աշխարհքը: Բոլորը պիտի կռվեն:

— Տերը՝ ծառայի՛ն, ծառան՝ տիրո՛ջը,— կրկնելով գոչեց Առաքելը:

— Տերը՝ ծառային, ծառան՝ տիրոջը,— որոտաց բազմությունը խստաձայն:

Կաթողիկոսը հառաչեց, խաշակնքեց երեսը և խոռվքից հետո հուզված դիմեց բազմությանն ու յուրայիններին:

— Չայն բազմաց, ձայն աստծո՛, — թող լինի՛ ինչպես շինականն ասաց. «Տերը՝ ծառային, ծառան՝ տիրոջը»: Պատվեր տվե՛ք ինձնից համայն ժողովրդին հայոց, թող գան ժողովվեն զինվորյալ: Եվ ե՛ս եմ զինվորյալ, թողնում եմ վանս, գնում եմ ընդգե՛մ դավաճաններին:

— Եվ ես եմ զինվորյալ,— գոչեց Ղևոնդ երեցը:

— Եվ ե՛ս, և ե՛ս,— ձայնակցեցին Եզնիկն ու Եղիշեն:

— Ատոմը ընդարմացավ այս տարադեպ, խառնաշփոթ դեպքերի առջև: Երիտասարդ զորականը՝ վարպետ իր գործում՝ ան-

կարող եղավ ըմբռնել կատարվածի իմաստը, շիմացավ իր անելիքը: Իր աչքի առջև կատարվում էին շտեսնված, շսված, ամեն կարգ ու աստիճան, իշխանություն քայքայող դեպքեր, երկրի ավագ նախարարները ուրացած, թշնամուն միացած գալիս են, մյուս նախարարները ցրիվ, տերունական զորքը դեռ անկազմ, կաթողիկոսը թույլ տվեց իշխանազանցություն, ժողովուրդն անցավ նախարարի ու ռամկի անջրպետը, ոտնահարեց նրա իշխանությունը՝ ահա վեր է կենում տեր կանգնելու իր բախտին: Բայց միաժամ էլ ակամա մի համակրանք զգաց քաջ Առաքելի և մնացած շինականների հանդեպ, որ հատուկ է քաջ մարդուն, քաջ մարդկանց դիմաց, մանավանդ, երբ նկատեց, որ պարսիկ հրամանատարը իր օգնականներին կարգադրություն արեց և տարավ բերդի բուրգերը՝ երևի հարձակում պատրաստելու: Ատոմը զսպեց իրեն և իբրև ոչինչ չէր պատահել՝ գնաց ներս: Գնաց նաև կաթողիկոսը:

Ատոմը հիշեց Վարդանի հրամանն ու պատվերները Հայոց աշխարհի պաշտպանության մասին, նրա մտքերը ռամկի մասին, նրա՝ զորականի վերաբերմունքը դեպի զորքը, նրա խոսքը՝ «ապավինեցեք աշխարհին»: Եվ զգաց, որ ինքը խելացի չէ գնահատում ռամիկներին: Նրանց զորական ուժը, երկրի վերջին հույսը: Նա տեսավ, որ արդեն միակ ուժը, որ կարողանում է և բարձրանում է, դա ժողովրդական զանգվածներն են և իբրև զորական մարդ՝ գնահատեց այն և տիրապետեց իրեն «առժամ»: Նա զգաց, որ հակառակելով ռամիկներին՝ դրանով ավելի շուտ կորցնում էր իր իշխանական դիրքն ու պատիվը: Եվ վերջապես իշխանական, անձնական գոռոզության ժամ չէր... Երկիրը տազնապուտ էր, ինքը պատասխանատու էր այդ երկրի, իր խղճի առջև: Նրա մեջ խոսեց քաջի և հայրենասերի ձայնը: Նա կանգնեց սրահի մեջ և հասարակ ու պարզ, բայց և զորականի շեշտով ասաց.

— Լսեցե՛ք, տյա՛րք հոգևոր և դուք, շինականներ. մի՛ կարծեք, որ զորական մարդիկս փափկասիրտ ենք աշխարհի դավաճանների հանդեպ, մե՛նք էլ շենք խնայի ո՛չ Մամիկոնեից տիրոջը, ո՛չ Ամատունյաց տիրոջը, ո՛չ Արծրունյաց, ո՛չ ինձ, ո՛չ այլ ու մնացյալ ոքի՛ մարմնավոր, թե հոգևոր: Կոտորեցե՛ք անխնա հայրենիքի ուրացյալներին:

— Կսրբե՛նք, կընաջնջե՛նք, հոտնե՛րը շենք թողնի աշխարհքիս երեսին,— ձայն տվին բազմության միջից:

— Երկիրը կպաշտպանվի', — ասաց Ատոմը Կաթողիկոսին, — եթե մեր հարազատները ուրացան մեզ, մենք շնոր ուրանա մեզը Երկիրը կպաշտպանվի. այս մասին միամիտ եղիր:

— Աստուծով, աստուծով, — ձայնեց կաթողիկոսը:

— Այս մասին միամիտ եղիր, — կրկնեց Ատոմը և դարձավ իր թիկնապահին՝ մի խստադեմ պատանու, — Հա՛յկ, ներս կանչիր բերդապետին:

Հայկը գնաց: Նրա դեմ եռաց դրսի բազմությունը, որ այժմ սպառնալի թանձրացել էր և կերպարանափոխվել: Նրան էին եկել խառնվել պարսիկ զինվորների հոծ խմբեր, որոնց հետ եկել էին նաև հայ բերդապահ գնդի զինվորները: Հայկը ձեռք բարձրացրեց և նշան արեց բերդապետին, որ կանգնած էր բազմության մեջ:

— Ասա հրամա՛ն տա իշխանը, — գոչեց Հայկին հայ զինվորներից մեկը:

— Հա՛, հա՛, վերջացնենք սրանց, — ցույց տվեց պարսիկ զինվորների վրա մյուսը:

— Է՛, է՛, է՛... — մեջ վազեց բերդապետը, որ հեռանում էր զինվորների միջից, — ետ գնացեք:

Ու ինքը առաջ անցավ դեպի Հայկը: Հայկը նրան ներս տարավ: Ատոմը մոտ կանչեց բերդապետին.

— Բոլոր բուրգերն ու անցքերը խակույն կգրավես: Արաքսի կամուրջի երկու գլուխները կրճենս ուժեղ պահակ զորաբաժիններով, որ պարսիկ զորագունդը չբռնի կամուրջը: Ես օգնական գնդեր բերել կտամ: Ամեն ինչ կանես՝ «բնակչության խոռվութունից քաղաքը պաշտպանելու» պատրվակով: Ապստամբության առաջին իսկ նշանին կոչնչացնես պարսից զորագունդը:

— Հրամա՛նդ, — ուրախացավ բերդապետը:

— Մի՛ ճնշի ժողովրդի ցասումը. թող արձարժվի:

— Ես ինքս շեմ կարողանում ինձ զսպել, իշխան, խոցված եմ:

— Զսպի՛ր միայն ընդհարումները. մայրաքաղաքի պատասխանատուն դու ես. մահվան գնով. իմացա՛ր:

— Հրամա՛նդ, իշխան:

— Գնդի սուրհանդակներին ուղարկիր մոտս, իսկ դու զորագունդ հավաքի խակույն: Ինձանից հրաման տար պարսից զորահրամանատարին, որ զինվորներին քաշի քաղաքից: Զանառու գեպըստ ոչնչացրու իրեն տեղնուտեղը: Գե՛:

Բերդապետը շատ գոհ հեռացավ:

Ատոմը դարձավ Առաքելին:

— Իսկ դու քո զինվորներով՝ հավաք՝ սպասեք հրամանի: Կոհ՝ վը չի քաջությունը, հաղթե՛լն է քաջությունը: Մանր է վիճակը: Առաքելն ասաց.

— Քաջության կոհիվ շենք անում, իշխան: Մենակ մի բան հաստատ. կասեմ, թող իմանան իշխան, ուսմիկ՝ դավաճաններին կշնջենք ով կուզի լինի:

— Շատ լավ կանեք: Բայց խառնիճաղանջ, անմտածված բաներ շանեք: Հրաման չկա, — շեշտեց Ատոմը:

Ատոմի խոսելու այդ ձևը մի փոքր վստահեցրեց Առաքելին, որ նա հավատարիմ է երկրին: Բայց դա նրան չհանգստացրեց, նա դեռ խեթ էր նայում Ատոմին. Բայց Ատոմը ահնաժեց ակամա, տեսնելով իր առջև անձնվեր մարդկանց, թեև դրանք նրա համար ռամիկներ էին և ուրիշ անգամ չէին համարձակվի այսպես ազատ խոսել: Բայց մյուս զինվորյալներն զգացին, որ մի տեսակ դաշինք կափվեց իրենց և այդ մարտական նախարարի մեջ: Հասկացան, որ Ատոմը ևս դժգոհ է ուրացողներից:

— Գնացեք զինվեցե՛ք և խումբ-խումբ տեղավորվեցե՛ք շենքերում, այգիներում, մոտ տերունական զորագնդերին: Կրկնում եմ՝ կոհիվ շանե՛ք:

— Դա կերևա իր տեղը, իշխա՛ն, — ասաց Առաքելը:

— Առանց հրամանի կոհիվ շսկսեք ո՛չ մի տեղ: Տեսե՛ք՝ տառուկ կտանք ամեն բան: Մանր է վիճակը: Դե՛հ գնացե՛ք:

Զինվորյալները արտապնդված գնացին:

— Կոհիվ չ որ կգա, հրամանի չի նայի, — մոռաց Առաքելը:

Ատոմը մնաց նստած տեղը և խորասուզվեց իր գործում՝ մոռանալով ամեն ինչ և նյութելով իր ռազմական ծրագրերը: Նա սպասում էր սուրհանդակներին, որ, անշուշտ մեկնելու պատրաստ վիճակում սպասում էին ներկայանալու նախարարին: Նրանք եկան՝ գիտենալով, որ իսկույն պիտի մեկնեն: Դեմքներին երևում էր հապճեպ գործի սովոր զորականների լրջությունը: Ատոմը սպասավորից մագաղաթ, գրիչ ու թանաք պահանջեց ու սկսեց նամակներ գրել, բարձր գրակալի վրա գեելով մագաղաթի թղթերը:

— Հենց իսկույն ճանապարհ կընկնեք նախարարների մոտ, — գրում էր և հրահանգում Ատոմը սուրհանդակներին, — իմ անունով

կհայտնեք եղելութիւնը, կպատվիրեք իմ կողմից, որ երբ պարսից զորագունդը ուրացյալների հետ կմոտենա մեր երկրի սահմաններին, իրենց զորագնդերը շարժեն դեպի Այրարատ:

Նա շարունակեց գրել իր նամակները:

— Բոլոր նախարարներին իմ կողմից կխնդրեք տեղեկութիւններ հայտնեն: Կասեք, որ ես կլինեմ Արտաշատում, մինչև դեպքերը պարզվեն, իսկ ապա մեկնելու եմ Բզնունյաց ծովը:

Սրբ վերջացրեց համառոտ նամակները, կնքեց և մոտ կանչեց սուրհանդակներից հասակավորին, որ խոժոռ ու շար նայում էր Ատոմին, կարծես թշնամու է նայում: Բայց Ատոմը, ըստ երևութին, լավ էր ճանաչում նրան: Նա մինչև անգամ մի կողմ քաշեց նրան և սկսեց ցածրաձայն խոսել նրա հետ.

— Գաղիշո նախարարը, ինչպես և Արտակ Ռշտունի նախարարը կարող են գաղտնի սուրհանդակներ ուղարկած լինել իրենց գնդերը: Ասա նախարարներին, որ ես գնում եմ Բզնունյաց ծովը՝ կարգավորելու բոլոր այդ նախարարական գնդերի զորքը... Դեռ ուրացյալները տեղ չհասած՝ ես նրանց գնդերը դուրս կքաշեմ՝ կըրերեմ Բագրևանդ: Իմացա՞ր:

— Հրամանդ, — ասաց սուրհանդակը՝ ուղղակի շար հայացքը գամելով Ատոմի աչքերի մեջ:

— Հա, մյուսներդ, — շարունակեց Ատոմը և մոտ կանչեց մնացյալներին, — նամակները կտաք նախարարներին, պատասխանները կխնդրեք և որտեղ լինեմ՝ կրերեք ինձ: Դե, իսկույն ճանապարհ:

Սուրհանդակները վազեցին դուրս:

Արդեն ուշ գիշեր էր: Բաղմութիւնը անհամբեր ու անհանգիստ քրթմնջում էր դուրսը, դժգոհ խոսքեր էր նետում դեպի ներսը հավաքվածները, պահանջում, որ կաթողիկոսը գործի անցնի:

— Տեք, տարածամ է ժամը, — ասաց Ղևոնդ Երեցը, — ե՛լ, կատարիր պարտքդ առաջի աշխարհին:

Կաթողիկոսը երկար մնաց մտախոհ նստած: Աղոթում էր մտքում, թե՞ վճիռների կայացնում: Բոլորը լուռ ու լարված նրան էին սպասում: Եվ նա հանեց մաշիկները, վերցրեց զավազանը և ասաց վշտացած.

— Ճմարիտը խոսեցիք: Սգավոր եմ: Այլևս չունեմ օթեան, չունեմ դագար: Գնում եմ շրջեմ Աշխարհն հայոց: Քող գա ով Հա-

բաց Աշխարհի հետ է:— Ճանապարհ,— ասաց և գնաց դուրս: Բոլոր հոգևորականները ի նշան սգո՝ նույնպես հանեցին մաշիկները, վերցրին գավազանները և հետևեցին կաթողիկոսին: Գուժկանը առաջ ընկավ: Բազմութունը հետևեց կաթողիկոսի, հոգևորականների, Ատոմի և գուժկանի այս երթին: Գուժկանն սկսեց կրկին օձիքը պատառել: Կաթողիկոսը կանգնում էր փողոցներում, տներից դուրս կանչում բնակիչներին և կոչ կոչում:

— Ելի՛ր, ժողովուրդ հայոց, հասավ օրը կենաց մահու:

Ջահեր ցլացին, որոնց արյունագույն լույսի տակ սոսկալի գծագրվեց ու ներկվեց մի ահռելի բազմութուն, որ եռում, խլրտում էր:

Մի տանից բակը դուրս եկավ մի կին՝ մեջքին սուր, թևին վահան: Նրա հետևից վրա հասավ նրա ամուսինը և երեխան դրեց նրա գիրկը: Կինը երեխան ետ նետեց ամուսնու գիրկը և վազեց դեպի բազմութունը: Այնժամ ամուսինը խլեց դուռն հետև դրած նիզակը և երեխան գիրկը գնաց բազմության մեջ: Տներից դուրս եկան այլ կտնայք՝ նույնպես զինված: Նրանց մեջ երևացին Դշխոն, Լույսը և Վարաժի կի՞՞՞՞ր՝ Մագթաղը:

Կաթողիկոսը մոտենում էր տներին և դուրս էր կանչում բնակչությանը:

— Թողե՛ք օթևանները, ելե՛ք հանդես...

Բնակչությունը՝ տներից դուրս էր թափվում՝ բռնված գոյության վտանգի ինչ-որ շարագույժ երկյուղով: Նա այնպես զգաց, որ խախտվեց երկրի հաստատությունը և բոլոր շափերը կորցրին իրենց շափերը: Կաթողիկոսն ասում էր.

— Թող ծառաները առաջնորդեն տերերին հոգևոր պատերազմին և թող բոլորը հավասարվեն պատերազմի մեջ:

Կաթողիկոսը քայլերն ուղղեց քաղաքից դուրս:

— Ո՛ւր ես տանում մեզ, տեր հոգևոր,— հարցրեց մի դեղնադեմ հիվանդոտ հոգևորական:

— Ընդդեմ ուրացյալների, որ ուրացան մեզ:

Հայկական զորագունդը բերդապետի ճարպիկ ու եռանդուն կարգադրություններով արագ բռնեց բոլոր բուրգերն ու անցքերը, ինչպես և Արաքսի կամուրջը:

Ատոմը իր մոտ կանչեց բերդապետին:

— Ես մեկնում եմ դաշտ: Պաշտպանի՛ր քաղաքը:

— Հոգո՛ւս պարտքը, իշխա՛ն,— ասաց բերդապետը:

Ատոմը դուրս եկավ քաղաքից և իր թիկնապահի հետ արագ անհետացավ մթության մեջ: Նրանից հետո քաղաքը թողեց նաև կաթողիկոսը՝ վանականների և հավատացյալների հոծ բազմությամբ:

Քաղաքի բազմությունը, որ ստվարացել էր ամեն կողմից լըցված փախստական շինականներով, դուրս եկավ քաղաքից և հովաքվեց պարսպատակի ժողովատեղում:

— Ի՞նչ ենք անում, ա՛յ ժողովուրդ,— ձայնեց մի շինական լուսծ բազմության,— էս նախարարները, հոգևորները գնացին երկիրը վեր կացնելու:

— Թող գնան վեր կացնեն, ում կարող են,— ասաց Առաքելը,— մեր ուժին ուժ տան:

— Ախր նախարար է, հոգևոր է, մի բան չի՝ երկուսն է մտածում, տասը,— միջամտեց մի խոհուն շինական:

— Մերը մեկ է, երկու չի,— ասաց Առաքելը և հանկարծ դարձավ բազմության ու խոսքը փոխեց:— Կանեն մեզ հետ՝ կանենք միասին, չեն անի՝ մենք կանենք առանց նրանց,— ասաց Առաքելը:

— Կանե՛՛նե՛՛ն, կյանքի՞ բան է, կանե՛՛նե՛՛ն,— կրկին տընթաց Եզրասը,— մենակ՝ Սպարապետը որ լիներ՝ լավ էր՝ զորավա՛ր էր: Առանց զորավարի ի՞նչ կարող ենք, չե՛՛նե՛՛նք կարող:

— Զորավար էր՝ դավաճանեց,— շար ձայնով ասաց Առաքելը:

— Հենց ի՛սկը,— խոսեց Սահակ շինականը:

— Հա, հիմա դու ասա, թե մենք ո՞նց պիտի կովենք: Անզո՛րք ժողովուրդ:

— Մենք էլ մերը կկովենք,— խեթեց Առաքելը Եզրասին:

— Ախր առանց զորավարի չենք կարող, Առա՛քել, մեզ կըրվացնող է պետք, կոիվը զորքի բան է, մեր կովից ի՞նչ դուրս կգա:

— Կկովենք՝ կսովորենք, դուրս կգա:

Առաքելը լավ էր հասկանում բազմության միտքը: Նրանք առաջնորդ էին ուզում:

— Դե, զինվորյալներ, ելե՛ք,— ասաց Առաքելը և վեր կացավ, շարժվեց դեպի էջմիծանի ճանապարհը:

Զինվորյալների մի խումբ հետևեց նրան:



Ինչպես շարագուշակ շվերթ, ինչպես հուղարկավորություն, երկարաշարան օրորվում էր բազմամարդ կարավանը հայ նախարարների, մոզերի և պարսիկ զորագնդի: Առջևից զորագունդը, մեջտեղը նախարարները, հետևից մոզերը ձգվելով Պարսկաստանի լեռնադաշտի ավազուտներում՝ շարժվում էին դեպի Հայոց աշխարհը: Զորագունդը մղվում էր առաջ՝ բանալով ճանապարհ մոզերին ու հայ նախարարներին, որ զրադաշտ էին տանում բռնի ընդունել տալու մի ողջ ժողովրդի: Հիմա այլևս բոլորը «պարսիկներ» էին և գնում էին «հայերի» երկիրը՝ վերջ տալու ամեն բան, որ հայկական է՝ կրոն, լեզու, բարք, կենցաղ, ընտանեկան կարգեր: Այն առաքելութունը, որ հանձնվել էր մագպեա Միհրին՝ տրվել էր նաև նախարարներին:

Զորագունդը գնում էր Դարեհ պարսիկի հրամանատարությամբ: Նա ցից նստել էր նժույգի թամբին՝ ինչպես գայլը մի հողաթմբի, և գիշատիչ աչքերով խուզարկում էր հեռուները: Զորագունդը գնում էր հաղթական երևույթով, բայց և լարված, քանի որ՝ ճիշտ է՝ նախարարներն ուբացել էին, բայց Հայոց աշխարհը դեռ մնում էր նվաճելի:

Բարձրահասակ, երկարամորուս Միհր մագպետը խիստ շեշտված աչքունքը խոժոռած մտորում էր իր անելիքների մասին: Անմիջապես սպասավորող երկու մոզերը աչքները շէին հեռացնում նրանից: Մյուս յոթ հարյուր մոզերը՝ սևազգեստ, մրոտ, արևառ դեմքերով՝ ուրախ ժնգժնգացնում էին խոնջ ճերմակ ատամները՝ նախաճաշակելով ամենահարուստ հայ նախարարների ընտանիքի մոզերը գառնալու և բարիքները վայելելու հաճույքը: Նրանք շատ էին աղմկում ճանապարհին:

Նախարարների ահանջին հասնում էր նրանց աղմուկը. հաճախ մոզերը կովում էին և գոռոգում: Սա ճնշում էր նախարարներին, զայրացնում: Յժտեք էլ ընդարմացել էին և աչքես շէին լսում: Փորձում էին զրույցներով կարճել ձանձրալի ճանապարհը, բայց խոսակցությունը չէր կաշում: Վարդանի մերձավոր գինակիցները ջանում էին իրենց և նրա վիշտը փարատել ասելով, որ երբ հասնեն Հայաստան, կքավեն իրենց մեղքը ապստամբությամբ: Սակայն Վարդանը թաղված էր ավելի խոր վշտերի ու անհամեմատ մեծ ու

կնճոտ հանգույցների մեջ: Դաժան հարցը փակում էր նրա ճանապարհը: Անմիջապես սահմանի՞ վրա սկսել ապստամբությունը, թե՞ մի փոքր հետաձգել: Հետաձգելու դեպքում անհրաժեշտ էր պահել ուրացության դիմակը: Որքա՞ն կհաջողվեր նրան այդ... Որքա՞ն վայել էր այդ՝ հայրենիքի պաշտպանին, Արտաշատի, էջմիածնի երդումներին, Մամիկոնեից զարմին... Ահա մի քանի շաբաթ էր, որ նա կրում էր այդ դիմակը մոգերի առջև: Նա չէր դիմանում կեղծիքին անգամ: Նրան այրում, ձաղկում էր Հազկերտի ստորացնող գառը, զնդանը, անպատվաբեր երկրպագումը արևին, բռնացումը խղճի, հոգու վրա:

«Ոչ, անհնարին է հետաձգել»,— մտնում էր նա յուրովի:

Սակայն նա կասկած ուներ, որ Միհրենբսեհը ամենայն հավանականությամբ բանակ էր կազմում Հայաստան ուղարկելու մտքով: Վարդանը հանձնարարել էր Գարեգինին ստուգել և հետևից գաղտնի սուրհանդակի միջոցով լուր ուղարկել իրեն այդ մասին:

Վարդանին զբաղեցնում էր այս հանելուկը... Այս մասին մտածելիս՝ նրա պոռթկումներն իշնում էին և նա իբրև զորական մտատանջվում էր և սթափվում...

Տանջվում էր շատ նաև Արտակը: Նա, որ ուրացման և արևին երկրպագելու օրը Վարդանին հանգստացնել էր ջանում իմաստասիրությամբ, հիմա այլևս չէր թաքցնում զայրույթը այն ստորացումից, որին ենթարկվեցին Հազկերտի պաշտում և զնդանում: Նրան շարունակ երևում էր Ղևոնդ Երեցը, որ Եղիշի խցում այն դիշեր ոգում էր հոգեկան ազատության մասին: Նրա աչքերին խրատանում էր այն կորովի մարզարեն, որ չէր հանդուրժում ոչ մի ստրկացնող ուժ աշխարհիս երեսին: «Սուրբ է կամքը. կամենում եմ, շեմ կամենում»,— ահա իսկական մարդու ամենամեծ գանձը:

Վարդանը մենակ ճոճվում էր իր նժույգի վրա: Թվում էր, թե ննջում է: Արտակը, որ զրուցում էր Վահան Ամատունու հետ, խթից իր նժույգը և զնաց հավասարվեց Վարդանին:

— Տե՛ր Սպարապետ,— շնչաց նա. կարծես քնից էր զարթեցնում, զգույշ:

— Աստ՛, իշխանիկ,— հանդարտ խոսեց Վարդանը:

— Մտռենում ենք մեր աշխարհին... օրերը հասնում են...

Վարդանը կիսովին շրջեց գեպի նա և բարի հեգնանքով հարցրեց:

— Ի՞նչ է քեզ մտահոգում:

— Երկրի վիճակը... Ի՞նչ պիտի լինի երկրի վիճակը:

— Ինչ որ կանենք՝ այն էլ կլինի,— կիսակատակ պատասխանեց Վարդանը:

— Իսկույն ապստամբն՞լ, սկսել պատերա՞զմը...

— Ապստամբությունն ու պատերազմը վաղուց սկսված են, իշխանի՛կ: Ձզձգում ենք, իրար խաբում միայն: Վիճակը ճգնաժամային է: Երկիրը խառնաշփոթի մեջ, մենք այստեղ հարկադրական լուծվյալ մատնված: Անշուշտ մեր հետևից Միհրնեբսեհը ճանապարհել է մի ուժեղ բանակ՝ գրավելու երկիրը...

— Ուրեմն ի՞նչ, կորա՞ծ ենք, վե՞րջ ամեն բանի,— սրտնեղեց Արտակը և հետո տարակուսած, կարծես ինքն իրեն հարց տվեց,— թե՞ գուցե քաջքենք, մինչև տեսնենք ինչ կլինի:

— Ո՛չ, իշխանիկ,— կռահեց Արտակի միտքը Վարդանը,— բանի Հազկերտը երկպառակություն ու քայքայումը խորապես չի գցել երկրի մեջ, ժողովենք երկիրը:

— Իսկ հիմա՛, հիմա՛...

— Կանխե՛լ դեպքերը, առա՛ջ ընկնել: Քանի ժողովուրդը վեր է կացել և ուժեղ է՝ գլխավորել նրան ու հարվածել թշնամուն:

— Եվ ուղիղը դա է:

— Քանի դեռ միաբան ենք,— շեշտեց հատուկ նշանակությամբ Վարդանը,— քանի դեռ կարող ենք ստվարանալ... Քանի իբրև առայժմ՝ պետություն ենք լավ-վատ. իշխանություն ենք լավ-վատ... Եվ եթե, իրավ է, որ Միհրնեբսեհը բանակ է ուղարկել մեր հետևից, պետք է սկսենք, քանի չի հասել երկիր: Պետք է սրանց ոչնչացնել...

— Ե՛րբ, որտե՞ղ... — շունչը պահեց Արտակը:

— Շուտով, ճանապարհին,— ասաց Վարդանը հանգիստ ու անտարբեր ձևով և լռեց:

Այս զրույցին կարիք էր զգում, ըստ երևույթին, նաև Վարդանը:

Դա թեթևացնում էր նրա ծանրացած հոգին:

Վարդանից ոչ պակաս մտախոհ էր և Վասակը: Ուրացություն օրերը նրան մեծ ուրախություն բերին: Նա մի պահ զգաց, որ երազը մոտենում է իրեն, շոշափում է, և ահա դրան կհաջորդի իր մեծության վերելքը: Բայց երբ Միհրնեբսեհը հափշտակեց նրա զավակները՝ հոգու անդորրը խռովվեց: Ի՞նչ պիտի լիներ նրա զա-

վակաների վիճակը հետազայում: Ի՞նչ իրադարձութիւններ պիտի գային տակն ու վրա անելու Հայոց աշխարհը. ի՞նչ ընթացքներ պիտի ունենար, քանի՞ կերպարանափոխութիւններ պիտի ընդուներ ինքը: Կարելի՞ պիտի լիներ այդ կրականերից կորզել իր զավակներին: Այդ ամենը սքողված էր ապագայի արյունալի վարագույրի հետև: Հիշեց իր վայրագ ծեծերը, իր բռնութիւնները, և խիղճն սկսեց տանջել նրան: Նա սաստիկ ընկճվեց զավակներից բաժանվելու օրից: Ապա և նրան տանջում էր այն ստորացումը, որին ենթարկվեցին նախարարները և ինքը: Նա նոր զգաց, թե ի՞նչ է բռնութեան ենթարկվելը և սկսեց ավելի ատել պարսիկներին: «Ոչ,— մտածում էր նա,— պարսիկներից՝ պարսիկներով»: Պարսիկներից ազատվել, պարսիկների ձեռքով... Սա պարզ էր նրա համար. Բայց ինչպե՞ս պիտի գար իրոք այդ ազատութիւնը պարսիկների ձեռքով: Այստեղ մի դժոխսային մշուշ զալիս պատում էր նրա միտքը: Պարսիկներից ազատվել պարսիկ դառնալ — սա ևս ճանապարհ չէր... Եվ եթե իր ամրոցում և Արտաշատում նրան ժպտում էր այդ կերպարանափոխութեան իմաստասիրութիւնը՝ այսօրեղ, պալատից, զնդանից և զավակներին պատանդ ու գերի թողնելուց հետո այդ խարդավանքների ու գլուխ կոտորող նրբաշավիղների ընթացքը անդունդների եզրով հիմա սարսափելի դառավ: Մտածել, երազել անմեղ բան էր, զքոսանք, սակայն հիմա դրանցով տարվելով՝ արյան հետ պետք էր գործ ունենալ: Իր զավակների արյան հետ նախ և առաջ:

Նա մտախոհ ձիավարում էր և մտատանջվում: Նրա հետ ընթացող Գաղիշոն և Գյուտը զրուցում էին: Գյուտը պատմում էր հոսորովի ծեծը: Գաղիշոն փոխանակ ծիծաղելու՝ տխրեց:

— Այդպես են սովոր,— ասաց նա:

— Այդպես ենք սովորեցրել,— ասաց Գյուտը,— քիչ ենք ծեծել. պետք էր շատ ծեծեինք: Եվ հիմա կծեծենք:

— Ո՞ւմ ձեռքով,— քմծիծաղ տվեց Գաղիշոն:

— Մերոնց:

— Ովքե՞ր են մերոնք...

Վասակը լսում էր զրույցը, և նրան առանձնապես խոր խոցեց այս վերջին խոսքը: Գաղիշոն բացեց վարագույրը: Վասակն արթնացավ այդ խոսքից: Իսկապես, ովքե՞ր են այն մարդիկ, որոնց ձեռքով պետք էր ծեծել պարսիկներին: Գրեմք մի քանի ուրախյալ

նախարարներ են իրենց զորքերով, որոնց ուրացնել կարելի էր գուցե բռնութեամբ, բայց ոչ խղճի մտքը: Իսկ արյուն թափել, բռնությունը հասցնել մինչև այդտեղ՝ կնշանակեր կորցնել դիրքը Միհրուններսեհի առաջ...

Անողորմ Գաղիշոն, որ միշտ անզգույշ էր բաց թողնում իր խոցող մտքերի նետերը, մռայլեցրեց Վասակին: Սա իրեն զգաց թագավոր առանց հպատակների: Դա զգում էր վաղուց, բայց ոչ այսպես իրական, մոտ: Ահա մոտենում են Հայոց աշխարհին, վճռական գործողությունների սահմաններին: Ինչո՞վ էր նա զսպելու վարդանի ապստամբությունը... Չէ՞ որ նա խոսք էր տվել Վարդանին՝ սահմանի վրա բացահայտվել: Բացահայտվել՝ ապստամբել: Հետևից սպառնում էր արյաց բանակը... Այդ ստույգ էր կռահում Վասակը... Այդ զգացվում էր, երբ Վասակը արժանացավ մտադուռնենալ Միհրներսեհի մոտ և զրուցել նրա հետ: Միհրներսեհը անշուշտ չէր վստահում իրեն և ոչ ոքի, նա ուժեր էր հավաքում... Կարո՞ղ է հիմա նա համոզել Վարդանին, որ ետ կենա վտանգավոր բայլերից: Կարո՞ղ է ստիպել հայ հոգևորականներին՝ հնազանդ ընդունել զրադաշտը... Ոչինչ, ոչինչ կարելի չէ: Նա գնում է անդունդ՝ դեպի անհայտություն...

Նա նժույգը կանգնեցրեց: Նրան հետևեցին Գաղիշոն, Ծանեհը և Գյուտը: Վարդանը եկավ, հավասարվեց նրան: Հետևից հասան Արտակը, Ներշապուհը, Հազարապետը, Եմավոնը: Մի պահ երկու ախոյան խմբեր իրար եկան: Վասակը տեղ տվեց Վարդանին իր կողքից ընթանալու:

— Մոտ ենք մեր աշխարհին, — տե՛ր Վամիկոնեից, — առաջ նա:

— Այո, մոտենում ենք... — առաջ Վարդանը հանգարտ:

— Ի՞նչ ես մտադիր... բացահայտվե՞լ...:

Վարդանը շպտասխանեց: Նրանք ընթացան մի պահ: Ապա Վարդանը կողքանց նայեց նրան.

— Մենք բացահայտվել երզվեցինք, տե՛ր մարդպան...

Այս անգամ Վասակը լռեց: Վարդանը շապտեց նրա խոսքին.

— Ստիպենք ժողովրդին, որ ընդունի զրադա՞շտը...

— Մոգերը կհամոզեն...

— «Առերե՞ստ... — խոցեց Վարդանը հեզամտաբար:

Վասակն զգում էր, որ թուլանում է իր խոսքի ուժը: Ուստի, զնաց բացարձակ գրոհի:

— Ամենայն ինչ ժամանակավոր է, տե՛ր Մամիկոնեից, կզբուան առերեսն ու ճշմարիտը, կմնա ժողովուրդը: Ի՞նչ ես անհանգրստանում և շտապում... Օրը գա, բարին հետը: Դեռ մի դուրս գանք յոթը քարի արանքից և մի փոքր խելք պահենք: մինչև հասնի գալիքը: Լավ գիտես ինքդ, որ սա քուլանաց պատերազմ չէ: Մի աշխարհ, մի ժողովուրդ է սպասում մեզ: Մեռնել ամենքս կարող ենք, բայց ո՞վ կարող է ապրեցնել մեր աշխարհը:

— Ճշմարիտ է,— վրա բերեց Գաղիշոն,— լսի՛ր տեր մարզպանին, Սպարապե՛տ: Մենք ևս սիրում ենք մեր աշխարհը:

— Ովքե՛ր եք դուք,— հարցրեց Վարդաշնը հանգիստ, բայց սուր նայելով Գաղիշոյին:

— Վասակյանքս... — ասաց համարձակ ու շեշտ Գաղիշոն՝ նույնպես հանգիստ ու սուր նայելով Վարդանին,— մենք ևս ունենք հայրենիք, բայց ուրիշ կերպ ենք մտածում...

— Մի՛ ապստամբիր,— ասաց Վասակը ծանրախոհ,— ո՞վ է մեզ հետ, որ ապստամբում ես: Բյուզանդիան, հոնե՛րը: Մեր ողջ նախարարութ՜յունը: Ի՞նչ ունենք. արքունական մեծ զո՞րք, զորութ՜յուն: Թո՛ղ ապստամբութ՜յունը առժամ:

— Ինչո՞ւ,— հարցրեց Վարդանը:

Բոլորը զարմացած նայեցին նրան: Նա բարձրացրեց ձայնը:

— Տե՛ր մարզպան, սա ապստամբութ՜յունն է և ոչ էլ պատերազմ, սա օրհասական կռիվ է հոգու բռնութ՜յան դեմ: Այստեղ արդեն ամեն մարդ մենակ է ու ազատ և կանգնած ոչ իմ և ոչ քո դիմաց, այլ իր խղճի: Եվ այս գործում ոչ ոք չունի իրավունք բռնանալու ոչ ոքի: Ամեն ոք ինքն է վճռում՝ ապրե՞լ, թե մեռնել...

Նրանք լռեցին երկար, մռայլված և ներքնապես ալեկոծ սրը՝ տերով:

Վասակը հանկարծ դարձավ դեպի Վարդանը և նժույզը կանգնեցրեց.

— Բայց դու գիտե՛ս, որ մեր հետևից գալիս է արյաց բանակը...

— Ո՞ւր է գալիս,— հարցրեց Վարդանը նույնպես կանգնեցնելով նժույզը,— Հայո՞ց աշխարհը, թե՛ մի այլ տեղ:

— Ո՞ւր այլ տեղ,— հարցին հարցով պատասխանեց Վասակը:

— Ճորա պահակ, հոների գնմ:

— Հնարավոր է: Բայց եթե մենք առիթ տանք՝ արյաց բանակը կմտնի Հայոց աշխարհը:

— Ո՛չ, նա գալիս է Հայոց աշխարհը, — զայրալի ընդհատեց Վարդանը:

Վասակի այս բացեիրաց գրոհը մտահոգեց Վարդանին: Եթե ճշմարիտ էր, ուրեմն հարկավոր էր վճիռներն ընդունել... Ի՞նչ, ուրեմն Վասակը սպառնում է Հազկերտի զորութեամբ...

— Բայց ինչո՞ւ եք ինձ դիմում, տյա՛րք վասակյանք, — հարցրեց նա անսպասելիորեն հասարակ ձայնով, — խոսեցեք ժողովրդի հետ...

— Ժողովրդի հետ կխոսի Հազկերտի բանակը, — ասաց Վասակը գրգռված:

— Թող շատ չհոխորտա շունը, — ձայնը բարձրացրեց Վարդանը, — թող բանը չհասցնի հուսահատութեան: Նրա դեմ կհանենք ողջ Աշխարհն Հայոց, և նա կտեսնի...

— Ողջ Հայոց աշխարհը, — զայրացավ նաև Վասակը: — Չես համարձակվի այդ ոճիրը գործել: Ո՛ր իրավամբ ողջ Աշխարհը կդնես ոչնչացման վտանգի տակ:

— Ոչնչացման վտանգը ահա գալիս է մեր հետևից, — խայթեց Վարդանը:

Վասակը մտրակեց իր նժույզը և առաջ անցավ: Սաստիկ անհանգստությունը պաշարեց նրան: Գաղիշոն և մյուսները հասան հետևից:

— Հասկանո՞ւմ եք, թե ինչ կլինի վիճակը, — ասաց վրդովված Վասակը, — մենք մոգերին և զորքին կկոտորենք, դա դժվար չէ. բայց հետևներիցս կհասնի արյաց բանակը... հասկանո՞ւմ եք...

Գաղիշոն միայն հոգոց հանեց: Ռշտունյաց նախարարը նայեց Մանեհին, և երբ սա մի փոքր ետ մնաց՝ իբրև ինքն իրեն:

— Իսկ չի՞ լինի, տեր մարզպան, գլխից էլ ազատվենք, գլխացավից էլ... մի սրի հարվածով...

Գաղիշոն հասկացավ, սրված նայեց Ռշտունյաց նախարարին և աչքով արեց, որ լռի: Սակայն նա շանսաց:

— Միտքդ չեմ հասկանում, — ասաց Վասակը՝ ազոտ գլխի ընկնելով Ռշտունյաց նախարարի ակնարկը:

— Այնպես, ինչպես փորձեցինք նրա հետ ծովի ափին... և բայց ափսո՛ս վրիպեցինք...

— Այդ բաներից զգո՛ւյշ... — ասաց Վասակը խիստ նայելով Ռշտունյաց նախարարին, — Վարդանին շարժի սպանել, այլ Վարդանանց՝ ժողովրդին... իսկ ժողովրդին ինչպե՛ս կսպանես: Մեզանից արյուն չէ, որ պահանջում են, այլ կրոնափոխություն: — Եվ Վասակը դարձավ դեպի Գաղիշոն. — սա պարզ է, չէ՞, իշխան... և ում չէ ո՛ւմ, բայց զոնե քեզ...

— Սխալմունք էր, բայց ոչ իմը... — ասաց Գաղիշոն և հոգոց հանեց:

— Ես վճռում եմ կասեցնել նրա հարվածը: Այս գիշեր իսկ սուրհանդակներ ուղարկենք մեր զորագնդերին, որ հավաքվեն Զարեհավան:

— Զարեհավա՛ն, ինչո՞ւ, — հարցրեց Գաղիշոն:

— Համենայն դեպս: Գան միանան պարսից զորագնդին, ճընշեն ապստամբությունը, մինչև մեր հետևից հասնի պարսից բանակը:

— Ես համաձայն եմ, — ասաց Գաղիշոն:

Մանեհն ու Գյուտը ևս համաձայնվեցին:

— Մենք այսպես կանենք, — մի փոքր լուռությունից հետո խոսեց Վասակը, — կշտապեցնենք մոզպետին, որ գործի անցնի, քանի դեռ այս մոլեգնածը ինքը չի անցել: Իսկ մենք կդառնալեցնենք մեր երթը. մինչ Զարեհավան նա անգոր է և մեր ձեռին...

— Ես համաձայն եմ, — կրկնեց Գաղիշոն, — եթե մենք ամեն բանում այսպես առաջ ընկնենք նրանից, ուշացնենք նրան՝ դրությունը կխլենք նրա ձեռից:

— Հենց այս գիշեր սուրհանդակները պետք է ուղարկենք, եթե ոչ...

Գաղիշոն ընդհատեց նրան.

— Շավարշանը երևաց...

Դիմացը, ձախակողմում բարակ մոխրագույն մեզի միջից նայել սկսեցին Շավարշան լեռները:

Վասակը մտահոգ նայեց այն կողմը.

— Հասնո՛ւմ ենք...

Կարավանը անցավ Տղմուտ գյուղը: Գա կես պարսիկ կես հայ գյուղ էր՝ ճահճուտ և այգեշատ: Վարդանն անհանգստացավ և

բարված նայեց շինականներին, որ բարև բանած, օտար աչքերով նայեցին կարավանին և անձայն հետևեցին երկիրն

Արտակը բացականչեց.

— Ողջո՛ւյն տանս այսմիկ:

Սա վերաբերում էր ներշնչութեան Արծրունւո՛ւն: Կարավանը մըտնում էր նրա աշխարհը:

— Շնո՛րհ արեք, այա՛րք, — կանչեց ներշնչութեան Արծրունին իբրև տանտեր, — տունը ձերն է:

Վարդանը մտածեց, որ մի օր էլ իր «տունը» կ'տնեն այս ողբերգական ողջույնով:

Ըստ երևույթին շինականները ոչինչ չէին իմացել նախարարների ուրացույթյան մասին: Սեբուսիները, ինչպես միշտ, Վարդանին տեսնելուն պես վեր կացան տեղներից և խաշակնքեցին կրեսները: Մա աչքեց Վարդանի գեմքը ամոթի ու կշտամբանքի կրակով: Ծա այլայլվեց: Եվ կարծես երագում հանկարծ կանանց շարքից անջատվեց մի գեղջկուհի, որ ցնցոտիներով մեջ էր, և նույնպիսի ցնցոտիներով փաթաթած երեխան գրկին վազեց Վարդանի կողքով, պա մոտեցավ և երեխայի թաթիկը քսեց նրա զգեստի քղանցքին: Երեխան ուրախ քրքջաց և իր սև խաղողի աչքերով նայեց Վարդանին:

— Քաջությանդ շնորհքը վրան, Սարսապետ, — գոչեց գեղջկուհին ժիր ձայնով և կանգ առավ:

Վարդանը տխուր նայեց գեղջկուհուն և դառն ժպտաց ինքն իրեն:

Օրը տարածամում էր, որ մտան Ավարայրի դաշտը, հասան Տղմուտ գետի ափը և բանակ դրին: Պարսիկ զինվորներն սկսեցին ուրախ աղաղակներով ջրել իրենց նժույզները: Մագերը թեթև վրաններ սարքեցին: Նախարարների համար սպասավորները գոյգոյք փոեցին, և նրանք իջան նժույզներից:

Ամառային մթնշաղը սկսեց ասղնտել, վետվետալ գետի, թեթրի վրա: Տղմուտ գետը կոհակում էր ափերին: Հովն օրորում էր գետափի ծաղիկները: Արևմուտքում կանաչավուն երկնքում տրբփաց գիշերային առաջին աստղը, որի արտացոլանքն սկսեց պարել Տղմուտի ալիքներում: Շամբերն էին բուրում դիմացի ափերից հեռավոր գոթերի բարակ ու թթաուն կառոցի հետ:

Երեկոյան ընթրիք տրվեց, որին շմասնակցեց Վարդանը և վեր

կենալով տեղից գնաց գետափով դեպի վայր: Նրան մենակ թողին. գիտեին, որ սիրում է առանձնանալ: Այնտեղ լավ էր. չէին լավում մոգերի կոնչյուններն ու պարսիկ գինվորի հոհոցը: Նրա հետևից լարված, բայց հուշիկ գնում էր Արծվին՝ չկամենալով վերդովել իր տիրոջ հոգեկան վիշտը ավելորդ ներկայութեամբ:

Մի համեստ կրակ էր պլպլում գետափին և լուսավորում մի քանի դեզեր՝ թանձրացող մթնշաղի մեջ:

Վարդանը դանդաղ մոտեցավ կրակին, որ արդեն սկսեց լուսավորել մի բավական հասակավոր մարդու խոշոր խոհուն դեմքը: Մարդը ծալապատիկ արձանացել էր կրակի դիմաց: Նրա խրոխտ դեմքը, մինչև ականջները շրջված հաստ ընչացքները, թիկնեղ իրանը ավելի զորավարի տեսք էին տալիս նրան, քան այլ գործի մարդու: Նա մտասուլջ ու լուրջ նայում էր հեռուն:

Երբ Վարդանը մոտեցավ, մարդը անվրդով ու ազատ նայեց նրան և առանց փոխելու իր դեմքի լրջութիւնը՝ արժանապատիվ շարժումով վեր կացավ և բարև բռնած կանգնեց: Նա ուժեղ էր և խստահայաց:

— Բարեողջո՛ւյն, շինակա՛ն,— ասաց Վարդանը հեզ ու բարի ձայնով:

— Ողջո՛ւյն,— թավ ձայնով ասաց մարդը և հազիվ նայելով Վարդանին՝ ավելացրեց հանդարտ ու դանդաղ.

— Չգիտեմ՝ իշխան ես, թե զորական մարդ, որ էնպես էլ պատիվ անեմ:

— Ոչ մի պատիվ հարկ չէ, շինական:

— Դե, էն ժամանակ պատիվ արա, նստի՛ր:

Ասաց ու դրէց իր կողքին քնած պատանուն:

— Վարդանիկ, վեր կաց մի խուրձ բեր զորականի համար:

Պատանին՝ Վարդանիկը, թարժած եզած վեր թռավ ու նայեց Վարդանին:

— Մի՛ տեղիք պատանեկո՛րն, ետ գետինն էլ կնստեմ,— հանգրստացրեց Վարդանը:

Շինականը խաշար, լրջախոհ գեմքը արժանապատվորեն վեր շարժեց և բամբ ձայնով առարկեց.

— Ո՛չ, պա՛րտք է՝ պիտի կատարի՛:

Վարդանիկը գնաց ցորենի մի խուրձ բերեց փոքեց Վարդանի տակ և նստեց կրակի մոտ: Վարդանը նստեց. նրա դիմաց կանգնեց Արծվին:

— Հնձվոր ես, տեսնում եմ,— ասաց Վարդանը,— բայց օգնականդ մանուկ է, շինական:

— Օգնականներս գնացին,— հանգիստ բացատրեց շինականը:— Մեկը Ատոմ նախարարի գունդը մտավ, մյուսը հայոց այրուձիի զինվոր է: Գիտե՞ս Սպարապետը: Աստվա՛ծ օգնական,— խաշակնքեց երեսը շինականը:— Անցյալ օրը ինքը ծխի պես անց էր կենում Ավարայրի դաշտով, խոսեցինք՝ աներևույթ եղավ:

Վարդանը տխրեց և գլուխը հակեց կրակին, որ ժպտում էր բացված վարդի պես: Շինականը չէր փոխում դիրքը, դիք ու խաղաղ, և իր խիստ ու բարի հայացքով նման էր իր տակի անսահման հաստատուն երկրին՝ լռակյաց ու մտախոհ:

— Գժվար է գործերդ, հը՞, շինական,— հարցրեց Վարդանը հոգածու ձայնով:

— Վա՛յ, քո տունը շեն, «դժվա՛ր է».— տաժա՛նք է տաժանելի: Հող է, բան կտա՞՞ քրի: Աշխատեցնում է:

— Այո, իհարկե,— ասաց Վարդանը:

— Աշխատեցնում է ու թանկանո՞ւմ...»

Շինականը լռեց՝ մտքում շարունակելով ասածը: Ապա բարձրաձայն խոսեց.

— Ա՛յ, ասում են Հազկերտը կոխվ է գալիս մեր հողի վրա: Կգա ու հողը էլ ավելի կթանկանա:

Վարդանը վեր նայեց շինականին, սա կատակ չէր անում. ընդհակառակը՝ լուրջ էր և անվրդով: Վարդանը շխոսեց. կրկին սկսեց նայել կրակին և մեղմ ու մտախոհ հարցրեց.

— Իսկ ի՞նչ է, շինական, ուզում ես, որ կոխ՞վ լինի, որ թանկանա՞ հողը:

— Կոխվք շե՛ն ուզի, գորակա՛ն,— խրատիչ եղանակով ասաց շինականը,— կոխվր շարե՛ն է: Ա՛յ,— բուռը դրեց գետնին,— արյունով է լցված. ո՞վ է ուզել արյուն... Մենակ՝ որ շատ է միջի արյունը, էնքան էլ թանկ է: Ու հայրենին էլ դա է:

— Հո՞ղը, ասում ես, հը՞,— խորհեց Վարդանը:

— Հա՞, հողը դառն իմաստո՞ւն, դառն սիրելի է: Հողը կյանք է, մե՛ծ խորհուրդ է հողը, գորակա՛ն...»

Տղմուտը դարիվ-դարիվ վարում էր իր խաղացկուն կոհակները, մի տեսակ հոսեցնելով շինականի խոհուն խոսքերը իր հետ:

Կարծես ժամանակն էր հոսում: Մի փոքրիկ փլվածք ափի հողից հնչելով գլորվեց շուրը և ճանապարհ ընկավ ջրի հետ:

Վարդանի մեջ հետաքրքրություն շարժվեց դեպի այս անշուք շինականը, որ հանգիստ ու արժանապատիվ՝ խոսում էր հողի, կյանքի մասին: Նա չէր նման Վարդանի հանդիպած փիլիսոփաներին՝ Աղեքսանդրիա, Հունաստան, որ խոսում էին գրքերից ու իրարից առած մտքերով: Սա չէր էլ իմանում, որ ինքը փիլիսոփա է: Սրա ասածի մեջ շատ կար հող, արյուն, քրտինք ու ջանք, որից նրա դեմքը արևառ ու քամահար՝ արձձի գույն էր ստացել և բարակ աղվամազը ճերմակ եղյամ էր դրել նրա կոշտ մորթու վրա:

— Հիմի Հազկերտը գալիս է կոտորը հողին զարկելու,— խոսեց մեղմ քմծիծաղով շինականը:— Հը, հողին ո՞վ է հաղթել...

— Շինական,— զարթնեց մտքերից Վարդանը,— ապա չի՞ պատահում, որ ազգը չի ապրում:

— Պատահում է,— հանգիստ ասաց շինականը՝ կարծես շապրողը մի մժեղ լիներ:— Աշխարհքն անդադար է, զորական,— և ցույց տվեց Տղմուտ գետը:

— Տեսնո՞ւմ ես:

— Տեսնում եմ:

— Գնա՛ց: էլ էն չի՛:

— Հա՛, մինչև նայեցի՛... հը՛մ...

Կրակը քուն էր մտնում: Հովը թևերը կախեց հոգնած՝ Ավարայրի վրա: Խոսակիցները լռեցին և ամեն մեկը իր մտքի հետև նայում էր խոհուն կրակին: Վարդանը մտածեց այն մասին, որ շինականը ոչ մի անգամ չհարցրեց ճամբարի մասին, ոչ էլ նայեց կարավանի կողմը, կամ ուզեց իմանալ, թե ով է իր հետ խոսողը: Ինչպես իր գլխի վրայով անցնող ամպ, որի ով լինելը չէր հարցնում, վրան չէր էլ նայում, այդ բոլորը անց էր կենում, և նա մըշտական նստած էր այնտեղ անվրդով ու իմաստուն: Եվ Վարդանը ո՛չ մի խոսքով չկամեցավ խախտել շինականի արժանավայել անտարբերությունը: Նրան ազդեց այդ անտեսումը իր շուրջը կատարվող անցուդարձի: Այդպես լավ էր, այդպես այդ մարդը լցվում էր Վարդանի հոգին իբրև մի անսպառ ուժ, որ գալիս էր այդ «դառն», «արյունայի» հողից, որով հայրենիքը դառնում էր «իմաստուն»:

Վարդանը զգաց, որ ժամ է մեկնելու: Գիշերը վրա էր հասնում, և շինականը կարոտ էր քնի: Ինքն էլ հոգնած էր:

— է, աստված հաջողի, սիրելի շինական. գիշերը բարի, — ասաց ու վեր կացավ Վարդանը:

— Լույս բարի, զորական, — ասաց շինականը և վեր կացավ: Վարդանը հեռացավ: Արծվին հետևեց նրան: Նրանք գնացին ճամբար, որ արդեն քնած էր: Վարդանը մտավ իրեն հատկացված վրանը և նստեց:

Հետո թեթև ծափ տվեց: Ներս մտավ Արծվին: Վարդանը հրամայեց նրան զգույշ հրավիրել Հազարապետին, Ներշապուհին, Արտակին և Ծամվոնին, սրունց վրանները մոտ էին իրենին:

Նախարարները քնից էին վեր կացել և շնայած հոգնածության և կոտորած քնի անախորժին՝ հետաքրքիր էին, թե ինչ ունի հաղորդելու Վարդանը: Նրանք նստեցին, բայց Վարդանը դեռ չէր սկսում ոչինչ:

— Ինչո՞ւ չպնդեցիր, որ դեպի Արտաշատ ուղղվենք, — հարցրեց Ներշապուհը:

— Մի փոքրիկ ժամանակ եմ ևս շահում: Որ «շտապել» կարողանամ... — ասաց Վարդանը, — հետևներիցս բանակ է գալիս...

— Այդ բանակը հույժ մտահոգիչ է, — ասաց Հազարապետը, — չենք կարող «շտապել»:

— Ոչ, ես կշտապեմ, — ասաց Վարդանը, — հենց դրա համար կշտապեմ...

Հետո աչքերը վշտով լի նայեց վրանի դռնից դուրս հեռուն և կարծես ինքն իրեն ասաց.

— Զավակնե՛րս մնացին գազանի ճիրաններում գերի ու պատանդ, զավակնե՛րս դուրս պրծնեին մեկ... եթե ոչ ի՞նչ ժամանակ այլևս...

— Հա՛, — արեց Ներշապուհը և զուլբը կախեց, հասկացավ, այրուձիի մասին էր խոսում Վարդանը սրտակեզ:

— Տեսե՛ք՝ ծախեց իր զավակները. սիրտը մղկտում է. արժանի է անեծքի. և նրանք երկու հոգի էին. իսկ ես ինչպե՛ս պիտի ծախեմ այնքան զավակը... Արյունների մեջ եմ մեծացրել նրանց:

Վարդանի աչքերը լցվեցին: Վշտահար հոր էր նման նա այդ պահին, որի հոգեհատորները հեռու էին և վտանգների մեջ: Վարդանը կարծես մոռացավ, որ իր մոտ էր կանչել նախարարներին և

նրանց բան պիտի ասեր: Նա մտքով գնաց դեպի հեռավոր Ապար աշխարհը և երևակայության մեջ տեսավ հազարավոր երիտասարդներ, որոնք իրեն ապավինած և մատաղ կյանքերը նրան վստահած, թախծալի աչքերով ու սիրակարոտ նայում էին նրան, իրենց հորը, արյունների գնով՝ հարազատ ու մտերիմ հորը, քաշ Սպարապետին:

Վարդանը թաքուն տանջվում էր այդ մի բուռն, բայց թանկագին մարտիկների վիճակից: Ճշմարիտ է, այս ամենը կատարվեց նրա կամքի հակառակ, և ճշմարիտ է, հայրենիքը շատ տալիս մեծ էր և կարի կարևոր, քան այդ այրուձին, որ նա կարող էր և մի ճակատամարտում ծախսել ինչպես ծախսել էր շատ անգամ Վարդանը, ռազմական անհրաժեշտության ենթակա.— բայց Վարդանը միշտ սիրել էր իր մարտիկներին և այս անգամ, որ այնպես դավաճանորեն թողեց նրանց գաղանի ճիրաններում՝ տանջվում էր սրաի սուր ցավից:

— Եվ ապա Աշուշան... նրա մեղքը մնաց մեր հոգու վրա... եղբայրակից ազգի զավակը, մեր զինակիցը... բայց ի՞նչ կարող եմ անել... — Եվ Վարդանը լռեց տխուր աչքերով:

Արտակն ընդհատեց սրտամաշ լռությունը.

— Սպարապետ, տանջվում եմ ծանր տառակուտանքներից, աղաչում եմ, ասա, ի՞նչ ենք անելու: Ունե՞ս մի վճիռ...

— Վճիռը գալիս է ինքը, իջխանիկս. արյունը թափվելու է...

— Բայց չէ՞ որ գիշերը ցերեկ էք անում, պատրաստվում և դարձյալ ժամանակ չկար: Եվ հիմա էլ դեռ պատրաստ չենք:

— Դա անցա՞վ... Հիմա ժողովուրդը պիտի խոսի. նա է պատերազմողը: Ու հիմա երբ նա կրարձրանա՝ այլևս չի կարելի կոտրել նրա ոգին: Հիմա նա է մեր ուժը: Միայն հիժա, եթե պատանդոս այրուձին՝ զո՛ւրս պրծներ Հազկերաի ճիրաններից: Բայց ես չեմ սպասի... Նա մահի վտանգի մեջ է:

— Ենորհապարտ եմ, Սպարապետ... — գորովանքով խոսեց Արտակը, — եթե ոչ՝ դառն անձկության մեջ էի:

— Սպասի՛ր. այնպիսի՛ արհավիրք բարձրացնենք բռնավորի գլխին, որ ծնած ժամը անիծի... Զի՛ շտապի մի օր, չի՛ ուշանա մի օր...

— «Զի շտապի մի օր, չի ուշանա մի օր...», — կրկնեց Հազարապետը զուլան օրորելով ու խորհելով:

Ներշապուհը կենդանացավ:

— Բարի է... որտե՞ղ ես սկսում... •

— Մինչև Զարեհավան:

— Ինչո՞ւ չես սկսում Մաղկոտնում:

Վարդանը դառնորեն ժպտաց.

— Ի՞նչ ուժերով... ձերբակալ ենք պարսից գնդում... Դեռ զարմանք է, թե ինչու մեզ չեն ոչնչացնում... Երևի՝ որ դեռ «ուրացած» ենք... դեռ հույս ունեն մեզանից... վախենում են ժողովրդից... Հիմա մարզպանը մեզ տանում է խցիկում Զարեհավանի պարսիկ բերդապահ գնդի երախը: Ուստի մինչև Զարեհավան պետք է ջարդենք սրանց...

— Սուրհանդակներ ուղարկենք նախարարներին՝ գան իրենց զորքերով, — ասաց Արտակը:

— Կտատանվեն, չեն միարանի, կուշացնեն, կխառնակեն գործը... Լուր կտանք Ատոմ իշխանին Այրարատ, թող արագ հասնի մեզ մինչև Զարեհավան, ջախջախի սրանց:

— ...Խորհելու բան է, — տատամսեց Ներշապուհը: — Բայց ուշանում ենք:

— Ուշանո՞ւմ ենք... Պիտի շտապե՛նք:

Այնուհետև երկար դեռ կշռում էին իրենց անելիքը, որ Վարդանը ընդհատեց խոսքը և կանչել տվեց սուրհանդակներին: Արծվին բերեց նրանց, և Վարդանը նրանց հրահանգեց այս գիշերն իսկ կարավանից զգուշ դուրս գալ և իսկույն ճանապարհ ընկնել Այրարատ:

Սուրհանդակները ստվերների պես հավիցին վրանի դռնից սահելով անձայն: Ներշապուհը, Հազարապետն ու Արտակը հեռացան շտապ՝ շատ կասկած չհարուցանելու համար: Վրանը մթնեց:

Վարդանը պառկեց քնելու: Նա մի փոքր թեթևացավ: Վերջապես մոտենում էր հատուցման օրը...

Դեռ երկար հնչում էին նրա ականջին շինականի խոսքերը. «Կո՛րվը չարեն է...»:

Կուշտ ենք արյունից, շատ է թափած... Այս մտքերով տարված Վարդանը դեռ երկար չէր կարողանում քնել՝ չնայած հոգնածուժյան: Երկար ժամանակ աչքերից չէր հեռացնում Տղմուտի ափին նստած այն խոշորադեմ բեկորը, որ աներկյուղ ու միամիտ նայում էր արհավիրքին և բարիք էր հանում նրա միջից:

Հենց նույն գիշեր խավարից օգտվելով՝ ճամբարի զանազան կողմերում նժուզները լողացնելու կամ արածացնելու պատրված կով խլրտում էին սուրհանդակները: Նրանք իրարից անտեղյակ, իրար կարծելով միևնույն տերերի կողմից ուղարկված՝ ճամբարից հեռանում և կորչում էին զանազան ուղղությամբ:



Առավոտյան վաղ Վարդանին զարթեցրեց մի արտասովոր աղօթուհի: Նա նստեց անկողնի մեջ և ներս կանչեց սպասավորին.

— Ի՞նչ է պատահել:

— Զեմ իշխում ասել, տեր իմ, — կես ծիծաղ կես վիրավորված պատասխանեց սպասավորը. — մոգերը վիճակ են գցել, թե որը որ նախարարի տան մոգը դառնա, և հիմա կովում են իրար հետ:

Վարդանը մի քանի հայհոյանքի խոսքեր ուղղեց մոգերի հացեցին, հագնվեց և դուրս եկավ վրանի դուռը: Մոգերի վեճ-աղմուկը մեծացավ: Նրանք սկսեցին ծեծկվել: Մահակները իջնում էին սրտ նրա գլխին և շէր իմացվում, թե ով ում է թակում: Դուրս եկավ վրանից մոգպետը և իր ստորադրյալ մոգերին հրամայեց դադարեցնել ծեծկվողները: Սրանք գնացին և փոխանակ հանգստացնելու՝ իրենք սկսեցին ծեծել ոմանց, որոնք թողին առաջվա ախոյաններին և հարձակվեցին սրանց վրա: Մոգպետը գնաց դեպի մոգերը՝ իր անձով սաստելու անկարգներին: Բայց դա չօգնեց, մոգերը շարունակեցին ծեծկվելը և այնքան, մինչև որ մոգպետի ըստորադրյալները փախան ծեծողներից և վազեցին դեպի մոգպետը՝ գանգատվելու շարժումներով: Եվ հենց այն է՝ ուզում էին խոսել, որ մահակներն իշան սրանց գլխին այնպիսի նոր ուժով, որ սրանք փախան մտան մոգպետի վրանը: Մեծկվողները դադարեց բնականաբար և ինքնաբերական կարգով — մոգերը հոգնեցին և ցրվեցին:

Արտակը ծիծաղելով մոտեցավ Վարդանին.

— Տեղիք շունեք գանգատվելու կյանքի տխրությունից, Սպասարպետ:

— Այո, կարողանա մարդ լաց լինել՝ նյութը շատ... — ասաց կես ծիծաղ կես տխուր Վարդանը:

— Բայց սրանք կսկսեն գործել.— ասաց Արտակը մտահոգ  
եղանակով,— կմտնեն եկեղեցիները տները, ընտանիքները...

— Դեռ շատ ունենք քաշելիք, իշխանիկս,— հառաչեց Վարդանը:

Վասակն այդ պահին իր վրանում փսփսում էր Գաղիշոյի հետ.  
մոգերի աղմուկը նրան ևս հետաքրքրել էր: Երբ սպասավորից  
իմացավ պատճառը, անհանգստացավ.

— Սրանք պետք է դաստիարակեն մեր նախարարական ըն-  
տանիքները: Սրանք մեր գլխին փորձանք կդառնան:

— Փորձանք են՝ եթե անգամ բարեկիրթ իմաստուններ լի-  
նեն,— ասաց Գաղիշոն:

Վասակը շհանգստացավ: Նրա ճանապարհին կանգնում էր ան-  
խուսափելին. այն պիտի լինե՛ր, պիտի կատարվե՛ր... Իրավ, նա  
սուրհանդակ էր ուղարկում իր զորագնդին պատրաստ լինել հար-  
վածելու թշնամուն, նույնը և թեկադրեց մյուս նախարարներին,  
բայց կրկին խոցեց նրան այն միտքը, որ Հազկերտը նրան ուղար-  
կում էր Հայոց աշխարհը ո՛չ պատերազմ մղելու, այլ անարյուն  
տարածելու մազդեզանց կրոնը: Եվ ապա նաև դեռ հարց էր, թե  
ինչո՞վ կպսակվի այդ իր հարձակումը ապստամբների վրա:

Բայց ինչ որ է՝ ձեռնարկելով ապստամբութեան ճնշումը՝ նա  
աչքի առաջ ունեցավ հակառակորդ նախարարների զորագնդերը  
միայն: Դա որոշ էր նրա համար. իսկ դրանից դուրս մշուշ էր և  
մռայլ մթություն:

Բարձրանում էր արևը. ժամ էր երկրպագութեան: Մոգպետը  
հնչել տվեց շեփոթը: Զորագունդը շարժվեց Ավարայրի դաշտում  
կիսաբոլոր: Մոգպետը դուրս եկավ այդ կիսաշրջան հրապարակը,  
մոգերը գնացին նրա հետևից: Վասակը յուրայիններով գնաց նույն-  
պես: Վարդանը, Հազարապետը, Արտակը և Ներշապուհը, որ ճա-  
նապարհին շարունակ մերժել էին գնալ երկրպագութեան այլ պա-  
տրվակներով՝ այսօր բացեիբաց մերժեցին հրավերը: Վարդանը  
խստորեն դուրս արեց իր վրանը մտած մոզին:

— Դու՛րս մաքրվիր, շո՛ւտ... — հրամայեց նա զզվանքով:

Երկար սպասել չէր կարելի: Արևը դուրս ելավ, սկսեցին պաշ-  
տամունքի արարողութիւնը: Մոգպետի ունգային ձայնը գնաց  
տարածվեց Ավարայրի դաշտում, սրան միացան թմբուկների ու  
զալարափողի աղմուկը, մոգերի աղթքի մրթմրթոցը: Առաջին

արարողութիւնն էր Հայոց աշխարհի հողի վրա: Դա ազդեց բո-  
լորին: Պաշտամունքի արարողութիւնը վերջանալուց անմիջապէս  
հետո մոզպետը մոտեցավ Վասակին.

— Անհնազանդութիւնն էր դա, թե պաշտամունքի թերացում,  
տեր մարզպան:

— Անսովորութիւնն է, տեր հոգևոր,— պատասխանեց Վասա-  
կը հասարակ թախծալի շեշտով, թաքցնելով ներքին զայրույթն ու  
տազնապը,— համբերի՛ր: Քո սեփական մոզբերին շէս կարողանում  
հնազանդեցնել...

Մոզպետը տարակուսանքով լռեց:

Կարավանը վեր կացավ և երբ լիովին պատրաստ էր՝ անցավ  
Տղմուտ գետը, և բռնեց Բագրևանդի ճանապարհը:



Արտաշատ մայրաքաղաքը լարված եռուզեռում էր Ատոմի և  
կաթողիկոսի մեկնելուց հետո: Պարսիկ և հայ բերդապահ զորա-  
գնդերը իրար կողքի, իրար խեթ նայելով սպասում էին լուրերի և  
գեպքերի: Ատոմի և կաթողիկոսի հեռանալը քաղաքից երկու կող-  
մին էլ հույսեր էր տալիս: Հայ զորագունդը սպասում էր, որ Ատո-  
մը կհավաքի երկրի ուժերը և արքունի զորքի գլուխ անցած՝ կգա  
Արտաշատ, կոշնչացնի հափշտակիչներին: Իսկ պարսիկները նրա  
հեռանալու մեջ տեսնելով ուժերի թուլութեան ակներև նշան, պատ-  
րաստվում էին հանկարծ հարվածել, երբ պարսից զորագունդը  
հասներ Հայաստան:



Ատոմ նախարարը դուրս գալով Արտաշատից՝ զնաց բազմու-  
թեան հետևից, բայց չմիացավ նրան: Ատոմին պաշարել էր մի հո-  
գեկան խոր խռովք: Ի՞նչ է անում ինքը, ո՞ւմ գեմ է անում, ի՞նչ  
դուրս կգա այս ամենից: Ճշմարիտ է, նա կամենում էր արծար-  
ծել ժողովրդի ցասումը, որ նա դիմանա գալիք արհաժիրքին: Բայց  
այն էլ կար, որ ժողովուրդը տարերային պոռթկումով կարող էր  
վտանգավոր գործերի դիմել և արյունահեղ վախճանով վիժեցնել  
ապստամբութիւնը: Եվ խռովութեան դեպքերն սկսել էին ծայր առ-

նել ամբողջ երկրում՝ մի ծայրից մյուսը: Հարազատն հարազատին, տերն ու ծառան իրար շինյալելու նշանաբանը կենդանի ուժով յուրացվեց ամենքի կողմից: Կասկածն ու հսկումը վերացրեց առաջվա միամիտ վիճակը: Ամեն մարդ որևէ մեկի մեջ տեսնում էր հայրենիքի դավաճան և տագնապ էր զգում: Եղան քարկոծի դեպքեր նաև հեռավոր վայրերում, սարսափը տիրեց ամենքին: Եվ ամենասարսափելին այն էր, որ շէր կարելի ոչ ոքի համար միջամտել, ոչ ոքի պաշտպանել: Հոգեկան հափշտակութւյան նման մոլեգնեց ուրացման կասկածը: Կանգնեցնել ժողովրդական զանգվածներին իրենց բռնկումների մեջ հնար չկար այլևս: Մնում էր արագ կազմակերպել տերունական զորքը, դիմադիր բռունցքը, նրանով զսպել պարսիկների ոտնձգութւյունները և պահել ժողովուրդը պատրաստ, բայց զուսպ սպասողութւյան մեջ:

Այս զորական մտահոգութւյուններից ավելի Ատոմին մտատանջում էին ներքին, հոգեկան տարակուսանքները: Արդյո՞ք նախարարներն ընդունել են զրադաշտական կրոնը: Արդյո՞ք բոլորն են ընդունել: Արդյո՞ք այնպիսի վիճակի մեջ են, որ նրանց կաշկանդել է, հողթել, և նրանք հուսահատվել են ու համակերպվել: Համաձայն են ապստամբութւյան... Ահա՛ խնդիրը: Թերևս կարող է պատահել, որ նրանք կգան իրենց աշխարհները, կկանգնեն իրենց զորագնդերի գլուխը և կսկսեն իրար դեմ ազգամիջյան կռիվը... Եվ ո՞վ ում հետ կլինի այնժամ, ով պարսիկների հետ ու դեմ... Ի՞նչ կարող է անել Ատոմը մի բուն հավատարիմ նախարարներով: Ահա գնում է նա ուժեր հավաքելու. բայց ո՞ւմ դեմ... Եվ ո՞վ կգա իր հետ օտար նախարարների օտար զորագնդերից: Եվ ինչպե՞ս գնալ մտնել Բզնունյաց ծովի նախարարական տները ուժեր դուրս քաշելու՝ մենա՞կ, թե շոկատով: Թույլ կտայի՞ն իրեն այդ բռնութւյունը, թեկուզ և խաղաղ առաջարկը: Ոչինչ, ոչինչ հայտնի չէ...

«Ախ, Արտա՛կ, Արտա՛կ, Արտա՛կ, ո՞ւր ես տանում ինձ. ինչե՞ր արիր», — մրմնջաց Ատոմը յուրովի և նայեց իրենից մի երկուս փարսախա առաջ դեպի շենքերը հոսող բազմութւյան, որի սևացած զանգվածը վերևից արյունաներկ էին անում ջահերը:

Ո՞ւր է գնում այդ բազմութւյունը և ինչե՞ր կարող է անել նա, մինչև ո՞ւր կարող է ծառանալ նրա ցասումը:

Բայց պետք էր զսպել ներքին տվայտանքն ու սև մտքերը: Պետք էր վճիռներ կայացնել, գործել: Եվ վճռեց վերցնել հետը

Սղիշեին, տանել թգնունյաց աշխարհները, ոտքի հանել նրանց ժողովուրդները և նրանց օգնությամբ՝ նաև՝ զորագնդերը:

«Եթե ուխտյալները կողմ են դիմադրության՝ զոհ կլինեն ինձանից, իսկ եթե դեմ են և ուրացած...», — ձեռը խստորեն թափ տվեց Ատոմը. — «Ես կկանգնեմ նրանց դեմ և ինձ հետ հավատարիմները»:

Ատոմը որոշեց հանդիպել նաև իր աշխարհը՝ Գնունյաց, վերցնելու իր զորագնդից մի թեթև ջոկատ, շտալով նրան սպառնալի կերպարանք, նրանով մտնել նաև Խորխոռունիք, համոզել Խորեն իշխանին, միանալ նրա հետ և ապա անցնել Տարոն, Ռշտունիք և Արծրունիք: Նա կամենում էր այն կողմից, որ իր կարծիքով Զարեհավան շարժվող պարսիկ զորագնդի խոր թիկունքն էր, պատրաստել զորքի և ժողովրդի հարվածը:



Կեսօր էր: Արևը խանձում էր մոլեգին Արտաշատի և էջմիածնի ճանապարհին ընկած շենի՝ Զմերոցի տներն ու փողոցները:

Զմերոցը մի այգեշատ և ընդարձակ շեն էր, էջմիածնի ճանապարհի վրա, ուր մշտական կանգնած էր լինում արքունի զորքի որևէ ջոկատ իբրև պահեստ, որ և մեծ մպսամբ Վարդանի զորքերից էր լինում:

Չնայած հնձի օրեր էին՝ շենի բուն բնակիչները չէին եկել հանդ աշխատանքի: Նրանք մեծ վրդովմունքի մեջ էին, Զմերոցի զինվորների հետ հավաքվել էին շինամեջ, ուր նոր եկել էր Առաքելը իր ընկերներով:

Նա ուզում էր իմանալ նրանց տրամադրությունը և շինականներ գրավել իր կողմը:

Այդ պահին Արագածի կողմի ճանապարհից մի խումբ վանականներ մտան շենը: Նրանք պարկեր ունեին ուսներին և կիսամերկ էին:

Շինականները դարձան նրանց.

— Ի՞նչ է, հայր սուրբե՛ր, ձեզ է՞լ են պլոկել:

Երերյալ տատանյալ դառանք, եղբայրնե՛ր, — առաջ եկավ մի ծերունի կորամեջք վանական, — անջրդի լեռան, ափերակ վանքի

հարկն էլ են պահանջում... Տարա՞ն վանքի վերջին հատիկը, դռ-  
ները կնքեցին, մեզ էլ տանջեցին:

— Ի՞նչ են ասում:

— Հոգեւոյս հավա՞տն ուրացեք: Ծաղկյալ մատյաններն այ-  
րեցի՞ն... խաչքարերը կոտրեցի՞ն...

Մեր վանականը հևում էր ու դողում: Ո՞ւր էին եկել, ի՞նչ էին  
մտադիր, իրենք էլ չգիտեին:

Հենց նույն պահին Ատոմը մտավ շենք: Իսկույն եկան հավաք-  
վեցին շինականներն ու թափառականները: Եկան նաև Առաքելի  
խմբի մարդիկ: Ատոմը նստեց մեծ թթենու ստվերում և կանչեց  
արքունի զորքի հրամանատարներին, բացատրեց դրախտը և  
պատվիրեց զգույշ ու զգաստ հետեւել գեպքերին՝ պատրաստ ամեն  
անակնկալի:

— Զինվեցե՛ք, պատրաստ եղեք հարվածին. բայց ո՛չ մի  
հարձակում պարսիկների վրա, — խիստ պատվիրեց նա և դարձավ  
ավագներից մեկին, — Սենեքերիմ ավագ, հրամանը քեզ և դու ես  
պատասխանատուն:

— Հրամանդ, — ասաց Սենեքերիմ ավագը ածուխի աչքերը  
խոնարհելով պատշաճ կերպով, բայց դժգոհ:

— Հա, ի՞նչ կա, — զննեց նրան Ատոմը, — Լսի՛ր: Որ կաշիներդ  
էլ մաշկեն՝ շարժվեք, ամեն ինչ կփչացնեք, — բացատրեց նա:

— Բայց հոգիներս է վառում, իշխա՛ն, — ասաց Սենեքերիմ  
ավագը:

→ Խստագույնս հրամայում եմ, — գաժանացավ Ատոմը: —  
Դե՛...

Ատոմը համենայն դեպս արքունի զորքի շտաբից վերջրեց  
մի խումբ ընտիր հեծյալ՝ իբրև թիկնապահ, որ հարկավոր էր վրա-  
տահուժյան համար և գնաց:

Նոր էր Ատոմը հեռացել, որ Արտաշատի կողմից մի բավակա-  
նին ստվար զորամաս երևաց: Շինականները և զինվորները շարժ-  
վեցին դեպի շենի ծայրը: Զորամասը պարսկական էր: Մտով շենը  
և կանգ առավ: Զորամասի հետ էին պարսիկ հարկահաններ: Նրան-  
ցից գառավելով հրամանատարը մոտեցավ շինակառններին:

— Հարկը պատրա՞ստ է:

Առաջ եկավ մի ժերունի շինական, որ ըստ երևույթին գլուղապետն էր: Նա սառն ու արժանապատիվ հայացքով նայեց հրամանատարին.

— Հարկը պարկերում պատրաստ է, մենակ թե՛ հարկը վճարում ենք մեր իշխանավորին: Թող նա՛ հասցնի ձեր արքային:

— Հիմա մե՛նք ենք հավաքում,— նույնպես սառն ասաց պարսիկ հրամանատարը և արհամարհական շեշտով ավելացրեց,— բերե՛ք, շո՛ւտ:

Պարսիկը բացեիրաց ապօրինութունն էր անում: Գլուղապետը արդարացի էր: Շինականները վրդովվեցին: Ի՞նչ անել... Ատումը հրամայել էր չշարժվել՝ «խստագույնս հրամայո՞ւմ եմ»: Սկսեցին խորհրդակցել: Պարսիկը, որ հայերեն չէր հասկանում, անհամբերության նշաններ արեց:

— Ինչպե՛ս տամ հարկը սրան.— դիմեց գլուղապետը,— ախր իրավունք չունենք սրանց տալու հարկը:

— Պիտի տանք, հնար չկա, արյուն կթափվի,— ասաց Սենեքերիմ ավազը:

— Դժո՛խք՝ թե կթափվի, չեմ տա,— վճռեց գլուղապետը:

— Իրավունքի ժամանակ չէ, Սողոմոն, տո՛ւր՝ գնան կորչեն,— ասաց մի լրջգեմ շինական:

— Բե՛ր, Սողոմոն, բե՛ր,— պնդեց Սենեքերիմ ավազը,— կովելու հրաման չկա, թե չէ՛ կփրթեինք ձեռաց:

Պարսիկ հրամանատարը սրտնեղեց:

— Ի՞նչ եք հաշում, բերե՛ք, ես ժամանակ չունեմ:

— Կսպասե՛ս, քաջորդի,— հեգնեց Սենեքերիմ ավազը,— հրամա՛ն չունենք՝ թե չէ՛...

— Ի՞նչ հրաման, ումնի՞ց: Էլ վերջացել է ձեր իշխանութունը: Բերեք շուտ, թե չէ՛ մենք ցույց կտանք ձեր այդ «հրամանը»...

— Ո՞ւմ ցույց կտաք,— առաջ եկավ մի շիկահեր զինվոր ու դարձավ շինականներին,— ի՞նչ եք պապանձվել:

Շինականներն իրար նայեցին և շարունակեցին լռել: Շիկահեր զինվորը աչքը զցեց մի քարաբեկորի և ասաց.

— Հիմի սա հարկը պահանջո՞ւմ է կտրական:

Եվ շարախինդ դարձավ Սենեքերիմ ավազին, որ հոնքերի տակով մռայլ գննում էր հրամանատարին:

— Սենեքերիմ ավագ,— ասաց նրան զինվորը,— տա՛նք «հարկը»... իրավո՛ւնք տուր:

— Հակոբոս զինվո՛ր...— սաստեց նրան Սենեքերիմ ավագը,— Ատում իշխանը չի հրամայել: Ծ՛տ կաց:

Հակոբոս զինվորը մոմոալով քաշվեց մի կողմ:

— Նիզակի՛ է գնում ձեռս, նիզակի՛, չէ՛ թե գերանդու,— խոսեց մի շինական:

— Տեղդ ծա՛նր կաց, Պողոս,— սաստեց Սենեքերիմ ավագը զուսպ ձայնով:

— Դե, ծանր՝ ծանր, տվե՛ք հացը, հոգիներդ էլ հետը,— փնթփնթաց Առաքելը, որ մինչ այդ մոայլ ու անխոս դիտում էր:

— Ախր ավագն ասում է դեռ իրավունք չի,— ասաց նրան մի այլ շինական:

— Բայց սա հենց անպատիժ պիտի գնա՞ քստեղից,— առաջ եկավ Առաքելը:

— Դու ո՞վ ես, բարեկամ,— հարցրեց Սենեքերիմ ավագը Առաքելին:

— Երևի սրանցից վառված մեկը, ի՛նչ կա՞ մինչև ե՛րբ համբերենք:

— Փրթենք գնա՛,— մեջ եկան Առաքելի մարդիկ:

— Դուք մեր շենի գործերին միք խառնվի,— ասաց Առաքելին Սենեքերիմ ավագը:

— Բա զինվոր չե՞ք դուք, պատիվ չունե՞ք,— զայրացավ Առաքելը:

— Հրաման չէ, հասկացա՛ր,— գոռաց Սենեքերիմ ավագը,— գնա րանիդ. ասացի՞ մեր գործին մի՛ խառնվի:

— Հրաման չի, ճշմարիտ է,— հաստատեցին հայ զինվորները,— մի՛ք խառնվի:

— Չե՛նք խառնվի, տեսնեմ մինչև որտե՛ղ է ձեր կաշին հաստ:

Գյուղապետը վիրավորված թափ տվեց երկու ձեռքերն ու հեռացավ:

— Այ ձեզ՝ հարկ, այ ձեզ՝ պարսիկը, տվե՛ք, ես իմ ձեռքով չե՛մ տա:

Շինականները զուլխներն օրորեցին և գնացին նրա հետևյալից:

Մի փոքր անց բերին մոտ քսան մեծ պարկ ցորեն և սկսեցին բառնալ հարկահանների ձիերին:

— Հաց է՛լ բերեք,— հրամայեց պարսիկ հրամանատարը,— յուզ, պանիր, պաշար: Ատամի վա՛րձ,— ավելացրեց լիտի ժպիտով:

Նա պարզապես խռովարկում էր և խռովում շինականներին: Արյուն էր ուզում: Ապա վավաշոտ աչքերը տնկելով դեպի կանայք, որ հեռուն կանգնած նայում էին, ասաց.

— Շուտով մեր հավատի կլինեն՝ մերը կլինեն:

Ու երբ նկատեց Սենեքերիմ ավագի կատաղի հայացքը, ներան ասաց.

— Բան չկա, ձեզ էլ կանանց հետ կտանենք Պարսկաստան, ձեզ է՛լ գործ կտանք:

Սենեքերիմ ավագը սկացել էր՝ զսպելով կատաղությունը:

— Հանո՛ւն հոր և որդո՛ւ և հոգույն սրբո՛ւ,— լայն խաչակնքելով առաջ եկավ Սահակ շինականը՝ լցված ցասումնալից խոսք ասելու ցանկությամբ և սևաթավ հոնքերի տակից խայթող հայացքը գամեց հավաքվածների վրա,— բա մինչև ե՛րբ հողի որդին մոլոր, շվար կանգնի արհավիրքին մտիկ տա, որ արհավիրքը գա թոցնի, գցի աշխարհքե-աշխարհք, մորե մե՛րկ... Վա՛յ ձեզ...

— Անիծի՛, Սահա՛կ եղբայր, անիծի՛, տե՛ղն է, իրավո՛ւնք է,— ասաց նրան Ծղրասը,— հարկահանը քեզ մտրակի տակ շորացրեց, հիմի սրա՛նցն է հերթը...

— Ի՞նչ ես կանգնել մտիկ տալիս, ա՛յ հող աշխարհք, ե՛րբ ես վեր կենում... Վե՛ր կաց, է՛... — գոչեց Սահակը:

— Զէ՛ ու կմանաք տանը իլիկ կմանենք,— ասաց մի զվարթադեմ, քաջառողջ շինական:

— Դե որ իլիկ մանող չեք, վճիռը դրեք, վե՛ր կացեք,— ասաց Առաքելը,— մեր նախարարները ուրացել են մեզ:

Այդ պահին մի բարձրահասակ թիկնեղ շինական մոտեցավ Առաքելին ու կուրծքը հպարտ ցնցեց, կպցրեց նրա կրծքին ու վերից վար նայեց նրան կապույտ աչքերով և հեղինակավոր սպառնալի ձայնով ասաց.

— Մեր Սպարապետը ժողովուրդ չի ուրանա...

Առաքելը սուր նայեց նրան:

— Խնչ իմանամ: Դե որ էդպես է՝ գնա՛նք, գերի՞ է՝ ազատե՛նք, գերի չէ՞ ուրացել է՝ երկի՛րն ազատենք:

— Բերանդ տաճա՛ր, — ասաց Պողոսը սրտանց, — ասո՛ւմ էմ, նիզակի օ՛ր է:

— Սպասի՛ր, — դարձավ Պողոսին Սենեքերիմ ավազը, — կգա՛ նիզակի օրը:

— Մինչև կգա նիզակի օրը՝ սիրտս էլ կճաքի, — ասաց Պողոսը: — Չէ՛, շենում շե՛մ մնա, դո՛ւրս կգամ, անելիքս կանեմ:

Շինականները հաց բերին և լցրին պարսիկ զինվորների պարկերը:

— Այդպե՛ս: Իսկ դու մի՛ շատ փնթփնթա, — մտրակով ձաղկեց Պողոսին պարսիկ հրամանատարը և քշեց նժույգը: Զորամասը հեռացավ: Բոլորը ճնշված, քարացած էին:

Էջմիածնի կողմից շե՛նը լցվեց մի բազմություն, որ իր մեջն էր առել Կաթողիկոսին, Ղևոնդ Ծրեցին ու Եզնիկ Կողբացուն և գալիս էր թափով: Կաթողիկոսն առաջ էր մղվում ինքնամոռաց մոլեգնությամբ: Զարագուշակ էր նրա կերպարանքը, մազմորուքը, հոնք ու թարթիչները փոշեթաթախ, բորբիկ ոտները ցեխոտ, արյունոտ, ինքը տանջված, շարշարված:

Կաթողիկոսը բազմության հետ եկավ դեպի հավաքված շինականներն ու զինվորները: Նա կանգ առավ, հրացայտ հայացքով զննեց բոլորին, որ զլխարկները հանելով կանգնեցին ակնածանքով նրա շուրջը: Նա ձեռքը տարածեց օդում և գուժկան ձայնով գոչեց.

— Վառվեցե՛ք ազատության մարտի համար... Վառվեցե՛ք սրովն ահեղ ընդդեմ դավաճանների: Այսուհետև մեզանից ուրացյալ են հայրենին ուրացյալները:

— Մենք զինված կանք պատրաստ, — ասաց Սահակը:

— Օրհնյալ լինի ձեր սուրը, — բարեմաղթեց Կաթողիկոսը: Հարկահաններից փախած վանականները լալազին խոնարհվեցին կաթողիկոսի առաջ և համբուրեցին նրա քղանցքը: Նա ցավազին նայեց նրանց և խաշակնքեց.

— Ելե՛ք աշխարհ, փրկվե՛ցձք նրա հետ: Ծվ աստված փրկի Աշխարհն հայոց...

Խաշակնքեց և շտապ դուրս գալով ճանապարհից՝ գնաց խոտոր ուղղությամբ դեպի Արաքս: Վանականների բազմությունը,

որ կազմվել էր գանազան վայրերում իրենց վանքերը թողածնե-  
րից, հետևեց նրան:

— Ահա՛, մեր վերջը վերջացավ,— դառնորեն և անհանգիստ  
ասաց Պողոսը՝ նայելով հեռուն:

— Հենց ի՛սկը,— ասաց Սահակը:

Արտաշատի կողմից երևաց պարսից մի ջոկատ, որին առաջ-  
նորդում էր պարսիկ մեծամեծների մի խումբ: Նրանք մոտեցան  
շինին: Դենշապուհն էր, Վեհմիհրը, Որմիզդ մոզպետը իրենց շքա-  
խմբերով: Նրանք գալիս էին հանդիսավոր երթի բոլոր հանգա-  
մանքներով և այդ՝ դիտմամբ: Դենշապուհը, որ միշտ ջանում էր  
իր նժույզը առաջ պահել Վեհմիհրից, գլխին դրել էր վագրակերպ-  
յան սաղավարտ, մեջքին կոանակուռ ձուլլ ոսկի գոտի ուներ,  
մետաքս պարեզոտ, համակ ոսկեղեն պալարազարդ: Վեհմիհրը  
իրեն ավելի էր շքեղացրել նման զգեստավորումից բացի նաև  
կարմիր նոնազույն կոշիկներով մինչև ծնկները: Որմիզդ մոզպե-  
տը հագել էր ճերմակ պարեզոտ և սրածայր փեղույր ուներ գլխին:  
Ջոկատը ևս զարդարված էր և զրգոիչ տեսքով ազդում էր նայո-  
ղին:

Մտանալով շենին՝ Դենշապուհը կանգ առավ: Ողջ ջոկատը  
հետևեց նրան:

— Ի՞նչ եք հավաքվել,— հարցրեց Դենշապուհը բազմության:

Ոչ ոք չպատասխանեց: Բոլորը խեթ նայեցին Դենշապուհին:

— Սրանք ի՞նչ վանականներ են,— հարցրեց Դենշապուհը  
անբարյացակամ,— որտեղի՞ց են:

— Օշականից, տե՛ր իմ,— պատասխանեց ծերուկ վանակա-  
նը՝ մորուքը դողդողացնելով և աչքերն անհույս հառելով Դենշա-  
պուհին:

— Գանգատ ունե՞ք:

— Այո, տեր իմ,— և ծերուկ վանականը առաջ գնաց,—  
այլևս ապրուստ չմնաց, բոլորը տարան հարկահանները: Վանքը  
կնքեցին:

— Դուք էլ աղոթքով ապրեցեք,— դաժանորեն ծիծաղեց Դեն-  
շապուհը:

— Աղոթքով էլ պիտի ապրենք... — պատասխանեց վանա-  
կանը վրդովմունքը թաքցնելով:

Որմիզդ մոզպետը ձեռքով նշան արեց վանականին:

— Ձեզ հարկադրեցի՞ն թողնել քրիստոնեությունը և ընդունել գրադաշտը:

— Հարկադրեցին, տեր մոգպետ, բայց մի՞թե օրեն է հոգուն հարկադրել:

— Օրեն չէ,— պատասխանեց մոգպետը,— ուստի և եկեք մեզ հետ, որ դատենք ձեզ:

Վանականները տատամսեցին: Այն ժամանակ զինվորը մըտրակով քշեց նրանց ջոկատի շարքը և կանգնեցրեց ձիերի մեջ:

Դենշապուհը խոժոռովեց շինականների վրա:

— Գանգատ ունե՞ք հարկահաններից,— նուրբ շարությամբ ժպտաց Դենշապուհը:

— Ո՛չ... — շեշտ ձայնով պատասխանեց անսպասելի միջամտությամբ Սահակը՝ շար հայացքը գամելով Դենշապուհի աչքերին: Դենշապուհը աչքերը ուրրեց Սահակի վրա:

— Չար ես նայում... Ի՞նչ է միտքդ...

— Ոչի՛նչ,— շար ու շոր պատասխանեց Սահակը շարունակելով խեթել Դենշապուհին:

— Արի գնանք տեսնենք ինչ կա մեջդ,— ասաց Դենշապուհը մեղմ սպառնալիքով:

— Ի՞նչ կա մեջս... — մոմռաց Սահակը,— ինչ որ կա՝ ուր էլ գնամ՝ կա...

— Քաշեցե՛ք շանը,— որոտաց Դենշապուհը, դառնալով զինվորներին:

Զինվորները արագ թափվեցին Սահակի վրա և թևերը կապելով հրեցին շարքի մեջ:

Առաքելը մի շարժում արեց հարձակվելու պարսիկների վրա, բայց նրա թևից պինդ բռնեց և երկաթի ուժով սեղմեց Սենեքերիմ ավազը:

— Շենը մի՛ խառնակի. ժամ չէ...:

Առաքելը ցավելով հասկացավ, որ իրոք տեղը չէր իր հարձակման միտումը: Շենը չէր մասնակցի, և ինքը վաղաժամ խոլովության առիթ կտար: Սահակին կարելի էր ճանապարհին կամ բանտում ազատել:

— Դե՛, ճանապարհ,— հրամայեց Դենշապուհը և մի անգամ ևս դաժան ու խստահայաց նայեց բազմության, մտրակեց, բայց և զսպեց թռչող նժույզը և շարժվեց դեպի էջմիածին:

Վանականներին մտրակեցին և բռնեցին առաջ:

Դենշապուհը գնում էր կաթողիկոսի և Ատոմի հետքերով՝ հետախուզելու համար նրանց:

— Տեսա՞ք... — մոնչաց Առաքելը, — վիշապը փաթաթեցին վզներին, զորքեր են լցնում մեր բերդերը, թակում, շարշարում ժողովուրդը: «Սպասի՛, սպասի՛»: Ահա՛ ձեր «սպասին»...

Թուրը վրդովված գլուխները կախեցին:

— Սատկի՛ էսպես կյանքը, — ոտքը բարկացած զարկեց մի բարի և շարտեց հեռու Հակոբոս գինվորը, — սկսենք, էլ հերի՛ք է...

— Դե, ի՞նչ ասացին քեզ... — սպառնաց Սենեքերիմ ավագը:

— Ես չե՛մ մնում. կս գնացի՛, — ասաց վճռական շեշտով Պողոսը և շարժվեց, որ գնա տուն:

— Մի՛ անի, Պողոս, սպասի՛ Ատոմ իշխանին, Սպարապետին, — հորդորեց Սենեքերիմ ավագը: — Սպասի գան:

— Չեմ սպասի, մեռնե՛մ կովին:

— Կգա՞ օրը... — մոնչաց Սենեքերիմ ավագը, — կգա՞ օրը, — կրկնեց ու հառաչեց:

— Ե՛րբ, վառեցին թողի՛ն, — ցավից գոչեցին գինվորները: Եվ հավաքվեցին Սենեքերիմ ավագի շուրջը: Նրանք գրգռված էին և դժգոհ էին նրանից էլ, Ատոմից էլ:

— Նստած ենք պարապ հացակեր, — գանգատվեց Հակոբոս գինվորը և հեռացավ:

— Գնանք, սրանցից կովող չի դուրս գա, — ասաց Պողոսը և Առաքելի փեշից քաշեց:

Առաքելը իր խմբով գնաց Պողոսի տունը: Հավաքվեցին ուրիշ գազազածներ ևս:

— Հը՛... «Զինվեցե՛ք, պատրաստվեցե՛ք, մենակ չհարձակվե՛ք», — հեգնեց Ատոմին Պողոսը, — դավաճանները թշնամու հետ գալիս են, Վեհմիհրը բերդերը լցնում է պարսիկ զորքերով, Դենշապուհը հոգիներս է հանում հարկերով, իսկ նա՛ «չհամարձակվե՛ք»: Մենք գիտենք մեր բանը:

— Էս արհավիրքին իշխանը քիչ է, հոգևորն էլ հերիք չի անի: Նրանք մեծ գործ չեն տեսնի, — հանգիստ ու հաստատուն շեշտով խոսեց Առաքելը, — սրա դեմ թե կանգնենք՝ մենք պիտի կանգնենք:

— Ծշմարի՛տ, — ասաց Սրապը աչքերը լայն բանալով:

— Առանց նախարարի չենք կարող, նախարարը պիտի տանի մեզ, առանց նախարարի դուրս չի գալիս, ժողովուրդն էլ զորքին է նայում,— շարունակեց Առաքելը,— բայց նախարարի ոտով էլ միշտ գնալ չենք կարող: Նախարար է՝ ոտը կարճ, ճամփին ետ կկանգնի, իր կողմը շուռ կտա: Մեր բաժին բեռը մեր վրա է, սիրելի: Գնանք շենքերը, վեր կացնենք ռամիկներին, դուրս գանք եկող պարսիկ զորքի դեմ:

— Հա՛ա՛, ճշմարի՛տ, ճշմարիտ,— հավանեցին հավաքվածները:

Նրանք վճռեցին միանալ Առաքելի զինվորյալ խմբին և մտաւակ գիշերներից մեկուսւմ անձայն հեռանալ շենքից: Խմբին միացան Սրապը, Հովհաննէս Կարապետը և այլ հասակավոր ու երիտասարդ շինականներ: Նորամուտները մի անգնահատելի բան արին — բոլորին նժույզ ու զենք հայթայթեցին:

Խումբը մի գիշեր ճամփա ընկավ, բռնեց Գենշապուհի հետքը և սկսեց հեռվից հսկելով հետևել նրան:

Ատոմը գտավ կաթողիկոսին մի այլ շենում, նստած թթենու սաւակ, շենամիջին: Ուրբան շինականները խնդրեցին մտնել խրճիթ հանգստանալու՝ նա շընդունեց հրավերը: Այստեղ Ատոմը խոսեց կաթողիկոսի հետ, խորհուրդ տվեց ընդհարումներ չունենալ պարսիկներին հետ, ջանալ միայն ատելության և վրեժի կրակը վառել Եկեղեցիների մեջ, պաշտամունքի կեղևի տակ:

— Նրանք դեռ չեն համարձակվի ձեռ տալ եկեղեցուն,— սուսաց նա:

Ատոմը, վերցնելով իր հետ Եղիշեին, բաժանվեց կաթողիկոսից և ժողովրդից: Նա անցավ Արաքսը և ճանապարհ ընկավ դեպի իր աշխարհը՝ Գնունյաց փոքրիկ նախարարութիւնը, որ ընկած էր Կողովրդի և Բզնունյաց ժովի միջև: Ծանապարհին նա շարունակում էր հորդորել ամենքին շընդհարվել պարսիկների հետ և միայն պատրաստվել հաքված տալու: Բայց երբ հեռանում էր շենքից, նա նկատում էր, որ իրեն հեռվից հետևում էին հեծյալ շինականներ, անգամ հեծյալ վանականներ: Նա թիկնապահներին ետ էր ուղարկում, որ գնան և համոզեն շինականներին չզալ իր հետևից, մնալ տեղերում, բայց հետևողները չէին անսում: Ատոմի հետևից գոյացավ մի բազմութիւն, որ հետզհետե ստվարանում էր և մոտհմոտ ընթանում Ատոմի հետևից:

Նույն օրը այս շենից անց կացավ Վարդանի սուրհանգակը, որին Վարդանը Ավարայրի գաշտից ուղարկել էր Ատոմի մոտ՝ հրահանգելով հարձակվել Հայաստան եկող պարսիկ զորքի վրա և ոչնչացնել: Սուրհանգակը ուշացած էր և գնում էր Ատոմին որոնելու:



Դեպքերն սկսեցին զարգանալ թավալգլար արագությամբ: Նոր մոզպետը նախարարների հետ գալիս էր: Արտաշատում և զավառներում խուլ մոմոում էր ապստամբությունը: Երկրի բերդերը լքվում էին պարսիկ զորքերով:

Դենշապուհն անհանգիստ էր: Նա երկյուղ էր կրում իր գործերի համար: Նրան ուղարկել էին Հայաստան դաժան հարկերի միջոցով ստիպելու հայերին ընդունել զրադաշտը, բայց նա միայն գրգռեց ժողովրդի դիմագարծությունը, ավելի վատթարացրեց դրությունը: Հիմա կգար նոր մոզպետը — գլուխ կբռքեր ուրացությունը, և Դենշապուհը կզառնար ոչ միայն ավելորդ, այլև արյացարքայի առաջ մեղապարտ: Հեռու նրա դատաստանից... Դենշապուհը տեսել էր այդ դատաստանները, գիտեր դրանց սարսափը: Պետք էր մի բանով փրկել սեփական մորթը արքայի գահից:

Եվ Դենշապուհը անցնում էր Ալրաբատի շեներն ու վանքերը: Բռնի խառնելով իր ջոկատին բողոքավոր շինականներին և վանականներին՝ նա տանջում էր նրանց, հայտարարելով, թե Արտաշատ է տանում դատելու: Բայց նրա նպատակն էր տեղահանել, շարշարել ժողովրդին, հուսահատեցնել նրան և ստիպել՝ ուրացման: Ճանապարհին նա ծեծել էր տալիս հետևակ կալանավորներին, ստիպում, որ նրանք հավասար ու արագ գնան հեծյալ ջոկատի հետ:

Վերջը թեքվեց դեպի Բագրևանդի Զարեհավան քաղաքը, պարսից ուժերի կենտրոնը և որոշեց այնտեղ հիմնել ճամբար գանգատավորների համար, այնտեղ գլուխ բերել բռնի ուրացումը:

Ուշ երեկոյան Դենշապուհը Վեհմիհրի և Որմիզդ մոզպետի հետ մտավ Զարեհավան: Նրան ընդառաջ ելավ զորագնդերի հրամանատարը՝ Արտաշիրը, հետևից պարսից զորազուններ և ի պատիվ նրա մուտքին Զարեհավան՝ շեփոթել տվեց փողհարներին մի

մեծ խմբի: Վեհմիհրը, որ Այրարատյան դաշտի իրենց տեսչական շրջագայության ժամանակ տեսել էր Դենշապուհի գրգռիչ ջերմեռանդությունը հայերին կրոնափոխ անելու, դեռ պարսից գորագունդը տեղ չհասած՝ արդեն որոշել էր դավել նրան: Ուստի և սպասում էր հարմար առիթներին:

Դենշապուհը մեծ լրջությամբ ընդունեց Արտաշիրին, գոռոզ ողջույն տվեց զորագնդին և առաջ ընկնելով մտավ հատուկ զարդարված վրանը՝ անգամ ուշադրության չարժանացնելով Վեհմիհրին:

— Ի՞նչ կա քաղաքավանում, — հարցրեց Դենշապուհը Արտաշիրին:

— Խռովիչները բորբոքում են բնակչությանը, — պատասխանեց Արտաշիրը, — բայց, տեր իմ, շրջակայքում հեծյալ շինականներ են շրջում և ստվարացնում են իրենց խմբերը:

— Ժամն է արյուն առնելու, — ասաց Դենշապուհը:

Վեհմիհրը, որ վաղուց էր թեր այն մտքին, որ պետք է զորքի միջոցով ճնշել ապստամբության փորձերը, և նկատելով, որ Դենշապուհը խաղաղ հարկահանությունից անցնում է զորական միջոցների, խլելով իրենից նրա ձեռներեցությունը՝ կատաղեց ինքըն իր մեջ:

— Մի՞թե շեռ կամենում սպասել մինչև հասնեն մեր զորքերըն ու նախարարները, — հարցրեց կշտամբանքի ձայնով Վեհմիհրը:

— Ապստամբությունն սկսված է, հազարապետ, — ավելի կշտամբանքով ասաց Դենշապուհը, — այլևս ինչացո՞ւ եմ ես, որ չճնշեմ դա մինչև նրանց գալը: — «Տե՛ս դեռ, — շարունակեց մտքում Դենշապուհը, — Արտաշատում ինքն էր պահանջում ճնշել ապստամբությունը... Ո՛չ, Հայաստանի մարզպանը ե՛ս կլինեմ, ո՛չ դու, խոզենո՛ւ պարկ...»:

Վեհմիհրը սակայն ուրիշ մտադրության էր: — Հետևել Դենշապուհի արարքներին և խանգարել նրան: Անհաջողության դեպքում՝ նյութեր հավաքել Հազկերտի դատին, որ՝ հույս ուներ նա, կլինի հետագայում:

Դենշապուհը երկյուղ էր կրում այդ դատից, ինչպես կրակից. ուստի և հոգում էր մի մեծագործությամբ առաջ ընկնել Վեհմիհրից, որին իբրև իր նշանակած հազարապետին, բայց ապերախտ

մարդուն՝ ատում էր: Ատում էր և Վասակին, որ դալիս էր մեծ հաղթությամբ՝ իբրև ուժեղ մրցակից: Նա վճռեց առաջ ընկնել և ի կատար ածել նաև Միհրնբրսեհից տրված գաղտնի բուն հրահանգը. «հայ նախարարներին և հոգևորականներին արմատահանել. — կտրել նրանցից հայ ժողովրդին. ապա հայ ժողովրդին հողաղրկել, տարագրել Պարսկաստան, ջնջել Պարսկաստանի և Հունաստանի միջև ընկած այդ վտանգավոր զանգվածը, որ մերթ մեզ է ուժ տալիս, մերթ նրանց»:

«Եվ ինչո՞ւ թողնեմ ուրիշին. ես ինքս կկատարեմ այդ հրահանգը», — մտածեց Դենշապուհը և շտապանքի մի տենդ ընկավ նրա սիրտը. — «Գործե՛լ... մի քանի օր ևս, այլևս ուշ կլինի»:

— Ուշացել ենք, տեր իմ, — ծոր տվեց՝ կարծես նրա մտքերը կարգալուվ Վեհմիհրը, — ասացի՞ Արտաշատում՝ ճնշենք՝ շլսեցիր. և ահա ապստամբությունը ծավալվել, հրդեհի պես ճարակում է երկիրը...

Դենշապուհը չէր սպասում այդպիսի բացահայտ հարված Վեհմիհրից, որ միշտ թաքցնում էր իր թույնը: Բայց հասկացավ. Վեհմիհրը Արտաշիբին էր հայտնում իր այդ մեղադրանքը: Դենշապուհը չպատասխանեց դրան, թեև կատաղեց և հազիվ զսպեց իրեն: Նա հեաց հուզմունքից և ասաց՝ դիմելով Արտաշիբին.

— Մենակ եմ, օգնական չունեմ...

Արտաշիբը զարմացած շարժում արեց:

— Բայց կկատարեմ. պարտքս Հազարապետի առաջ: Վաղն առավոտ բնակչությունը քշիր հրապարակ, վրանիս առջև: Կալանավորներին գցիր զնդան:

— Ինչպես հրամայեցիր, — ասաց Արտաշիբը և խոնարհ ողջունելով նրան և ապա Վեհմիհրին և Որմիզդին, — տյարք, ձեր օթևանները պատրաստ են. եթե հաճեք՝ հրամայեցեք:

Նա ճանապարհ տվեց Դենշապուհին, Վեհմիհրին և Որմիզդին և նրանց առաջնորդեց հարևան վրանները:

Պարսից բանակը քուն էր մտել ճամբարում: Խուլ հասնում էր նժուլզների աղորիքների մեջ գարու խրթոցը: Ատրուշաններից ցլբերի խուրձեր էին նետվում դուրս: Այնտեղից լսվում էր մոզերի մեղմ ոնգային երգը:

Դենշապուհը երկար չէր կարողանում քնել: Նրան ուտում էին Վեհմիհրի մեջ նյութվող շարությունը և դավադիր նպատակները:

Մեծ համարում շուներ նա Վեհմիհրի ոչ խելքի, ոչ էլ ճարպկության վրա: Բայց նա փորձված ու իմաստնացած էր Պարսից Գոան բոլոր խարդախությունների, դիրքերի ու աստիճանների հեղհեղուկության մթնոլորտում: Դենշապուհը ատելություն զգաց նաև դեպի Միհրներսեհը, որ միշտ մարդու ուղարկելով մի պաշտոնի՝ շարունակ լրտեսում է նրան և թույլ է տալիս, որ իր առջև բանասարկեն: Վեհմիհրը չէր վտանգավորը, այլ Միհրներսեհի այս գիծը, որ ընդհանուր էր բոլոր տերությունների հազարապետներին:

«Սպասի՛ր, օ՛ձ, շատ ես խարդախում դու. քեզանից էլ առաջ կընկնեմ, արքայից էլ. Հայոց աշխարհի մահվան գործը ինքս կըվերջացնեմ...», — կրճտում էր ատամները Դենշապուհը անկողնի անախորժ ջերմի մեջ:

Հետևյալ օրը այնքան խաղաղ էր քաղաքավանում, որ տպավորություն սաեղծեց, թե ամեն ինչ բարեհաջող է: Երեկոն ևս ոչ մի կասկածելի բան երևան չբերեց: Կես-գիշերին էր, որ Դենշապուհը հրավիրեց Վեհմիհրին, Որմիզդ մոզպետին, Արտաշիր հրամանատարին, և հայտնեց, որ պիտի սկսի դատը կապյալ շինականների և վանականների: Բայց դժգոհ էր և գրգռված:

— «Աղքատացրու՛ պարսկացրու», — ասում է ինձ Վեհը (այսպես կոչեց Միհրներսեհին Դենշապուհը)... Համեցեք, աղքատացրու՛ պարսկացրու: Գիմադրություն է պատրաստվում...

Մոտ կանչեց դռան առաջ կանգնած սիպահին.

— Կապյալներին դուրս հանեցեք բակը: Քշեցեք բերեք բնակիչներին էլ, հրամայեցեք, տյարթ, — դիմեց մեծամեծներին:

Դուրս եկան պատշգամ և նստեցին բարձերին, որ հրամայեին իսկույն սպասավորները:

Զինվորները քաղաքավանից քշեցին բավական բազմություն և բերին լցրին բակը, դռան մոտ և դուրսը պատերի տակ:

Շենքի զնդանից պահակները դուրս հանեցին կապյալների խումբը և բերին կանգնեցրին Դենշապուհի առաջ՝ ծեծված, խոշտանգված շինականների ու վանականների կերպարանքներ: Նրանց կողքին կանգնեց հարկահանը, որ բերել էր նրանց:

— Առա՛ջ եկ, — հրամայեց նրան Դենշապուհը՝ պատրաստվելով Որմիզդ մոզպետի մոտ արդարացնել իր «գործի» դժվարու-

թյունը և մի լավ դաս տալ Վեհմիհրին՝ շարախոս գեկուցագրերի համար,— ասա՛ ի՞նչ են արել սրանք:

Հարկահանը բացատրեց.

— Տեր իմ, այս վանականները տվել են վանքերի հարկը, բայց հրաժարվել են ավերակների հարկը տալուց: Շինականները տվին հարկը, բայց չեն տալիս հերվա և մյուս տարիների հասը, բաժը և սակը:

Դենշապուհը դաժանորեն խոժոռվեց հարկահանի վրա:

— Արգա՛րը խոսիր... եթե ոչ՝ գլո՛ւխդ կգնա:

— Կամքդ սուրբ, տեր իմ:

— Գանգատ ունե՞ք,— դիմեց Դենշապուհը կապյալներին, որ տազնապալի հայացքներով նրան էին նայում:

— Գանգատավորներ ենք, տեր իմ,— խոսեց մի հիվանդ ծերուկ,— անտանելի հարկերի ու ծեծի տակ շորացրին շինականին: Ա՛յ, ժողովուրդն ընկել է սար ու ձոր:

— Ուրիշ էլ ո՞վ ունի գանգատ, թող կանգնի այս կողմ,— ցույց տվեց Դենշապուհը բակի աջ կողմը:

Բազմության մի ստվար մասը զատվեց, կանգնեց այն կողմը: Մնացին անշարժ իրենց տեղում Սահակը և մի քանի անհաշտներ: Դենշապուհը շար գննեց նրան, բայց և իսկույն հայացքը շրջեց մյուսների կողմը, թեթևորեն անցավ բռնվածներին, որոնց աչքանդակված, գզգզված գլուխներն ու արթունվա դեմքերը, խոշտանգված մարմինը լավ պատկերացնում էին, թե ի՞նչ էր կատարվել տեղերում և զնդանում: Հետո ցածրաձայն հարցրեց.

— Ինչո՞ւ չիք տալիս հարկը:

Առաջ եկավ մի ամրակազմ, բարձրահասակ ծերունի. որի երկար մորուքից կախվել էր լերդացած արյան շիթը:

— Տվինք ամեն ինչ, մնացել է անձեռտ, ա՛յն էլ առեք տուրեք, տվեք արքային, վերջանանք...

— Ձեզ ի՞նչ պիտի անի արքան,— մեղմաժպիտ հարցրեց Դենշապուհը:

— Վառելիք՝ ատրուշանների համար,— հեզնեց դառնացած ծերուկը:

— Ոչ,— ասաց հեզ և համոզիչ եղանակով Դենշապուհը, որից երևում էր, որ նա ցուցաբերել է ուզում պետական, հայրական մեծ

համարություն,— կգնաք լառն կտաք մնացյալ հարկը: Օրենքն արդար է և ողորմած:

Վանականները կարծես խոսք մեկ արած՝ առաջ վազեցին և սկսեցին կրծքները ծեծել:

— Տե՛ր, ինչպե՞ս տանք, որտեղի՞ց տանք. շեն վանքի հարկերը չկարողացանք տալ, ո՞ւր մնաց ավերակների հարկը, որ պահանջում եք...

— Հարո՛ւստ է Հայոց աշխարհը, — կատակեց կրկին Դենշապուհը և ներքին շար հաճույքով դիմեց այն խոշտանգված կմախքներին, որ մրոտ, պատառոտած քուրձերի մեջ չէին էլ կարողանում ծածկել իրենց մրկած մարմինները, չոր ու բարակ փայտերի նմանող ոտներն ու ձեռները: Նրանցից ոմանք արդեն մերկանում էին՝ հազիվ մի փաթեթ կրելով իրենց աճուկներին: Նրանք խորն ընկած, բայց տենդավառ աչքեր ունեին, որ անքնություն, տանջանքի և սովի նշան էր:

Դենշապուհը մոմռաց.

— Խոովարա՛ր ազգ...

Կապյալները խստահայաց աչքերը գամեցին նրա հայացքի մեջ:

— Քանի ձեր երկրումն եք՝ հայ կմնաք, քանի հայ եք՝ հույների կողմը կանցնեք: Գնացեք Պարսկաստան: Այնտեղ պարսիկ կղառնաք, հույներից հեռու կմնաք: Երեք օր ձեզ ժամանակ: Պատրաստվեցեք:

Բազմությունը պապանձված լսեց և չգիտեր ինչ անել, ինչ հասկանալ այս վճռից: Իրո՞ք նա վճռել էր նրանց արսորել Պարսկաստան, թե՞ շար կատակ էր:

Առաջ եկավ մի կարճահասակ, բայց հաժակերիի դեմքով շինական և ալեխառն բաշը թափ տվեց.

— Մենք մեր հողն ենք, ո՞նց կշարժվենք տեղից...

Դենշապուհը կապյալներով զբաղված՝ երբեմն նայում էր Սահակին, որ սուր հայացքը գամել էր նրա աչքերին: Սկզբում շատ ուշ չէր դարձնում: Բայց հետո մի բան աղոտ կերպով հիշեց: Ի՞նչ էր դա: Հետո հանկարծ հիշեց արքունի Ձմերոցը և Սահակին, որ հենց այսպես նայում էր իրեն՝ աչքերում հատուկ մաղձ և շարություն: Նայեց մի անգամ ևս Դենշապուհը, հայացքը դարձրեց ուրիշ կողմ և հանկարծ շրջվեց դեպի նա.

— Երկրորդ անգամն է, որ դու սուր նայում ես ինձ... Ասա, ի՞նչ կա սրտումդ:

Սահակը ոչինչ չխոսեց և շարունակեց դառն ատելությամբ նայել Դենշապուհին:

Դենշապուհը մեղմ ժպտաց և ետ ընկնելով բարձին՝ հորանչեց ու դեմքը դարձրեց Որմիզդ մոզպետին.

— Ինչպե՞ս է օդը, տե՛ր մոզպետ:

— Հաճույք է անձիս, տե՛ր իմ,— պատասխանեց մոզպետը և կատվի պես ծոր տվեց մի երկար հորանջ՝ վարակվելով Դենշապուհին:

Դենշապուհը նշանակալից նայեց հարկահանին, որը հեռացավ, իսկ ինքը սկսեց կիսաձայն գրուցել Վեհմիհրի հետ: Ներս մտավ հարկահանը՝ ներս բերելով մի մարդու, որ ծանր մոտեցավ Սահակին և բռնեց հարեց նրա դեմքին: Դահիճ էր:

Կապյալների մեջ մեկը թեթև ու ճնշված հատաչեց: Դենշապուհը շարունակեց իր անտարբեր գրույցը Վեհմիհրի հետ: Սահակը խոժոռ նայեց դահիճին: Ահավոր լուսթյունը ձաղկեց ողջ բակը: Կապյալները մոռալ սարսափով նայեցին Սահակի դեմքին: Դահիճը շարունակեց հարվածներ տեղալ: Մի ինչ-որ անբացատրելի ջրստմանանք կար այդ հարվածների դանդաղ ու մեքենական շափահարման մեջ, ուր երևում էր դահիճի արհեստավորական անգթությունը: Դահիճը այդ շափահարման հետ թեթև նվում էր, հարվածում էր գործնական, հասարակ լրջությամբ՝ իբրև՝ մի առարկայի: Սահակը ծռանեց դեմքը, կծկեց այտերը, որով կարծես ուզում էր պաշտպանել աչքերը: Բայց հարվածներն ստեպեցին և ուժեղացան: Սահակի մի աչքը դուրս պրծավ, դեմքը արյունլիվա եղավ, այլանդակվեց: Սահակը, որ առաջ ցնցվում, շարժումներ էր անում, հանկարծ ինչ-որ վճռով քարացավ իր տեղում, սկսեց շպաշտպանվել: Կուրծքը ցցեց և մի անհասկանալի մտադրությամբ մոլեգնելով դեմքն ավելի բարձր բռնեց, շարժվեց դեպի դահիճը: Ու որքան սա հետև էր բռնում ձեռքը՝ նա ավելի էր առաջ մղվում դեպի նա: Դահիճը ձախ ձեռքով բռնեց Սահակի ուսը, որ ետ պահի և աջի՝ հարվածներով ջանում էր ցավ պատճառել, արգելել նրա շարժումը: Բայց դա չօգնեց: Սահակը արդեն ներքին, հոգեկան նոր ուժի գերազանցությամբ նրան ետ էր մղում, և սարսափելին այն էր, որ նա մղում էր ոչ մարմնական ուժով: Դահիճը շփոթվեց, մի պահ թողեց հար-

վածելը. երան տիրեց ինչ-որ տարակուսանք, կաշկանդումն: Սահակը իր արյունաշաղախ դեմքով նայեց Դենշապուհի կողմը, սեւվեռեց արյուն լցված ակնախոտոշները և սկսեց ստորստփելի դեմքով առաջանալ դեպի նա: Դա այլևս դեմք չէր, այլ մի անշարժ դիմակ, որ առաջանում էր սառած դիմախաղի այլանգակությամբ: Դահիճը հտ-հտ էր գնում, իսկ Սահակը զնաց, և սկսեց բարձրանալ սանդուղով: Բայց շուտով կորցրեց կողմնորոշումը և թեքեց ընթացքը: Նա որոնում էր, շոշափում էր օդը, խաբխափում: Ի՞նչ էր ուզում անել... Ոչնչացնե՞լ՝ բռնելով մեկին իր արյունաներկ ձեռքերով: Դա չէր այնքան զարհուրելի, որքան նրա լուսթյունը, ոգեկան սպառնալի ուժը, որով նա սառեցրեց, զամեն ամենքին տեղներում: Մոզագետը նայեց նրան հրազարհուր, բերանքաց և թռավ ընդոտապառ:

— Բռնեցե՛ք դրան... Ահրիմա՛նե է...

Սա ավելի ազդեց մարդկանց: Դենշապուհը, որ առաջ զվարճացած նայում էր այս տարօրինակ երևույթին՝ հանկարծ լրջացավ, և նրա բարակ շրթունքներին սառեց խոշտանգողի շարժպիտ կծկումը: Նրա հոգին սմբեց: Նա գերբնական անող բռնված նայեց իրեն որոնող արյունալի ուրվակախին և տեղից կիսառվին վեր ելավ: Այն սովորական շինականը, որ ցնալից առաջ մարդու կազդեր ամենաթույլ շահով՝ այժմ փոխվել էր ուրվականի, գանու անդրաշխարհային էակ:

Սակայն պետք էր արգելել այդ դարհուրանքի առաջ գալը: Զինվորները տատաժստեցին և չէին համարձակվում մոտենալ նրան:

— Բռնեցե՛ք դրան... — ասեց մտազուտը, — անե՛ծք Ահրիմանին...

Զինվորները ցնցվեցին, ուղի եկան, հարձակվեցին Սահակի վրա և ուժով հտ պահեցին նրան: Սակայն Սահակը առանց թափահարման, առանց զգալ տալու ճիշդ՝ դիմագրեց տիրական ուժով, որ անում էր նրա մեջ, մոլեգետում հետազնոտ: Դահիճը ցնցվեց, ծածաժոռեց բերանը և շրթունքները կծելով հարձակվեց զինվորներին օգնելու: Այժմ-արդեն միացյալ ուժով սկսեցին հտ մղել Սահակին: Սակայն նա հտ էր ցնում ցրտապաղ և իր արյունալին բոցանման աչքերը մի կենսի անշարժ սեռում՝ ուղանում էր: Զարհուրելի էր նաև նրա դանդաղ նահանջը: Մտանից ինչ-որ մի

սպառնալիք էր գալիս, թե նա որևէ գիշերային խավարում կամ երազում կվերադառնա իբրև մի ավելի մեծ զարհուրանք: Հարկ կար նրան ոչնչացնել, անհետացնել երկրի երեսից, խուսափել նրա մեռելային վերադարձից ու երազներում հաճախելուց: Ահա նայում է նա, նայում է ամենքին, թեև աչքերը չի դարձրել որոշակի մեկին: Եվ ամեն մեկը կարծում է, թե իրեն է նայում այդ սարսափը:

Նա հեռանում էր և հեռանում կարծես ոչ բռնի ուժից ետ մըղված, այլ իր կամքով և ավելի մեծ վրեժխնդրության դիտավորումով լցված:

— Տարեք շո՛ւտ... — խոտվահույզ մոռաց մոզպետը:

Սահակին տարան իր տեղը:

— Ո՛չ, դո՛ւրս, կորցրե՛ք,— հրամայեց նա,— կորցրե՛ք շար ոգին այս տանից...

Մոզպետը դողում էր զարհուրած:

Դենշապուհը չբնդդիմացավ. շինականին տարան մինչև դարբասը և դուրս հրեցին: Գնաց նա որոնելու իր աչքերը...

Կարծես մի ահռելի մղձավանջ թշավ ներկաների կրճքից, հեռացավ մի վտանգ: Ամենքը շունչ քաշեցին: Սթկայն ծանր մի լռություն դեռ խեղդում էր: Դահիճը սպանելու համար այդ անտանելի ճնշումը՝ հարձակվեց կապյալների վրա: Դա մի տեսակ վրեժ էր այլանդակված շինականից, վրեժ, ոք նախնայես վարակեց ներկաներին և նույնանման մի մղում ևս առաջացրեց բոլորի մեջ: Դահիճը կարծես ծեծում էր իր սարսափը, իրեն զարհուրեցնող զգացմունքը փարատելու համար: Դենշապուհը ճիգ արեց վերագտնելու իր հոգեկան ուժը և կշռույթը: Մոզպետը ինչ-որ աղոթք էր մոմոում քթի տակ: Իսկ Վեհմիհրը շարախինդ աչքերը հանել էր գետնին և ուրախ լսում էր գանահարման շտուալյունը, ուրախ, քր դեռ երկար պիտի ծեծեն, և բան չպիտի հաջողի: Շինականները անբուժ էին, հետև:

Դենշապուհը դաժանացավ կրկին: Նա կրկին սկսեց լկտի ժպտալ և թեքվեց դեպի մոզպետը.

— Համբերա՛նք, մի փո՛քր համբերանք: Հիմա սրանց փուքը կիջնի...

Մոզպետը սակայն դեռ չէր ուշաբերվել: Նա ցնցվեց, նախանձահույզ նայեց տոկացող շինականներին և խանդեց նրանց ոգե-

կան արիության: Նա զգում էր, որ զանահարվող այս մարմինների մեջ կա մի անընկճելի ոգի, որ ահա շի բեկվում: Դա հուսահատիչ էր:

Դենշապուհին կատաղեցնում էր Վեհմիհրի անշարժ մսակույտը, որ շարախնդաց նայում էր իր անհաջողակ հակառակորդին և մրցակցին: Նա զգում էր, որ Վեհմիհրը ուրախանում է շինականների դիմադրության համար: Ուստի և միտքը դրեց ինչ էլ որ լինի՝ կոտրել կապուշների համառությունը:

— Բավ է, տե՛ր իմ, — բազմանշանակ հեզնանքով դիմեց նա Դենշապուհին, — սրանք հարկ տվող շեն...

— Կտա՛ն... — շրթունքները ծամածոնեց՝ ատելությամբ դեպի Վեհմիհրը, Դենշապուհը:

«Դե՛, խորթակիդ քացա՛խ, խմի՛ր», — ասաց մտքում Վեհմիհրը և շարահաճույթ զգաց, դիտելով մի ծեծ, որ ապարդյուն էր թվում նրան:

Սկսվեց մի գազանային մրցում երկու հակառակորդների մեջ: Դենշապուհը մի կողմից չէր արգելում ծեծը, մյուս կողմից չէր ցույց տալիս, թե դիտում և սպասում է: Նա աչքերը խփեց և հակառակորդին խայթելու համար սկսեց նիհճ ձևացնել: Նույնպիսի սնտարբերության և համբերանքի ցույց արեց նաև Վեհմիհրը: Նրանք երկուսով աչքերը փակ, հազիվ կիսախուփ նայելով երբեմն՝ սպասում էին: Սոսկալի ծեծը, արյունը, ցավը տանջում էր կապյալներին:

Մեծվողների մեծ մասը արդեն թավալվում էր գետնին՝ հողի և և արյան շողախի մեջ: Ոմանք արդեն ուշաթափվել էին: Մեկը նրանցից անտարակույս մեռել էր և բերանքսիվայր ընկած լայն, արյունոտ շրթունքներով հողը համբուրած անշարժացել էր:

Դենշապուհը սթափվել էր իր սարսափից: Նրան սիրտ տվեց ծեծվողների տնքոցն ու թավալվելը գետնին, որ արդեն մարդկային էր, ոչ գերբնական:

Դենշապուհը ձեռքը բարձրացրեց: Մեծողները դադարեցրին:

— Հնազա՞նդ եք, — հարց տվեց նա շինականներին և վանահաններին:

Մեծվածների հև ու տնքոցը եղավ պատասխան:

— Չե՞ք հնազանդվում... — սպառնաց Դենշապուհը:

Ոչ ոք չպատասխանեց: Դենշապուհը վեր թռավ և գոչեց զայրույթից խեղդվելով:

— Քա՛րշ տվեք զնդան... հունցեցե՛ք...

Ու ինքը դեմքը շրջեց՝ ուղղվելով դեպի սրահի դուռը: Վեհմիհ-րը քթի տակ ժպտաց և հետևեց նրան: Մոգպետը շա՛ր երկյուղով նայեց ծեծված, այլանդակված մարդկանց և դեմքը կնճռելով նույնպես գնաց:

— Անիծյա՛լ անհնազանդների՛ ցեղ,— գոչեց Դենշապուհը շրթունքները ծամածռելով, և ապա շար մոմոաց. «աղքատացրո՞ւ պարսկացրո՞ւ...»

— Կախել տուր,— ասաց Վեհմիհրը նուրբ հեզնանքով:

— Շատ ես կախել, ի՛նչ ես կարողացել... — ասաց ատելու-թյամբ Դենշապուհը:

— Դրա համար էլ՝ սպասենք զորագնդին,— կրկին խայթեց Վեհմիհրը:

— Զորագնդի կարողության բան չէ սա, տե՛ր իմ,— շեշտեց հեզնանքով «տեր իմ»-ը Դենշապուհը,— սա ուրիշ բան է... — շարությամբ շեշտեց նաև «ուրիշ»-ը և ինքն էլ մտածեց այդ «ուրիշ»-ի մասին: Մտածեց հիշելով փոքր առաջ կատարվածը և ապա պատկերացնելով, որ այս խոշտանգվողներից այն կողմ ձգվում է մի մեծ բազմություն, մի ժողովուրդ, որ վեր է կենում՝ խոժոռվեց և լոնց:

Այստեղ Վեհմիհրը գործի անցավ: Եվ ցույց տալու համար Դենշապուհի անկարևորությունը Հայոց աշխարհի գործերում՝ հանդիսավոր և բարձրաձայն հրամայեց, որ կանչեն պարսից զորագնդի հրամանատարին: Եկավ հրամանատարը:

— Զոկատ ուղարկիր Արուջ՝ գրավելու համար բերդը:

— Հրամա՛նդ,— ասաց հրամանատարը հնազանդ ու հանդիսավոր:

«Հը՛մ... — մոմոաց քթի տակ Դենշապուհը և ատամները կրճտեց,— սպասի՛ր, խոզի զավակ խոզ... հոտած ճարպի պարկզ ճեղքել կտամ Տիզրոնում...»:

Դենշապուհի խոշտանգումներին բռնի ականատես լինելու համար քշված շինականները փողոցից լսում էին ներսի աղմուկը և սահմոկած սպասում, թե ինչով կվերջան սարսափը: Նրանք հանկարծ ետ ընկրկեցին և ճանապարհ տվին: Սահակին, որ աչքերը

թոնած՝ կույր առաջ եկավ դեպի բազմութունն: Նա շրջվեց, նայեց շորս կողմ արյունխեղդ աչքերով, որոնցից մեկը փշացել էր արդեն, իսկ մյուսը արյունից չէր ազատվում, որ տեսնի: Բազմութունը զարհուրեց: Ծվ այդ կարկամիչ լուռության մեջ հանկարծ լավեց Սահակի խոսուտ, գուժկան ձայնը.

— Վրե՛՛ն՛՛ն ժ... —

Ուրվականային լուռությունից ավելի զարհուրելի եղավ Սահակի խոսելը: Սպանվածը խոսում էր: Գո գերբնական երկյուղով էր լցնում մարդու սիրտը:

— Վրե՛՛ն՛՛ն ժ... — կնուչաց Սահակը արյան փրփուրը պատահոտած շրթունքներից ժայթքելով:

Այդ միջոցին բազմության միջից ներս խցկվեց մի գազազած ծերուկ և գրկելով Սահակին տա՛րավ: Նա դողում էր հուզմունքից և ցատումից: Սահակը գնաց լայն քայլերով, ուժգին դոփելով գետինը:

— Վրեժ հոգիների՛ս պարտքը, — գոչեց նրա հետեից բազմութունը:

Հանկարծ նրանց հետեից հարյուրավոր ձեռքեր պսպղուն սրերով ցայտեցին օդում, և զինվորները, որ շրջապատել էին բազմության, հարձակվեցին, սկսեցին սրածել նրան: Բազմութունը զոռաց և սկսեց փախչել դեպի բազաբավան: Զինվորները հետևն ընկած՝ կոտորելով բռնեցին նրանց այնտեղ վերջացնելու եղեռնը: Պարսիկների բազմութունը հարձակվեց տների վրա և սկսեց կողոպուտը: Այդ տեսնելով պարսիկ զինվորները՝ դուրս թռան վրաններից և վազեցին իրենց մասը հասնողներու: Նրանց և պարսիկ բազմության մեջ սկսվեց կռիվ ազարի համար: Շինեպանները, որ մինչ այդ ենթակա էին սրածության, սկսեցին փախչել գետի դաշտերն ու լեռները: Գնացին նրանք դեպի Տարոն, որոնելու ապավեն այնտեղ, ուր միշտ գտել էին այդ ապավենը նրանց նախնիները:

Լեռնային կաթաններով նրանք հասան այն հեծյալներին, որ իրենցից առաջ պոկվել Զարեհավանից ու այլ լեռներից, խմբեր կազմած գնում էին դեպի Բզնունյաց ժողի շախարհները:

Այդ խմբերի մեջ աչքի էր ընկնում Առաքելինը, որի մեջ մտածները ընտրի հեծյալներն էին Զմեղոցից և ապա Զարեհավանից: Զուգեց խմբից ետ մնալ՝ հակառակ խմբի մերժումներին՝ ակոտե-

ցիներինց Եզրասը, որ շնայած շատ էր տանջված, բայց դուրս եկավ շատ դիմացկուն:

Առաքելը ևս գնում էր Տարոն՝ հույս ունենալով, որ այնտեղ կարող է ժողովրդական ապստամբություն ծագել և այնտեղից կարելի կլինի գնալ դավաճան նախարարների դեմ:

Խումբը գնում էր լեռներով: Նրա կողքով գնում էր Պողոսը, որի տրամադրությունը թեժացել էր. նա խոսում էր բարձր, ուրախ:

— Չորուցամաք կնիկս թե՛ էս ի՞նչ խորհուրդ էր: «Ես էլ շինական չեմ, ասացի, գնացի՛, կնի՛կ»,— «էլի՛»». «Ես Մամիկոնյան այրուծի եմ. կաց, սպասիր, կգամ, հո չենք մեռնի»: Նժույզս թամբեցի ու...

Խոսքը կիսատ՝ Պողոսը նայեց ազատ լեռներին ու կրակվեց.

— Ափսոս չէ՞ ազատություն՛ներ, կյա՛նք է:

— Հա՛ պա՛ս, — լսվեց հետևից:

Դա խումբն էր, որ հրճվում էր լեռնային օդից, լայնարձակությունից ու ազատությունից:

— Մի՛շտ էլ կովիլ ենք, մի՛շտ էլ կովիլ ենք,— խոսում էր Պողոսը իր խմբի հետ,— մեր կյանքը կովից ենք հանել, կովից էլ պիտի հանենք:

— Պողո՛ս եղբայր, էս անգամ էլ մենք պիտի կովենք, հը՞, Պողո՛ս եղբայր,— հարցրեց լուրջ ու պարզամիտ դեմքով Սրապը՝ շրջվելով դեպի Պողոսը:

— Մի՛շտ էլ մենք չե՞նք եղել կովողը, հոգյակ Սրապ,— ձայն տվեց հետևից կարմրաթուշ ու զվարճադեմ մի ուրիշ հեծյալ և ծիծաղեց,— հա՛, հա՛, հա՛, հա՛...

— Սրա՛պն է: Ասա՛, Հովհաննես Կարապետ, ասա՛, թող հասկանա,— հարեց Պողոսը,— նախարարը կովում է՛ մե՛նք ենք զարկում, մենք ենք կովում՝ մե՛նք ենք զարկում: Սա օ՛ղ արա ականջիդ, Սրա՛պ, օ՛ղ...

— Ա՛յ, բերանդ սիրեմ, հոգյա՛կս,— գոչեց կարմրաթուշը:

— Մի վե՛ր քաշի, Հովհաննես՛ս Կարապետ, վե՛ր,— ձայնեց Պողոսը աշխուժի գալով:

Հովհաննես Կարապետը արդեն ինքն էր ետում երգի անդիմադրելի պահանջից: Հնչեղ ուժեղ ձայնով սկսեց.

«Ներ ազատ մեծ Մասյաց՝ Մասսին,  
Քան դամենն ազատ վեր Մասսին,  
Լույսն է կախ, հոգեւոյսն ի լույս,  
Շող շողով շողշողուն Մասսին:  
Հա՛յ ասենք շողշողուն Մասսին,  
Հա՛յ ասենք շողշողուն Մասսին»:

— Հա՛ա՛ա՛ա՛յ,— ձգեցին բոլորը կրակված,—

շողշողուն Մասսի՛ի՛ի՛ն:

— Կայծակի՛ն տուր, կայծակի՛ն տուր,— գռչեց Պողոսը ժիր ու աշխույժ:

Հովհաննես Կարապետը, որ ձայնի ուժգնութիւնից կասկարմիր էր կտրել և շարաճճի աչքերով ժպտում էր կապույտ երկնքին ու լեռնալանջի ծաղիկներին, շարունակեց.

«Սուր սուսեր խաղաց վեր Մասսին,  
Զարկ գարկեց կայծակ վեր Մասսին,  
Քար կանգնեց դար դարով դարեր՝  
Զհասան մեծ աշխարհք Մասսին:  
Հա՛յ ասենք մեծ աշխարհք Մասսին,  
Հա՛յ ասենք մեծ աշխարհք Մասսին»:

Խումբը որոտաց կրկներգը: Պողոսը սրտաթունդ ցնցվեց, ետ նայեց Հովհաննես Կարապետին և գռչեց...

— Կայծակի՛ն տուր, բմբուլնե՛րդ կտամ քամուն, հա՛...

Սվ հանկարծ խենթացավ, նժույգի գլուխը բաց թողեց: Նետերի պես կապարճներից պոկված՝ թռան հեծյալները և լեռնալանջի խիճն ու ավազը ջրի պես ցայտեցնելով՝ օդում, սուր ու վայր ճիշով կտրեցին վերջին զտոիվերն ու կանգ առան գագաթին: Առջևը՝ ներքև բացվեցին հովիտներ ու բլուրներ ոտնուձոց արած, հեռավոր լեռներ՝ թևերը ծալած իրար մեջ, կամ սավառնում էին թևատարած: Իսկ աջ կողմը Արածանին էր հոլովվում՝ տեղ-տեղ վառ սպիտակ, տեղ-տեղ կարմրավուն, տեղ-տեղ շողափայլ հալած ոսկի՝ մայր մտնող արևի տակ:

Խումբը իջավ լեռնանցքից դեպի Աղիովիտ, Ատամ Գնունու հայրենիքը՝ այնտեղից անցնելու Տարուն:



Երեկոյան ժանգառքի ժամն էր:

Հովը շնկշնկում էր լեռնանցքում, սուլում կանաչ խոտերի մեջ, գզգզում էր տուղտերը և տարածում լեռնային շավիղների շուրջը. ծոթրինի սուր հոտը:

Ատոմը Եղիշեի հետ գլուխ անցած փոքրիկ ջոկատին՝ իջնում էր մի լեռնահովիտ, ուր արեշողից պղնձագույն ժայռի թերակղզու մեջքին նստել էր մի ամրոց, որի պարիսպների որձաքարը նրան միաձուլում էր ժայռի հետ: Երկու գետակ մեջ էին առել թերակղզււղւին: Միսի կապույտ մի ժապավեն ձգվում էր դեպի երկինք և հալչում եթերում:

Ամրոցը Գնունյաց նախարարութեան բնակավայրն էր:

Խորեն իշխանին Ատոմը դեռ Այրարատից սուրհանդակ էր ուղարկել. «անհապաղ, անխափան գալ Գնունիք, իր մոտ, տագնապ է»:

Ամրոցի դարբասի մոտ նրանց դիմավորեցին ամրոցի բնակիչները և Խորեն իշխանը:

— Իսկ մայր իշխանուհի՞ն ուր է,— հարցրեց Ատոմը տեղապահին:

— Գնաց ագարակ, հիվանդի,— պատասխանեց տեղապահը: Ատոմը ներս հրավիրեց Եղիշեին ու Խորենին ամրոցի սրահը: Մինչ ընթրիք կհրամցնեին՝ Եղիշեն օթևան խնդրեց և առանձնացավ խոնջենք առնելու: Նրան սենեկապետը հրավիրեց հարեվան օթևանը՝ նախապես ճրագ վառել տալով այնտեղ:

Ատոմը մենակ մնալով Խորենի հետ, իսկույն գործի անցավ:

— Դաժան է վիճակը, իշխան,— դարձավ նա Խորենին,— դժվարին է, անհնարին: Իմացար անշուշտ լուրը:

— Իմացա,— հառաչեց Խորենը մտահոգ:

Քայց երբ Ատոմը պատմեց Այրարատի և Բագրևանդի դեպքերը, պարսիկ զորքերի կուտակումը՝ Խորենը ընդոստ վեր կացավ.

— Ի՞նչ ես ասո՞ւմ, մարդ աստժո... Կկործանվենք...

— Կկործանվենք, եթե չկանգնենք դիմագրավ արհավիրքին: Նախարարներին կոչ ուղարկեցի գալ իրենց զորագնդերով օգնութեան, սուրհանգակներով անընդհատ կապվել հետս՝ ո՛չ օգնութեան, ո՛չ սուրհանգակ:

Նրանք լռեցին:

— Կալմենք արտակարգ զորք բոլոր հավատարիմ զինվորներին, զանք ընդդեմ ուրացյալներին և պարսից զորագնդին:

Խորենք կարմրեց, հեաց հուզմունքից և շփոթված ժպտաց: Արտակարգ, անլուր, աննախընթաց էր գործը և լավ էլ չէր կարողանում ըմբռնել դրա մեծությունն ու ահավորությունը: Ատոմն ըմբռնում էր, բայց զորականի իմաստությունը նրան տանում էր կարճով.— նախ գործ, ապա մտածել այդ մասին:

— Չտեսնված գործ է,— ասաց Խորենը նորից մտախոհության մեջ ընկնելով և նորից սթափվելով:

— Մահն էլ շտեհանված գործ է, իշխան, բայց գնում ենք, երբ կարի կարևոր է, իհարկե, ո՞վ է տեսել ու լսել, քայքայել աշխարհը՝ աշխարհը շինելու համար: Անցնելու ենք օրենք, իշխանություն... հայրենիքը պիտի փրկենք: Այսպես է վճել Արտաշատի ժողովը. հենց իրենք՝ Մամիկոնեից տերը, Ամատունյաց տերը, Մուկաց տերը, բոլորը...

— Տերը մեզ օգնական,— հռոչելով համակերպեց Խորենը:

— Գիշերով մեկնենք,— ասաց Ատոմը և սենեկապետին ուղարկեց իր տեղապահ հրամանատարի հետևից, որ սա իսկույն գատի զորագնդի առաջին ջոկատը՝ մեկնելու Խորխոռունիք:

Ներս մտավ մի ոչ այնքան հասակավոր տիկին: Եկողը, ճիշտ է, մարդկային էակ էր արտաքինով, սլարզապես մի իշխանուհի, բայց դա մի այնպիսի շքեղաշուք մուտք էր, կարծես տեսիլ սահեց ներս: Ազնիվ, հրամայական մի գեղեցկություն վերից վար վեհացնում էր նրա հասակը, հայացքը, շարժումները:

Նա խիստ նման էր Ատոմին. միայն երբ նա արժանապատվորեն ողջունեց Խորեն իշխանին, նրա նրբին հոնքերը, որ կակաշի միջուկի չափ սև էին, բնական հպարտությամբ թեթև բարձրացան: Նա ողջագուրվեց Ատոմի հետ և ծանր նստեց ասեղնագործ բարձրագիր բարձին:

— Ի՞նչ լուր, մայրիկ,— հարցրեց Ատոմը՝ խոնարհ կանգնած նրա առջև:

Տիկինը չպատասխանեց: Նա ըստ երևույթին սաստիկ հուզված էր և ճանապարհի՞ն, թե՞ հասնելով ամրոց՝ բան էր իմացել: Նա լուռ էր և ջանում էր զսպել իրեն:

— Մայրիկ, հրամայիր,— խոսեց կրկին Ատոմը:

Գնունյաց տիկինը խորն ու տխուր նայեց Ատոմին և ապա խիստ հուզված հարցրեց.

— Սպարապետի դե՞մ ես գնում...

— Զգիտեմ՝ դեմ թե օգնական,— պատասխանեց Ատոմը:

— Զգնաս, Սպարապետը սուրբ է... չգնաս, որդի,— գողահար գրկեց Ատոմին մայրը,— աստժուռն ընդդեմ է...

— Հոգուս ընդդեմ է, մայրիկ, բայց պիտի գնամ...

Գնունյաց տիկինը արտասովեց և երեսը խաշակնքեց:

Իր հանգստյան օթեանից եկավ ներս մտավ Եղիշեն: Նա ողջունեց տիկնոջը, որք խոնարհ համբուրեց նրա աջը: Նրա խաղաղ կորովը և խորաթափանց աչքերը սաստեցին ամեն բան:

Կեսգիշերային ցուրտ լեռնային հովի շնկշնկոցի հետ Ատոմի ջրկատր խորենի ու Եղիշեի հետ ճանապարհ ընկավ դեպի Խորխոռունիք:



Ողական ամրոցին մի խաղաղություն էր իջել ու ծածկել ողբերգական իրականությունը: Դա Զոհրահն էր: Նա լցրեց ամրոցը կրիտասարդական հուսալից ուրախությամբ:

Մեծ Տիկինը ապաքինվեց հոգեկան ցնցումներից: Նա աշխույժի եկավ: Առողջ կազմվածքը, հոգեկան մեծ ուժը նրան վերականգնեցրին: Զոհրակի գալը նրան ուրախացրել էր և ոգեշնչեց: Նա մի օր ցանկություն հայտնեց գնալ Գլավա վանք՝ աղոթելու: Վարդանի և բոլոր տարագիրների փրկության համար: Նրան առաջարկեցին իշխանական սալը, բայց նա հրամայեց, որ իր նժույզը բերեն: Նա այնքան գորացել էր, որ կարելի էր թույլ տալ նժույզ հեծնել, մի բան, որ նա սովոր էր ողջ կյանքում: Բաղբը գոհ էին, որ նա կրկին այդքան կտրովի գառավ, և կարողանում է առաջվա սխա ճանապարհորդել: Մյուս կողմից էլ իմաստուն էր նրա հեռանալը ամբողջից. հասնում էին ալեկոծ օրերը, ժամը ժամին սպասվում էին ահավոր լուրեր, թեև դեռ ոչ մի առանձին ակնհայտ նշան չկար անհանգստանալու:

Միայն Աամիկունեից տիկինը երբեմն բարձրանում էր օթեանների կտուրը կամ ամբոցի աեենաբարձր բուրգը և հայացքը գամում հեռատանների: Նա զգում էր, որ մոտ է ողբերգական օրը...

Անահիտը սիրում էր մենակ նստել այն օթևանում, որի պատուհանից առաջին անգամ իրեն էր նայել Արտակը: Այդտեղ Անահիտը հանգստանում էր՝ երազելով ապագան և վայելելով անցյալը: Երբեմն նրա մոտ էր գալիս Աստղիկը, նստում և լուռ զբաղվելով իր ձեռագործով՝ թույլ էր տալիս, որ քույրը տարվի իր հոգեկան տեսիլներով:

Երկու քույրն էլ շարունակ նայում էին պատուհաններից և մինչև Անահիտը ժամեր շարունակ միգամած հայացքը սուզում էր հեռուն՝ Աստղիկը դիտում էր ամրոցամերձ հրապարակը, շավիղները, ձորը և ճանապարհները, ուր շինականներ էին երևում իրենց բեռնատար անասուններով, հեծյալ ու հետևակ, բազմազբաղ դեմքերով:

Բայց Աստղիկը վերջին օրերը նկատեց մի այլ արտասովոր երևույթ. շինականները գրգռված էին և շարացած: Նրանք խեթ էին նայում, կանգ առնում ամրոցի պարսպի տակ, իրենց մեջ խոսում, վիճում: Եվ դա ամեն օր, քանի գնում ավելի ու ավելի:

Մի օր էլ մի բազմություն շրջապատել էր մի խումբ շինականների, որ ըստ երևույթին հեռվից էին եկել ընտիր նժույզներ նըստած: Աստղիկը գլուխը հանեց դուրս, սկսեց դիտել և լսել նրանց:

Ներս եկավ Մամիկոնեից տիկինը: Աղջիկները կանգնեցին խոնարհ:

— Ի՞նչ կա, օրիորդներ,— հարցրեց Մամիկոնեից տիկինը մեղմաձայն:

Աղջիկները ցույց տվին շինականներին, որ արդեն շուրջ բոլոր նստոտել էին քարերին, կամ պպզել՝ նժույզների սանձերը կոնատակները դրած: Մի կողմ թիկն էր տվել քարին Առաքելը. սպասում էր, որ շինականները դեռ իրենք խոսեն, դրսևորեն իրենց միտքն ու կամքը: Նա թողնում էր, որ քարոզը տան Պողոսը, Սահակը, Եզրասը: Միայն ինքը վերջում մոտն էր կանչում մարդկանց, հանդարտ, բայց խիստ խոսքով համոզում էր, որ անհրաժեշտ է վեր կենալ դավաճան նախարարների և Հազկերտի դեմ:

Պողոսը գլխին էր հավաքել. տարոնցի շինականներին և վիճում էր նրանց հետ: Լսվում էր նրա բարձր ձայնը.

— Փորձանքի՞ մեջ է՞ թող ձայն տա: Հավատն է ուրացել. ժողովրդին է՞լ է ուրացել...

— Հա-հա՛յ, մեր Սպարապետը հազար կյանք կտա՝ մի ժողովուրդ չի տա,— ասաց հպարտությամբ մի հաղթանդամ տարոնցի,— մեր Սպարապետը Հայոց աշխարհքի Սպարապետն է։

— Ճշմարիտ աստված...— բացականչեց մի ծերունի արծաթ գլուխը ցուլացնելով արևի տակ,— մեր Սպարապետը սուրբ է։

— Աստծուց խոսեցիր, Օհա՛ն հայրիկ,— քաշաբերեցին բուրբը։

Մամիկոնեից տիկինը դողաց։ Կարծես իր առջև շողաց մի հրաշք, որից նա սարսուռ զգաց։ Այդ իր ամուսին Սպարապետը, այդ հողեղեն մարդը նրա առջև կանգնեց իբրև բարձր էակ։ Տիկնոջը առաջ էլ հասել էր երկրի ամեն կողմերից ժողովրդի այդ հորջորջումը Սպարապետին։ Բայց այսօր, ժողովրդի մեջ նեղության օրը, երբ նա նոր իմացավ դրա խոր իսկական իմաստը և ժողովրդի վերաբերմունքի ողջ մեծությունն ու վեհությունը, գունատվեց ինչ-որ մի ահեղ զգացումից։

Բարձրագույն էր շինականների խաղաղ զրույցը։ Խոսում էր Օհան հայրիկը՝ սուր աչքերը գետնին գամած.

— Ժողովրդի Սպարապետ՝ ընտրյա՛լ։ Օրն արհավիրքի հայրենիքը պիտի կանչի Սպարապետին ու առաջ ու առաջ մենակ մեկ բան պիտի հարցնի. «Ի՞նչ արիր իմ ժողովուրդը»։ Ի՞նչ պատասխան պիտի տա Սպարապետը հայրենիքին։— Տեսե՛ք.— և Օհան հայրիկը սկսեց մեկնաբանել շատ լրջորեն,— մարդ՝ մեղսոտ, ժողովուրդ՝ սուրբ։ Մեկ՝ հայրենիք, մեկ՝ ժողովուրդ կա սուրբ։ Ժողովուրդը՝ հայրենիքի շունչն է անմար հավիտյանս հավիտենից։

— Ժողովրդով կանք,— տխրած աչքերը հորիզոնները սուղած, մտախոհ խոսեց Մամիկոնեից տիկինը և հառաչեց մի այլ վշտով համակված։

— Պիտի աշխարհը փրկվի, որ մենք էլ փրկվենք, պիտի աշխարհը փրկվի, որ մենք էլ փրկվենք,— կրկնեց նա ավելի խոր մտածելով։

Հուզված ներս մտավ Շուշանիկ տիկինը և արագ մոտենալով պատուհանին՝ սկսեց լարված ու անհանգիստ նայել հեռու ճանապարհին։

— Հեծելազոր է գալիս,— ասաց Շուշանիկ տիկինը։

— Մերո՞նք են... — հեաց Մամիկոնյան տիկինը։

— Աշ... հեծելագոր է, միայն... ախ, մա՛յր... — անհանգրստացավ Շուշանիկ տիկինը:

— Ի՞նչ պիտի լինի պատահած, — խռովելով դուրս նայեց Մամիկոնյան տիկինը և ապա դուրս գնաց արագ:

Շուշանիկ տիկինը Անահիտի հետ շտապեց դարբասը: Ամրոցի բնակիչներն արդեն թափվել էին դուրս: Հեռվում, ճանապարհի երկայնքով սև որդունքի նման ետում էր մի հեծյալ ջոկատ: Նա գալիս էր գրոշներ պարզած: Ողակաւնի ճամբարից հեծյալներ թրոան դեպի մոտեցող զորասյունը: Այնտեղից դեպի ամրոց սլացավ Դավիթ սեպուհը և եռալով իր խենթացած նժույգի վրա՝ կասկարմիր կտրած գայրույթից՝ գոշեց ամրոցի բնակիչներին.

— Նե՛րս, նե՛րս... դարբասը փակե՛ք, — հրամայեց գլխավոր պահակին:

Դարբասը փակեցին:

Եկվոր ջոկատը մոտենում էր հատեհատ, հաստատ՝ որպես իր սեփական տանը և բացարձակորեն շէր ընդունում ոչ մի ռազմակարգ: Ու երբ եկավ բազական մոտեցավ, պարզ երևացին նրան առաջնորդող Ատոմ նախարարը, Խորեն իշխանը և Եղիշեն:

Ատոմը մոայլ էր և մտահոգ: Լուրջ էր նաև Խորենը: Իսկ Եղիշեն խանդավառ դեմքով և խորամիտ աչքերով նման էր մեծ պատգամներ բերող մարդու, որի համար միևնույն էր, թե ի՞նչ երկրով է անցնում, ի՞նչ մարդկանց է մոտենում:

Դավիթ սեպուհը իր ընդունած վճռից շնչասպառ՝ դեմքը դարձրեց գեպի զորագունդը և ինչ-որ նշան արեց: Զորագունդը ետև գնաց, որ ասպարեզ բանա հարձակման թափի համար:

Ամրոցի դարբասը սասաթիկ ծեծեցին, ներսից լավեց Մամիկոնեից տիկնոջ այրմարդու ձայնը, որով նա սաստում էր Դավիթ սեպուհին, հետո դարբասի դուռը կրկին բացվեց արագ, և Մամիկոնեից տիկինը դուրս վազեց, սպառնալի և այլալված: Նրան հետևեց Շուշանիկ տիկինը, որ բռնեց նրա ձեռը: Մամիկոնեից զորագունդը կարկամեց ակամա: Դավիթ սեպուհը ցնցվեց այս վարձունքից և աչքերը արյունոտ ու շար՝ մոտ քշեց նժույգը տիկիններին և ինքն իրենից դուրս եկած՝ զորական խիստ կարգով հրամայեց.

— Տիկիններ, նե՛րս գնացե՛ք իսկույն... տագնապ է...

— Թո՛ղ, սեպուհ, ե՛տ կաց, — սաստեց Մամիկոնեից տիկինը:

— Ին՛չու հրամայիր, տիկին, շեմ կարող,— հեկու՞մ գոչեց Դավիթ սեպուհը:

Նա սուրը մերկացրեց և հարձակման հրաման տվեց: Եվ հենց այն է՝ երկու զորագնդերը իրար վրա պիտի հարձակվեին իրար բզկտելու՝ Եղիշեն նժույզը թոցրեց նրա վրա, նժույզը ծառացավ և սկսեց սմբականերով օղը ծեծել: Վայրկենապես հոգևորականը մարտիկի սլացիկ թափ առավ: Դավիթ սեպուհը մի պահ սաստվեց կրոնական երկյուղից ու զարմանքից և իր նժույզի սանձը քաշեց: Եղիշեն ձեռքը ուղղեց դեպի ամրոցի պարիսպները, ուր նետածիգները նետերը դրել էին աղեղների լարին:

— Թողե՛ք ամենայն միտք բնդդիմովյան, — գոչեց Եղիշեն ցասման մեջ, — տազնապի մեջ է հայրենին. զինվորագրվեցե՛ք հայրենի ազատության:

Եղիշեի կոչը շաթափեցրեց և երկյուղ չազդեց Դավիթ սեպուհին. նա միայն մի պահ ուշքի բերեց բերդապահներին: Դավիթ սեպուհը այն մարդկանցից շէր, որ իրենց պաշտոնը մոռանալին որևէ սպառնալիքից:

Բայց այդ պահին Առաքելը և նրա խումբը, ժողովրդի բազմության հետ լցվեցին հրապարակը երկու հակամարտ ջոկատների միջև, որ զսպիշ արգելք գառնա Դավիթ սեպուհի և նրա զինվորների համար:

Միաժամ զինվորներին առա՞վել գաբո՞ւացրեց Առաքելներից սրիկները, որ հանդուրժեցում ամբողջի աջօրինակ շարագետ գրավումը, հարաբառ ու սգա՞վոր կերպարանքով մեջ վազեց, արձանացավ Ատոմի, Խորենի և Եղիշեի առջև և ոչինչ չձեռնարկեց ընդդիմանալու: Նա հնազանդ և հրամայական դեմքով առաջ գնալով դեպի Դավիթ սեպուհը՝ ասաց նրան.

— Գաղարի՛ր, մա՛րդ աստծո, չե՞ս տեսնում գումկան ննկկել, վա՛յ մեզ... — ապա դարձավ Եղիշեին դողահար ձայնով ասաց. — տո՛ւր գույժը, հա՛յր սուրբ:

Հանկարծ լուսնյունը սրի պես կտրեց աղմուկը:

Եղիշեն դառն ու դաժան ձայնով գուժեց.

— Լսեցե՛ք ինձ, ողբացյալնե՛ր, ուխտյալները դրժեցին իրենց ուխտը և ուղի են ընկել Հայոց աշխարհը՝ ուրացած հայրենիքն ու իրենց... գալիս են արյաց զորքով, մոգերով...

Մամիկոնյան տիկինը վայրկենապես գունատվեց և ընդառաջ գնաց դեպի Եղիշեն:

— Հավատարի՛մ է իմ տերը ունտին, նա ուրացող չէ՛,— ասաց նա հասարակ, բայց խիստ եղանակով,— բայց վա՛յ ինձ, որ Վարդան Մամիկոնյանի անվան վրա այդպես խոսվեց:

Նույն պահին սրարշավ գալիս էր Զոհրակը, որ Բաղդասար, Գրիգոր և Սուրեն սեպուհեաների հետ գնացած էր եղել մոտակա գյուղերը: Նա եկավ, անհանգիստ նայեց շուրջը և հուզված հարցրեց Մամիկոնեից տիկնոջ.

— Մայրի՛կ, ի՛նչ է պատահել...

Մամիկոնեից տիկինը շխոսեց:

— Նահատակվե՛լ է... մայրիկ... — սարսափով նշանակալից ձայնով դարձավ Զոհրակը մորը:

— Ո՛չ, զավակս, ո՛չ, զավակս,— հասկացավ նրան Մամիկոնեից տիկինը և բացատրեց տխրաձայն,— ուրացո՞ղ է հոչակվել...

Զոհրակը գունատվեց, կարմրեց և ասաց դողահար-ձայնով.

— Իմ հայրը մահ կընդունի՝ չի ուրանա հայրենիքը:

Մամիկոնեից տիկինը դիմեց եկողներին.

— Հրամայեցեք նե՛րս, տյա՛րք, հոգևո՛ր տեր... եկե՛ք,— հառաչեց նա,— նստեցեք Վարդան Մամիկոնյանի օթյակը, մինչև կգա ինքը և կսրբի շարախոս հոչակը...

Նա առաջ ընկավ, նրան հետևեցին Եղիշեն, Ատոմը, Խորենը, Շուշանիկ տիկինը և Զոհրակը: Ապա ներս գնացին Անահիտը, Աստղիկը, Յուզաբերը:

Երբ մտան Վարդանի սրահը, Մամիկոնեից տիկինը շոքեց և սկսեց աղոթել: Նրան հետևեցին բոլոր կանայք և աղջիկները: Կարծես դագաղ մտավ ներս, որի մեջ պիտի դնեին հանգած մի թանկագին կյանք:

Եկավ Մամիկոնյան տաներեցը, նայեց ահարեկ, ողջունեց սպվորի պես Եղիշեին և առաջ գալով ողբաձայն հառաչեց.

— Ավա՛ղ տանն Մամիկոնյան...



Ատոմի արշավը Ողական ամրոց կայծակի հարված եղավ հանկարծահաս, կարկամիչ: Դա երազում կատարվածի նմանվեց՝ անհեթեթ, տարադեպ: Երկու օտարներ՝ նախարար ու իշխան՝ իրենց զորքով եկան մի այլ օտար նախարարի ամրոցը և ահա կարգավորելու են ամրոցի վիճակը: Զոհրակին ազդեց այս բանը ներքուստ: Նա չգիտեր ինչպես անդրադառնալ դրան:

Ատոմն առաջարկեց Զոհրակին առանձնանալ այլ օթևան՝ խոսելու իր գալու նպատակների մասին: Գնացին հարևան օթևանը:

— Կանչի՛ր զորագնդի սեպուհներին, — ասաց Ատոմը հրամայական եղանակով, — ինձ վաղն հարկավոր է Մամիկոնյան զընդից մի ջոկատ, որ միացած իմ ջոկատին՝ գա հետս Ռշտունիք, գիշերս իսկ պատրաստ վիճակի բեր:

Զոհրակը անկախ իր կամքից դարձյալ վիրավորվեց այս կարգադրող ձևից, բայց և զսպեց իրեն: Ժամը տարադեպ էր և ուզամական գործը՝ նա գիտեր այդ՝ կարծր, անխնա բան է:

Ներս եկան սեպուհները: Դավիթը շէր կարողանում զսպել իր զայրույթն ու ծայրահեղ մտահոգությունը: Մյուսները մի կերպ թաքցնում էին իրենց դժգոհությունը: Արտասովոր դեպքը նրանց շփոթել էր և խելքից հանել: Դավիթը խեթ նայեց Մամիկոնյան սիկնոջ, մոտեցավ Զոհրակին և մի կողմ քաշելով նրան՝ փսփսաց.

— Ես հարձակվեմ, իշխանի՛կ...

Զոհրակը գունատվեց և խեղդված ձայնով սաստեց.

— Զհանդգնե՛ս, զլո՛ւխդ կգնա... հիմա՛ր...

Դավիթը զայրացած հայացքը իջեցրեց հատակին:

— Պատրաստեցե՛ք ջոկատը:

Սեպուհները լռեցին:

— Ձեզ հե՛տ եմ, — կարծրացրեց ձայնը Զոհրակը և մոտ գլուխաց Դավիթ սեպուհին, կանգնեց նրա առաջ. Դավիթ սեպուհը վեր կացավ և բարև բռնած՝ մոմոաց խեղդված ձայնով ու զայրալի.

— է՛, շատ էլ ուրացել է... աչքս բաց՝ իմ տիրոջ ջոկատը հանեմ օտար իշխանի՛ տամ... աշխարհի վե՛րջն է...:

— Ծիշտ է ասում, իշխանի՛կ, — փսփսացին սեպուհները:

Ներս եկան զինվորները կատաղի հայացքներով՝ կարծելով թե ինչ-որ դավ կա ներսը:

— Տարե՛ք սրան զնդան, — հրամայեց Զոհրակը զինվորնե-  
քին:

Սրանք շփոթված, զարմանքով նայեցին Զոհրակին, բայց կա-  
տարեցին նրա հրամանը:

— Թողե՛ք, ես ի՛նքս իմ ոտով կերթամ իմ տիրոջ զնդանը, —  
զինվորների ձեռքերը ետ զարկելով, ասաց Դավիթ սեպուհը և գը-  
նաց, — ես Մամիկոնյան եմ, — ասաց նա առանձին հպարտու-  
թյամբ:

Դավիթ սեպուհին տարան:

Զոհրակը դարձավ մյուս սեպուհներին:

— Դուք կհանեք վաղը ջոկատը: Լուսաբացին գնում ենք:

— Հրամանդ ի կատար, — ասացին սեպուհները և նստեցին՝  
մտալ ու խեթ հայացքները հատակին իջեցնելով:

Սրահի մեջտեղ գոյացավ մի դատարկ տարածություն, ուր  
կարծես դրված լիներ Վարդան Մամիկոնյանի մարմինը, և նրանք  
չուրչը սգավոր լինեին: Անահիտն ու Աստղիկը սկսեցին հեկեկալ:  
Շուշանիկ տիկինը, որ միշտ քնքուշ և ուշադիր էր դեպի աղջիկնե-  
րը, շնայեց անգամ այն կողմը: Նա փոխվեց արագ ու անսպա-  
ռելի:

Վրահասավ ծանր, ճնշող մի գիշեր: Ոչ ոք չէր ուշաքերվում,  
թե ինչ էր կատարվածը: Հարվածը բուժ էր, շշմեցնող: Մի շարա-  
զետ, աննախընթաց դեպք, որ չգիտես ինչպես ընգունես: Ընտե-  
լանալ անկարելի էր. հակառակը՝ քանի զնաց ավելի խստացավ  
տագնապը: Սրահում դեռ նստած հսկում էին, և թվում էր թե մի  
տխուր խաղաղություն գալիս էր թևերը փռելու ամբոցի գլխին,  
ևրբ հանկարծ ամբոցի դարբասի մոտ հեծյալները խլարացին և  
առաջ բերին մի զսպված իրարանցում: Բակում շարվում էր. «ը՛սս»...  
«ը՛սս»... Ճնշված ու շարագույժ փսփոսոցները, ահագնեկված խոս-  
քերի հարվածները սկսեցին հոսել դեպի պատշգամ, դեպի վեր,  
որահը:

Յուզաբերը դուրս եկավ սրահից.

— Հա, ի՞նչ է, ո՞վ է... — հարցրեց նա միջանցքում:

— Մեծ Տիկինն եկավ... — փսփոսացին նրա ալանջի տակ:

— Մեծ Տիկինը... վա՛յ իմ գլխին, — գլուխը ծեծելով ետ  
վազեց Յուզաբերը և մտնելով սրահ՝ ուղղակի գուռեց.

— Մեծ Տիկինը...

Մամիկոնեից տիկինը, զսպելով իր խոր տազնապը՝ վեր կացավ և ընդառաջ էր ուզում գնալ Մեծ Տիկնոջ: Բայց երբ նա մոտեցավ դռան և ուզում էր միջանցքը մտնել՝ տեսավ միջանցքում սեպուհներ, զինվորների և սպասավորների բազմութունը հետևը գցած, մի տեսակ նրանց ետ պահելով, որ իրենից առաջ չընկնեն՝ միջանցքի կիսամութի մեջ խարխափելով և ինքն իրեն խոսելով դեպի սրահն էր գալիս Մեծ Տիկինը: Նրա հետևից ուղեկցող աղախինները վախեցած նրա հետ լինելիք անակնկալ պատահարից՝ ձգտում էին մի կերպ դուրս պրծնել, ընկնել առաջ՝ նախազգուշացնելու սրահում նստածներին, որ արդեն իրար էին անցել:

Մեծ Տիկինը մոտեցավ սրահին ու մինչ ներսինները կայամանավորվեին ինչ ասել նրան՝ նա ծանր մտավ սրահը: Անօրինակ տեսարանը ցնցեց բոլորին: Մեծ Տիկինը նայեց Մամիկոնեից տիկնոջ, որ գնաց նրան ընդառաջ:

— Դստրի՛կ... Ի՛նչ բոթ՛ է... — մահվան լուսթյան մեջ խոսեց ոչ այս աշխարհի ձայնով Մեծ Տիկինը և խեթ հայացքով զննեց Մամիկոնեից տիկնոջ վերից վար: Եվ ներքին շրթունքը դողացրեց:

Եղիշեն, Ատոմը և Խորենը ընդառաջ գնացին Մեծ Տիկնոջը և թևերը մտած՝ տարան դեպի գլխավոր բարձր, որ Վարդանի հատուկ տեղն էր: Մեծ Տիկինը նայեց բարձին և խոպոտ ու սպառնալի հարցրեց.

— Ո՛ւր է Վարդան Մամիկոնյանը...

Եղիշեն միայն համարձակվեց խզել ծանր լուսթյունը:

— Տե՛ր Սպարապետը ճանապարհին է, Մեծ Տիկին...

— Պաշտպա՛ն է հայրենիին... — երկյուղով և սաստելով հարցրեց Մեծ Տիկինը:

— Այդ գիտե ինքն ու խիղճը, — մեծ հուզմունքով պատասխանեց Եղիշեն:

Դարձյալ մոռյլ լուսթյուն... Հանկարծ այդ գերագույն լարված պահին Մեծ Տիկինը ծնկները ծեծեց.

— Վո՛ւտ՛ւտ՛ւ... հոգին կորցրե՛լ է... — շարագույժ նայեց բոլորին և կրկին մի անգամ ուժեղ թափով մի շեշտով ծնկները թակեց, — վո՛ւտ՛... —

Սարսափը ափրեց սրահում նստածներին և դռան մոտ խըմբավածներին, ուր սպասավոր, սեպուհ, զինվոր խոնվել էին՝ գուրտ

գալով ամեն պատշաճից ու իրավունքից: Լուսթյան մեջ լսվում էր մոլեգնած պառավի դժվար շնչառությունը շրթունքների դողով: Ապա վճռական վեր կացավ նա, խոժոռ ու զայրալի նայեց նըստածներին: Եղիշեն նրան մխիթարելու՞, թե հանգստացնելու համար ասաց.

— Դեռ ոչինչ հայտնի չէ, Մեծ Տիկին, հայտնի չէ, թե Սպարապետը ուրացե՞լ է արդյոք... Թո՛ղ Տերը դատի նրան այդ հանցանքի համար... Վարդան Մամիկոնյանը...

— Լո՛ւտ, հա՛յր սուրբ, լո՛ւտ... բոլորդ լո՛ւտ,— դարձավ նա մյուսներին,— լո՛ւտ... Ի՞նչը հայտնի չէ, հայտնի չէ, որ չի ուրացել հայրենի՞ն, ինչպե՞ս չպիտի հայտնի լինի... Այդպես շխոսե՛ք, ձայներդ անցյալների հանգստարանը չհասնի՞, այդպես շխոսե՛ք...

Բոլորը քարացան սոսկալի զգացումից՝ կարծես Մամիկոնյանների ողջ սերունդը մինչև Համազասպ Մամիկոնյանը ներս մտավ սրահը:

— Համազասպը շիմանա՞, Մուշեղը շիմանա՞, ս. Սահակը շիմանա՞... Չլինե՞մ-շիմանամ այդպես խոսք... Հեռո՛ւ հանգըստարանից...

— Առերես է ուրացել, Մե՛ծ Մայր,— շոքեց նրա առաջ Մամիկոնյան տիկինը և զրկեց նրա ծնկները:

— Առերե՛ս... հայրենի՞ն... — գոչեց Մեծ Տիկինը սպառնալի ցատումով,— առաջի մարդկան առերե՛ս... չի՞ նահատակվել...

Մոլեգնած ու խոցված պառավը վեր թռավ և շարժվեց դեպի դուրս: Ոչ ոք չհամարձակվեց բռնել նրան: Ամենքը լուռ ու սարսափած հետևեցին նրան, թե ո՛ւր պիտի գնա: Նա ինչ-որ մի գերբնական ուժով մղված անցավ միջանցքը և իջնելով սանդուղներից՝ գնաց դեպի դարբասը: Նրա հետևից գնացին թե սրահում նստածները և թե ամրոցի բնակիչները: Սրանց միացան նաև շինականներն ու զինվորները:

— Աստվա՛ծ, աստվա՛ծ, ո՛ւր է գնում,— շշնջաց Շուշանիկ տիկինը:

— Գիտե՛մ,— հառաչելով շշնջաց Յուզաբերը:

Մեծ Տիկինը աչքերը սևեռած, դողահար շրթունքներում ինչ-որ մրմունջներ՝ գնում էր դեպի ամրոցամերձ բլուրը, որ Մամիկոնեից տան տոհմական հանգստարանն էր: Դա մի շարագույժ ծրթ էր, որ լուսավորվեց սպասավորների ձեռքերին վառվող ջահերով:

Գիշերային խավարը իր սև ծոցի մեջ շրջանկարի պես ցուցահանեց մի արտակարգ ուժի պատկեր: Առջևից գնում էր մարգարե պառավը, նրա հետևից՝ Եղիշեն, Ատոմը, Խորենը, Մամիկոնեից տիկինը, Շուշանիկ տիկինը, Անահիտը, Աստղիկը, Զոհրակը, Յուզաբերը, սեպուհները և մնացյալ շինական ու զինվոր բազմութիւնը: Ոչ ոք չէր համարձակվի ետ կանգնեցնել պառավին: Ոչ ոք ուժ չունեիր ետ մնալ նրանից: Մի արտասովոր երկյուղ պաշարեց բոլորին, երբ պառավը ձեռները կարկառեց սևաքար շիրիմներին, նայեց նրանց, ապա աչքերի շարագույժ մի ժպտով կանգնեց մամոտ մի շիրմաքարի զխին: Դա Վարդանի հոր՝ Համազասպ Մամիկոնյանի շիրիմն էր:

Հանկարծ մի ոչ մարդկային, ավելի շուտ պառաված արծվի մի խուլ կոնչոց կտրեց թանձրացած լուսթյունը:

— Համազա՛ա՛ա՛սպ, վե՛ն՛ր կաց... Համազա՛ա՛սպ, վե՛ր կաց, որդիդ քեզ ուրացա՛ա՛ա՛վ... Առաջի մարդկան ուրացա՛վ հայրենին... Սասանե՛ց տունը Մամիկոնեից...

Լուսթյունը ավելի զարհուրելի եղավ...

— Վաշե՛ն՛, Վասա՛կ, Մուշե՛ղ... վե՛ր կացեք, տեսե՛ք օրը դատաստանի...

Կրկին լուսթյուն: Կարծես իրոք էր կանչում պառավը, կարծես ամենքն սպասում էին պատասխանի, այնքա՛ն կենդանի էր մեռելակոշը, որ պառավի ոտների տակ կարծես իրոք պառկած քնած էին կենդանի Համազասպ, Վասակ, Մուշեղ Մամիկոնյանները, որոնց հարկավոր էր միայն ձայն տալ, և հաս նրանք վեր կկենային, կկանգնեին պառավի առաջ՝ իրրև սպառնալի կերպարանքներ:

— Համազա՛սպ, վե՛ր կաց, — կրկին սկսեց պառավը և կարծես սպասեց պատասխանի. — քեզ եմ, չե՛ս կենում վեր՝ ձայն տուր՝ գա՛ա՛մ... Աշխարհ տո՛ւն չունեմ, դադա՛ր չունեմ, ո՛րք եմ զավակից... Արի , ազա՛տ, ազատութի՛ւն բեր Հայոց աշխարհին:

Թվում էր, թե պառավի աչքերը կերպարանքներ էին տեսնում. նա նայում էր պատրանքի շափ կենդանի. մոռացել էր իրեն շրջապատող մարդկանց ու բնութիւնը և ոչինչ չէր տեսնում, ապրում էր անդրաշխարհում: Նա սկսեց լուռ նայել շիրիմներին, ապա և

սկսեց ինքն իրեն խոսել, հարցնել, պատասխանել ինչ-որ մեկին:

— Ի՞նչ են ասում... ուրացե՞լ ես... ինչպե՞ս է եղել, որ եղել է... Գո՞ւ, Վարդա՞նը... Չէ՛, այդ դու չե՛ս... Վարդանը չի՛ եղել: Վարդանը երա՞զ էր... հասակով, տեսքով, գեներով, խոսքով երա՞զ էր...

Ապա շրջվեց, նայեց իրեն շրջապատողներին՝ Եղիշին, որ անողոր ճակատագրի պես նայում էր վշտաբեկ պառավին և բազմության, Ատոմին, որ գենքի պես լարված, գեղեցիկ ու սարսափելի էր այդ պահին, Մամիկոնեից տիկնոջը, որ կարծես մահամերձ էր, մահատիպ, և մյուսները, որոնց պաշարել էր մի գեղազույն ոգի...

Պառավը նայեց նրանց. խառնեց նրանց կարծես իր աչքին երևացող նախնիքների ուրունների հետ և գիմեց նրանց.

— Ո՞վ էք, մեռելնե՞ր, ուրունե՞ր, կանգնել եք նախնյաց հետ... Ո՞ւր է Վարդանը... Ինչպե՞ս թողիք նրան մենակ... Գնացե՛ք բերե՛ք իր մոր զատաստանին...

— Կգնանք, Մեծ Տիկին,— լսվեց Ատոմի սթափեցնող, վճռական ձայնը:

Պառավը կարծես սթափվեց տեսիլքից և ավելի իրական նայեց իր շուրջը: Նա մշուշակալած աչքերով գրկեց հանգստարանի մոտ լցված շինականների, գեղջկուհիների, վանականների բազմությունը, որ անտառի պես լուռ ու մռայլ սևացել էր նրա շուրջը գիշերային խավարի մեջ՝ ողողված բարձր ջահերի արյունային լույսով: Եվ միշտ ուժեղ թափով զարթնած նոր մտքերով նա խորհեց նրանց մասին, նրանց, այդ շինականների, գեղջկուհիների մասին, որոնց նա շատ վաղ մանկութ օրերից միշտ էլ տեսել էր նախարարական կալվածքներում աշխատելիս, ամառ, ձմեռ շարձարվելիս, միշտ խոնարհ, միշտ իրենց թաքուն հոգսերի թախիժր գեմքերին, միշտ կարիքի մեջ:

— Մե՛ծ նեղություն հասավ հասարակին,— խոսեց նա ինքն իրեն,— հետը լինենք նրա նեղությանը, թող իջեցնի աստված նրա ցասումը: Մե՛նք բերի՛ք նրան այս արհավիրքը, մենք ընկանք նրա մեղքի տակ առաջի աստծո և մարդկան: Անիրավեցի՞նք շինականին, կեղեքեցի՞նք, մոռացանք, աղաղակը հասցրինք աստծուն... Զորք, հայրենին նա էր, աշխարհ սնող պահողը նա՛ էր...

Գիշերը նայում էր լեռներից ու ձորերից: Հանգստարանի քարին նստած Եղիշեն նման թեւածալ քնած արծվի, որ սակայն աչքերը բաց հեռուն է նայում անթթիթ՝ դիտում էր ամենքին: Նա իր մեջ ոգում էր խիզախ մտքեր: Նա լուում էր և կարծես սպասում, որ ամենքը համակվեն այն մեծ խորհրդով, որի մասին նա պիտի խոսեր: Եվ կարծես դրա համար հարկավոր էր ժամանակ և լուսթյուն:

Հետո սկսեց խոսել: Բայց դա խոսք չէր, այլ ինչ-որ ոգումն, խսկական գիշերային հսկում: Նա սկսեց խոսել վսեմ առաքինության մասին: Եվ նա խոսում էր այնպես, կարծես դա լիներ նաև իր համար, երբ նա ստեղծագործում էր և միաժամ հետևում իր մտքերի թռչքին:

— Մի թուլանաք ոգով, մի տխրեք հուսահատ: Եղեք կորովի և ազատ: Գրվեցեք զինվոր սուրբ ազատության, եղեք ճշմարիտ ազատ: Իմացեք... Կարճ է կյանքը մարդու, հարատև է մարդկությունը: Հող է նախարարը, հող է ուսմիկը, հող է հարազատը, հող է օտարը: Ոգուն եղեք հուսադիր: Օտարանում է հարազատը գնալով հող և հարազատանում է ետ գալով հողից: Նման սերմին եղեք, որ մահ ընդունեց և ծաղիկ եկավ: Նման ուղիսին եղեք, որ ծովին ձգտեց և ապրեց նրա հավերժական կյանքի մեջ: Օտարացեք անձերիդ մեջ, որ հարազատանաք հասարակի մեջ: Կյանքը մահն է այդպիսի, և չի ծնվի ծաղիկը առանց իր ծնողին՝ մահին: Աներկյուղությունը մահի՝ անպարտելիություն է:

...Ի մի է լցվում ոգին մարդկության, և միտում մի ոգին հանուր ոգուն հասարակաց: Զորացեք սիրով հայրենիքի: Փո՛քր եք, սակավ եք՝ կմեծացնի, կբաղմացնի ձեզ հայրենիքի սերը: Ազատության դինվորեցեք, ազատվեցե՛ք ձեր անձից, թուլությունից, կրքից, ընչաքաղցից, անձնամոլությունից, ազատվեցե՛ք բռնավորից, հոգեսպանից, ազատասպանից...

Այսպես խոսում էր, ոգում Եղիշեն, և քանի գնում՝ ամենի ոգու մեջ փոխվում էր կյանքի իմաստը: Խստամբերություն էր շնչում այդ նոր խոսքը լսողների հոգու մեջ. բռնանում էր թուլահոգության, եսականության, վայելչասիրության, մեղմության: Ահաբեկում էր ինչպես գլխի վրա մերկացած արդարության սուր և սարսափելի էր, ինչպես ճշմարտությունը: Պահանջը դաժան էր. մի գիշերում փոխվել, դառնալ այլ էակ, մեռցնել հին մարդը,

ուրանալ հարազատին, թաղել, մոտանալ նրան, դառնալ զինվոր հայրենիքի, նոր մարդ, նոր ոգի:

Եղիշեն լոնց: Քարի բեկորի կարծրությամբ նայելով իր շուրջը՝ քարացրեց նա ամենքին: Ապա լարված լուռության մեջ ներշնչված վեր կացավ, կանգնեց ինչ-որ վճռական շարժումով: Ամենքը հասկացան, որ նա արտակարգ խոսք պիտի ասի: Բոլորը ապասեցին սրտատրոփ: Եվ Եղիշեն հանդիսավորությամբ, ներշնչված խստությամբ դիմեց Մամիկոնեից տիկնոջ.

— Տիկի՛ն Մամիկոնեից: Քե՛զ է նայում Աշխարհն հայոց: Ուրանո՞ւմ ես ուրացյալին:

Մամիկոնյան տիկինը ցնցվեց: Հոգեկան պայթարը այս անօրինակ դեպքի հանդեպ և հարցմունքի խստությունը նրան խոցեցին նետերից ուժգին: Նա ճիգ արեց զսպելու իրեն: Եվ ապա ախուր ու բողոքող ցավով ասաց.

— Իմ տերը չի՛ ուրանա իր հայրենիքը, նա Մամիկոնյան է:

— Իսկ եթե ուրացել է, տիկի՛ն, կկանգնե՞ս պատասխանատու առաջի մարդկան... — և ահեղ լոնց Եղիշեն:

Լոնց և Մամիկոնեից տիկինը:

— Բայց մինչև կգա և վկայի ճշմարտությունը՝ պարտական ես, տիկի՛ն, առաջի աստծո և ազգի: Ասա, մինչ այդ ուրանո՞ւմ ես ուրացյալին:

Մամիկոնեից տիկինը ճիգ արեց և անողոք վճռականությամբ, — որովհետև նա գիտեր, որ այդ պահին ամեն խոսք սուրբ է, հանկարծ այլակերպվեց, խստացավ և վճռեց.

— Ուրանում եմ... ուրացյալին...

Կարծես այդ պահին նա իր ձեռքով սուրը իշեցրեց իր ամուսնու գլխին: Բոլորը երկյուղած նայեցին նրա գունատ, քարացած գեմքին, որ արդեն ներշնչվեց ինչ-որ մի գերբնական խստամբերությամբ:

Նորից լուռությունը ճնշեց:

— Եվ դո՛ւ, իշխանի՛կ, — դարձավ Եղիշեն Ձոհրակին, — ուրանո՞ւմ ես ուրացյալին:

Ձոհրակը զայրալի նայեց Եղիշեին և ներքին, հայարտությունը վիբավորված զինվորի արժանապատվությամբ ասաց.

— Մինչև կգա հայրս և իր բերանով կխոսի ճշմարտությունը՝ ուրանում եմ... ուրացյալին:

Նա կարմրեց ներքին ցավից և վրդովմունքից:

— Եվ մյուսնե՛րդ... Շուշանի՛կ տիկին, օրիորդնե՛ր, սեպուհ-  
ներ, ծառանե՛ր և աղախիններ, ուրանո՞ւմ եք...

— Ուրանում ենք,— ձայն տվին բոլորը միասին՝ Շուշանիկ  
տիկինը, Անահիտն ու Աստղիկը, Յուզաբերը, սեպուհները. աղա-  
խինները և ծառաները երկյուղած:

Եղիշեն գնաց դեպի բազմությունը և դիմեց նրան.

— Եվ դու, Աշխարհ հայոց, ուրանո՞ւմ ես:

— Ուրանում եմ,— բազմաձայն, զանգվածորեն գոչեց բազ-  
մությունը:

Եղիշեն հայացքը շրջեց բոլորի վրա և հանդիսավոր գոչեց.

— Ողջո՞ւյն զինվորյալներիդ հայրենյաց: Զինվորյալ գրվե-  
ցիք՝ ապա ուրեմն օտարացաք ամեն ինչին, որ ձեր անձինն է և  
հարազատին: Հարազատն այժմ Աշխարհն է հայոց, հայրենիքը  
Կոչում եմ ձեզ հայրենյաց պաշտպանությա՛ն և ազատությա՛ն:  
Օ՛ն, ուխտի՞ զինվորներ, զինվեցեք՝ պատրաստ մարտին մեծ պա-  
տերազմի:

Բոլորը երեսները խաչակնքեցին, հուզված կրկնեցին Եղիշեի  
վերջին բառերը և լռեցին՝ ներշնչված ու լարված: Եվ լռությունը  
տևեց երկար:

Մամիկոնեից տիկինը երկար ժամանակ խստահայաց աչքերը  
գետնին խորհում էր: Նա ապրում էր ծայրահեղ մեծ հուզումնալի-  
վիճակ:

Այդ միջոցին Մեծ Տիկինը արթնացավ իր սև մտքերից և դար-  
ձավ Մամիկոնեից տիկնոջ:

— Դստրի՛կ:

— Ի՞նչ կհրամայես, Մեծ Տիկին,— դողահար մոտ վազեց  
նրան Մամիկոնեից տիկինը:

— Գնա հանել տուր Մուշեղ Մամիկոնյան սպարապետի սուրբ,  
նժույզ թամբել տուր:

— Մեծ մայրի, մեծ մայրի,— մոտ վազեց Զոհրակը վա-  
խեցած:

— Երբ որ նա չի կանգնել պաշտպան Հայրենիին՝ ես եմ  
պարտական կանգնել:— Հետո սպառնալից դարձավ շրջապատող-  
ներին.— երբ որ դուք դեռ չեք գնացել ուրացյալների դեմ՝ ե՞ս կը-  
գնամ, թող ինձ շանթի թշնամու սուրբ:

— Մե՛ծ Տիկին, շե՛ս դիմանա,— խանդաղատանքով գրկեց նրա ծնկները և սկսեց աղաչել Մամիկոնեից տիկինը,— թող մենք կզնանք:

— Ո՛ր ո՛չ, ե՛ս պիտի գնամ նրան դատաստան... կտամ նախնիների սուրը, կամ թող զարկի իր մորը, կամ տեսնեմ ի՛նչ կրակների մեջ է զավակս...

— Մե՛ծ մայրի,— դիմեց կրկին Ձոհրակը:

Մեծ Տիկինը գորովով ու վշտաբեկ նայեց Ձոհրակին:

— Չէ՛, գառնուկս, ես գործ ունեմ... չհամողե՛ք:— Հետո Մեծ Տիկինը ծնկները ծեծեց:

— Մամիկոնեից զա՛բժը, գինվորյալ ժողովրդի սպարապետը ինչպե՛ս կարող էր հայրենին ուրանալ: Դեմը կտանեմ աշխարհը, թող աշխարհի՛ն տա պատասխան: Հայրենի՛ն ուրանա՛լ...  
Բոլորն ազդվեցին այս արդեն խստադատան: Հոսաահատ վրձ-

ոսից: Անողորմ, խելահեղ ճգնաժգրին վայել այս վաբժունքը՝ մտրակեց շրջապատողների ոգուն: Նրանք գիտեին պառավի երկաթե կամբը, որ երբ մի բան վճռեց՝ պիտի անի, և զուր է նրան հակաճառելը:

Մեծ Տիկինը դարձավ Մամիկոնեից տիկնոջը և խիստ, հրամայական ձայնով ասաց.

— Դե՛, ինչ որ ասացի՛...

Մամիկոնեից տիկինը Շուշանիկ տիկնոջ, Ձոհրակի և Յուզաբերի հետ գնաց ամրոցը և անցավ սրահին կից հանդերձարանը: Յուզաբերն ու աղախինները շտապեցին նրա հետևից: Շուշանիկ տիկինն ու Ձոհրակը մեծ հուզմունքով մտան հանդերձարան: Նրանք նկատեցին, որ Մամիկոնեից տիկինը ևս ընտրում է զենք ու զրահ նաև՝ իր հաժար: Մեա ցնցեց բոլորին՝ Շուշանիկը և Ձոհրակը վազեցին դեպի իրենց մայրը և խելջով նրա ձեռքերը՝ սկսեցին գողողողուն հևքով համբարել: Բողորը հասկացան նրա մտադրութունը: Նա զինվոր էր գրվում:

— Մայրի՛, մայրի՛...— դողահար մրմնջաց և ոգևորված ժպիտով նայեց մորը Ձոհրակը,— ճշմարիտ ես, շա՛տ ճշմարիտ...

— Սա էլ գնամ սրբեմ: Մամիկոնեից տան նախատինքը,— մրմնջաց Մամիկոնեից տիկինը և տխուր նայեց յուրայիններին:

Յուզաբերն ու աղախինները սրբելով սպառազենքը՝ զրահը, սաղավարտը, սուրը՝ սկսեցին հագցնել Մամիկոնեից տիկնոջը:

Նրանք սկսեցին լաց լինել, ինչպես մեկին գերեզման ուղարկելիս:

— Դե՛, գինվորները չե՛ն լալիս,— հրամայեց Զոհրակը,— ճակատամարտում լաց չեն լինում, կոպում են... Սա էլ ոգու ճառ կատամարտն է:

Մամիկոնյան տիկինը գրկեց Զորհակին, և նրանք մնացին այդպես, տխուր կեցվածքում, ապա տիկինը դաստակով սրբեց աչքերը:

— Է՛հ, գառնուկս, լացե՛նք լինում, որ Թույլ մարդը գնա մեզ ներքե: Այսօր ենք այգեղես, վաղը արիամիրտ կլինենք: Վաղը պիտի կարողանամ սուր բարձրացնել նրա վրա. երդվել եմ առաջի ժողովրդյան:

Զոհրակը խանդաղատանքով փարվեց մորը և համբուրեց նրան:

— Կրակների միշտվ պիտի անցնենք,— շարունակեց Մամիկոնեից տիկինը,— որ նա կարողանա ուշքի բերել ինքն իրեն: Զինվորյալ ենք՝ գինվորյալի վարք սկսենք: Զինվորյալի համար չկա ծնող, ամուսին, զավակ: Մենք հիմա ազգինն ենք և հայրենիքինը: Մեզ պիտի նայի Աշխարհն հայոց:

Խոսում էր Մամիկոնեից տիկինը, որպեսզի խլացնի փր սրտի տագնապը, մարդկային թուլությունը: Նրան այրում էր ժողովրդի միամիտ հավատը դեպի Վարդանի սրբությունն ու հավատարմությունը: Դա ամենից սոսկալին էր՝ նրա համար:

Մամիկոնեից տիկինըը հագցրին զորականի զգեստ ու հանդերձանք՝ սաղավարտ, զրահ, սուր: Նա առնական կերպարանք ընդունեց:

— Վերցրե՛ք Մեծ Տիկնոջ համար Մուշեղի սուրը և մի թեթև սաղավարտ,— ասաց Մամիկոնեից տիկինը Յուզարեթին ու աղախիններին տխրությամբ:

Աղախինները վերցրին, և Մամիկոնեից տիկինը մյուսների հետ դուրս եկավ հանդերձարանից, գնացին հանգստարան, ուր բոլորը քարացած ու լուռ սպասում էին:

Մեծ Տիկինը խստաձայն հարցրեց:

— Բերի՞ր սուրը...

— Բերի, Մեծ Տիկին, ահա՛,— պատասխանեց Մամիկոնեից տիկինը և վշտով նայելով Մեծ Տիկնոջը՝ դրեց սուրն ու սաղա-

վարտը գերեզմանի վրա: Ամենքը հույս ունեին, որ Մեծ Տիկինը կմոռանար իր վճիռը, բայց տեսան, որ նա իր խոսքն արեց:

Նա վեր կացավ, կանգնեց Համադասպ Մամիկոնյանի գեթեզմանի գլխավերևը: Եղիշեն նույնպես կանգնեց, մյուսները հետևեցին նրանց:

Մեծ Տիկինը արագ ու վճռական դարձավ դեպի շինականները:

— Աշխա՛րհ հայոց, հո՛ղ հայրենի, անպարտ արա քո Սպարապետի մեղավոր մորը, ընդունիր արյունս...

— Ընդունակա՛ն է, արդա՛ր է,— գռչեցին ամեն կողմից շինականները:

— Եվ ասա՛ աստված պահի հող հայրենին,— գռչեց Մեծ Տիկինը և խաշակնքեց նրանց:

Ապա արագ ու վճռական շարժվեց դեպի ամրոց: Բոլորը գնացին նրա հետևից:

Մամիկոնեից տիկինը, որ Մեծ Տիկնոջ պես ընկավ հոգեկան մոլուցքի մեջ, սուր կարիք զգաց մի սրբազան ուխտի, մեծագործության մեջ խլացնելու իր մինչև հոգու խորքը վիրավորված սրտի մեծ վիշտը՝ Յուդաբերին կարգադրեց, որ դարակից իջեցնի բոլոր նվիրական ու սուրբ գրքերը և տա ներկաներին, որ կարգան: Յուդաբերը գրքերը բաժանեց: Դրանց մեջ կային և՛ սուրբ գիրքը, և՛ Ազաթանգեղոսը, և՛ Մովսես Խորենացու պատմության հատվածական դրվագները, և՛ Մամիկոնյան տան մասին խոսող այլ գրքեր: Շուշանիկ տիկինը վերցրեց սուրբ գիրքը, իր մոտ կանչեց Անահիտին ու Աստղիկին և սկսեց կարդալ: Միաժամ նա մերթ ընդ մերթ խոսում էր նրանց հետ զինվորագրության մասին: Նա հասկանում էր, որ Անահիտին խոռվեց Արտակի հանգամանքը: Չէ՞ որ Արտակն էլ էր ուրացել: Ի՞նչ պիտի աներ Անահիտը Արտակին: Անահիտը գունատվել էր և սառել: Շուշանիկ տիկինը նկատեց նրա թաքցրած հուզմունքը: Սակայն բարեհամբույր կնոջ սրտում այժմ զարթնել էին մարտնչող կնոջ զգացմունքները: Նա կարծրացել էր:

— Թո՛ղ, մի՛ տխրիր, Անահի՛տ,— շնչաց նա.— եթե նա ուրացել է՝ ասել է մեռել է: Մեռելին չեն սպասում: Հանիր սրբ-տիցդ նրան:

Անահիտը զլուխը կախեց:

— Հանի՛ր, այլևս Արտակը չկա: Սև՛ հագիր, սո՛ւզ մտիր, ողբա՛, սառը շո՛ւր ածիր գերեզմանին, սիրտդ պաղեցրո՛ւ:

Անահիտը այլևս անկարող զսպել իրեն՝ հեկեկալով սեղմվեց Աստղիկին:

— Ի՞նչ, կրակապաշտի՞ն պիտի ընդունես գիրկդ, մոգերի մո՞տ ուսում առնես, ի՞նքդ ուրանաս հայրենիդ: Լա՛վ կծաղկես մատենիկներդ, հայր Խորենացի կկարդաս և Հայկազանց կնմանեցնես ամուսնուդ: Ուրացի՛ր նրան...

Շուշանիկ տիկինը ցասումնալից էր խոսում ո՛չ հատկապես Արտակի պատճառով, թեև ուներ հիմքեր Արտակի վրա թափելու այդ ցասումը: Նա այդ ասում էր հորը, բայց չէր համարձակվում անգամ ինքն իր մեջ ասել այդ: Նա իր սիրտն էր թեթևացնում: Նա բուրբուրվեց էլ չէր ընդունում Վարդանի և մյուսների ուրացութեան փաստը: Բայց որ հռչակվել էր այդ՝ նա չէր կարողանում ներել իր հորը: Ինչպե՞ս կարելի էր հայրենիքն ուրանալ, հանձնել պարսիկներին... Բայց Շուշանիկ տիկինը հարց չէր տալիս ինքն իրեն, թե ի՞նչ պիտի աներ իր հայրը, եթե շուրանար՝ կոշնչանար: Ի՞նչ շահ հայրենիքին:

Այս մտքերը իր մեջ խլացնելու համար նա խստությունները թափում էր խեղճ Անահիտի գլխին:

— Մո՛ւնր դիր, աղջի՛կս, աղոթի՛ր և սրտիցդ հանիր նրան հավիտյան... Ափսո՛ս... — հրամայեց Շուշանիկ տիկինը Անահիտին՝ մի տեսակ ցավով և տխուր:— Իսկ դու,— դարձավ Աստղիկին,— գոհացիր աստծուց, որ փեսացու չունես, որին ուրանաս: Գրվեցեք զինվորյալ... Դե՛...

Անահիտն ու Աստղիկը քաշվեցին անկյուն ու սկսեցին կարողալ: Մտախոհ, բայց արծվենի հայացքով նայում էր նրանց ծղիշեն, որ արձանացել էր կուռքի պես անողոք ու լուռ: Կարծես եկել էր նա Անահիտի սրտից պոկելու մատաղ կյանքի ծաղիկը... Դեժվար էր և անհասկանալի Անահիտի և անգամ Աստղիկի համար, թե այդ ինչպե՞ս պիտի լիներ, որ Արտակը վանվեր սիրակարոտ սրտից: Արտակը Անահիտի համար բնություն էր, խորը գեղեցիկ, բաղքը, գորովալի... Կարելի՞ է ապրել առանց բնության, անգամ պատկերացնել, թե կա կյանք առանց նրան: Աղոթում էր Անահիտը և հոգեկան թևերով թռչում հեռուն, որոնում Արյաց աշխարհի անապատները և գտնելով նվիրական երիտասարդին՝

սկսում էր հայացքով խուզարկել նրա կերպարանքը, գտնել նրա արատը, սև բիծը, խորթանալու, նրան տտելու համար: Ի՞նչ տտելու... թշնամանալու, նրա մահը նյութելու... Նա հայրենիքի դավաճան է, նա շարաթույն պարսիկ է հիմա: նա գալիս է կործանելու այն տաճարները, որոնց գեղեցկության գովերգուն էր, գալիս է այրելու այն ոսկեմատենիկը, որ ծաղկել է Անահիտը նրա համար, պիտի արգելի կարգալ հայր խորենացուն, սիրել Հայկ դյուցազնին, Արա Գեղեցիկին, որին նմանվելը Անահիտը համարում էր ամենագեղեցիկ գործը Արտակի համար: Եվ ի՞նչ, սիրո՞ւմ կգա Արտակը Անահիտի մոտ, թե օտարի խորթ ու խոժոռ հայացքով: Կպաշտպանի՞ նրան Արտակը պարսիկ խուժողով գինվորներից: Ո՞վ է հիմա Անահիտի պաշտպանը...

Անահիտը գլուխը կորցրեց այս դաժան մաքերի հախուռն խուժումից իր կուսական հոգու վրա:

Անահիտի անփորձ մատաղ հոգու համար ծանր, դժվարին էր այս աննախընթաց, աշխարհում սակավ անգամ հանդիպած տարորեն վճռի առաջ կանգնելը: Կար մի բարձր, առաքինի, նվիրական անձն ու չկա հիմա նա՝ թեև նա գալիս է, մօտենում է Հայոց աշխարհին: Կա, բայց մեռած է մի սիրելի սիրտ, նրան պետք է թաղել և «գերեզմանին սառը ջուր ածել», մոռանալ նրան... Մոռանալ երիտասարդության առաջին սերը՝ հաղիվ ճաշակած նրա մի կաթիլը և դառնալ դաժան թշնամի, օրհասական կռիվ մտնել այդ սիրո դև և ոչնչացնել իր իսկ ձեռքով...

«Աստված, օգնի՛ր ինձ», — մրմնջում էր անլսելի ու դառնագին Անահիտը և արցունքներում խավարեցնում հուսահատ աչքերի առաջ ժպտացազ ոսկեմատենիկի ծաղիկները: Նրա ժընկների առջև, հատակին դրած այս գրքույկը կարծես դրած լիներ դազաղում պառկած շքեղ երիտասարդի կրծքին, որ մեծ պատմահոր հերոսական վիպագրության հնչյուններով քնի նրա սիրտը հայրենի հողում:

Ո՞չ, ո՞չ, անկարող է ուրանալ նրան Անահիտը: Ուրացած Արտակը չկա: Նա մեռած է: Կենդանի է այն պայծառ Արտակը, որ պատմում էր Աղեքսանդրիայի մատենադարանների շքեղ իմաստուն գրքերի մասին, որ խոսում էր նախնայաց մեծագործություններից, որ այրվում էր հերոսության կրակով ու կարոտով:

Այսպես խաբուսիկ փոխանցումներով Անահիտը քնեցնել էր

ջանում անողոք եղելության վիշտը: Հանկարծ զարթնում էր երազանքից, և ահա գծնի պատկերը իրական դեպքի հետ սահմարկեցնում էր նրա վշտացած սիրտը: Պետք էր, հարկ էր, հրամայում են ուրանալ ուրացածին, թշնամանալ նրան, պատրաստ լինել կռվի ելնելու նրա դեմ: Մա՛հ դավաճանին: Անահիտը շրջեց դեմքը: Նայեց Եղիշեին, նրա մարգարեական աչքերին: Ծրանք սաստում էին...

Անահիտը դառնացած նայեց ոսկեմատենիկին: Հիշեց, թե ինչու էր ծաղկել նրան: Զէ՛ որ հայր ետրենացու վեպն է սա, որ պահանջում է հայքնիքը դասել վեր, քան ամեն ինչ: Ամեն ինչ, ուրեմն նաև սիրեցյալը: Անահիտը պարտավոր է այդ անել: Նա իր հայքնիքի դուստրն է, Ինչպե՞ս կարող է նա կին լինել ուրացողին, հայ ժողովրդին ուրացողին... Որքա՛ն զոհերի արյուն պիտի հոսի Արտակի ուրացության պատճառով: Անահիտի հոգում պատկերվում էր այդ դաժան երիտասարդը, որ մոռացել է, թե ո՛վ է ինքը, ո՛վ է իր ժողովուրդը և անգամ այլակերպվել է, սատանայի դեմքն է ընդունել, շարաթույն աչքեր ունի... Անահիտը ցնցվեց: Աստղիկը, որ նրա կողքին էր շոքել և ցավով դիտում էր նրա հոգեկան տանջալի ոգորումը, բռնեց նրա ձեռքը: Այս թեթև հպումը հարազատ ձեռքի, որ սթափեցնում էր մի տեսակ և շոյում, խաղաղեցնում նրան՝ ցնդեցրեց Արտակի պատկերից դաժան, օտարոտի գունավորումը և վերագունեավորեց նրան այն նախկին, սիրելի երազներով, որով մի անգամ ընդմիշտ տպվել էր Անահիտի հոգու լուսավոր ոսկեմատենիկի մեջ: Հանկարծ ո՛վ գիտե, սուտ, մտացածին է այս լուրը... Ո՛վ գիտե նա չի ուրացել: Ո՛վ գիտե նահատակված է նա, և լուրը կզա նաև այդ հայտնելու: Որքա՛ն մեղանշած կլինի Անահիտը՝ վիրավորելով մի նահատակի սրբազան մարմինը:

Աստղիկը բռնել էր քրոջ սառը մատները և խորհում էր իր բախտի մասին: Նա չուներ սիրեցյալ, այդպես հանգիստ էր և գլուրին: Բայց նա, որ Անահիտի սիրո վեպի կենդանի վկան էր և աշակերտուհին՝ սկսեց երազել իր սիրեցյալի մասին, որ կար և չըկար: Եվ մտածեց, որ նա չի գործի Անահիտի սխալը: Կարող էր չէ՛ Արտակը նահատակվել, բայց ընտրեց նախատալից, թուլամորթի ուղին: Հիմա ամեն երիտասարդ զինվորյալ պիտի գրվի: Աստղիկը ինքը գրվեց այս գիշեր զինվորյալ և նա միայն զին-

վորայլի հետ կգա թե՛ դեպի սերը և թե՛ դեպի մահը: Աստղիկը սկսեց իր հոգու մեջ գուրգուրել մի վսեմ կերպարանք, որ այս դառը ժամերին շկորցրեց իր այրմարդուօթյունը և համակերպ ու հնազանդ իր սրտի վշտին սպասում է զինվորյալների պատերազմին: Ահա նա նստած է իր կորովի մոր կողքին: Աստղիկը ահա մի քանի օր է դիտում է նրան, տեսնում է նրա մեջ թաքնված հոգեկան մի մեծ գանձ, ժառանգական առաքինություն. նա տոհմիկ հերոս է: Սա եկել է հոր կոշիկ՝ գալ և կոճել հայրենիքի փրկութեան համար: Ահա մի քանի օր է, որ այստեղ է, ո՛չ հանգիստ է փնտրում, ո՛չ վայելք, ո՛չ իշխանական դիրք է ընդունում, ո՛չ շատ խոսում: Ողջ հոգով թաղվել է մեծ պատերազմի պատրաստության մեջ: Աստղիկը սրտով համակրեց Ձոհրակին, կուզենար սիրել, գուրգուրել նրան, թեկուզ և փոխադարձ ոչինչ չստանալ: «Թո՛ղ ուրիշին սիրի, թող ուրիշով երջանիկ լինի, ես մեռնեմ՝ թող սա ապրի»,— այսպես երազում էր Աստղիկը և չէր նկատում, որ Ձոհրակը իր սիրո հրամանով ներս մտավ նրա սրտի գաղտնարանը...

Անհանգիստ, աղմկալի անցան ծանր ու շարագույժ գիշերաժամերը: Անցավ «կամավոտն», անցավ «բավականն», հասավ «լուսափայլի» ժամը: Սակայն ամրոցի մեջ ու շուրջը արդեն ցերեկից հավաքվել էին սկսել իրենց ագարակներից ու շեներից Մամիկոնյան տան ազգականները: Իսկ ողջ գիշերը շրջակա շեներից բնակչություն էր գալիս անընդհատ, լցվում ամրոցի շուրջը: Նրանց խառնվեցին ձամբարից առանց հրամանի դուրս ելած զինվորների հոծ խմբեր, այնպես որ շուտով ամրոցի շուրջը և մանավանդ հրապարակում բազմությունը սկսեց եռալ կրակին՝ դրած կաթսայի ջրի նման:

Սրահում նստածներին սկսեց հիմա պարզ հասնել բազմության ձայնը: Նրանք հաճախ էին տալիս Սպարապետի անունը, և դա սոսկում էր պատճառում Մամիկոնեից տիկնոջը: Հանկարծ աղմուկը սաստկացավ:

Ցուղաբերը, որ կանգնած էր պատուհանի մոտ, տեսավ ինչպես բազմությունը շրջապատեց — կլանեց մի թիկնեղ, ըմբշանձման շինականի՝ սևաշող աչքունքով ու ընշացքներով մի տարոնցու, որի խիստ արտահայտիչ դեմքից հառնում էր աննկուն կամք ու կորով:

Դա Պողոսի հետ վիճող տարոնցին էր:

— Թողե՛ք... հայրենին կուրացվի... Ասացին ու հավատացի՛ր, հայհո՛ււ՛յ...

Այդ միջոցին խոսողներին հարվածելով՝ ճեղքեց բազմությունը գեղջկուհիների մի խումբ, և նրանց գլխավորող մի բարձրուս հասակ գեղջկուհի եկավ ու հպարտ կանգնեց, երկար ցուպը թափահար խրելով գետնին՝ խոժոռ նայեց շուրջը.

— Հերի՛ք է, հերի՛ք է, հերի՛ք է լեզվին տաք...

— Մենք ի՞նչ ենք ասում որ... — խստացավ Պողոսը:

— Ի՞նչ բանի եք, ո՞ւմ եք սպասում... նախարարները թողին մեզ, մնացինք մենք մենակ... Թշնամին էս անգամ մեր վրա է գալիս: Հող հայրենի՛ եք, վեր կացեք, մենք ընկնենք առաջ Շինական, եկ իմ հետևից:

— Ճշմարիտ, ճշմարիտ, ի՞նչ խոսք... — ձայն տվին ամեն կողմից:

— Դե, բա ելեք, — ընդոստ մեջ ընկավ Պողոսը, — հրես զորքը կգնա նրանց դիմավորելու, մենք էլ:

— Հա՛, հա՛, ընկի առա՛ջ, գալի՛ս ենք, Պողո՛ս... — ձայն տվին կրկին շինականները:

Առաքելը, որ լուռ դիտում էր ու լսում, զգաց, որ այս վճռական խոսքերը դեռ վճռական գործ չեն: Դա ավելի շուտ մտքի հափշտակությունն էր: Դեռ շինականը չէր հասել այն հոգեկան վիճակին, երբ սուր ու դաժան կարիքը, կյանքի կարիքը, հարկադրում էր վեր կենալ ու մտնել կյանքի ու մահվան կռիվ: Նա չըստխալվեց, վառ կոշերին հետևեց խաղաղ խորհրդակցություն...

Այնժամ նա վեր կացավ նստած տեղից, մտայլ, հանդարտ նայեց շինականներին և սկսեց հանգիստ եղանակով:

— Ժողով՛որդ: — Լոնց, նայեց գետնին, մտածեց, սառը վրա բերեց. — Թշնամին գալիս է մեր արմատը կտրի: Գալիս է մեր հույր, մեր երկիրը, մեր իրավունքը խլի, մեզ կամ ստրուկ շինի, մեզ մեր իշխանից ավելի ճզմի, կամ երկրից դուրս քշի, տանի աշխարհքե-աշխարհք, տա քամու բերան, ցրիվ տա, կորցնի: Մեր իշխանը կգնա կռիվ, հոգևորն էլ իր տեղից վեր կկենա, բայց ուժը մե՛նք պիտի տանք, մե՛նք ենք հող հայրենին, մենք ենք երկիրը, մե՛նք պիտի մտնենք հող հայրենիի կռիվը, պահենք մեր իրավունքը, պատիվը:

Շինականներն ստվարացած ավելի մոտ սեզմվեցին:

— Ինչ էլ անենք՝ վերջը կոխվն է: Իշխան է, կգա, չի գա, Պկովի, չի կովի՝ մենք հո պիտի պաշտպանվենք:

Առաջ եկավ մի շինական.

— Առանց իշխանի, զորքի, զորավարի մենք ի՞նչ կարող ենք, չենք կարող, Առաքել:

— Գնանք, տեսնենք,— ասաց մեղմածայն Առաքելը և զթի տակ ժպտաց, մտածեց, ապա գլուխը վեր բարձրացրեց ու խոժոռովեց,— բանը շհասնի գրան: Որ տեղը գա, զորքը, նախարարը կարող են, մենք չենք կարող: Կարող ենք: Թշնամի է, կարենալ կտա: Էդ էլ կարող ենք, մի բան էլ ավելի,— վճռական եզանակով ասաց Առաքելը:

— Հա՛, ճշմարի՛տ, հենց ի՛սկ արգարք գու խոսեցիր,— խառնածայն հավանություն տվին շինականները:

— Դե որ արդարն է՝ զենք վերցրեք, վեր կացեք, էլ շատ խոսելն ի՞նչ:

— Հիմի որ իսկապե՛ս վեր կկենանք,— ձայնեցին շինականները:

— Կզնանք, ով ճամփին կմիանա մեզ՝ թող մեզ հետ դուրս գա բռնավորի դեմ,— վճռեց Առաքելը:

— Դո՛ւրս գանք, տեր որ շունենք՝ մեր տերը մենք ենք,— հաստատեց մի շինական:

— Հոժա՛ր եք,— հարցրեց մի անգամ ևս Առաքելը՝ մեկ-մեկ նայելով շինականներին:

— Հոժա՛ր,— ասացին շինականները:

— Դե՛ հավաքվեք:

Դեռ երկար շարունակվում էր շինականների խորհրդակցությունը, մերթ ուժգնում անասելի գոռգոռոցների պոռթկումով, մերթ մեղմում զրույցների համակերպ վերապահությանը: Ռամիկը վերդիր էր անում, կշռադատում էր բոցավառվելու հետ: Վեր կենա՛լ, թե՛ ոչ, հիմա՛ վեր կենալ, թե՛ հետո...

Բայց Առաքելը զգում էր, որ մինչև իսկապես վեր կենալը շինականը գեռ շատ կորոճա իր անելիքը և մի բանի անգամ կվճռի ու ետ կկենա: Բայց հույսը չէր կտրում: Գիտեր, որ շինականի հողը վտանգի մեջ լինելով՝ վեր կկացնի նրան՝ կամա թե ակամա: Ուստի զայրացած թեև՝ մի կողմ քաշված սպասում էր:

Սրահում նստածները պարզ լսում էին շինականների վեճն ու վճիռները: Խորթ էր այդ խոսքը, ուսմիկ, բայց ուժեղ էր ու արդար: Դա հողի խոսքն էր, նրա դատավճիռը, որ ազդում էր ինչպես հողը, որ ծնում է, աճեցնում, ապրեցնում և տանում էր դեպի կյանք: Դա բնության ձայնն էր, որ ահեղ է և անպարտելի: Ամենքն զգացին, որ շինականը վեր է կենում ցասումնալից, չի սպասում լուրերի ճշտման՝ իմաստուն դուրազգացությունը գուշակելով և ճիշտ ժամանակին կանխելով աղետը, որոշում էր շարժման ժամը: Իշխանական ինքնասիրության դիպչողական էին այդ կշտամբանքի խոսքերը: Սակայն զորքի խոսքեր էին դրանք, խիստ, բայց անձնվեր զորքի: Դա պատկառելի ուժ էր: Ատոմն ու Խորհնը շատ գործ ունենալով գրքի հետ և զորքի կողմից միայն ճանաչելով ժողովրդին՝ զինվորի սրտով ընդունեցին շինականների կշտամբանքը իշխանավորներին: Նրանք իբրև զինվորներ միայն այդպես էին գնահատում ժողովրդին: Հայրենիքի ոչնչացման վտանգի այս նեղ պահին թշնամու դեմ էր ելնում ինքը ժողովուրդը, դա դուր էր գալիս, ազդում էր նաև զինվոր իշխաններին:

Կես-գիշերից անց շինականներն սկսեցին մեկ-մեկ ու խումբերով հավաքվել ամրոցի տակ, Առաքելի մոտ: Նրանք կրում էին և՛ նիզակ, և՛ սուր ու վահան, և՛ մահակ, և՛ կացիներ: Եվ որքան աղմկալից էին նրանց խորհրդակցությունն ու կոշերը, նույնքան անձայն ու հասարակ էր նրանց հավաքվելը:

Վերջապես Եղիշեն ասաց խստորեն.

— Բա՛վ է, սիրելի՛ք իմ. այժմ գործի՛, պատերազմը չի ըսպասում, ժա՛մ է մեկնելու:

Ատոմը վեր կացավ և սեպուհներին կարգադրեց անմիջապես հեծյալ սուրհանդակներ ուղարկել Տարոն աշխարհը՝ ժողովրդին հայտնելու, որ զգուշանան ստահող լուրերից, բայց պատրաստ սպասեն լուրերի ճշտման՝ վճռական հարված առաջ արյաց զուրազնդին, որ գալիս է... Եվ ապա արդեն հիմա իբրև գլխավոր զորավար ջոկատի՝ վճռական և հրամանատարական կարգով հրամայեց Զոհրակին:

— Զոկատը հանի՛ր ճամբարից. շարժվում ենք:

Զոհրակը մի պահ մտածեց և ապա կանչեց զինվորներին, որ դասն հետև կանգնած էին:

— Նե՛րս բերեք Դավիթ սեպուհին:

Եկավ Դավիթ սեպուհը: Նա այլայլված էր և շրթունքներն էր կրծոտում զայրույթից:

— Ի՞նչ է, դեռ շե՛ս հանդարտվել,— խստաձայն դիմեց նրան Զոհրակը:— Զինվո՞ր ես:

— Զինվոր եմ ազգի,— մռայլ պատասխանեց Դավիթ սեպուհը:

— Կկռվե՛ս դավաճանի դեմ, ազգի համար:

— Իսկ ո՞վ ասաց, թե իմ Սպարապետը դավաճան է... — սպանալի շեշտով հարցրեց Դավիթ սեպուհը, բայց նկատելով իր աչքերի մեջ թափանցող Զոհրակի դաժան հայացքը՝ հուզված աչքերը լցված, վիզը երկարացրեց.— ահա՛, կտրի՛ր. ես իմ Սպարապետի դեմ դուրս չեմ գա:

Ատոմը մոտեցավ Դավիթ սեպուհին և ցած՝ հասարակ ու սարսափելի ձայնով հրամայեց.

— Զոկատը հանի՛ր...

Դավիթ սեպուհը ցնցվեց: Նայեց Եղիշեի մռայլ աչքերին, Մամիկոնեից տիկնոջ սպառազեն հագուստին, մյուսների խոր զգացումով ներշնչված դեմքերին և սթափվեց:

— Հրամանդ ի կատա՛ր,— ասաց նա բարձր, զինվորի ձայնով և դուրս եկավ սրահից:

Զոհրակը նշան արեց սեպուհներին, որ հետևեն իրեն, և ինքն էլ դուրս ելավ: Ճամբարի ճանապարհին նա աչքի տակով նայեց Դավիթ սեպուհին և բծիծաղով հարցրեց.

— Դու այս ամենը հասկանալո՞ւմ էիր անում, թե...

Դավիթ սեպուհը արագ շրջվեց Զոհրակի կողմը և ասաց.

— Թեկո՛ւլ սպանի՛ր, իշխանի՛կ, չոկատը հանում եմ քո և Մամիկոնեից տիկնոջ հրամանի տակ. ես ուրիշ հրամանատար չեմ ճանաչում:

Զոհրակը հասկացավ, թե ինչ էր նշանակում այս: Դավիթ սեպուհը իրենն էր քշում. և նրա գլխին բարոզը օգուտ չունեի: Ուստի և լռեց՝ վճռելով խիստ հսկել նրան: Հասան ճամբար:

Սկսվեց զնալու տազնապալի իրարանցումը նաև ամրոցում: Արդեն լուսացել էր: Ողական ամրոցի առջև գումարվեցին Ատոմի և Խորենի շոկատները: Ատոմը հրամայեց, որ Մամիկոնյան շոկատը բերեն ամրոցի դուռը: Ամրոցի բնակիչները դուրս ելան

դարբասից ամրոցի հրապարակը: Ճամբարից Դավիթ սեպուհի գլխավորութեամբ եկավ Մամիկոնեան ջոկատը և կանգնեց մի կողմ՝ սպասելով հրամանի:

Ամրոցից դուրս եկավ Ատոմը՝ Եղիշեի, Խորենի հետ, զննող աչքերով նայեց Մամիկոնեան ջոկատին և խաչակնքեց նրան: Բայց և հակամարտ զգացմունքները ցոլացին երկուստեք. մի կողմից հրամանատարի, որի ուժեղ կամքը իսկույն թելադրեց նրանց ենթարկվել իրեն, և մյուս կողմից Մամիկոնեան տոհմի զինվորների բնական անբարոյացակամութունը օտար և դեռ անժանոթ հրամանատարի հանդեպ:

Մամիկոնեան զինվորները քննող ու սուր աչքերով զննեցին Ատոմին, որ իր գեղեցկութեան հետ նաև մարտիկի կարծրութուն ուներ: Նրանք փորձեցին քամահրանքով նայել ինքնակոչ հրամանատարին, բայց երբ Ատոմը պողպատի սառնութեամբ հանգիստ նայեց նրանց աչքերին՝ սաստվեցին:

Ամրոցի դարբասի մոտ խռնված բազմութեան մեջ խառն կանգնած էին հեծյալ զինված շինականներ ու գեղջկուհիներ, որոնց շարժումներից երևում էր, որ կամենում են միանալ մեկնող ջոկատին:

Այդ պահին բոլորի ուշադրութունը խլեց ամրոցից դուրս եկող տիկիներին խումբը, որին գլխավորում էր Մեծ Տիկիլը: Նրա պատկառազու ողբերգական կերպարանքը սաստեց բազմութեան: Նրա հետ էին Մամիկոնեից և Շուշանիկ տիկիները, որ պատրաստ էին ճանապարհ ընկնելու Խոր տպավորութուն թողին այդ խմբի մեջ, երբ երևացին Անահիտն ու Աստղիկը, ինչպես և Յուդաբերն ու աղախիները՝ բոլորը սպառազինված: Այրմարդու և կնոջ տարազների խառնուրդը միաժամանակ պատկերեց այն բոլորովին նոր հոգեվիճակը, որ ապրում էին ամենքը Ատոմի ամրոց գալուց ի վեր: Փոխվում էր ամեն բան ամրոցի մեջ, գուցե և աշխարհում: Ամրոցի բնակիչները, զինվորները, շինականները թե՛ եկվոր և թե՛ Մամիկոնեան՝ բոլորն այնպես էին ըզգում, թե իրենց սպասում է մի ահավոր, մեծ դեպք, որ պիտի խառնի ամեն ինչ և թե՛ փրկեն՝ փրկեն, շփրկեն՝ աշխարհի վերջն է:

Մամիկոնեան տիկիներ համեստ ու վճռական կերպարանքով պատկառանք էր ազդում բոլորին: Անահիտը, որի ճնշող սաղա-

տի տակից թախծալի համակերպությամբ աչքերը նայում էին ուն՝ քաշվում էր հազարավոր աչքերի նայվածքից: Աստղիկը արձակ էր և ուրախ իր նոր վիճակի մեջ:

Մեծ Տիկինը դարձավ Մամիկոնեից տիկիններին ու օրհորդին և ցույց տալով նրանց ստները՝ հրամայեց.

— Հանեցե՛ք մաշիկներդ: Դուք զինվորչալ եք:

Սա շափազանց էր, խստագաման:

Հակաճառելը միտք չստեղծեց: Պառավը մոզեցնում էր: Ու կրք տեց նրանց զարմանքն ու դժվարանալը՝ դաժանացավ.

— Ի՞նչ, ուսմիկ զինվորչալը, որ բորիկ է՝ դո՛ւք եք նրանցից և ու սիրելիքն կովի մեջ: Զինվորչալ եմք՝ հավասար ենք:

Պառավ փշխանուհին ապրում էր հոգեկան մեծ խտովք. նա ունի էր հանգստացնել իր, քրիստոնեի, տանջվել պրավոզ խրդկշտամբանքներն ու փայթոցները հանգեալ ուսմիկի: Նա կարող էր, թե կարող էր և այն էլ աչքս վարմունքներով հայրաստություն որդարություն բերել իշխանի ու ուսմիկի համակեցություն: Եվ ձեռնարկեց իրականացնել այդ հաշտությունն ու հավասարունը, որ նրա միամիտ, բայց յուրովի բարի միտքը ծնում էր հոգու մեջ... Նա զգում էր ժողովրդի ուժք, որ ճնշում, մղում ամենքին, բարձրացնում, ազնվացնում...

Զինվորները լրջացան և թողին խեղճ ներհակ մտքերը: Այդ ցցին Ատոմի հայացքն ընկավ շինականների վրա, որոնք նրա նստած, զինված խստագեմ նայում էին շարք կանգնած վորներին: Պողոսն առաջ ընկավ ու ասաց Ատոմին.

— Իշխան, պատրաստ եմք:

— Դո՛ւք ինչու եք թողել մեր տունն ու քործը, ո՞ւր եք գա- սաստեց նրանց:

Ժողովուրդը լռեց ճնշված ու դժգոհ:

— Դուք զորք չեք, կոնիվ չգիտեք, ի՞նչ պիտի անեք՝ բացի զգարելը, — շարունակեց Ատոմը:

Այդ պահին համարձակ առաջ քշեց իր նժույզը ևանդութը և խտ գոչեց.

— Իշխան ես, մեր տերն ես, հրամայի՛ր: Մենակ՝ կիշխեմ՝ եմ. աստծուց հրաման չկա արգելես հող հայրենստան՝ զնա իր իրը պաշտպանի:

Մեծ Տիկինը, որ թվում էր, թե խլացել էր աշխարհիս բոլոր ձայներին՝ խոժոռ նայեց Ատոմին և ասաց հրամայական ու խրուպոտ ձայնով.

— Թող զա՛ր ուամիկը, իշխանիկս, նրանով պիտի հաղթես. ուամիկը հող հայրենի՛ն է, աստված է օրհնել նրան:

Ատոմին զարմացրեց պառավի ուշիմությունը, ազդեցին նրա այս խոսքերը:

— Հրամա՛ն տուր, իշխա՛ն,— խոսեց Առաքելը մոայլ լրջությամբ, որ հրամանի շեշտ ուներ:

Ատոմը հիշեց գուժկանի օրը իր դիմաց կանգնած ըմբոստ շինականին, որ թեև այսօր մեղմ էր խոսում, բայց ավելի վճռական ու սպառնալից էր:

— Իշխան,— ասաց նա մեղմաձայն հանգիստ ու վստահ սակայն:— Ձերը զորք է, խոսք չկա, դուք կոխվ գիտեք, կկովեք, երկիր կառնեք, երկիր կտաք: Մերն ուրիշ է, մենք կոխվ չգիտենք: Բայց որ մենք կովենք — կմեռնենք՝ երկիր չենք տա: Մեր կովի առաջ քար մի գցի, մեկ է՝ մենք կգնանք:

— Արդա՛ր է, արդա՛ր,— ձայն տվեց բազմությունը:

Ատոմը ազդվեց մի փոքր և չկամեցավ Մեծ Տիկնոջ վիրավորել: Միաժամ և նա սկսում էր կարծես արժեք տալ շինականներին:

Ատոմը աչքով շարիեց շինականների զինված հեծյալ խումբը և կարծես զլխով հավանություն նշան արեց:

— Հրամա՛ն տուր, իշխան, հրամա՛ն տուր,— ձայնեցին զինված շինականները:

Ատոմը ասաց նույնպես մոայլ ու լուրջ.

— Դե ուրեմն եկեք հրամանի տակ: Հրամանից դուրս գաք՝ մահու պատիժ է:

— Տուր մահու պատիժ,— ասաց Առաքելը:

— Անցիր զլուխ,— հրամայեց Առաքելին Ատոմը:

Շինականները զինվորական կեցվածք առան:

— Դե՛, ի գո՛րծ,— ասաց Ծղիշեն:

Սպասավորները քաշեցին մի խումբ նժույզներ:

Ծղիշեն նստեց նժույզը: Մյուսները հետևեցին նրան Ապա

Ատոմը աչքով շարիեց շոկատները և մտրակը օդում ճռճելով՝ հրամայեց.

— Ճանապարհ...:

— Ճանապարհ բարի,— գոչեց ողջ զորագունդը:

Ատոմն առաջ ընկավ: Նրա հետևից գնացին բոլորը՝ իշխանները, կանայք, ջոկատը և շինականները: Երբ դուրս եկան դաշտ՝ Եղիշեն սկսեց հոգևոր երգ, որ նաև ռազմական էր: Նրան ձայնակցեցին զինվորները, որոնց տրամադրությունը փոխվեց՝ ռազմական երթի ուրախության պատճառով: Ատոմը, որի նժույզն սկսեց խաղալ, խոսքի բռնվեց Խորենի և Զոհրակի հետ: Հարկավոր էր հաջող թափանցել Ռշտունյաց ամրոցը, այնտեղից ջոկատ վերցնելու: Ատոմը գիտեր Ռշտունյաց նախարարի ներհակ բնավորությունը և աղոտ զգում էր, որ այդ ամրոցում արդեն լուրջ հակառակորդներ դուրս կգան իր դեմ: Նա հույսը դրել էր ավելի խիզախության, քան բանականության վրա:

Օրը մառախլապատեց: Աջակողմը, ինչպես սև էրենոս, ձրգվում էր Սասնո լեռնաշղթան իր զագաթներով, որ մխրճված էին թուխպերի մեջ: Կապարագույն Մեղրագետը փռում էր իր քղանցքները եղեգնուտների մեջ: Իսկ առջևը, մի փոքր ձախ, դեպի երկինք թռել և թռիչքի մեջ քարացել մնացել էր օդում, իբրև հրակայական շատրվան, Գրգուռ լեռը: Իսկ ավելի դիմացը, աջակողմում մոռայվում էին Ռշտունյաց մթնասև անտառապատ լեռները: Այնտեղ էր գնում Ատոմի ջոկատը՝ շինականների և գեղջկուհիների խմբերով:

Մամիկոնյան տիկինը տարված իր մտքերով՝ շէր խոսում: Շուշանիկ տիկինը մերթ-մերթ նայում էր Անահիտին՝ թափանցելու համար նրա ապրումներին, ծանր էր Շուշանիկ տիկնոջ համար Անահիտի հոգեկան խռովքը, նա վշտանում էր, որ այդ մատաղ կույսի առաջին զգացումը այսպես բիրտ հարվածների տակ խորտակվում է: Բայց նա շուգեց ավելի հուզել խեղճ աղջկա առանց այն էլ ալեկոծված սրտի փոթորիկը: Միայն նրան հետաքրքրում էր, թե ի՞նչ է մտածում Անահիտը իր հոր մասին:

— Անահիտ, դու վախենո՞ւմ ես հորդ ցասումից:

— Ո՛չ, իշխանուհի՛,— ասաց տխուր Անահիտը և աչքերը խոնարհեց:

— Այո, անվա՛խ կանգնիր նրա առաջ և հայտնիր ուխտդ, դու հիմա զինվորյալ ես:

— Գիտե՛մ, իշխանուհի՛... — ասաց Անահիտը, և նրա աչքերը լցվեցին:

Շուշանիկ տիկինը նայեց Աստղիկին: Սա ըստ երևույթին չէր ճնշվել դեպքից: Ընդհակառակը՝ աշխուժի էր եկել, ինչ-որ հերոսական շուք էր հագել: Նրա մատաղ, գեղեցիկ դեմքը, թարմ կերպարանքը ռազմիկի սլաք էր ստացել, որ մարդու խլում, թոնցնում էր դեպի սխրագործություն: Միայն նրան ուշի-ուշով նայողը կնկատեր, որ նրա հայացքի խորքում, շրթունքների անկյուններում մի կոտրված թախծալի ժպիտ էր խաղում, երբ նա գողունի հայացք էր նետում դեպի Ձոհրակը: Նրան ուրախացնում էր իր առաջին զգացումը և միաժամանակ հարվածում: Ձոհրակը Աստղիկին թվում էր անհասանելի, չլինելիք մի երջանկություն: Ի՞նչ երեկվա խոնարհությունը սիրո առաջին հրամանի առաջ, նրա համակերպությունը այն վճռին, որ թող Ձոհրակը շիմանա իր սերը, թող Աստղիկը միայն նրա սպասարկուն լինի ռազմի դաշտում, այսօր տեղի էր տվել բուռն, փոթորկալի, խանդակաթ սիրու Աստղիկը զգաց, որ քանի ինքը այդ զգացման գետի ափին էր և ձեռքով խաղ էր անում ալիքի հետ՝ հասարակ ու հեշտ էր թվում ալիքը, բայց երբ այսօր ալիքը խլեց նրան և տարավ հորձանուտները, նա պիտի պայքարի մի ահագին փոթորկի դեմ: Մերթմերթ էլ ինչ-որ մի թաքուն հույս, թե անընկճելի բաղձանք նրան հանկարծ ողողում էր կյանքի մի այնպիսի բուռն ուրախություն, որ նա հառաչում էր երջանկության ճնշումից: Եվ նա ողջ ճանապարհին մոռացել էր անգամ, թե ո՛ր են գնում և ինչո՞ւ:

Շինականների խմբերը գնում էին հետևից: Նրանց մեջ նկատելի դիրք էին բռնել Պողոսը, Օհան Լալրիկը, Խանդուկը:

Նրանք գնում էին լուրջ և հոգածու՝ ինչպես վերահաս մի սլատահարի առաջն առնելու, առանց որի անկարելի է առօրյա գործերը շարունակել:

Անահիտը հարգանքով ետ-ետ էր նայում իրենց հետևող Խանդուկին, որ մեծ արժանապատվությամբ ջշում էր նժույզը՝ իր հետևից ունենալով գեղջկուհիների խումբը: Նրան ազդում էր Խանդուկի ազնիվ ու բնական հպարտ դեմքը՝ կյանքի հոգսերից ու աշխատանքից թախծալի և մտախոհ: Կարծես նրա պես կանանց առաջին անգամն էր տեսնում կյանքում: Աստղիկը, որի համար այս օրթը ավելի ուրախ ուխտատնացություն հանգամանքն ուներ,

հետաքրքրությամբ դիտում էր Խանդուբի և իր հետևն ընկած կանանց խմբի զգեստավորումը: Նա ուշի-ուշով զննում էր նրանց բաց գլուխները՝ մինչև գոտկատեղերը հերարձակ, պճղնավոր պարեգոտները, որ ամուր ամփոփված էին շաշի գոտիներով, նրբանց վզներից կախ ուլունքները: Նրանցից Խանդուբը և մի քանիսը նիզակներ ունեին ձեռներին և վարժ էին նստած նժույզների վրա: Աստղիկը դիտում էր նաև շինականների կարճ բաճկոտները, մեկնոցները ուսերին՝ վզի շուրջը երկար կապով բռնված, որ երբ հովը ետ էր ծփում, բացուխուսի էր անում նրանց կուրծքն ու կշտերը: Նրանք լավ զինված էին սուսերներով և սրերով: Զվարճալի էին զինվորները իրենց մարմնին կպած զրահներով ու սաղավարտներով, սրերով ու մուրճերով: Աստղիկի ուշը գրավել էր մի շատ երիտասարդ նրբին դեմքով զինվոր, որ միշտ նժույզից բարձր էր բռնում իր երկաթյա սուսերը՝ նրան չվիրավորելու և բարակ շրթունքները սեղմած էր պահում՝ կարծես ժխտակատարության մեջ էր:

Զինվորներն ուրախ տրամադրության էին: Երիտասարդները կատակներ էին անում աչքունքով: Լուրջ էին և մտահոգ հասակավորները, որոնք ավելի լավ էին հասկանում, թե ինչ է պատերազմը: Զորաջոկատները գնում էին տարբեր դրոշներով՝ Մամիկոնյան, Խորխոռունյաց և Գնունյաց:

Երբ զառիվերով բարձրացան Գրգուռի հարավային ստորոտները, դիմացը հալած արճիճի պես մերկացավ Բզնունյաց ծովի ջլաձգվող դեմքը: Նա զայրացած էր մեկի դեմ, շնչում էր անհանգիստ: Մոայլ սաստում էին Ռշտունյաց լեռները:

Մամիկոնեից տիկինը երկյուղով նայեց Մեծ Տիկնոջ, որի մազերը ծովի փրփուրի պես ծփում էին նրա մոայլ դեմքին: Տիկինը վախենում էր, որ նա հոգնի, մրսի, հիվանդանա: Նույն երկյուղն ունեին նաև բոլորը: Բայց պառավը, ինչպես ցույց տվեց՝ ուներ պահեստի ահագին ուժեր: Նա ջշում էր նժույզը՝ առանց մարմնական նեղության: Ըստ երևույթին նրան նեղում էր միայն հոգեկան տագնապը:

Ատումք գնում էր այժմ բռնված ավելի մեծ հոգսով, քան եկել էր Տարոն: Դա նախ նրա բարդ կազմ ունեցող զորախումբն էր, շինականները և կանայք՝ նախարարական և շինական, և ապա այն ընդունելությունը Ռշտունյաց աշխարհում, որ սպասում

էր նա: Անշուշտ Արտակը՝ Ռշտունյաց նախարարը, որ Արտաշատում հակառակ դիրք էր բռնել, այժմ սուրհանդակների, զորական տեղապահի և նախկին գործակիցների միջոցով կազմակերպել էր որևէ դիմադրություն: Նա իբրև անկախ նախարար՝ շատ լավ էր հասկանում, որ այդ դիմադրությունը միանգամայն հասկանալի է այլ անկախ նախարարի կողմից: Միտածամ և պիտեր, որ նա ձեռնարկում է դեռ շտեռնված մի գործ՝ արքունի գործի կազմակերպումն տարբեր նախարարական տների զոդապետներից՝ փրենց տերերի բացակայության: Բայց և ե՛րբ էր Հայոց աշխարհը տեսել այսպիսի արհամարհ: Աս նման էր պերահաս զրհեզեցի, երբ այլևս չեն մտածում արհեստագործականության մասին: Նա ետ նայեց, մի անգամ աչքով չափեց իրեն հեթանոսկամ տերունական գործի դեռևս թույլ զանգվածը և ուշի-ուշով դիտեց շինականների ու գեղջկուհիներին: Եվ հանկարծ նրա մեջ ծնվեց նոր միտք. «սրանք կօգնեն»: Նայեց փշխանական կանանց, Մեծ Տիկնոջ, Եղիշեին: Եվ առաջին անգամ հասու եղավ այն մեծ և ուժեղ գերին, որ հանձն էր առել ինքը կատարել: Հիշեց Եղիշեի գիշերային ճառը, Մեծ Տիկնոջ հոգեկոշումները, շինականների հողի տաղնապը և հասկացավ, որ իր արշավը հասարակ, զորական մի ձեռնարկ չէր, այլ ավելի խորհրդավոր, մեծանշանակ գործ: Եվ ուժ առավ, զգաց, որ մի նոր ոգի մտավ նրա էություն մեջ: Նա իր մոտ կանչեց Դավիթ սեպուհին: Սա մտայլ, բայց արագ աշտանակեց նժույզը և թռավ դեպի Ատոմը:

— Վերցրո՛ւ տասը հեծյալ և առա՛ջ ընկիր դեպի Ռշտունյաց ամրոցը, հասկացրու, թե ինչո՛ւ ենք գնում: Հայտնի՛ր, որ կովելու շենք գնում, թող չպատրաստվեն դիմադրության: Ասա՛ շենք գա ամրոց՝ մինչև չհրավիրեն մեզ:

Դավիթ սեպուհը լռեց և մտածեց: Նա դեռ մտայլ էր, բայց և զարմացել էր այսքան վստահությունից իր հանդեպ: Ատոմը վրա բերեց.

— Այդ դո՛ւ միայն կազոդ ես...

— Հրամանդ կատա՛ր, — վերջապես սթափվեց և ջերմեռանդ սասց Դավիթ սեպուհը:

Մի փոքր անց՝ Դավիթ սեպուհը տասը հոգիանոց հեծյալի հետ սլացավ առաջ: Նա ուրախ էր, որ միևնույն «աղետին» ենթարկվում է նաև Ռշտունիքը:



Անահիտի հորը՝ Գեղեոնին իմաց տվին Ռշտունյաց ամրոմ, որ Տարոնից հեծյալ սուրհանդակներ են եկել: Գեղեոնը սմայեց ներս թողնել նրանց: Դավիթ սեպուհը իր զինվորներով մտավ ամրոցը: Ամրոցի բնակիչներն իրար անցան, տեսնելով լորների լուրջ ու մտախոհ դեմքերը: Ավելի զարմացավ Գեղեոները տեսավ իր առջև մի սեպուհի, որ եկել էր սուրհանդակի նգամանքով: Վերջին ամիսների լուրերը, տագնապալի վիճախնչպես այլուր, այնպես և Ռշտունյաց ամրոցում ու աշխարհում ամենքին զգայուն էին դարձրել դեպի ամեն մի շնչին դեպք, որ մնաց մի սեպուհի տարածամ այցելությունը: Դավիթ սեպուհը Գեղեոնին հայտնեց, որ նախարարներն ուրացել են: Գեոնը ցնցվեց:

— Ինչո՞ւ են ուրացել... Ի՞նչ իրավունքով... Ոչ հայրական ոգ է, ոչ այրմարդու գործ: Ծս չեմ ընդունում:

Դավիթ սեպուհը լռեց: Ապա հայտնեց, որ ամրոցին է մոտում զորագունդը: Գեղեոնը զայրացավ:

— Իսկ ո՞վ տվեց իրավունքը...

Դավիթ սեպուհը բացատրեց զորագնդի նպատակը: Գեղեոնը թերահավատ ու դժկամ: Բայց երբ, անկախ նրա մտայլ ու մակոր բնավորության, լսեց զորագնդի հետ եկող մնացածների մասին, զարմացած, բերանբաց նայեց Դավիթ սեպուհին: Դասնված, անլուր դեպք էր: Գնունյաց, Խորխոռունյաց, Մամիկոնց զորագնդերից կազմված զորագունդ, որին միացել են խաղ շինականներ, կանայք, որոնց մեջ են Մամիկոնեից Մեծ Տիր, մյուս տիկիները, իր դուստրերը, գեղջկուհիները և ընդհանուր հրամանատարն է օտար մի նախարար և զորագնդին առաջդրում է Եղիշեն: Շփոթվեց Գեղեոնը և մոռացվեց: Դիմադրուն և հակառակության միտքը սառեց նրա մեջ: Այնքան ազդեց անօրինակ բանը, որ նա խոսք չգտավ մերժելու Դավիթ սեպուհի առաջարկը՝ առանց դիմադրության թույլ տալ զորագունդը ամրոցին մոտենալու: Գեղեոնի լուռությունը Դավիթ սեպուհը օգտործեց իսկույն:

— Համաձայնի՞ր, սեպուհ՛ւհ, թո՞ղ մոտենա զորագունդը: Հայի գործի համար է: Վտանգ չկա:

— Քո՛ղ առաջ տիկիները մոտենան,— զգուշացավ սակա  
Գեղեկներ՝ մերժելուց առաջ փորձելով ստուգել:

Նրան դժվարացրեց Մեծ Տիկնոջ, Մամիկոնեից տիկնոջ, Շա  
շանիկ տիկնոջ, իր դուստրերի և ժողովրդի մասնակցելու հա  
զամանքը:

Գավիթ սեպուհն իսկույն հեծյալներ ուղարկեց Ատոմ  
իմացնելու Գեղեկների պայմանները: Գեղեկներ մտքում զայրացավ  
աղջիկների վրա:

Ամրոցի դարբասը լցվեց հետաքրքիր բազմությամբ, երբ Գ  
գեկներ իր կնոջ և իշխանուհի դստեր հետ ելավ ընդառաջ եկողն  
րին: Հեռուն ձորից վեր էր սողում զորագունդը: Ամրոցում զի  
վորները վազեցին իրենց դիրքերը:

Ատոմը կանգնեցրեց զորագունդը հեռու ձորում՝ Զուհրա  
հսկողությամբ, և ինքը Եղիշեի և տիկիներին հետ առաջ եկա  
մոտեցավ ամրոցին: Գեղեկներ աչքերը կկոցելով նայեց մոտեց  
տիկիներին և իր դուստրերին: Այստեղ նրա առջև բացվեց մի վս  
տեսարան: Նրա ուշադրությունը գրավեց Մեծ Տիկնոջ ողբերգ  
կան սգավոր կերպարանքը և հարգեալ հասակը: Մեծ Տիկինը այ  
պիսի խոր վշտով նայեց Գեղեկներին, որ սա առաջ զնաց և մոտ  
նալով Մեծ Տիկնոջը՝ խլեց նրա ձեռը, համբուրեց և հրամայ  
սպասավորներին, որ օգնեն նրան նժույգից իջնել: Նաժիշտնե  
վազեցին մյուսների վրա և օգնեցին իջնել: Գեղեկներ ողջուն  
Մամիկոնեից և Շուշանիկ տիկիներին և ապա նայեց իր դուստ  
րերին, որ լաց էին լինում՝ նայելով Մեծ Տիկնոջ: Գեղեկներ, ին  
պես և ողջ ամրոցի բնակչությունը շկարողացավ աչքերը հեռա  
նել այդ վշտահար կերպարանքից, որ կարկամեցրեց ամենքի  
Գեղեկներ և Մամիկոնեից տիկինը ընկան նրա թևքերը և տար  
ամրոցը: Նա լուռ էր և անմխիթար տանջվողի պես իր խոր վշտ  
տարված:

Երբ հյուրերին տարան վերև՝ սրահը և Գեղեկներ հրավիր  
նախ Մեծ Տիկնոջ և ապա մյուսներին նստել բարձրին, ներս մ  
տան Եսթերը և Արշալույսը, նրանք ևս՝ շնայած Եսթերի տար  
քին՝ խոնարհ համբուրեցին Մեծ Տիկնոջ ձեռը, ողջագուրվեց  
մնացյալների հետ: Գեղեկներ համբուրեց Եղիշեի աջը և խիստ հ  
յացքով հրավիրեց յուրայիններին հետևել իրեն: Ապա հնազա  
սպասավորի պես կանգնեց Մեծ Տիկնոջ և Եղիշեի առջև՝ կարծ

Եղբայրացիք իմ հրամանի նստել կամ կատարել մի գործ: Նա այնքան ազդված և երկյուղած դեմք էր ստացել, որ Եղիշեն հրավիրեց Խրան նստել:

— Հանգի՛ստ առ, սեպո՛ւհ, քննենք արհամարհք:

Գեղեոնը հրաժարվեց նստել:

— Մեծ Տիկնոջ առջև հրաման չէ սեպուհներին...

Մեծ Տիկինը հառաչեց:

— Նստի՛ր, Գեղեո՛ն, նստի՛ր, զավա՛կս, Մեծ Տիկնոջը ջուրը չարել է:

Գեղեոնը շնտեց և սկսեց մռայլ մտածել: Հետո վրդովված, զայրալի ասաց:

— Ինչպե՛ս են համարձակվել հայրենին ուրանալ: Հայրենին նրա համար է, որ մարդ չուրանա: Ատոմը պատասխանեց:

— Հենց ի՞նչ դրա համար վեր ենք կացել, սեպուհ: Եվ հիմա պետք է, որ Ռշտունյաց աշխարհը ևս մասնակից լինի հայրենիք կռվին:

Գեղեոնը նայեց վշտաբեկ Մեծ Տիկնոջը, մյուսներին և այս րոտ երևույթին կարծր և կամակոր մարդը լցվեց ինչ-որ խորհրդազավոր զգացմունքով: Նա կանչել տվեց նախարարի պաշտոնական տեղապահին, մյուս սեպուհներին, տարօրինապես նաև տեր Զանգակին: Կով շհասկացվեց նրա միտքը: Եկավ տեր Զանգակը ինչ-որ կասկածելի մի վանականի հետ: Եկավ տեղապահը՝ Զանգաղանը, այն շիկահեր, կապտաշյա սեպուհն էր, որը Արտակ Մուկացի Ռշտունյաց ամրոց այցելած գիշերը Արտակ Ռշտունու հետ զավեր էր նշաթում Վարդանի կյանքի դեմ և որի ընկերը ընկել էր Արծվիի սրի հարվածով ծովի ափին: Նա տեր Զանգակի հետ ծպտյալ մոգ էր պահում տանը, որ կենցաղի մեջ աննկատելի համակրանք ստեղծի դեպի կրակապաշտութունը: Իսկ տեր Զանգակի հետի կասկածելի վանականը Ռշտունյաց նախարարի սուրհանդակներից մեկն էր, որ եկել էր Ավարայրի դաշտից: Նա եկել էր Ռշտունյաց զորագունդը նախարարի տեղապահի հետ պատրաստ պահելու և տրված ազդանշանով հանելու Զարևանգ՝ ուխտյալների դեմ: Գեղեոնի ինքնազուլի տիրապետության դեմ նրանք հակադրել էին անթափանցելի դավադիր մի մտադրություն, այն է՝ հենց որ նախարարը հասներ Բագրևանդ՝ բանապարկեն Գեղեոնին և զորագունդը տանեն Զարևանդ:

— Գե՛, գուք համաձայն եք, — ոչ մի ուշ չգարձնելով այժմ բանին, որ սեպուհները ամենևին էլ համաձայն չէին, այլ հակառակ էին միանգամայն, — խոսեց Գեղեոնը հաստատամիտ եղտոնակով, — մենք ջոկատը կմիացնենք հայրենիքի պաշտպանութեան գորագնդին: Դուք ուզում եք, որ մենք գնանք ուրացյալների դեմ: Ուխտում եք, որ հավատարիմ քրիստոնյա եք:

Բոլորը լռեցին միայն: Բայց դա շազոյեց և կարծես անգամ շնկատվեց Գեղեոնի կողմից: Նա շարունակեց.

— Դուք թողիք ձեր հակառակությունները, է՛լ հպատակ չեք ուրացած նախարարին: Դուք միայն ազգ եք ճանաչում և հայրենիք: Համբուրում եք սուրբ երեցի աջը, գնում եք ջոկատը պատարաստելու: Զանդազան սեպուհ, դու հեծյալներով գնում ես և գորագունդը բերում ես ամրոց:

Սեպուհները կարկամած մնացին տեղերում: Այն ժամանակ Գեղեոնը հանգիստ մոտեցավ Զանդազանին և թևից բռնած քշեց Սղիշեի մոտ և ճնշելով նրա գլուխը՝ խոնարհեցրեց գեպի Սղիշեի աջը: Տեղապահը, որ չէր սպասում այսպիսի կոպիտ վերաբերմունք, շփոթվեց սակայն և կատարեց Գեղեոնի պահանջը: Մյուսները շտապեցին հետևել տեղապահին՝ խուսափելու համար նրա վիճակին արժանանալուց: Գեղեոնի վարմունքի մեջ բացի ինքնանասածութեան տարօրինակությունը, կար և ներքին մի ուժ՝ վրձնականության ուժը: Միաժամ և ազդում էր նրա անայլայլ անհանգիստ անձիականությունը, որ հաշվի չէր առնում ոչինչ:

Զանդազանը սակայն պինդ կանգնած էր իր տեղում: Գեղեոնը հասկացավ, բայց շնկատելու տվեց:

— Իսկ երբ նախարարս գա՛ ի՞նչ հաշիվ տամ նրան, — հարցրեց Զանդազանը:

— Հաշիվը ե՛ս պիտի տամ, — պատասխանեց Գեղեոնը համարձակ:

Սեպուհները չէին շարժվում սակայն:

Տեսնելով սեպուհների տատամսելը՝ Սղիշեն միջամտեց.

— Տարմկուսո՞ւմ եք ծառայելու ձեր հայրենիքին. մի՞թե ձեր նախարարը վեր է, քան ազգը հայոց:

Գեղեոնը վիրավորվեց.

— Նրանք չեն տատանվում: Նրանք էլ այդ են ասում: Հիմա

Կրանք գնում են հրամանս կատարելու— Եվ խստահայաց նայեց  
Կրանց:— Դե՛...

Սեպուհները հեռացան: Ատոմը ընդոստ մի շարժում արեց:  
Չսպասեց, որ սեպուհները ուղղակի զորագունդը կհանեն իր  
քեմ:

— Դո՛ւրս ելնենք, սեպո՛ւհ,— ասաց նա Գեղեոնին,— դի-  
տանք:

Գեղեոնը՝ բոլորովին անսպասելի շրջապատողների համար՝  
զորական կեցվածքով, հնազանդ ձայնով ասաց.

— Հրամանդ ի կատա՛ր, իշխան:

Նոր էին կամենում սրահից դուրս գալ դարբասը, որ լսեցին  
խռովահույզ ձայներ: Ատոմն իսկույն գուշակեց, թե ինչ է կա-  
տարվում դուրսը և Գեղեոնին պահեց: Նրանք մի պահ կանգ ա-  
տան և ներսի դռնից սկսեցին դիտել և լսել:

Այստեղ խոնվել էր մի մեծ բազմություն: Ռշտունցի ժողո-  
վորդը անհանգիստ եղած Տարոնից եկած զորքից ու բազմությու-  
նից՝ եկել էր դեպի ամրոցը:

Ռշտունցի զինվորները շար բան գուշակելով՝ սկսեցին մոմռալ  
խրենց մեջ: Իսկ ոշտունցի շինականները սկսեցին ավելի բարձր  
աբրտնջալ: Բազմության ձայները բարձրացան...

— Ո՛ւր են քշում մեզ...

— Խորխոռը, Մամգունը ի՞նչ գործ ունեն մեզ հետ...

— Մեռե՛լ է մեր իշխանը...

— Սեպո՛ւհ, հրաման տո՛ւր...

Բազմությունը որոտաց: Ատոմը մտածեց շուշանալ, սկսել...  
Այլապես կորած էր՝ իր ողջ գործը: Նա այլայլվեց: Մի վայրկյան  
եռ, և ամբոխը հարձակվում էր իրար վրա, որ հանկարծ լսվեց  
Խանդուբի խոպոտ ճիչը, որ թափահար ճեղքելով բազմությունը՝  
հարձակվեց ոշտունցիների վրա.

— Հա՛ա՛ա՛, ի՞նչ աբլորների պես սրվեցիք. Հազկերտի  
ձտե՛րն եք, թե ուրացողների պոչերը... Գալիս են մոգերը՝ մտնեն  
տներդ, կնիկներդ տեսնեն, գրկանոցներդ խլին: Դրա՞ համար եք  
կոտորչներդ ցցում զինվորայինների դեմ: Հողն են քաշում տակ-  
ներիցդ, խելքի՛ աղքատներ: Էլ ի՞նչ մամգուն, ոշտուն, արծրուն,  
խորխոռ, լաչակս ձեզ պես տղամարդու զլխին: Բա կնանիք չկա՞ք,  
եղե՛ք:

— Ճշմարի՛տ, ինչի՞ շնք ելնի,— մեշ թռավ մի ուշտունցի գեղջկուհի,— մոգերը մեր տները կրա՞կ բերեն, պարսիկը մեզ ստրկութիւն՞ն բերի: Կեղնենք ճշմարի՛տ:

— Քաշվի՛ր,— գոռաց հետևից մի հսկա ուշտունցի,— ոլոր-մորուս, վեհատիպ, աչքերի արծվենիկ խայթիչ հայացքով,— քեզ խոսք չի հասնի:

— Հրամա՛ն քեզ, Արթե՛ն քեռի, հապա՞ որ չի հասնի, մե-նակ՝ սուրբ հայրենին ինձ էլ հրաման է...

— Ձեռդ, անամոթ, հիմի՞ կզարկեմ գետին,— բռունցքը վրա բերեց Արթեն, քեռին, որ զարկի կնոջը:

— Զարկ, Արթեն քեռի, ինձ՝ իրավունք է,— կուրծքը դեմ արեց կինը,— մենակ՝ հայրենիին է՞լ կզարկես: Չէ՛, Արթեն քեռի, էդտեղ կկռվեմ, կզարկեմ-կզարկվեմ:

— Սրբո՛ւն... Սրբո՛ւն...— զգուշացրին կնոջը:

Բայց Արթեն քեռին լեռնականի ամոթանք զգաց և մի պահ լռեց ու շփոթված նայեց շորս կողմ:

Սրբունը դարձավ ուշտունցի կանանց:

— Ելեք, քույրիկներ, ելեք ձեր տղամարդկանց ամոթանք տվեք: Այ քեզ մեռնեմ, կանաչ-կապուտի աստված... բա սրանք, որ ծեր իշխանուհով, գեղի կանանցով վեր են կացել եկել ձեր դու-ռը ապավեն՝ ամոթ չե՞ք քաշում. ետ եք տալիս: Արի՛, քույրիկ, արի միասի՛ն վեր կենանք:

Ու գրկեց խանդութին:

Տղամարդ ուշտունցիները խոժոռվեցին տեսնելով այս գրկա-խառնումը, որ փոխանակ հանդարտեցնելու՝ ավելի կատաղեց-րեց, խավար լեռնցիների ներհակութիւնը հանդեպ օտարների՝ շկոտրվեց, այլ ավելի գրգռվեց: Եվ Արթեն քեռին հանկարծ խենթ ու սրահայաց աչքերը ոլորելով՝ առաջ եկավ ու դարձավ եկվոր-ներին.

— Դե՛, դե՛, դե՛, մամգուն եք, խորխոռ եք, արծրուն եք, ինչ եք՝ որ ճամփով եկել եք՝ էն ճամփով էլ քաշվեք ձեր աշխարհքը: Թե չէ՛ արունք է, աստված ճշմարի՛տ:

— Հա՛, ճշմարի՛տ աստված,— լավեց շորս կողմից, և շատե-րը ձեռները տարան դաշույններին:

Կարծես քամի վեր կացավ: Սկսեցին խառնաշփոթ կերպով իրար վրա գորգոռալ, սպառնալ, դաշույն քաշել, և շէր հակաց-

վում, թե ինչով կարող էր վերջանալ: Այդ վայրկենին խոժոռված ու գայրացած դեպի նրանց քայլեց Առաքելը և սուրը քաշեց, շարտեց Արթին քեռու առջև.

— Ի՞նչ եք սրվում դեմներս: Պարսիկը՝ թշնամի, դավաճանը՝ թշնամի: Հիմի ի՞նչ, մենք է՛լ թշնամի ենք եկել դեմներդ: Թե՞ դուք պարսկից ավելի պարսիկ եք, կոիվ եք դուրս գալիս դեմներս: Մենք արունքի համար շենք եկել, արունքով էլ մի՛ վախեցնեք: Վեր կացեք մեզ հետ մեկտեղ՝ հող հայրենիին կանգնենք պաշտպան: Պարսիկը գալիս է հող հայրենիիդ վրա:

Բայց խռնվածներին ճեղքելով և դեսուդեն շարտելով մեջտեղ թռավ այլայլված Արթեն քեռին, ձեռքը բարձրացրեց: Բոլորը լռեցին: Արթեն քեռին խոժոռադեմ դարձավ Առաքելին.

— էդ խոսքերդ հետդ առ ու գնա էստեղից:

— Պարսիկը հող հայրենիի վրա գա՞: Ո՞նց կգաս:

— Գալը գալիս է: Դու ասա՝ հող հայրենի՞՝ ես:

— Հող հայրենի եմ:

— էս հողը իմն է ու էս հողը հայրենի, էս, ես՝ մեկ ենք: Խո՞սքդ ինչ է:— Թափով կոացավ ձեռը զարկեց գետնին ու բռունելով հողը բարձրացրեց և բռունցքի մեջ սեղմած ցնցեց,— պարսիկը սրա համար գա՞, սրա համար դու չէ՞ ոչտուն, մամգուն, բո իշխան, իմ իշխան, պարսիկ չեմ ճանաչում: էս իմ հավատն է, էս իմ հավատը չեմ տա ու չեմ: Հավատա՞մ խոստովանիմ: Արդա՞ր է,— դիմեց բազմության:

— Արդա՞ր է, Արթեն քեռի:

— Արդա՞ր է,— կրկնեց բազմությունը:

Մի ոչտունցի լուրջ, հսկա՝ ձեռքով արեց, որ լռեն, ու երբ լռեցին և հայացքները նրան հառեցին՝ ասաց.

— Դե որ էդ գիտես, Արթեն քեռի, մամգուն, ոչտուն, խորխոռ, արծրուն՝ արյուններս մեկ է, հողներս մեկ, ցավներս մեկ, թշնամիներս մեկ: Ելնենք: Ով չի գա, գլխին լաշակ:

— Ծշմարի՛տ, ելե՛ք,— գոչեցին շորս կողմից:

Ատոմն զգաց, որ վայրկյանը հասավ: Նա արագ քայլերով գուրս եկավ դարբասը և դիմեց բազմության.

— Դե, ով հայրենի ունի, ով պատիվ ունի՝ թող գաս Գնանք կովենք պարսիկների դեմ, մեր նախարարներին ազատենք զրագաշտից:

Բազմութիւնը խառնաձայն առաջ եկաւ:

— Տա՛ր, իշխա՛ն, գալի՛ս ենք:

Ատոմը անշուշտ կամենում էր՝ նախ ու գլխավորապես՝ որշտունյաց զորքը հանել դուրս և ո՛չ ժողովուրդը: Բայց նա դիմեց այդ ձևին, — ձեռ գցել նախ շինականների համաձայնութիւնը:

Թե ինչ էին մտածել դավադիրները դուրսը՝ չիմացվեց, բայց Զանդաղանը մի քանի հեծյալի հետ գնաց զորագունդը բերելու: Զորագունդը ճամբար դրեց ամրոցի մոտ անտառի մեջ: Ատոմը Զոհրակին հրամայեց ոչ մի ժամ չհեռանալ զորագնդից և խստիվ հսկել՝ մարտական պատրաստութեան մեջ:

Ատոմին կասկածելի թվաց այս դուրսին ու անցավ հաջողութիւնը: Նա նկատեց, որ տեղապահի և սեպուհների մեջ բազմանշանակ հայացքներ էին փոխանակվում, որ հետո հանգեց մի խուլ համաձայնութեան: Ուստի և նա Դավիթ սեպուհին ևս հրամայեց արթուն մնալ գիշերս և բազմաթիվ պահակներ դնել՝ խստիվ պատվիրելով հսկել և զգուշանալ հանկարծակի հարձակումից:

Գիշերը վրա հասավ ամրոցի հյուրընկալների խնամքի, հյուրերի տեղավորման, Ատոմի և Գեղեռնի պատրաստութիւնների և դավադիրների գաղտնի փսփուկների առերևույթ խաղաղ քողի տակ: Եսթերն ու Արշալույս տիկինը շրջապատել էին Մեծ Տիկնոջը և Մամիկոնեից, Շուշանիկ տիկինների օգնությամբ ջանում էին նրան անկողին տանել հանգստանալու: Բայց Մեծ Տիկինը չէր ուզում անկողին մտնել: Նա միայն համաձայնեց պառկել սրահում գորգի վրա և զգեստները չհանեց ի նշան սգո: Անահիտն ու Աստղիկը գնացին Արտակի գիշերած օթեանը: Իսկ Ատոմը գիշերեց ճամբարում: Ամրոցամերձ հասարակ մի շենքում, որ դիտարանի զինվորներինն էր, հավաքվեցին Զանդաղանը, տաներեցը՝ տեր Զանգակը, սուրհանդակը և մի երկու սեպուհ: Նրանք երկար փսփսացին իրենց անելիքի մասին: Վճռվեց չդիմել հայտնի դիմադրութեան, թույլ տալ, որ ջոկատը հանեն, միացնեն Ատոմի զորագնդին և ապա, երբ նրանք ամրոցից կհեռանային, սպասեն Ռշտունյաց նախարարը Զարեանդ հասնելուն, որից հետո անմիջապես ամրոցը գրավել մնացյալ զորագնդով և գնալ միանալ նախարարին:

Առավոտյան Ռշտունյաց ջոկատը ներկայացավ Գեղեոնին: Սա կարճ խոսք ասաց զինվորներին:

— Գնում ենք սուրբ հայրենիի և ազգի դավաճանների դեմ: Հայոց զինվորը այդպես էլ անում է: Թուրոդ էլ սրտով կռվում եք հայրենիքի փրկության համար: Աղոթեցե՛ք:

Ծղիշեն մի կարճառոտ խոսք ասաց, որից հետո ջոկատը գնաց կանգնեց Ատոմի զորագնդի մոտ: Գեղեոնը հրամայեց տեղապահին, որ հրամանատարությունը ստանձնի՝ ինչպես որ կարգել է նախարարը: Սա տատամսեց: Վճռված էր, որ նա մնում էր ամբողջում: Բայց Գեղեոնը հրամայեց.

— Հրամանատարը բռնում է իր տեղը և գնում է հայրենիի կռվին:

Այնուհետև ինքը վերցնելով դրոշը՝ հրամայեց, որ Անահիտն ու Աստղիկը Շուշանիկ տիկնոջ երկու կողքերին կանգնեն, և ապա ազատ ձեռք կրծքին դնելով և մինչև ձեռք գլուխ խոնարհելով Ատոմի առջև՝ ասաց նրան.

— Հիմա հրամայի՛ր, իշխա՛ն:

Հավեց Ծսթերի և Արշալույս տիկնոջ հեծկտոցը:

— Դե՛, դե՛, — գոռաց Գեղեոնը, — հայրենիի կռվին լաց չկա, հիմա՛ արյուններդ կթափեմ, հա՛...

— Թույլ սուր, սեպո՛ւհ, արտասուքը սրտի թեթևացում է, — ասաց Ծղիշեն:

— Ո՛չ, հա՛յր սուրբ, — բարկացավ նրա վրա Գեղեոնը, — սրտի թեթևացում չկա հիմա:

Տիկիները արտասովակալած աչքերով մոտեցան համբուրեցին Մեծ Տիկնոջ ձեռք, և կամենում էին ողջագուրվել Մամիկոնեից տիկնոջ հետ՝ Գեղեոնը կոշտ ձայնով մոմռաց.

— Առաջ հայր սուրբի՛ աջը:

Նրանք կատարեցին Գեղեոնի այս հրամանը ևս: Ապա՝ երբ ողջագուրվեցին տիկիներին և, մեծ հուզմունքով, աղջիկների հետ, Գեղեոնը մոտ կանչեց տեր Զանգակին, աջն առավ և ասաց.

— Ամեն օր պատարագ ես անում ամբողջի եկեղեցում հաղթության համար: Արտասուք ես թափում առաջի աստժո: Կրկնի՛ր:

— Արտասուք եմ թափում առաջի աստժո, — կրկնեց տեր Զանգակը:

Քոլորը ծիծաղեցին, բայց տեսնելով Գեղեճնի զարհուրելի դեմքը՝ մի կերպ հազիվ զսպեցին իրենց:

Ատոմը հրամայեց.

— Զորագունդ, ճանապարհ...

Զորագունդը շարժվեց: Գեղեճնը սաղավարտը հանեց, երեսը խաշակնքեց և գոչեց.

— Դե՛, հայո՛ց աստված, դո՛ւ պահապան հայոց ազգին...—

Ու դրոշը վեր բարձրացրած՝ սկսեց օրորվել կասաղի նժույգի թափահար ընթացքից:

Զորագունդը բռնեց Մոկաց աշխարհի ճանապարհը, որ այնտեղից վերադառնար Արծրունիք և ապա դեպի հյուսիս՝ Զարեվանդ:



Անլուսին երեկոն մթնեց: Բարձրագահ լեռներում որոտաց վայրի քամին: Խորիտունիքի և Ապահունիքի միջև լեռնանցքով եռում էր Ատոմի ազատության զորագունդը, որի մեջ լցվել էին նաև Ռշտունյաց, Արծրունյաց և Մոկաց շոկատները:

Առջևից գնում էր զորքը, նրան հետևում էր ժողովրդական կամավորը, որի գլուխ էին անցել Առաքելը, Պողոսը և Խանդութը: Սրանց հետ խառն գնում էին Մեծ Տիկիներ, Մամիկոնեից և Շուշանիկ տիկիները, օրիորդները, Յուզարբերը, աղախիները և գեղջկուհիները, որոնցով Մեծ Տիկիներ շրջապատել էր իրեն՝ հավասար տանելով իր հետ:

Խավարի թանձրության մեջ հազիվ մոռյլ գծագրվում էր իր վշտին գերված Մամիկոնեից մոր սգավոր կերպարանքը, որ կուցած նժույգի թամբին օրորվում էր: Տիկիներն ու օրիորդները վերջին շաբաթը ճանապարհների փոշու մեջ կերպարանափոխվել էին:

Ավելի դիմացկուն աղետների, վարժ գալիս էին գեղջուկները, որոնց մաշված պարեգոտների մեջ խաղում էր լեռնային ցուրտ քամին: Նրանք լուրջ էին և ճակատագրի գեղեցիկ պատրաստ՝ մինչև անգամ կորցնելու իրենց կյանքը:

Ատոմը հեծյալ պարեկներ էր ուղարկել առաջ ճանապարհը հետազոտելու և դանդաղում էր: Միաժամ նա սպասում էր ավե-

լի խորքը ուղարկած հետախույզներին, որ պիտի շփվեն նախարարների կարավանին և լուր բերին նրա մասին:

Արևմտյան երկնքից մի սևամուժ ամպ կույր բուխ նման գալիս էր և ուռչում: Նրանից փչում էր խոնավ մի շունչ: Նա սկսեց արագ մոտենալ, տարածվել: Բայց հակառակ սպասածին՝ չպայթեց ամպրոպով, այլ միգամած, տարածվեց բռնեց երկնքի երեսը: Խավարը թանձրացավ, քամին դադարեց: Սկսեց մանր անձրև մաղել:

Զորագնդի հետևից, ուր Զոհրակն էր գնում, սմբակներ դոփեցին լեռնային քարքարոտ շավիղը: Զոհրակը տեղեկանալով նրբանց ով լինելը՝ հետնապահ պարեկներից մեկի հետ ուղարկեց Ատոմին: Ատոմը ետ նայեց: Հեծյալները մոտեցան և հևհև, ոտտոտելով նժույզների վրա, հավասարվեցին Ատոմին: Պարեկը գեկուցեց.

— Իշխան, սուրհանդակներ են Ռշտունիքից:

— Հա, ի՞նչ կա,— հարցրեց Ատոմը, սուր նայելով հեծյալներին:

Հեծյալներից մեկն առաջ մղվեց.

— Ռշտունյաց զորագնդի սեպուհը մի մեծ ջոկատ հանեց և գալիս է այս ուղղությամբ՝ դիմավորելու իր նախարարին:

Ատոմը մռայլվեց: Խորհնը մոտեցավ նրան: Դա բարձր բան չէր գուշակում: Դա անշուշտ դավ էր իր դեմ և ոչ իր իշխանավորին հանդիպելու քայլ:

Ատոմը կանգ առավ: Զէր կարելի առաջ գնալ՝ թիկունքին ունենալով մի այդպիսի դավաճան բանակ, որ կարող էր միավել նրա մարմինը վճռական հարվածի պահին:

— Գիշերենք այս Բաղնացում,— ասաց Խորհնը Ատոմին,— տեսնենք սա ինչ խաղ է:

— Տեսնելու բան չկա. դավ է և հարված մեր դեմ,— որոշեց Ատոմը,— պետք է իսկույն թեքվենք և կորչենք լեռներում:

Եվ նժույզի զլուխը թեքեց աջ՝ հրամայելով.

— Անձա՛սա՛յն:

Հրամանը առջևի քարքարը հաղորդեցին հետևիներին և գնաց մինչև տուտը ասնձա՛յնս:

Զորագունդն ընկավ վայրի ու անձանապարհ մի լեռան ողնաշար: Միայն լեռնային վայրերին սովոր նժույզները կարողա-

նում էին գլուխ հանել այս խավարի մեջ նման մի ընթացք: Գնացին բավականին անձայն և հեռացան գլխավոր շավղից: Փափուկ խոտը հազիվ թե պահեր նրանց հետքը. իսկ եթե պահեր էլ՝ կարելի էր համարել նախրի հետք: Մյուս կողմից գիշերային խավարը նպաստեց զորագնդին աննկատելի մնալ իրեն հեռվից հետապնդող հեծյալներին, որոնք իրենց ուղին կշարունակեին բռնած գծով և շուտով կկորցնեին զորագունդը:

Կես-գիշերից անց էր, որ զորագունդը իջավ մի ձորահովիտ և մտավ մի շեն: Գամփռների միահամուռ հաշոցը արթնացրեց շինականներին: Նրանք զինված դուրս թափվեցին խրճիթներից: Զորագունդը կանգ առավ:

Ատումը ետքնի հետ անցավ գյուղ, զորագունդը տեղավորելու և հրահանգներ տալու: Զոհրակը հսկում էր՝ որսալու համար երևել անակնկալ, որ շատ էլ անհավանական և հեռու չէր:

Մեծ Տիկնոջ թևերն ընկած տարան մի մեծ խրճիթ, որի ընդարձակ օթեանը իրեն կից անասունների գոմով միակ հարմարը դատվեց իշխանագունների գիշերելուն: Ընդառաջ եկան տանտերն ու տանտիրուհին՝ մի կարմրաթուշիկ արծաթե ծերուկ և հարգևոր աշխույժ մի պառվուկ, որոնք պատի տակի թախտին բազմեցրին Մեծ Տիկնոջը և մյուս իշխանագուններին: Նրանց հետ միասին գնաց ներս և օրհնելով տունը՝ նստեց օջախի գլխին ծղիշեն, որի հայացքն սկսեց շոյել տանտերերին ու խրճիթի ամեն մի առարկա: Նա հիշեց իր վաղեմի պատանեկությունը հայրենի գյուղում...

Տանտիրոջ հարսներից մեկը ձեռից բռնած ներս բերեց զառամյալ մի կնոջ, որ դողդոջուն շրթունքներով ինչ-որ բան էր մըրմընջում: Երբ առաջ եկավ, հասկացվեց, որ նա աղոթում է: Դա տանտիրոջ մայրն էր, տան «Մեծ տիկինը»: Նա մոտեցավ Մեծ Տիկնոջ և կոացավ, որ հասնի նրա ձեռին՝ համբուրելու: Մեծ Տիկինը արգելեց այդ և ձեռքով նշան արեց, որ պառավը նստի իր կողքին: Սա շփոթվեց, կարկամեց տեղում: Ապա, երբ Մեծ Տիկինը կրկին ստիպեց նրան, նա շորս կողմ նայեց շփոթված ու վախեցած: Այնժամ Մամիկոնեից տիկինը բռնեց նրա ձեռքը և նստեցրեց Մեծ Տիկնոջ կողքին: Պառավը նստեց և տեղում քարացավ մնաց:

Անձրևն սկսեց սաստկանալ: Բարձր երդիկում, որ մերկաց-

նում էր առաստաղը, նորից սկսեց խաղալ լեռնային ցուրտն ու զգացնել անձրևի խոնավութիւնը:

— Նե՛րս բեր շինականներին, կթրջվեն,— ասաց հյուրընկալ տանտիրոջը Մեծ Տիկինը տխուր ու հոգածու:

— Նրանք ծածկի տակ են, Մեծ Տիկին,— բարեժպիտ հանգըստացրեց տանտերը:

— Բե՛ր, բե՛ր ներս,— պնդեց Մեծ Տիկինը:

Տանտերը դնաց:

Մեծ Տիկինը շատ խոր ապրումների մեջ էր: Նրան չէին հասկանում: Անշուշտ վշտի գերագույն լարման մեջ նա իր ուժեղ հոգու համար որոնում էր ավելի հուժկու մի հենարան, որի հետ գնար դեպի մեծագործութիւն: Նա այդ տեսնում էր ժողովրդի մեջ: Նա իր կյանքում միշտ մի խորհրդավոր երկյուղ էր կրել ժողովրդից: Նրա համար ժողովուրդը նախախնամութեան պաշտպանած մի հատուկ արարած էր, որի մեջ սա դրել է մի վերին արդարութիւն: Բայց և իր ողջ կյանքում Մեծ Տիկինը հայացքի առաջ այդ ժողովուրդը կանգնած էր եղել իբրև գորշ մշուշ, որ երևում էր զորքի մեջ, արյան աշխատանքի մեջ, դաժան կենցաղում, և այսօր այդ մշուշը պարզվել էր, և նրա առաջ կարկառուն կանգնել էր ժողովուրդը, միայն որը կարող էր մեծ արհավիրքի վճիռը տալ իր՝ գինվորայլի արյունով: Այժմ Մեծ Տիկինը՝ իբրև քրիստոնյա՝ մեղք էր համարում ջղկնվել ուսմիկներից:

Բայց միայն քրիստոնեական զգացումը չէր, որ Մեծ Տիկինը մղում էր դեպի ժողովուրդը: Նա ժողովրդին համարելով «աշխարհ հայրենին», զգում էր, որ եթե ժողովուրդը կար՝ ասել է աշխարհը կար: Իսկ աշխարհը հաստատութիւն էր արդեն, որ հավիտենական էր: Եվ ահա այժմ այդ հաստատութիւնը խախտվելու վտանգի մեջ էր... Դա աշխարհիս վերջի նման բան էր: Վերջին դատաստանի նման զարհուրելի:

Ահա թե ինչու Մեծ Տիկինն ուզում էր հոգով լցվել ժողովրդի մեջ: Նահատակութիւնը ժողովրդի հետ՝ մեծ ուժ էր ներշնչում նրան: Նա միանում էր ժողովրդին՝ կործանումից պահելու համար աշխարհը:

Շինականներից գեղջկուհիները միայն եկան ներս: Շինականները ոչ մի կերպ չուզեցին խանգարել Մեծ Տիկինը հանգիստը:

Սրբ գեղջկուհիները զարմացած ու քաշվելով ներս եկան, նույն տխուր ու հոգածու ձայնով Մեծ Տիկինն ասաց.

— Նե՛րս արիք, մի՛ քաշվեք, էլ իշխան-ոսմիկը գնաց: Ձին-վորյալ ենք՝ հավասար ենք: Հիմա բազումքի ժամանակն է:

Այս ասաց խորին լրջությամբ և ջերմեռանդ զգացումով, մարգարեական աչքերը հատակին հառած: Հետո վեր նայեց գեղջկուհիներին և խորը խոցված շեշտով ավելացրեց.

— Արիք հե՛տս, դուք բազումքն եք: Գուցե թե բազումքի արդար ձայնով աստված ինձ լսի:

Գեղջկուհիները շտոսեցին: Նրանք լավ էլ չէին հասկանում ծերացած իշխանուհու խոսքերը: Բայց զգացին նրա մեջ մարդկային անձնավորության մեծ կոտորվածություն և ինչ-որ մեծ ուժ միաժամ: Դա պատկառանք ազդեց: Նրանք չէին համարձակվում խոսել: Նրանք շոքեցին նստեցին հատակին և սկսեցին դիտել սգավոր իշխանուհուն: Նրանց շատ հազիվ էր պատահել այսպես մոտ շփվել իշխանական մի անձի հետ: Նրանք մի բան լավ էին հասկանում, որ մարդ ամենամեծ վշտի ժամանակ կորցնում է իր հպարտանքն ու հավակնությունները, մեծության առավելություն զգացմունքը: Ահա այս կողմից, մի բանով,— այս մեծ վշտից, որին սովոր է ժողովուրդը,— շինականները աղոտ ըմբռնեցին ազնվական ծեր կնոջ հոգեկան այս վիճակը: Իրենց կյանքում ևս բեկվում էր մեծ բան. հայրենիքը, որ կանգնած էր անդնդի առաջ և ահա՛, ահա՛ պետք է կործանվեր անդարձ: Իրենք ևս եթե ոչ սգավոր, բայց վտանգված էին և ապրում էին իրենց գերագույն օրը:

— Հույսդ մի կտրի, Մեծ Տիկի՛ն իշխանուհի,— համարձակվեց խոսել Խանդուժը,— քեզ է՛լ մի դուռ կբանա աստված:

Մամիկոնեից տիկինը ցնցվեց: Նրա առջև կանգնեց կերպարանքը ժողովրդի «սուրբ Սպարապետի», որը իբր մորը պատճառել էր այդ մեծ վիշտը, որի համար մխիթարում էր այս ոսմկուհին: Անահիտը գլուխը կախեց: Մինչև այստեղ նա շարունակ մըտածել էր Արտակի մասին, և մի տեսակ թմրել էր նրա վիշտը, բայց այստեղ, երբ սկսեցին բարձրաձայն խոսել վշտերի մասին, նրա վերքը բացվեց և աչքերը լցվեցին:

Մեծ Տիկինը մտմտաց և ասաց՝ կարծես խոսեց ինքն իրեն.

— Աշխարհք արդուն պիտի գնա, ո՞վ է արեւնապարտը...

— Վնաս չունի, Մեծ Տիկին իշխանուհի,— ասաց կրկին խանդավառ,— աշխարհք չվերջացավ: է՛, է՛, մենք ոտի տակին ծեծված հող ենք: Կծեծեն, կտորեն, բայց մենք հա՛ կանք ու կանք: Կապրե՛նք:

Կարծր գեղջկուհու ձայնի մեջ հնչում էր դարերով ցավ ու մահ ապրած «աշխարհքի» ձայնը և հույս էր ներշնչում:

— Աստված բերնի՛ցդ լսի,— մոմռաց Մեծ Տիկինը և երեսը խաշակնքեց:

— Կլսի՛, Մեծ Տիկին իշխանուհի, կլսի՛,— խոսեց մինչ այդ լուռ ու անմասնակից պառավը՝ տանտիրոջ մայրը,— Սպարապետն ինչ-որ արել է՝ երևի մեր կյանքի համար է արել: Այսքան հող հայրենին պիտի ապրի՞, թե ոչ:

Հետո աչքերի խորքում թաքուն մի կայծ շողացնելով՝ ասաց.

— Ինչ կլինի՛ կլինի, Մեծ Տիկին իշխանուհի: Կլինենք մենք՝ կլինենք դուք. շենք լինի՛ շեք լինի: Ի՞նչ անենք:

Բարձրագերան առաստաղի երդիկից ներս էին ցնցուղվում բարակ անձրևի ասեղները, բայց նրանց բերած ցրտից պաշտպանում էր օջախի կրակն ու գոմը: Հաճելի էր այդ անձրևը իր թախիծով ու կյանքի հուսով միաժամ: Խրճիթում նստածները մի տեսակ ուրախություն զգացին դրսի ցրտից ապահով այդ վիճակից: Ուրիշ անգամներ երևի անախորժ կլինեիր այս մթին խրճիթը իր անասունների գոմով: Սակայն այս երեկո անձրևից պաշտպանող այս պարզունակ առաստաղը, ծղրիղի խաղաղիկ դայլայլը, անասունների անվրդով աղորումը, խոտի բուրմունքը խրճիթը լցնում էր մի մտերիմ և խոր իմաստով, կյանքի իմաստով:

Աստղիկը մոտեցավ երիտասարդ գեղջկուհիներին և ականջ գրույց, հարցումներ իրանց հետ: Իսկ Անահիտը ականջը քամուն՝ մտքով հեռասփանները՝ երևակայության ուժով ջանում էր պատկերացնել Արտակին, նայել, տեսնել նրա աչքերում գաղտնիքը, ուրացե՞լ է, թե առերես է: Եվ որքան էլ նա Մեծ Տիկնոջից լսել էր, որ առերես ուրանալն էլ էր հանցանք, բայց դրա մեջն էլ Անահիտը հույս էր գտնում, ինչպես այս ցուրտ անձրևի մեջ, որ մաղում է, բայց հասունացնում է անդաստանը: Անահիտը ջանում էր շնայել Եղիշին, Մեծ Տիկնոջը, Մամիկոնյան և Շուշանիկ

տիկիններին, որոնց սպառազինութիւնը գուշակում էր փոթորիկ և արյուն:

Խանդութը դիտում էր գեղջկուհիների հետ խառնված տիկիններին և քրիորդներին: Հետո նա դրոշեց իր կողքինին և կիսաձայն բժժիծաղ տվեց.

— Մեղքներն առաջներն է եկել, նեղն են՝ գործները շինականին է բնկել... է՛, է՛, է՛, աշխարհք, բանն ո՛ւր է հասել, հը՛...

Ու երազանքով նայեց Մեծ Տիկնոջ՝ շիմանալով կարեկցե՛ց, դառնացա՛վ, թե՛ ինչեր, հիշեց, ինչեր մոռացա՛վ...

— Դե՛, քույրիկ, — գործավ Խանդութին անլյունից աչքերը ցուլացնող մի ոչ շատ հասակավոր գեղջկուհի, — ուրախացրո՛ւ Մեծ Տիկնոջ, մի բա՛ն ասա:

— Կասեմ, ինչո՞ւ շեմ ասի, — աշխուժացավ Խանդութը:

Առաջ եկավ և շոքած նստեց մեջտեղ՝ դեմքով դեպի տիկինները:

Ապա սև եղունգով հատակի հողը քերեց, աչքերը գցեց ներքև, վիզը ծու՛ն՝ գեղջկական քաղցր ձայնով սկսեց սպարապետ Վասակ Մամիկոնյանի ողբը, որ Տարոնի գուսաններն էին հորինել: Վասակ Մամիկոնյանը այն հերոսն էր, որի պատկերը ժողովուրդը գծել էր իր երեակայության հարմարեցնելով, ուսմկացնելով, տալով նրան իր բոլոր հատկութիւնները, և որի մահվան ժողովուրդը շէր հավատում: Դա այն զարհուրելի Սպարապետն էր, որ իր մահից հետո շարունակում էր սարսափ գցել թշնամիների մեջ և սիրտ էր տալիս իր ժողովրդին:

Խանդութը երգեց այն վեպը, թե ինչպես Շապուհը Վասակին հոխորտաց.

— «Այդ դո՛ւ էիր, աղվե՛ս, որ կոտորում էիր իմ բանակները. հիմա ի՞նչ կանես, ես քեզ մեռցնել պիտի տամ աղվեսի մահով»: — «Մինչև այսօր առյուծ էի քեզ համար՝ հիմա դու ինձ աղվես ես անվանում: Բայց քանի ես Վասակ էի, հսկա էի. մի ոտս մի սարին էր, մյուսը՝ մյուս: Երբ աջս էի սեղմում՝ աջն էր խոնարհվում, երբ ձախս էի սեղմում՝ ձախն էր խոնարհվում»: — «Ո՛րն են այդ սարերը, ասա՛, այդ սարերը»: — «Մեկը դու էիք, մյուսը՝ կայսրը հունաց»: —

«Մորթազերծ արեց Շապուհը քաջին և դնել տվեց Արշակ արքայի դիմաց Անհուշ բերդը»:

«Ո՛հ, աղվե՛ս կոչեց աղվեսն առյուծին,  
Ո՛հ, վես առյուծին մորթուց զերծեցին»:

Ունկնդիրները հուզվեցին: Խանդութը ևս ոգի առավ և որոտաց.

«Ավա՛ղ առյուծին ձայնեմ՝  
Որ առյուծն ընկել է զնդան.  
Այնքա՛ն հայրենի ասեմ՝  
Վեր ելնի առյուծն իմ կենդան.  
Ելնի ու հառաչն իր անի,—  
Ավա՛ղ, ծուխ իմ հայրենիք...—

«Անհուշն եմ, թե ինձ հուշ անի  
Անուշն իմ, ծուխն իմ հայրենի՝  
Չե՛մ Անհուշ բերդն՝ ե՛ս, Վասակ,  
Չե՛մ մորթուց զերծն՝ ե՛ս, Վասակ.  
Թե առնեմ բույրն իմ ծխանի՝  
Կհասնեմ հողն իմ հայրենիք»:

«Ավա՛ղ առյուծին ձայնեմ՝  
Որ առյուծն ընկել է զնդան.  
Այնքա՛ն հայրենի ասեմ՝  
Վեր ելնի առյուծն իմ կենդան.  
Եկ ծո՛ւխ իմ, ծո՛ւխ իմ ծխանի,  
Եկ ծո՛ւխ իմ, ծո՛ւխ իմ հայրենիք»:

Լավեցին խեղդված հեծկտոցները: Տիրեց հուզումնալից լուռ-թյուն, որի մեջ լավում էր ալեկոծ կրծքերի շնչառությունը և գոմից հասնող անասունների աղորիքների ձայնը: Լուռ էր շինականի տունը՝ լի կարիքով ու կյանքով, երդիկից վեր էր մլլվում հայրենի ծուխը, որի բույրն անգամ, ըստ ժողովրդական երգի, բավ էր, որ կենդանացներ մորթազերծ հերոս Վասակ Սպարապետին:

Մեծ Տիկինը օրորեց իր գլուխը և ընկավ մտքերի ծովը:

Եղիշեն, որ մինչ այդ լուռ քարի պես արձանացած էր իր խոհերի հետևից ընկած՝ կենդանացավ հանկարծ և սկսեց պատմել Արշակ արքայի և Վասակ Մամիկոնյանի վարքը.

— Նրանք կյանքը սիրեցին և կյանքի համար մեռան: Քարձր հայրենասիրական կյանքը, Նրանք հաղթեցին մահին և ահա նրանք կենդանի են: Լավ է հրրև հուշ ապրել, քան շրջել մեռյալ կենդանի:

Սղիշեի խոսքերը հնչեցին մարտական շնչով: Նրանց հետևում մոռնում էր արհավիրքը, որ անվրեպ գալիս էր...

Սա սթափեցրեց ամենքին:

Ուշ ընթրիքը, որ Մեծ Տիկնոջ կարգադրությամբ բաղկացած էր կաթնեղենից ու համեմունքներից՝ նոր թխած հոտավետ հացերով, երկար շտեկեց: Հոգնած Մեծ Տիկինը մեղմ ու ախար ձայնով օրհնեց հյուրընկալներին և պառկեց իր համար հարդարած անկողնում: Մի փոքր անց պառկեցին նաև մյուսները:

Ատոմը, որ Խորենի, Զոհրակի և Գեղեոնի հետ շենումն էր և անձրևի տակ շրջում էր դրրագունդը և տեղավորում՝ կանչեց իր մոտ կրտսեր հրամանատարներին և խստիվ հրամայեց զորագունդը թաքցնել ձորի թաքստոցներում, ողջ օրը անցկացնել թաքնված, շուրջկալել գյուղը, բոլոր եկվորներին արգելել դուրս գալ դուռից, և գյուղի շուրս բոլորը մեծ շրջագծով աննկատելի պահալներ դնել և պատրաստ լինել մյուս գիշեր ճանապարհ ընկնելու երկար երթով: Այնուհետև հետախույզներ ուղարկեց եկած ճանապարհը և այն վայրերը, դեպի ուր կարող էր շարժվել Ռըշտունյաց զորագունդը՝ տեղեկություն բերելու: Միաժամ սուրհանգակ ուղարկեց դեպի Քազրևանդ՝ գնացած հետախույզներին հայտնելու իրենց նոր վայրը, ուր շեղվեցին: Ռշտունյաց և Խորխոռունյաց ջոկատների հանգամանքը սակայն մեծապես մտահոգության պատճառ դառավ Ատոմի համար, նա այս մասին խոսեց Գեղեոնի հետ:

— Նա նրանց ետ կդարձնեմ, — ասաց Գեղեոնը հանգիստ:

— Ինչպե՞ս կարող ես, — տարակուսեց Ատոմը:

— Ինչպե՞ս կարող եմ չկարողանալ, — մի տեսակ զարմացած հարցրեց Գեղեոնը:

Ատոմը կասկածով նայեց նրան:

— Կարող եմ և պիտի գնամ է՛լ, — ասաց Գեղեոնը:

Ատոմը շարունակեց համառ զննել սեպուհին և զգաց, որ այդ տարօրինակ մարդն էլ իր ուժն ունի: Նա համաձայնեց, ոչ Գեղեոնը գնա դեպի Ռշտունիք և Խորխոռունիք:

Գեղեցունք մի քանի հեծյալներով ճանապարհ ընկավ դեպի Արծրունյաց աշխարհը՝ բնական և հավանական ճանապարհը Ռշտունյաց գորագնդի: Դրությունը միանգամից վատացավ: Ո՞վ գիտե հիմա նախարարները հասել են Բագրևանդ և սկսել իրենց գործը: Ձէ՞ որ հարկ էր անպատճառ այնտեղ լինել և նրանց որոշումների վրա վճռական ազդեցություն անել: Հիմա Ատոմը գամվեց այս փոսի մեջ և ստիպված էր թաքնվել լեռներում՝ հարմար առիթին գերի: Դրա հետ ոչ Ատոմի բնավորությունը կհաշտվեր և ոչ էլ նրա ռազմական հաշիվները:

Պետք էր շտապել վճռական հարված տալու:

Գիշերն անցավ անախորժ տարակուսանքների մեջ: Հետևյալ առավոտ նա ամենից վաղ շենամիջի մի խրճիթումն էր և սպասում էր, որ իր մոտ գան կրտսեր հրամանատարները:

Սրանք հավաքվեցին և սկսվեց խորհրդակցությունը:

Ողջ ցերեկը Ատոմը լարված հետևում էր որևէ շարժման, լուրի, հսկողության, որ հրամայել էր խստորեն: Զինվորները թաքնվեցին ձորի մեջ: Տարբեր նախարարությունների զինվորները կամաց-կամաց ընտելացել և իրար էին եկել՝ շնայած որ նրանց կրտսեր հրամանատարները խորթ էին նայում դրան:

— Դե՛ եկեք,— ուրախ կանչեց մի շրջափակ հարթ արոտում Պողոսը:

Զինվորները լցվեցին:

— Եկե՛ք, եկե՛ք, արծիվ ուտող խորխոռներ, ձիագո՞ղ գնուններ, ա՛րջ պատառող ոշտուններ, կողերը հաստ մամգուններ, ոսկի ծամող արծրուններ, խռովկա՞ն մոկսեր...

— Հա՛, էլի ի՞նչ սատանա մտավ պինչդ,— ծիծաղեց Հովհաննես Կարապետը մոտենալով և ինքն էլ խենթացած այնպես շտապեց, որ ոտը կպավ քարի, գլորվեց քարերի շեղջի վրա ու սահեց գնաց մինչև գետը:

— Քարե՛րը ցավացրի, տնաշե՛ն,— գռչեց Պողոսը:

Մանուկն ու Աբգարը, որ դեռ շարունակում էին խոով մնալ իրարից, բայց շարունակ էլ իրար մոտ էին կապում նժույզները, իրար հետ ջրում նրանց, իրար մոտ քնում՝ վեր թռան տեղներից և գնացին:

— Դե, ղանե՛ր, ապա մի թաղենք Հազկերտի գլուխը:

Սկսվեց շուրջպարը: Պողոսը հանկարծ աչքերը խոժոռեց և խելագարի պես վեր թռավ. բռնեց պարագլուխի տեղը: Պայթեց ուղղակի պարը, ուր սրերը շողացին ու շաշեցին մարտիկների ձեռին: Քե ինչպես էին մարտիկները մրրկում արագ ու համարձակ՝ այդ իրենք ևս երևի չէին հասկանում: Երևի քաջությունն ու երիտասարդութունը ինքն էր գտնում դրա հնարը:

— Կանգնե՛ք, — գոռաց Պողոսը կատաղի և դարձավ չուհիների կարապետին. — ապա՛ մի կաղ պար:

Մի խումբ ջոկվեց և ահա սկսվեց կաղ պարը:

Հո՛փ, կաղը կաղ կաղ կաղալով՝

Տփիկ, տփիկ, տփիկ, տփիկ.

Հո՛փ, տափին տափ, տափ տափելով,

Ջփիկ, զփիկ, զփիկ, զփիկ:

Անհոգ ծիծաղն ու զվարճութունը լցվեց հովիտը: Երիտասարդ զինվորները բոլորովին մոռացել էին և՛ պատերազմ, և՛ արշավ, և՛ արհամարիք...

Հանկարծ փողերի ձայները կերկերացին շենի կողմից:

— Արշա՛ւա՛մ, — ձայնեցին ամեն կողմից: Մարտիկները վազեցին դեպի նժույզները:

Իրիկնադեմին հետախույզները լուր բերին, որ Ռշտունյաց ջոկատը հետապնդելով Ատոմին՝ ճանապարհ է ընկել դեպի Զարեհավան—գիշերս հավանորեն կանցնի Բաղնոցով: Դա բարեհաջող հանգամանք էր: Զոկատը կանցներ Ատոմի ճանապարհով, իսկ գիշերը նա շէր նկատի հետքը, կանցներ որոնելու իրենց առաջ «արագ կորած հակառակորդին» և երբ գլխի կընկներ, որ Ատոմը կորել է, Ատոմը այլ ուղղությամբ իսկապես կկորչեր:

Իսկ գիշերը հապճեպ հետախույզ եկավ և հայտնեց, որ նախարարները հասնում են Մաղկոտն, ուր լցվել են պարսիկ զորքեր, գուցե գան նախարարների զորագնդեր և որ մեծ դեպքեր են սպասվում այնտեղ շուտով: Ատոմը շտապ կանչեց Խորենին ու Զոհրակին, որոնք զորագնդում էին.

— Չենք կարող սպասել, — ասաց նա, — պետք է արագ հասնել Մաղկոտն և արագ էլ տալ հարվածը:

— Ի՞նչ են անում նախարարները, — հարցրեց Խորենը:

— Ոչինչ չի իմացվում...

— Մեկ իմանայինք... — ասաց խորենը տարակուսանքով:

— Չենք կարող այլևս, քանի չեն հասել նախարարական զորագնդերը՝ կանխենք նրանց: Մեկը հարցնի. ո՞ւմ համար են, ո՞ւմ դեմ են, ինչո՞ւ են զալիս այդ նախարարական զորամասերը: Եվ արդյո՞ք դավաճաններ չեն: Պետք է արագ հասնել և վերջացնել ամեն բան:

— Ե՞րբ ենք ճանապարհվում, — հարցրեց Ջոհրակը:

— Հենց իսկույն ևեթ: Մեր ուղեկիցները կմնան, կգան հետևից: Մենք հապշտապ թեանց կանենք Ջարեհավանի գծով: Չենք պատահի Ռշտունյաց զորագնդին:

Եղիշեն քնից վեր կացաւ եկավ խորհրդակցության: Երբ նրան հայտնեցին նոր լուրը, նա հայտնեց, որ այլևս չի դանդաղի ինքը և ինքը մենակ կգնա դիմավորելու նախարարներին:

Կանանց զարթեցրին, հայտնեցին նոր վճիռը, և զորագունդը լեռնային կածաններով շարժվեց դեպի ՄաղկոտՊ, Ջարեհավանի շրջանց գծով:



Ստեպ դադարքներով, անհարկի ուշացումներով Վասակը կարավանը հասցնում էր Մաղկոտն գավառի Անզղ քաղաքավանին: Վարդանը կուհեց. վասակյանները ինչ-որ զորական պատրաստության մեջ են: Նա վաղուց էր նկատել սուրհանդակների ծածուկ հայտնվելն ու անհետանալը ճանապարհին:

Միևնույն կասկածը տանում էր նաև Վասակը Վարդանի մասին:

Սկսվեց անվստահության մի այնպիսի տարօրինակ վիճակ. երբ իրար կողքի ընթացող երկու հակառակորդ շքիտեն, թի իրենցից որն է ավելի ուժեղ և որն է գրության տերը:

Եվ երկուստեք տիրեց պրկված լարի լուսթյունն ու կաշկանգումը, երկու կողմն էլ հարկադրվեց լինել զգույշ և ստկավախոս: Մա երկուստեք դժվարացնում էր որոշ քայլ անելու: Սակայն և հույժ անհրաժեշտ էր անել այդ վճիռը, գործի անցնել: Մթնոլորտը խտանում էր: Երկու կողմն էլ վճռել էին միևնույն տեղը հասցրնել հարվածը՝ Ջարեհավանում և երկու կողմն էլ նյութելով հարվածը՝ գնում էին հետեւելով մեկը մյուսի շարժումներին:

Սաեայն Վարդանին անհանգստացրեց այն, որ իր սուրհանգակը ուշացավ: Անհասկանալի էր, թե ինչու գոնե շվերադարձավ: Ի՞նչ էր նշանակում այս... Սաղկոտնին մօտենալով միայն՝ Վարդանը որոշեց ուրիշ սուրհանդակ ուղարկել Այրարատ, իմանալու այս տարօրինակ դեպքի պատճառը: Մտնելով Արտազ և Մաղկոտն՝ արդեն նրա ականջին հասան ժողովրդական ուժեղ շարժման լուրերը: Միաժամ լսեց նաև տագնապի լուրեր, որ պարսիկ զորագնդերը գրավել են ամրոցները, մինչև անգամ Զարեհավանում շարդ է եղել:

Քայց այմենից տագնապալին Պարսկաստանից շարժվող պարսից զորքերն էին, որոնց մասին լուրերը բուժ գործիքի պես զարկում էին Վարդանի գլխին:

Անգղը լեռնաժայռերի մեջ հյուսած հսկայական բնի էր նրման. իսկական անգղաբուն: Մի ժայռաբեկորի վրա ցցված էր ժայռեղեն անգղը՝ միջնաբերդը: Այնտեղ պարսիկ բերդապահ զորք էր ամրացել: Քաղաքավանը իր ցրված տներով մասամբ շրջապատել էր բերդը և նման էր ցրված անգղաձագերի խմբի: Բերդից և ներքևը մի շենքից երկինք էին ծառանում ատրուշանյաների ծխախոնքերը: Իսկ ներքևը, քաղաքավանում, մի փոքրիկ բլրի լանջին հանգստանում և լուրջ շրջակայքի վրա էր խոժոռվում սևատեսիլ եկեղեցին:

Զորագունդը բարձրացավ դեպի բերդը և նրա ստորոտի կանաչ լանջին ճամբար դրեց:

Բերդից իջավ բերդապետ պարսիկ հրամանատարը, խոնարհ ողջունեց նախարարներին: Իսկույն Դարեհը նրա հետ քաշվեց մի կողմ և նրանք սկսեցին զգույշ փսփսալ:

— Մեզ արդեն պատել են վիշապի պես, տյարք,— ասաց Վարդանը յուրայիններին, երբ մտան Անգղի ճամբարը:

— Քայց ուր են ուր շեն՝ կհասնեն մեր նախարարական զորքերը... — նկատեց Արտակը:

— Սուրհանդակները շեկան: Իսկ այս գործը ժամանակի՞ գործ է, իշխանի՛կ,— հոգոց հանեց Վարդանը,— մինչև կհասնեն, մինչև կհարվածենք՝ սրանք կլափեն մեզ:

— Ապա ի՞նչ ես անելու,— հարցրեց Արտակը:

— Կանխել հարվածը Զարեհավանում:

— Զե՛ս սպասելու նախարարներին:

— Սպասել՝ սպառվել: Եվ սրանից հետո մեղ համար մեռալ սպասել: Պիտի կանխենք շարունակ, շտանք մտածելու ժամանակ:

— Չենք կարող, — հակաճառեց ներշապուհը, — չենք կարող ապստամբեցնել ժողովուրդը, վաղաժամ դուրս բերել սպառազեն զորքի դեմ: Չենք կարող այս պահից ժողովրդի առջև բացահայտվել: Անշուշտ երկրում պատրաստ չեն: Իսկ այստեղ որևէ մեկիս խոռովության կասկածով պարսիկները կկանխեն մեզ, կոչնչացնեն և լիովին կվերացնեն իշխանությունը: Ոչ: Մարզպանն արդեն առաջ է ընկել մեղանից: Պարզապես պատանդ ենք, Սպարապետ, իսկ մեր հետևից երևի հասնում է պարսից գլխավոր զորաբանակը...

Վարդանը գլուխը թափահարեց վճռական.

— Կամ այս ծայրից, երբ դեռ նոր է առաջ ընկել նա, մի հարվածով մենք նրանից առաջ կընկնենք, կամ պոչում կմնանք և կբնաջնջվենք:

— Բայց մենք ոչի՞նչ չունենք դեռ, Սպարապետ, — գրգովեց ներշապուհը, սա զորակա՛ն հաշիվ է...

— Սա զորակա՛ն հաշիվ է, — կրկնելով ներշապուհին՝ պատասխանեց Վարդանը՝ ոչ առանց սրտմտության:

Ներշապուհը զգաց Վարդանի խոսքի վճռականությունը: Զգաց, որ ոչ մի բանով նրան ետ չես կասեցնի իր մտադրությունից:

— Գոնե սպապիր Գնունյաց նախարարը կամ մեկը մյուսներից զորք բերի մեզ օգնության:

— Ես կսպանեմ մինչև իմ հարձակման անհրաժեշտությունը:

Ներշապուհը վեր կացավ և գնաց իր տաղավառը: Հազարապետը հետևեց նրան: Այնտեղ նրանք խոսեցին Վարդանի վճռի մասին: Հազարապետը գլուխը շարժեց.

— Չենք կարող, դու ճշմարիտ ես: Զանանք զսպել նրան: Արյունաշաղախ կլինի ամեն բան...

Արտակը, որ մնացել էր Վարդանի մոտ, տխրեց այս տարածայնությունից:

Ուրեմն ի՞նչ է դուրս գալիս. Վարդանը մենա՞կ է լինելու իր վճռի մեջ:

— Տա՛վ է ասել, իշխանիկ, — խոսեց Վարդանը ախուր շեշտով, — որ իմ մտերիմներին անգամ պակասում է շատ քան... ներշապուհը ուշիմ գորական է, նրան ես կվստահեմ ամեն ճակատամարտ... բայց նա հասու չէ ճշմարտության:

Արտակը չհասկացավ, թե ո՛ր ճշմարտության մասին է խոսում Վարդանը, բայց քանի որ նա խորին հավատ էր տածում Վարդանին, ակնածանքով ընդունեց նրա խոսքը:

Արտակը մտածմունքի մեջ ընկավ: Նա անվերապահ վստահ էր Վարդանի հանճարի վրա և նրա ամեն մի նոր շարժումն ընդունում էր իբրև հեռևանք ներքին մեծ մտքի նոր թեքման, որի նշանակությունն ու իմաստը կշռված էր անշուշտ և չէր խաբի ո՛չ Վարդանին, ո՛չ իրենց:

Վասակին խոռվում էր Վարդանի լուսթյունը: Ինչո՞ւ է այսքան համեստ ու հնազանդ այդ անսանձելի տարրոնացին: Ի՞նչ է դավում նա իր փոթորկոտ հոգու խորքերում: Անշուշտ ահավոր մի հարված:

«Մոտենում է օրհասը, լինելիքը պիտի լինի, կատարվելիքը կատարվի...»:

Վասակը լարվեց ու սկսեց խստիվ մտատանջվել, կռահելու Վարդանի անելիքները:

«Մի բան նյութում է նա և տեսնես ո՛ւր և ինչպե՛ս», — մտածեց Վասակը և աչքերը սևեռեց գիշերային խավարի մեջ, — շր՛մ... բայց ի՞նչ է նյութում...»

— Տեսնո՞ւմ եք՝ ինչպե՛ս է լուել նա, — ասաց Մանեճը, — չափում է ուժերի կշիռը:

— Թակարդն ընկած խելացի գայլի պես, — նկատեց Գաղիշոն:

— Ավելի լավ է՝ խոսի, — զանգատվեց Վասակը, — բայց նա սկսել է լուել. դա է շարագուշակը: Դա ավելի դաժան է, քան եթե խոսի նա:

— Եվ ինչո՞ւ է շես կալանում նրան, — հարցրեց Մանեճը՝ հանկարծ լուսավորվելով այս նոր գաղափարով:

Վասակը քմծիծաղ տվեց:

— Ապստամբության դո՞ւռը բանա՞լ, — մռայլ պատասխանեց նա: — Ո՛չ: Ինձ արյունահեղություն չի հրամայված: Միայն

վիժեցնել ապստամբությունը, բռնադատել նրան անարյուն հնազանդության — ահա իմ գործը:

— Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, — հարցրեց Մանեհը հուսահատ:

— Կանգնեցնելով նրա դեմ մեր և պարսիկ զորքերի գերազանցությունը:

— Դա կարելի՞ է:

— Այո, և դա կլինի Զարեհավանում:

Վասակը սակայն անհանգիստ էր դառնում ավելի ու ավելի: Վարդանի վերապահությունները, լուծությունը և զուսպ երևույթը բոլորովին չէր հարմարվում կամային, կրքոտ և գործոն սպարապետի նախկին վարքին ու բնույթին:

«Ո՛չ, նյութում է, նյութում է ահավոր մի խենթություն, — մտածում էր Վասակը՝ մենակ նստած իր տաղավարում: — Պետք է որսալ, կանխել»:



Մուժն ընկավ: Վարդանը պսակեց այծենակածի վրա և գլուխը ձեռներին դրած սկսեց ունկնդրել անլռելի գիշերային ձայներին և միաժամ խորհել իր անելիքները: Սակայն միտքը թռավ գնաց ավելի խորքերը, իր ողջ կյանքը, պարսկական ծառայությունը, իր ճամփորդությունները, Հայոց աշխարհին հասած հարվածները, պարսից դարավոր ճնշումները, դարավոր կոհվածները դրանց դեմ: Ի՞նչն է օգնել Հայոց աշխարհին, ինչպե՞ս է պահվել նա ու մնացել: Ե՛րբ և ինչո՞վ պիտի փրկվի նա իր ոչ մի դար շղադարող պայթյալներից ու արյունահեղություններից: Եվ հիմա այս ամենամեծ արհավիրքը... ինչո՞վ պիտի վերջանա, ի՞նչ պիտի անել՝ կասեցնելու նրա հարվածը: Վարդանը հիշեց Արտաշատի ժողովը, ուխտյալների երդումը, ժողովրդական ըմբոստացման ցույցերը, իր պատրաստությունները՝ մինչև Համազասպ եղբոր ուժասպառվելը հոգնությունից: Խորհեց, որ արհավիրքն ավելի արագ ընթացավ և արդեն եկել կլանում է իրեն և հայ ժողովրդին: Որ ինքը ուշացել էր և չէր էլ կարող առաջ ընկնել: Եվ հիմա, երբ հասել է ժամը հակահարվածը տալու, ահա ինքը «վիշապի» սեղմ գալարների մեջ՝ չի կարողանում իրեն պահել Զարեհավան՝ հասցնելու այդ հակահարվածը, որի ուժերն էլ դեռ չկան, և նա ինքը ևս չգիտե որքան են մեծ և բավարար դրա համար:

ժողովրդի ըմբոստացման ցույցերը ուրախալի են և սրտապնդիչ։ Բայց նա իբր զորական՝ կշռում էր այդ ուժը և գտնում էր, որ, Եսաբերային այդ շարժումը ունեւր և իր վտանգավոր կողմը, որ դրան չէր կարելի դեկավարել, տանել կանոնավոր պատերազմ և որին պարսից ռազմական կազմակերպ ուժերը դուրին կշախշախեին։ Մտքերն սկսեցին կնճռոտել։ Վարդանը, որ այս արհամարհից էլ շատ առաջ, ողջ գիտակցական կյանքում խորհել էր ու կշռել Հայոց աշխարհի բախտը, իսկ այս վերջին արհամարհի օրերին արդեն ճակատագիրը նրա առջև էր դրել վճռելու այդ բախտը՝ արդեն վերջին ամիսը և այսօր նամանավանդ՝ ստիպմունքի մեջ էր վճիռ կայացնել և վերջ տալ այս դարավոր հոգեվարքին։

Վարդանը դուրս եկավ տաղավարից, կանգնեց դռան։ Մի տասր քայլ հեռու իշխանական նժույգները անվրդով աղորում էին գարին՝ երբեմն ուժգին դուրեկով գետինը։ Քնած էր պարսից զորագունդը։ Ներքեր հովտում խաղացող հովը իր հետ բերում էր պետի խշշոցը։

Վարդանը քայլ արեց հեռանալու տաղավարից։ Իսկույն կողքին բսնեց Արծվին։

— Սպարապետ։

— Ե՛կ։

Վարդանը շարժվեց բարձր բլուրի ողնաշարի վրայով, որ հետզհետե իշնում էր դեպի գետափ։ Մզրիդները խանդավառ ծըղրում էին՝ օգը լցնելով գաղջ ձայներով։ Վարդանը մոտեցավ բլրի ծայրին, որից հետո գետն էր, իսկ այն կողմը՝ եկեղեցին։ Այստեղից պարզ երևում էր եկեղեցու լույսը դռնից ու պատուհաններից։ Այնտեղ գիշերային ժամերգութուն էր խոովված հոգիների։ Վարդանի աչքին պատկերացավ Արտաշատի ժողովը, կաթողիկոսի, եկեղեցականների, նախարարների և ժողովրդի ուխտը, Հագկերտին պատասխան թղթի ընթերցումը։ Կարծես երազում էր եղել այն... Կարո՞ղ էր երևակայել, որ մի օր ինքը մի բլրի տուտից, գիշերը, գաղտնի կնայի մի ժամերգության, ուր ժողովուրդը վճիռ է կոփում իր դեմ... Նախատինքի այրող ալիքը ողողեց Վարդանի դեմքը։ Նա հոգոց հանեց։ Ո՛ւր է նրա հայրենիքի վկայութունը «առաջի մարդկան»... Ահա ժողովուրդը պատրաստ է վկայելու։ Հարցնո՞ւմ է նա, թե կարո՞ղ է դիմագրավել Քշնամու զորքին, չափո՞ւմ է իր ուժերը, հաշվո՞ւմ է հետևանքը իր կովի՝ թե

կմնա՞ կենդանի, կոշնչսնա՞ անհետ... Ոչ, ժողովուրդը եկել է վկայելու «առաջի մարդկան» այրմարդավարի, առանց երեսպաշտութեան: Որքա՞ն է իմաստուն այդ խիղախությունը... Կոշնչանա՞ նա...

Վարդանը տխուր ժպտաց: Եվ է՞նչ կլինեիր, եթե նա Պարսկաստանում դիմադրեր մինչև վերջ և ընդունեիր նահատակի պսակը: Կա՞ր դրա մեջ հուսկ վերջին մի հույս օգուտի, փրկութեան: Ծիշտ «ռազմական» ճաշիվ էր իր կեղծ ուրացությունը... Թե՛ այդ նահատակական հույսը... Նրա միտքը կանգ առավ այդ հարցմունքի առաջ...

«Հա՛...» — կիսաձայն խոսեց նա գյուտարարի պես սրտատրոփ:

Արծվին առաջ եկավ.

— Սպարապե՛տ:

Վարդանը շպատասխանեց: Նա հոգու բոլոր ուժերով փառվեց այդ հույսի նշմարանքին: Մի՞թե նոր էր զգում դա: Ոչ, նոր չէր, իհարկե: Դա զգացել էր նա նաև առաջներում իր ողջ կյանքի ընթացքում: Բայց այս գիշեր, երբ նրա հոգին լարեց իրեն մինչև հուսկ վերջին ուժը, երկրի այս գերագույն ճգնաժամի պահին, վառ ջահի պես, ցուլաց նրա առջև այդ հույսը: Այդտեղ մի բան կա, մի խորիմաստ խորհուրդ այդ հույսի մեջ, թե զինվորայլից հետո մնում և ապրում է մի հետք, որ կյանքի է հավասար, որը նույնպես կյանք է, որ մնում է նրա մահից հետո: Կյանք՝ ոչ անդրաշխարհում, կյանք՝ այսրաշխարհում... Դա է զինվորայլի գերագույն խորհուրդը: Վարդանը մտքով գնաց Հազկերտի գնդանը, ուր դիմադրում էր ինքը: Իր ընկեր նախարարները բանական չէին համարում այդ մղումը՝ համարելով, որ եթե իրենք ոչնչանան, կոշնչանա և ժողովուրդը: Ծշմարի՛տ էր սա: Վարդանն արդեն այս ժամիս պարզ՝ ինչպես և այն ժամանակ շատ ազոտ՝ տեսնում էր, որ ճշմարիտ չէր դա: Մի՞թե կկորչեիր ժողովուրդը: Ոչ: Ժողովուրդը կմնար շարունակելով պայքարը: Այսպես է ապրել ժողովուրդը: Ժողովրդի կյանք— դարերի կյանք. կապեր դարեր և սերունդ-սերունդ պայքարելով կտաներ հետք ազատութեան խորհուրդը և մի օր մի տեղ կհասցնեիր իրեն ազատութեան հանգրվան, այն սերունդը կապեր իր հին պապերի դարավոր անվերջ պայքարի գնով՝ նրանց փոխարեն: Ահա ժողովրդի կյանքը և նրա խորհուրդը:

Դիմացը մթության շղարշի մեջ ավելի մթին մթնում էր Մասիսը՝ իր մուսլ հավերժական մի խոհի հետևից ընկած: Ի՞նչ էր այդ խոհը, — հավերժություն: Մասիսը միայն կարող էր այդ խորհել. նրա ուժը հենց այդ է միայն: Ինչ անցավոր է, ինչ մահացու՝ գործ չունի հնամենի լեռան հետ:

Վարդանը մտախոհ նայում էր Մասիսին՝ կարծես հոգու աշքերով ջանալով տեսնել այն ջահը, որ առանց պարանի կախված է երկնքից լեռան գլխին: Հիշեց, որ մանկութ լսել էր իր դայակից, որ քանի կա այդ անմար ջահը, հայ ժողովուրդը պիտի ապրի: Հրաշք է այդ անպարան ջահը — իսկ հրաշք չէ՞ և այդ ժողովուրդը, որ ահա, ապրում է առանց հզոր պաշտպանության... Մեծ խորհուրդ կա այս Մասիսի մեջ: Ահա այս Մասիսի շուրջն է աշքը բաց արել ժողովուրդը, նրանով է կրթվել, նրանից է սովորել հավերժությունը: Դարերով այդ հսկա իմաստունը վեճ խոհեր է ներշնչել իր ժողովրդին: Նա, այդ հսկան, հողից է բարձրացել, ինչպես ժողովուրդը: Ո՞չ. ժողովրդի կյանքի մասին երկյուղ չպետք է կրել: Նա կապրի՝

«Պետք է վճռապես տանել նրան պատերազմ», — խոսեց Վարդանը յուրովի, — «թող կովի, չի ոչնչանա... Եվ եթե ինքը, Վարդանը, չի փրկվի այն կեղտից, որ վերցրեց իր վրա թշնամու առջև, «առաջի մարդկան», եթե զուր է, այլևս ոչ ոք չի կարող կատարվածը չկատարված անել, թող ուրեմն ժողովուրդը մնա մաքուր, մաքուր գնա սխրագործություն: «Երանի՜ թե քավվեր մեղքս փրկելով հայոց ժողովուրդը» մրմնջաց նա մեղմ: — «Իսթա՞ն դժվար է հայոց ժողովրդի փրկությունը. սխրագործությունն է նրա փրկությունը. տևական, սերնդե-սերունդ սխրագործություն, մինչև կբացվի ճշմարիտ ազատության դուռը»:



Մանր էր գիշերը նաև Վասակի համար: Նա վճռել էր գործի անցնել Զարեհավանում: Դա առաջին քայլն էր իր բացահայտության Վարդանի հանդեպ: Նա պիտի թողներ իր երկդիմի խաղերը և անցներ որոշություն: Նրան էին նայում Հազկերտը, Միհրնբր-սահը, մոգերը, վասակյանները և... երկիրը... բայց ո՞ւր էր գնում նա այս ճանապարհով: Այս հարցմունքը այլևս պարզորոշ կանգնեց նրա առջև: Դա կոչվում էր դավաճանություն իր երկրին...

Պոնն այդպես էին կոչում Հայոց աշխարհում այն գործը, որին նվիրվել էր ինքը: Բայց ի՞նչ էր իրոք այդ գործը: Ահա այժմ, հրք նա անցնում էր վճռական քայլի՝ նա մի անգամ ևս դրեց իր առջև այդ հարցմունքը և սկսեց խորհրդածել դրա մասին: Նրա միտքը բորբոքվել էր, թռչում էր, որոնում:

Տաղավարի մեջ թրթռում էր յուղի ճրագը, և Վասակի ստվերը թոցնում վար ու վեր և աջ ու ձախ: Նա աչքերը սևեռած մի կետի՝ մտորում էր: Ի՞նչ էր իր վերջնական նպատակը... Ստեղծել մի ուժեղ նահանգ Պարսկաստանի մե՞ջ, ինչպես ասաց նա մի անգամ Փաղիշոյին: Դատարկ բան է: Դա շատ անհաջող մի խոսք էր, որ թռավ նրա բերանից, ավելի շուտ ծածկելու իր իսկական միտքը: Ուժեղ նահանգով գլուխ շես պահի: Ուժեղը կթուլանա, թույլը կուժեղանա, բայց միշտ էլ կմնա կախված մի մեծ տերության քմահաճույթից: Ո՛չ որևէ ուժեղ նահանգ: Անկախ, ուժեղ իմ տերությունը, — ահա սա արժե ունենալ իբրև նպատակ և ձգտում: «Անկախ, ուժեղ իմ տերությունը...» — շնչաց նա հագիվ լսելի նույնիսկ իրեն:

Վասակի թավ հոնքերից վերև դուրս ընկած ճակատը կարծես առաջ էր մղում դժվարին մտքերի մի երամ: Նրա խելացի ծակող աչքերը հառած էին դեպի գիշերային խավարը, — որի հորիզոնում Հայկական Պարի կարավանը իր սապատները կարկառած գնում էր դեպի արևմուտք: Հանդիսավոր բացվել էր երկինքը, ուր բորբոքվել էին ջերմաջեմ աստղերը՝ իբրև կրակե մտքեր: Այդ տիեզերքն էր, որ խորհում էր իր ահռելի խոկը: Իսկ ներքև, Վասակի դիմաց, խստորեն կտրտվել էր երկիրը բնության խստադաժան կամքի սիրով: Ժայռեր, ծործորներ՝ համառ, բիրտ, բուրբի մեջ զգացվում էր մի անդամադրելի կամքի և վստահության մի անգամ ընդմիշտ արտահայտված ուժ:

Վասակը մտքով գնաց դեպի վեր, իր հայրենի լեռները, որոնց նայելիս միշտ զգացել էր այդ անսանձ կամքը: Փա՛նի, քա՛նի ճանապարհներ էր կտրել անցել նա իր հայրենիքում: Այրարատում, Կորդաջքում, այլուր Հայաստանի այս խստադաժան մակերեսում և միշտ ու միշտ նրան էին հառել իրենց հրամայող աչքերը այս լեռներն ու ձորերը, ժայռերն ու անտառները: «Պետք է լինի, պետք է կատարվի», — այդ է ասել ամեն տեղ նրան երկիրը:

«Անկախ, ուժեղ իմ տերութիւնը»,— կրկնեց նա և մազոտ ձեռքի բռունցքը դիմահար դրեց կզակին ու թեքվեց՝ հայացքը խաւարին հառած: Ազատել Հայաստանը պարսիկներից և հույներին: Դա հնարավոր չէ բացեփրաց պատերազմով. դա հնարավոր է այլ կերպ... դանդաղ, բայց անշեղորեն սողոսկելով, սպասելով, գույնը փոխելով անդադար ձգտել նպատակին: «Զուրը ծակում է քարը ոչ թե ուժով, այլ հաճախակի կաթումով»: Իսկ ա՛յժմ... Այժմ պետք է մեջտեղից հանել այդ մուկզնած տարոնացուն, ճնշել ապստամբութիւնը, պարսիկ զորքերով գրավել երկիրը: Հետո կսկսվի պարսկացումը: Թ՛ող... պարսկանալով ազատվենք պարսիկներից: Կլինի՞, չի՞ լինի, ինձ թագավորութիւն է պետք: Ի՛մ թագավորութիւնը, և ե՛ս՝ թագավոր: Պարսիկներից, հույներից ազատ, անկախ, ի՛նձ համար ամեն ինչ: Կհակառակն՞ն, չե՞ն տա: Այդ դեպքում պետք չի այս հայութիւնը: Կխեղդեմ արյան մեջ երկիրը, կպարսկացնեմ, կծախեմ: Ինձ թագավորութիւն է պետք, և ի՛նձ համար:

«Հասա՛վ օրը» — շշնջաց նա և վեր կացավ ընդոստ, նստեց տաղավարում: Նայեց Վարդանի տաղավարի կողմը: Այնտեղ մուկն էր: Ուրեմն քնած էր խռովարարը: Թ՛ող քնի: Նրա դարը լցվեց: Նրա դարը մինչև Զարեհավան է:

Այնտեղից սկսվում է նոր դար: Վասակի դարը:

Վասակի մտքերը այս գիշեր պայծառացան:

Դժվարը դյուրին դառավ: Վերջապես փայլեց նրա աստղը: Նա լցվեց գործի, հաջողութիւն, փառքի և վայելքի կրքով: Եվ դարմանալի է,— աղոտացան նրա զավակների կերպարանքները: Նրանք դառան ինչ-որ պատկերներ, ոչ հողանյութ արարածներ: Ռճրագործութիւն մշուշը սքողեց նրանց: Նրանց ազատութիւնը դառավ դյուրին, մի հարվածի գործ: Արդեն իսկ ամեն ինչ գառավ դյուրին: Կիրքը վարագուրեց Վասակի աչքերը գեղագույն ծիածանով:

Վասակը խոր հառաչեց: Ապա պառկեց անկողնին, մեջքի վրա: Նա աչքերը գոցեց, բայց չէր քնում: Նրան հաճելի էր արթնութիւնը, որ հակառակ քնի՝ ինքն էր կրում երազը: Նա օրորվեց այդ երազի հոլովումներով: Վասակի ականջին չէր հասնում ծրարի գնդերի գիշերերգը, հովի շվշվոցը և մի ուրիշ գալիքի ձայն, անհայտ ու ահավոր:

Դուրս եկավ տաղավարից: Նայեց դեպի հարավ: Դիմացը տատղերի մի հույլ կրակե կարիճի նման մազլցում էր երկնքի թավիշ կապույտի: Վրա: Մյուսները դողդողում էին, թարթում իրենց ճառագայթե արտևանունքները և նայում հավիտենության աչքերով:



Լուսադեմին Գագիշոյի և Ռշտունյաց նախարարների տաղավարների մոտ խլրտացին իուսափուկ ստվերներ: Դրանք սուրհանդակներ էին: Գագիշոն ներս կանչեց իր սուրհանդակին:

— Հա՛, ի՞նչ կասես,— հարցրեց սառն ու հանգիստ:

— Տե՛ր իմ, ետրեն իշխանը Գնունյաց Ատոմ իշխանի հետ զորագնդից ջոկատ հանեցին և գնացին Տարոն: Մենք հետևեցինք նրանց մինչև Ռշտունիք, Մոկք և Արծրունիք: Ամեն տեղից ջոկատ հանեցին ու ճանապարհ ընկան այս կողմ:

— Իսկ դուք ուղտի ալանջումն քնե՛լ էիք,— հարցրեց վե՛ր նայելով և կրկին հանգիստ Գագիշոն,— աշխարհի ծայրի՞ն էի... ինչո՞ւ ուշացար:

— Տեր իմ, մենք ճանապարհվեցինք կարճ՝ ուղիղ Արտազ:

— Ավելի կարճը աշխարհի ծայրն էր: Գնայի՛ք էլի՞... Մյուս խելոքներն է՛լ քեզ հետ էին...

— Այո, տե՛ր փմ...

— Այ՛ տ՞ք շղիմազրեց Գնունյաց տիրոջը:

— Ոչ՝ ոք, տե՛ր փմ, սիրով հանձնեցին ջոկատը:— Դե, ետրեն իշխանը հետներն է...

— Այդքան խելքը, որ կարողանում ես գլխումդ կրել՝ շատ ուժեղ գրաստ ես... Գնա՛...

Սուրհանդակը հեռացավ:

Քնկոտ ուռած աչքերով ներս մտան Ռշտունյաց Արտակը՝ իր համախոհ քեպուհ Ջանդաղանի հետ, որ հնար էր գտել Ատոմի մոտից փախչել և գալ իր նախարարի մոտ:

Նա հաղորդեց Ջանդաղանի պատմածը: Ատոմի հանդընության լուրը այնքան էր զայրացրել նրան, որ նա կանուխ վեր էր կացել անկողնից:

Զանդազանը շտապել էր Արտակ՝ Ռշտունուն հայտնել, որ Գեգեոն սեպուհը Ատոմ նախարարին հնազանդելուց և ջոկատ տրամադրելուց զատ նաև արգելել էր, որ իրենց ջոկատը Զարեանդ գա:

Դա կատարեցրել էր Արտակ Ռշտունուն: Նա դողում էր զայրույթից:

— Իմ զորագունդը ի՞մ գեմ բերի, իմ զորագունդը ետ դարձնի ի՞նձ օգնութեան գալուց... Ես նրան մորթալեմ՝ ո՞ր պիտի անեմ...

Զանդազանը պատմեց Ռշտունյաց ժողովրդի համակիր վերաբերմունքի մասին դեպի Ատոմը, որով ավելի բարբոթեց քնած Արտակի արգեն մինչև հոգու խորքը վիրավորված ինքնասիրութունը: Գաղիշոն մոռացվեց:

Նրանք գնացին Վասակի մոտ:

Նախարարները՝ վասակյանք և վարդանանք նստած էին Վասակի վրանում, երբ սրահ ներս մտավ սպասավորը.

— Դենշապուհը, տե՛ր իմ:

Վասակը ընդոստ ուղղվեց տեղում և ա՛հանգիստ.

— Հնգառաջ, օ՛ն, հրավիրի՛ր:

Վարդանը մոռացվեց: Իրար նաչեցին անհանգիստ Հազարապետն ու Ներշապուհը:

Ներս մտավ Դենշապուհը, որին ուղեկցում էին Դարեհը, Որմիզդ և Միհր մոզպետները և մի սեպուհ, որ Վասակի ազգականն էր, որի կապակի կերպարանքը գրավեց ակամա բոլորի ուշադրութունը:

Դենշապուհը ծանրումեծ խոնարհութուն արեց և կեղծուպատիր ժպտող ծամածուռ դեմքը դարձնելով բոլորին աջ ու ձախ ու դիմացը՝ ձիգ տվեց.

— Ողջույն տերանց Աշխարհին հայոց: Խնդրե՛մ և խաղաղութուն:

Վասակը նույնպիսի ծանրակշիռ ձեռքով դիմեց նրան.

— Մե՛ր և հե՛շեհճամութեան: Բարբ ծամու ծամանեցից: Հրամայեցեք, տյա՛րք:

Դենշապուհը կեղծավոր ու փքուն խոսքերով շնորհավորեց նախարարների դարձը զբաղաշտական կրոնին: Մոզպետը օրհնեց նախարարներին: Իսկ Վեհմիհրը՝ ուրախ, որ Դենշապուհին աչքն է

չաշողվեց հայերի ուրացութեան գործում և դա զուիս պիտի բերեր ինքը կամ ծայրահեղ դեպքում Վասակը, անկեղծորեն և ցույցի ձևով հայտնեց իր բերկրանքը նախարարների ժամանման:

— Ժամանակի՛ն հասաք, տյարք, ամեն ինչ քայքայվել էր, — ասաց նա՝ խայթելով Գենշապուհին:

Գենշապուհը ցույց տվեց, որ չի լսում նրան: Ավելին դեռ, նա իսկույն սկսեց ղեկավարի դեր ստանձնել, ներկայացնել իրեն Հազկերտի և Հազարապետի նշանակած ամենաբարձր պաշտոնյան, որին ենթարկվում է նաև մարզպանը:

— Ես ձեզ սպասում էի և պատրաստել եմ ամեն բան դուրացնելու գործը, — ասաց նա Վասակին, — գրավել եմ բերդերը, ճնշել ըմբոստների: Քեզ մնում է միայն շարունակել սկսածը:

Վասակը խեթ նայեց վրանից դուրս և միայն քթի տակ մըռմըռաց շար ու մռայլ:

— Երբ գործի կանցնենք, կերևա, որ նոր են սկսվում դժվարությունները...



Անզղի արևմտյան ճանապարհին երևաց ստվար բազմութեան մի զանգված, որ սև թուխպի պես գետնի երեսով գնում էր դեպի քաղաքավանը: Բարձր փոշու սյուները, որ օրորվում էին բազմութեան գլխին՝ ցույց էր տալիս, որ նրա հետ խառն գալիս էին հեծյալների խմբեր:

— Ահա՛, աչքներս լո՛ւյս, եկավ հայտնվե՛ց, — ասաց ոչ առանց հեզնանքի Հազարապետը Վարդանին, — ժողովուրդն է, — ջատրաստիք պատասխանը:

— Ի՛նչ է, ի՛նչ բազմություն է, — հարցրին նախարարները և դուրս եկան տաղավարներից: Արտակը եկավ կանգնեց Վարդանի տաղավարի առջև: Վարդանը մռայլվեց, դուրս եկավ տաղավարից և ափը հովանի բռնելով ճակատին՝ սկսեց դիտել մոտեցող բազմութեան: Նկատելի էր, որ վանականի նման մեկը գալիս էր բազմութեան զուիս անցած: Հազիվ էր նշմարվում նրա կերպարանքը. բայց Վարդանը բնազդաբար զգաց, թե ով էր նա: Եվ գունատվեց:

Եկեղեցում սկսեցին սաստիկ կոչնահարել: Այդ հասարակ և ղաղաթանոթ հնչյունները, որ այլ ժամանակ միայն խաղաղու-

թյուն էին բերում մարդկանց հոգուն՝ ցնցեցին կարավանում նրստածներին: Դրանք հիշեցրին Արտաշատը՝ կարծես կրկին պատարաստվում էր մի թափոր՝ իր մոլեգնած Ղևոնդ Երեցով և ցասումնալի ժողովրդական բազմությամբ: Դա ընդունվեց իբրև մարտահրավեր ժողովրդի կողմից կարավանին: Կարավանը լարվեց: Մոգպետն իրար անցավ, կանչեց պարսիկ հրամանատար Դարեհին ու մոգերին և սկսեց նրանց կովի կոչել անհավատների դեմ:

— Կուր տանք ժողովրդին, բացահայտվենք, թերևս հանդարտվի,— ասաց Շմավունը:

— Ավելի վատթարը կպատահի... Այս պահիս դա կնշանակի կրակի հետ խաղալ,— ասաց Հազարապետը սարսափով... Ըլուրը կայծակի պես կթռչի երկիր և խառնիճազանչ խոտվությունը կբարձրանա...

— Ոչ, այդ անկարելի է, ի՞նչ բացահայտություն,— դառն ժպտաց ներշապուհը:

— Բայց մի բան պիտի անենք, Սպարապետ,— դիմեց Վարդանին Հազարապետը,— մարդ ուղարկենք՝ ետ կացնեն անմիտ քայլերից:

Վարդանը բռնկեց.

— Ի՞նչ, հայոց ժողովրդի՞ն էլ եք ուզում տանել «առերես» ուրացության... Նրա խի՞ղճն ևս ուզում եք ծախել... Թողեք, նա դրան չի գնալ: Հայոց ժողովուրդը գիտե իր անելիքը:

— Բայց նա գալիս է սպառազեն զորագնդերի դեմ,— բարկացած շեշտեց ներշապուհը:

— Ոչինչ, նրա էլ հոգին է սպառազեն,— հեզնեց Վարդանը և ժպտաց դառնությամբ:

Նրանցից մի փոքր հեռու Վասակն էր յուրայիններով դիտում ժողովրդի խուժումը Անգղ:

— Գալիս են զանգվածներով, արհամարհանքով դեպի մահը...— մռնչաց ինքն իրեն Վասակը,— հանդեսի՞ են գալիս, տանակատարությամբ...— Եվ սկսեց դառնությամբ ու մոռյլ դիտել ժողովրդական զանգվածների անընդհատ հոսանքը դեպի քաղաքավան,— և ի՞նչ հանդուգն, աներկյուղ, հանգիստ... Զգիտե՞ն ուր են գալիս, շե՞ն մտածում, շե՞ն տեսնում...

Բայց ժողովուրդը գալիս էր անընդհատ, ստվարացած, բազապանալի չափեր ընդունելով:

Վասակը իրարանցման մեջ ընկավ: Այս բաղմուռյան խուժումը բոլորովին խառնում էր նրա գործերը: Նրա վճիռը՝ Զարեհավանում տալ հարվածը՝ վտանգվում էր: Նա վճռեց շսպասել Վարդանի ընթացքներին և ժամեծամ շսպասել պարսից բոլոր ուժերի գումարման՝ Զարեհավանում: Թեկուզ այս ժամին կամ մի ժամ հետո, Սյունիի զորքը հասնելուն պես գործադրել մտադրությունը՝ ոչնչացնել կամ կալանել վարդանանց և ճնշել ապստամբությունը:

Սկսվեց մի զուսպ, բայց հույժ տազնապալի վիճակ. ըսպասել զորագնդերին և միաժամ իրեն ցույց տալ արտաքուստ անտարբեր, անմտադիր, միամիտ: Սակայն իրարանցումը սաստկացավ քաղաքավանում: Նկատելի էր, որ այնտեղ իրար էին հանդիպում զանազան կողմերում խմբված զանգվածներ և հրահրում իրար:

Մի հեծյալ մարդ պոկվեց բաղմուռյունից և սկսեց նրբորոշավ գալ դեպի կարավանը: Վասակը դուրս նայեց տաղավարից՝ իմանալու, թե ինչ պատահեց: Երևույթը անհանգստացրեց նաև Վարդանին: Նա ևս դուրս նայեց:

Հեծյալը մոտեցավ: Հստ երևույթին նա կամենում էր Վարդանի հետ խոսել, բայց Վասակը հայացքով կանգնեցրեց նրան:

— Հայտնի՛ր, ի՞նչ լուր է...

Հեծյալը մի պահ տատամսեց՝ Վասակի հրամանից ազդված, բայց դիմեց Վարդանին:

— Տեր Սպարապետ, Մամիկոնեից Մեծ Տիկինը, մյուս տիկիներին հետ եկան...

Վարդանն ալլալվեց: Դա վեր էր առնեն սպասածից: Դա արդեն տաժանելի էր:

Ո՛ւր էր գալիս... Ինչո՞ւ էր գալիս... Ահեղ դատաստան կըտրելու:

Ո՛հ, այդ սիրելի, խոր, ուժեղ, սարսափելի՛ մայրը...

Տաղավարում ծանր օդ էր, կաշկանդիչ լուռություն, ինչպես փոթորկից առաջ: Ամենքը լարված սպասում էին փոթորկի պայթելուն: Ճնշող էր կեղծիքն ու բռնադատված վիճակը: Երբեք այդպիսի կոպիտ երևույթով չէր սքողված Վասակի և Վարդանի ոչ մի յաջողունական տեսակցություն, երբ երկուստեք զգացին այսքան բաց, խոսուն արհեստականություն:

Դրութիւնը ծանրացրեց սյունեցի նորեկը: Իբրև Վասակի մոտիկ ազգական սեպուհներէից մեկի երիտասարդ գավակը՝ նա աղատ էր գգում իրեն: Նա Տիգրոն էր եղել վերջերս, ուր լսելով նախարարների ուրացութիւնը՝ շտապել էր գալ Հայաստան: Հասնելով Պարսկաստանի Զարևանդ գավառը և լսելով, որ նախարարները գնացել են Հայկական Զարևանդ՝ ճանապարհը թեքել էր այս կողմ: Երևում էր, որ կյանքում շատ է շփվել պարսիկ պալատականների հետ և առավել շատ շաղակրատել նրանց շքուշանում: Նա իր մկրտութիւն Ստեփանոս անունը Պարսկաստանում վերմկրտել էր Պերոզ-Վշնասպ-Տիգրոնի նոր հորջորջմամբ: Նա կարճ պարեգոտ էր հագել պարսիկների նման: Մազերն առատ էին, երկարավիժակ և ինչպես ասում էին՝ «բաջազանգուր», որ պսակած և հավաքել էր գլխի շուրջը: Նրա դեմքը կանացի էր և հիմարավուն մի մշտածպիտ հորթային հրճվանք էր դրսևորում նրա ողջ էութիւնից:

— Վեց տարի Տիգրոն էի, — ասաց Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին, — շատ պաշտոններ առաջարկեցին՝ շքնդունեցի: Արքայից արքան մի հանդեսի ժամանակ նայեց ինձ. կարծեմ տեսավ: Երբ այս մասին հայտնեցի Հազարապետի սպասավորին, նա ասաց, որ արքայից արքան իրոք տեսավ: Մեծ վեճ ծագեց այս մասին: Սպասավորների մեջ մի խոհարար, որի հետ ես ծանոթացել էի արքայից արքայի խոհանոցին մոտիկ մի շենքում՝ հաստատեց անկասկած և անխախտ, որ արքայից արքան տեսել է ինձ... Շատ բախտավոր օր էր...

Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին հիմարական երազանքով հոգոց հանեց և աչքերը լցվեցին լիզող սողունի քծնախտից:

— Մեր սեպուհները բիրտ են, — շարունակեց Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին, — եթե նրանք ինձ պես պտտվեն պալատի շուրջը, զրուցեն, ինչ կա որ, ամեն մի խոհարարի, ծառայի, մանկավիճի, ներքինու հետ՝ շատ ավելի գիտուն մարդիկ կդառնան, քան որ հիմա են: Մարդ պետք է մի տեսակ խելացի դառնա: Մի փոքր նվաստացնում են՝ համբերիր, ծաղրում են՝ տար. գլուխդ խոնարհ պահիր՝ կբարձրանաս մի օր: Պարսիկ մեծամեծներն ինչպե՞ս են բարձրացել: Խեղճ — ահա՛:

Նախարարների լարված ու անախորժ լուութիւն մեջ Պերոզ-Վշնասպ-Տիգրոնի շաղակրատանքը ուղղակի գրգռել էր և զզվե-

լի: Նա պոչով պչրող սիրամարզի պես սկսեց փռել իր բոլոր բարեմասնությունները և պարսիկ ազնվականի հովեր առած՝ սեթևեթև: Նա պատմում էր անկապ, այստեղից-այնտեղից և ընդհանուր լուսթյունը ընդունելով հետաքրքրության տեղ՝ սկսում էր ավելի ու ավելի քաջալերվել: Նրան շատ աշխուժացրել էր նախարարների ուրացությունը:

Ոչ ոք նրան չէր ընդհատում, ոչ էլ առարկում կամ փայտակցում: Վարդանը չէր լսում նրան և չէր արժանացնում նայել նրան: Մի քանի անգամ Պերոզ-Վշնասպ-Տիգրանին հարց տվեց Վարդանին և պատասխան չստացավ: Վարդանը նայում էր տաղավարի դռնից դուրս դեպի դաշտերը, ուր խլրտում էին ինչ-որ հեծյալներ: Վասակը նույնպես իր մտքերի հետևն էր ընկել: Նա մի ականջով լսում էր իր ազգականի շաղակրատանքը, բայց իր ինքնասիրության շէր վայելցնում նախարարների ներկայության ընդհատել նրան կամ նկատողություն անել: Գյուտն ու Մանեճը կարծես հետաքրքրված էին լսում նրան: Փաղիշոն մռայլ նայում էր նրան և շար հայացքը սևեռած սպասում էր, որ նա վերջ տա շաղակրատանքին: Միայն Արտակն էր, որ լարված լսում էր նրան և հետզհետե կլանվում նրա պատմածներով: Բայց հեռվում բազմությունը քանի դնում ստվարանում էր: Շուտով այնքան մեծացավ նա, որ նոր տարակուսանքների դուռ բացեց Վասակի համար: Նա աճում էր ինչպես հեղեղ, լցվում էր հեղեղ հեղեղի մեջ և սկսում էր դառնալ առեղծված.— ինչե՞ր չէր կարող անել նա: Մի առժամ հետո ժողովրդական զանգվածներն այնքան սպառնալի շափերի հասան, որ անմտություն էր այլևս մտածել նրա ոչնչացման մասին:

Վասակը նայում էր տաղավարից դուրս: Սկզբում նրա մըտքերն այլ տեղեր էին. սակայն՝ ինչպես եղավ՝ նոր հիշեց նա մի բան, նոր անդրադարձավ, որ Արտազից սկսած մինչև Անզղ շարունակ նրա հետևից և կողքերից, լեռների լանջերով, հեռու մոտիկ եռում էին ինչ-որ սևինքներ, որ մերթ ստվարանում էին, մերթ նվազում, երբեմն էլ անհետանում էին, կրկին հայտնվում: Վասակը տեղյակ չէր, որ այդ հեծյալ և հետևակ ուղեկիցները՝ պրկված երկրի հեռավոր ու մոտիկ վայրերից՝ ուղեկցում էին նաև Ատոմին, Գենշապուհին, պարսիկ զորքերին, տեսնվում էին իրար հետ, լուր տալիս իրար և կրկին ուղեկցում, ուղեկցում ան-

դադար: Նրան զարմացրեց և զայրացրեց առավելապես այն հանգամանքը, որ ժողովուրդը զալիս լցվում էր մի տեսակ հանգիստ համառությամբ, առանց հարցնելու թույլտվություն, իրավունք, առանց հաշվի առնելու արգելք, վտանգ, մահ...

«Ողջ ժողովուրդը պիտի ջնջենք»,— նայելով բազմության ինքն իրեն խոսեց Գաղիշոն,— «մեզ երկիր է պետք, ոչ թե նրա բնաջնջումը»:

— Անիծի՛ց արմատներ, — մոմոաց յուրովի Վասակը մոայլ ու անհանգիստ:

Այո, ժողովրդական բազմությունը դառնում էր և՛ վտանգավոր, և՛ մտահոգիչ մի նոր հանգամանք Վասակի ձեռնարկների մեջ: Շուտով կգան իր և մյուս վասակյանների զորագնդերը: Կտան հարվածը: Իսկ եթե մեջ խառնվի այս մոլեգնած բազմությունը... Վասակն զգաց, որ սառը քրտինքը պատում է իր ողջ մարմինը և հոգին...

Նա վճռեց այսպես: Կգան իրենց զորագնդերը, Վասակը բուլոր ուժերը ի մի գումարած կկանգնի ոչ միայն Վարդանի, այլև ժողովրդի առաջ, սարսափով կբռնադատի Վարդանին և մյուսներին հնազանդել այդ ուժին, և Վասակը կխուսափի արյունահեղությունից:

Այլապես ամեն ինչ կդառնա արյուն ու ավեր...

Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին այդ ընթացքում ժավալել էր իր անլուռ շաղակրատանքը: Նա խոսում էր բացառապես պարսկերեն.

— Ատրվշնասպ իշխանը շատ քաջալերեց հայերի ուրացումը: Ինքը անձամբ հայտնեց ինձ իր ուրախությունը: Այսպես նրատած էինք. նա այստեղ, ես՝ դիմացը երկու քայլ հեռու: Ուղղակի ժպտաց և ասաց. «լավ է, լավ է»: Սո Տիգրոնից հատուկ մոգեր եմ բերել մեր ընտանիքի և ազգական սեպուհների համար: Թեև ես իմ զավակին կտանեմ Տիգրոն, որ հայերենը մոռանա, քանի որ մինչև հայերենը շմոռանա՝ լավ պարսկերեն չի սովորի: Դե, մենք հիմա այլևս հայ չենք, մենք պարսիկ ենք: Պետք է պարսիկից էլ լավ պարսկերեն...

Հանկարծ մի կփու ապտակ շառաչեց տաղավարի լուռության մեջ: Դա Արտակն էր, որ վեր թռավ ավելի արագ, քան կմտածեիր այդ մասին և կայծակնային շանթի պես հասավ Պերոզ-Վշնասպ-Տիգրոնիին: Ու մինչ վերջինս հիմար դեմքից կթափահարեր եզին-

չի պես այտերն այրող ապտակի կսկիծը՝ Արտակը խեց նրա  
թևը, ցնցահար ուժով բռնց դեպի դուռը և ուժգին թափով  
չարտեց դուրս շորս հինգ քայլ հեռու, Պերող-Վշնասպ-Տիգրենին  
բերանբսիվայր փովեց գետնին և ուշաթափվեց:

Վարդանը շնայեց անգամ այն կողմը: Իննշապուհը ցնցվեց,  
գայրացած նայեց Վասակին: Մյուսները զարմացած հայացքները  
չբցեցին Վասակին: Սա ևս շարժում չարեց. այլ միայն կարմրեց  
մինչև ակառջատակերը: Արտակը գնաց նստեց իր տեղը և մնաց  
նույն դիրքի մեջ, ինչ մի բույն գրանից առաջ:

Վասակի սենեկապետը մի քանի սպասավորներին հետ ար-  
կածյալ սեպուհին բարձրացրին և տարան հարևան տաղավարը:

Բուրդը զգացին, որ Արտակը շատ հանդուգն և նվաստիչ վար-  
մունք ունեցավ: Եվ սպասեցին, որ ահա Վասակը կպտռվի և  
իրարանցումը, թերևս ընդհարումը կսկսվի: Իրոք շատ անվայել  
էր սա Վասակի և պարսիկ մեծամեծների հանդեպ: Արտակը բառ  
էության ծեծեց Վասակին և այս անարգանքը նրան հասցրեց:  
Բայց Վասակը զսպեց իրեն՝ դրանով պաշտպանելով իր ինքնասի-  
րությունը: Վարդանը շարունակեց անտարբեր նայել դուրս և ոչ  
մի շարժում չարեց՝ արտահայտելով կատաբյալ արհամարհանք  
գեպի Վասակը: Մյուսները, որ դեռ սպասում էին ընդհարման և  
մտածում էին իրենց՝ անելիքը՝ զարմացած նայեցին Վասակին:  
Եվ հասկացան: Վասակը պահեց վրեժը, հետո լուծելու հաստատ  
վճռով: Նա հպարտ արձանացավ իր տեղում, Վարդանը ևս...

Բայց ամենքը հատկացան, թե ինչ անցավ յուրաքանչյուրի  
մտքով: Եվ լռեցին: Միայն ոմանք հազացին և նստած տեղերը  
դիրքերը փոխեցին: Երկար ժամանակ լուռ էին:

— Պատահո՞ւմ է արդյոք, որ կաշաղակը վեթջապես մի փոքր  
լուռ է, — հարցրեց Հազարապետը կարծես ամենքին դիմելով, —  
ասում են նա երբեք չի դադարում կշկշալուց...:

— Ոչ, այդ էլ է պատահում երբեմն, — ասաց Շմավոնը, — և  
պատահում է ստուգապես երբ նա... սատկում է:

— Հա՛հա՛հա՛... — արեց Հազարապետը և թունալի հայաց-  
քով նայեց Վասակին:

Վասակը վեր կացավ և հարգալից ողջունելով նշան տվեց  
խորհրդակցության ավարտին: Վարդանը հարգանքով հրաժեշտ  
տվեց նրան: Հեռացան նաև բուրդը նախարարները:

Գենշապուհը ճնշելով իր գայրույթի պոռթկումը՝ գարձաֆ  
Վասակին.

— Սա ի՞նչ բան էր, տեր մարդպան...

— Այո, տյարք, հիմար ազգականը մարդու համար մարմ-  
նական այլանդակություն է, դժբախտաբար անխուսափելի...

— Բայց իշխանը մեզ ամենիս վիրավորե՛ց...

— Այո, բայց մենք էլ չե՛նք վիրավորվի:

Գենշապուհը շարությամբ կծեց շրթունքները:

— Իշխան,— ասաց Վասակը արժանավայել հանգիստ,—  
արքայից արքան մեզ չի ուղարկել այստեղ դատարկ առիթներով  
ազգամիջյան պատերազմներ վարելու: Զինվեցեք ընդարձա՛կ  
համբերությամբ...

Պարսիկները հեռացան:

Հանկարծ վիճակը դառավ միանգամայն տագնապալից: Միհր  
մոգպետը՝ քաջալերվելով Որմիզդ մոգպետից, Գենշապուհից,  
Վեհմիհրից և Դարեհից, անտեսելով Վասակի աստիճանն ու պաշ-  
տոնը՝ ոտքի հանեց ողջ մոգական մոլեռանդ բազմությունը:



Եռուն բազմությունը, որին գլխավորում էին Եղիշեն, կաթո-  
ղիկոսը, Եզնիկ Կողբացին, Ղևոնդ Երեցը, մտավ Անզղի փոքրիկ  
եկեղեցին և ծովացավ նրա շուրջը:

Բազմությունը մի այլազան խառնուրդ էր շինականների, ար-  
հեստավորների, վանականների և այլ զբաղմունքի տեր մարդ-  
կանց: Դրանց մեջ հատուկ տեղ էին բռնում շինական այր ու կա-  
նանց զորախմբերը Առաքելի, Պողոսի, Խանդուկի, Ինչպես և իշ-  
խանավորների խումբը Մեծ Տիկնոջ առաջնորդությամբ: Նայելով  
խաչ ու խաչվառով և մահակներով զինված վանականներին՝ Պո-  
ղոսը աչքով արեց Առաքելին.

— Վանք են բացել, խաչ ու խաչվառով խառնվել հետներս,  
մեզ էլ կցել հետները՝ վարդապետ են դարձրել, հե՛, հե՛, հե՛...

— Գրա ժամանակը չի,— կիսամոայլ, կիսաժպիտ ասաց  
Առաքելը,— մենակ՝ ասա կովեն:

— Ի՞նչ խոսք,— հաստատեց Պողոսը:

Շուտով և մթնեց: Կարծես ամեն ինչ սուզվեց անդունդը:

Զինվորյալները հավաքվեցին Առաքելի շուրջը և սկսեցին նա-  
յել պարսիկների կողմը: Առաքելը երկար զննեց պարսից ճամ-  
բարը և դարձավ յուրայիններին.

— Զորքով, մոգերով եկել են: էլ ի՞նչ ենք սպասում: Զար-  
կենք:

— Վճիռդ՝ վճի՞ռ,— աշխուժացավ Պողոսը:

— Վճիռ: Կամ մե՛նք, կամ նրա՛նք:

— Իշխան Ատոմը կտա՞ հրաման,— տարակուսեց Պողոսը:

— Տա՛ շտա:

— Հասնի, ասենք՝ տա:

— Տա՛ ավելի լավ: Մենակ թե հիմի հասնի և շտա՛ հրամանի  
չենք նայի: Պատիկ մի նշան պարսիկների կողմից՝ զարկենք:

Մտան եկեղեցու բակը: Մեծ Տիկինը մյուսների հետ մտա՛վ  
եկեղեցին:

Կաթողիկոսը ընդառաջ եկավ Մեծ Տիկնոջը և ձեռները վեր  
կարկառելով՝ գոչեց.

— Տերը ինքը հասնի քեզ դաժան ժամիս, աղետավոր մայր...  
Համբերի՛ր իբրև նահատակ:

Գահույք մատուցեցին, որի վրա նստեց հոգնաբեկ Մեծ Տի-  
կինը: Մամիկոնյան տիկինը և մյուսները մնացին կանգնած: Մեծ  
Տիկինը մշուշոտ աչքերով նայեց կաթողիկոսին և դեմքի դողահաղ  
ցնցումով բարձրաձայն հարց տվեց.

— Ո՞ւր է Սպարապետ Վարդան Մամիկոնյանը...

Կաթողիկոսը դժվարին ինքնազգացումով կարողացավ միայն  
ասել.

— Սպարապետը կհայտնվի քեզ տեսության, Մեծ Տիկին,  
չուտով, հույս աստված...

— Բռնավորի զորքի՞ մեջ է դեռ...

— ...Մե՛ծ Տիկին, դեռ չենք տեղեկացրել գալուստդ:

— Տեղեկացրե՛ք...

— Անշո՛ւշտ, Մե՛ծ Տիկին, անշո՛ւշտ...

Մամիկոնեից տիկինը լցված էր առանց այն էլ: Հանկարծ  
փլվեց և գոչեց, որ ամենքն իմանան...

— Նա ի՞նքը կգա առանց կանչելու, Մե՛ծ Տիկին, շունի նա  
ռչինչ բան ծածուկ...

«Շուտով, շուտով»,— ասաց մտքում Մամիկոնեից տիկինը,— Քշուտով կբացվի գաղտնիքը և Վարդան Մամիկոնյանի անունը կհնչի նույն սրբությամբ, ինչ որ եղել է միշտ: Իսկ եթե որևէ սողես է պատահել նրա հոգուն, եթե ուրացել է նա հայրենիքը և իրեն՝ այն ժամանակ նա, Մամիկոնյան տիկինը, իր արյունով կլվա նրա անարգանքը»:

«Ծ՛ս կբարձրացնեմ նրա Մամիկոնյան անունը»,— ասում էր ինքն իրեն տիկինը:

Կաթողիկոսը մոլեգնեց, այլայլվեց մոռյլ լուսթյան մեջ և գռչեց.

— Պատրաստվեցե՛ք սխրագործության:

— Արդա՛ր է, ընդունակա՛ն է,— ձայնեց բազմությունը միահամուռ:

Ղևոնդ Երեցն սկսեց ժամերգությունը: Հանդիսավոր լուսթյամբ մարդիկ պատրաստվում էին մարտի ելնել իրենցից զորեղ թշնամու դեմ:

Պողոսը խոր շունչ քաշեց: Նրա սրտից ընկավ մի ծանր բեռ, մահի երկյուղը, ավելի ճիշտ՝ երկյուղը աշխարհի ոչնչացման:

Առաքելը դարձավ դեպի Պողոսն ու հանդուժը.

— Գնացեք ժողովե՛ք ժողովուրդը:

Սրանք գուրս գնացին եկեղեցուց և հեռացան դեպի դաշտը ժողովուրդը հեռու դաշտում շրջապատեց Պողոսին և հան-  
գութին:

— Ի՞նչ վճիռ եք դնում,— հարցրին շորս կողմից:

— Վճիռը՝ դրած է... կամ մե՛նք կամ նրա՛նք,— ասաց Պո-  
ղոսը:

— Հա՛,— միահամուռ ծոր տվեց բազմությունը,— վերջ տանք՝ վերջանա...

— Մեկ՝ մեռնենք՝ լավ է, քան տասը՝ մահին սպասենք,— ասաց հանդուժը,— զարկենք, վերջացնենք շներին:

Եկեղեցում սկսվել էր մաղթանքը, որ հանկարծ դրսից աղմուկ լսվեց: Վազեցին գուրս: Բազմաթիվ կրակներ էին շարժվում դեպի եկեղեցին: Սկզբում զորքի խուժում կարծեցին. բայց երբ բազմությունը մոտեցավ՝ երևացին սպիտակազգեստ մոգերը, որ Միհր մոգպետի գլխավորությամբ գալիս էին ջահերի լուսով ողողված: Մոգերը գալիս էին կրոնական մեղեդի երգելով և մո-

լնգնած դեմքերը սպառնազին դարձրած գեպի բազմութիւնը, որ գնաց պատի պես կանգնեց նրանց դեմ: Խանգութիւն ու Պողոսը հեռացել էին դաշտում և շէին կարող իսկույն հասնել տեղ: Մնացած բազմութիւնը սեղմվեց եկեղեցու առաջ և մի պահ շփոթված թույլ տվեց մոզերին մոտենալ եկեղեցուն: Դրսից և ներսից լըսվեցին ձայներ. «Ո՛ւր, ո՛ւր են գալիս»:

— Քաշվի՛ր, Իրո՛ւխշ, ա՛յա՛ դու անիծապարտ, հասա՛վ կրակն ամենասուրբ,— գոչեց մոզպետը, խցկվեց եկեղեցին ներս և իր մոզերի հետ ճիգ արեց ճեղքել բազմութիւնը: Ի նշան իր իշխանութիւնն նա բարձրացրեց իր խրաֆզդրաղնան՝ գավազանը և կլոր սև աշքերը խոժոռեց բազմութիւնն վրա: Մեծ Տիկինը վեր թռավ տեղից ատելութիւնով ու ցասումով դողացող շրթունքներով.

— Ո՛ւր... — ձայնեց նա սպառնալի:

Անսպասելի ուժով հանկարծ առաջ վազեց Մեծ Տիկինը և գնաց բռնեց մոզպետի թևը: Խոպոտ ձայնով, որից ոչինչ չէր կարելի ջոկել՝ նա սկսեց անիծել նրան և գոչեց.

— Զքվի՛ր, սատանա՛... փարատվի՛ր...

Մոզպետը կոպիտ հարվածով ետ հրեց Մեծ Տիկնոջ, որից նա վայր ընկավ: Կանայք անմիջապէս բարձրացրին անաբգված կնոջը և այն է՝ հարձակվում էին վրան՝ որ մոզպետը վազեց բեմ՝ գոչելով.

— Հանձնի՛ր եկեղեցին, անհավա՛տ...

Ողջ բազմութիւնը մոնչաց: Ղևոնդ Երեցը զայրացավ, բայց չընդհատեց մաղթանքը և երզը փոխելով մի ահեղ գոչի, կովի մեղեդիի՝ մի ակնթարթում՝ վազեց բեմի հետև և այնտեղից իր հոնի գավազանը խլելով՝ շանթալից դուրս ցատկեց, սլացիկ հարձակվեց մոզպետի վրա, և գավազանով հարվածեց նրա գանգին: Սա ցնցվեց: Մոզերը աղաղակելով բռնեցին նրան, որ չընկեր Մոզպետը չընկավ և զայրալի առաջ բռնեց: Մոզերը գրոհ տվին: Ղևոնդ Երեցը կրկնեց ու երեքնեց հարվածները մոզպետի և ապա մոզերի գլխին: Մոզերը ճիգ արին դիմադրել Ղևոնդ Երեցին, բայց սա գավազանի հարվածներով ստիպելով բռնում էր նրանց: Մոզպետը կատաղի հրամայեց.

— Սրբազան ջա՛րդ...

Քայց նա ընկավ: Մոգերից մի քանիսը խլեցին նրան ու դուրս տարան, իսկ մնացածները կատաղի գրոհեցին եկեղեցու ներսում գտնվածների վրա: Սրանք սասանվեցին և կանգ առան: Ղևոնդ Սրեցը առաջ ընկավ և ձեռքով կոշ արեց հետևել իրեն: Քայց մոգերը ուժերի առավելութամբ ճնշեցին բազմությանը և սկսեցին հարվածել:

Դրսից լավեց հարձակվող բազմության ոտնատրոփ: Գա Առաքելն էր, որ գլխավորելով ժողովրդի բազմության՝ խուժեց եկեղեցի և գոչեց.

— Զարդ ու բո՛ւրդ արեք անիժած շներին...

Ու սրամերկ հարձակվեց եկեղեցին լցված մոգերի վրա, սուրը վրա բերեց առաջին պատահած մոգի գլխին: Միաժամ լավեց Պողոսի գոռոցը Խանդուբի խանձված կոնչոցի հետ:

— Զարկե՛ք դրանց...

— Հի՛ ի՛մի՛ ձեր արևը խավարեմ...

Մոգերը դուրս թափվեցին եկեղեցու գավիթը, բազմությունը հետապնդեց նրանց, և սկսեցին կռվել այնտեղ: Մոգերից մի քանիսը բարձրացան պարսպի վրա և սկսեցին կանչել պարսիկ զինվորներին: Բազմությունը այդ տեսնելով ավելի զայրացավ:

— Զո՛րք են կանչում, ելե՛ք զորքի դեմ, — գոչեց Առաքելը և սուրը քաշելով առաջ ընկավ:

Նրա հետևից գնացին Պողոսը, Խանդուբը, Հովհաննես Կարապետը, Սրապը և սկսեցին կոչել բազմության, որ հետևեն իրենց: Բազմությունը դեռ անվճռական էր: Այդ պահին Մեծ Տիկինը մերկացրեց սուրը և պռռավ խռպոտ ձայնով ձայն տվեց.

— Ելե՛ք, հայրենին ձեզ օգնական...

Նա ուղում էր առաջ գնալ, բայց Խանդուբը նրանից առաջ ընկավ, շինականներն էլ լցվեցին, գրոհեցին, ետ թողին նրան:

Սարսափած նրա վիճակով և իր անձով նրան պաշտպանելով՝ գնաց Մամիկոնեից տիկինը և յուրայիններին տարավ իր հետ: Բազմությունը գրոհ տվեց մահվան հետ խաղալու շար գվարթությամբ՝ դրանում գտնելով կյանքի, ապրելու հավանականությունը:

Ժողովրդի ցածմանը հաղորդվեց մի վեհություն և հափշտակություն, որ չէր կարելի նախատեսել, ոչ կանխել, ոչ էլ հասկանալի էր այլ ժամանակի: Գա բռնկեց հասկարժ ինչպես հրդեհ: Ար-

գեն կռվի վճիռը ընդունած մարդիկ շնկատեցին ոչ իշխանազունը, ոչ ուսմիկը, մոռացան իրենց նախկին կապն ու վերաբերմունքը իրար, դադարեցին զգալ նախկին զգուշավորութիւնն ու երկյուզը տիրոջից ու մեծից: Կռիվը բարձրացրեց հափշտակեց նրանց: Տարեհային թափով համառ գնաց բազմութիւնը, խառնվեց, դառավ միապաղաղ մի զանգված: Քշեց տարավ իր հետ իշխանազուններին, իր վրա վերցրեց կռվի նախաձեռնութիւնն էլ, իրավունքն էլ, պատասխանատվութիւնն էլ... զգալ տվեց նրանց ուսմիկի սարսափելի ուժը.. Գեղջկուհիները վազեցին, ընկան Մեծ Տիկնոջ առջև իրենց անձով պաշտպանելու նրան: Առջևից գնաց Մամիկոնեից տիկինը, որ արդեն զգաց, թե հասել է գործելու ժամը՝ կամ արդարացնել իր ամուսնուն կամ ընկնել հենց նրա անվան համար: Հափշտակութեան շունչը բոցավառեց նաև օրիորդներին:

Այժմ կռիվը տեղի էր ունենում գավթից դուրս, բաց դաշտում: Ճամբարից գաղտնի տեղ հասած պարսիկ զինվորներն սկսեցին նետահարել բազմութեանը: Մի գեղջկուհի ընկավ Մամիկոնեյան տիկնոջ կողքին: Տիկինը թեքվեց նրա վրա: Անահիտը հետևեց տիկնոջը և բռնեց վիրավորի կողը՝ արյունը պահելու անմիտ փորձով: Ընկան մի քանի հոգի մոզերից և բազմութիւնից:

Դավադիր նետերը խոցում էին, հարձակվողները իրենց մարմինը խրված նետերը բռնելով քաշվում էին հտ: Աստղիկը, որ ողջ ժամանակ ավելի հսկում էր Անահիտին, Մեծ Տիկնոջ և մյուս տիկիներին՝ հանկարծ նկատեց, որ Անահիտն ընկավ: Աստղիկը ճշայց, բռնեց Անահիտի ձեռքը որ շարժի նետը, ապա նստեց նրա կողքին և սեղմեց իր կրծքին՝ խենթ փորձ անելով արգելել նրա մահը: Մամիկոնեյան տիկինը, որ արդեն վիրավորներին էր հասնում օգնութեան շրջվեց Անահիտի կողմը: Անահիտն ընկած էր և չէր հասկացվում ծանր վիրավոր էր, թե մեռավ:

Հանկարծ մոզերը սարսեցին և հտ քաշվեցին: Բազմութեան մեջ լսվեցին «ճանապարհ, ճանապարհ» և մթան քողը պատռելով երևացին նախարարները: Մոզերը մոտեցան, շրջապատեցին նրանց, և բոլորը լցվեցին եկեղեցի: Չարագույժ բոթի պես խոցեց բազմութեան, երբ Վասակի և Վարդանի, ինչպես և մյուս նախարարների հետ ներս մտան՝ Դենշապուհը, Դարեհը, Միհր մոզպետը, մոզերը և զինվորականները: Մի ականթարթ ուսմիկի բնազ-

դական երկյուղը, որ նրա մեջ կար իշխանավորներից, ետ-ետ մղեց բազմության: Այդ երկյուղին խառնվեց ավելի շուտ այն խորհրդավոր երկյուղը, որ զգացին մարդիկ նախարարների դեմքին՝ նկատելով նրանց մեջ մի վանող խորթացումն: Կարծես դևեր էին դառել նրանք: Բայց այդ բոլոր երկյուղները ցնդեցին իսկույն, երբ Առաքելը մյուս զինվորյալների հետ արագաբայլ ներս մտավ եկեղեցին: Նրանց հետևից կրնկակոխ լցվեց եկեղեցի նաև բազմությունը: Նրանք իրենց անձով պատվարելով բազմությունը՝ կանգնեցին նախարարների դիմաց, պատրաստ՝ վեճի կամ կռվի, ամենևին արհամարհելով նրանցից հասնելիք ամեն վտանգ, խեթ ու կասկածամիտ հայացքները գամեցին նրանց վրա:

Վասակի համար ստեղծվեց մի մեծ տագնապալից վտանգ, թե տեղի կունենար նախարարների բացահայտումը և կպոռթկար ընդհարումը: Եվ աղետը սպասվում էր Վարդանից: Վասակը խոժոռ հայացքով սաստեց պարսիկներին: Բոլորը շունչները պահած դարձան նրան: Վարդանը նայեց մորը և գունատվեց: Վասակին ևս ազդեց տեսարանը: Նա զգաց, որ իրենց դեմ է եկել հայ ժողովրդի խիղճը: Անհրաժեշտ էր ծայր աստիճան խոհեմություն և զուշություն: Բոլորը զսպվեցին և սպասեցին: Սակայն Վասակին մի փոքր հանգստացրեց այն, որ Վարդանը մոռալ ու հանդարտ բռնեց մոր ձեռքը և համբուրեց: Սա խաղաղ քայլ էր և հույս էր ներշնչում, որ Վարդանը կզբաղվեր մորը հանգստացնելով և բազմության թափը կընկներ:

Կանացից ոմանք սկսեցին հեծկլտալ և հոգոց արձակել, երբ Վարդանն ու Մեծ Տիկինն իրար նայեցին: Վարդանը ցնցվեց, ևր նկատեց իր մոր զինավորումը: Ո՛ւր պիտի հասներ կսկիծը, մինչև հոգու ո՛ր խորքը պիտի վիրավորվեր մայրը, որ ոգի և ուժ գտներ գալ այսքան ճանապարհ: Վարդանը ճնշված, խեղդ ձայնով շշնջաց.

— Մայր, ո՛ւր ես եկել...

Մեծ Տիկինը ահով ու կշտամբանքով զննեց Վարդանին: Նրա նիհար կզակը դողաց.

— Տաժանքն՝ ըն է հոգիդ, դժվարն ես, — կերկեր ձայնով ողբաց Մեծ Տիկինը և հանկաղժ դաժանացավ, — չե՛ս վկայել «առաջի մարդկան», դրժե՛լ ես ուխտդ աշխարհին... Ա՛ն հորդ սուրբ, զարկի՛ր մորդ, — գռչեց դողալով և սուրը մեկնեց Վարդանին...

— Ա՛խ, մայրի՛, ախ, մայրի՛,— անլսելի հառաչեց Վարդանը, համբուրեց սուրբ և ալիք Յուզաբերին, որ պահի:

Սակայն Մեծ Տիկինը զայրույթով խլեց սուրբ և դրեց պատյանը:

Սա կաթվածեց ամեն գործողութիւն, որ կարող էր սկսվել նախարարների կողմից: Վարդանը քարացավ: Այն խոսքը, որ պիտի ասեր մորը, կարկամեց: Նրա շուրջը՝ նախարարները, ժողովուրդը, պարսիկները՝ պատերի նման անշարժացան և սպասեցին, թե ինչ կասի Վարդանը: Իսկ նա անշարժացավ և խոշոր աչքերը խոնարհեց գետնին: Նա հոգեկան մեծ ոգորման մեջ էր: Վերնայեց և զգաց մոր ահավոր հայացքը և շրթունքները, որ լուռ շարժվում էին աղոթքի կամ անեծքի խոսքերով:

Այդ պահին ներս բերին Անահիտին, որին գրկել էին Յուզաբերն ու Աստղիկը: Վարդանը շփոթվեց՝ տեսնելով տխրութիւնով համակված մատաղ օրիորդին գինված, ինչպես և զեղջկուհիներին: Տեսարանը սաստեց նաև մյուս նախարարներին, պարսիկներին, մոգերին... Ճնշվեցին և սկսեցին ապշահար դիտել Վարդանների մուտքը:

Վարդանը բարձրացրեց ձեռքը և հարկադրեց շորս կողմ դադարել. բոլորը լարվեցին և սպասեցին: Ի՞նչ պետք է անել: Ահա հայոց ժողովուրդը եկել է զինվորյալ, պատրաստ թշնամուն դիմադրելու: Ի՞նչ պետք է անել: Օգնե՛լ նրան, թե՛ խեղկատակի դեր խաղալ ու թույլ տալ, որ նա ոչնչանա... Ի՞նչ պետք է անել: Կարելի՞ է կռվել այսքան ժողովրդով, թե՛ սպասել, որ գան ուրիշ հավատարիմներ: Ծ՞րբ կգան, և կգա՞ն: Ժողովուրդն այստեղ մահի վտանգի մեջ է:

Տիկինները շոքեցին վիրավոր Անահիտի և մյուսների կողքին: Արտակը, որ հետև էր կանգնած՝ հանկարծ տեսավ այս Աչքերը մթնեցին: «Անահիտը ծանր վիրավոր, բերել են, նա է՛լ պիտի մեռնի»...

Զհավատաց տեսածին, խելագարի պես մղվեց դեպի Անահիտը՝ մոռանալով ամեն պատշաճ: Բայց նրա առջևը կտրեց Շուշանիկ տիկինը և մեղմ ձայնով սաստեց նրան.

— Մի՛ մոտենար, նա ուխտյալ է...

Արտակը ցնցվեց և սուր նայելով Անահիտին՝ կրկին շարժում արեց, բայց լավեց Անահիտի թույլ վշտացած խոսքը:

— Հեռո՞ւ կաց, իշխա՛ն...:

Արտակը խորտակվեց: Նա փորձեց գոչել, որ ինքը հավատարիմ է ուխտին, բայց և իսկույն կեղծելու դաժան հարկադրանքը նրան սթափեցրեց և սանձահարեց: Նա ետ կանգնեց:

Վարդանը խոժոռվեց նրա վրա: Արտակն զգաց, որ ինքը պարտավոր էր այգ պահին զինակից կանգնել իր Սպարապետին՝ խեղդելով սոսկալի տազնապը Անահիտի կյանքի երկյուղից: Եվ իսկույն այգ տազնապալի պահին բազմությունը ետ-ետ գնաց եկեղեցու դռան մոտ: Շինականները սկսեցին ներս բերել ծանր վիրավորներին ցույցով, եկեղեցում, ուրացողների առջև մեռնելու, բերին ազատ ճանապարհ բանալով, արհամարհական շարժումներով, նկատի շառնելով ո՛չ հայ իշխան, ո՛չ պարսիկ մեծավոր, ո՛չ թշնամի, ո՛չ բարեկամ: Կարծես նրանք չկային: Մեռնողներին շարեցին հատակին, սալ քարեր դրին գլխատակներին և շթողնելով կարծես ուշաբերվել՝ ներս բերին իրար հետևից նորանոր վիրավորների: Դա սկսեց ճնշել ու ճնշել: Նախարարները վերջնականապես շսպվեցին և կարծես հարկ տեսան սպասելու դրա վերջին: Ներս մտավ մի բարձրահասակ, օտարերով շինական, ուժեղ թևերին մի ծանր վիրավոր բարձրացրած, որ կամ ճունապարհին մեռել էր կամ հինց նոր մեռնում էր: Վիրավորը շեկ գանգըրահեր երիտասարդ էր՝ փորից վիբավոր, ողջ արյունաշաղախու Պատկառելի շինականը, ըստ երևույթին վիրավորի հայրը, այնպիսի արժանապատվությամբ և լուրջ էր կրում իր վիրավորին, որ իսկույն սաստեց բոլորին: Նա հանգիստ պառկեցրեց վիրավորին, չգիտակցված ազնիվ հպարտությամբ դիք կանգնեց նրա գլխավերևը և համակերպ հայացքը ուղղեց դեպի բեմը: Նրա կողքին շրթեց մի համեմատաբար ոչ շատ հասակավոր պառավ, երիտասարդի մայրը, որ նույնպես խաղաղ աչքերը հառեց հեռուն:

Սգի ոչ մի նշան: Ոչ մի նշան կշտամբանքի և պահանջկոտության: Ոչ մի շարժում դեմքի, ոչ մի հայացք այս ու այն կողմ՝ հրավիրելու համար մարդկանց ուշադրությունը դեպի իրենց վիշտը: Այդ վիշտն անգամ չէր երևում արտաքին երևույթով: Արտակարգ համեստություն և պարզություն, միաժամանակ և ոչ մի ճիգ երևալու այդպես, ոչ մի փորձ որևէ կերպ երևալու:

Բոլորն ակամա գրավվեցին այս պատկերով, և ավելի ենթարկվեցին, համակերպվեցին: Իսկ վիրավորներին դեռ բերում

էին: Ակամա, պատկառած հետևում էր վեհ շինականին և մյուսներին Արտակը և ջանում էր զսպել իր սեփական ցավը:

Նախարարներն սկսեցին անհանգստանալ: Վիրավորների երթը դառավ ինչ-որ հոգևոր ազդու երթ, որը ճնշում, նեղում էր Բայց կարծես դիտմամբ ներս մտան Սրապն ու Պողոսը՝ ծանր վիրավոր մի գեղջկուհու ձեռներին բարձրացրած: Նրանք համարձակ վիրավորին մոտ բերին նախարարներին: Վիրավորը գունատ, աչքերը վերքի ջերմից շողացնելով՝ դողահար ձեռքը կարկանոց դեպի նրանց և պատահմամբ Վասակին նայելով՝ երանության ժպտով մրմնջաց.

— Արյունս աշխարհքի՛ն...

Վասակը սուր հայացքով խայթեց նրան և կամենում էր սաստիչ խոսք ասել, բայց վիրավորը հանկարծ գունատվեց, ցնցվեց և շորի նման ծալվելով ընկավ Սրապի և Պողոսի ուսերին: Նա մեռավ:

Մեծ Տիկինը հուզմունքով ընկավ գետին և համբուրեց զինվորյալների զխատակի սալերը: Սկզբեց հեծկտոց: Դա Աստղիկն էր ուրիշ աղջիկների հետ:

— Մի՛ լաք, զինվորյալի վրա լաց չե՛ն լինի,— սաստեց նրբանց Շուշանիկ տիկինը:

Արտակն անձկությամբ նկատեց, որ Անահիտը իր կողմը չի նայում: Արտակին խեղդում էր բուռն ցանկությունը, որ իր հայացքը գոնե մի անգամ հանդիպի Անահիտի հայացքին:

Փռչողոված ու խորշակահար օրիորդի տեսքը օտարոտի եկավ նրան: Զինվածությունը, որ այնքան էլ չէր թվում հարմար Անահիտի քնքուշ կազմվածքին՝ հիմա հասկանալի եղավ Արտակին և հարմար: Անահիտն անցել էր մի այլ ոլորտ: Նա զինվորյալ էր գրվել և թողել ամեն անձնական, խառնվել աշխարհին:

Հանկարծ բազմությունը դարձավ դեպի եկեղեցու մուտքը, ուր մի բան խլրտաց՝ խուլ, կերկերող տրտունջներով: Ինչ-որ մեկը ճանապարհ էր որոնում խարխափելով:

— Ի՛նչ է, ո՞վ է, բավական է, փակեցե՛ք մուտքը,— դարձավ նախարարների թիկնապահներին Վասակը՝ անախորժած և խոժոռ:

Թիկնապահները շարժվեցին այն կողմը և արգելեցին մտնողին: Խուլ մուտոց անցավ բազմության մեջ.

— Խոշտանգվածը... — լսվեց բարձր մի երկյուղած ձայն, երբ երևաց մտնողը, որ կոպիտ ու համառ ետ հրեց թիկնապահ՝ ներին և առաջ եկավ:

Դա Սահակն էր, որ ողջ դեմքը փաթաթած, թեև մի աչքը ազատվել էր կուրանալուց, բայց վերքոտ էր դեռ և կապած: Նա մղվում էր կուրորեն, ազատ, չզգալով իր առջև մարդ ու արգելք:

— Ո՛ւր, ո՛ւր, — փորձեցին առաջը կալնել նախարարների թիկնապահները:

— Մի՛ի՛ք... մի՛ի՛ք... գինվորյալին ձեռ չտաա՛ք, շիշխե՛ք, — լսվեց բազմության միջից Մեծ Տիկնոջ սպառնալից հրամանը: Ապա շոքեց նա և սկսեց բարձրաձայն աղոթել:

— Զինվորյալի բերանով լսիր մեզ, տե՛ր աստված...

Բոլորը ակամա սաստվեցին: Սահակը խարխափելով և որոպ նելով առաջ եկավ և գոչեց.

— Դենշապու՛ւհ պարսիկ, ո՛ւր ես... ե՛կ, կամ դա՛տս կամ մա՛հս, — գոչեց բարձր:

— Ե՛տ քաշեք դրան, — հրամայեց Վասակը:

Թիկնապահները վրա հասան, և բոլորն սկսեցին քաշել նրան դուրս: Բայց Սահակը գերագույն ուժի մոլուցքով սեղմել էր Դենշապուհի թևը և բաց չէր թողնում:

— Վրե՛ե՛ե՛ժս... աշխարհքի վրե՛ե՛ե՛ժը, — խուպոտ գոչեց Սահակը:

Սպառնալից մեջ նետվեց Ղևոնդ Երեցը, խայթիչ հայացքը սևեռեց Վասակի վրա, ապա շրջվեց դեպի մյուս նախարարները և գոչեց.

— Տյա՛րք Հայոց աշխարհի. եթե ձեր կամքով են գործվում այս շարիքները՝ մխեցե՛ք ձեր սրերը մեր կուրծքը, իսկ եթե ձեր կամքով չեն՝ հանեցե՛ք վրեժը:

— Մեկ է՝ վրեժը մենք կհանենք, — գոչեց Առաքելը:

— Ծշմարի՛տ աստված. — որոտաց բազմությունը:

Սասանող լուռթյուն: Եվ հանկարծ այս լուռթյունը խզեց Մեծ Տիկնոջ սպառնալի խուպոտ ձայնը.

— Վարդա՛ն Մամիկոնյան... Սպարապե՛տ Հայոց... ո՛ւր ես, հիշի՛ր հայրենիդ...

Ու ահավոր հայացքը ուղղեց Վարդանին:

Վարդանը հանկարծ խոժոռվեց, ընդոստ շարժումով գլուխը թափ տվեց և աչքերը գետնին՝ հանդիմանական եղանակով ասաց.

— Մինչև ե՞րբ հանդուրժենք բռնության ու կեղծիքին...

Վասակը ցնցվեց. բոլորը լարվեցին: Ոչ ոք չտոսեց:

Միայն մռայլված Գաղիշոն ակամա հազաց և սրտատրոփ՝ առանց կամենալու՝ կրկնեց.

— «Բռնությա՞ն, կեղծիքի՞ն...»:

Վարդանը ձայնը բարձրացրեց նրա վրա.

— Ես ասում եմ՝ մինչև ե՞րբ պիտի հանդուրժենք բռնությանն ու կեղծիքին... Հասկանալի չէ՞ ինչ եմ ասում: Մինչև ե՞րբ շրջենք գոգերի, խեղկատակների նման, տանջենք ժողովրդի խիղճը, ծախենք մեր պատիվն ու ազնվությունը: Հացկատակնե՞ր եկանք հայրենի տուն, կեղծարարնե՞ր... Ի՞նչ եք խորհում՝ կհանդուրժի՞ հայաց ժողովուրդը այս ամենը. կհանդուրժե՞մ ես և ոմանք ձեզանից... Դուք, տյարք, չգիտեմ ինչ եք մտադիր, չգիտեմ ինչ կձեռնարկեք. բայց ես, ահա հայտնում եմ առաջին ձեր և Աշխարհին հայոց. ես ծառան եմ իմ աշխարհի և նրա զինվորը...

Բոլորը շունչները պահած նայեցին Վասակին և Գենշապուհին, որ անհանգիստ ու շար՝ սպասեցին Վարդանի խոսքի ազդեցության:

Վարդանը վճռական թափով խաշակնքեց: Բազմությունը խլեց շարժումը, խաշակնքեց թափով, խուլ մուտոց արձակեց, որ հետզհետե սաստկացավ, վերածվեց մի հզոր գոչի.

— Աշխարհիի՞նն է...

— Հիմա հոժար եմ հողին, — մրմնջաց Մեծ Տիկինը և սկսեց աղոթել:

Գենշապուհը արագ դուրս գնաց եկեղեցուց մյուս մեծամեծների հետ: Նրանց հետևեց և մոգերի բազմությունը: Դարեհը հրամայեց զինվորներին գնալ ճամբար: Զինվորները հեռացան: Վասակը ծանրաբաշխ դուրս եկավ յուրաքանչյուրների հետ և նույնպես գնաց ճամբար:

Մեծ Տիկինը հանկարծ ընկավ ուժասպառ: Վարդանը հազիվ զսպեց իրեն և նշան արեց, որ տանեն նրան, Յուդաբերը սպասուհիների հետ ձեռների վրա Մեծ Տիկնոջը տարան եկեղեցու խցերից մեկը:

Նախարարները մեծ շփոթութեան մեջ ընկած՝ եկան դեղքի Վարդանը:

— Սա ապստամբություն է, Վարդան,— ասաց Հազարուպետը:

Վարդանը շպատասխանեց: Մարդիկ եկան ճամբարի կողմից և հայտնեցին, որ պարսիկները պատրաստվում են հարձակման: Վարդանն արդեն նկատել էր այդ, և հիմա նրա աչքերը բոցավառու վեցին: Նա ասաց.

— Ոչ ոքի չսպասել: Եղածով դիմադրել...

Նախարարները սկսեցին մեկ մեկ դուրս ելնել եկեղեցուց: Մի փոքր անց դուրս ելավ նաև Վարդանը: Նայեց ճամբարի կողմը, իրոք կարծես այնտեղ պարսիկ զինվորները հավաքվում էին և ամփոփվում:

Վարդանից փոքր-ինչ հեռու կանգնած էր խոնված բազմութունը Առաքելի գլխավորութեամբ: Նա սպասում էր հրամանի: Վարդանը նայեց այն կողմը և մոտ կանչեց Առաքելին և Պողոսին:

— Հավաքեցեք բոլոր կովոդներին: Պատրաստվեցե՛ք:

— Հրամանդ, Սպարապետ,— ասաց Պողոսը:

Առաքելը Պողոսի և Խանդութի հետ հեռացավ:

Արտակը հոգեկան հախուռն վիճակում՝ հետևում էր անցուղարձերին և տանջվում: Անահիտի վերքը ծանր էր: Կարող էր այս իսկ պահիս կտրել նրա կյանքի թելը: Ի՞նչ եղավ, ո՞ւր տարա՞ն Ու շնայած, որ մյուս կողմում ավելի մեծ տագնապ էր՝ նա միջոց համարեց գնալ որոնել Անահիտին: Անցնելով եկեղեցու հետևը՝ նա տեսավ Մամիկոնեից տիկնոջը, որ թեքվել մի վիրավորի վրա՝ տնտղում էր նրա վերքը: Տիկնոջն օգնում էին շինական կանայք: Նա այնքան զբաղված էր, որ չնկատեց Արտակին:

— Իշխանուհի՛ տիկին,— խոսեց Արտակը սրտատրոփ:

Մամիկոնեից տիկինը վեր նայեց.

— Այն խցումն է, իշխանի՛կ,— ցույց տվեց հեռու անկյունի մի խուցը տիկինը:

Արտակը շրջվեց դեպի խուցը: Իսկույն նրան մոտեցավ մի ևրիտասարդ շինական և ասաց.

— Իշխան, օրիորդը մեռնում է:

— Օրիո՞րդը,— խոցվածի պես ցնցվեց Արտակը և խելահեղ սլացավ դեպի խուցը: Բախեց: Դուրս եկավ Յուզաբերը:

— Ո՞վ է,— հարցրեց, բայց իսկույն ճանաչելով՝ վախեցավ, խոնարհ ուղշունեց և լաց եղավ:

Արտակը անհարմար վիճակի մեջ, շփտենալով ինչ անել՝ ներս գնաց: Խցում կիսամութի մեջ հասարակ փսիաթի վրա պառկած էր Անահիտը՝ գլուխը Շուշանիկ տիկնոջ ծնկան, մի ձեռք Աստղիկի ձեռքում, իսկ մի կույս պատրաստվում էր Անահիտի կողից հանել նետը: Արտակի աչքերը մթնեցին: Նա շոքեց: Տաղնապալի ժամը մոռացնել տվեց ամեն պատշաճավորություն:

Անահիտը գունատ էր, ճակատը սառը քրտինք, գիտակցությունը համարյա մթագնած նայում էր շրջապատին անտարբեր: Նա շնչում էր խոր և դանդաղ:

Կույսը մի խստադեմ հասակավոր կին էր՝ վերից վար սև քուրձը հագին: Երևում էր, որ մոտակա ժայռի ճգնակյաց էր և լսելով մարտի աղմուկը՝ եկել էր վիրավորներին օգնելու:

— Անդենինդ է՝ ընդունի՛ր, աստենինս է՝ շնորհի՛ր,— մըրմընջաց աղոթքի պես կույսը:

«Ի՞նչ, մի՞թե պիտի մեռնի... — տագնապեց Արտակը,— և եթե նետը թունավոր է...»:

— Թունավո՞ր է... ավա՞ղ...

Արտակը ցնցվեց, վերցրեց նետը, շրջմընջեց:

Բայց Անահիտը չէր ուշաբերվում:

— Կո՞ւյս... հանգա՞վ... — երկյուղով մրմնջաց նա և մոտեցավ Անահիտին:

— Թույնը ներգործեց... — բացատրեց կույսը անկարեկից գեպի Արտակը:

Գիշերային տխուր լուսթյունը խանգարվեց մի խուլ աղմուկով, որ քանի գնաց սաստկացավ: Լսվեցին շատ հեռավոր փողերի գալար հնչյուններ, որ արձագանքեցին լեռներում: Պարզ չէր թե ինչ ահազանգ էր: Բայց փողը փշում էր «հավաք»: Արտակը խիստ շփոթի մեջ վեր թռավ:

Պետք էր շտապել վարդանի մոտ: Նա տարակուսած նայեց Անահիտին, որ մեռածի պես անշարժ ու դալուկ պառկած էր: Պետք էր մնալ, իմանալ սիրած էակի վիճակը: Իսկ զորքը մոտենում էր...

— Գնա գործի՛դ, իշխանի՛կ... Ժամն է տարածամ... — ասաց Շուշանիկ տիկինը տխուր կշտամբանքով:

— Այո՞, — մտախոհ և անհանգիստ ասաց Արտակը: Շուշանիկ տիկինը թախծալի համակերպությամբ շարունակեց.

— Հայոց աշխարհ, է, ճգնաժամ... մենք ի՛նչ...

Դուռը բախեցին անհանգիստ: Արտակը գնաց դեպի դուռը: Իր թիկնապահն էր:

Արտակը արագ շրջվեց դեպի Շուշանիկ տիկինը և այլայլված քարացավ տեղում, նայեց Անահիտին, որ աննշմար թույլ շնչաուությամբ հազիվ կենդանության նշաններ էր տալիս:

— Գնա, եթե ճակատին գրած է՝ կվերադառնա քեզ, — քաջալերեց Շուշանիկ տիկինը մի փոքր մեղմանալով, — գնա, մարտ է սկսվում...

Արտակը թափ տվեց ձեռքը, վերջին անգամ ջերմությամբ և դառնությամբ թեքվեց Անահիտի դալուկ դեմքին, հառաչեց և արագ դուրս եկավ խուցից:

Գավթի դռան կանգնած էին դեռ Վարդանը, Ներշապուհը, Հագարապետը, Շմավոնը:

— Մենք նրանց սպասել չենք կարող, — ասաց Վարդանը կարծես յուրովի:

Ապա նայեց չորս կողմ, մի փոքր մտածեց և դարձավ Արտակին.

— Առաջնորդի՛ր, իշխանի՛կ:

Արտակը զարմացած նայեց Վարդանին: Բայց Վարդանը լուրջ էր ասում: Հասկացավ նրան Արտակը: Հեծավ նժույզը: Վարդանը նայեց բազմության և հանդիստ ասաց.

— Հայրենիքի զինվորները դո՛ւրս գան...

— Պատրաստ ենք, հրամայիր, Սպարապետ, — խառնաձայն եկավ մեջտեղ լցվեց բազմությունը:

Ժողովուրդը ստվարացավ և թանձր շրջապատեց Վարդանին ու Արտակին: Վարդանը կովողներին բաժանեց երկու մասի: Մի մասը դրեց Արտակի հրամանատարության տակ, մյուսը պահեց իր մոտ: Կանանց ետ պահեց:

Ղևոնդ Երեցը խառնվեց բազմության: Իսկ կաթողիկոսը և մյուսները մտան եկեղեցի և սկսեցին մաղթանքը:

Արտակը խորհում էր: Նրան խոշտանգում էր մի այրող միտք: Ի՛նչ է նա հիմա Անահիտի համար: Մերժված, խորթ հոգի:

պատրաստ էր թեկուզ մահվան քնով մաքրվել Անահիտի առջև: Ինչո՞ւ մերժեց իրեն Անահիտը: Եվ եթե մի բան պատահի ման հիմա... ուրեմն ի՞նչ, վերջացա՞վ ամեն բան...

Արտակին սթափեցրեց Վարդանի ձայնը, որ հնչեց նրա անջի տակ.

— Հարվածիր մի շնչով, արագ, ուշքի շքերես:

— Հրամանդ ի կատար, — ցնցվեց Արտակը ուշքի գալով և աշելով իք երազանքից:

Թափ տվեց իրեն: Երազի ժամ չէր...

— Դե՛, գրո՛հ, — հնչեց Վարդանի հրամանը:

— Օրերի օ՛րն է, տղե՛րք, — գոչեց Առաքելը, — գնա՛նք:

Արտակը բարձրացրեց պատենից պլոկած սուրը:

— Գրո՛հ, իմ հետևի՛ց...

Ու գնաց: Ժողովուրդը հոսեց հետևից: Նախահարձակներին սցավ նաև Ղևոնդ Երեցը:

Արտակը նայեց ճամբարի կողմը: Ճամբարը սեացել էր վրանից դուրս եկած զորագնդից: Արտակը լավ ըմբռնեց, որ ամեն կախված է իր վճռական, աթագ հարվածից: Ուստի և դարձավ զմուռյան և գոչեց.

— Առավե՛ե՛լ...

Բազմութունը արագացրեց հարձակման թափը: Այս զորան հրամանը հիշեցրեց նրանց հարազատ հերկը արտում՝ նույն ուվ. «առավել».

Արտակը լարվեց, պրկվեց նետաղեղի լարի պես: Միայն մի՛ ի էր հնարավոր պահել բազմության մեջ, միայն մի՛ թափի էր ընդունակ, որի մի հարվածով նա կարող էր ջախջախել, սրբել նեկ ամեն ինչ, ինչպես հեղեղ: Այլապես նա կորած էր: Եվ Արտակը լարված ձգնում էր շկորցնել այդ հարվածի թափը:

Շաշեցին առաջին նետերը պարսիկների կողմից: Մի քանիսը ռձակվողներից վեր նայեցին, ապա գլուխները թեքեցին՝ թեև տերն արգեն թռել էին:

— Առավե՛ե՛լ... — կրկին գոչեց Արտակը:

— Աստված արգա՛ր, — ձայնեցին նրա հետևից հարյուրավոր տ ձայներ՝ միախառն բարձր շնչառությամբ:

Պարսիկները թնդացին տեղներից և հարձակման թափ առած ս եկան: Նրանց մեջ էին նաև մոզերը, որ կատաղի գրոհ տվին:

Հայերի առաջին ալիքը լվաց նրանց իր անվերապահ հանդուգն գրոհով: Բազմությունն իր թվական առավելությամբ ճգմեց պարսիկների առաջին շարքը: Սա ոգևորեց հարձակվողներին:

Մարդիկ այնպիսի անմտածվածությամբ և այզգուշությամբ, հոծ զանգվածներով խցկվեցին նժույգների արանքն ու շուրջը, որ իրենց տարերքով ու թվական գերազանցությամբ, նաև դիակներով խեղդեցին թշնամուն: Պարսիկ զորագունդը թպրտում էր բազմության հեղեղի մեջ: Սկսվեց մի անօրինակ ձեռնամարտ, ուր բազմությունը հարվածներ էր տեղում անձնագոհ քաջությամբ ու հափըշտակությամբ:

Թշնամին սարսեց: Շփոթ ընկավ նրա մեջ: Բազմությունը իսկույն խլեց այդ շփոթը և քաջաբար, նոր թափով ընկավ պարսիկների վրա:

Պարսիկները սկսեցին քաշվել:

Տազնապի շեփորի սուր հնչյուններ կտրատեցին օդը: Եկեղեյոս կողմից հեծյալներ սլացան դեպի Արտակը: Շեփորին պատասխանեց մի այլ շեփոր արևելյան գետահովտից: Արտակը նայեց, գետահովտից վեր էր բարձրանում մի ստվար սևինք: Անշուշտ դա զորագունդ էր, որ նոր մտնում էր Անզղ:

Արտակը հասկացավ. դա սյունյաց զորագունդն էր:

Հեծյալները, որ Վարդանի կողմից էին, հրաման բերին նրանից.

— Կռվով քաշվել աջակողմյան լեռնակիրճը:

Դա միայն կարող էր մի փոքր կասեցնել սյունյաց հեծյալ գնդի հարվածը: Դյուրին չէր այդ շարժումը: Սյունյաց զորագունդը արագ գրոհեց դեպի ժողովուրդը: Պարսիկ զինվորները սիրտ առան և առաջացան: Դրությունը միանգամից ճգնաժամային դառավ: Սյունյաց զորագունդը պարսիկ ուժերի հետ պիտի ճգմեին ժողովրդական մարտիկներին:

Արտակը քաշվեց լեռնակիրճը:

Սյունյաց զորագունդը ժողովրդին սեղմեց լեռնակիրճին: Սկզբվեց անհավասար, անօրինակ պայքար: Քաջավարժ սյունյաց հեծյալներն իրենց լեռնային նժույգներով հասնում էին շատ բարձր առապարներ ու շավիղներ և հարվածում: Դրությունը խիստ տագնապալի դառավ: Սյունյաց զորագունդը արագությամբ կարբեր անվարժ ու անկազմ շինականներին, եթե չլինեք նրանց անօրինակ

մոլուցքը: Արտակը շարսեց: Քարերի կարկուտով ու ժայռերի բեկորներ գլորելով վայր նժույզների վրա՝ ժողովուրդը դիմանում էր: Շինական կովողները, որոնցից, շատերը զորքի մեջ եղել էին, պահում էին դրուժյունը:

Արտակը կրկին հարձակողական շարժում արեց և հարվածող շինականների հետ միասին պաշտպանական հակահարված տվեց: Սակայն նա էլ ժամանակ էր շահում միայն: Հարկ էր վարդանի օգնությունը և որ Ատոմը հասներ...

Արտակը զգում էր, որ սա երկար տևել չի կարող: Վերջապես եկեղեցու սեկնքը շարժվեց: Դա վարդանն էր, որ շինականների պահեստի հարվածով գրոհեց սյունեցիների հետևից: Սյունեցիները խոնվեցին և սկսեցին կովել երկու ճակատով: Վարդանը կովելով գեպի իրեն քաշեց սյունյաց զորագունդը և հնար տվեց Արտակին նեղել պարսիկներին:

Սակայն վիճակը ծանրացավ: Ժողովուրդը ռազմական ուրբաներին անձանոթ՝ կորցնում էր թափը:

Վարդանը շարսեց սակայն: Նրան տիրեց այն ռազմական բռնազդը, որ մինչև հուսկ վերջին ճիգը չպետք է տեղի տալ, այլ պետք է «միայն հաղթել»... Նրա վճիռը հաղորդվեց ժողովրդին, որ գերիվեր ճիգով նոր թափ առավ: Ծվ իրոք՝ սյունյաց զորագնդի աջ թևը խոնվեց, սկսեց ալիքել և շրջվել ձախ: Վարդանը հասկացավ: Դա Ատոմն էր, որ սյունյաց զորագնդի թևից հարվածել էր: Համարյա նույն պահին զանազան կողմերից փոթորկի պես մղվեցին երկուս այլ զորագնդեր ևս՝ հորենի և Զոհրակի առաջնորդությամբ: Սյունյաց զորագունդը շրջապատվեց:

— Դե՛, դե՛, դե՛,— ժղրտաց սյունյաց զորագնդի հրամանատարը,— մե՛կդ կենդանի շմնաք:

Սյունեցիները մոլեգնեցին:

Սակայն պակաս մոլեգին չէին նաև նրանց շրջապատողները:

— Վա՛ր դրեք զենքը,— գոչեց Վարդանը՝ թոցնելով իր նժույգը նրանց դեմ:

Սյունյաց զորագունդը սարսեց: Բայց զորագնդի կամակոր հրամանատարը թափով թռավ դեպի Վարդանը:

— Ա՛ռ սյունի զենքը...

Ու այն է՝ սուրը իջեցնում էր Վարդանի գլխին, որ սա շեղակի հարվածեց նրա աջ ձեռքին: Սուրն ընկավ հրամանատարի

ձեռքից: Սյունյաց զորագունդը ական թոթափել թափը կոտրեց:  
— Անձնատու՛ր,— գռչեց Վարդանը:

Սյունյաց զորագունդը սրերը կախեց վայր: Արծվին, որ կատաղել էր հրամանատարի վրա, թռավ դեպի նա և ուզում էր վերջացնել, բայց Վարդանը հրամայեց կապել նրան: Եվ հրամայելով, որ բարշ տան իր հեակից՝ շարժվեց դեպի Վասակի տաղավարը:

Զորագնդերը տարուրեն վիճակի մեջ, շփոթված, անակնկալներով հետաքրքիր՝ գնացին շրջապատելով Վարդանին և սյունյաց զորագունդը: Զոհրակը կարոտից այրվելով՝ մղվում էր գնալ փարվել հորը, հայտնել, որ ինքը մաքուր է եղել նրան կասկածելու մեջ... Բայց տարադեպ էր ժամը: Վարդանը կարծես չէր տեսնում որդուն: Զոհրակը հրճվանքով նայեց հորը և գնաց աչքը մի ակրն-թարթ չհեռացնելով նրանից: Վարդանի հետ գնում էր նաև Ղևոնդ Երեցը:

Վարդանը գնում էր մեծ զայրույթով: Դեմից ընդառաջ եկան Գաղիշոն և Ներշապուհը: Շուտով միացան Ատումն ու Խորենը: Բոլորը մեծ հուզմունքով հետաքրքրվեցին, թե ինչ պիտի կատարվի Վասակի տաղավարում:

— Ո՛ւր է գնում, ի՞նչ է մտադիր,— մոմոաց Գաղիշոն խիստ մտահոգ:

Ոչ ոք չխոսեց:

— Մի՛թե ձեռ կրարձրացնի վրան,— անհանգստացավ Գաղիշոն,— մի բան պիտի անել...

Եվ մոտ քռեց իր նժույզը Վարդանի նժույզին.

— Սպարապե՛տ...

Վարդանը շնայեց նրան:

— Զորագունդն անձնատուր է, մարտն ավարտվեց... այլևս ոչինչ չպիտի անել...

— Սպարապե՛տ... խնայի՛ր,— խոսեց ականջին Ներշապուհը:

Վարդանը չպատասխանեց նրանց: Դա ավելի անհանգստացրեց: Հասան Վասակի տաղավարին: Վարդանը իջավ նժույզից և առանց զգուշացման մտավ ներս: Նրա հետ գնացին նախարարներն ու հոգևորականները: Իսկ բազմությունն ու զորագնդերը կանգնեցին տաղավարին կիպ շրջապատ:

Տաղավարում Վասակը նստած էր հանդիսավոր դիրքում, կարծես ոչինչ չէր պատահել շուրջը: Նա խիստ հայացքով նայեց

Վարդանին և մյուսներին: նրան և վասակյաններին շատ գիրա-  
վորեց Վարդանի անարգանքը՝ անծիսավոր ներս մտնելը: Բայց  
բանը գեռ անարգանքը չէր, սպասվում էր արյունալի տե-  
սարան:

Դրսից ձայներ լավեցին.

— Բռնե՛լ են... բռնե՛լ են... բերո՛ւմ են:

Ներս եկավ մի տեպուհ.

— Դենշապուհին, Դարեհին, մոգպետներին բերում են:

— Բերեք այստե՛ղ,— հրամայեց Վարդանը:

Բուրբը լարվեցին: Ի՞նչ էր կամենում անել...

Վարդանի այտը ցնցվեց զայրույթից:

Վասակը այլայլվեց: Ժողովուրդը լցվեց ամեն կողմից: Վա-  
սակը տաղավարի դռնից դուրս նկատեց, որ դա այլևս մի ժամ  
առաջվա ժողովուրդը չէ, այլ հանդուգն և կատաղի մարդկանց մի  
զանգված, արյունոտ սրերով ու աչքերով: Շատերի դեմքն այլա-  
բանակվել էր արյան և փոշու սև բծերից: Սոսկալի էին շինականնե-  
քը, որ կռվից նոր դուրս եկած, մագիլների նման ամուր բռնել  
էին Դենշապուհի թևը՝ առաջ էին մղում ուժով: Ժողովուրդն սպառ-  
նալից ավելի առաջ եկավ և սկսեց սեղմել տաղավարը: Բորբոք-  
ված՝ նա հազիվ էր զսպում զայրույթը: Բավ էր մի նշան՝ և նա  
կզզզզեր ամեն ինչ:

Սևացած նայում էր Դենշապուհը: Նա կապված էր: Կապված  
էին նաև Դարեհը, մոգպետները: Նրանք սարսափի, շարության և  
ոխակալ աչքերով նայում էին բազմության:

Վարդանը ցասկոտ շարժումով դարձավ Վասակին.

— Ո՞վ է այս արյունների հատուցողը, տե՛ր մարզպան,—  
հարց տվեց Վարդանը՝ շնչատելով զայրույթից:

— Ամենքս... — պատասխանեց Վասակը շեշտ:

— Ամե՛նքս,— կրկնեց Վարդանը վրդով ու շար,— ինչո՞ւ բե-  
րիր զորագունդ:

— Պաշտպանելու կարգն ու պատշաճը,— մտայլ պատասխա-  
նեց Վասակը:

— Սա՞ էր կարգն ու պատշաճը... — և Վարդանը գարձավ  
դեպի զորագնդերը,— բերեք այստեղ հայ կռվածին, որ զորա-  
գունդը քշեց հայոց ժողովրդի վրա...»

Մեջ բաշեցին սյունյաց գնդի հրամանատար սեպուհին:

— Ես շո՛ւն եմ, հայ չե՛մ,— կատաղի ծղրտաց արյան շիթե-  
րի մեջ սյունյաց զորագնդի հրամանատարը, կապույտ աչքերը  
վայրի կատվի պես սևեռելով Վարդանի վրա:

— Շո՛ւն է... — կատաղի վրա գնաց նրան Ատոմը,— դե որ  
շուն է, շանսատակ արեք շանը....

Զինվորները խլեցին հրամանատարին: Բայց զայրույթով  
նրան ետ խլեց Արտակը և շարտեց Վասակի վրա:

— Շունը շնթում է տիրոջ ոտքերի տակ... շուն սատկեցնող  
չենք մենք, հայեր ենք...

Հրամանատարը թափով դիպավ Վասակին և ցնցեց նրան:  
Վասակը հագիվ կանգնեց ոտքերի վրա և խեթ նայեց Արտակին:  
Անարգանքը այրող էր և դաժան: Մանավանդ որ՝ հե՛նց այդ պա-  
հին ներս էր մտնում եկեղեցուց եկած Հազարապետը, որը Եսայի  
վերջին շարժումները:

— Տե՛ր Մամիկոնեից... — դողաց նախարարների միջից Գա-  
ղիշոյի ձայնը:

— Ի՞նչ ատե՛ր Մամիկոնեից», — գռչեց Վարդանը,— բավ  
չե՞ն խարդավանքները...

Հանկարծ Վարդանը այլայլվեց ցասումից և դառավ դեպի  
Գաղիշոն...

— Ահա աստված ու աշխարհ, թող նրանք դատեն ինձ ու  
նրան: Վերցրե՛ք քարերը,— դիմեց նա բազմության

Զինվորներն ու ժողովուրդը քարեր վերցրին: Բոլորը միահա-  
մուտ վրա եկան:

Բոլորը հնակացան, որ Վարդանը Վասակին զցում էր ժողո-  
վրդի ձեռքը և տեղի պիտի ունենար ահավոր մի դեպք:

Վասակը կանգնեց և իր կողքին զգալով Գեներալուհի և մյուս  
մեծամեծների շար ու զարմացած հայացքները՝ դիմեց իշխաննե-  
րին և անկեղծութուն կեղծելով խոսեց.

— Ես փորձ արի ճնշելու ապստամբությունը: Բայց կասեմ  
առաջի աստծո և աշխարհի: Ուժ տվեք ինձ, և ես ձեզ հետ եմ պար-  
սից դեմ: Տվե՛ք ինձ Բյուզանդիան, տվե՛ք հոները, տվե՛ք զորա-  
բանակ...

Առաջ եկավ Ներշապուհը և անկեղծությամբ ասաց.

— Տեր մարզպանը պահանջ է դնում Բյուզանդիան, հոները:

հզոր բանակ: Մենք հտանք նրան այդ, և նա անցնում է ապրստամբների կողմը:

— Եվ երդվում է ավետարանի վրա, Արտաշատում,— վրա բերեց Հազարապետը նենգորեն: Նա շէր հավատում Բյուզանդիայի օգնութեան, նա միայն կամեցավ Վասակին առաջ քաշել Բյուզանդիայի «խայժով»:

Առաջ եկավ Գաղիշոն.

— Տե՛ր Սպարապետ, արյաց զորաբանակ է գալիս, խորհնեք վիճակներս, մի՛ տար ոտնատակ ամեն բան, բարձրացրու պատիվներս...

— Երբ ամեն բան գցվեց ոտնատակ՝ բարձրացնելու ոչինչ չունենք այլևս,— գոչեց Վասակը նոր ուժ առած և արժանապատիվ խստութեամբ:

Վարդանը խոժոռվեց նրա վրա.

— Ի՞նչը ոտնատակ... դավաճանութիւնը, թե՞ մարզպանական պատիվը... որին զոհեցիր այսքան նահատակները... Ումնի՞ց է հույսդ Հայոց աշխարհի փրկութեան: Զավակնե՛րդ ծախեցիր և ի՛նչ ստացար... Ի՞նչ ես եռում պարսիկների ոտների տակ, ըստրու՛կ, գետնի՛ որդ: Նրանք ատում են քեզ, անարգում իրենց սըրտում: Քծնողին ոչ ոք չի սիրում:

Վարդանը աչքերն արյունով լցված բաց արեց դռան վարագույրը և ցույց տվեց զորագնդերին և բազմութեան.

— Դո՛ւք դատեցեք արդարն ու մեղավորը:

Բազմութիւնը օրորվեց և սպառնալի շարժում արեց: Հարյուրավոր քարեր սեղմվել էին դողացող ձեռներին: Մի վայրկյան ևս, և ահա նպաշխե՛ր մոլեգին հափշտակութիւնը, կորոտային քարերը:

Գաղիշոն ցնցվեց և մոտ վազեց Վասակին:

— Հաշտութեան խոսք ամբոխին...

Խորհելու վայրկյան շէր: Փրկելու էին ամենակարևոր բաները: Վասակն արագ առաջացավ դեպի զորագնդերն ու բազմութիւնը և գոչեց.

— Ինչպես քաջակամ տեսնում եմ ձեզ, նույնպես քաջակորով եղեք նաև արյաց պատերազմում. մոռացե՛ք կատարվածը...

Վարդանը դաժանորեն սպասում էր բազմութեան դատաստանին... Այդ զգացին Վասակն ու Գաղիշոն:

— Կործանեցե՞ք ատրուշանները, — գոչեց Վասակը այլապէս վաժժ:

— Հրամա՛նդ, — գոչեց բազմութիւնը:

— Անկեղծ հնչեց: Բազմութիւնը հարձակվեց ճամբարի ատրուշանների վրա: Քարերը գոռացին միահամուռ և ահռելի թուփով:

Բազմութիւնը խոնվեց տաղավարի առջև և գոչեց.

— Տվե՛ք այստեղ պարսիկներին...

Դենշապուհը ծամծմեց դառն շրթունքները և ինքն իրեն մըռ-մըռաց ինչ-որ: Դարեհը դաժան հայացքով շափեց բազմութիւնը: Բայց կատաղի բազմութեան մոնչոցը զսպեց նրան: Դենշապուհի հայացքը հանդիպեց Վասակին: Սա համարձակ նայեց նրան մինչև վերջ: Նա վտանգված էր, բայց և Վասակը վտանգված էր...

Բայց Վասակը խլեց իսկույն... Զգաց՝ վարդանանք պառակտուիցին: Զգաց՝ կարելի էր օդովել: Դրա համար պետք էր անկեղծութիւն ցուցաբերել: Դրա համար էլ պետք էր նաև խիզախութիւն ցուցաբերել: Եվ նա պահանջեց.

— Ձեռ շտա՛լ պարսիկներին... նրանք կդատվեն Արտաշատում: Դա իմ պայմանն է հաշտութեան ձեզ հետ...

Եվ դարձավ ներշապուհին.

— Ահա հայտնում եմ և հաստատում ողջ պայմանս, — դաշինք Բյուզանդիայի, հոների, վրացիների, աղվանների հետ, միաբանութիւն ողջ նախարարութեան, հունաց բաժնի իշխանների, հզոր արքունական զորք. և ես ձեզ հետ եմ պարսից դիմ: Այլապես՝ արեք ինձ հետ ինչ կամենաք:

Վասակը հասնում էր համարյա անկեղծութեան, նա սկսում էր տիրել:

— Բոլոր պայմաններն ընդունում եմ, — ասաց ներշապուհը:

— Ես ևս, — ասաց Շամվոնը:

— Ես ևս, — ասաց Հազարապետը՝ կամենալով այդ կերպով վարդանի կողմ պահել վարդանանց այս պառակտվածներին:

Հարվածն ուժեղ էր... Վարդանը զսպեց իրեն: Վերապահեց հակահարվածը: Բայց սրտի դառնութեամբ զգաց, որ ինքը մենակ դեռ շատ թույլ է և անկազմակերպ: Ուրեմն գործը վիժեց — հեռացավ, ընկավ անդունդը: Դե հիմա ձի՞ գտուր, որ հանես...

Վարդանը հեռացավ իր տաղավարը: Ներշապուհը Հազարապետի և Շմավոնի հետ գնաց նրա հետևից:

— Դու վտանգի խաղի մեջ ես դնում ողջ Աշխարհն հայոց, — ասաց ներշապուհը:

— Ողջ Աշխարհն հայոց, — համառ շեշտով ասաց Վարդանը, — պատերազմը պատերազմ է... Ապա վտանգ չլինի... —

— Աստված հասնի քեզ, — խաշակնքեց ներշապուհը, — դե ապա ուրեմն իմ վերջին խոսքը, — եթե չհաշտվես մարզպանի հետ և չընդունես նրա պայմանը՝ ես ևս դեմ եմ քեզ...

— Բարի, իշխաններս, համերաշխեցե՛ք նրանց հետ: Ես նրանց հետ չեմ: Ահա ես մի հասարակ մահկանացու՝ ձեզ ասում եմ, ես ողջ Աշխարհն հայոց կկանգնեցնեմ արհավիրքի դեմ: Կգա աշխարհը և կսրբի այս կարկատաններն էլ, այս նախարարական զորքերն էլ, մեզ էլ և կպաշտպանի իր հայրենին: Արեք ինչ կամենում եք, տյարք: Ես գործ չունեմ ձեզ հետ:

Ներշապուհը հեռացավ: Նրա հետևից գնաց նաև Շմավոնը: Մնաց Հազարապետը գլխակոր և ճնշված:

Վարդանը դառնորեն գլուխը թափ տվեց.

— Ձգձգո՞ւմ եք, ձգձգո՞ւմ եք գործը, ուշացնո՞ւմ եք հանցավոր կերպով, ժողովրդին թողնում եք մենակ... —

— Գիտե՛մ, գիտե՛մ, գիտե՛մ, — ցավի զգացմունքով ասաց Հազարապետը, — բայց նախարարները չե՛ն գա... նրանք միաբանելու պայման են դնում Բյուզանդիան, հոները, վրացիք, աղվանները, հունաց բաժնի իշխանները, արքունական զորքը... Պետք է ընդունես, հնար չունես...

— Ո՞վ է դեմ Բյուզանդիային, հոներին, վրացիներին, աղվաններին, հունաց բաժնի իշխաններին, ո՞վ է դեմ արքունական զորքի գումարման... Այո, ժողովուրդը թույլ է դեռ, քանի դեռ անպատրաստ է: Բայց նա կպատրաստվի. նրան պետք է պատրաստե՛նք... Բայց դուք էլ կորցնում եք թանկագին ժամանակը:



Մնալով մենակ յուրայինների հետ, Վասակը երկար ժամանակ լռում էր:

Լռում էին նաև մյուսները: Դեպքերը խլացրել էին ամեն ըզզացմունք, ժամանակ չէին տվել հաշվի առնել, թե քանի հարված-

ներ կրեցին իրենք և ինչ նշանակութեան հարվածներ էին: Պարսիկ դորագունդը, մոգերը փախել, ցրվել էին: Բայց մի որևէ տեղ կհասնե՞նք: Երբ մի բան կհասնար կեանքին: Ի՞նչ էին կարծում հիմա պարսիկ մեծամեծները, ի՞նչ էին ասում վասակյանների մասին: Դժգոհ էին նրանցից, թե հասկանում էին նրանց վիճակը:

— Հետո... ի՞նչ դուրս եկավ. ի՞նչ վիճակ դատավ: Զորագրնդով, հրամանատարով պիտ մնանք գերի...— ասաց Գյուտը զայրույթով:

— Նա կանգնեց արյաց պետության դեմ, նա կռնչանաւ Բայց եթե Հազկերտից առաջ մենք չզսպենք ապստամբութիւնը, կորած ենք: Սա է փրկութիւնը: Պատրաստվենք:

— Բայց մեր վիճակը, մեր վիճակը... այս նվաստացումները ուսմիկների առաջ,— զայրալի ասաց Գյուտը:

— Մերն է հիմա հերթը կեղծ ուրացութեան...— քմծիծաղ տվեց Վասակը, և մի փոքր մտածելուց հետո գլուխը շարժեց,— բայց և ընկա՞վ պառակտման սերմը նրանց մեջ:

— Այո,— ժպտաց Գաղիշոն:

— Պառակտե՛լ, ահա մեր գործը,— ափը զարկեց սրի դաստակին Վասակը և վեր կացավ տեղից, սկսեց ման գալ տաղավարում:

— Խելագարը (Վարդանը) դաշնակիցների պիտի դիմի: Դեսպաններ կուղարկենք Բյուզանդիա և Հոնք և կխափանենք: Կխափանենք Վրաստանի և Աղվանից, հունաց բաժնի իշխանների օգնութեան գործը: Քայքայե՛լ,— ահա մեր հակահարվածը և այս նվաստացումների, ուսմիկների հանդգնութեան վրեժը:

Հետևյալ օրվա անակնկալների սպասումներով վասակյանները ցրվեցին իրենց տաղավարները:

Վարդանը նստեց, մոտ կանչեց գրկեց Զոհրակին և խանդաղատանքով նայեց նրան: Պատանի էր, որ Վարդանը նրան ուղարկել էր Հունաստան ուսման: Անցել էր թերևս շորս տարի: Բայց որքա՞ն փոխվել էր իր զավակը: Նրա դեմքին այրմարդկային շուք էին տալիս աղվամազ մորուք-բեղերը: Նա պնդացել էր, պրկվել և աչքերի մեջ կայծում էր մարտնչողի կամքն ու վստահութիւնը: Միայն մի տարօրինակ բան. Զոհրակի հայացքի մեջ ինչ-որ հովանավորական խնամողի ժպիտ կար հանդեպ իր հասակավոր հոր: Դա և զվարճացնում և մի փոքր զարմացնում էր Վարդանին:

— Տանեցիները շատ տանջվեցին,—ասաց Զոհրակը,—և զուր: Ես կասկած չունեի: Բայց եկա, քանի որ զորագունդն եկավ և ըստպատմ էի, որ այստեղ կընդհարվենք պարսիկների հետ: Ինչպես և եղավ:

— Ճշմարիտ ես հաշվել,— ասաց Վարդանը:

— Ի՞նչ ես անելու, հայր,— հարցրեց Զոհրակը կրկին մտահոգ,— նախարարները հաշտության գնացին:

Զոհրակը շոշափեց հոր վերքը: Վարդանը կնճոտովեց: Դա ամենածանր քարն էր նրա սրտին դրած: Նա պարզեց Զոհրակին երկրի վիճակը և իր վճիռները:

Վարդանը երկար շխոսեց: Ապա դաժան դեմք առնելով՝ ասաց.

— Կրակների ու ջրերի միջից կանցնենք, դուրս կբերենք երկաթե մարդիկ:

Մինչ հայր ու զավակ զրուցում էին իրենց հոգեկան գաղտնաբաններից, դուրսը, ճամբարում լարված վիճակ էր: Ատոմի զորագունդը, որի կազմի մեջ մտնում էին ուշտուններ և խորխոռուններ, որոնք մինչև Անգղ գալը ենթարկված էին մի հրամանատարության և չէին մտածում, որ գնում են իրենց տերերի դեմ, այստեղ տեսան այդ և շփոթության մեջ ընկան: Սյունյաց զորագունդը, որ գերված վիճակի մեջ էր, հագիվ էր զսպվում: Մամգունները, մոկսերը, արծրունները չէին կարողանում զսպել նրանց՝ իրենք անզսպորեն երբեմն պոռթկալով և հարձակվելով նրանց վրա: Ատոմը Խորենի հետ ողջ գիշերը նժույգ նստած շրջում էր զորագնդի մեջ սանձահարելու գինվորների ցասումը: Խորենի ձերբակալած ուշտունյաց ջոկատի հրամանատարը սյունյաց զորագնդի հրամանատարի հետ ընկած էր վրանում կապկապած վիճակում և նրան ձայնակցելով՝ հայհոյում էր Ատոմին և բռլորին: Նրանց վրանի կողքին էր և մի այլ վրան, ուր պառկած էր Պերոզ-Վըշնասպ-Տիգրանին, որ դեռ չէր ապաքինել իր դեմքի վերքը՝ Արտակի հարվածից առաջացած: Դաշտում և բլուրների վրա ծանր վիրավորներ կային դեռ, որ տնջում էին: Զորագնդի հին գինվորները շրջում էին նրանց մեջ և կապկպում վերքերը:



Լուսադեմ էր, երբ Արտակը իջավ նժույզից, սանձը տվեց թիկնապահին և զգույշ մոտ գնաց այն խուցին, որի մեջ պառկած թողեց Անահիտին: Նրան թվաց, թե այնտեղ լույս չկար: Սակայն մի փոքր մոտենալով նկատեց ճրագի լույս, որ թթիթ էր տալիս. ուրեմն մարդ էր շարժվում այնտեղ: Արտակն համարաքայլ մոտեցավ խցի դռան: Ի՞նչ անել, մտնե՞լ ներս անպատշաճ և անվայել: Բախե՞լ դուռը, ո՞վ կգար բաց անելու և ի՞նչ ասել նրան:.. Եվ արդյո՞ք Շուշանիկ տիկինն այնտեղ էր: Ոչ, տարածամ էր ժամը, հնար չկար ոչ ներս մտնելու, ոչ էլ մարդ կանչելու դուրս: Սակայն մի բան կար հուսալի, խաղաղ էր այնտեղ: Դա նշան էր, որ կենդանի է Անահիտը: Եթե ճգնաժամային լիներ նրա վիճակը՝ մեծ իրարանցումը կմատներ այն:

Սակայն խցի լույսը շատ էր աղոտ: Դա ավելի մեռելի լույս էր, քան կենդանի վիրավորի: Հանկարծ Արտակի խոռվահույզ հոգում մի մտայլ միտք անցավ: Չլինի՞ մեռած է նա, և նրան թողել էին խցում մինչև լուսանալը: Ումնի՞ց իմանալ, այդ...

Արտակն սկսեց տանջվել: Նա մի երկու շարժում կատարեց իր քիչ դռան: Թերևս մեկն անհանգստանա ներսում, գա դուրս նայի: Նա հազաց: Դա ևս չօգնեց: Պարզ էր. խցում ոչ ոք չկար, բացի վիրավորից, որին մենակ կթողնեին միայն այն դեպքում, երբ նա մեռած լիներ...

Արտակը սարսափից բռնեց մազերը: Նայեց կրկին: Ներսի ճրագը դարձյալ թթիթ տվեց: Մեկը շարժվում էր այնտեղ:

Լույսը բացվեց դանդաղ: Եկեղեցու բակում կոշնակ տվին: Խցերից դուրս եկան եկեղեցականները և լոնլայն գնացին եկեղեցի: Արտակը հեռացավ խցի դռնից և գնաց գավթի դուռը, նայեց դուրս, հեռու դաշտերը: Նա հիշեց այն օրերը, երբ Արտաշատից գնում էր Ռշտունիք: Որքա՞ն երջանիկ էին նրանք: Այնժամ նա գնում էր առողջ, ուրախ և երջանիկ Անահիտի մոտ: Սարեր, ձորեր հեռու էր նա, բայց Արտակի սրտին այսպիսի ծանր վիշտ չէր նստել: Իսկ հիմա հոգեկան ի՞նչ դժնի վիճակ. կանգնել նրա խցի դռան և շիմանալ վերքից մահացե՞լ է նա, թե դեռ մորմոքվում է ցավից:

Հանկարծ դռան ճռնչոց: Արտակը ցնցվեց և ետ նայեց:

Անահիտի խցի դռնից դուրս եկավ կույսը: Նա երեսը խաշակնքեց և շարժվեց դեպի եկեղեցի: Արտակն շտապեց դեպի նա և ողջունեց նրան սրտատրոփ: Կույսը խոժոռ ու սառը քարի պես նայեց նրան և մոռալ ու ցածրաձայն մոմոաց.

— Առավոտ լույս բարի:

— Ի՞նչ վիճակի է վիրավորը, — հարցրեց Արտակը:

Կույսը իսկույն չպատասխանեց: Նայեց աչքի տակով Արտակին և դիմադիր շեշտով պատասխանեց.

— Ոգորում է մարմինը, իշխա՛ն, հոգին հոժար է փոխվում հավիտենական կյանք:

— Մի՞թե այդքան ծանր է, սո՛ւրբ կույս, — հուզված հարցրեց Արտակը:

Կույսը հաղթականորեն նայեց Արտակին:

— Ծանր է մարմնին, իշխա՛ն, թեթև է սակայն հոգուն: Եվ արախ է հոգին նոր ճանապարհին, իշխա՛ն:

Արտակը զարհուրեց այս խոսքերից: Այդ լույսի մեջ մահվան հայացքն էր ցոլում սառն ու ակնապիշ: Դա սրի փայլ էր և ոչ թե լույս և խնդուօթյուն: Արտակն առաջին անգամ զգաց աստծու սարսափը: Ահավոր էր այդ աստվածը, որ մահ էր շնորհում, երբ կյանք ես սպասում: Առաջին անգամ Արտակը խորհեց այդ աստծու մասին: Դա կյանքից հայնկույսն էր: Այնտեղ չկար ո՛չ սեր, ո՛չ ժպիտ, ո՛չ արև, ո՛չ ջերմություն: Այնտեղ չէր խոխոջում վտակը, չէր բուրում վարդենին, չէր տրոփում այնպիսի մի էակի լուսաշող կուրծքը, ինչպես Անահիտինն էր: Այնտեղ Անահիտ չկար: Կար միայն նրա կավիճ դեմքը և մարմար քար ձեռքերը՝ սառը կրծքին խաշած:

Սառույց, գերեզման, սարսափ: Եվ Անահիտը գնում էր այդ աստծու մո՛տ... Որպիսի՜ անողոք աստված... ցնցվեց Արտակը:

— Եվ ո՛չ մի սպեղանի չի բուժում նրան, սո՛ւրբ կույս, — աղաչական հարցրեց Արտակը՝ բոլորովին զինաթափ՝ կույսի վերջին խոսքերից:

— Թունավոր է նետը, իշխան, հույս չկա բուժման:

— Թունավո՞ր է... — կրկնեց Արտակը սարսափած:

Կույսը կրկին հաղթականորեն նայեց Արտակին և ասաց.

— Աստվածը քաղցր է ընդունում իր նահատակին. երանու-թյունն է գրկում նրան. ուրախ լինենք, իշխա՛ն, և աղոթենք:

Ու գնաց դեպի եկեղեցին: Նա երջանիկ և զվարթ էր: Երկինք էր ուղարկում մի նահատակի. դա նրա գյուտն էր՝ իբրև ճգնաժամայն կրոնավորի, որ կյանքն անց էր կացնում մերձակա ժայռերի մեջ, երբեմն բուժում էր հիվանդներին և դա այնքան շէր ուրախացնում նրա սիրտը, որքան մի որևէ արդար մարդու առաքումը դեպի հավիտենականութուն:

Ճնշվեց, սառեց Արտակի կենդանի հոգին այս քարե կնոջ խոսքերից: Եվ գիշերային մարտի ռազմիկը, որ այնպես զվարթ գրոհում էր մահվան դեմ՝ մի ակնթարթ անգամ չէր զգացել այն սարսուռը մահվան, որքան այս մահախոս էակից, որ կարծես, ինքը մահն էր իր զոհը ճիրանների մեջ առած: Մթնեց Արտակի հագում աշխարհը. նա շփոթվեց և այլևս հաշվի չառավ պատշաճն ավայելը, գնաց բախեց Անահիտի խցի դուռը: Դուրս եկավ Յուզաբերը, նայեց Արտակին և մտերմորեն ճանապարհ ցույց տվեց դեպի ներս:

— Պատշաճ է,— թույլ ու վախկոտ, խոսեց ավելի ինքն իրեն, քան հարցրեց Արտակը:

Յուզաբերը մեղմ ու տխուր ժպտաց.

— Վիրավորը սուրբ է, իշխա՛ն, նրան ամեն մարդ կարող է մոտենալ:

Արտակը սուր ծակոց զգաց սրտում: Ահա թե ինչու է պատշաճ ու վայել... Նա հուշիկ ներս մտավ և կանգնեց Անահիտի կողքին: Վիրավորը տենդի մեջ տապալակվում էր: Նա շնկատեց Արտակին, շէր կարողանում սթափ նայել և նկատել: Արտակը ափը դրեց նրա ճակատին, սառը քրտինք էր: Ետ դարձավ, որ Յուզաբերին հարցնի Շուշանիկ տիկնոջ մասին: Յուզաբերը, որ ըստ երևույթին ողջ գիշեր անքուն հսկել էր վիրավորին, հիմա կծկվել էր անկյունում և հոգնած անգիտակցորեն քնել: Ո՛ւմ ի՞նչ հարցնեք: Անահիտի մոտ, բայց և կարծես նրանից հեռու՝ Արտակը մնացել էր մենակ, անօգնական:

Անահիտը նայեց Արտակին չերմից ցուլացող աչքերով: Արտակը ոչինչ չհասկացավ. արդյոք տեսնո՞ւմ է իրեն Անահիտը:

— Ո՛ւր է Աստղիկը,— հարցրեց Արտակը:

— Մամիկոնեից Տիկնոջ մոտն է,— պատասխանեց Յուզաբերը:

Արտակը խոնարհվեց Անահիտի դեմքին.

— Անահիտ...

Անահիտը շպատանխանեց, այլ տխուր ժպտաց, որով ավելի շուտ կծկեց իր շառագունած այտը:

— Ցավո՛ւմ է վերքդ, — հարցրեց Արտակը:

Անահիտը շհասկացավ. անկապ մի բան ասաց. բայց երբ Արտակը կրկին հարցրեց՝ նա բացասորեն շարժեց գլուխը:

— Ապա ի՞նչն է նեղում քեզ...

Անահիտը քարի պես անմիտ նայեց նրան: Մի փոքր անց՝ Արտակը կրկնեց հարցը:

— Ոչինչ... հանգիստ եմ, — հազիվ խոսեց Անահիտը:

Արտակը լռեց՝ վիրավորին շհոգնեցնելու համար: Նա կամենում էր թեթևացնել Անահիտի անտանելի շարշարանքը, թերևս ե մահը: Ժամը վեհ էր և խորհրդավոր: Պետք էր ուրանալ սեփական անձը, իր երջանկութունը և թեթևացնել, ուրախացնել, գոնե մխիթարել ուրիշին: Արտակը լցվեց մի նոր զգացումով. միմիայն Անահիտը, միմիայն նրան տալ ամեն ինչ. և՛ առողջութունը, և՛ երջանկութուն, և՛ կյանք, իր համար ընտրել մահը: Այս խոհերով Արտակը գամեց իր հայացքը Անահիտի աչքերին: Անահիտը ընդունեց այդ հայացքը և սկսեց խորանալ, գուրգուրել Արտակին, լիանալ նրա սիրո զգացմունքով: Նրա հայացքից սերն էր անդիմադրելի զեղում հոգեկան այն բարձր հափշտակությամբ, որ բերում է հերոսական մահը սիրո ժամին:

— Դա մի արտակարգ, թերևս հոգեկան գերմարդկային ճիգով առացված կարճատև սթափություն էր գիտակցությունը համարյա մթազնած Անահիտի համար: Արտակը նայում էր երկար ու խոր: Անահիտը նշան արեց Արտակին նստելու: Արտակը շոքեց հասակին:

Անահիտը անհանգիստ էր և մերթ Արտակին էր նայում, մերթ հատակին:

— Անահիտ...

— Մի՛ շոքիր, նստի՛ր:

Արտակը մի բարձ վերցրեց և նստեց Անահիտի կողքին: Նա ձեռքը տարավ նրա այրող դեմքին: Ապա խոնարհվեց և համբուրեց նրան: Զգացումը զարթնեց նրա հոգում. ամիսների կարոտը, սրտում երկար ժամանակ շերմացրած խանդաղատանքը, երջանիկ գոհացման այրեցումը արբեցրին Արտակին: Սակայն իսկույն

Անահիտին ջերմը այնպես խլեց տարավ իր ճիրաններով, որ Արտակը զղջաց իր զգացումների անտեղի, տարածամ հորդման համար: Անահիտը շատ ավելի հեռու էր սիրո երջանիկ տարփանքից և շատ մոտ մահվան, որ կարողանար ձայնակցել Արտակին: Նա սկսեց ոգորել ցավի դեմ, նորից զառանցել սկսեց: Արտակը մեջ զարթնեց մի այրեցիկ ցանկություն՝ գոնե մի շնչին շափով մեղմել նրա տառապանքը: Եվ երբ մի անգամ ևս խոր նայեց Անահիտի աչքերին և նկատեց այն թաքցրած շատ ավելի մեծ տանջանքը, քան ցույց էր տալիս Անահիտը, Արտակը զգաց, որ դեռ սակավ էր մի կողմ դնելը իր սիրո զբոսիկ, անձնական երջանկության հետամուտ զգացմունքը. պետք էր մարդկային օգնություն ցույց տալ տանջվող մի էակի, որ ճիշտ է, քո սերն է՝ բայց նախ և առաջ մարդ է: Պետք է փրկել այս մարդու կյանքը և սպա միայն իր Անահիտի... Բայց ի՞նչ անել, ինչպե՞ս... Տագնապը մտավ Արտակի սիրտը: Նա ետ նայեց: Յուզաբերը քնել էր կրկին: Նա զարթնեցրեց նրան: Յուզաբերը վախեցած վեր թռավ, մեղանշելով ժպտաց և մոտ եկավ արագ:

— Ի՞նչ է անում Շուշանիկ տիկինը, ո՞ւր է նա... — հարցրեց Արտակը սրտենդ՝ կարծես Շուշանիկ տիկինը կարող էր լուծել Անահիտի կյանքի և մահի վեճը:

— Շուշանիկ տիկինը Մեծ Տիկնոջ մոտն է, իշխան, նա ևս հիվանդ է, — ասաց Յուզաբերը:

Արտակը խորտակվեց:

— Ապա ինչպե՞ս պիտի լինի վիրավորի վիճակը...

— Աստված ողորմած է, իշխան, — սիրտ տվեց Յուզաբերը:

— Իսկ Մամիկոնեից տիկի՞նն ինչ է անում, — հարցրեց Արտակը:

— Նա դաշտից վիրավորներ է հավաքում ուղարկում: Աստվիկին էլ հետն է տարել:

Արտակը նոր նկատեց, որ Աստղիկը շերևաց այդքան ժամանակ: Բայց և զարմացավ: Այստեղ վիրավոր քրոջը թողել գնացել է Մամիկոնեից տիկնոջ հետ վիրավորներ հավաքելու, և մյուս կողմից էլ Մամիկոնյան տիկինն է լքել զառամյալ Մեծ Տիկնոջ և գնացել: Այս ինչպե՞ս հայրենիքի պաշտպանության գործը փոխել է ամենքին: Միայն ինքն է, որ մնացել է առաջվանը և եկել է հիմա ինչ-որ հին պահանջներ է անում, սպասում է հին վերաբեր-

մունքի և կարծես իրեն շեն զբաղեցնում դաշտի վիրավորները: Նա խորհեց այդ մասին և քաշվեց ինքն իրենից: Միաժամ նա պզում էր ինչ-որ մի դաժան ցրտութիւն, սառն օտարութիւն մարդկանց այս նոր կապի մեջ:

Ներս մտան երկու գեղջուկ պառավ, խոնարհ ողջունեցին Արտակին և խաչակնքելով մոտեցան Անահիտին: Արտակին զարմացրեց այն ազատութիւնը, որով նրանք ներս մտան և Յուզարերն էլ շարգելեց նրանց, իբրև արդեն իսկ հասկանալի և ընդունված ձև՝ ազատ ու պարզ նայեցին Արտակին և մեղմաձայն հառաչեցին.

— Հողն անուշ կլինի:

— Սուրբ հողի համար ընկավ, ապա՛... Հայրենի՛ է...

Եվ առանց նկատելու Արտակի ներքին խռովքը և զայրույթը՝ նայեցին Անահիտին, գլուխներն օրորեցին ու ասացին համարյա միատեղ.

— Երանի՛ իրեն,...

Հետո խաչակնքեցին ու կռացած դուրս գնացին:

Արտակը մղվեց հասնել հետևներից և հարվածել, գոռալ, կուրծքը պատռուել: Բայց ուշաբերվեց ու զսպեց իրեն. «Սուրբ հողի համար ընկավ», հնչեց նրա ականջին մի փոքր առաջ ասված գեղջուկուհիների խոսքը: Ինչ-որ դաժան խաղաղութիւն կար նրանց այս խոսքի մեջ: Այն հողը, որ պառավների ասելով պիտի կլաներ Անահիտին, իր անդիմադրելի խստութեան հետ փաղաքուշ մի մեղմութիւն ուներ: Հայրենի էր և կենդանի: Նա Անահիտին կձուլեր իր հետ, բայց կձաղկեր և իբրև կապտաշիկ, նախշուն ծաղկե աղջիկների մի խումբ, Արտակին կվերադարձներ նրա սիրեցյալին: Արտակը խանդաղատեց և թաքուն սրբեց տամուկ աշքերը: Անահիտը հառաչեց:

Յուզարերը ջուր տվեց նրան և թաց անձեռոցիկով սրբեց նրա այրվող ճակատը: Արտակը դուրս եկավ և ինքն էլ շիմացավ փնջու: Թերևս օգնութեան մի հնար ճարելու: Եկեղեցու գավիթը լցված էր վիրավորներով, որոնց շքապատած՝ վերքերն էին լվանում, կասկում կամավոր կարգով և՛ գործ իմացողը, և՛ շիմացողը:

Արդեն լույսը բացվել էր: Արտակը գնաց դեպի Մեծ Տիկնոջ խցի կողմը. գուցե երևար Շուշանիկ տիկինը: Գոռան մտանալիս նա լսեց Մեծ Տիկնոջ ձիգ տվող ձայնը.

— Զոհերը հո՞ղ են կանչում... Հո՞ղը դրեք, սրտերն իշնի՞...  
Սպասուհիները դուրս եկան, գնացին դեպի եկեղեցի և ճամբար: Արտակը գիտեր, որ դա հրաման էր Մեծ Տիկնոջ կողմից և դա պետք էր կատարել:

Տարօրինակ մենակութուն զգաց Արտակը: Բոլորը զբաղված էին վիրավորներով ու սպանվածներով, իսկ ինքը մի վիրավորով միայն... Նա, որ գիշերս քաջ կովել էր և մասնակցել հաղթության՝ խղճի խայթ էր զգում՝ տեսնելով իրեն պարապ՝ այսքան զբաղվածների մեջ, որոնք կամ կյանք էին վերադարձնում, կամ վերջին պարտքն էին կատարում զինվորյալների առաջ: Անկարող եղավ վերադառնալ Անահիտի մոտ: Գնաց դեպի վիրավորներն ու սպանվածները:

Մի տեղ պատրաստվում էին թաղել եկեղեցում մեռած երիտասարդին: Նրա պատկառելի հայրը միշտ նույն հանգիստ կեցվածքով նստած էր մեռածի կողքին: Նրա մոտ շոքած էր մայրը և մի ձեռք դրած սպանվածի սրտին՝ շարունակ նայում էր նրան:

Գեղջկուհիները մերկացրին մեռածին՝ առանց քաշվելու նրա մերկանգամ վիճակից: Զուր բերին, լվացին նրա վերքը, մարմինը և սկսեցին հասարակ խորհրդակցութուն, թե որտե՞ղ թաղեն: Երիտասարդի մայրը մտահոգ դեմքով շուրջը նայեց և մի ձեռք չպոկելով սպանվածի սրտից՝ տեղ որոնեց թաղելու համար:

— Պարսպի տակ, հա՞:

Շինականը նայեց պարսպի կողմը: Նա հանգիստ ասաց.

— Պարսպի տակ:

— Կանչի՞ր տերտերին:

Տղամարդը վեր կացավ տեղից և գնաց եկեղեցու հետև, ուր քահանան թաղում էր կատարել և արդեն ծովում էր այս կողմը: Սպանվածի մայրը վեր կացավ և ձեռները խաչեց կրծքին:

Եկավ քահանան:

— Հա, հանգե՞լ է,— ասաց նա գործի եղանակով և սկսեց աղոթել հակիրճ ու շտապ:

Երիտասարդի գլխավերևը կանգնած մայրը հանգիստ ու անշարժ հետևեց թաղման աղոթքին: Ապա երբ աղոթքը վերջացավ՝ ծնողները համբուրեցին իրենց զոհված որդուն և դիակը տարան պարսպի տակ, գերեզման փորեցին գավթում գտնված մի բահով, թաղեցին և ապա լուռ հեռացան:

Արտակը մոռացավ, որ ինքը կանգնած հայտն էր այս տեսարանին: Նրան չարամացրեց ծնողների այդ հասարակ վերաբերմունքը դեպի իրենց զոհված զավակը, այլ մի տեսակ հանգստացրեց: Նրանք հողին հանձնեցին իրենց զավակը, կարծես բարեկամի պահ տվին մի թանկագին ավանդ. մի բարեկամի, որի վրա կատարելապես վստահ են, որ կամեցած պահին կվերադարձնի սովանդը:

«Ի՛նչ հանդիստ են շինականները»,— մտածեց Արտակը, և հոգին խաղաղվեց, լցվեց տխուր համակերպությամբ:— «Նրանք գիտեն մեռնել»,— շարունակեց խորհել Արտակը, — «Նրանք զոհվում են առանց աղմուկի և պահանջի: Նրանք քաջարի են... Եվ նրանք կհաղթեն»:

Ճամբարից եկան և հայտնեցին, որ նախարարները գալիս են: Եկեղեցուց դուրս եկան կաթողիկոսը, Ծգնիկ Կողբացին և Նղիշեն: Եկավ Վարդանը Ղևոնդ Երեցի, Հազարապետի, Ներշապուհի, Շմավոնի և Ձոհրակի հետ: Ատոմն ու Խորենը մնացել էին ճամբարում՝ զորագնդերում կարգ պահպանելու:

Ձոհրակը Արտակին ասաց, որ լուր է եկել, թե Ջարեհավանի պարսից զորագունդը կես ճանապարհից ետ է դառել՝ չվստահելով մենակ դուրս գալ Վարդանի դեմ: Դրա փոխարեն Վարդանը Ատոմին ուղարկում է Ջարեհավան՝ ոչնչացնելու պարսից զորագունդը, և Ատոմը հիմա կմեկնի:

Ձոհվածներին պիտի թաղեին եկեղեցու գավթում: Նախարարների գալուստը նկատելով, նրանց հետևից ներս լցվեց շինական բազմութունը ճամբարի մոտից և դաշտերից: Դաշտից եկավ նաև Մամիկոնյան տիկինը: Մեծ Տիկնոջ խցի դուռը լայն բացվեց, և Շուշանիկ տիկինը սպասավորուհու օգնությամբ Մեծ Տիկնոջ թեփերն ընկած դուրս բերին գավիթը:

Սպանվածներին հավաքեցին մի տեղ, միաշարք: Մեծ Տիկինը գնաց նրանց կողմը և խորին ակնածանքով ու խստահայաց կերպարանքով կանգնեց նրանց գլխավերևը:

Վարդանը Արտակի և մյուս նախարարների հետ կանգնեց գերեզմանների եզրին: Ժողովուրդը շերմեռանդ լուռությամբ շրջապատեց նախարարներին՝ լցվելով հպարտության և սխրագործության զգացմունքով: Միաժամ նա շերմութուն զգաց դեպի իր Սպարապետը, որ այդքան համեստորեն եկել էր հասարակ շինա-

կաննների թաղման: Վարդանը իր խղճի վրա էր վերցնում այս գոհները: Եվ միաժամ խորհում էր, որ այսպիսի գոհներ շատ կլինեն, երբ ինքը կտանի երկիրը արհավիրքին դիմադրելու: Կարո՞ղ է վերցնել նա իր խղճի վրա այսքան արյունը... Ուղի՞ղ է նրա գործը... դա կդատի ժողովրդի խիղճը:

Արտակի համար անհասկանալի էին Աստղիկի շարժումները: Նա իր տիրության և անհանգստության հետ ցույց էր տալիս կենսաթրթիռ մի հետաքրքրություն, որով նայել սկսեց այն կողմը, ուր կանգնած էր Զոհրակը: Երիտասարդը գեղեցիկ էր այդ պահին մի փոքր արյուն լցված աչքերով, որոնք սակայն փայլում էին վեհությամբ: Զոհրակը պատահամբ նայեց Աստղիկին, տնտղեց նրա գինվածությունը և ժպտաց: Աստղիկը նույնպես ժպտաց և նայեց իր սրին ու կարճ դանակին: Երկուսին էլ անծանոթ էր կեղծ ուրացությունն ու նրա հետ կապված հոգեկան ողբերգությունը:

Աստղիկը, որ արդեն հեռուներն էր նայում, երբ կրկին հայացքը դարձրեց Զոհրակին, սա արդեն խստահայաց զորականի նման հայացքը շրջել էր ուրիշ կողմ և խոժոռվել նահատակների գլխավերևում:

Եղիշեն ավարտեց աղոթքը: Ապա ոգելից հայացքը սահեցնելով շորս կողմ բազմության վրա՝ խոսեց հոգեշարժ մի դամբանական առաջին նահատակների մասին.

— ... Հզորացյալ Հայրենյաց սիրով և առաքինացյալ սրխրությամբ՝ նրանք հաղթեցին բռնավորին: Նմանող լինենք գինվորյալ ոգիներին և արժանի ազատության,— վերջացրեց նա իր խոսքը և լռեց:

Նահատակներին սկսեցին թաղել:

Մեծ Տիկինը դողդոջուն ձեռքով հող վերցրեց և այն նետելով նահատակների վրա գռչեց.

— Հող էիք՝ հող դարձաք: Գնացեք, աշխարհի՛ լույսեր, ճանապարհ բացեք մեզ համար:

— Ամեն,— ասացին նախարարները:

Վարդանը լռելյայն հող ածեց նահատակների վրա: Նույնը և մյուս նախարարները, և ապա ետ քաշվեցին, սկսեցին դիտել թաղումը:

Եկեղեցու գավթում գոյացան մի շարք տխուր ու թաղմահող գերեզմաններ:

Արտակը մոտեցավ Մամիկոնեից տիկնոջ և Աստղիկին: Նրանք փոշոտ ու արյունոտ էին: Հոգնությունն աչքներին՝ նրանք քայլում էին դեպի խուցերը:

— Ողջո՛ւյն, տիկի՛ն, ողջո՛ւյն, օրիո՛րդ,— ասաց Արտակը տխուր:

— Ողջո՛ւյն, իշխանի՛կ,— նայեց նրան Մամիկոնեից տիկի-նը նշանակալից,— ինչպե՞ս է վիրավորը...

— Տագնապի մեջ է...

Աստղիկը ցնցվեց և ներս վազեց խուցը:

— Զորագնդերն անհանգիստ են, իշխանիկ, գուցե դեպք պա-րագհի,— մտահոգեց Մամիկոնեից տիկինը՝ թերևս կողմնակի դե-տողություն անելով Արտակին, որ հեռացել է գործից:

— Ի՞նչ պիտի անենք Մեծ Տիկնոջը, օրիորդին,— հարցրեց Արտակը՝ թաքցնելով իր վիրավորանքը դիտողության մասին:

— Հենց որ սալլ նատելու կարողություն ունենան՝ կուտանեմ տուն,— ասաց Մամիկոնեից տիկինը՝ հասկանալով նրա մտա-հոգության բուն առարկան:

— Իսկ հույս կա՞ ապաքինման, տիկին...

— Աստված գիտե: Այնքաննե՞րն ընկան... Թող մե՛նք ևս լի-նենք հաղորդակից:

Արտակը գլուխը կախեց տխրագին:

Մեծ Տիկինը հոգեկան ցնցումներից բեկված՝ բոլորովին թու-լացավ: Նրան տարան խուցը: Վարդանը զնաց ներս մյուս նա-խարարների հետ: Այստեղ այլևս բոլորովին ընտանի, առանձին վիճակում բոլորը խորթ ու ստոն կերպարանք ունեին: Օտար էր նայում իրեն Մամիկոնեից տիկինը, այլափոխված էին մյուսները: Ի՞նչ, դեռ շարունակո՞ւմ էին թշնամանալ իր հետ, կասկածե՞լ իրենից, խորշե՞լ, չնե՞րե՞լ: Այդպես էին նրանց հայացքները նաև առաջին հանդիպման ժամանակ բազմության մեջ, եփեղեցում: Ինչո՞ւ ուրախ չեն և չի շերմացնում նրանց սիրտը թյուրիմացու-թյան պարզվելը: Թե՞ սրտները ելած, մի անգամ կասկածը մը-տած՝ դժվար էր միանգամից հաշտվել, մոռանալ երկաթ օրերի մոռյլ տպավորությունը: Նա ցավեց, խիստ վիրավորվեց իր տիկ-նոջից, ցավեց միաժամ հասկանալով նրա հպարտության վիրա-վորումը: Նա սրտի անձկությամբ մոտեցավ Մեծ Տիկնոջ: անարին և շոքեց նրա առջև: Մեծ Տիկինը ջերմ խաշակնքեց նրան, ապա և

մյուս նախարարներին, որ տագնապով և ամոթանքով կանգնած էին նրա մոտ: Ջերմ էր եկել պառավի վրա, և նա թեթև դառանցել սկսեց: Սակայն մի ներքին ուժ նրա մեջ ոգորում էր հիվանդության դեմ: Պառավը դեռ կենդանի ոգի էր՝ պայքարող և կոռովի:

— Սթե մեռնեմ, զոհվածներից հո՛ղ դիր գերեզմանիս,— ասաց նա երազկոտ ու տխուր:

— Կամբղ սուրբ, մա՛յր,— ասաց Վարդանը և համբուրեց մոր աչք:

— Չես մեռնի, Մեծ մայր,— առաջ եկավ Հագարապետը,— կտեսնես Հայոց աշխարհի ազատությունը:

— Զավակիս տեսա՞ Հայոց աշխարհի ազատությունը տեսա,— ասաց նա բորբոքված ծայնով:

Վարդանը նախարարների հետ դուրս ելավ եկեղեցու գավիթը:

Արտակը ոտը կախ գցեց, որ մի հայացքով գոնե կարողանա Շուշանիկ տիկնոջից բան իմանալ Անահիտի մասին: Նա արդեն կորցնում էր իրեն: Վարդանի խտաբեր պահանջը՝ իր մոտ լինել շարունակ՝ խելքահան էր անում երիտասարդ իշխանին: Նա կամենում էր բացատրել նաև տիկինների սառնությունը իր դեմ: Նոր էին նախարարները ոտները դրել խցի աստիճաններին, որ Շուշանիկ տիկինը արող հասավ հետևներից և հասնելով Արտակին սանդուղի գլխին՝ մեղմ և տխուր նրա ձեռը սահեցրեց մի ոսկե մատենիկ:

— Ի՞նչ է սա,— հարցրեց Արտակը հետաքրքիր և հուզված:

— «Նա» էր գրել, ծաղկել...

— «Նա՛»,— սրտի քաղցր ճմլոցով հառաչեց Արտակը, բայց խսկույն Շուշանիկ տիկնոջ խոսքի մեջ զգաց ինչ-որ կիսատ, անխորժ բան:

— Գրել էր, ծաղկել, միայն...

— Ի՞նչ «միայն»,— անհանգստացավ Արտակը:

Շուշանիկ տիկինը հասկացնելով անպատեհ ժամը՝ շտապեց ներս:

— Հետո՛, հետո՛... տեսնո՞ւմ ես ինչ իրարանցում է...

— Բայց ի՞նչ է նրա վիճակը, տիկին... նա մենակ է... մեռնում է... ես կզնամ նրա մոտ...

— Ո՛չ, ո՛չ, իշխանիկս, ո՛չ, ո՛չ... — ասաց արագ-արագ Շուշանիկ տիկինը և թեթև ողջույնի նշան անելով ետ գնաց խուցը: Արտակը ետ նայեց. իրեն էր սպասում Վարդանը գավթի դռանը մյուս նախարարների հետ:



Սպասավորը խոնարհաբար ետ արեց տաղավարի վարագույրը: Ներս եկան վասակյանները Վասակի գլխավորութեամբ:

— Վերջացնենք,— ասաց Վասակը ծանրախոհ պահանջով:

— Ի՛նչը պիտի վերջացնենք,— խոժոովեց Վարդանը,— ես ապստամբ եմ: Ապստամբ եմ արյաց պետութեան դեմ և Հայոց աշխարհը տանելու եմ նրա դեմ: Ծս վայրենի հեն շեմ. գիտեմ ո՛ւմ դեմ եմ բարձրանում: Ծս կղիմեմ ամենքին. ով ինձ հետ է, մեզ հետ, Աշխարհի հետ՝ նա կգա մեզ հետ, իսկ ով ոչ՝ կկանգնի մեր դեմ: Ընտրեցե՛ք:

— Մենք ընտրեցինք արդեն,— ասաց Վասակը,— մենք ևս ապստամբ ենք: Միայն կատարենք պայմանը:

— Կատարեցե՛ք,— ասաց ոչ առանց հեզնանքի Վարդանը,— օ՛ն ուրեմն, տյարք,— դիմեց Վարդանը բոլորին,— անմիջապես ցրում ենք Զարհավանի պարսից բերդապահ զորքը: Տե՛ր Գնունյաց, դու ես վարում մարտը: Ճանապարհ ընկիր իսկույն: Հաջողութի՛ւն:

— Աստժո՛վ,— ասաց Ատոմը և բացվեց նոր գործի թարմութեամբ:

Նրան ժպտաց առաջիկա մարտը: Ծվ ժամ էր արդեն շարժվելու:

Նոսակցութիւնը չկապվ: Նախարարները գնացին իրենց տաղավարները պատրաստվելու մեկնել Այրարատ: Արտակ Ռշտունին հայտնեց, որ ինքը կամենում է նախքան Այրարատ՝ գնալ տուն, իր աշխարհը: Նա զայրացած էր իր հրամանատարի վրա իր զինավորներին Ատոմի զորագնդին ենթարկելու պատճառով: Նրա աւկանջին հասցրին, որ իր աները՝ Գեղեոնն է օժանդակել Ատոմին: Նա կամենում էր շուտով նրան պատժել, որ հանգստանար:

Վասակը պահանջեց, որ բերեն իր հրամանատարին: Այս մասին հայտնեցին Վարդանին: Նա թույլ տվեց: Հրամանատարին տարան Վասակի մոտ:

— Վերջդ մե՞ծ է,— հարցրեց Վասակը:

— Վերջը հոգու մեջն է, իշխան,— ասաց դառնացած հրամանատարը:

— Դիմացի՛ր,— ասաց Վասակը և կանգ առավ մի փոքր, փորձող աչքերը հառեց հրամանատարին.— դու պիտի կրկին անցնես գործիդ.— հրամանատարը չհասկացավ.— պիտի կրկին վաբես գունդը: Հրամանատարը զարմացած նայեց միայն:

— Դու պիտի գունդը վարես ընդդեմ պարսից,— վերջացրեց խոսքը Վասակը:

— Կրակ-ջուր՝ հրամա՛նդ,— կոշտաձայն պատասխանեց հրամանատարը:

Վասակը սենեկապետին ուղարկեց Վարդանի մոտ՝ հայտնելու իր ցանկությունը, որ իր հրամանատարին ազատեն ձերբակալությունից և կրկին վերադարձնեն զորագունդ, նախկին պաշտոնին: Վարդանը այդ ևս զիջեց: Եվ որպեսզի նման դիմում չկրկնվի՝ նա հրամայեց, որ արձակեն և իր պաշտոնին վերադարձնեն նաև Ռշտունյաց հրամանատարին: Արտակ Ռշտունին գնաց Վարդանի մոտ և ցանկություն հայտնեց նախքան Այրարատ՝ գնալ տուն: Վարդանը հավանություն տվեց նաև այդ պահանջին:

Ատոմը ճանապարհ ընկավ Զարեհավան: Վարդանը իր մոտ հրավիրեց Արտակ Մոկացուն և ցանկություն հայտնեց, որ նա գնա Բզնունյաց ծովի կողմերը՝ հեռվից, մոտից հսկելու, թե ինչե՛ր կարող են կատարվել Ռշտունիքում և Խորխոռունիքում: Հրահանգեց հիմնավոր պատրաստություններ տեսնել ժողովրդին քաշելու գորքի մեջ և զինավարժության կոշիլ նրան, հետևել և կազմակերպել այդ գործը: Միաժամ խնդրեց Մեծ Տիկնոջը և մյուսներին տանել տուն հատուկ հսկողությամբ: Արտակը հասկանալի ուրախությամբ ընդունեց այդ պատվերները, թեև նրան գրավում էր միաժամ Այրարատը և ապստամբական շարժումը երկրի կենտրոնում:

Վարդանը սպասեց Ատոմի գործողություններին մի օր միայն: Հետևյալ օր, կեսօրի մոտ, սուրհանդակը լուր բերեց, որ Զարեհավանի բերդապահ պարսիկ զորքը ջարդված է և ցրիվ տրված: Հրաման ուղարկելով Ատոմին հասնել միանալ իրեն՝ Վարդանը այցելելով հիվանդ Մեծ Տիկնոջ և մյուս վիրավորներին, պատվիրելով վերադառնալ տուն՝ դուրս եկավ Անգղից դեպի Այրարատ:



Ճանապարհը դատարկվեց, թե՛մ դեպքերի վայրը ամայացավ:

Մնաց եկեղեցու գավիթը իր վիրավորներով և հիվանդներով: Արտակը սկսեց խորհել նրանց տուն տանելու մասին: Գործը դժվարին էր. պետք էր սպասել: Մի քանի օր հետո Մեծ Տիկինը ապաքինվեց և հայտնեց, որ կարող է ճանապարհ ընկնել: Բայց Անահիտը չէր բուժվում: Մեծ Տիկինը հրամայեց, որ սպասեն, մինչև բուժվի: Ծախատեակեց երկար ու ծանր սպասում. մինչև ե՛րբ կարող էր դա տևել և ինչո՞վ կվերջանար: Կույսը հույսեր չէր տալիս: Անահիտը, որ երբեմն ուշքի էր գալիս և իր շուրջն եղած խոսակցություններից հասկացել էր հանգամանքները՝ հայտնեց, որ ինքը կարող է ճանապարհ ընկնել, կդիմանա: Որոշեցին փորձել կամաց-կամաց, սալլերով ճանապարհ ընկնել: Բերել տվին գամշի սալլեր և հիվանդներին պառկեցնելով վրաները՝ ճանապարհ ընկան: Առաջին օրերը Անահիտը դիմացավ: Բայց ճանապարհի կեսին դրուժունը վատացավ այն աստիճան, որ կանգ առան մի գյուղում և հիվանդին տարան խրճիթ:

Սկսվեց տանջանքն ու ոգորումը:

Խրճիթը, ուր տարան հիվանդ Մեծ Տիկնոջը և վիրավոր Անահիտին, նստած էր գետափի բլրին, ջրաղացից մի փոքր բարձր: Տանտերերը՝ այր ու կին՝ թախծալի ժպիտով և հատուկ ջերմեռանդությամբ ընդունեցին հյուրերին: Նրանք տխրությամբ ճանաչեցին հիվանդներին և նրանց ուղեկիցներին: Դրանք եկեղեցու գավթում թազված երիտասարդի ծնողներն էին: Արտակը հաղիվ հիշեց նրանց, այնքան ցրված էր և մտամոռուր: Տանտերը գյուղի ջրաղացպանն էր, ուներ նաև երկու զավակ, մեկը սպանվածից մեծ, մյուսը՝ փոքր, պատանի: Մեծը խոշոր բեզերով, խրոխտ, բարձրահասակ երիտասարդ էր, ջրաղացում աշխատող, փոքրը՝ առասուններին էր նայում: Տանը ելումուտ էր անում ջրաղացպանի կորամեջք պառավ մայրը. իսկ ջրաղացի դռան նստած նիրհում էր ծերունագարդ հայրը:

Խաղաղ էր գյուղը բարի մարդու նման: Նա իր երեսը դարձրել էր դեպի Բզնունյաց ծովը, որ մարմարի նման գունատ, ինչոք մի բարձր մտքով վերացած անդորր էր բուրում այնտեղից:

Արևի տակ ոսկեգօծվում էին մերկ լեռներն ու դաշտերը: Գե-  
տակը հոսում էր մերթ խորհելով հանգիստ, մերթ ծիծաղելով:

Սպասավորներ ուղարկվեցին Ողական՝ իշխանական սայլերը  
բերելու: Արտակը տեղավորվեց հարևան խրճիթում, որի տանտե-  
րը հին ռազմիկ էր՝ խրոխտ ու առնական հասակավոր հողագործ,  
որ իր որդուն ուղարկել էր Ատոմի զորագունդը: Նրա կինը մեռել  
էր վաղուց և տան տնտեսությունը վարում էին ինքն ու իր հարսը:

Աբաթաթին այս խաղաղության մեջ մի բուռն փոթորիկ կար  
սակայն: Անահիտը ծանրացավ հենց նույն օրը, որ հասան այդ ծո-  
վամերձ գյուղը: Կույսը, որ ուզեկցում էր նրան, ըստ երևույթին  
չէր հասկանում, չէր կարողանում բուժել: Վրա հասավ ծանր մի  
գիշեր: Աստղիկը, միշտ Անահիտի կողքին, շորացել էր նրա նման:  
Աշխույժ աղջիկը, որ դեռ նոր էր օիրո տեր դառել և նոր կյանքի  
շեմքը ոտը դրել՝ կոտրվել էր, խեղճացել: Մամիկոնեից տիկինը,  
որ Մեծ Տիկնոջ հետ հարևան խրճիթումն էր, եկավ հիվանդի մոտ  
և սկսեց փսփսալ Շուշանիկ տիկնոջ ականջին: Անահիտը ծանր  
էր: Ծրկյուղ կար, որ շի դիմանա:

Մամիկոնեից տիկինը դուրս ելավ խրճիթից, մոտեցավ դռա-  
նը կանգնած Արտակին և այլևս աճելոբոջ համաբելով նկատի առ-  
նել Արտակի ամոթխածությունը կամ մեղմացնել վտանգը՝ խոս-  
եց այդ վտանգի մասին և նախապատրաստեց աղետին: Արտա-  
կը, որ իր սեփական երկյուղներից այնքան չէր ազդվում, երբ  
տեսավ նաև ուրիշների երկյուղը, սկսեց հուսակտուր լինել և տաղ-  
նապել: Մի ժլատ թեթևություն կար միայն, որ այլևս ազատ ելու-  
մուտ ուներ Անահիտի մոտ:

Գիշերն սկսեց խորանալ. հասավ յամբ «խավարակն»: Դաշ-  
տերն ու լեռները լուրջ խոհերով նայում էին մթան միջից: Զբաղա-  
ցր խուլ մուտում և կրճատացնում էր ատամները: Արտակը մտա-  
ցավ Անահիտի խրճիթի գռան: Մութ ստվերի մեջ կանգնել էր  
Աստղիկը: Արտակը կանգ առավ նրա առջև: Նա հեծկտոց լսեց  
Վախեցած բռնեց նրա թևը:

— Աստղի՛կ... — հծծեց նա ատամների մեջ:

Աստղիկը հեկեկաց ավելի բարձրաձայն:

— Բա՞ն ասաց կույսը... — հարցրեց Արտակը:

— Ոչ... բայց նա էլ հույսը կտրել է... — հեկեկոցի հետ հաս-  
գիվ խոսեց Աստղիկը:

— Ապա ի՞նչ պիտի լինի... — հուսահատ հարցրեց Արտակը:

— Չգիտեմ... իշխա՛ն... չգիտեմ... քույրս գնաց, իշխա՛ն, — փղձկաց Աստղիկը:

Արտակի սիրտը սառեց: Նա ներս մտավ: Շուշանիկ տիկինը բռնել էր Անահիտի ձեռը և խոժոռ նայում էր նրան, ավելի շուտ սպասում: Անահիտը աչքերը ապակի և դեմքը սրված՝ նայում էր առաստաղին և ցույց չէր տալիս, թե զգում է կամ ապրում: Մամիկոնեից տիկինը նստած Անահիտի գլխավերևը՝ մռայլ արձանի պես անշարժ՝ խորացնում էր տագնապը: Կույսը աղոթում էր: Շուշանիկ տիկինը նայեց Արտակին և բարկացած հայացքը կրկին դարձրեց Անահիտին: Արտակը կանգնեց՝ թևերը կրծքին խաչած: Նա վշտահար և ահաբեկ աչքերը լայն բացեց և քարացավ տեղում: Ոչ մի հույս այլևս, երբ կույսը միայն աղոթում էր, Շուշանիկ տիկինը սպասում վախճանին, իսկ Մամիկոնեից տիկինը մի տեսակ վկայում մահը: Արտակը մի կարճ պահում ծերացավ, իմաստնացավ, տեսավ կյանքը սկզբից մինչև վերջը: Նա մտածեց նաև իր մահվան մասին, որ լավ կլիներ՝ շուտ հասներ և վճրք տար այս խոշտանգիչ գոյության: Արտակը չկարողացավ դիմանալ. դուրս գնաց դեպի դուռը: Աստղիկն այնտեղ չէր: Առաջ գնաց մթության մեջ և հանկարծ իր դեմն ելավ Աստղիկը: Նա բուռն հուզմունքով ընկավ Արտակի գիրկը և սկսեց լուռ մնալ այդպես: Դա մի պահ հանգստացրեց նրան: Արտակը եղբայրական կարեկցանք զգաց դեպի անպաշտպան և մեռնակ աղջիկը, որ օտարների մեջ սպասում էր միայնակ կյանքի՝ զրկված իր հարազատից ու մոտիկից: Աստղիկը թողեց Արտակին և վախեցած ներս վազեց խրճիթը: Արտակը մնաց մեռնակ և հուսալիք վիճակում:

Խավարի մեջ ջրաղացի կողմից երկու ստվեր շարժվեցին դեպի խրճիթն ու Արտակը: Նրանք գալիս էին դանդաղ, մինը օրորվելով: Երբ մոտեցան, Արտակը ճանաչեց. մեկը ջրաղացպանի պառավ մայրն էր: Մյուսը մի դեռատի աղջիկ էր և ձեռքին մի փաթեթ ուներ: Պառավը տնքում էր և շնչատում. երևում էր, որ զատիվները նրան նեղում էր: Հասնելով խրճիթին՝ կանգ առավ և հառաչեց:

— Հա՛, ի՞նչ է, — հարցրեց Արտակը մեղմ ու մտամոլոր:

Նա, ճիշտ է, մարդ չէր որոնում, որի հետ մի խոսք փոխանակել կարողանար, քանի որ մեռնակութունն ու անճարակութուն-

նր խեղդում էր նրան, բայց, ինքնաբերական այս հարցմունքը կարծես և ցրում էր մի փոքր վիշտը:

— Ի՞նչ անեմ, իշխանի՛կ որդի, մինչև գտա, մինչև եփեցի... ախր ձեռից-ուտից ընկած եմ: Օ՛ֆ:

— Ի՞նչ ես եփել:

— Դարմանը. խեղճ օրիորդը շատ է ծանր, շատ է նեղվում:

— Վիրավորի՞ համար է դարմանը:

— Ապա ո՞ւմ... թողնե՛մ, որ հեռի իրենից, մեռնի՛... օ՛ֆ,— շնչատելով ասաց պառավը և շարժվեց դեպի խրճիթը,— գնանք, Յողի՛կ:

Արտակը գնաց նրանց հետևից: Մտան խրճիթը: Պառավը մոտեցավ Անահիտին, չոքեց և փաթեթը հատակին դնելով՝ երկու ձեռքով բռնեց Անահիտի երկու ձեռը: Երկար պահեց և ականջ դրեց, թե՛ սպասեց, որ բան հասկանա: Հետո տնքալով ու գործի եղանակով լուրջ ու վստահ ետ արեց Անահիտի վերքը, դրեց սպեղանին, որ բռնել էր աղջիկը: Հետո նստեց կրունկների վրա:

— Գնա՛, Յողի՛կ, տաք ջուր բե՛ր:

Յողիկը վազեց դուրս: Պառավը հանգիստ մտահոգությամբ նայեց Անահիտին և սկսեց հորանջել: Յողիկը վերադարձավ գուրշիացող հեղուկի մի ամանով: Դա բուժական խմիչք էր: Պառավը սկսեց շփել Անահիտի ձեռները և աչքով արեց Յողիկին, որ նա էլ ոտները շփի: Արտակը գնաց դուրս:

Գիշերը շարունակում էր դարձնել իր ճախարակը: Երկինքը խորհում էր, մինչ ներքև քնի մեջ մշշում էր երկիրը: Որքան կյանք կար տիեզերքի մեջ: Արտակը գնաց ջրաղացը: Գաղջ փոշին ցորենի բուլրով մի ակնթարթ փակեց նրա շունչը: Աղորիքները դղրդում էին և մաշում ցորենը: Զրաղացպանը կուզեկուզ մոտենում էր մերթ այս, մերթ այն աղորիքին և զննում: Արտակը մտեցավ նրան: Զրաղացպանը շտկվեց ի հարգանս իշխանի և ձեռքերը բարև բռնած՝ կանգնեց նրա առջև: Արտակը նստեց մեղմ այրվող խանձողների կողքին:

— Դու չեի՞ր Անգղում որդուդ թաղողը,— հարցրեց Արտակը:

— Հրամանք ես, իշխա՛ն,— պատասխանեց ջրաղացպանը հանգիստ:

— Օգնականդ պակասեց:

— Պակասը կլցվի, ի՞նչ անհնր, աշխարհք մեռնել կա: Հիմա էլ փոքրն է ուզում գնալ Ատոմ իշխանի զորագունդը:

— Կթողնե՛ս:

— Է՛, գնա թող, գործը քաշում է, ես ի՞նչ անեմ: Մենակ արի ու, աշխատողդ պակաս, աշխարհք կերակրի: Ծանր է: Դաշտի մկան պես փորում ենք, խորում, հա՛ ել, հա՛ մուտ. մեկ էլ մտիկ ես տալիս՝ կյանքդ սարից իջնում է...

Ջրաղացպանը հոգսի ծանր ու մանր եղանակով անձրևում էր կյանքի և տնտեսության դժվարությունների մասին: Արտակը լսում էր և լցվում նոր կյանքի խոհերով: Նա վայելողի անհոգութամբ վերևից ներքև էր նայում կյանքի հոգսը քաշողին և թեև չէր կարեկցում, բայց տեսնում էր նրա տաժանելի վիճակը: Դեռ նրան սրտնեղություն էր պատճառում այդ հոգսը: Ինչացո՞ւ է դա, երբ կան շատ ավելի բարձր ու գեղեցիկ հոգսեր: Արտակը, հիշեց, որ մոռացել է Անահիտի հոգսը: Նա ցնցվեց և ցրեց իր գլխից նոր զարթնած մտքերը: Սուր ցավը խայթեց նրան: Ի՞նչ պիտի լինի Անահիտը... Աղորիքները խլացնում էին սակայն նրա մտքերը հին թե նոր: Ջուրը նավերից խուժում էր աղորիքների տակ և հարվածում՝ կյանք բերելով հետը: Աղորիքները վետվետում էին ու պարում, ցորենը փողիանում էր՝ բերելով հագուրդ ու կենդանություն: Կրկի՞ն միտք.— Ի՞նչ պիտի լինի Անահիտը... Ի՞նչ կլինե՞ր և նա՛ ապրեր, երբ ապրում են այս ջուրը, աղորիքները, հացը, մարդիկ, այն սարդերը, որ ոստայններ են ցանցել ողջ առաստաղը:

Ներս մտավ պառավը Յողիկի հետ և տնքալու՜ նստեց:

— Թեթևացա՞վ,— հարցրեց ջրաղացպանը:

— Ննչեց,— ասաց պառավը հասարակ ու հոգածու:

Արտակը կենդանացավ:

— Ասել է՝ փրկված է, մայրի՛կ...

— Ապա ի՞նչ, իշխանի՛կ որդի, դարձանը տվի, հիմի սրանից դենը այս կողմը կկտրի, օ՛ֆ... ի՞նչ եմ ասում,— դարձավ դեպի ջրաղացպանը,— գնա բանդի վերևներից խավարժիլ քաղի՛ր բեր:

Ջրաղացպանը գնաց:

— Մայրի՛ կ, ճշմարիտն ասա՛, կապրի՞ս... — հարցրեց Արտակը անձկութամբ ու դողով:

Պառավը տնքաց:

— Ամեն մեռնողի համար էլի մի քիչ կյանք կա պահած, իշխանի՛կ, պիտի գտնես: Դե՛, հող է, մե՛ ե՛ծ, ման ես գալիս կյանքի. գտար՝ իր բախտը, չգտար՝ հողը տանում է: Աշխարհք է. այս պահիս մեկի հաշհան է, մյուսի՝ վայվայը: Ապրում է ապրողը: Օ՛ֆ:

Պառավը, որ հիվանդ էր երևում և շարունակ տնքում էր՝ Արտակի համար, սակայն, կյանքի և առողջության աղբյուրի պես հորդում էր: Արտակը լցվեց աշխույժով:

— Շնորհապարտ պիտի մնանք քեզ, մայրի՛կ, եթե հիվանդը ապաքինվի:

— Ապա ի՞նչ պիտի լինի, որդի՛ս. մեղք է, սիրո տեր է, — ասաց պառավը գետնին հակված: Յողիկը ախուր ժպտաց քթի տակ:

Երկար լռեց պառավը և խորհող աչքերը գետնին գցած՝ մնաց անշարժ: Հետո սկսեց խոսել՝ կարծես ինքն իրեն.

— Ախր ամեն հիվանդ որ մեռնողի շարքը գցես՝ ո՛ւր կհասնի: Տնաշեն, մեկ գնա դաշտ, հողին հարցրու՝ ի՞նչ ունի պահած հիվանդի համար, կյանք, թե՞ մահ: Հողը կասի: Թե չէ՝ նստել կողքին, մեռնելուն է սպասում... է՛, է՛, է՛...

Արտակը լցվում էր ուրախության արցունքներով:

— Հիմա ինչպե՞ս է, լավանո՞ւմ է, — հարցրեց նա քաղցր անձկությամբ:

— Կենդանություն՝ է, որդի՛ս իշխանիկ, կամաց-կամաց Եյութը պիտի աշխատի. նա էլ օր ունի, ժամանակ ունի: Հրաման չէ գոռելը, — ծիծաղեց պառավը խուլ ձայնով:

Ջրաղացպանը եկավ՝ բերելով մի կապուկ խավարծիլ և ավեց մորը: Պառավը նորոգեց կիսահանգած կրակը և սկսեց հատուկ ամանով դարման եփել:

«Անահիտի կյանքն է եռում այդ ամանի մեջ», — խորհեց Արտակը երջանիկ խանդադատանքով և նայեց պառավին: Պառավը Յողիկի բռնած ձեռքերով մռայլ լույսի տակ, իր խստագիծ բարի դեմքի կնճիռներով ու խորասուլյ աչքերով կարծես մարմնավորում էր այդ հողը, որ կյանք էր շնորհում: Նա մի ջերմություն զգաց դեպի այդ ուսմուհին, խոր հարգանք: «Աշխարհն է նաև: Ուժ կար այդ աշխարհի մեջ: Ո՛վ գիտե, ո՛ր նախնիներն էին հողից»

դուրս հանել նրա գաղտնիքներն ու իմաստութիւնը: «Ռամիկ է, Բայց կյանքի գանձարանի բանալին ձեռին է. ես հիմա նրա սպասին եմ. նրա ապավենին եմ նայում», — մտածեց Արտակը:

Պառավը եփում էր համբեր ու դանդաղ, միանգամայն վրստահ: Նա կատարում էր այդ իբրև մի հասարակ և հասկանալի ձեռնարկ: Բնութիւնն պես, որ խլում կամ շնորհում է հասարակ ու դուրին, առանց շոինդի: Արտակին զարմացնում էր, որ այս ընտանիքում չէին խոսում իրենց կորցրած զավակի մասին: Յա՛վ չէին զգում, թե՛ խոսք չէին գտնում արտահայտելու: Թե՛ դա չէր վրդովում նրանց հոգին: Այսքան շնորհում են սրանք ուրիշներին՝ հաց, ապրուստ, կենդանութիւն, անգամ իրենց զավակը, և կամ չեն նկատում՝ կամ թաքցնում են ամեն ինչ իրենց մեջ: Գիմացկուն են: Նրանք այլ պինդ նյութերից են շինած:

«Ժողովուրդը», — խոսեց իր մեջ Արտակը:

Նա փոխվում էր, լցվում նոր մտքերով ու զգացմունքներով և չէր նկատում այդ, այնքան նրան կլանել էր Անահիտի մասին իր եսական շահերի կիրքը: Բայց և Անահիտի կենդանացման հույսերի հետ՝ մեղմում էր նաև Արտակի սուր եսական կիրքը: Անձնական երջանկութեամբ ապահով՝ այժմ նա բարեհաճ և տրամադիր էր դեպի ուրիշի, անգամ ռամկի վիշտն ու ուրախութիւնը: Նա սկսեց նաև շուրջը նայել: Յողիկը ձիթաճրագը դրեց պառավի մոտ բարձրութեան վրա և սկսեց ալյուրը տոպրակներն ածել ու տեղավորել պատերի տակ: Նա աշխատում էր եռանդով, բարեխիղճ: Ամենայն խնամքով ավլեց հատակին ցրված ցորենի հատիկները և հավաքեց մի տոպրակի մեջ: Երբ այլևս ոչինչ չմնաց անելու՝ դուրս քաշեց պատի արանքը խրած գուլպան և սկսեց գործել:

Դարմանը եփվեց. պառավը կրակի վրայից ետ առավ ամանը, դրեց, որ սառի: Հետո վերցրեց ամանը և դարձավ Յողիկին:

— Խմոր վաղն էլ կհունցենք, հացը կհերիքի, գնա հանգրստացիր:

Ու ինքը գնաց Անահիտի մոտ: Գիշերային ժամը՝ «կամավտան» էր: Զրադացի դուռն մեջ հսկում էր Արտակի թիկնապահը: Գիմացը բարև բռնած կանգնած էր շրադացպանը: Յողիկը, որ նախապես ջուր էր տաքացրել կրակի վրա՝ սկսեց խմոր հունցել՝ շանսալով պառավի պատվերին: Բայց նա մենակ խմորի հետ չէր: Միջանկյալ ուղղում էր տոպրակները, ալյուրը լցնում մեջները:

սրբում ինչ-որ մի աման, ցախավելի քանդած ճյուղերը կրկին ի մի բերում, կապում, ճրագին ձեթ ավելացնում: Մի ակնթարթ հանգիստ չէր, մի ակնթարթ չէր երևում, թե այս աղջիկը մի բան է՝ մտածում, թե մի աշխարհի այլ զգացում, հոգս զբաղեցնում է նրա հոգին, թե վերջապես սրա մեջ կա հոգի, որ խորհի, զգա: Անընդհատ դառնում էր, բանում: Արտակը թիկն տված բարձին՝ դիտում էր այս ամենը և մտածում. «որքա՛ն սիրում են աշխատանքը... Իրո՞ք ուրիշ բանի մասին չե՛ն խորհում և չունե՛ն խորհելիք...»:

— Այսպես գիշեր-ցերեկ աշխատանքի մեջ եք՝ ապա ե՛րբ եք հանգստանում, շինակա՛ն,— հարցրեց Արտակը ջրաղացպանի համար անակնկալ:

— Գործը թողնո՞ւմ է, իշխանի՛կ,— պատասխանեց ջրաղացպանը,— աշխարհքը գործ՝ ձեռը պակաս: Զենք հասցնում:

— Նստի՛ր, շինակա՛ն,— խոսքը փոխեց Արտակը՝ նոր նկատելով, որ ողջ ժամանակ ջրաղացպանը կանգնած էր մնում իր առջև:

— Կարգ չէ, իշխանի՛կ,— ասաց ջրաղացպանը ճնշված:

— Ոչ, նստի՛ր, շինակա՛ն,— հրամայող մտերմությամբ ասաց Արտակը:

Ջրաղացպանը շոքեց սևացած սյան տակ, ձեռները ծնկներին:

Ներս մտավ Աստղիկը. ջրաղացպանը վեր կացավ: Արտակը ձեռով արեց, որ նստի: Աստղիկն հանգիստ էր և գոհ: Արտակին ուրախացրեց այդ: Աստղիկը նստեց կրակի մոտ և ապա ժպտուն նայեց Արտակին: Արտակը հասկացավ, ինքն էլ ժպտաց:

— Դանակի պես կտրեց,— ասաց Աստղիկը:

— Մայրիկի շնորհիվ,— ասաց Արտակը:

Կրակի շեղը փլվեց, մի պահ լուսավորեց, ապա մթնեց:

— Է՛, է՛,— գլուխը տմբացրեց ջրաղացպանը,— պատերազմը վեր կացավ: Ուտող է, հասցրո՞ւ, որ կշտացնես:

Մշտական անհանգստությունը կարծես ստվերի պես հետևում էր ջրաղացպանին: Նրա միտքը պաշարված էր բազմաթիվ մանր ու խոշոր անելիքների, գործերի հոգսերով: Նա նայում էր աչքի տակով շորս կողմ, աղորիքներին, անկյունները, Յողիկին, ականջ էր գնում շախշախներին, նավերի ձայնին, կարծես կանխելու ամեն

խափանում և պատրաստելու նորաճորդի մատուցած ջանքեր ու գործողությունները:

— Յողի՛կ,— ձայն տվեց ջրաղացպանը,— ավլի՛ր քարի մոտ, ցորեն է թափված:

Յողիկը մեծ խնամքով հավաքեց թափված մի բուռ ցորենը:

— Ասում ես՝ պատերազմը վեր կացա՛վ,— խոսեց Արտակը, որի տրամադրությունը համենայն դեպս բացվել էր Աստղիկի ուրախ լուրից,— Ի՞նչ պիտի անես, շինակա՛ն:

— Հաց պիտի տամ, իշխա՛ն. ինչքան էլ զենքերը իրար զարկեն՝ հողթանակը հացինն է: Դուք զենքով զարկե՛ք, մենք հացով,— շեշտեց ջրաղացպանը, որի դեմքը ծամածուլից ավելի, բայց աչքերը խորամանկ և հաճելիորեն սուր ծիծաղեցին:

— Կարո՞ղ ես հաց հասցնել այնքան գործին,— փորձեց Արտակը քթի տակ ժպտալով:

— Հողը կտա:

— Եթե շտա՞, չի՞նի՞:

— Է՛, է՛, իշխանի՛կ, ահա ջրաղացս, ավլի՛ր, սրբի՛ր, տա՛ր... ինչքան տանես՝ տակերում, անկյուններում, պատածակերում հատիկը կա ու կա: Ես հո չեմ մենակ. աշխարհքի է: Կհասցնե՛ք: Հասցնել կտա՛ն:

— Հացը աշխատողին չի հասնում՝ թե չէ, հաց շա՞տ... — խուլ ավելացրեց ջրաղացպանը և զուխը տխուր շարժեց:

Արտակը լսեց, բայց չխորացավ: Նա իր երջանկության հետ էր...

Յողիկը դուրս ելավ ջրաղացից: Անցնելիս նա կողքանց խոր նայեց Աստղիկին ու Արտակին: Բայց երբ նա հեռացել էր՝ ջրաղացպանը զուխը թափ տվեց տխուր.

— Սրտին դիպա աղջկա...

Եվ ջրաղացպանը պատմեց: Յողիկը որք է եղել, նրան որդեգրել են, մեծացրել, նշանել են իր սպանված որդու հետ, և ահա հիմա Յողիկը մնաց...

— Կին չգտած՝ որբեայրի մնաց,— հառաչեց ջրաղացպանը:

Աստղիկին հուզեց այս բանը: Նա ավելի պարզություն և անմիջականություն հետաքրքրվեց Յողիկի վիճակով:

— Ապա ի՞նչ պիտի լինի նրա վիճակը, հայրի՛կ,— հարցրեց նա կարեկցաբար:

— Ի՞նչ պիտի լինի, օրիո՞րդ, — հառաչեց ջրաղացպանը, — կմտածի, կմտածի՛ կհաշտովի: Միրտ շէ՛ իմս, մորը, տատինը... Մահ է՛ եկավ ուզեց՝ պիտի տաս:

Ջրաղացպանը գլուխը կախեց: Աստղիկը սպասեց, որ նա լաց կլինի կամ կսկսի երկար խոսել իր վշտի մասին: Բայց ջրաղացպանը վեր նայեց և շարաճճի նայեց Աստղիկին.

— Ձեր հասակը թոչունի հասակ է, — ասաց նա, — մին կծկըլթա, հետո կծլվա: Անցուկ-մոոցուկ... հա՛, հա՛...

Արտակը ժպտաց: Աստղիկը խորամանկ և ուրախ նայեց ջրաղացպանին, որի ողջ կերպարանքը հաճելի էր, ինչպես բնությունը: Ինչպես բնությունը՝ ջրաղացպանը կազդուրում էր հոգին, հարուստ էր բարիքով ու կյանքով: Անգամ վիշտը և մահը հանգիստ էր երեւում նրա մեջ:

Յողիկը ներս եկավ և արագ անցավ իր գործին: Արտակը վեր կացավ, Աստղիկը հետևեց նրան: Նրանք բարի գիշեր մաղթեցին և դուրս ելան: Ժամը «Հավթափյալն» էր, գիշերը բավականին դարձրել էր իր կապույտ ճախարակը: Աստղիկը ներս մտավ խրճիթը և իսկույն դուրս վազեց.

— Քնած է, իշխան, — ասաց նա:

— Դե, բարի գիշեր:

— Գիշեր բարի, իշխան:

Արտակը գնաց իր խրճիթը: Պառկեց քնելու, բայց երկար ժամանակ քունը չտարավ, և նա կրկին դուրս եկավ և սկսեց ման գալ մենակ ու երշանիկ: Մի անգամ էլ անցնելով Անահիտի խրճիթի մոտով՝ նստեց մի քարի: Ոչ ոք չէր երևում շուրջը: Միայն հեռվում գոգոում էին մի քանի սայլեր, որ հեռացան: Շուտով նրան թվաց, որ ինչ-որ շնչոց է լսվում: Լսելիքը սրեց և նկատեց, որ խրճիթի մյուս պատի տակ բաց թողած սայլի մոտից էր: Այնտեղ երկու կին էին նստած, ավելի շուտ մեկը երեսը ծածկել էր մյուսի ծնկան վրա, իսկ մյուսը խոսում էր նրա հետ: Նրանք չէին կարող նկատել Արտակին, որ սկսեց ականջ դնել: Նրանցից մեկի կերպարանքը հիշեցրեց ջրաղացպանի կնոջը, և Արտակը հասկացավ, որ նա է: Իսկ մյուսը չէր ճանաչվում: Արտակը լսեց, որ պառավն ասում էր.

— Բան չկա, ազգիկս, քանի սիրտդ չի հովացել Տոնականից՝ կմնաս մեր տանը, իսկ թե բան է աշխարհք է՝ սիրտդ կպավ ուրի-

շի՛ նրան կբերենք քեզ՝ մարդ, մեզ՝ տղա. դու էլ կուրախանաս, մենք էլ:

Աղջիկը, որ անշուշտ Յողիկն էր՝ լուռ լաց էր լինում:

— Մի՛ լար,— շարունակեց պառավը,— ուրիշի տղան էլ մերը կդառնա կմխիթարվենք: Ապա չէ՞ որ մերը դառավ աշխարհի տղա, աշխարհքի համար կյանքը տվեց: Աշխարհը փոխ է: Մի՛ լար:

«Ձեռ հասկանում այս ուամկի ոչ վիշտը, ոչ ուրախութունը»,— մտածում էր Արտակը:

Նա հիշեց այդ շինականի սպանված որդու թաղումը, որ այնպես մի տանից ուրիշ տուն հեռացողի նման հասարակ եղավ: Մտածեց նրա հոր մասին, որ այնպես կենսալի և հուսալի նայում էր կյանքին, մտածեց այս մոր մասին, որ իր զավակը այդպես հեշտ նվիրում էր հայրենիքին: «Մա՛ է ուամկի ուժը... Սրանով է ուժեղ աամիկը»,— շնջաց Արտակը: Նա հասկացավ, որ ուամիկը վիշտ էլ է զգում, խորն էլ է զգում, բայց և դիմանում է, որովհետև ուժեղ ոգի ունի: Եվ ականա պատկառեց:

Արտակը սակայն չէր կարողանում երկար դրազվել ուրիշի վշտով և ուրախությամբ՝ այնքան երջանիկ էր: Վերադարձավ խրճիթ և այս անգամ քնեց թեթև, երիտասարդական քնով:



Խորխոռունիքից իշխանական սայլեր եկան մեծ պաշարով և հարմարանքներով: Գաղիշոյի մայրը՝ լսելով, որ Մեծ Տիկինը մյուսների հետ մնացել է ճանապարհին և սպասում է Ողականից սայլերի՝ շատ էր վշտացել և հրամայել էր իսկույն իրենց սայլերն ուղարկել:

Անահիտը ապաքինվել էր այնքան, որ կարող էր այլևս սայլ նստել և ճանապարհ գնալ: Կազդուրվել էր նաև Մեծ Տիկինը: Որոշեցին երկու օրից ճանապարհվել:

Պայծառ երեկոն ժպտում էր ու հետզհետե լրջանում: Մեծ Տիկինը, Մամիկոնեից և Շուշանիկ տիկինները, Արտակը, Անահիտը, Աստղիկը դուրս էին եկել խրճիթներից և նստել ջրաղացի դիմացի բլրին: Մեծ Տիկինը զվարճանում էր՝ դիտելով տուն վերադարձող նախիրը, հնձվորների հոգնած ու առողջ դեմքերը, մո-

տակա աղբյուրի մոտ հավաքվող աղջիկների խմբերը: Երդիկնե-  
րից խաղաղ բարձրացող ծխի հոտը բռնել էր ողջ գյուղը: Գամ-  
փըռներ հաշում էին հեռուն, մոտիկ:

Անահիտը նստել էր գորգին, Մեծ Տիկնոջ ոտների մոտ, ինչ-  
պես սիրում էր նա ի նշան հարգանքի և սիրո:

Տիկինները Արտակի և Անահիտի համար ստեղծել էին պարզ  
ու ազատ վարվելու բոլոր հնարավոր դյուրինությունները, որ ար-  
դյունք եղավ Անահիտի տագնապների և գյուղական կյանքի բեր-  
մունքի:

Մեծ Տիկինը պատմում էր Վարդանի մանկությունից: Ինչպես  
մի անգամ նախիրը տուն գալու ժամանակ ինը տարեկան Վար-  
դանը ավանակ նստած մտնելիս է լինում գյուղ: Հովիվը վախե-  
նալով, որ նա կարող է ավանակից ընկնել՝ վազում է ավանակի  
հետևից, որով և ավելի է վազեցնում ավանակին: Վերջն ավա-  
նակն սկսում է տրտինգ տալ: Վարդանն ընկնում է և ողջ երեսը  
հողին զարկում, վիրավորում: Հովիվը բռնում է ավանակին և  
սկսում է ծեծել:

Մեծ Տիկինը ծիծաղեց և ապա գլուխն օրորեց.

— Ծատ էր շար. օր չէր անցնի՝ մի փորձանքի չգար: Հիմա էլ  
ի՞նչ է, թե փորձանքներ չեն...

Այդ պահին մի գիծ մոզի տրտինգ տալով եկավ, կանգ առավ  
նրանց սուաջ և հանկարծ մեջքը կեռացնելով՝ տեղում ավելի մեծ  
տրտինգ տվեց և փախավ:

Անահիտը քահ-քահ ծիծաղեց: Բոլորն ուրախացան: Արտակն  
նայեց Անահիտին և նրա հայացքի մեջ այնպիսի զգացմունք տե-  
սավ, որ թալկացավ, և րջանկությունից հառաչեց:

Գյուղի աղմուկը լռեց: Կեռնային հովը կարծրացավ: Հիվանդ-  
ներն ու տիկինները ներս քաշվեցին: Շինականները արագ ընթրե-  
լով, հոգնութունից հարբած՝ քնեցին: Ջրաղացի պատի տակ մի-  
այն. աշխույժ էր ու եռուզեռ: Այնտեղ հավաքվել էին աղալու հեր-  
թի սպասող շինականներ, որ կրակ էին արծարծում, տոպրակնե-  
րով ցորենը շրջափակ դարսում, կատակում և պատրաստվում  
բացօթյա գիշերելու: Հենց գետնի վրա նստեցին բոլորակ շարքով  
և կրակի հաճելի թրվոցները դիտելով սկսեցին զրույցը: Արտակի  
և Աստղիկի ուրախ հոգեկան վիճակը նրանց դարձրել էր հետա-  
քրքիր ու շարաճճի: Զվարճանալու համար նրանք մթնշաղի մեջ

կամաց-կամաց աննկատելի մոտեցան շինականներին և սկսեցին հետևել նրանց զրույցին:

Մութն ընկավ: Փոքրիկ խարույկն էր միայն կարմիր ներկում շինականներին ու ջրաղացի պատը: Շինականներին մեծ հաճույք էր պատճառում կրակը, հավաքույթը և ցորենի աղունը: Նրանք մեկ-մեկ երջանկությամբ շոշափում էին իրենց մեջքի մոտ դրված տոպրակները: Նրանք զվարթ ասուլիս սկսեցին: Զրույց, կատակ, ասք, երգ: Արտակը նայում էր շինականներին և նրան զարմացնում էր այն, թե այդ կարկատնած, զգզզված ու փոշոտ մարդիկ, կոշտոտ ձեռների մեջ իրենց դառնաղի ջանքերով բնությունից կորզած հացը սեղմելով, միշտ չքավոր ու զուրկ մարդիկ որքան հարուստ էին երևակայության հրաշալիքներով: Պատմում էին անվերջ, առատ, շռայլում էին գեղեցկություններ թանկագին ականբրի նման: Իրենց զրույցներով հրահրված նրանք չէին նկատում Արտակին ու Աստղիկին: Միականի մի շինական գոտկից հանեց փողը և սկսեց նվագել: Հնություն բուրեց նվագից, նախնիների ուրվականներ երևացին և հնօրյա կյանքի պայթար, վիշտ, իղձ ու կարոտ: Հետո նվագողն սկսեց երգել: Նա երգում էր խոսելով պատմելով: Ծվ ինչե՞ր չէր պատմում նա: Այդ բոլորը ապրելու, հոգու մեջ կրելու համար մի մարդը բավ չէ. հարկավոր է մի ժողովրդի անհուն հոգի, այնքան մեծ էր այս ամենը, որի մասին խոսում էր երգչի երգը:

«Ռամիկը խորն է», — մտածեց Արտակը, — «ռամիկը ծով է»: Խորին լռության և ճնշված սրտերի խորհուն լսողությամբ շինականները ունկնդրեցին տնանկի երգը:

Թե խոր ընկած ձայնիկս ձայներ, բարձրիկ բարձրանար ի վեր,  
Գե բարձրիկ բարձրանար, այդ լեռներդ վազեր ի վե՞ր,  
Թե վագեր լեռներդ ի վեր, աստեղըդ հուր մինչև թռչե՞ր,  
Թե թռչեր ու խորն աստծու ոտներին ընդհուպ հասնե՞ր,  
Ծս ի խորոց սրտիս իմ սև գանգոտիս կձայնե՞ի,  
Կասե՞ի մեկ հացի՞ս նայիր թույն ու դառնաղի,  
Այրուցքին նայիր մարմնիս, խշտյակիս կողատակի,  
Դատելուս դառն ու տոշոր, նստելուս շորի, գատարկի,  
Բայց ա՛վա՛ղ, ա՛վա՛ղ ասեմ՝ աստվածն է հեռվից է՛լ հեռի,  
Իշխան է ա՛հ ու երկյուղ, նրանից է կյանքս գառնաղի,  
Մրտիկս է լիբը լի լցված՝ բլուր հազար ցավեր ու խոց,  
Հոգիս է լսի յում գաղտուկ հառաչս սրտիս խորոց...

## Հետո նվագեց, հետո կրկին երգեց՝

Ձաշն ձայնովս ձայնեմ, աշխարհք բոլոր ձայնեմ,  
Աշխարհք ձայնիս հասնի, աշխարհքի՛ն հասնեմ:  
Մեկ ասեմ՝ հազար ավաղեմ,  
Սիրտս լի, ձայնիկս թագեմ,  
Վա՛յ ավաղ հազար:

Ու լոեց: Շինականները գլուխները կախեցին: Տնանկի երգը նրանց հոգուց էր քաղվում: Նրանք պատահողուն պարեգոտներով, բորբիկ ու սևացած մարմնի կոշտերով՝ շեշտում էին երգի խոսքերի ճշմարտությունը:

Երկար չէր խոսում ոչ ոք: Թախիծը տիրեց նրանց: Եվ հովը, որ շնկշնկում էր նրանց գգգզված մազ-մորուքի մեջ, և կրակը, որ փոփոռում էր, մարմրում, և սև գիշերը, որ խարխափելով շրջում էր իր կույր աչքերը լայն բացած՝ թախիծ էին ներշնչում:

Թե՛ Արտակը և թե՛ Աստղիկը լսում էին այս զրույցներն ու երգերը իրենց երջանիկ աշխարհի անջրպետի այս կողմից: Եվ հենց այս անջրպետը թույլ չէր տալիս, որ այդ բոլոր զրույցների ու երգերի մեջ տոգորված վիշտն ու հոգսը իրենց իսկական թույնով թափանցեն իշխանական երջանիկ, անկարող կյանքի կողմը:

Սեփական իշխանական երջանկությունը, ապա և երիտասարդական անհոգությունը թեև հասկանում էին այս տանջված ու միկնների գանգատի իմաստը, բայց չէին համակվում: Այդ տանջանքը չէր եղել ոչ մի ժամանակ նրանց ծնված օրից:

Ուզ գիշեր էր, որ Արտակն ու Աստղիկը թողին շինականների զրույցը և հեռացան: Աստղիկի միջոցով Անահիտին «բարի գիշեր» ուղարկելով, Արտակը գնաց իր խրճիթը և պառկեց: Դեռ երկար նրա ականջին հնչում էին շինականների ճարտար զրույցներն ու երգերը: Արտակը հիշեց Ատոմին, մտածեց նրա մարտերի մասին և նրան սիրելով ժպտաց ու ընկավ անէություն աշխարհը:

Հեռակալ առավոտ Արտակը վաղ զարթնեց և դուրս ելավ բլուրը: Այդ օրը մեկնում էին: Նա նկատեց աղբյուրի մոտ նստած Յոզիկին, որ խոհերի մեջ թաղված նայում էր իր կփին: Զուրը վաղուց լցվել ու թափվում էր, իսկ Յոզիկը այդ չէր նկատում: Անմխիթար սիրո վիշտը գաղտնի մաշում էր դեռատի աղջկան:

Արտակը, որ արդեն փրկվել էր այս վշտից՝ ազատվելով անձնական վշտից՝ կարող էր այլևս զբաղվել ուրիշի վշտով, անգամ կարեկցել: Նա խղճաց Յողիկին: Նա անգամ սկսել էր հետաքրքրվել շինականների կյանքով, նրանց ուրախություններով ու հոգսերով: «Շատ է ուսմկի մաղձը մեր դեմ, ինչպե՞ս պիտի ոգորի արհավիրքի դեմ. կդիմանա», թե այս անգամ կխորտակվի: Ռամիկը պետք է լավ ապրի. ճշմարիտ է Սպարապետը, — ուսմիկը զորքն է», — այս և նման մտքերը միշտ գալիս մեղմում էին նրա հոգում այն խորթությունը, որ կար նրա մեջ ուսմիկի հանդեպ:

Սայլերը լծեցին, իշխանագունները դուրս եկան նստելու և ճանապարհվելու: Խրճիթների տանտերերը բեռնեցին սայլերը, պաշար դրին և շրջապատեցին Մեծ Տիկնոջը: Հավաքվեցին նաև շինականներ:

Ամեն ինչ պատրաստ էր, մնում էր նստել և շարժվել: Մեծ Տիկինը մոտ կանչեց տանտերերին ու տանտիկիներին, օրհնեց և բարեմաղթեց քաղցր կյանք:

— Մնա՛ք բարյավ՛, շինականներ, երկար արև լինեք, ցամաք աչքով ապրեք: Տա աստված հայրենին ազատվի, շունչը թեթևանա: Մնա՛ք բարյավ:

— Ճանապարհդ բարի, Մե՛ծ Տիկին, — ասաց ջրաղացպանի մայրը պառավ, — աստված Սպարապետին երկար կյանք տա, հայրենին ազատի:

— Ամեն, — միահամուռ ձայնեցին շինականները:

— Մնաք բարյավ, շնորհապարտ Քնք, — ասաց Մամիկոնեից տիկինը:

— Երթաք բարյավ, Մամիկոնեից տիկին, — բարեմաղթեցին շինականները:

Արտակն ու Անահիտը իրար նայեցին: Աղբյուրի մոտ կանգնած էր Յողիկը և տխուր նայում էր գնացողներին:

— Յողի՛կ, մնա՛ս բությավ, — գոչեց Աստղիկը:

Յողիկը գլուխ տվեց և աչքերը կախեց տխուր:

Արտակը նստեց իր նժույգը, և երբ բոլորը նստած էին՝ շարժեց սանձը.

— Դե՛, ճանապարհ:

Տանտերերն ու շինականները երկար տեղ ճանապարհ դրին գնացողներին:

Քուրումնավետ դաշտերը բացին իրենց գիրկը: Արևն սկսեց հաճելիորեն այրել այտերը: Արտակը նայեց Անահիտին: Սա ժըպսում էր երազանքի մեջ:



Ցուրտավի ապարանքում սուգ էր: Քանդազարդ գահավորակին հպարտ նստած էր մի շքեղ, պատկանելի պառավ տիկին և հպարտ վշտով նայում էր իր ոտների մոտ հատակին ընկած դալարվող և մազերը փետող մի այլ հասակավոր տիկնոջ, որ հեկեկում էր, ողբում: Նա լուռ էր ու թեև դիտում էր իր առջև ընկածի գալարմունքները ու ողբացող կրծքի ցնցումները, բայց տարված էր իր խոր վշտի և մտքերի մեջ: Նա Աշուշայի մայրն էր, իսկ ողբացողը՝ նրա կինը: Մի փոքր հեռու կանգնած էր Վաղգեն իշխանը, Աշուշայի որդին և ձեռքերը կանթած գոտկին դառնությամբ կշտամբանքով նայում էր մորը և զայրալի աչքերի կայծկլտոցով շարժում գլուխը:

— Հիմա վայելե՛ք, ես ասո՛ւմ էի ժամանակին:

Հեռու, դռան մոտ կանգնած էր մի մռայլ կերպարանք և անկարեկից դիտում էր տեսարանը:

Դա Վասակի սուրհանդակն ու ծածուկ դեսպանն էր՝ Բակուրը: Նա էր լուրը բերել Աշուշայի պատանդության և երկար խոսել էր Վաղգենի հետ Պարսկաստանի և Հայաստանի դեպքերի մասին և տվել էր այն գույնը, որ հրահանգել էր Վասակը՝ այն է բոլոր մեղքը գցել Վարդանի վրա, իսկ Աշուշայի համար ասել, որ նա անզգույշ եղավ, լսեց Վարդանին և զոհ գնաց իր սխալ քայլին:

Դռան մեջ, վարագույրի ծալքերի հետև կանգնած էին կանաչք և սպասավորներ, որ դիտում էին ներսը կատարվող սուգը: Նրանց մեջ էր, շնայած իր պատվավոր դիրքին, և պարսկուհի գշխուհին, որին Վաղգենը բերել էր Պարսկաստանից իբրև հարձ, մեծացնելով թիվը իր զանազան պարսկուհի և վրացուհի կանանց:

— Մեծ մայրի՛կ, ազատի՛ր, մեծ մայրի՛կ, — ողբալով աղաչում էր Աշուշայի կինը իր սկեսրոջ, — մեծ մայրի՛կ, նրան կսպառնեն, խոտով կլցնեն... Կուրանային աչքերս, մեռնեի ե՛ս, ե՛ս, ե՛ս...

Աշուշայի մայրը մռայլվում էր, բայց շարունակում էր հպարտորեն լռել:

Վազգենը մոտեցավ մորը, կուցավ նրա վրա և ուար բռնելով ասաց.

— Վե՛ր կաց, մայրիկ, վե՛ր կաց: Մի բան կանենք, կազատենք հորս:

— Չեե՛ք ազատի, պարսիկների ձեռքն ընկնողը չի՛ ազատվի,— ողբաց կրկին Աշուշայի կինը:

— Վասակն ազատվեց, իսկ նա չի՛ ազատվի,— շոքելով և չորս կողմ նայելով գոչեց Աշուշայի կինը:

— Վասակը չի՛ ազատված, մայրիկ, հը՛մ... Վասակի էլ երկու զավակներն են պատանդ,— ասաց Վազգենը:

— Յո՛ւ, չգիտե՛մ, չգիտե՛մ,— ողբաց կրկին Աշուշայի կինը:

Վազգենը գնաց դեպի Վասակի սուրհանդակը և նրան տարավ իր օթևանը:

— Ուրի՛շ, ի՞նչ են մտադիր անել հայերը,— բարկացկոտ հարցրեց նա սուրհանդակին:

— Վարդանի կողմնակիցները պատրաստվում են պատերազմի,— ասաց Բակուրը:

Վազգենը քմծիծաղով նայեց Բակուրին և լռեց:

— Գու գնալո՞ւ ես թագավորի մոտ,— հարցրեց անհասկանալի եղանակով Վազգենը:

— Գնալու եմ... — դավադրորեն նայեց Բակուրը:

Նա սպասեց, որ Վազգենը մի բան կասի այս մտադրության առթիվ: Բայց Վազգենը կուլ տվեց իր մտքերը: Նա չէր ուզում բացվել սուրհանդակի մոտ: Միայն մի բան ասելու համար համաձայնեց.

— է՛, ի՞նչ կա, գնա՛ հայտնիր ինչ որ գիտես:

— Իսկ ի՞նչ հայտնեմ մարզպանիս ձեռ մասին: Ի՞նչ եք մտադիր անել,— հարցրեց Բակուրը:

— Ի՞նչ ենք մտադիր,— ձայնը բարձրացրեց Վազգենը,— տեսնում ես ինչ վիճակ է: Խելքի մոտ մի բան կանենք: Մարզպանին ասա իմ կողմից, որ կմտածենք և պատասխան կտանք:

Բակուրը դուրս գնաց անորոշ և անախտո՞ժ մի զգացմունքով: «Սա ի՞նչ տեսակ մարդ է», — մտածեց նա, — «մարզպանը խելացի խորհուրդ է տալիս՝ չապստամբել, չվտանգել երկիրը, իսկ սա, հայրը պատանդ, դեռ պիտի մտածի...»:

Մտրակեց նծույգը և ճանապարհ ընկավ դեպի Մցխեթ, թագավորի մոտ:

Երբ նա հեռացավ և կորավ անտառի թավուտներում թաքնված ուղու մեջ՝ մի փոքր անց Վազգենը մի քանի թիկնապահներով ճանապարհ ընկավ այլ ուղղությամբ:

«Տեսնեմ դրանք ի՞նչ իշխաններ են և ինչ խելքի տեր, որ լսեն թագավորին, եթե նա բռնի ապստամբների կողմը»,— մտածեց նա:

Թագավորը ընդունեց Վասակի սուրհանգակին վրդովված: Լուրերը այնպիսիք էին ծերունուն: Աշուշայի պատանդության մեջ նա տեսավ ավելի մեծ վտանգ, քան մնացած դեպքերի: «Դա կխառնակի մեր գործերը»,— մտածեց նա,— Վազգենը Աշուշային ազատելու համար կարող է խոստումներ տալ Հազկերտին:

— Ի՞նչ է անում մարզպանը,— հարց տվեց նա Բակուրին:

— Աշխատում է խաղաղություն գցել մեր ու պարսիկների մեջ,— պատասխանեց Բակուրը,— և ինձ պատվիրեց խնդրել ձեզ, որ օգնեք այս գործում:

— Ինչո՞վ օգնենք, մա՛րդ,— վրդովվեց թագավորը,— օգնելն ա՞յն կլինի, որ ընդունենք զրադաշտը, երկիրը տանք պարսիկներին: Ի՞նչ օգնենք: Իր զավակներն ասում են պատանդ են, ահա մեր Աշուշա բղեղիւր և պատանդ է: Ի՞նչ անենք ուրեմն, տա՞նք երկիրը, իշխանությունը— Գուցե աստված մի հնար ցույց տա:

Բակուրը ներքուստ անհանգստացած և նեղացած՝ լռեց:

— Այո, հնար ցույց տա,— կրկնեց թագավորը և կիսաձայն, իբրև ինքնիրեն ավելացրեց,— թեև աստված անխելքին հնար չի ցույց տալիս:

Բակուրը սակայն սպասում էր:

— Ասա մարզպանիդ,— հրահանգելու եղանակով ասաց թագավորը,— իմ բարեկամական խորհուրդն է՝ համաձայնել երկրի հետ, միաբան գործել, երկպառակությունը կկործանի: Ահա տես, դժբախտություն եկավ նաև Վրաստանին. բղեղիւր պատանդ վերցրին: Վաղը մյուս օրը արհավիրքը կգա կկանգնի նաև մեր դասն: Կարող է պատերազմ էլ լինել: Պետք է պատրաստվել:

Բակուրը խոնարհություն արեց թագավորին և դուրս եկավ պալատից այն գիտակցությամբ, որ թագավորը համաձայն չէ Վասակի ընթացքին:

Նա ճանապարհ ընկավ Հայաստան՝ ճանապարհին ձևակերպելով ավելի իր եզրակացութունները տեսածից ու լսածից, քան որոշ խոստումներ տանելով Վասակին, որ վրացիները կկանգնեն Վարդանի դեմ Վասակի կողքին:

Իսկ Վազգենը գնաց իր կողմնակից վրացի իշխանների մոտ: Նրանց հետ արդեն նա բացեփրաց խոսեց ապստամբության դեմ: Նա մեջ բերեց Ալանաց Դուան վտանգը... «Հոնե՛րը — մտածեցեք այս մասին,— ասում էր նա:

Վրաց իշխանները սկսեցին խորհրդակցել: Դրութունը դյուրին չէր... Նրանց մեջ կային բավական թվով ապստամբության կողմնակիցներ, բայց կային ոմանք, որ կողմնակից էին Աշուշային — այն է՝ վարել այնպիսի եղանակ, որ չբացահայտի որոշակի վերաբերմունք և չեզոքացնի արտաքին հարվածը:



Արտաշատի պարիսպներից դուրս, արձակ դաշտում ճամբար էր դրված: Դա Անզղի զորագնդերն էին, որ Վարդանի առաջնորդությամբ իջել էին Այրարատ, միաժամ և մի քանի նախարարների զորագնդեր, որ նոր էին հասել Այրարատ:

Ատոմը, որին Վարդանը հանձնարարել էր մաքրել երկրի բերդերը պարսիկ զորքերից, կատարել էր պատվերը: Արտաշատում Ավետիքն էր ջարդել պարսիկ ջոկատին և օգնության հասել Ատոմին:

Արտաշատ էին հավաքվել նոր նախարարներ՝ Ուրծա Ներսեսը, Աղավենից Արտեմը, Բագրատունի Տիրոցը, Արտակ Պալուսին, Մուշ և Քաթուլ Դիմաքսյանները, և սեպուհներ՝ Հմայակ Մամիկոնյանն ու Մերուժան Արծրունին: Նրանցից ոմանք իրենց հետ բերել էին փոքրիկ զորամասեր:

Ճամբարը սարքվում էր դեռ: Նա շրջաձև էր, մեջտեղը լայն հրապարակ: Ամեն նախարարական զորագնդի վրանախումբ, զատված մյուսներից, ջանացել էր հարմարագույն դիրք գրավել ջրափնյա վայրերում: Միաժամ կարելի էր զանազանել այդ զորագնդերը իրենց դրոշներով, զենքի տեսակներով և նախարարական տոհմական նշաններով: Զորագնդերը հեծյալ էին և հետևակե իրիկնադեմ էր:

Հրապարակում մի քանի մերկ նժույզներ, փախած իրենց ցցերից՝ բաշերն հովին՝ սլանում էին դեսուդեն, խուսափելով հետևներն ընկած զինվորներից: Խարույկները, որոնց վրա կերակուրն էր եփվում, ծխում էին ու ծխահոտը խառնում բանակի հատուկ հոտին՝ ձիու, կաշվի, մետաղի և քրտնքի:

Վարդանը աչքով չափեց ճամբարը. նա կամենում էր ընդգլրել և հասկանալ նրա ուժը: Իբրև հին զորական՝ նա մի հայացքով տեսավ զգաց այդ: Նրանք մոտեցան ուշտունների զորագնդին: Առաջ վազեց նրանց Քոմա սեպուհը՝ ստորադաս հրամանատարների հետ: Քոմա սեպուհը լավ էր ճանաչում Վարդանին իբրև զորավարի և բարձր էր գնահատում նրան: Ակնածանքով նա մոտեցավ Վարդանին և խոնարհ ողջունեց: Ողջունեցին նաև նրան հետևողները:

— Կա՞ն ջոկատի մեջ անսպառազեններ,— հարցրեց Վարդանը:

— Ոչ, Սպարապետ, սպառազեն են,— պատասխանեց Քոմա սեպուհը՝ մի փոքր առնվելով և ինքնասիրությամբ:

— Սաղավարտվա՞ծ են բոլորը:

— Կան մերկազուխներ... Սաղավարտն է շատը էլի:— Եվ Քոմա սեպուհը ցույց տվեց մի քանի պահակ զինվորների կրնդրդաձև սաղավարտները՝ սուր ծայրերը վեր ցայտած:

Քոմա սեպուհը ցույց տվեց նաև զինվորների լանջապանակները՝ կուրծքերն ու մեջքերը պահպանող երկաթե տախտակները, կարավանդները՝ զրահի կտորները իրար հետ միացնող կապերը: Զինվորները անկոշիկ էին թվում: Այս մասին Վարդանի հարցմունքին Քոմա սեպուհը պատասխանեց, որ այս տարվա մույկերը՝ կոշիկները, նոր էր կարվում, երբ հանկարծ ճանապարհ ընկան:

— Սրերն ու նիզակները կարգին են, ընտիր,— ասաց Ատոմը,— ա՛յ թե ինչում ուշտունները գերազանց են մյուսներից:

Ատոմը շոյեց Քոմա սեպուհի հպարտության զգացմունքը:

— Նժույզնե՞րը,— հարցրեց Վարդանը:

Քոմա սեպուհը ձեռով արեց նժույզապաններին: Իսկույն որանք մերկ նժույզների սանձերից բռնած բերին անցկացրին Վարդանի առջևով: Վետվետող, հպարտ նժույզները արժանավայել քայլքով ու պարուհիների նազելաշուք ցատքերով անցկացան: Վարդանը զոհ մնաց:

— Իրենք քաջամարտիկ են, գիտեմ,— ասաց Վարդանը և դարձավ թոմային.— ապրե՛ս. ազատ ես:

Թոման խոնարհ ողջունեց և ետ կացավ յուրայինների հետ: Վարդանն արագ անցավ այլ ջոկատներ ու զորագնդեր:

Հրապարակը նգերված էր խառնիխուռն քաղաքացիներով, որ հեռվից դիտում էին Վարդանի այցը ճամբար: Նրանց մեջ էր Վարաժը, իր տղաներով, որ նրան շրջապատած՝ աղաչում էին մի կերպ մոտենալ Վարդանին և խնդրել, որ իրենց ընդունի զորքի մեջ:

— Համբերեցե՛ք, խենթուկնե՛րս, տեսեմ,— հանգստացնում էր Վարաժը՝ ինքը ևս անհանգիստ:

Ատոմը նկատեց Վարաժին, որ անհամբեր հայացքով այս կողմն էր նայում: Դրանից քաջալերված Վարաժը մի քանի քայլ առաջ եկավ: Նրան շրջապատեցին տղաները: Վարդանը նույնպես նկատեց Վարաժին:

— Սա մեր ախոռապե՛տն է՝ Վարաժը,— ասաց նա:

— Նա է,— ասաց Ատոմը:

— Բա՞ն է կամենում՝ թող առաջ գա,— Վարդանը դիմեց զինվորներին,— կանչեցե՛ք:

Վարաժը առաջ եկավ: Նա կամենում էր մենակ գալ, բայց տղաները թյուրիմացությունից թե շփոթվելուց նույնպես եկան կանգնեցին Վարդանի առաջ: Բայց երբ արդեն եկել էին՝ նոր սկսեցին ամաչել: Գլուխները կախեցին և ջանք էին անում իրար հետևում պահվել:

— Վարաժ, ասա խնդիրքդ,— խոսեց Վարդանը:

Վարաժը մի քանի քայլ արեց առաջ, ուղղեց զգեստը, գետնին նայեց, ապա գլուխը բարձրացրեց.

— Սպարապե՛տ, այս տղաները փափագով փափագում են մտնել զորսօգունդը... Զինավարժ են, լավ, ինչպես հարկն է:

Վարդանը նայեց տղաներին:

— Սրանք այն ճանապարհի խենթերը չե՛ն:

— Հրամանք ես, Սպարապետ,— սրտատրոփ լարվեց Վարաժը:

Վարդանը սուր նայեց Կորյունին.

— Նժույզ հոգնեցնել գիտես. իսկ պահել էլ գիտե՛ս:

Կորյունը կակաչի պես ներկվեց և գլուխը կախեց:

— Ախոռիս օգնականներն են, Սպարապետ, ամեն բան գիտին,— շտկեց Վարաժը:

Վարդանը դարձավ Դավիթ սեպուհին, որ կանգնած էր մի փոքր հեռուն:

— Տե՛ս, թե արժանավոր են՝ իմ զորագունդն առ:

— Հրամա՛նդ,— ասաց Դավիթ սեպուհին:

Վարդանը ժպտաց Ատոմին.

— Կմարզվեն գործի մեջ:

Ոչ միայն Վարաժն ու տղաները, այլև բոլոր ներկաները պարմացան և հուզվեցին: Տղաները վերջերս առնացել էին, ջլապինդ բազուկներով և ուռած լանջերով ներշնչում էին վստահութուն:

Վարաժը ձեռքերը վեր կարկառեց և արցունքները կաթեցնելով բացականչեց.

— Գոհանա՛մ, գոհանա՛մ, գինվոր հասցրի հայրենիքի կըռվին: Արժանի՛ լինեն, Սպարապետ...

Վարաժը խոր գլուխ տվեց, աչքով արեց տղաներին նույնը անելու: Տղաները ամաչելով խոնարհություն արին և Վարաժի հետևից իրար առաջ կտրելով և ոտները կոխոտելով հեռացան: Ժողովուրդը վրա եկավ և շրջապատեց նրանց:

— Հա՛, ի՞նչ է, ի՞նչ եղավ,— հուզված մեջ ընկավ Հովակիմ դարբինը:

— Զինվո՛ր են, խենթերս գինվո՛ր են... Ի՛նքը ընդունեց, իբր զորագունդը,— լաց եղավ Վարաժը՝ քիթը խաշտելով:

Գողզողալով և բազմությանը բոթելով տղաների վրա հարձակվեց հուզված Վարաժի օգնական Մարկոսը:

— Լակոտնե՛րս, լակոտնե՛րս... հիմի՛ որ արդար լինի նժույգի սիրտ վիրավորելը, ոտի վերքերը... ամենն էլ ներեցի...

Ու վրա ընկավ տղաներին, սկսեց հափռելով համբուրել ներանց՝ շփոթից ու հուզմունքից երբեմն շրթունքը տանելով ականջները, ծոծրակները:

— Աստվա՛ծ արժանի անի, աստվա՛ծ արժանի անի,— մըռմըռում էր՝ արցունքները կուլ տալով Աբրահամ պապիկը:

— Ամե՛ն, ամե՛ն, ամենին օրինա՛կ, երանի՛ գինվորիոց:

Քաղաքի դռնից հեծյալ կարգով գալիս էին նախարարները՝ վասակյան և նորեկ: Բազմությունը այն կողմ շրջվեց: Եկողներին

գլխավորում էր Վասակը: Նա շքեղաշուք հագնված և զվարթերես էր և շքերթի կերպարանք էր տալիս իր ժամանման: Նրա հետ հավասար գալիս էր Հազարապետը՝ նույնպես ուրախագիմ: Նա հաշտութուն և համերաշխություն էր ցուցադրում: Վասակը պահում էր այդ հարաբերությունը: Նրան դա պետք էր կյանքի շափ: Նա կորցրել էր ամեն ինչ, պետք էր վերականգնել ամեն ինչ:

Շքերթը մոտեցավ հրապարակին: Անմիջապես շորս կողմից շեփորները ձգեցին իրենց խստաձայն կոշը՝ զգաստ լինել և պատշաճ ընդունել մարզպանին և նախարարներին: Ծամբարը իսկույն հանդեսի կերպարանք առավ: Զոկատների հրամանատարները դուրս եկան ընդառաջ մարզպանին և նախարարներին՝ զեկուցելու զորագնդերի մասին: Վարդանը չմոտեցավ շքերթին, նա շարունակեց իր գործը:

Վասակը՝ նախարարներին հետևը զցած իբրև շքախումբ՝ շրջեց հրապարակի շորս բոլորը և ապա եկավ կանգ առավ մեջտեղը:

— Զորագնդերը առույգ, մարտական տեսք ունեն,— ասաց Վասակը աշխուժորեն,— անկասկած արժանապես կդիմավորեն պարսից զորաբանակին:

— Կարծո՞ւմ ես, որ զորաբանակը իրոք գալիս է Հայոց աշխարհ,— հարցրեց Հազարապետը՝ զգալով որ Վասակը սայթաքուն խոսք ասաց պարսիկ զորաբանակի շարժման նպատակավայրի մասին:

— Անշուշտ Հայոց աշխարհ է գալիս,— հասկանալով Հազարապետին՝ նպատակով ճշմարտեց կրկին Վասակը, որ սա կարծի, թե Հայոց աշխարհ չի գալիս զորաբանակը:

«Հայոց աշխարհ է ասում, որ կարծեմ, թե Հայոց աշխարհ չի գալիս... սպիրա տ...», — խորհեց Հազարապետը:

Հրապարակի մեջտեղում նրանք իջան նժույզներից և խմբավեցին Վասակի շուրջը: Նա խոսում էր պարսիկ զորաբանակի մասին, որ պետք է անպայման ոչնչացնել «օրինակելի կերպով», որ նրանից հետո ոչ մի զորաբանակ չերևա Հայոց աշխարհի սահմանի վրա: Ապա խոսեց Թեոդոս կայսրին ուղարկելիք նամակի մասին, որ պետք է շտապ կազմել և ուղարկել:

— Ես կխնդրեի նամակը կազմել այս իսկ երեկո:

— Հավաքվենք քո ապարանքում,— հարեց Հազարապետը:

— Ես իսկ այդ էի ուզում առաջարկել,— ասաց Վասակը, հասկանալով Հաղարապետին:

— Հիմա մենք կցուցադրենք ամեն գործում մարզպանի գլխավորումը,— ասաց Գաղիշոն խորիմաստ շեշտով,— դա կշիտ կտա և մեր համերաշխութունը կվկայի կայսրի առաջ:

— Անշուշտ, անշուշտ,— ասացին նախարարները:

Մոտ եկավ Վարդանը Ատոմի հետ: Նա խոնարհ ողջունեց Վասակին և նախարարներին:

— Չե՞ս կարծում, որ դանդաղում ենք, Սպարապետ,— հարցրեց Վասակը:

— Այո, ինչպես միշտ,— ասաց Վարդանը:

— Կրկին սուրհանդակնե՞ր պիտի ուղարկենք նախարարներին, որ հավաքվեն:

— Երևի կգան,— ասաց Վարդանը անպատասխան շփոզնելու համար մարզպանի խոսքը:

Հեռուն, Վաղարշապատի ճանապարհին պղտոր փոշի բարձրացավ, որ հետզհետե աճում էր ու բարձրանում: Բոլորն իրենց հայացքներն ուղղեցին այն կողմ: Նոր զորք էր գալիս: Գրոշները, որ ծածանվում էին առջևում՝ չէր որոշվում: Բայց Դավիթ սեպուհը մի փոքր լարված նայելով՝ ասաց.

— Համազասպ իշխանի նժույգի խաղն է... Մյուս գունդը Արշարունյացը կլինի:

Վարդանը աշխուժացած շրջվեց այն կողմ: Այնքան ամիսների մտահոգությունն առարկան՝ Մամիկոնյան լրիվ զորքը... որի վրա նա դրել էր իր գլխավոր հույսը: Նա ժամ առաջ կամենում էր տեսնել այդ համալրումը, Համազասպի գործը, որ չեկավ չհասավ իր ժամանակին Անզղում: Որից նա զայրացած էր նաև...

Սեպուհները նժույգ նստեցին և ընդառաջ ելան ժամանող զորագնդերին:

Մի փոքր անց հրապարակը լցվեց երկու հեծյալ գնդերով՝ Մամիկոնյան և Արշարունյան: Դրանք նորակազմ, նոր զենք ու հանդերձանքով գինված՝ երիտասարդներ էին: Ժամանողները գորական ողջույն տվին մարզպանին և նախարարներին: Արշավիք Արշարունին ծածուկ ու կասկածոտ հայացքներ նետեց Վասակին ու Գաղիշոյին, բայց հասկանալով նոր իրադրությունը՝ զգուշացավ երևույթը մատնել: Համազասպը երկյուղած գննեց Վարդանը

Դին: Վարդանը ևս փոխանակեց հայացքը նրա հետ և ոչինչ չբխոսեց:

— Ոտից գլուխ նտրակոչիկ են,— ասաց Արշավիր Արշարուհին զվարթ ձայնով և մտաեցավ Վարդանին:

Մինչ Վարդանը խոսում էր Համազասպի և Արշավիրի հետ՝ Հարավային ճանապարհից մի ստվար խումբ մտաեցավ Արաքսի կամուրջին: Զինվորների և զինված շինականների մի ուժեղ պահակ խումբ շրջապատել էր մի այլ խմբի, որ երևում էր պարսիկներ էին: Խումբը անցնելով կամուրջը կամենում էր մտնել քաղաքադռնով ներս՝ կանգ առավ, խոսեցին իրար մեջ և ապա թեքվեցին դեպի ճամբարի հրապարակը: Երբ խումբը մտաեցավ պարզվեց, որ դրանք զինվորներ ու շինականներ էին, որ բերում էին կապկպած Դենշապուհին, Միհր և Որմիզդ. մոգպետներին ու Դարեհին, որոնց հետևակ բերելով՝ նոր էին միայն հասնում Արտաշատի բանտը:

Ինչպես երևում էր՝ պարսիկ մեծամեծներին բռնել և կալանավորած բերում էին զինվորները, բայց ճանապարհին նրանց միացել էին շինականներ և փորձ արել սպանել նրանց, զինվորները արգելել էին, որպեսզի բերեն մայրաքաղաք և ահա այստեղ էր, որ շինականները ստվարացել էին և վտանգել կալանավորների կյանքը: Դրանց մեջ ամենից մոլեգնածը այլանպակված դեմքով, Սահակ շինականն էր, որ առաջնորդում էր շինականներին և իրապես կալանավորել էր թե՛ պարսիկներին և թե՛ զինվորներին:

Վասակը վրդովվեց, եքը տեսավ զզգովյալ, ճանկոտովյալ և ճանապարհի փոշիների մեջ կորած պարսիկ մեծամեծներին, որ հոգնած թեև, բայց կատաղե հայացքներով կանգնեցին նրա գիմաց: Բայց երբ տեսավ, որ ոչ միայն կալանավորները, այլև նրանց կալանավորած զինվորները իրենք կալանավորված են շինականների կողմից, որոնք քարերը ձեռներին պատրաստովում են քարկոծել կալանավորներին, և այս ողջ խումբը առաջնորդում է մի շինական՝ կատաղե խենթանալու շափ:

Երբ բոլորովին մտաեցան՝ Վասակը ետ նայեց Վռամին: Սա նժույզը քեց և արագ մտաեցավ:

— Քշիբ դրանց ինձ մոտ,— հրամայեց Վասակը: Վռամը նժույզով մխրճվեց բազմության մեջ: Սա ճեղքվեց եղկու մասի:

Բայց Վոամբ մտրակի հարվածներ իջեցրեց ուշացողներին դեմքին, գլխին:

— Ի՛ն՛սը, դե՛սը,— հրամայեց նա,— մարզպանի մո՛տ: Քարկոծելու պատրաստ բազմությունը վազեց դեպի մարզպանը:

Վասակը դիմեց շինականներին.

— Ձեզ ո՞վ տվեց քարկոծի հրաման:

Մի ծերունի առաջ եկավ և հազիվ զսպելով կզակի դողդողումը՝ ասաց.

— Վրե՛ծը, տեր մարզպան, վրե՛ծը...

— Ա՛ռ քեզ վրե՛ծը,— հարվածեց նրան մարակով Վասակը: Մերունին ընկավ: Բազմությունը մոմոաց, մոնչաց և շար աչքերով խայթեց Վասակին: Նա ընդունեց այդ հայացքը և զայրացած գոչեց.

— Իշխաննե՛ր եք դուք, դատավորնե՛ր... դուք գլո՛ւխ եք բարձրացնում:

Վասակի այս վարմունքը վարմացրեց շինականներին: Նրանք չհասկացան իմաստը:

— Տե՛ր մարզպան,— շարժվեց դեպի Վասակը մի երիտասարդ,— քո կամակատարն ենք:

Վասակը մի հարված էլ սրան հասցրեց: Շփոթված բազմությունը նրան էր նայում տարակուսած:

— Գու՛ զորակա՛ն ես, որ զորք ես վարում, դու ո՞վ ես;— հարցրեց Վասակը Սահակին շարագույժ սպառնալիքով:

— Հանուն հո՛ր, որդո, հոգոյն սրբո, զինվորյալ աշխարհի,— լայն ու բարձրագույն շեշտով դեմքը խաշակնքելով գոչեց Սահակը և առաջ եկավ զինվորյալի համարձակությամբ:

Դարձյալ այդ միշտ և ամեն տեղ Վասակի դեմ կանգնող առեւի զինվորագրությունը...

— Ի՛ի՛նչ... հանդգնում ես խոսե՛լ,— պոռթկաց Վասակը,— ես քեզ կախե՛լ կտամ...

— Կախել տաս՝ զինվորյալ եմ, վառել տաս՝ զինվորյալ եմ,— պատռելով կուրծքը՝ մերկապարանոց ավելի առաջացավ Սահակը, ահադին քալը ձեռքում սեղմած, աչքերն արյունակալած գոչեց.

— Հրաման եք տվել՝ հրամաններդ կատար: Մահ եք հրամայել՝ մահ: Ենք տալիս թշնամիներին:

— Մահ,— մոնչաց բազմութիւնը:

— Հրաման տուր, տե՛ր քրիստոնյա,— սպառնալով Վասակին գոչեց Սահակը և քարը բարձրացրեց, որ զարկի պարսիկներին:

Վասակը դողաց զայրույթից, բարձրացրեց մտրակը, շաշեցքեց օդում և դաժան աչքերը ոլորելով Սահակի վրա՝ առաջ մղովեց դեպի նա:

— Դո՛ւ... դո՛ւ... դո՛ւ... հասկանո՞ւմ ես ում դեմ ես վեր կացել...

Սահակը այլայլվեց, սպառնալի խոժոռումով վճռական առաջ մղվեց և գոչեց ցասումնալից.

— Ես աշխարհքի՛ համար եմ վեր կացել... Աշխարհքն էլ կըզատի ինձ... Իսկ դո՛ւ, դո՛ւ ում դեմ ես վեր կացել...

— Զինվորագրութիւնն ես հանում դեմս... Ես կընչե՛մ ձեր բոլորի զինվորագրութիւնը, ապստա՛մք շնե՛ր...

Վասակը սևացավ զայրույթից և շկարողացավ զսպել իրեն, Եժույզն առաջ քշեց և մտրակով շառաշուն հարված հասցրեց Սահակին:

— Մեկ է՛լ զարկ, տեր մարգպան,— գոչեց Սահակը կուրծքը դեմ անելով,— մեկ է՛լ... տեսնեմ մինչև ո՛ւր կհասնես...

Վասակը կրկնեց հարվածը:

Սահակը ավելի մոլեգնեց՝ վիրավորանքի՛ց, թե՛ կատաղութիւնից: Նա սպասում էր այդպիսի վերաբերմունք մարգպանի կողմից, որը, ինչպես վճռվել էր Անգղում, մյուս նախարարների հետ միասին նշանաբան էր տվել ոչնչացնել պարսիկներին: Վարդանը մղվեց միջամտելու, և թույլ շտալու վերին աստիճան անվախել և հանդուգն արարքը, որ սկսվում էր, բայց և ինքը ուշացավ մի վայրկյան, և մինչ կմտածեր առաջն առնել՝ արդեն Վասակը ինքնիրենից դուրս էր եկել, իսկ Սահակը հանդգնել: Եվ դա այն ժամանակ, երբ Անգղի արյունալի դեպքերից Վասակը հագիվ էր վերականգնել իր պատիվն ու վստահութիւնը:

Սահակը զինվորալի կրթից կատաղի դեմ էր անում իր մարմինը Վասակի հարվածներին: Վերջինս նույնպես մոլեգնեց և սկսեց տեղալ հարվածները: Ստացվեց մի ոգորումն, կատաղի կը-

սիւմ մի նախարարի և մի շինականի մեջ, ուր մեկը հարվածում էր, որ ընկճի շինականին, իսկ սա ավելի էր մղվում դեպի հարվածները: Այլևս հաղթել սրան անկարելի էր:

Աննախընթաց, անլուր բան... Բազմությունը քարացավ: Նախարարներն անհանգստացան: Ոչ ոք չհամարձակվեց օգնության հասնել Վասակին: Գաղիշոն մի շարժում արեց օգնելու, բայց ըզգաց դրա վտանգավորությունը: Դրությունը դառավ նվաստիչ, տազնապալի: Հարկ էր, որ մի կողմը զիջեր: Բայց մի անգամ իր դիրքից դուրս եկած Վասակի համար ուշ էր այլևս կրկին զսպելը: Իսկ բազմությունն ու զորքը, ինչպես և կապկապված պարսիկ մեծամեծները, արդեն տեսել էին յամեն ինչ: Հազարապետը ուրախացավ: Վասակը մերկանում, վարկաբեկվում էր: Իսկ Վարդանը տեսնելով Վասակի խայտառակությունը՝ կրկին մղվեց միջամտելու: Բայց հիմա ընկավ անտանելի և անել դրության մեջ: Այլևս ուշ էր և անօգուտ: Վասակն հարձակվում էր, Սահակը հակահարձակվում: Մնում էր, որ դարձյալ Վասակը տեղի տար: Եվ հետո՝ երբ դիտեց Սահակին՝ նրա առջև գծվեց սրա կերպարանքը, տխրաշուք այլանդակված դեմքը, բարձր կորովի հասակը, կյանքի մահի հայնկույսում կանգնածի անդիմադրելիությունը: Նա հիացավ և մնաց անվճռական դիրքում:

— Քաշեցն ք դրան,— գոչեց Գաղիշոն:

Քիկնապահ Վոսմը և մյուս թիկնապահները հարձակվեցին Սահակի վրա, բայց սա գերմարդկային ուժով կրկին կպավ գետնին և ամրակուռ թևերով պաշտպանվեց:

— Ո՛ւհ,— կատաղի ցասմամբ թափ տվեց իրեն Սահակի հետև կանգնած զինվորների բազմությունը, դեմ արեց կուրծքը թիկնապահներին և ցասման կրքով, ինքնամոռաց հափշտակությամբ դիմադրեց նրանց:

Մինչ կանդարդառնային զինվորները՝ այս ըմբոստ վարմունքին, որ զինվորայի հափշտակություն էր արդեն՝ Սահակը նրանցով շրջապատված՝ երկաթ բազուկները օդում կարկառեց և գոչեց վիրավոր ու ցասումնալի:

— Աշխարհք ամենայն, վե՛ր կաց դատաստան... Ի՛նչ է մեր օրը... իշխանը՝ տանջի, պարսիկը՝ մաշկի: Քա՛ր քաշեցինք, փո՛ւշ քաղեցինք՝ չպրծանք: Բա մեզ արդարություն չկա՛: Այ, տեսն ք,—

չրջլեց հանկարծ Սահակը դեպի Դենշապուհը, — տեսեր, աստժոտ  
պատկերը շարդեց երեսիս... սրա վրեժն ո՞վ կտա ինձ, — դու ինձ  
մի՛ վախեցնի, տեր մարգպան, — առաջ գնաց զինվորյալը դեպի  
Վասակը, — ես յոթը կաշի մաշկվել, յոթը կրակ վառվել, անցել եմ  
ահն է՛լ, մահն է՛լ, ես հիմա մաքուրից մաքուր եմ: Ո՛ւմ ես վա-  
խեցնում:

Կարծես խարույկի բոցը լիղեց Վասակին: Հանկարծ նա հիշեց  
Անգղի շարաշուք զինվորյալի դեմքը փաթաթած: Եվ գունատվեց,  
նա վարկարեկվում էր շարաշար: Նա մենակ մնաց իր անխոհեմ  
չղոթկումով: Բայց դեպքն էլ դաժան էր, անվայել, աննախըն-  
թաց, խելքից մտքից դուրս: Պետք էր ոչնչացնել այս ապստամ-  
բին, ուրիշ ելք չկար նրա համար: Եվ նա այլակերպված բարձ-  
րացրեց սուրը և գնաց Սահակի վրա մտրակահար, սմբակակոխ  
չնչելու, որ սիրտն իջնի... բայց ավելի վատթարացավ դրուժյունը:  
Է՛հ հակը իր վիրավոր ու այլանդակ դեմքը կծկելով մի ձեռքով  
բռնեց նրա սուրը և մյուս երկաթ ձեռքով բռնեց նժույզը:

Սա արդեն վեր էր ամեն հանդգնությունից:

— Աստվա՛ծ արդար, հասի՛ր, աստվա՛ծ արդար, հասի՛ր, —  
գոչեց Զարեհ եղբայրը և եկավ հավասարվեց Սահակի հետ՝ կուրծ-  
քը դեմ արած սեպուհներին: Մոնշալով վրա հասան նաև Պողոսը  
և մյուս շինականները:

— Մենք է՛լ ենք զինվորյալ, մենք է՛լ զինվորյալ ենք, — գո-  
չեց Զարեհ եղբայրը ձայնակցելով Սահակին, հեկեկաց, — կոտո-  
րի՛ր ողջ ազգը...

— Սպասե՛ք, ի՛նչ են ուզում, — հանեց սուրը Առաքելը և ար-  
յունակալած աչքերով ուտելով Վասակին, առձաջ գնաց դեպի նա:  
Պնաց և զայրույթով լցված բազմությունը:

Կարծես մի հայտնություն, կայծակնախին մի լույս փայլա-  
տակեց շինականին շրջապատող բազմությանը: Ողջը միանգամից  
հափշտակվեց — և շինական, քաղաքացի, զինվոր հանկարծ միա-  
ցած Սահակին և նրան մղելով՝ մղեցին Վասակին իր նժույզով:  
Միայն միահամուռ ընդվզման մեջ, բազմությամբ իրար զանգված  
այդ շինական ու զինվորական ժողովուրդը զգաց իր ճշմարտու-  
թյան հայտնությունը, իր ուժը, ինչ բազմիցս նա զգացել էր,  
բայց թերի, բնազդաբար, որ իր գործը կարող է և իր ձեռքով  
տեսնել, ոչ այնպես, ինչպես Անգղում, որ Վասակի, իշխանավո-

րի դեմ ցույցեր արեց, գնաց միայն իշխանավորի հրամանով Ի՞նչ էր կամենում նա հիմա անել՝ այդ էլ թերևս պարզ չէր նրա համար, բայց իր զինվորյալ շինականի արարքը սիրտ ու միտք տվեց իրեն:

Ոչ ոք չէր սպասում նման արարքի:

Իսկույն, ական թոթափել Արտաշիրը և Ռշտունի սեպուհի՝ Թոման, սրամերկ հարձակվեցին Սահակի և բազմության վրա: Բայց զինվորները, արտաշատցիք և Անգղից եկածները իրենք հորձանք տվին և կանգնեցին նրանց դեմ: Սեպուհները սակայն խրվեցին նրանց մեջ և ոչ ոք չնկատեց թե ինչպես հանկարծ Արտաշիրը՝ սյունյաց սեպուհը՝ այլայլված, իրեն կորցրած ճեղքեց բազմությունը, արագահոս թռավ դեպի Սահակը և սրով պատրաստվեց հարվածել նրա գլխին: Բայց Առաքելը իր սրով կանգնեց նրա առջև: Իսկույն վրա հասավ Ռշտունյաց սեպուհը՝ Թոման, և սուրը բարձրացրեց, որ ինքը հարվածի:

Այլևս չկարողացավ զսպել իրեն Վարդանը:

— Հայրենիքի զինվորյալի՞ն,— ցատումնալից հարձակվեց Արտաշիրի և Թոմայի վրա նա:— Ո՞ր իրավամբ: Ո՞վ եք դուք: Հազվերտի գազաննե՞րն եք, թե՞ հայրենիքի զինվորյալներ:— Կապեցե՞ք սրանց,— դիմեց զինվորներին Վարդանը,— գանահարեցե՞ք...

Ձինվորները շփոթված նայեցին Վարդանին, բայց, նկատելով նրա խիստ հրամայական հայացքը՝ կատարեցին հրամանը՝ արձակելով իրենց կաշեգոտիները և կապելով սեպուհներին:

Սակայն հարկ էր վերականգնել իշխանական պատշաճավորությունը: Նա դիմեց բուրբին.

— Կողարեցե՞ք... Վե՛ր կաց, շինական, — ասաց նա Սահակին մեղմաձայն:

Սահակը վեր կացավ:

— Պատի՛վ տուր մարզպանին, — հրամայեց Վարդանը մտալլ հանգստությունը:

Սահակը պատիվ տվեց Վասակին:

— Հիմա անցիր ճամբար շինականների մոտ:— Դո՛ւք ևս, — ասաց նա մյուս շինականներին:— Իսկ զինվորները Քոզ կալառ նավորներին տանեն բանտ:

Առաջ եկավ հանդարտ ու խիստ հայացքը գետնին ոչառունցի Արթնն բռնին:

— Ճշմարիտն ասեմ՝ ո՛չ նեղացեք, իշխաննե՛ր, Սպարապետ,— ասաց մեղմ ու արժանապատիվ եղանակով,— գիտե՛նք, օրենք է, որ դուք էդպես լինեք, մենք՝ էսպես: Ծշմարիտ որ դուք ռամկի ցավը չգիտեք: Մենք մեր ցավի համար ենք եկել էստեղ: Քողեք մեր ցավի կոճվը կովենք:

Վարդանը դժվար կացութեան մեջ էր: Նա լսեց Արթննին և լռեց...

Մտայլ ճնշումը սակայն խոտվեցրել էր ողջ իշխանական դասը: Վաստիկն այնքան էր վիրավորված, որ միայն լռել կարող էր, ծածկել վիրավորանքը և թույլ չտալ, որ հասնի մի ավելի մեծ վիրավորանք: Նա զգում էր, որ ժամեծամ վիժում է իր դիրքը: Եվ թե մինչև ուր կհասնի այդ անկումը՝ հայտնի չէր:

Խոսեց Վարդանը:

— Նաև ի՛նձ ցավ, տե՛ր մարզպան, որ շինականը հասավ այդպիսի անլուր հանդգնութեան: Պետք չէր տեղիք տալ...

Վասակը շոր արհամարհանքով ասաց.

— Սա անլու՛ր իշխանազանցութիւնն է, ապստամբութիւնն իշխանութեան, օրենքի դեմ...

— Օրենք չէ ձեռ բարձրացնել զինվորայլի վրա:— Զինվորյալը երկիր է պաշտպանում, տեր մարզպան — ձայնը բարձրացրեց Վարդանը:

Վասակը շպտասխանեց: Նա միայն խուլ ձայնով նժույգ պահանջեց: Ծարժվեցին: Նախարարները ևս հեռացան: Մնաց Վարդանը և Ատոմին ու Համազասպին ասաց, որ մնան: Վարդանը նստեց մի քարի վրա, նրանց դիմաց, լուռ, հարեանցի դիտեց նրանց և երկար ժամանակ լիտսեց:

— Ո՛ւր է, թող առա՛ջ գա շինականը,— հրամայեց Վարդանը:

Շինականները պառակտվեցին և ճանապարհ տվին: Սրանք առաջացան, և նրանց մեջ Սահակը եկավ, կանգնեց Վարդանի առջև:

Ամեն կողմից սուր հետաքրքրութիւնը շարժեց բազմութեանը: Պողոսը, Հովհաննես Կարապետը, բոլոր նրանք, ովքեր վազուց ձգտել էին խոսել Վարդանի հետ՝ իրար առաջ կտրելով սեղ-

մըվեցին Վարդանի շուրջը: Դրանց հետևեցին նաև գեղջկուհիները, սրերը գոտինների մեջ:

Քաղաքացիները, որ զինվորներից զսպված կանգնել էին հետո՝ հանկարծ նրանք էլ կոտորեցին իրենց պատենշն ու խուռնե-րամ խուժեցին դեպի Վարդանը: Դավիթ սեպուհը փորձեց ետ տալ նրանց, բայց չհաջողվեց: Հովակիմ դարբինը, Վարաժը, Մարկոսը, դողող շրթունքներով մի բան մրմնջալով Աբրահամ պապիկը, մուխանդ Զարեհ եղբայրը ճեղքեցին բազմութունը և ամեն-քից առաջ եկան մոտեցան Վարդանին: Այս տեսնելով՝ շնայած Դավիթ սեպուհի խիստ արգելքին՝ քանդվեցին իրենց զորագնդե-րից և հոսեցին եկան տարբեր նախարարական զինվորներ: Բուրբն էլ սկսեցին երանություն մը դիտել Վարդանին: Ոչ ոք խոսք չէր գտնում ասելու: Ամենքը գորովանքով դիտում էին նրա ամեն մի շարժումը, խանդավառվում նրա ներկայությունից: Սուր հետա-քրքրություն մը և ակամա ակնածանքով դիտում էին ոչտունեցիները: Երանության մեջ լողում էին Կորյունն ու մյուս նորակոչիկ-ները: Ամենից հետո կանգնած էր Առաքելը և հանգիստ դիտում էր այս շարժումները:

Վարդանը նայեց իր առջև կանգնած շինականին: Դա խոշ-տանգվածի, այլանդակվածի և մինչև հոգին ծաղրվածի պատկերն էր: Մի աչքը կույր, մյուսը հազիվ փրկված, քիթն ու այտերը ջախջախված մարդը ցատում էր զարթեցնում:

— Դենշապուհն արեց... — մոայլվեց Վարդանը:

— Դենշապուհ պարսիկը, Սպարապետ, — բարձրաձայն խոսեց Սահակը, — Դենշապուհ պարսիկը. աստժու պատկերը շնչխեց երեսիս... ո՞վ կտա դատ...

— Դատդ կտա հայոց ժողովուրդը, շինական՝, — նույնպես բարձրաձայն խոսեց Վարդանը, — Դենշապուհ պարսիկը ցանկա-նում է շնչխել հայոց ժողովրդի պատկերը...

— Բա էլ ո՞նց պիտի լինի հայոց ժողովրդի բանը, թե պիտի մեկը ջոկի իշխան-նամիկը, մեկելները՝ մամկուն-ոչտունը:

— Իմացիր, շինական, որ այս կովին վեր են կացել և՛ իշ-խան-նամիկ, և՛ մամկուն-ոչտուն, ինչպես ասում ես: Ամենքս ազատվում ենք, զինվորյալ ենք ազատության: Պատրաստվեցե՛ք ազատության պատերազմին:

Բոլորը խաշահիքեցին: Եվ լոռիայան մեջ մի առանձին հուսա-  
հատուիցամբ և միաժամ հուսով լսվեց Սահակ շինականի թա-  
ասնչը՝

— Գովե՛նք, Սպարապետ, սերո՛ւնդ-սերո՛ւնդ կռւով գնանք՝  
մի տեղ լույսը բացվի...

Վարդանը հուզված-լցված նայեց Սահակին, բազմութեան և  
գլուխը շարժեց տխուր.

— Ազատութիւնը դժվարի՛ն բան է, շինական... այո՛, գնանք  
սերունդ-սերունդ հասնենք...

Հետո արագ վեր կացավ, մի անգամ ևս ջերմ հայացքով գրկեց  
ողջ բազմութեան և Ատոմի հետ հեռացավ դեպի Արտաշատ:

Զարեհ եղբայրը միգամած աչքերով նայեց Վարդանի հետևից  
և հառաչելով ձգեց.

— Է՛, է՛, է՛... լա՛վ է աշխարհքը, լա՛վ, մենակ ի՛նչ կանես՝  
օձի բերանում... Հրե՛ս — վեր է կացել սա, որ հանի... Ուժը պիտի  
պատի՛ որ... ցավը շա՛տ է, ցա՛վը...

— Կպատի՛, — կոշտ ձայնով ճնշեց նրան Առաքելը ու մի  
փոքր հետո, — թիկունք կտանք՝ կպատի: Կպատի ու իր աշխարհ-  
քը կտանի: Ի՛նչ աքա մե՛րը, մերը, բա մեր աշխարհքն ասա, որ  
արյունն էլ մերն է՝ պիտի հանի՛ մերը...

Երեկոյանում էր: Ստվերները սողացին, ձգվեցին: Խարույկի  
շուրջը նստեցին շինականները և սկսեցին հագստանալ, մտորել:

— Է՛, է՛, է՛, ցա՛վը շատ է, ցա՛վը... արդարութիւն չկա, ա՛յ  
թե ինչու ցավ կա, — ասաց Եզրասը գլուխը գետնին հակելով:

— Կա արդարութիւն, պիտի գա, — ասաց մի շինական խո-  
հուն աչքերը կրակին:

— Պիտի գա՛, կլինի, երբ կլսվի խղճի ձայնը:

— Պիտի լսվի՛ որ, — քմծիծաղ տվեց շորրորդը:

— Պիտի լսվի, — հաստատեց Եզրասը ոգի առած, — ուսմկի  
ձայնը հանց կայծակ՝ պիտի որոտա, լեռները դողացնի:

— Ե՛րբ, է՛, ե՛րբ...

— Գարեբի մի դար, օրերի մի օր, ական թոթափելու մի ա-  
վան թոթափել: Հանկարծ աշխարհքը պիտի որոտա, դատաստան  
պիտի բացվի և ամենից առաջ ուսմկը պիտի կանչվի դատաս-  
տանին:

— Ինչո՞ւ ուամիկը:

— Նրա համար, որ ամենից անիրավագծը՝ ուամիկն է առ առաջին գանգատի իրավունքը նրանն է: Պապական ջուր, ուամիկին՝ դատաստան:

— Այդ ճշմարիտ է,— ձայնեցին շինականները:

— Ռամկի շարշարանքը չափն անցա՞՛ք:

— Մով դառա՞վ:

— Մո՞վ, ցամա՞ք:

— Է՛, է՛, մենակ ուամիկն է: Հին Մասյաց Ռտնում մարդ է երևացել, ասել է՝ աշխարհք պիտի մին էլ քանդվի, մին էլ շինվի,— ասաց Եղբարը:

— Ինչո՞ւ քանդվի, ինչո՞ւ շինվի: Շինած է ու կա: Մո՞ւտ է, Ի՞նչ է,— զարմացավ մի այլ շինական:

— Մուտ՝ ոտից գլուխ: Շինվի՞՛ դրսովի:

— Ծշմարիտ աստված,— ձայնեցին շորս կողմից շինականները:

— «Շինվի՞՛ դրսովի»,— ձգեց մի ուրիշը,— ախր ե՞րբ, է՛, ե՞րբ... «օրին մեկ օ՛րը»... Սպասեք՝ գա օրին մեկ օրը:— Օրին մեկ օրը հի:ի է:

— Հիմի չէ,— կտրեց մի խաժական շինականը— օրին՝ մեկ օրը էն է, երբ կսկսվի ուամկի կոփվը:

— Հիմի էլ է՛ ուամկի կոփվ:— միջամտեց մի շատ լրջադեմ ծերունի ցածրաձայն ու համոզիչ եղանակով:

— Ո՞նց, Անդրաս եղբայր: Հազար թագավոր-իշխանի կոփվներ են կովվում: ուամիկն Ի՞նչ գործ ունի:

— Ռամիկն էն ունի, որ ինչքան կոփվ է՛ կովվում թագավոր-իշխանի՞ ուամիկը միշտ մեղն է: Ռամիկը աշխարհք է քշում առաջ: Առաքելը, որ ուշադիր լսում էր՝ ընդհատեց հանկարծ:

— Է՛, է՛, է՛, ո՞ւր գնացիք, «աշխարհքի մյուս շե՛նք» «ուամկի կոփվ...»: Ռամկի կոփվը ուամկի իրավունքն է, ուամկի արդարութունը՝ ուամկի հողը: Աշխարհք էս պահիս իշխանական է: Ո՞վ կտա մեզ հող, իրավունք: Արդարությո՞ւն եք սպասում, կգա՞, բայց էլի սուտ արդարութուն կլինի, էնքան ժամանակ սուտ, մինչև կգա արդարության արդարությունը ու կմնա մեկ՝ աշխարհքը, մեկ՝ ուամիկը: Աշխարհք կդառնա ուամկական: Կովենք էս կրփվները մինչև գա ուամկի կոփվը:

— Ռամկին շատ բան պետք չի,— խոսեց մինչև այդ լուռ ունկնդրող մի շինական,— էնքան, որ նրա եղունգը աշխարհքի վրա մեկ բռնի...

— Չեմ հասկանում ասածներդ,— ձայն տվեց մի շինական, որ նույնպես հաճույքով ու հետաքրքիր լսում էր զրույցը,— Անդրաս,— դիմեց նա խաժակն ծերունուն,— ախր մի հասկացրու ինձ, վե՛րջը վե՛րջը՝ աշխարհքն ո՛ւմն է:

— Աշխարհք ուամկինն է,— ասաց Անդրասը հանգիստ:

Բոլորը դուլխները խոնարհեցին մի ինչ-որ սրբազան լուրթյան մեջ: Միայն խարույկն էր ճարճատում ուրախ ու աշխույժ:



Գիշերը սքողում էր Վասակի ապարանքը: Խավարի թանձր ժանրափողին կլանել էր՝ պարսպի և շենքի ստվերազծերը: Անլույս պատուհանները խոսում էին ապարանքի բնակչի մենակության մասին:

Եվ իրոք՝ մենակ էր Վասակը: Խռովահույզ մտքեր էին պաշարել նրան: Վերջին օրերի անցուղարձը սրընթաց կատաղությանը եկան լցվեցին նրա շուրջը և տակնուվրա արին նրա գործերը: Ապստամբությունը, որի դեմ նա այնքան սարսափով պայքարել, զսպել էր՝ շղթագերծ փոթորկի նման փրթեց գնաց ողջ երկրով մեկ: Պարսից ջարդված զորագնդերը Հայաստանից փախած՝ գնում են հիմա լուրը տանելու և այլանդակ համեմատության հասցրած, շարախոսությանը լցնելու իրենց երկիրն ու արքունիքը: Ի՞նչ կմտածեն իր՝ Վասակի մասին, կրկնում էր նա մտքում ամեն անգամ, երբ մեկ-մեկ դառնում էր այս հանգամանքին:

Դենշապուհի, Դարեհի և մոզպետի բանտարկումը, նրանց հանդիպումը իրեն՝ Վարդանի ընկերակցության մեջ, զորատեսի ժամին,— սա խիստ ծանրացնում էր իր վիճակը: Այս մասին մտածելիս կարծես մտքերը կիզում էին նրա ուղեղը: Աղավաղակերպ յուղի ճրագը աղոտ լույս էր սփռում Վասակի մոռյլ դեմքին: Նթե կար որևէ շարժում. այդ դեմքին կամ Վասակի ողջ կերպարանքում՝ դա ճրագի լույսն էր, որ փթթում էր երբեմն ընդոստ

շեշտով: Վասակը նստած էր եգիպտական քարե արձանի պես և նայում էր խավարի մեջ:

Ներս եկավ սենեկապետը սպասավորի հետ՝ ավելի լուսավոր ճրագով: Վասակը շնկատեց նրանց: Նրա մտքերը թռչում էին ողջ Պարսկաստանի անապատները և հասնում հեռու Ապար աշխարհը, ուր նրա «գործերն» էին. Հազարապետը, արքունիքը, Հազկերտը, իր պատանդները: Թե ի՛նչ էր կատարվում այնտեղ՝ կարելի էր միայն երևակայել և սարսափել:

Վասակի հոգու անկյուններից համառորեն իրեն էր նայում ողբերգական մի կերպարանք. ավելի շուտ՝ չէր նայում. ինքը Վասակն էր նայում նրան: Նա, այդ կերպարանքը անշարժ էր նույնպես, ինչպես և ինքը, մտախոհ և ինքնամոփոփ: Բայց ինչ որ ամենից ահհանգստացնողն էր նրա մեջ՝ դա նրա հպարտ վիշտն էր, զավակներին նվիրված մոր վիշտը: Այդ կերպարանքը ոչինչ չէր պահանջում իրենից և դա ավելի սարսափելի էր: Նրան չի ազդի ո՛չ զայրույթը, ո՛չ հրամանը, ո՛չ անզամ մահի սպառնալիքը: Ինչպես այսօրվա շինականը... Վասակը նայում էր այդ կերպարանքին և սպասում, որ ահա նա կշրջվի դեպի ինքը և հպարտ վշտով, քարացած շրթունքներով կնայի իրեն: Ահա՛, ահա՛...

Սենեկապետը ներս մտավ: Վասակը սոսկումով ցնցվեց:

— Ի՛նչ է, ի՛նչ կա... — հարցրեց Վասակը:

— Խորխոռունյաց տերը... — կմկմաց սենեկապետը:

Վասակը սթափվեց.

— Թող հրամայի նե՛րս... .

Վարագույրի մեջ չոր ու դաժան կանգեց Գաղիշոն: Վասակը ծանրաշարժ հրավիրեց նստել: Գաղիշոն հասկացավ Վասակի խռովքը, բայց նստեց, մի հայացքով ընդգրկեց նրա կերպարանքը և անողոք ինչպես միշտ՝ ասաց.

— Այս ապստամբները մի օր կկործանեն քեզ:

— Կընչե՛մ այս ապստամբ անո՛ւնը, հո՛տը չեմ թողնի աշխարհում, — ձայնը բարձրացրած խոսեց Վասակը բորբոքվելով կրկին, — այդ իշխանազանցությունն է, այդ իշխանության ոտնահարումն է, այդ նախարարության վերջն է: Երկրի պաշտպանությունը պատրվակ է ուսմկի համար խռովություն հարուցելու, կարգ ու օրինք քայքայելու:

Գաղիշոն անվրդով լսեց ու անցավ ուրիշ մտքի.

— Միհրներսեհը հիմա շուն կտրեց այնտեղ:

Վասակը շխտեց:

— Կսպանի՛ խեղճ պատանդներին... չի՛ խնայի... — ասաց Գաղիշոն անխնա եղանակով:

Վասակը շնչարգել եղավ այդ խոսքից: Գաղիշոն նոր բան չասաց, Վասակը հաճախ էր այդ սարսափելի մտքերով տանջվել: Բայց և այնպես Գաղիշոյի, մեկ ուրիշի նույն մտքի արտահայտությունը ազդեց Վասակին իբրև նոր, ահավոր լուր: Վասակը իր մազմզոտ հոնքերի տակով ատելութամբ վեր նայեց Գաղիշոյին:

— Կսպանի՛, անշուշտ կսպանի՛, — կրկնեց Գաղիշոն՝ շարունակելով բարձրաձայն մտածել Բարեկի և Ներսիկի մասին:

Գաղիշոն խոսում էր անզթորեն ազատ, առանց հաշվի առնելու իր խոսակցի զգացմունքները: Բայց Վասակին վշտացնելու ցանկության ամենաթեթև նշույլն անգամ չկար նրա այդ ձևի խոսելու մեջ: Նա հայացքն ուղղած իր ներքին աշխարհին՝ դիտում էր այնտեղ առարկաներ, մարդիկ, արարմունքներ և տեղեկատուի հոգատարություններ կամ զրուցընկերի ջանասիրություններ հաղորդում էր, թե ի՛նչ է տեսնում և ինչե՛ր են կատարվում իր առջև: Նա որոնում էր այդ կատարվածները, նրա համար կարևոր էին իրողությունները, փաստերը. կատարվո՞ւմ է փաստը, իրողություն՞ն է մի բան — վերջացավ: Ուրեմն պետք է հայտնել, խոսել այդ մասին: Իսկ թե դրանից ի՛նչ կզգան ուրիշները և ի՛նչ կանեն, ի՛նչ հետևանք կունենա ասելը կամ դեպքերը ի՛շպես կընթանան՝ չէր հետաքրքրում Գաղիշոյին:

Նա չէր էլ նայում Վասակին, որ նկատեր, թե քանի՛ գույն փոխեց նա՝ լսելով իր խոսքերը:

— Հիմա լուրը հասած կլինի Հազկերտին, — շարունակեց Գաղիշոն, — ինչե՛ր պատմած կլինեն... ա՛յ հիմա կեղջերահարի կատաղի ցուլը... Քեզ կմեղադրի ամենից առաջ և ամեն բանում: Որ Միհր մոզպետը անմտածված գործ բռնեց, Անգղի դեպքերի պատճառ դառավ, որ Դարեհը արյունահեղություն էր որոնում, որ այս մեր մոլեգնածը ապստամբության կրակը վառեց — սրա մասին ոչ ոք չի խոսի: Բուլոբի հանցանքը կզցնե՞ս քո վիզը: Փորձի՛ր հասկացնել, ցույց տալ իսկական հանցավորներին — ո՞վ է լսողը: Հիմա էլ պատերազմը վառվում է, դեպքերը մեծա-

Նու՛մ են, ո՞վ ժամանակ ունի և սիրտ քեզ լսելու: Տերութեան գործ  
ժերն այդպես են: Կյանքը հենց այդպես է:

Վասակը լռելյայն ըմպում էր դառնադի այս բաժակը և ինքն  
իրեն հառաչելով խոր գցում վիշտը և ցասումը հոգու անհատակ  
անդունդը: Նա գիտեր Գաղիշոյի բիրտ անտարբերությունը դեպի  
իր անձնական տառապանքը և չէր փորձում ոչնչով արգելել նրան  
շարունակելու իր խոշտանգիչ խոսքը:

— Բայց ափսոս Բաբիկն ու Ներսիկը,— զլուխը թափ տալով  
յուրովի ժպտաց Գաղիշոն,— լավ պատանիներ էին: Խոսքի հեռ-  
ները վերջին օրերը: Գնալիս՝ ճանապարհին էլ շատ եմ խոսել  
հետները. սքանչելի տղաներ էին... Գազանը հրեշավոր խոշտան-  
գումներով կսպանի... Ափսո՛ս...

Ըստ երևույթին Գաղիշոյի դիտելու և տեղեկացնելու մարմա-  
քը չէր հագեցել: Ընդհակառակը՝ բորբոքվում էր ավելի: Նորանսբ  
հիմնավորումներ, իր միտքը հաստատելու նոր փաստեր հանգիստ  
չէին տալիս նրան: Նա ազահորեն վրա ընկավ իր անողորմ մտքի  
մի այնպիսի նոր հաստատության, ինչպիսին Գենշապուհի, Գա-  
րեհի և Միհր մոզպետի բանտարկումը:

— Սրանց կզգզգե՛ն, կտան ամբոխի բերանը, ողջ տեղերը  
ականջնե՛րը կթողնեն... Գո՛ւ, Հազկե՛րտ, եկ ու մարսիր... Գիտե՛ս  
ինչ անարգանք է սա արքայի անձին... Սրանից հետո ի՛նչ Բաբիկ,  
ի՛նչ Ներսիկ... Գու ինքդ արդեն դատի տակ ես այս պահիս: Եթե  
Հազկերտը Վարդանին գցի իր ճանկը՝ այնպես չի պահանջի, ինչ-  
պես քեզանից: Հա՛ա՛... սաստկագի՛նս կպահանջի: Կասի՛ նա իր  
ազգի Սպարապետն է, նա կարող է դավաճանել ինձ: Բայց դո՛ւ,—  
դու մարզպան ես, ի՛մ պաշտոնյան...

Վասակը զգում էր, որ եթե խոսի՝ կզժտվեն: Թեև այսպես  
անտանելի էր: Վասակը շարունակեց լսել, մանավանդ որ Գաղի-  
շոն պատասխանների չէր էլ սպասում. նա գոհ էր, որ արժարժում  
էր իր մտքերը:

— Քեզ արդեն դավաճան են համարում: Ազգի դավաճան,—  
շարունակեց Գաղիշոն,— բայց էլ ո՛ւր է ազգ, ազգը վերջանում է:  
Չունենք ուժ, չունենք իշխանություն, չենք էլ ունենա: Այլևս ի՛նչ  
դավաճան, կամ ոչ դավաճան... բայց որ հիմա դու պարսկանում  
ես, հրաժարվում մի ազգից, որ վերջանում է՝ քեզ մահով են ռս-  
պառնում... Եվ ցավ է, որ քո այս բաները չեն հասկանում սրանք,

Քննամանում են հետո, իսկ մյուս կողմից շեն հասկանում և արյաց մեծամեծները: Երկու կողմի համար դուրս ես գալիս դավաճան: Մանր է վիճակդ:

Վասակը երբեմն բռնկվում էր, քիչ էր մնում հարձակվի Գաղիշոյի վրա, գոռա, հայհոյի: Բայց խոհեմությունը գերակշռեց: Նա արհաբար դիմացավ Գաղիշոյի սրտացավ անհասկացողությանը իր նպատակների, գործերի և իրերի իսկական վիճակի:

Մյուս կողմից Գաղիշոն ըմպեցնում էր նրան կյանքի դառնությունը, որ սկզբում նրան գրգռեց, բայց ապա նա սկսեց ըմպել՝ դառնությունը թմրեցնել իր ներքին խռովքը:

Կյանքը սկսել էր հարվածներ տեղալ նրան, և Գաղիշոն այդ հարվածներից մեկն էր այս դաժան ժամին: «Ասա՛, ասա՛... և ոչ ոք չի հասկանա իմ գործը. այդ ե՛ս պիտի հասկանամ և ես հասկանում եմ: Սպասեցե՛ք դեռ...», — խոսեց մտքում Վասակը և վեր կացավ, գնաց դուրս նայելու խավարով լցված կույր պատուհանից: Գաղիշոն անցավ Դենշապուհի և մյուսների խնդրին:

— Հիմա ի՞նչ պիտի լինի նրանց վիճակը: Մեր մոլեգնածը կոշնչացնի նրանց:

— Ի՞նչ պետք է լինի նրանց վիճակը, — մոռնաց Վասակը, — նրանց վիճակը ի՛մ վիճակն է, մե՛ր վիճակը... նրանց մեռցնելը հավիտենական վրեժ կդառնա իմ և Միհրենբեսհի միջև:

— Ես էլ քո մասին եմ ասում, — թանձրացրեց Գաղիշոն:

Վասակը ետ դարձավ պատուհանից և հարևանցի շար նայելով Գաղիշոյին՝ նստեց իր տեղը: Գաղիշոն հատակի մի կետին հայացք գամած՝ ինչ-որ քմիծանդ տվեց: Վասակը զգաց այդ և սպասեց թույնի նոր կաթեցման: Այդ կաթեցումը չդանդաղեց:

— Այս հո ա՛յս... Դու Վարազվաղա՛նն ասա, որ այս ժամիս թունավորում է Միհրենբեսհի միտքը, դեմդ լարում... ի՞նչ կասես, որ ամենահարմա՛ր առիթն է...

Չուր կլինի սպասել, որ Գաղիշոն դադարեր սղոցել: Նա ընկել էր իր մտքերի համար մի հաճելի հորձանք և լողում էր՝ որոնելով նոր ափեր, նոր դիտողություններ: Նրա թանձր կերպարանքը, ծանր ու պաղ աչքերը չէին մատնում ոչ մի նշույլ կարեկցության դեպի խոսակից մի մարդ, որ իր վրա էր կրում և կրելու էր դաժան պատասխանատվությունը այս բոլոր անցքերի:

Սակայն Վասակը ատելով Գաղիշոյին՝ միաժամ և գնահատում էր նրա վստահելի դիրքը այս գործում: Գաղիշոն բիրտ էր, բայց չէր դավաճանում Վասակին: Վասակյանների մեջ ամենահավատարիմ զինակիցը Գաղիշոն էր: Եվ եթե այս պահիս նա շիկացած երկաթով կիզում էր Վասակի սիրտը՝ հանցավոր չէր, որ դեպքերը այսպես շրջվեցին: Նա խոսում էր ճշմարիտը, ճիշտ է՝ անողոք, անխնա:

Վասակը թեթև հոգոց հանեց ազատվելու համար հոգեկան ծանր բեռից: Եվ մտածում էր այն շարաշար մեծ ջանքերի մասին, որով նա պիտի դիմագրավեր վերջին օրերի հարվածներին: Նրա երևակայության առջև կրկին կանգնեցին պարսիկ մեծամեծները՝ Գենշապուհը, Գարեհը, Միհր մոգպետը, որոնց տարան բանտ կապկապած և անարգալից վիճակով: Գոնե շպատահեին իրար խաղաղ ու համերաշխ ճամբարի մեջ: Պետք էր, պետք էր մի ճիգով, մի հրաշքով ազատել նրանց:



Մուժը թանձրանում էր արքունիքի տան այգու ծառերի սաղարթներում: Պահակը շրջեց մի քանի անգամ ծառուղիներում և պատերի տակ: Նրա համար պարզ եղավ, որ այգում ոչ ոք չկա, բացի Սպարապետից և նրա թիկնապահից: Նա սովոր էր տեսնել Սպարապետին ուշ երեկոներին այգու խորքերում, որևէ քարի նստած խորհելիս: Այդ երեկո սակայն Վարդանը ավելի երկար մնաց: Պահակը վաղուց նկատել էր նաև մի բան, որ ինչ-որ սովերներ են սահում երբեմն ծառուղիներում, ինչ-որ մուժ մարդիկ են տեսակցում նախարարների հետ և անհետանում խավարի մեջ:

Պահակը մի անգամ ևս անցավ Վարդանի մոտով, ստուգեց նրան, տեսավ նրանից հեռու կանգնած Արծվիին և ապա հեռացավ իր խուղը, այգու հեռավոր անկյունում:

Արծվին կարծես դրան էր սպասում: Նայեց շորս կողմ, սպասեց մի պահ ևս և ապա մոտեցավ հողե պարսպի նեղ անցքին՝ շշնջաց.

— Անցի՛ր...

Պարսպից այն կողմը մի անմշակ, ամալի դաշտամաս էր:

Իսկուն Վարդանի առջև բուսավ մի սավեր:

— Մեկընն եմ, Սպարապետ,— շնչաց նա:

— Ե՛կ,— ասաց Վարդանը:

Մեկընը պատմեց, որ Փայտակարանից Աղվանք է մտել պարսկական զորաբանակը երեք հարյուր մոզբրի հետ. նրան միացել է Ճորա Պահակի մարզպանը՝ Սեբուխտը, իր զորագնդով և վերցրել է հրամանատարությունը: Մոզբրն ավերում են եկեղեցիները և ատրուշաններ են դնում: Աղվանները փախել են լեռները: Հայաստան է գալիս նրանց հազարապետը օգնություն հայցելու:

— Սեբուխտը կշարժվի՞ Հայաստան,— հարցրեց Վարդանը:

— Պիտի շարժվի, Սպարապետ,— ասաց Մեկընը:

— Ինչի՞ց է երևում:

— Ճանապարհին զորքի մատակարարներ տեսա. գալիս էին Հայաստան՝ պաշարը լրտեսելու:

— Եղա՛վ... Մե՞ծ է զորաբանակը:

— Տասն հազարի չափ: Խառն է՝ այրուծի և հետևակ:

Վարդանը մտածեց մի փոքր:

— Հոների գործն ի՞նչ արիր,— հարցրեց Վարդանը:

— Հոներն սպասում են իրենց խաբանին՝ Աթըլին՝: Այդ պատճառով էլ վճիռներ չեն ընդունում:

Վարդանը կենդանացավ:

— Ո՛ւր է գնում Աթըլը, ի՞նչ ճանապարհով: Երևի չհարցրիր,— ավելացրեց գլուխը հանդիմանորեն շարժելով Վարդանը:

— Ինչպե՞ս չէի հարցնի, Սպարապետ... բայց ամեն կերպ ծածկում են: Մենակ թե նշաններ կան, Պոնտոսի մյուս ափով՝ Բյուզանդիոն:

— Բայց ինչո՞ւ ես կարծում թե Բյուզանդ է գնում,— համառոտեց Վարդանը:

— Բերանից բերան բաց թողին, Սպարապետ:

— Պետք է ստուգել,— վեր կացավ Վարդանը և մի փոքր քայլեց քարե նստարանի առաջ:— Դու պետք է կրկին ճանապարհ բնկնես:

— Հրամա՛նդ:

<sup>1</sup> Աթիլա:

— Այդ Բյուզանդ գնալը Պոնտոսի հյուսիսով, թե հարավով մեծ խորհուրդ ունի: Դա պետք է հուլժ հաստատ իմանալ: Մենք ձորա Պահակ ենք քանդում: Հետո... իսկ եթե Աթըլը այդտեղից լցվի նե՛րս... Հոների լցվելը ուրիշ խաղ է: Նրանք կլցվեն և կբաշվեն: Բայց Աթը՛լը... Իմաստն հասկացա՛ր...

— Հասկացա, Սպարապետ:

— Նրա համար բացատրեցի, որ հիմա գնաս և այս բաներն ստուգես. Աթըլի ճանապարհը... հա՛... Աթըլի ճանապարհը... նա, որ մեր երկրով անցնի՝ կարբի՛ մեզ կտանի հետը: Այս բաները ստուգիր: Հիմա հետո մարդիկ վերցրու և խուզարկիր բոլոր ճանապարհները: Միաժամ կրկին պիտի գնաս Հոնաց աշխարհը: Հոնաց թագավորին կրկին կվստահացնես Ձորա Պահակը քանդելու խոստումը: Բայց կիմանաս Աթըլի ժամանման օրերը, որ ևս գնամ տեսնվելու նրա հետ:

— Հրամա՛նդ, — ասաց Մելքոնը:

— Իսկ հիմա կփակվես ախոռապետ Վարաժի տանը և այնտեղ կհավաքես հետախույզ մարդկանց:

— Հրամա՛նդ:

Մելքոնը սահեց պարսպի անցքից դուրս:

Վարդանը դեռ երկար նստած էր քարին և մտքերի հետ ընկած նայում էր գետնին:

Այդում սովերներ լողացին: Նրանք գալիս էին դեպի Վարդանը:

Արժփին ընդառաջ գնաց. նրանք մոտեցան Վարդանին: Արժնուների տան սպասավորներն էին: Մեկը նրանցից առաջ եկավ:

— Սպարապետ, Աղվանից հաղարապետն է եկել. նախարարները խնդրում են շնորհ բերել:

Վարդանը գնաց:

Արքունի տան դահլիճում նստած էին նախարարները և նրանց մեջ Աղվանից խաժակն և շիկամորուս հաղարապետը: Ըստ երկվույթին նա արդեն հայտնել էր իր գալու նպատակը, բայց սպասում էր Վարդանին: Երբ Վարդանը ներս մտավ գահլիճը՝ Աղվանից հաղարապետը վեր կացավ և ուրախ ողջագուրվեց Վարդանի հետ:

Հաղարապետի ժամանումը իբարանցում էր գցել նախարարների մեջ: Դա նկատեց Վարդանը: Եվ հենց որ նստեցին՝ իսկույն

սկսեց հարցութործը: Հազարապետը պատմեց, որ Սերուխտը մտել է Աղվանք և իր երեք հարյուր մոզերին սփռել է ողջ երկիրը՝ բռնի տարածելու զբաղաշտը:

— Երկրում կոտորած է, ավերմունք, եկեղեցիները քանդում են, ատրուշաններ են դնում, մահվան սպառնալիքով ստիպում են ժողովրդին ընդունել մազդեզանց կրոնը,— գանգատավոր ձայնով և հառաչանքների միջով պատմեց Աղվանից հազարապետը:

— Մե՞ծ գորքով է եկել Սերուխտը:

— Մեծ է մեղ համար, Սպարապետ:— Մոտ քսան հազար հեծյալ ու հետևակ:

Վարդանը մտածեց:

— Իսկ ո՞ւր է շարժվում,— հարցրեց մի փոքր լարված, որից երևում էր, որ նրան այս խնդիրն ավելի էր շահագրգռում:

— Երևում է, որ պիտի շարժվի դեպի Վրաստան,— բացատրեց հազարապետը:

Նախարարներին ճնշող ազդեցութուն էր արել հազարապետի պատմութունը: Քշնամին մտել է երկիրը, կոտորում, ավերում է և ժողովուրդն ապավինել է լեռնաստանները:

Վարդանն այլևս ոչինչ չհարցրեց Աղվանից հազարապետին: Լսեց՝ մտածմունքի մեջ ընկնելով:

\* \* \*

Կեսգիշերից անց էր, որ սենեկապետը մտավ Ներշապուհի օթևանը և զարթեցրեց նրան: Տարածամ անհանգստացումը խըտորեն կպատժվեր, եթե Ներշապուհը պատվիրած չլիներ սենեկապետին տարադեպ հանգամանքներում իրեն զարթեցնել:

— Սպարապետը խնդրում է շտապ հրամայես իր մոտ, իշխան:

Ներշապուհը գնաց: Վարդանը նրան ընդունեց հաշտ և ըստ երևույթին խաղաղ տրամադրության մեջ:

— Քեզ հրավիրեցի, իշխան,— ասաց Վարդանը մեղմ ու գործնական,— որ վերջացնենք գործը. թշնամին գալիս է:

— Վերջացնենք,— ասաց Ներշապուհը:

— Պետք է կազմել արշավանքի ելնող զորագունդը: Եվ պետք է շտապել Աղվանք՝ ընդառաջ պարսից զորքին:

Ներշապուհը մտածեց:

— Պարսիկները կարող են մտնել նաև Ատրպատականով:

— Այնտեղ էլ դու պիտի գնաս ընդառաջ:

— Իսկ երկի՞րը...

— Այդ էլ քեզ եմ հարցնում...

Ներշապուհը խայթվեց: Ձգաց Վարդանի ականարկը: Բայց ժամ չէր խորհրդածելու.— պետք էր վճիռներ ընդունել: Դա զգում էին երկուսն էլ:

— Դե, Վասակը կմնա ու կմնա,— ասաց ներշապուհը,— միայն ո՞ւմ դենք նրա գլխին: Ատոմ իշխանի՞ն, Արտակ Մոկա-ցի՞ն:

— Դա է հնարավորը: Մյուսները զբաղված կլինեն: Վտան-գավոր է շատ, բայց ստիպված կլինենք,— ասաց Վարդանը:— Վաղը կազմենք նաև Թեոդոս կայսերն ուղղելիք նամակը և զոր-քերը բաժանենք:

— Այո, Թեոդոս կայսեր նամա՛կը...— ասաց ներշապուհը հուզված:

Վարդանը մտածեց մի փոքր և ասպա ասաց.

— Մի քան եմ կամենում իբրև կտակ ավանդել քեզ:

— Խորին երախտիք և պատիվ ինձ...

— Պատիվը՝ Հայոց աշխարհից... Քեզ մի երկու անգամ հայտնել եմ միտքս, Հազարապետը ևս գիտի: Ծախորհում եմ հոների հետ արդեն դաշն կնքել պարսից դեմ և եթե միանան մեզ քանդել Ճորա Պահակը և բաց թողնել հոն հրոսակները Ատրպա-տականի վրա: Հուսով եմ կհամաձայնես:

— Իսկ եթե հոները լցվեն մեր երկի՞րը,— տարակուսեց ներ-շապուհը:

— Պարսիկները չեն թույլ տա մինչև այդտեղ,— ժպտաց Վարդանը:— Կղքազվեն հոներով: Հոների համար էլ օգտակար կլինի թեթևացնել պարսիկների կողոպտած հարստությունները:

Վարդանը ծափ տվեց: Մտավ սենեկապետը:

— Հրավիրիր Հազարապետին, Գնունյաց, Արշարունյաց և Անձեաջյաց իշխաններին: Նաև Համազասպ Մամիկոնից իշխա-նին:

Սենեկապետը գնաց:

— Ժամանակը անպատեհ դաժան է,— խոսեց Վարդանը հա-  
յացքը պատուհանից դուրս,— հուլները պարսիկներից պարտված,  
խակ քուշաններն ու պարսիկները շեն կարողանում խեղճացնել  
իրար... Հիմա էլ լուր կա, որ Աթըլը գնում է Բյուզանդի վրա,  
մենք մնացել ենք մենակ... Հրաշք պետք է կատարվի, որ դուրս  
պրծնենք այս անգամ:

— Մտանք ասել է՝ մեծ պատերազմ,— ձգեց ներշապուհը  
գլուխն օրորելով:

— Օրհասական: Կինել՝ չլինել Միջին ելք չկա: Պարսիկներին  
ձանձրացրել է մեզ պարսկացնելու ձգձգումը Շապուհից սկսած,  
Հազկերտն էլ այս անգամ վճռել է գործը վերջացնել: Հիմա՛ր  
պնդագլուխ... Բյուզանդիո՞նն է կամենում ոչնչացնել, ինչ որ  
նույնը ճգնում է անել սրան և այն մյուս պնդագլուխը, Քեոզոս  
կոչեցյալ... Մինչդեռ հարկ էր՝ միանային և դիմագրավեին մեծ  
արհավիրքին, որ գալիս է Արևելքից, Աթըլը...

Սկան նախարարները և մի փոքր անհանգիստ, նայեցին  
Վարդանին:

Վարդանը հայտնեց իր մտադրությունները, բացատրեց զը-  
խավոր գործի էությունը և խնդրեց վճիռ կայացնել:

— Համաձայն ենք,— ասացին խմբովին նախադարձերը:

— Օ՛ն, գործի՛,— վեր կացավ Վարդանը,— ես կմեկնեմ վա-  
ղը չէ մյուս օրը:



Քեոզոս կայսերն ուղղելիք նամակը գրվում էր Վասակի բնա-  
կարանում՝ ինչպես Հազարապետի առաջարկն էր և հրապարակով  
էլ ընդունեց Վասակը: Բոլոր նախարարները՝ վարդաճաճը և վա-  
սակյանք՝ այնտեղ էին: Մեծ՝ դժվարությունը համոզեցին Վարդա-  
նին գնալ Վասակի մոտ:

— Համաձայն հրամանիդ՝ եկանք հունաց կայսեր նամակը  
գրելու քո ապարանքում,— ասաց հանդիսավոր եղանակով Հազա-  
րապետը, սկզբից արդեն ծանրացնելով պատասխանատվության  
բեռը Վասակի ուսերին:

— Ուրախ եմ, Հազարապետ,— ասաց Վասակը,— անցնենք  
նամակին:

Կանչեցին քարտուղարին: Նա եկավ մագաղաթների փաթեթներով, մեկնով և գրչով: Նախարարները նստեցին միատեղ կազմելու նամակը:

Նամակի բովանդակությունն այս էր:

«Հովսեփի կաթողիկոսը իր բազում եպիսկոպոսակիցներով, բոլոր հայոց զորքերով, Վասակ մարզպանը և ներշապուհը՝ տերն Արծրունյաց, Սպարապետի և մեծամեծ նախարարների հետ, մեծանուն Թևոդոս կայսերգ հղում ենք մեր ողջույնը»:

Նամակը հիշում էր այն սերտ կապը, որ ունեին երկու երկրները՝ հայոց և հունաց, և խնդրում էր օգնություն ընդդեմ պարսից բռնակալության:

«Ընտրեցինք մահը ազատությանմբ, քան կյանքը ստրկությանմբ: Եվ եթե զուր օգնության ձեռ մեկնեք մեզ՝ կրկին կյանք կստանանք և ոչ մահ: Եվ եթե փոքր ինչ ուշանաք՝ այս հրդեհի բոցը կտարածվի շատ աշխարհներում»:

Հազարապետը կարգաց նամակը և ապա ասաց.

— Բոլորս ստորագրենք և կնքենք նամակը:

Բոլորը ստորագրեցին նամակը և զրին իրենց կնիքները:

Հազարապետը պահանջեց նույնը կատարել նաև նամակի սեպորության տակ:

— Ի՞նչ ինչու համար, — զայրացավ Գադիշուն:

— Կիսկատար հավաստիության... — ասաց Հազարապետը, — աշխարհի բան է, նամակը կարող է ոչնչանալ ճանապարհին, մարդը մահկանացու է... սակայն ի՞նչ կա մտահոգության...

Առաջարկն ընդունվեց: Բոլորը ստորագրեցին ու կնքեցին նաև սեպորությունը: Հազարապետը փաթաթեց մագաղաթը և վերցրեց իր ձեռը: Վասակը զգում էր, որ այդ մագաղաթը մի օր պիտի ցցվի իր առջև իբրև այրող փաստ Հաղկեդոսի դեմ, բայց մրրիկը փրթել էր մի անդամ, և գեռ պետք է նրա առջև ճկվեր թառը... «Բոլոր մտնողը անմրկեց չի վախենա», — մտածեց նա: Իսկ Հազարապետը համականալով այդ ներքին շարժումը՝ շարունակում էր նրան ճնշելու նորանոր ձևեր որոնել:

— Ո՞վ է տանելու նամակը կայսեր, — հարցրեց Արշավիրը:

— Արժան է և իբրավ, որ տեր Հազարապետը գնա, ընկերակցությանմբ սեպուհնեկի, — ասաց Եմովոնը:

— Այո, Հմայակ սեպուհը՝ եղբայրն Սպարապետի, և Մերու-  
ժան սեպուհը՝ ազգակիցը Արծրունյաց տիրոջ,— ասաց Արշավիրը:  
— Համաձա՛յն եք,— հարցրեց Շմավոնը դիմելով բոլորին:  
— Համաձայն ենք,— ասաց շար համաձայնութեամբ Գաղի-  
շոն՝ ավելի ճնշում գործադրելը համարելով կասկածելի:

Պարզ էր, որ վարդանանք չէին հեռացնի երկրից մի այնպիսի  
հռանդուն զորականի՝ ինչպես Ատոմն էր:

Գրեցին նամակ նաև Վասակ Մամիկոնյան իշխանին, որպես  
ներկայացուցչին Հունաց բաժնի Հայաստանում ապրող հայ իշ-  
խաններին:

Այնուհետև ներշնչուհի առաջարկեց զորքը բաժանել երեք  
մասի. Աղվանք արշավող, Ատրպատականի սահմանն ուղարկվող,  
իսկ մնացած մասը պահել Այրարատում իբրև երկրապահ զորք:  
Ջորջերը կլինեն խառն բոլոր նախարարութիւններին: Թե՛ գնա-  
ցող և թե՛ մնացող:

Վասակը զգաց, որ սա կանխորոշված է վարդանանց կող-  
մից...

— Մեծահույս եմ,— ասաց Հազարապետը հանդիսավոր ձայ-  
նով,— որ Այրարատում կհամաձայնի մնալ Սյունյաց տերը՝ իբրև  
ավագ:

Նախարարները համաձայնեցին:

— Աղվանք կգնա Սպարապետը, իսկ Ատրպատական՝ Արծ-  
րունյաց տերը:

Ոչ ոք չառարկեց:

Գաղիշոն մտածեց, որ դա վատ չէ քանի որ իրենք չեն վճռում  
գործերը և դեռ գերութեան մեջ են: Իսկ իրենք մնալով երկրում՝  
կարող էին շատ բան փոխել: Նա բազմանշանակ նայեց Վասա-  
կին, և նրանք իրար հասկացան:

Վարդանը, որ այս ամենին վերաբերվում էր կես-սիրտ և ան-  
մասնակից՝ չխոսեց: Վեր կացավ և հայտնեց, որ գնում է պատ-  
րաստվելու: Սառը ողջունեց Վասակին և մյուսներին և դուրս  
ելավ:

Նրան հետևեցին Համազասպը և Ատոմը: Ծանապարհին  
Վարդանը ասաց.

— Վտանգավոր խաղ ենք սկսում... վերջնեքս բարի...

Կեսգիշերին Վարդանի մոայլ օթեանում խորհրդակցութեան  
եղավ, ուր որոշեցին խստիվ հսկել վասակյաններին, երբ Վասակը  
կմնա «երկրապահ»:

Վարդանը վեր կացավ.

— Դե, օգնական աստված և ժողովուրդն հայոց: Օ՛ն, գործի՛ս  
բարի գիշեր:

— Գիշեր բարի, Սպարապետ:

Նախարարներն սկսեցին ցրվել իրենց օթեանները:

Վերջում մնացին Համազասպը, Արտակը և Ատոմը: Նրանք  
չգում էին, որ Վարդանը ավանդներ կունենա իրենց հանձնելու  
Այդպես էլ եղավ: Վարդանն Ատոմին ասաց.

— Զորագունդը միշտ պատրաստ կպահես, կհսկես սյունե-  
ցուն և իրայիններին: Ամենայն խստութեամբ, վճռականորեն  
կոշնչացնես մեծից մինչև փոքրը՝ ապստամբական որևէ փորձի,  
դեպքում: Նախարարական զորքերը կամաց-կամաց կառնես թա-  
կողմը: Զգո՛ւյշ, բերդերը շարավե՛ն... Մեծ վտանգի դեպքում կան-  
չիր Արտակին և միասին գործեցեք:

— Հրամա՛նդ, Սպարապետ:

Հետո Վարդանը դարձավ Արտակին.

— Գամի՛ր թշնամու ուժերը Սոլի շուրջը, Բայց միաժամ՝  
նրանց զորքերը կ'ս գրավիր մեր գործի կողմը ամեն միշոցներով:

— Հրամա՛նդ, Սպարապետ:

Ապա դարձավ Համազասպին.

— Իսկ դո՛ւ դեպի Տայք, Պարխար՝ մամիկոնյան զորագուն-  
դը համալրելու:

— Հրամա՛նդ, — ասաց խոնարհ ձայնով Համազասպը:

Վարդանը զրկեց երեքին, համբուրեց նրանց ճակատները  
Երեքն էլ համբուրեցին Վարդանի ձեռը:

— Մնացածը՝ էլի՛ ասենք՝ օգնական աստված և ժողո-  
վուրդն հայոց, — ասաց Վարդանը կատակաժպիտ նայելով  
երեքին:

— Սեպուհ դեռպանը հասած կլինի երևի վրաց թագավո-  
րին, — ավելացրեց նա, — մեծ հույս ունեմ նրանից. նրան խնշրե՛լ  
և՛ մի գործ միայն — ոշնչացնել Տփղիսի պարսիկների կայինա-  
կան զորքը:



Գալարաշեփորը հնչեց սուր ու զվարթագին: Ճամբարը եռաց: Զինվորները խառնիխուռն վիճակից շարքավորվեցին, և Վարդանի զորագունդը կազմ ու պատրաստ կանգնեց հրապարակի մեջտեղ: Նախարարները նժույգ հեծած խմբվել էին հրապարակի եզրին: Նրանց մեջ կրկին իր փայլի մեջ անթերի՝ կարկառուն գիրք էր ընդունել Վասակը՝ գլխավորելով նախարարներին: Սրանցք մի կողմ կանգնել էր եկեղեցական դասը՝ կաթողիկոսը և այլ հոգևորականներ: Զորագնդի օժանդակ հրամանատարները՝ երիտասարդ իշխաններ մարտական կեցվածքներով, հայտնի իրենց հանդգնությամբ, Արտակ Պալունին՝ խոհական և լուսկյաց մի իշխան և խորենը բռնել էին իրենց զորամասերը և սպասում էին հրամանի, որ շարժվեն:

Վարդանը քառատրոփ շրջանց կատարեց զորագնդի բոլորքը և վարգեց դեպի նախարարների խումբը, ողջունեց զորականներին: Վասակն ու նախարարներն ընդունեցին ողջույնը: Ապա Վարդանը մերկացրեց սուրը՝ նշան տալով սեպուհներին: Անմիջապես հրամանները հնչեցին, և զորագունդը վարգեց դեպի Վասակը և նախարարները, անցավ նրանց առջևով հրաժեշտ ընդունելով նրանցից, ինչպես կարգն էր:

Վասակը հանդիսավոր ողջույն տվեց զորագնդին: Կաթողիկոսը իր հերթին օրհնեց պատերազմ գնացողներին: Ժողովուրդը, որ լցվել էր մի կողմում՝ խլաձայն մոմոռոցով հաղթույթյուն բարեժաղից և ողջ վերադարձ:

Վարդանը հրաժեշտի ողջույն տվեց նախարարներին, եկավ մի անգամ ևս վարգեց ժողովրդի առջևով, ապա գնաց կանգ առավ զորագնդի առջև, երեսը դեպի նախարարները և ժողովուրդը: Հետո հանեց սաղավարտը, երեսը խաչակնքեց: Յրան հետևեց ողջ զորագունդը, նախարարները, ժողովուրդը:

Վարդանը սաղավարտը դրեց գլխին, դարձավ զորագնդին հրամայեց.

— Զորագունդ, արշա՛նա՛նա՛ն:

Ու ինքը գնաց: Զորագունդը հետևեց նրան: Ենփոքեկը հընչեցրին հրաժեշտի եղանակ, և զորագունդը հեռացավ:

Հետևյալ օրերը ճանապարհ ընկան Բյուզանդիոս գնացող գեսպանները, նույնպիսի գեսպաններ Վրաստան, Աղվանք, Հունաց Հայաստան և Ասորիք:

Բայց գրչերային խավարում դեպի նույն երկրները ճանապարհ ընկան նաև Վասակի մարդիկ, որ նամակներ էին տանում այդ երկրների իշխաններին՝ դրդելով ետ կենալ Վարդանից ու նրա գործերից:

Վարդանի մեկնելուց երկու օր անց Ասրիպատականի սահմանը մեկնեց նաև ներշապուհը: Այնուհետև Արտաշատում տիրեց լուռություն և խաղաղություն: Վասակյանք քաշվեցին իրենց օթևանները և սկսեցին փսփսալ, շերևալ հրապարակում: Նույնը և վարդանանք: Կաթվածի նման մի անշարժություն իշավ մայրաքաղաքի վրա:

Բայց դա միայն երևույթն էր:

Ատոմը կուռ զորագունդ կազմեց, բանակ դրեց ճամբարում և սկսեց լարված հսկել Վասակին: Միաժամ անցավ նախարարական զորագնդերի կազմակերպման: Արտաշատի ճամբարում խմբվել էին մի քանի նախարարական զորագնդեր, որոնք ժողովրդական զինված խմբերի հետ բավական պատկառելի ուժ էին՝ գսպելու Վասակի որևէ շարժումը: Սակայն վասակյանց զորագնդերը, որոնք գտնվում էին իրենց աշխարհներում՝ կազմակերպվում էին և դառնում սպառնալիք: Նրանք կարող էին գրավել երկրի բերդերը և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը:



Հայոց այրուձին Ապար աշխարհում, Հազկերտի զորաբանակում անհնարին դառնություններ կրեց: Նա դրված էր խիստ հսկողության տակ: Նրան բռնադատում էին կրակին երկրպագությունն տալ և արգելում ճամբարից դուրս գալ:

Մովանձտյա Գարեգին իշխանը, որ այս բոլոր նեղությունները գուշակել էր և մտադրվել էր այրուձին փախցնել Հայաստան՝ վաղուց էր գործի անցել՝ գլուխ բերելու իր ծրագիրը: Նա բացատրեց այրուձիի մյուս իշխաններին, որ Նյուսալավուրտի հրամանով այրուձին միշտ ճամբարում փակված լինելով, մյուս

կողմից համագունդ վիճակ էր ընդունել, պատրաստ ամեն պահին ինքնապաշտպանակալն կոխվ սկսելու:

Արսենի համար ստեղծվեց հոգեկան տազնապի վիճակ: Նա բացի այն, որ պետք է շատ հազվադեպ այցելեր Խորիշային, այլև պատրաստվեր բաժանվել նրանից: Նրա հետ սակավ էր տեսնվում:

Եվ օրերն հասնում էին: Այսօր չէ՛ վաղը, վաղը չէ՛ մյուս օր...

Արսենը շանում էր շմտածել Խորիշայի մասին: Մտքով ընկնում էր հայրենի երկիրը, Այրարատյան դաշտի անտառները, որտե՛ս վայրերը, խրճիթների կապույտ ծուխը: Ջանում էր երևակայության աչքերով տեսնել խաղողի այգիների զմրուխտը, ոսկի ողկույզները: Կարոտել, ծարավել էր սլացիկ բարդիներին, նրանց գողտրիկ պարին հովերի հետ: Ջանում էր տեսնել, մի այլ, օտար, նոր մատաղահաս դեմք այդ այգիների մեջ: Եվ երբ երկար նայում էր՝ Խորիշան կանգնում էր նրա առջև իր հեթանոս աչքերի հեքիաթական հայացքով:

Արսենը տխրում էր: Առաջին անգամ ուզմիկ երիտասարդը զգաց, որ պատերազմը կաշկանդում, բռնանում էր իր հոգուն, անողոք պարտականություններ էր դնում նրա վրա, կոպիտ ձեռքերով բզկտում էր նրա հոգու ամենանվիրական թելերը, խռովալից սրտով նա նայում էր իր մոտալուտ ապագային: Ի՞նչ պիտի տեսեր: Դժվար թե դյուրին՝ նա պիտի լքեր Խորիշային և գնար հեռու հայրենիք՝ կռվելու պարսիկների դեմ..

Քարեզինը օրը մի քանի անգամ հավաքում էր իշխաններին և խոսում իրենց անելիքների մասին, որով և ավելի էր խռովում Արսենի սիրտը: Արսենը ամաշում էր ինքն իրենից. հայրենասեր, ազգմիկ երիտասարդը. չէր կարողանում լիախրտ նվիրվել հայրենիքի գործին: Նրա առջևն ընկել էր մի նոր, դեռ չփորձած խոչընդոտ և պառակտում էր հոգին: Հայրենի՞քը, թե՞ Խորիշան: Ծ՛վ հայրենիքը, և՛ Խորիշան, ասում էր մտքում Արսենը, բայց և իսկույն զգում էր, որ անկարելի բան էր ասում, — նա հարկադրված էր հեռանալ Խորիշայից և մասնակցել հայրենիքի համար մղվող պատերազմի գործին:

Սրվանձտյա իշխանը մի օր հայտնեց, որ պետք է սպասել, որ առիթ ստեղծվի փախուստի:

— Բայց մի՞թե խելքի մոտ բան է փախուստը,— ասաց Աբսենը ոչ այնքան մաքուր սրտով:

— Բացի փախուստը ուրիշ ելք չունենք,— ասաց Գարեգինը: Կասկածը վերացնելու դիտավորութեամբ Գարեգինն սկսեց մոտենալ պարսիկ մեծամեծների: Գնաց Նյուսալավուրտի մոտ: Պարսիկ ներքինի զորավարը, որ անգամ իր տաղավարում ինքն իր հետ մենակութեան մեջ շար էր և անբարեհամբույր, Գարեգինին ընդունեց թշնամական հայացքով:

— Բարեողջուն,— խոնարհութիւն արեց Գարեգինը:

• Նյուսալավուրտի ո՛չ մարմնին, ո՛չ դեմքին, ո՛չ հայացքում չերևաց ոչ մի նշույլ շարժման: Կենդանի ապառաժ:

Գարեգինը շնորհով Նյուսալավուրտի նստել շհրավիրելուն թ վրեժ:

Նյուսալավուրտը շխոսեց: Գարեգինն ինքն սկսեց՝ դարձյալ նույն հակառակի զգացմունքով:

— Զորավար,— ասաց նա վճռական շեշտով,— ինչո՞ւ է հայոց այրուծին անգործ նստել այստեղ: Կամ ուղարկեցեք մեզ կուսակներ քուշանների դեմ, կամ հայրենիք ուղարկեցեք, կովներ ձեռ դեմ:

Նյուսալավուրտը դաժան հեզութեամբ ժպտաց՝ երեսը այլ լանդակող մի ժպիտով:

— Հը՛մ... ուրի՛շ...

— Ուրիշ ոչինչ,— կտրուկ ու շոր կանգ առավ Գարեգինը:

— Կնստեք այստեղ և կկատարեք ինչ որ ձեզ հրամայել ենք Գարեգինը խոժոռվեց Նյուսալավուրտի վրա:

— Մենք նստած ենք այստեղ ոչ զորականի հաշվի: Գոնե պենքերս առեք, դրեք զնդան, դառնանք խաղաղ բանտարկյալ: Եթե ոչ՝ զենքերս վրաներս՝ քեզ հավասար ենք: Այնժամ տարեք պատերազմ: Ափսոս են զենքն ու զինվորը: Զինվոր ես՝ կհասկանաս:

Նյուսալավուրտը մեղմեց կարծես: Զինվորի հոգին խոսեց վերջը:

— Ձեզ ես չեմ բանտարկել. ձեզ բանտարկել են արքան ու Հազարապետը:

— Ասա արքային և Հազարապետին մեզ պատերազմ ուղարկեն. մենք եկել ենք ո՛չ հաց ուտելու, այլ կովելու:

Նյուսալավուրտը ինչ-որ մրթմրթաց ջրի տակ: Չիմացվեց թե ինչ էր ասում և ինչ տրամադրության մեջ էր:

— Ջորականներ են ինձ պետք,— ասաց բարձր Նյուսալավուրտը,— զինվորներ և ոչ թե արևի առաջ շոքող-կանգնողներ: Արյուն թափվի, սա է իմ գործը: Բայց ինձ չեն լսում: Մոգեր են ուզում դարձնել զորքը:

Ինչպես երևում էր Նյուսալավուրտը մաղձ ուներ թափելու և առիթը եկավ: Նրա առջև կանգնել էր մի քաջ զորական, որի սըխագործությունները շատ էր տեսել քուշանների կռիվներում:

— Ասացի՛ր բերեմ փղերը տրորել տամ հայոց այրուձինք, «Ձէ՛», պիտի կրակին երկրպագե՛ն...»: Իհարկե, զորականին չեն փակի զենքը ձեռին...

— Կավ, կխոսեմ,— ասաց մի փոքր մտածելուց հետո Նյուսալավուրտը և լռեց ապառաժի պես:

— Ողջամբ մնաս,— հրածեշտ տվեց Գարեգինը և գուրս գնաց:

Մտնելով տաղավար, ուր հավաքված իրեն էին սպասում իշխանները՝ Գարեգինն ասաց.

— Մեզ կտանեն քուշանների դեմ:



Անգղի դեպքերի լուրը որքան և ուշ՝ հասավ Ապար աշխարհը: Ավելի գունավորված, ծավալուն համեմատություններով նկարագրվեց նախարարների բացահայտությունը, մոգպետի ծեծը, պարտիկ զորքերի շարդը, Գենշապուհի և մյուս մեծամեծների բանառարկումը, ապստամբության բարձրացումը: Հազկերտը կատաղեց, խելագարվեց: Հայաստան ուղարկված զորքը, որ գնում էր նախարարների հետևից և միայն մի նպատակ ուներ — նախարարների հետևից հսկել դեպքերին և երկյուղ ներշնչել, իսկույն հետևից արագագնաց սուրհանդակների միջոցով հրաման ստացավ արագությանը խուժել Հայաստան և ոչնչացնել ամեն ինչ:

Վարդանի ծպտյալ սուրհանդակները Անգղի դեպքերի լուրը տվելի ճեպով հասցրել էին Ապարում ներկալված հայոց այրուձինի և հրաման տաքել հայ իշխաններին՝ ինչ գնով լինի հաջողեցնել փախուստը:

Արսէն Ընծայնոց իշխանը այցի գնալով Վախթանգին՝ այրուածի մասին լոեց, բայց Անգղի դեպքերը պատմեց նրան: Սա զայրացավ Վարդանի վրա և սկսեց բարձրաձայն սպառնալ, որ նա կկրի իր արժանի պատիժը: Խոսակցութիւնը թեև այգումն էր, բայց մոտերքում գրոսնող Խորիշան և Վարազդուխտը մանրամասն լսեցին եղելութիւն մասին:

Վարազդուխտը ծածուկ գնաց Կողակի մոտ: Կողակը շատ զարմացավ՝ տեսնելով Վարազդուխտին իր օթեանում, ուր կնոջ մուտքը և՛ արգելված էր, և՛ անպատշաճ: Հարցրեց տագնապով.

— Ի՞նչ է պատահել:

— Մարզպանն ընկավ, իշխան...:

— Գիտեմ, — մոմոաց Կողակը, որ ոչինչ էլ չգիտեր իրոք, — տխուր լուր է...

— Ավելի տխուր բան կա, իշխան, — հրահրեց Վարազդուխտը, գլխի ընկնելով, որ Կողակը տեղյակ չէ:

— Այո՛, — հաստատեց Կողակը նույն եղանակով:

— Ծս, դու, բոլորս վտանգված ենք: Է՛հ, իշխան, — այս մեծարանքով շոյեց Վարազդուխտը Կողակին, — հիմա, որ ուզենաս էլ նրան փրկել՝ չես կարողանա: Ծս էլ վախենում եմ պաշտպանել նրան: Վտանգ է մեծ: Դավով պարսիկ զորքն ու մոզերին կտորել է տվել՝ իբրև թե Սպարապետն է արել, ձերբակալել և բանտարկել է տվել Գենշապուհին, մոզպաններին և Դարեհին, ավետարանի վրա երդվել է կովել պարսիկների դեմ: Մատանիով կնքել է դիմումը՝ հունաց կայսեր օգնութիւն: Գեո այս ոչինչ... Սպարապետին և Ներշապուհին ուղարկել է պարսիկ զորաբանակի դեմ, ինքը նստել է Արտաշատում, քանդել է տալիս ատրուշանները, կտորել տալիս բերդապահ պարսից զորքը: Սրանից հետո մա՛րդ կազատվի Հազկերտի ձեռքից. եկա որ քեզ զգուշացնեմ... Զմիջնորդե՛ս, մեղք ես, գլուխդ կկտրեն:

Կողակը շատ զարմացավ, որ Վարազդուխտը փոխանակ ինքը օգտագործելու Վասակի արարքների մանրամասնութիւնները՝ իրեն Կողակին է «նվիրում» այդ առիթները և ինքը քաշվում է մի կողմ:

Կողակը սակայն հասկացավ, որ Վարազդուխտը վճռել է Վասակին ազատել: Նա այնպես հասկացավ, որ Վարազդուխտը դիտմամբ է հրաժարվում Վասակին պաշտպանական խոսք ասելուց,

որ կարողանա ծածուկ հաջողեցնել նրա փրկութիւնը. «Զուր է... չի փրկվի», — ասաց մտքում Կողակը և մտքում ծիծաղեց Վարազ-գուխտի «միամիտ խորամանկութեան» վրա:

— Եվ չարժի էլ աշխատել նրա համար, թող կորչի — լրաց-բեց Վարազգուխտը:

Կողակը հաստատվեց իր կարծիքի մեջ: Բայց նա այնպես էր շշմել, ահաբեկվել այս մանրամասներից, որ իր մեջ վճռեց, որ Վասակն այս անգամ տապալվեց: Իսկույն վճռեց օգտագործել առիթը և անցնել Վարազվաղանի մոտ ծառայութեան:

Վարազգուխտն էլ այդ էր կամենում: Նա վաղուց էր նկատել, որ Կողակը Վասակին դավաճանելու ճանապարհն է բռնել: Եվ գրոհեց նրան գլորվելու այդ փոսը:

Կողակը գործի անցավ: Կեսգիշերին նա ձին քշեց Վարազվա-ղանի ապարանքը:



Վարազվաղանն իսկույն շտապեց օգտվելու ամենահարմար առիթից:

Հազարապետի քնած կերպարանքը անշարժացել էր. և օձի հայացքը սառել էր մի կետի, որ Վարազվաղանը կանգ առավ մուտքի վարագույրի մեջ: Հազարապետը հայացքը դարձրեց Վարազվաղանին և աչքերով հասկացրեց, որ առաջանա: Վարազվաղանն զգուշ քայլեց դեպի Հազարապետը և մի քանի քայլի վրա կանգ առավ:

— Ասա ինչ որ գիտես, — խոսեց Միհրնեբսեհը:

Վարազվաղանը պատմեց անգղի և Արտաշատի դեպքերը այն-քան գունավոր, ինչքան հնար էր տալիս իր երևակայութիւնը:

Միհրնեբսեհը սուր նայեց Վարազվաղանին, լռեց և հանկարծ խայթեց.

— Ո՞վ է քեզ հաղորդել այդ լուրերը:

Վարազվաղանն հանկարծ ուշաբերվեց... «Կողակը թակարդ գցեց ինձ...»: Եվ իսկույն վրա բերեց.

— Կողակը հաղորդեց լուրը, տեր իմ:

Միհրնեբսեհը խոժոռվեց, ծափ տվեց: Ներս մտավ սենեկա-պետը.

— Բո՞նե, տալ ա՛յն հալ աղջիկան, որ մի անգամ եկով մոտս, և գլխատել:

— Հրամա՛նդ:

Սենեկապետը գնաց:

— Կանանց լուրերը դու համարձակվում ես բերել ի՞նձ... և

Վարազվազանը սարսափեց, բայց վերջին մի ճիգ արեց և ձայնը փոքր-ինչ բարձրացրած ասաց.

— Լուրը կնո՞ջ էր... մի՛թե ես թակարդի մեջ եմ եղել... Բայց լուրը ճշմարիտ է: Ինձ գլխատել տուր, եթե շհաստառովի, որ մարդպանը երդվել է կռվել պարսից դեմ և բանտարկել է Գեճշապուհին, մոզպետներին ու զորավարներին:



Երեկոն բացեց փոռեց իր սև թավիշները: Ստվերախիտ այգում գետակի ափին նստած էին Դիշտրիան և Խորիշան: Նրանց դիրքից երևում էր քաղաքից եկող ճանապարհը: Այն կողմն էին նայում: Խորիշան հույս ուներ, որ Արսենը կգա:

— Հանկարծ չգա՞, Խորիշա՛... և

Դիշտրիայի ձայնի մեջ երկյուղ կար և անհանգիստ մտահոգութուն: Խորիշան ցնցվեց և վախեցած աչքերը լայն բացեց Դիշտրիայի վրա:

— Չգա՞... ի՞նչ ես ասում, Դիշտրի՛ա...

— Դե, կռիվ է, Խորիշա՛,— դարձավ ամբողջ մարմնով Խորիշային Դիշտրիան, որ ըստ երևույթին վերջերս ջանում էր նախապատրաստել Խորիշային ազնետալի անցքերին:

Խորիշան սակայն ոչինչ չէր հասկանում, թե ինչ կռիվ է նա կատարյալ միամտությամբ հարցրեց.

— Չեմ հասկանում, Դիշտրիա, ախր Արսենը ո՞ւմ դեմ պիտի գնա կռիվ:

— Մեր գեմ:

— Վա՛յ, Արսենն ինչո՞ւ պիտի մեր դեմ դուրս գա կռիվ:

— Ինչո՞ւ: Բա Վախթանգը, որ հայերի դեմ պիտի կռվի:

— Հայերի դե՞մ: Վախթանգն ի՞նչ ունի հայերի դեմ: Չե՞մ հասկանում. ինչո՞ւ են իրար հետ կռվում,— հանկարծ լցվեց Խորիշան:

— Ուզում են, որ հայերին մեր կրոնին դարձնեն,— բացատրեց Դիշտրիան:

— Հայերը կրոն չունեն՝,— հարցրեց Խորիշան հետաքրքիր և տարակուսած:

— Ունեն: Ուզում են հայերին մեր կրոնին դարձնեն, որ հետեւերը մեկ գառնանք:

— Դե, թող մե՛նք դառնանք նրանց կրոնին, դառնանք մեկ:

— Մի՛ խոսի այդպես, մոզը կիմանա:— զգուշացրեց Դիշտրիան շուրջը նայելով:

— Չեմ հասկանում, նրանց աստվածն աստված չէ՞:

— Իրենց համար է աստված: Մեզ համար մերն է աստված:

— Դե, թե ամենքինն էլ իր համար աստված է՝ ասել է բարի է, մարդիկ էլ բարի, ապրում են ազատ իրենց համար, էլ ի՞նչ կա:

— Խորիշա, լո՛ւտ, այդպես բաներ մի՛ խոսի: Որ խմանա՝ Վախթանգն էլ կսպանի քեզ:

— Է՛, է՛, Դիշտրիա, ի՞նչ եմ ասում, որ սպանի:

Խորիշան փղձկաց.

— Վա՛յ իմ անբախտ գլխին, վա՛յ Արսենին:

— Մի՛ լար, Խորիշա, մի՛ լար,— մոտ գնաց Դիշտրիան:— Արսենը տարիներ հո չի կովելու, մի օր կգա ետ:

Մուժն ընկնում էր: Արսենը շկար: Երկար սպասեցին՝ կրկին չերևաց: Արդեն խավարը լիովին պարուրել էր Խորիշային, և նա լոտ, գլխահակ նստած քարին՝ այդ գիրքում թմրել նիրհել էր, որ բակի մուժի մեջ խլրտաց մի ստվեր: Դիշտրիան լարվեց և գնաց գեպի այն կողմը: Մթան մեջ իրար հանդիպեցին ստվերի հետ, որ ինչ-որ խոսեց Դիշտրիայի հետ և ապա եկավ դեպի գետափը: Մթան մեջ աղոտ գծագրվեց Վախթանգի կերպարանքը: Խորիշան արթնացավ:

— Հը՛, սոխակը հայրենի՞ք է գնում, ո՞նց է վարդի բանը,— խոսեց Վախթանգը:

Դիշտրիան մի կողմ էր կանգնել խոնարհ գիրքով և Վախթանգի պատկերավոր խոսքին շէր կարող պատասխանել: Վաղթանգն անցավ հասարակ ձևի.

— Արսենը չեկա՞վ այսօր:

— Ոչ, իշխան,— պատասխանեց Դիշտրիան:

— Ապա ինչպե՞ս պիտի լինի... առանց տեսնելո՞ւ պիտի գնա:

Դիշտորիան կրկին շհամարձակվեց պատասխանել:

— Խորիշա՛, — դիմեց Վախթանգը Խորիշային, — Ի՞նչ պիտի լինի սրա վերջը:

— Զգիտեմ, իշխան... — պատասխանեց Խորիշան տխուր:

— Քյո՛ւ կոհիվ հնարողի... — թքեց Վախթանգն ու հեռացավ: Դեռ չէր կորել խավարի մեջ, որ բակը մտավ մի հեծյալ: Դիշտորիան ճանաչեց.

— Արսենի նժո՛ւյգն է...

Ու վազեց այն կողմ: Արսենն էր: Վախթանգի հետ առաջ եկավ դեպի գետափ:

Արսենը մեղմակի մոտեցավ Խորիշային, շոյեց նրա գլուխը և նստեց նրա դիմաց: Լուռ նստեց և Վախթանգը: Միայն Վախթանգը նշան արեց, որ ընթրիք տան հենց գետափին: Դիշտորիան վազեց օթևանների կողմը և շուտով աղախինների հետ վերադարձավ, ու միասին սկսեցին սարքել ընթրիքի սեղանը: Ճրագը բերին:

Ոչ ոք չէր խոսում: Վախթանգը մի քանի անգամ նայեց Արսենին, բայց սա էլ շխոսեց, միայն հայացքով պատասխանեց նրա հայացքին: Ապա երկուսն էլ գլխիկոր նստած ընկան իրենց մտքի հետևից: Եկան Վախթանգի զոքանչն ու Որմիզդուխտը:

— Ի՞նչ բանի եք, զավակներս, — հարցրեց մեղմ Վախթանգի զոքանչը՝ Ֆրավաշին:

Նրան էլ պատասխան տվող չեղավ:

— Անիծվի՛ կոհիվը: — խոսեց ինքն իրեն Ֆրավաշին ու ինքն էլ տարվեց լուռության մտքերին:

Նստեցին ընթրիքի: Վախթանգը խմում էր իրար հետևից: Նա գրգռված տրամադրություն մեջ էր: Ինչ-որ ներքին կոհիվ էր ծագել նրա հոգում և նա արդեն սկսում էր բորբոքվել: Նա գիտեր հայոց այրուձիկ կալանավոր վիճակը, գիտեր նաև որ նախազգուշացված է բոլոր պարսիկներին՝ հսկել հայերին: Նա չէր ենթարկվում այդ ամենին, նա սիրում էր Արսենին, բայց մի այլ անորոշ զգացում հանգիստ չէր տալիս նրան: Ի՞նչն էր այդ՝ նա զգում էր, բայց չէր գտնում բացատրությունը: Ապա նաև նրա մեջ ուրիշ կոհիվ էր գնում Հաղկերտի, Հազարապետի և պարսիկ մեծամեծների նվաճողական, բռնակալական ձգտումների դեմ, ձգտումներ, որ

սկսում էին գրավել նրանց նա մեծ սիրով էր նայում Արսենին, մտքում շոյում նրան. հիշում էր Արսենի անձնագոհ լավությունը դեպի ինքը: Բայց երբեմն էլ գազանային մի կիրք պոռթկում էր հոգու հեռու անհայտ, մռայլ խորքերից և նրան ատելությամբ լըցնում դեպի Արսենը: Այդ պահերին նա ուզում էր հարձակվել Արսենի վրա և սպանել:

— Հայաստան ես գնում,— հարցրեց Վախթանգը Արսենին: Արսենը չպատասխանեց: Սա շարժեց Վախթանգի կիրքը:

— Գնում ես... — հեզնոտ շեշտով ասաց Վախթանգը,— ի՞նչ՝ ռկե, կզնաս հայերին կռիվ բերելու պարսիկների դեմ...

Խորիշան ցնցվեց և երկյուղով նայեց Վախթանգին: Նա նրան չէր տեսել այդպիսի անսովոր տրամադրությամբ:

— Ինչո՞ւ ես լուում,— կոշտ ձայնով հարցրեց Արսենին Վախթանգը:

— Ի՞նչ ասեմ, ասելու ի՞նչ կա,— պատասխանեց Արսենը. հանգիստ եղանակով:

— Շատ բան. ի՞նչ ես անելու,— չարաթույն խեթելով հարցրեց Վախթանգը:

— Ինչ որ միշտ արել եմ,— ասաց Արսենը հեզնոտ ձայնով: Վախթանգը լռեց: Նա լցրեց իր գավը, խմեց և ապա գավը դարկեց գետնին:

— Դու պիտի փախչես, գնաս ձեր զորքին միանաս, գաս մեզ վրա կռիվ, ահա թե ինչ ես անելու:

— Դե, որ գիտես՝ էլ ինչո՞ւ ես հարցնում,— հանգիստ ասաց Արսենը և վար դրեց գավաթը:

— Ասել է մեզ պիտի դավաճանես...

— Իսկ ես ո՞ր օրն եմ Հազկերտին երդվել, որ նրա զորքի հետ գնամ հայրենիքս կործանելու...

— Իսկ թո հայերին երդվե՞լ ես գալ իմ հայրենիքը կործանելու:

— Իմ հայերին երդվել եմ պաշտպանել իմ հայրենիքը...

— Ո՞ւմ դեմ... Երանի՞ դեմ...

Եվ Վախթանգը, որ կիսովին պառկած էր՝ ելավ նստեց.

— Հա՞, ասա, Երանի՞ դեմ...

— Ինչո՞ւ մենակ Երանի դեմ,— ձայնը բարձրացրեց Արսենը,— ամենքի դեմ, ով կհանդգնի իմ հայրենիքի դեմ...

Վախթանգը ընդոստ կանգնեց և մի քանի քայլ գնալով դեպի օթևանները՝ ձայն տվեց.

— Է՛յ, տղա՛յք, որտե՞ղ եք, այս կո՛ղմ:

Ֆրավաշին զարմացած և անհանգիստ նայեց նրան և կըշտամբող ձայնով՝

— Ի՞նչ ես անում, Վախթանգ...

— Տղա՛յք, ա՛յս կողմ,— գոչեց ավելի բարձր Վախթանգը:

Մութի միջից դուրս լճղացին զինված ծառաների սև կերպարանքներ:

— Տարե՛ք իշխանին զնդան,— հրամայեց Վախթանգը:

— Ամա՛ն,— ողբաց Ֆրավաշին և ծնկները ծեծելով նայեց խորիշային, որը վախեցած վեր էր թռել և կանգնել քարացած:

Ոչ ոք չէր սպասում, որ Վախթանգը այսպիսի բան կանի: Ֆրավաշին կամեցավ մեղմել նրան: Վախթանգի գինով կերպարանքը եթե մի կողմից վախեցնում էր, մյուս կողմից էլ կարծես թույլ էր տալիս կարծել, որ դա մի անակնկալ, անցողիկ զայրույթ է, կարելի է ողոթել նրա սիրտը: Մի փոքր սպասեց: Վախթանգը շարունակում էր խմել և փնթփնթալ:

— Երա՛նը, Երա՛նը...

Ֆրավաշին նորից փորձեց:

— Վախթա՛նգ... մտածիր ի՞նչ ես անում...

— Զա՛յնդ, քավթա՛ռ,— դաժան ձայնով գոչեց Վախթանգը և հրամայեց ծառաներին.

— Տարե՛ք...

Ծառաները մոտեցան Արսենին տանելու: Սակայն Արսենը ձեռը տարավ իր սրին.

— Տանելը կտանեն վերջը, չեմ պարծենում: Բայց մեր երկրում մինչև մի քանիսին չեն փոռում գետնին՝ չեն հանձնվում...

Վախթանգը լուռ ու քննական նայեց նրան: Ու մինչ նա կվճռեր իր անելիքը՝ խորիշան վեր թռավ, գնաց արագ շոթեց Արսենի առաջ: Արսենը, որ արդեն սուրը քաշում էր՝ բռով զարկեց կոթին, գցեց պատյանը և ձեռը դրեց խորիշայի խոպուպների վրա.

— Կա՛վ, չեմ անի, թող տանեն...

— Տարե՛ք,— հրամայեց Վախթանգը սառը և գինովի ձայնով:

Յառաները բռնեցին Արսենին, բայց նա թափ տվեց իրեն, ազատեց թևերը, մերկացրեց սուրը և գնաց: Միայն ետ նայեց հորիշային ու ասաց.

— Այս էիր ուզում՝ այս էլ արի...

— Ես այդ չեմ ուզում... ո՛չ... — հեկեկկաց հորիշան և գնաց շոքեց Վախթանգի առջև:

Վախթանգը խոժոռվեց և գոչեց հորիշայի վրա.

— Հեռացի՛ր, թե չէ՝ արյունդ կթափեմ, դավաճան: Մեր ազգի թշնամուն սիրում ես, բավական չէ, ուզում ես նրան բա՛ց թողնեմ... նա այս գիշեր չի լուսացնի...

Ճրավաշին կրկին փորձեց խելքի բերել Վախթանգին, կըրկին կարծելով թե նա անսպասելի մի բռնկման մեջ էր, սակայն Վախթանգի կերպարանքը զգաստացրեց նրան: Նա դաժանացել էր. աչքերը լի շարությամբ նայում էին արյունոտվ լցված, և նա ինքն իրեն կրկնում էր մի բառ.

— Երա՛նը... Երա՛նը... ապրեն Երանում, խմեն ջուրը, սիրեն աղջիկներին և վերջը վեր կենան Երա՛նը սպանելու... Զեղանո՛ւմ կխեղդեմ...

Հորիշան անլսելի փղձկաց և երեսը թաքցրեց փղոսկրյա թևերի մեջ, որ գետափին դրած կրակի լույսից փողփողում էին լույսի և սովերի խաղերով: Ճրավաշին հառաչեց տխուր ու լռեց, իսկ Որմիզպուխտը մոտ գնաց հորիշային և գրկեց նրան:

Վախթանգը վեր կացավ և քայլերն ուղղեց դեպի զնդանը:

— Ի՛նչ է ուզում անել, ամա՛ն... — հեծեծաց նրա հետևից Ճրավաշին:

Վեր կացավ և գնաց հետևից:

Վախթանգը հրամայեց ճրագ բերել: Ճրագի լույսով նա իջավ գինու մառանը: Բորբոսի ծանր հոտը միացած գինու սուր բուրմունքին՝ ազդում էր շմեցնող մի ախորժով: Հսկայական կարասները լուռ էին գինով հագեցած իրենց փորերով: Նկարեն գավերն ու գինու սափորները շարված էին նրանց խուփերի վրա:

Արսենը թիկն էր տվել վաղեմի ժամանակներից սևացած պատին և մոռյլ ու անշարժ գետնին էր նայում: Միայն աչ ձեռի ափք սևղմել էր սրի դաստակին:

Վախթանգի հետ ներս մտան նաև ծառաները: Նրանք մտահոգ նայում էին Արսենի սրին, որ նրան բանտարկելիս չէին հա-

մարձակվել խլել: Հիմա ծառաներից մեկը մոտեցավ Արսենին և նշանացի հասկացրեց, որ սուրբ իրեն հանձնի: Արսենը միայն խոժոռ նայեց նրան ու մնաց անշարժ:

Վախթանգը կանգնեց Արսենի դիմաց՝ երկու ձեռքերը կանթելով կողերին և սկսեց լուռ ու գինով դիտել նրան: Արսենը աչքերը չբարձրացրեց:

— Գոռո՞ղ ազգ եք,— մոմռաց Վախթանգը:

— Բայց տմարդի շենք,— հազիվ լսելի ասաց Արսենը:

— Գոռոզ եք, շեք ապրի:

— Գոռոզ ենք՝ կապրենք:

— Կապրե՞ք...

— Կապրենք...

Արսենը բարձրացրեց աչքերը և տեղում շտկվեց.

— Ես իմ կամքով եկա, բայց դու ինչո՞ւ դրիր ինձ զնդան... սր ես իմ հայրենի՞քն եմ պաշտպանում...

— Ոչ,— մեղմ պատասխանեց Վախթանգը,— այլ որ ես իմ հայրենիքն եմ պաշտպանում:

— Նենգությա՞մք, տմարդությա՞մք...

— Զարությամք, թշնամությամք,— հետո գոչեց,— բռնությամք:

Երկուսն էլ իրար նայեցին լարված:

— Սա Երա՛ն է, ապա՞ մի ասա յերա՛ն: Ի՞նչ, Բիհիսթունի ժայռերին Դարեհը դրա՞ համար քանդակեց Երանի անունը, որ մի հայ ձեռք բարձրացնի վրան:

Արսենը աչքերը ոլորեց, շեշտ նայեց Վախթանգին, բարձրացրեց սուրը և դարձավ ծառաներին.

— Ապա մի ներս քաշվեցեք դռնից.

Ծառաները լարվեցին, շհասկացան և մնացին իրենց տեղերում անշարժ, խմբված դռան մոտ:

— Զլսեցի՞ք ինչ ասացի...

Ծառաներից մեկը սուրը բարձրացրեց և հարձակվեց: Արսենը մի ակնթարթում սրով զարկեց նրա աջ ձեռին: Սա ընկավ, մյուսները փախան դռնից դեպի ներս: Արսենը բռնեց դուռը, մեջք տվեց նրան և կանգնեց սուրը բարձրացրած:

— Զարկե՛ք դրան,— քաշվելով պատի տակ՝ հրամայեց Վախթանգը վախեցած:

Ոչ քիչ շարժվեց:

— Զարկե՛ք, ասում եմ ձեզ,— որոտաց երկյուղից Վախթանգը:

Սառաները քարացած, անշարժ նայեցին միայն:

— Կզարկե՛ն վերջը... բայց ես կարծում եմ բոլորս կոչնչանանք,— ասաց Արսենը:

Վախթանգը համբերանքից դուրս եկավ:

— Հարամանի՛ի զավակներ, ի՞նչ ասացի ձեզ, զարկե՛ք...

Սառաները շանսացին: Նրանք վախեցած կատաղությամբ ըսպասում էին հարմարության՝ հարվածելու Արսենին: Բայց Արսենը այլայլվել էր:

— Ի՞նչ է միտքդ... — հարցրեց Վախթանգը՝ ազդված այդ հայացքից:

— Թա՛փեք զենքը՝ գինու կարասը,— հրամայեց Արսենը:

— Ի՞նչ է միտքդ,— մեղմելով կրկնեց Վախթանգը:

Վախթանգի այս մեղմացումը ազդեց իսկույն ծառաներին: Նրանք հասկացան, որ Արսենը գնում է մահվան ու այլևս նրան հաղթել չես կարողանաս: Նրանք սկսեցին իրար նայել և սպասել Վախթանգին:

— Ձեզ չե՛ն հրամայում՝ թափեք զենքերը,— գուչեց Արսենը և հարվածեց ծառաներից մեկին ևս:

Սարսափը տիրեց մնացածներին: Նրանք ակամա և մեքենաբար զենքերը թափեցին կարասը:

— Դե, նստեցեք հիմա... Շո՛ւտ... — Սառաները նստեցին գետնին:

— Հետո՞... — հարցրեց Վախթանգը գինով, բայց մտահոգ արդեն:

— Հետո այն, որ կմնանք այստեղ, մինչև մեր գիակները տանեն դուրս:

— Բայց ինչպե՞ս կհամարձակվես:

— Տեսնում ես, որ համարձակվեցի:

Վախթանգը շխոտեց: Նա սկսում էր ուշքի գալ իր գինովությունից: Արսենը հեզնանքով մոմոաց:

— «Թռնությա՛մբ» ասացիր, չէ՞... դե, հիմա բռնությունը տե՛ս:

Վախթանգը շար նայեց նրան.

— Դու լո՛ւրջ ես ասում...

— Ինչպես որ զնդան բերիք ինձ լուրջ: Դե, հիմա իմացիր, ես պիտի մեռնեմ այստեղ ձեզ հետ: «Ինչպե՛ս կհամարձակվես»: Ինչպե՛ս համարձակվեցիր հայ իշխանին ձեռ տալ...

— Դու Երանի դեմ գնացիր:

— Երանի դեմը հիմա կտեսնես: Քո Երանի է՛լ, քո օրենքի ու հավատի դեմ է՛լ: Հիմա ես ձեզ ասում եմ, մի փոքրիկ շարժում՝ գլուխներդ կզնա:

— Դու մեզ անպատվում ես:

— Ո՛չ մեկիդ պատիվը չեմ ճանաչում, անպատվեցիք դո՛ւք: Եվ այսպես դուք, այստեղ է՛լ, իմ հայրենիքումն է՛լ, շեք ճանաչում ո՛չ ուրիշի պատիվը, ո՛չ ինքնասիրությունը, ո՛չ հայրենիքը, ո՛չ ազատությունը: Ձեր արքան բռնի երկրպագել տվեց արևին մե-րոնց, և այդ այն ժամանակ, երբ մեր այրուծին ձեր տերությունն է պաշտպանում: Ապերախտնե՛ր:

— Ի՞նչ հակառակ ազգ դուրս եկաք,— խոժոռ նայեց Արսե-նին Վախթանգը:

— Հա՛, ի բնե ի ծնե ձգտել ենք ազատության:

Դրսից լավեցին հեկեկոցի ձայներ: Այնտեղ ինչ-որ խլրտոց կար: Դուռը ծեծեցին: Արսենը շարժվեց տեղից: Կրկին ծեծեցին: Նույն պատասխանը:

— Դրսից կանչում են, բա՛ց արա դուռը,— ասաց Վախ-թանգը:

— Դուռը չի բացվի,— հակառակեց Արսենը:

— Բա՛ց արա դուռը, իշխան,— խնդրեց Յրավաշին լալա-գին:

— Գնա՛, մայրիկ, գնա՛,— մեղմ ասաց Արսենը,— ո՛չ դուռ կբացվի, ո՛չ էլ այստեղից մարդ դուրս կգա:

— Իշխան, զինվոր է եկել ճամբարից,— լավեց Դիշտրիայի ձայնը:

— Զինվո՛ր... — ցնցվեց Արսենը՝ գուշակելով տազնապ:

— Քեզ կանչում են, գնա՛,— ասաց Վախթանգը բոլորովին հաշտ ձայնով:

Արսենը նայեց Վախթանգին անհանգիստ և տարակուսած:

— Կանչում են, պիտի փախչեք Հայաստան, գնա էլի՛,— կեռ հեզնանքով, կես լուրջ ասաց Վախթանգը:

Արսենը դուրս ելավ զնդանից: Գոանը կանգնել էին Վախթանգի զոքանը, Դիշտրիան և մի զինվոր, մտրակը ձեռին: Արսենը հուզված մտտեցավ զինվորին, որ ձեռքը դրեց կրծքին՝ իբրև խոնարհության նշան:

— Ի՞նչ կա, զինվոր,— հարցրեց Արսենը:

— Զորավարը ապսպրեց, որ քեզ կանչեմ ճամբար,— պատասխանեց զինվորը,— խիստ շտապով,— ավելացրեց բազմանշանակ:

Արսենի հետևից Վախթանգն էլ էր դուրս եկել և մոտ կանգնել՝ լսում էր: Արսենը շուգելով կասկածը մեծացնել՝ ասաց զինվորին.

— Էավ, գնա՛, կգամ:

Զինվորը տրորվեց կանգնած տեղը:

— Գնա՛, կգա՛մ,— կրկնեց Արսենը կեղծ անփուլթ, կեղծ հանգիստ:

Զինվորը ետ դարձավ և շտապ քայլեց դեպի դարբասը, ուր նրա նժույզը պիտի լիներ:

Արսենը շտապ գնաց դեպի գետակի ափը: Նա որոնեց Խորիշային: Մոտեցավ ընթրիքի սեղանին և տեսավ նրան գլխիկոր նստած, դեմքը ձեռների մեջ:

— Խորիշա՞... — մեղմ ասաց նա:

Խորիշան հեկեկաց.

— Խորիշա, թո՛ղ լացը. ինձ կանչում են ճամբար:

Խորիշան վեր թռավ, կանգնեց Արսենի դիմաց: Այլևս լացի ժամանակ չէր: Տագնապալի վիճակ էր: Արսենը պարտավոր էր իսկույն մեկնել, և մեկնել կնշանակեր ճամփա ընկնել հեռավոր մի վայր — Հայաստան կամ քուշանների մոտ: Իսկ այդ ամենը կնշանակեր վերջ ամեն բանի:

Ու մինչ երկուսը հոգեխոտով կանգնած էին իրար դիմաց՝ հետևից հասան մյուսները: Վախթանգը նստեց իր տեղը և ձեռով հրավիրեց Արսենին, որ նա էլ նստի: Մյուսները նույնպես նստեցին, որպեսզի խաղաղ կերպարանք տալով դեպքին՝ հանգստացնեն իշխաններին:

Վախթանգը հրավիրեց բոլորին լցնել զինու գավերը: Աղախիները լցրին:

— Վերցրու,— ասաց Վախթանգը Արսենին,— վերցրու խըմենք հուլի արյունը, հետո կխմենք իբրար արյուն:

— Հարամանիի՛ ժամ դառնար ժամը, մի՛ հիշեցնի,— հանդիմանեց Ֆրավաշին:

Արսենը, որ խառնաշփոթ մտորանքների մեջ էր՝ մեքենաբար անդրադարձավ նաև նրան.

— Ուրախությունն է՞լ ես հրամայում...

— Ուրախություն է՞լ չի կարելի հրամայել,— խեթ նայեց Վախթանգը,— լա՛լ մարդ չես:

Արսենը մտորմունքով նայեց գետնին: Միայն դառնության կծկումով շրթունքներն իրար կպցրեց:

— Հա, ի՞նչ ես խորհում,— հեզնանքով նայեց նրան Վախթանգը:

Արսենը դառնությամբ ասաց.

— Այո՛, դարերո՞վ տիրել եք մեզ և տիրելով միայն «սիրել», հաճել, ընդունել մեզ: Այդպես, որ մենք լուռ ենք՝ այդպես էլ սովոր եք: Այ, տե՛ս, ցույց տվի փուշս, դառա «վատ մարդ»... Դրա համար եք թշնամանում: Վատ ենք սովորեցրել...

— Երանը հզո՞ր է:

— Հենց այդ հզորությունն է ձեզ փշացրել, որ օտարին չեք սիրում, հարգում...

— էլի մի՛ սկսեք, Որմիզդի՛ն ի սեր,— աղաչեց Ֆրավաշին:

Արսենը նայեց Խորիշային: Վախեցած սիրո հայացքը աղաչական վշտի արտահայտությամբ հառած էր Արսենին: Նա խընդրում էր մեղմել, հանգստանալ, հաշտվել: Ամենևին նման չէր այդ հայացքը Վախթանգի հայացքին: Նա չէր հրամայում, բռնանում, նա սիրում էր: Նա ևս պատրաստ էր ընդունել մահը: Նա ևս անպարտելի էր իր անձնազոհությամբ:

Արսենը երկար նայեց Խորիշային: Զարմանալի է. Խորիշայի հայացքում չէր զգացվում այդ պահին կատարված դեպքի ազդեցությունը: Չէ՞ որ Արսենը հարվածել վիրավորել էր երկու ծառաների, գժտվել էր Վախթանգի հետ, պարսավում էր նրա ազգին և խոսում էր օտարազգի ատելությամբ: Կարծես Խորիշան չէր տեսնում այդ և ընդունակ չէր հասկանալու: Նրա հայացքը այնքան մտերիմ էր, որքան Արսենի հայրենիքի լեռնային ծաղիկը, ծխանի ծուխը, երեկոյան ծղրիդը... Կարծես Խորիշան Արսենի ազ-

գից էր, մանկութիւն հարազատ: Քրոջական սիրազեղ մի շերմութուն կար այդ հայացքում, անձնազոհութեան պատրաստ մի հոգի: Կարծես վեհ բնութիւնն էր նայում Արսենին, և դա սիրեցյալ շէր, այլ մայր, պաշտպան, կենսատու խանդակաթ:

Արսենը մեղմեց և հաշտ ու գորովալի աչքերը հառեց ետրիշային: Նա շնկատեց, որ Վախթանգը իրեն էր նայում հեգնոտ ու խանդոտ:

— Հը... տիրե՞լ ես,— մոմոաց նա կիսաձայն:

Արսենը շտտեց:

Բայց Արսենին նայում էին մյուսները և հուզումնալի, տխուր ժպտում: Ֆրավաշին հառաչեց.

— Ա՛խ, ի՞նչ ասեմ ձեզ...

— Ի՞նչ պիտի ասես,— խոսեց Վախթանգը,— եկել է մեր աղջկան տիրել՝ սուր է ճոճում, վրաներս: Աղուհացը ծնկան վրա է:

— Այդ մի՛ ասիր,— զայրացավ հանկարծ Ֆրավաշին,— գոնե ա՛յդ մի ասիր: Հիշիր քուշանների կոբվը և այդ մի՛ ասիր...

— Հետո՞ ինչ,— ողջ մարմնով ընդոտտ շրջվեց Վախթանգը Ֆրավաշիին,— նա իր լավութիւնը ա՛շքս է կոխում:

— Նա ոչինչ չասաց, մի՛ զրպարտիր:

— Հազար կյանքս էլ որ նա ազատեր մահից, էլի Երանը Երան է:

— Դա ճշմարիտ է,— ասաց Արսենը,— հազիվ մի ճշմարիտ բան ասացիր:

— Ճշմարի՛տ,— մտորմունքով կրկնեց Վախթանգը,— ճշմարիտ բաներ շատ կան: Ասենք, ինչ կլինի՝ կլինի. հերն անիծած է՛յ,— դարձավ ծառաներին,— նվազածունք բերեք:

Ծառաները վազեցին օթևանների կողմը, ուր քնած էին Վախթանգի տնական նվազածունքները:

— Ճշմարի՛տ... — կարծես ինքն իրեն մոմոաց Վախթանգը,— ճշմարիտն այդ չէ... ճշմարիտը...

Վախթանգը լռեց, քրթմնջաց ինչ-որ ինքն իրեն և ձեռով մի բան սկսեց որոնել:

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց Ֆրավաշին:

— Գինի լցրեք,— քնկոտ ձայնով մոմոաց Վախթանգը:

Նվազածուններն եկել, գետնին շոքել՝ լարում էին իրենց գործիքները և աչքերը տրորում քնաթաթախ:

— Դե, մի գինի՝ վերցրեք՝ ժանգ երեսներդ մաքրվի,— հրամայեց Վախթանգը գինով ու մշուշոտ ուրախությամբ:

Նվազածուններին գինի տվին: Նրանք արթնացան, զգոնացան և սկսեցին նվագել: Նվագի հնչյունները կարծես սրբեցին մի փոքր առաջ կատարված անտեղի, տգեղ դեպքը, աշխուժացրին Վախթանգին: Միայն Արսենն էր մտահոգ և անհանգիստ:

Ոչ ոք չէր խոսում, շարժվում, բացի նվագը, որ հոսում, վետվետում էր գիշերային օդի մեջ:

Բայց Արսենը ուրիշ խոհերով էր տարված: Նրան հուզում էր այն հարցը, թե ճամբարում ի՞նչ է կատարվում այս պահիս: Գուցե պիտի գնան պատերազմ, գուցե պիտի փախուստի դիմեն: Այսպես թե այնպես՝ նա պիտի հեռանար խորիշայից: Դա խոռվում էր նրան և արգելում նախաճաշակել հայրենիքը տեսնելու երջանկությունը:

Աստղերը թարթում էին իրենց կրակե թարթիչները, երկինքը անհունանում, վերանում էր: Գետակը խոսում էր քնի մեջ, և ժամ էր հանգստյան:

Վախթանգը թմրեց և մնաց գորգի բարձի վրա կես քուն կես արթուն: Մյուսները լարված սպասում էին, որ նա լավ քնի: Կարիք էին զգում ողորքել Արսենին, մեղմել նրա վերավորանքը: Երբ Վախթանգը պինդ քնեց՝ Ֆրավաշին Արսենին և մյուսներին ասաց.

— Գնացեք, քնեցե՛ք ներսը, զավակնե՛րս, սա այստեղ կքնի... Ես կհսկեմ սրան...

Բոլորը ցրվեցին: Արսենն ու խորիշան քայլեցին դեպի իրենց օթեանը: Դռան մոտ ատրուշանի կրակը մի շառայլ նետեց նրանց վրա, մատնելով նրանց երջանիկ դեմքի անհուն ժպիտը: Ապա մութը խլեց նրանց, և նրանք մտան օթեան:

Երբ մտան խորիշայի փոքրիկ օթեանը՝ ատրուշանի արտափայլի աղոտ կիսալույսը շոյեց Արսենին և խորիշային: Նրանք նստեցին անկողնի վրա ձեռքերը հուշիկ սահեցրին իրար ձեռքի մեջ և լուռ հայացքները երկար ժամանակ իրար հառած՝ խոսում էին ավելի խոր ու պերճաբան, քան մարդկային բառերը: Արսենը նոր զգաց, թե ինչու էր այնքան հանդուրժող Վախթանգի տգեղ արարքի պահին: Եվ ներքեց ինքն իրեն: Այլապես նա իր կյանքի

այլ դեպքերում անհերոզ էր ու խիստ: Միայն մի բան էր այս գիշեր նրա հոգում պրպտում ու խառնակում: Առաջին անգամ նա Վախթանգի խոսքերից ու արարքից հետո մտածեց այն մասին, որ ինքն ու խորհչան տարբեր ազգերից են: Վախթանգի թույնը շնորհորձեց, բայց ինչ-որ անախորժ զգացում սահեցրեց ներս: Նա իսկույն ջանաց ազատվել դրանից:

— Խեղճացա՞վ... կախարդեցի՞ն... — խոսեց ինքն իրեն Արսենը, — ևս նրան այդպես չէի տեսել:

— Գիտով էր, — շնչաց խորհչան յուրովի:

— Ասել է՝ գինին դուրս տվեց նրա սրտի մուռը:

— Չէ, իշխան, նա լավ սիրտ ունի, — տխրածպիտ հակաճառեց խորհչան:

— Ապա ի՞նչ էր ուզում անել ինձ զնդան դնելով, առողջութունս խնամե՞լ, թե՞ ինձ պահել իբրև զարդարանք...

— Բայց վերջը հո մոռացավ, — մեղմացրեց խորհչան:

— Կարծես թե...

Խորհչան լցված էր խանդաղատանքով: Նրա մեղուչ հայացքը հալեցնում էր Արսենի մտքերը: Նրան տիրում էր ավելի վեհ մի զգացում, քան այն բոլորը, ինչ տեղի ունեցավ այդ գիշեր: Նա մետաքսի քնքշությամբ սահեց Արսենի գիրկը:

— Լա՛վ, մոռացի՛ր, — շնչաց և այտը մեղմիկ հպեց նրա շրթունքներին: Արսենի սիրտը փլվեց, մարեց քաղցր, և նա ինքնամոռաց գրկեց խորհչայի լույծ կուրծքը: Ի՞նչպես ամեն ինչ հեշտ էր աշխարհում այդ գրկախառնության մեջ: Ինչպես թեթև էր թրուշում կյանքը: Արսենը ջանալով գիշերվա դեպքի անախորժ մոռանալ խորհչայի փայփայանքի մեջ՝ աննկատելի խորհել սկսեց Վախթանգի ասածների մասին: Բայց լավ չմտաբերե՞ց, թե՞ չէր ըմբռնել. եզրի շհանգեց:

Փամանակն հատնում էր սիրավառ զույգի համար: Արսենը հիշեց, որ իրեն կանչել են շտապ և որ անշուշտ ճամբարում լուրջ բան կա, պետք էր իրոք շտապել:

— Խորհչա, — ասաց Արսենը:

Խորհչան բնազդաբար ցնցվեց և ահաբեկ նայեց Արսենին:

— Խորհչա, ես պիտի գնամ...

Խորհչան շարունակեց լուռ ու քարացած մնալ: Նրա հայացքից երևում էր, որ հարվածը խորն էր և մահացու: Կյանքն այդ-

պէս է հեռանում, հանկարծակի և անողորք: Ինչպե՞ս, ուրեմն ամե՞ն ինչ վերջացավ... Եվ ինչպես Արսենը, այդ սիրառատ, բարի, մտե-  
րիմ Արսենը կարող է այդքան դյուրին թողնել ու հեռանալ...

Խորիշան տարակուսած և խռովահույզ նայեց Արսենին, ժրպ-  
տաց և սպասէց, որ նա մի այլ խոսքերով մեղմացնի հարվածը:

— Զի՞ լինի որ շքնաս,— հարցրեց Խորիշան հուսալով այլ  
պատասխան:

— Ոչ, Խորիշա,— հարվածեց Արսենը,— ես զորական  
մարդ եմ:

— Ինձ է՛լ տար հետդ,— գլուտ արածի պես հուսով աղաչեց  
Խորիշան:

Արսենը գրկեց Խորիշային:

— Տա՛ր, տա՛ր,— հեկեկաց Խորիշան,— ես ձեր երկրում  
կապրեմ ձերոնց պես, կպաշտեմ ձեր աստծուն, ձերը կդառնամ,  
տա՛ր...

— Կդառնաս մե՛րը,— ժպտաց Արսենը:

— Ես քե՛զ եմ ուզում, ուրիշ բան չեմ ուզում: Ես չեմ ատում  
ոչ մերոնց, ոչ ձերոնց, ես ոչ ոքի հետ կոփվ չունեմ: Ի՞նչ կա ինձ  
համար... Կարող եմ... Կգամ, կինդ կդառնամ, կուզե՞ս աղա-  
խինդ... Տա՛ր ինձ...

Արսենը գորովանքի և սիրո նոր ալիքով շերմացած սեղմեց  
Խորիշային իր գրկում:

— Զորքի հետ անպատշաճ է և շես էլ կարող,— ասաց Արսե-  
նը շոյելով նրա գլուխը,— քեզ պատերազմից հետո կգամ կտա-  
նեմ: Կդառնաս կինս:

— Ա՛խ,— տխուր հառաչեց Խորիշան:

— Ուրիշ ապա ի՞նչ, Խորիշա,— լրջացավ Արսենը,— ինչ-  
պե՞ս կարող եմ քեզ թողնել գնալ: Կգա՛մ, անպատճա՛ր կգամ:

Խորիշան գլուխը սահեցրեց Արսենի կրծքի մեջ ու մնաց ան-  
շարժ, անխոս: Կարծես լցվեց Արսենի մեջ, դառավ անբաժանելի  
Այնքան քաղցր էր այդ միաձուլումը, որ Արսենը կրկին կորցրեց  
իր անմիջական պարտականության հոգսերը և սուզվեց սիրո ան-  
հունության մեջ:

Բավական գիշեր էր անցել: Խորիշան քնել էր՝ գլուխը թևին  
գրած. իսկ Արսենը երկու ձեռքերը ծոծրակին, աչքերը առաստա-  
ղին՝ մտորում էր:

ՁինՎորը կրկին չեկավ. կնշանակի շատ էլ ստիպողական բան չկար, կարելի էր մնալ մինչև առավոտ: Բայց Արսենը մտածում էր այն մասին, որ միևնույն է՝ այս գիշեր չէ, մյուս օր կհասնի փախուստի ժամը: Նա պիտի թողնի Խորիշային. դա անխուսափելի է: Ձուր էր ձգում ժամը բաժանման: Ուր որ է՝ մի տեղ կհասնի նա... Արսենը տխրեց: Ճնշվում էր նրա սիրտը. նա խղճում էր Խորիշային, որ ոչ մի մեղք չուներ և արժանի չէր այդպիսի բիրտ հարվածի: Արսենը ներքուստ խուլ զգում էր նաև, որ այս բաժանման դառնության մեջ նրա հոգում ջերմանում էր մի ուրիշ բան, որով և նա դիմանում էր հարվածին: Դա հայրենիքն էր: Այժմ, երբ մոտենում էր ճանապարհ ընկնելու ժամը՝ Արսենի մեջ սկսեցին կենդանանալ հայրենիքի քնած պատկերները: Նոր էր զգում, որ խիստ կարտեղ էր հայրենիքին: Նա աչքերը երազանքով փակեց և նայեց... Տեսիլների պես եկան անց կացան հեռավոր հայրենիքի վայրերը: Քանի դեմքեր ժպտացին, լացին, խոր նայեցին Արսենի հոգու մեջ: Ահա իրենց ամրոցը՝ առավոտյան արևի լույսը վրան շաղված: Նախշուն մամուռը ներկում է հյուսիսային պարիսպն ու բուրգերը: Ներքև, ձորում, դեռ աղչամուղչ է: Գետը ձյան հյուսի նման քանդվում է դեպի անդունդները: Ղողանջում են քարանձավները, քարափներին ծվլվում թռչունները: Սակայն նա շրջվեց ու նայել սկսեց Խորիշային, որին մոռացել էր և կարծես խորթացել: Քունը տիրապետել էր սիրելի էակին, խլել տարել էր անգունդը... Փակ աչքերը նետահարող թարթիչների տակից շէին կարող նայել Արսենին: Բայց փակ աչքերի խոռոչը նայում էր... Նայում էր անգիտակից, տարտամ ու ցրիվ: Միայն աչքերի արտաքին անկյուններում հազիվ նշմարվում էր մի կարոտալի ու թախծոտ ժպիտ, որ կնճռոտում էր այգ անկյունները, և շրթունքները իրար էին եկել քնով հանգցրած սիրո մի գանգատավոր հպվածքով: Խորիշան մի ձեռը մեկնել դրել էր Արսենի սրտին: Ձեռի այդ հպումը այնքան հանդարտ էր, այնքան մեկին ասլավիխողի հավատ և հույս կար նրա մեջ: Նա գորովանքով բռնեց Խորիշայի քնած թաթիկը, և մեղմ սեղմեց: Խորիշան քնի մեջ պատասխանեց նույն սեղմումով: Արսենը երկար նայում էր Խորիշայի դեմքին: Ահա մի էակ, որ կրում էր իր մեջ այն մյուս էակին, որ մի օր աշխարհ պիտի գա, լցվի այս աղջկա գիրկը և միամիտ աչքերով նայի իրեն՝ Արսենին: Ո՞վ է նա՝ այդ էակը: Նա և՛ օտար է

նրանց երկուսին, և՛ միաժամ արյունորեն հարագատ: Նա այժ  
պահիս ծծում է երկուսի կյանքը և գալիս է նրանց կողով աշ-  
խարհ: — «Ահա ես, ինչո՞ւ կանչեցիք...»:

Հեզիկ շնչում էր խորիշան: Գարնան հողի խորհուրդը կար  
նրա էության մեջ, հողի, որ լցվում է բույսի հզուրկամբ և սնում  
է իր մեջ գարնան փթիթն ու բերքը: Ոչ ոքի չի հարցնում իրա-  
վունք, ոչ ոքի չի նայում... Բերում է միայն... ընդունի՛ր...

Սանդուղի աստիճաններին ոտի քամաց լավեց: Մեկը զգուշ  
բարձրանում էր: Արսենը ականջ դրեց: Մտնողը մթան մեջ խար-  
խափելով մատներով շոշափեց օթևանի դուռը: Արսենը հասկա-  
ցավ և շարժվեց տեղից: Դուռը բացվեց: Ֆրավաշին էր:

— Մայրի՛կ, ե՛կ, — շշնջաց Արսենը առանց շարժվելու:

Ֆրավաշին դուռը մեղմակի փակեց և եկավ նստեց օթոցի  
վրայի բարձին: Ապա երբ նայեց խորիշային, ավելի ճիշտը նրա  
ձեռին, որ դրել էր Արսենի կրծքին՝ տխուր ժպտաց Արսենին, և  
նրա աչքերը լցվեցին: Արսենը լուրջ ու մտահոգ նայեց նրան:  
Երկար լուռ էին: Կրկին իրար նայեցին երկար ու մտահոգ: Ապա  
կինը վշտահար կախեց գլուխն ու սկսեց անխոս լաց լինել: Ար-  
սենն աչքերը սեեռած, անշարժ նայում էր նրան և լուռ:

— Կգնա՛ս... — շշնջաց Ֆրավաշին, — ի՞նչ կլինի, ե՛րբ կը-  
գաս... ո՞վ գիտե...

— Ո՛ւֆ կո՛իվ, կո՛իվ, կո՛իվ... Տնաշեններ, ձեռներդ չհոգնե՛ց,  
չձանձրացա՛ք... հերի՛ք է, հերի՛ք...

— Մենք՝ հայերս, հո չենք կո՛ւում, — մեղմ բացատրեց Ար-  
սենը, — մեզ կովեցնում են:

— Օ՛ֆ, չգիտեմ, չգիտեմ...

Հետո վշտահար կինը լրջացավ, մտահոգ նայեց Արսենին և  
նշանացի հայացքը շրջեց խորիշային.

— Երկհոգիս է... Բան-ման իմանա՛ ու պտուղն անց կաց-  
նի՛ր...

— Դա էլ դո՛ւ հոգ Էար, մայրիկ, սի՛րտ տուր, միշտ ասա՛՛  
լավ լուր եմ ստացել...

— Է՛, է՛, որդի, ապա ո՞նց, — տխուր խոսեց Ֆրավաշին, —  
դա կանեմ: Բայց քո՞ ցավը ոնց տանե՞ք: Կո՛իվ է, հազար փոր-  
ձանք...

Ու սկսեց հեկեկալ: Արսենը հուզվեց և անկողնում մնալու

աճկարող՝ Խորիշայի ձեռք հուշիկ ետ դրեց նրա կրծքին և վեր կացավ տեղից, գնաց նստեց Ֆրավաշիի կողքին, գլուխը հպեց նրա կրծքին ու մնաց այդպես:

Ֆրավաշին գրկեց նրան և սկսեց ջերմ համբուրել նրան:

— Կգա՛մ, մայրիկ, կգամ, մի՛ տխրիր:

— Է՛, որդի, մահը լավերին է սիրում: Հեռի՛ քեզանից...

— Գնա՛, որդի՛, պառկիր քնի՛ր, ես կգնամ,— ասաց Ֆրավաշին:

Արսենը շսեց նրան... Նրա սիրտը թրթռում էր:

Հանկարծ կարծես թռչուններ թևակոտոր ու շփոթված՝ պատուհանից ներս թռան ու զարնվեցին հատակին: Մաղիկների բանդված փնջեր էին: Դա Գիշտրիայի գործն էր... Նա ինչ-որ նշան էր տալիս՝ շուգելով դուռը ծեծել և այնտեղից ասել՝ խանգարելով երջանիկ զույգի մենությունը:

Արսենը կրկին հիշեց. «Ճամբա՛րը»...

Նա վերցրեց աշնան շունչ դիպած մի փոքր չոր ծաղիկները և ափին բռնած նայեց նրանց: Որքա՞ն նման էին նրանք հայրենի երկրի ծաղիկներին: Նույնն էին:

Խորիշան զարթնեց և երկյուղով կառչեց Արսենի թևին՝ կարծես անդունդն էր ընկնելու:

— Հա՛... գնո՛ւմ ես...

Արսենը գրկեց Խորիշային և նրա քնաթաթախ աչքերը մոտեցրեց իր շրթունքներին: Խորիշան իր նրբին դեմքով շոյեց Արսենի դեմքը և ճակատաբար հպեց նրա շրթունքներին: Բայց հանկարծ ընդոստ նստեց անկողնում:

— Գնո՛ւմ ես...

— Համբուրի՛ր, համբուրի՛ր նրան, որդի,— խղճահար ու սիրտը լցված շնչաց Ֆրավաշին:

Արսենն ու Խորիշան մարեցին մի համբույրի մեջ:

— Պիտի իմա՞ց տաս, թե՞ չէ՞ գրո՞ղ ու դժոխք,— բարձր ձայնով խոսեց մի տղամարդու կոպիտ ձայն պատուհանի տակ, մթության մեջ:

— Լո՛ւտ, ա՛յ մարդ,— սաստեց վախեցած Գիշտրիայի ձայնը,— այստեղ է...

— Շո՛ւտ, իմա՞ց տուր,— հրամայական ձայնը մի փոքր իջեցնելով խոսեց տղամարդը:

— Ճամբարիցն է,— մոմոաց Արսենը և սաստիկ մտահոգ վեր թռավ, սկսեց հաղնվել: Խորիշան ևս հետևեց նրան: Արսենը իջավ ներքև:

— Հա, ի՞նչ կա... — հարցրեց նա Դիշտրիայի ձեռքի ճրագով լուսավորված զինվորին:

— Տե՛ր իմ, զորավարը հրամայեց հավաքվել,— ասաց զինվորը բավական դժգոհ ձայնով:

— Շա՞տ է շտապ,— հարցրեց Արսենը:

— Շատ է ուշ, տեր իմ,— հանդիմանական շեշտով պատասխանեց զինվորը և սիրտ արեց ավելացնելու,— շտապի՛ր, տեր իմ, շտապի՛ր...:

— Բայց ի՞նչ է պատահել,— մոտ գնաց Արսենը:

— Արշավանք է քուշանների վրա,— պատասխանեց զինվորը կիսաձայն:

— Ե՛րբ...

— Առավոտ վաղ:

Մոտ եկան Ֆրավաշին, Խորիշան և քույրը:

— Հենց իսկո՞ւյն... — հարցրեց Ֆրավաշին:

Արսենը մտահոգ նայեց նրան:

Դարբասի մոտից խլրտոց լսվեց: Այնտեղից մեկը վազեց եկավ: Դա դուան պահակներից էր:

— Ի՞նչ կա,— հարցրեց Ֆրավաշին:

— Տիրուհի, այն հայ աղջիկն է. ասում ենք է՛լ թե գիշեր է, բայց շատ է խնդրում, աղաչում է, լաց է լինում:

— Նե՛րս թողեք,— հրամայեց Ֆրավաշին:

Մթության միջից ներս վազեց Վարազդուխտը և եկավ ընկավ Ֆրավաշիի ոտները:

— Տիրուհի՛, փրկի՛ր...

— Ի՞նչ է պատահել, աղջիկս...

— Հազարապետը մարդիկ է ուղարկել, որ ինձ բռնեն... Պետք է սպանեն: Զրպարտել են ինձ, որ ես մարդպանին արդարացնող լուրեր եմ տարածել...

Վարազդուխտը մի քանի այսպիսի բացատրություններ տվեց և ազալեց Ֆրավաշիին, որ իրեն տանի Միհրնբրսեհի քրոջ մոտ և ըարեխոսի Միհրնբրսեհի առաջ:

— Վտանգավոր է, աղջիկս,— մտահոգվեց Ֆրավաշին,— եթե չհարգի խնդիրքը՝ կյանքդ կգնաս:

— Թող գնա՛... Թող գնա՛, մայրիկս. ես Հազարապետին կասեմ, ճիշտ է, ասել եմ, որ մարզպանը բանտարկել է տվել պարսիկ մեծամեծներին... Իշխա՛ն, դո՛ւ միջնորդիր տիկնոջը,— դիմեց Արսենին Վարազդուխտը:

Արսենը դիմեց Ֆրավաշիին:

— Կատարի՛ր, մայրիկ, Վարազդուխտի խնդիրքը,— նա ճշմարիտ է ասել: Պատիժը պիտի քաշի ապստամբը: Նա հեռու է, իսկ աղջիկը մեղք է:

— Հա՛, հա՛, մայրի՛կ,— աղաչեց նույնպես Խորիշան:

Ֆրավաշին խոստացավ:

Վարազդուխտը իր բոլոր այս տազնապալի վիճակի պահին իսկ հետաքրքիր դիտեց նրանց շփոթմունքը: Առաջները, հաճախ այցելելով այս ընտանիքը՝ արդեն տեղյակ էր Արսենի և Խորիշայի մտերմության: Երբ նայեց Արսենին և զինվորին, Արսենի շփոթմունքին ու Խորիշայի, Ֆրավաշիի, Դիշտրիայի արցունքոտ աչքերին՝ նա լցվեց այնպիսի սուր պահանջով օգնել, ծառայել նրանց, որ մոռացավ իր կյանքի վտանգը:

Արսենը հրաժեշտի ժամի դանդաղող հապճեպությամբ, խառն գործնականի ու երազականի բիրտ ու նուրբ մտահոգությամբ՝ պատրաստվեց մեկնելու ճամբար: Իրեն էր նայում զինվորը կուպիտ ու անշարժ կանգնած, մտրակը բազկից կախ, մռայլ ու դժգոհ: Խորիշան հուզմունքից կարմրեց:

— Է՛, ճանապարհ,— ասաց Արսենը և մի ակնարկ նետեց բոլորին:

— Այդ է, գնո՛ւմ ես... — հառաչեց Ֆրավաշին:

— Զինվորի գործն էլ ա՛յս է,— ասաց արտաքուստ հանգիստ Արսենը:

Սվ մոտեցավ Ֆրավաշիին, համբուրեց նրա ձեռը: Ֆրավաշին ջերմ համբուրեց նրան: Արսենը մոտեցավ Խորիշային, համբուրեց նրա ճակատը, որ նա դեմ արեց անզգա ու ինքնարբերական: Ապա հրաժեշտ տվեց մյուսներին: Դուրս եկան բակից, անցան հետևյալ բակերը: Դարբասը բացվեց, մոտ բերին նժույզը, նստեց նժույզը խաղաց, զգալով արշավելու ազատությունը:

Նույսը բացվելուն մոտ էր. արևելքն սկսում էր կապուտկելու  
Հանկարծ լսվեց Դիշտրիայի զուսպ հեկեկոցը: Կարծես դա բավա-  
րարեց Խորիշային և մյուսներին: Նրանք զսպեցին իրենց: Տրա-  
վաշին բարեմաղթեց.

— Ամշասրանտնե՛րը՝ բարին հարդարողները քեզ օգնական,  
ճանապարհո՞ր բարի՛:

Բուրգի միջից տնքոցներ լսվեցին: Դա վիրավոր ծառաներն  
էին, որ չկարողանալով պարզապես հայհոյել կամ բողոքել՝ տըն-  
քացին: Արսենը լսեց, գլուխը շարժեց.

— Ասա իրեն, որ սրանց արնագինը ի՛ր խղճի վրա է...

Տրավաշին հառաչեց միայն:

Արսենը նայեց շորս կողմ, ճանապարհ դնողներին, որոնց մեջ  
և Վարազդուխտին: Այլևս վերջ. ոչինչ չկար անելու և ասելու.  
պետք էր մեկնել: Բայց հենց այդ պահին էր, որ թե հրաժեշտի  
կանգնածները կուզենային ասել անհուն, մեծ բաներ և չէին զրտ-  
նում դրանց խոսքերը: Ոչինչ ասելու անկարող՝ Արսենը սեղմեց  
բոլորի ձեռները և խթեց նժույզը: Սա թռավ: Զինվորը մտրակեց  
իր ձին այն գայրույթով, որով լցվել էր դեպի Արսենը:

Խորիշան նայեց Արսենի հետևից և արցունքի մեջ բեկբեկվեց  
Արսենը, նժույզը, զինվորը... Վարազդուխտի թևը ջերմացրեց նրա  
թևը: Երկար նայում էր նա, մինչև կիսամութը սողողեց Արսենին և  
ապա բլուրը կլանեց նրա անորոշ կերպարանքը:

— Գնանք նե՛րս, — շշնջաց Վարազդուխտը և թեթևակի քա-  
շեց Խորիշայի թևը:

Խորիշան մեռած պատկերի նման սահեց ներս: Վարազդուխտն  
ու Խորիշան առանձնացան: Վարազդուխտը մոռացավ իր վտանգն  
ու հոգսը: Նա գլուխը գրեց Խորիշայի կրծքին, փարվեց նրան և  
մնաց անշարժ: Նրան վեհացրեց սիրո վիշտը, որ խոր էր մահի  
վշտի պես: Նախանձ զգաց այդքան անձնվեր, խոր սիրուց, որի  
թեև վիշտը, բայց և երջանկությունը մեծ էր: Նա գրկեց Խորիշա-  
յին և այնպես խանդաղատեց հանկարծ, զգաց խոր, անկաշառ սի-  
րո պահանջ... Նա մտքով կորավ սյունյաց լեռներում, «ապագա  
թագավորի» դոյակը: Նա լցվեց բարի սիրո զգացմունքով դեպի  
Արսենն ու Խորիշան, դեպի ամենքը աշխարհի երեսին: Նա պատ-  
րաստ էր հազար կյանք զոհել ամենի սիրո առարկայի համար: Նա  
այդ պահին հեզ ու բարի գառնե՛ր էր:

— «Միայն թե նա փրկվե՛ր...» — երազում էր Վարազ-  
գուխտը:

Սակայն ի՞նչ փրկութիւն նրան, երբ ինքը՝ փրկիչը, ահա վոր  
վտանգի մեջ էր: Նա հազիվ էր հետևի դռնից մազապուրծ եղել,  
երբ Միհրնեբրսեհի մարդիկ եկել էին Վարազվաղանի տունը նրան  
տանելու: — «Ի՞նչ կլինի նրա վիճակը, երբ կապկապած նրան  
բերեն Հազկերտի առաջ...» — մտածում էր Վարազգուխտը, և  
արյունը սառչում էր նրա մեջ: Նա սարսափեց այդ պատկերից և  
աչքերը փակած սկսեց երազել Վասակի համար երջանիկ օրեր,  
երբ նա հաղթել է բոլոր թշնամիներին և արքայական նժույզ հե-  
ծած շրջում է Հայոց աշխարհում: Իսկ ի՞նքը ինչ կլինի, Վարազ-  
գուխտը... Թող ոչինչ էլ չլինի, թող դառնա նրա աղախինը, ան-  
նշան մի արարած նրա պալատում: Թող սպանվի, միայն թե նա  
փրկվի:

Արդեն լուսացել էր, մոտ էր արևագալը: Մոզը երգում էր՝  
դարթեցնելու համար ապարանքի բնակիչներին, որ դիմավորեն  
արևին:

Դուրս եկավ բակը: Գետափին զարթեցրին Վախթանգին: Նա  
վեր կացավ գիշերվա գինովութիւնից խումար ընկած, ժանգոտ:  
Ապարանքի ողջ բնակչութիւնն եկավ կանգնեց գետափին՝ արևին  
երկրպագելու: Սպիտակազգեստ մոզը՝ սև երկարմորուս՝ կանգնեց  
սևափայլ դեմքը արևելք դարձած: Արդեն դեղնել սկսած տերևնե-  
րը կաթում էին օդի ամենաթեթև շնչից: Գետափը դեռ դալար էր,  
և գետափի մեջ մարգարիտ էր հոսում: Արևելքը դարբասի պես  
բացվում էր: Մոզն սկսեց ռնգային ձայնով երգել արևագալին,  
որ նմանեց կարավանի զանգերի խառնաձայն զնգոցին, երբ նրան  
միացան իր օգնականների երիտասարդ ձայները: Հանկարծ դաշ-  
տերի խամ լույսը ժպտաց շորս կողմ. ծագեց արևը, և բոլորը հե-  
տևելով մոզին երկրպագեցին նրան:

Երբ առավոտյան աղոթքը վերջացավ՝ Վախթանգը հրավիրեց  
մոզերին նախաճաշի: Մատովակը կարմիր գինի բերեց, որ զվար-  
թացրեց բոլորին: Վախթանգի ժանգը մաքրվեց: Նա միայն ըն-  
գոստ շարժումով շուրջը նայեց.

— Ո՞ւր է հայր...

— Գնաց, — առաց Ֆրավաշին տխուր:

Վախթանգը զայրալի մոմաց, ապա կրկին հարցրեց.

— Իսկ Խորիշա՞ն ուր է...

— Այստեղ էր, գնաց իր օթևանը:

— Կանչեցեք մոտս, — հրամայեց Վախթանգը:

Խորիշան եկավ Վարազդուխտի հետ: Նա գունատ էր և տխուր:

Վախթանգը խեթ նայեց Վարազդուխտին և ապա դիմեց Խորիշային:

— Ո՞ւր գնաց սիրեկանդ...

— Ճամբար, իշխան:

Վախթանգը խոժոռովեց:

— Ոչ, նա ճանապարհ ընկավ Հայաստան: Գնաց, որ զորք բերի մեզ վրա՝ կործանի Երանը: Դու Երանի՞ դուստրն ես, թե՞ Հայաստանի...

— Երանի դուստրն եմ, իշխան...

— Հա՛ա, դե իմացիր, որ նա Երանն է ուզում կործանել: Այս առավոտը, այս ծառերը, այս գետակը, այս անուշ խշշոցը, սրբազան կրակը, արևը, երկինքը... Սա Երա՛նն է... Ապա մի ասա Երա՛ն...

Մոզը գինու գավաթը դատարկեց ու վայր դնելով գավաթը, ասաց.

— Մեկ՝ բարձր է Ահուրամազդաոն, մեկ էլ Երանը:

— Ծշմարի՛տ, ճշմարիտ, — ասաց Վախթանգը:

Երկու հաճույք կա, — շարունակեց մոզը, — մեկ ապրելը, մեկ էլ իշխելը աշխարհին:

— Ծշմարի՛տ, — ուրախացավ Վախթանգը, — Երանը տե՛րն է աշխարհի, ամենաբարձրը, ամենալավը: Մյուսները լավ են՝ եթե հնազանդ են Երանին: Մատու՛վկ, գինի՛: Երաժի՛շտ: Նստեցե՛ք բոլորդ:

Մատու՛վակը երկարավիզ կփից լցրեց կարմիր գինին: Կանչեցին երաժիշտներին: Նստեցին Ֆրավաշին, Խորիշան, քույրը:

— Համեցե՛ք, հայի՛ աղջիկ, — շնորհալի շարժումով հրավիրեց Վախթանգը մի կողմ քաշված Վարազդուխտին:

Նվազեցին: Աշնան սկզբի մեղմ ու պարզ եղանակը, — ոսկե-ձուլլ ծառերին ժպտացող արևի լույսը, գետակի մյուս ափին խաղողի այգու գանգուրները ուրախություն չէին բերում սեղանակիցներին: Տխուր էին միայն Ֆրավաշին, Խորիշան և Դիշտրիան:

Նրանք լուռ էին: Լարված էր Վարազդուխտը, որ տազնապի և հույսերի միջև տարուբերվում էր ու մտահոգվում:

Հանկարծ Վախթանգը ընդոստ շրջվեց դեպի Խորիշան:

— Գոռո՛ղ ազգից է սիրեկանդ, գոռո՛ղ հոգի: Ես իրեն չէ՛, որ պիտի սպանեմ, գոռո՛ղ հոգին պիտի սպանեմ...

Լուսթյունը, որ հետևեց այս խոսքերին, միայն լցվեց գետակի, ծառերի, թռչունների միախառն աղմուկով:

Վարազդուխտը ուշադիր հետևում էր այս խոսակցության: Նրա համար նոր հայտնություն էր հայոց այրուձիի փախստյան խոսքը:

Արևը բավական բարձրացել էր, որ սեղանը վերջացավ:

Վախթանգը գնաց ներս, մոգերն ու երաժիշտները ցրվեցին: Խորիշան Վարազդուխտին առավ հետը, գնացին գետակի մյուս ափի այգին:

— Արսեն իշխանը գնո՞ւմ է,— հարցրեց Վարազդուխտը՝ կարեկցաբար նայելով Խորիշային:

— Այո,— տխուր պատասխանեց Խորիշան:

— Հայոց այրուձին փախչո՞ւմ է...

— Փախչում է՝ եթե հաջողվի, շիմանան:

— Իսկ չե՞ն իմանում:

— Ոչ: Միայն իշխանն է կասկածում:

— Զգնա՞ հայտնի,— երկյուղ հայտնեց Վարազդուխտը:

— Զգիտեմ, կարող է...

Վարազդուխտն ընկավ մտորմունքի մեջ: Նա մի պահ Վախթանգի տանը իրեն ապահով էր զգում, բայց գիտեր, որ մեծապես վտանգվել է: Նրա մեջ զարթնեց կյանքը փրկելու կիրքը: Երիտասարդ կրծքի մեջ եռաց ապրելու և սիրելու անհուն հաճույքը: Փրկվել, փրկել նրան, բարձրացնել և ապա կրկին ջերմացնել նրա սերը, որ մարդպանական գործերի հոգսերում պաղել էր սկսում: Բայց առայժմ ի՞նչ սեր, ի՞նչ վայելք: Երկու կյանք էր հափկավոր փրկել: Վարազդուխտը տխրեց և լռեց: Իսկ Խորիշան, որ դեռ չէր ուշքի եկել Արսենից բաժանվելու վշտից՝ չէր զբաղվում Վարազդուխտով: Միայն երբ մի անգամ նա աչքերն հռոնց նրա դեմքին, նկատեց մահվան տխրությունը՝ խղճաց և ուշաքերվեց:

— Հա', Վարազդու՛ւխտ, քո գործը... Գնանք մայրիկին ըշտապեցնենք, որ քանի Հազարապետի մարդիկ չեն եկել քեզ տարել՝ ինքը շտապի Հազարապետի մոտ:

Խորիշան խելացի բան ասաց: Իրոք. պետք էր կանխել փորձանքը: Նրանք դարձան տուն: Ֆրավաշին սակայն չէր շտապում.

— Թող մութն ընկնի. հիմա վտանգավոր է: Թող Վարազդու՛խտը չերևա, ծառաներին կասենք, որ լռեն՝ երբ մարդիկ դան հարցնեն:



Անատոլիայի թախծալի դաշտերով դեպի Բյուզանդիա էր գնում հեծյալների մի խումբ: Առջևից մեծամեծները, հետևից նրանց թիկնապահներն ու սպասավորները: Բոլորը կլինեին մի քսան-քսանհինգ հոգի: Մեծամեծների մեջ էին Վահան Ամատունին, Մերուժան Արծրունին և Հմայակ Մամիկոնյանը: Սրանց ընկերացել՝ գնում էր նույնպես Բյուզանդիա մի գանգրամորուս — կնճիռ ճակատ անհաճո իշխանավոր: Դա Եղվարիոս ասորին էր, Կայսեր Դուռն ավագը: Եվ ապա՝ միացել էր մի հույն զորական, կապուտակն, կարմրադեմ և հաղթանդամ: Դա կայսեր սպարապետն էր՝ Անատուլը: Նա անբարեհամբույր տեսք էր տվել իր բավական լայն դեմքին և երևում էր, որ չէր սիրում հայ նախարարներին: Եղվարիոսն ընդհակառակը՝ շանում էր ուրախ պահել ուղեկիցներին, թեև կատակների և ծիծաղների արանքում զաղաւնի սառ հայացքներ էր նետում հայ նախարարների վրա: Ատելություն կար այդ մարդու մեջ դեպի հայերը:

Երևում էր, որ հայերը ևս չէին ախորժում իրենց ուղեկիցներից: Բայց պատահական հանգամանքներով ստիպված եղան միասին լինել: Բյուզանդիայում գործերը վատ էին գնում: Սպասվում էր հոների արշավանք Բյուզանդիայի վրա և միաժամ հայտնի էր դառել, որ Թեոդոս կայսրը հիվանդ է: Հայ դեսպաններին ուղեկիցները միացան Դարանաղիի մոտերքը և անբաժան գնում էին հետները: Սա մի փոքր կասկածելի թվաց Վահան Ամատունուն, քանի որ իրենք շարժվում էին ոչ զինվորական արագությամբ. մինչ Անատուլը կարող էր Եղվարիոսի հետ սուրհանդակային նեոյգներով արագ հասնել Բյուզանդիա: Սակավ էր խոստում Անատուլը, բայց ինչ էլ որ խոստում էր՝ անդուրեկան էր:

— Չեմ հատկանում, թե կայսրը ինչ կարող է անել ձեզ համար Հազկերտի դեմ,— ասաց մի օր Անատուլը, երբ արդեն մոտենում էին Բյուզանդիային:

— Կայսրը կօգնի մեզ, որ զսպենք Հազկերտի կիրքը: Նա միայն Հայոց աշխարհի թշնամին չէ, այլև Բյուզանդիո,— բացատրեց Վահան Ամատունին:

— Նա մեր բարեկամն է, որքան գիտենք մենք: Ունենք գաշինք: Ձեզ օգնել՝ կնշանակի՝ դաշինքը խախտել: Կարելի՞ բան է...

— Ոչ է կարելի, զորավար,— ձայնը բարձրացրեց Վահան Ամատունին դառնացած,— օգնել կարող է կայսրը՝ համոզելով Հազկերտին, որ իր կրոնակիցներին հանգիստ թողնի: Կհասկացնի, որ հայերը կաբող են անցնել Բյուզանդիո կողմը:

— Բյուզանդիո կողմը հայերը կանցնեն... Ի՞նչ է հայերի ուժը: Հայերը ուժ չունեն,— հզորի գաժան ու վիրավորական անկեղծությամբ ասաց Անատուլը:

Մերուժան սեպուհը քմծիծաղով նայեց Անատուլին.

— Բայց զօրավարը կարող է ինձ հայտնել, թե ինչո՞ւ կայսրը զիջեց Հազկերտին վերջին դաշինքի մեջ...

Անատուլը կարմրեց զայրույթից:

— Ի՞նչ զիջում...

— Ահա մի գեղեցիկ օրինակ: Կա՛ հզորից հզորը... Միջադեպի քաղաքնե՛րը... Ջիջեցի՞ք...

— Իրա պատճառն է Աթիլան: Աթիլան է գալիս Բյուզանդիայի վրա... — բարվոք համարեց խելացի խոսել Անատուլը:

Բայց Մերուժան սեպուհը չզիջեց.

— Ի՞նչ տեսնեք: Հազկերտի վրա էլ Քուշանաց աշխարհն է եկել... Իհարկե, Հազկերտը խելք չունի. նա ոչնչացնում է իրեն օգնական մի ժողովուրդ:

— Հը՛մ... օգնական ժողովուրդ...

— Այո՞՛ր, օգնական ժողովուրդ,— սրտմտած կրկնեց Մերուժան սեպուհը:

Մերուժան սեպուհը ուժգին մտրակեց իր նժույզը և մի քանի քայլ առաջ ցատկեց՝ չկամենալով խոսքը շարունակել ամբարտավան զորավարի հետ: Նրան արդեն սկսել էր այրել հունական գողոզությունը, որ նա զգաց հենց առաջին օրից, երբ սու գրեց

Հունաստան: Արհամարհանք էր տեսնում նա ամենուրեք, ուր խոսում, շփվում էր: Իսկ հիմա խոցվեց մինչև հոգու խորքը:

— Նրիտասարդ սեպուհը չի հանդուրժում դեսպանական պաշտոնը,— քմծիծաղեց Անատուրը:

— Կվարժվի՛, դեռ ունի՛ ժամանակ,— ասաց Վահան Ամատունին,— դեռ չի փչացել... թեպետ իրոք նա ոչ իբրև դեսպան է գնում կայսեր մոտ, այլ որպես գիտակ՝ ներկայացնելու զորական հանգամանքները Հայոց աշխարհի: Նույնպես և Հմայակ սեպուհը, որ գիտակ է ռազմական նյութեղենի:

— Ուրեմն ունե՞ք զորական ուժեր և ռազմական նյութեղեն,— հեզնեց Անատուրը:

— Մեղուն էլ խայթոց ունի...

— Օհո՛...

— Ձեզ խելացի մերժեց ձեր ազգի Վասակ Մամիկոնյանը, կմբժեն, ովքեր խելացի են,— լրացրեց Անատուրը և արհամարհանքով նայեց խոսակցին:

Անատուրի հեզնական եղանակը վիրավորական էր այլևս Վահան Ամատունին լռեց և այլևս չէր նայում նրա կողմը: Նրք նժուլգները հավասարվեցին Մերուժանի հետ՝ նա հառաչեց.

— Ո՛ւր են ուղարկում, ո՛ւր են ուղարկում մեզ...

— Իսկ դո՛ւ ինչո՞ւ եկար, Հազարապետ,— հարցրեց Մերուժանը դառնացած:

— «Ինչո՞ւ եկա»... Պետք էր մեր նախարարներին միաբան պահել, ուժերը հավաքել, շթողնել հուսալքվելու և ցրվելու, եկա որ գտնե հույների հուսով մերոնք իրենք հավաքվեն... «Ինչո՞ւ եկա»...

Մութը վրա էր հասնում: Փչեց սառն, խոնավ քամին: Անձրև էր կաթկթում: Ուղևորները հազան իրենց թիկնոցները, լռեցին և սկսեցին ունկնդրել նժուլգների դոփյուններին՝ խոնավ, տեղ-տեղ ցեխոտ ճանապարհի վրա: Վահան Ամատունին երեսը թաղեց գլխակալի մեջ ու սկսեց տխուր մտորել տաք օթևանի մասին: Մերունին հոգնած էր և դժվարությամբ էր գնում ճանապարհ: Իսկ Անատուրի գոհհիկ ու լկտի ծաղրանքին նա չէր դիմանում ավելիքս բան ճանապարհի դժնի պայմաններին:

— Մե՛ծ հույս էին դրել Հունաց ծառայության մեջ տաքացած հայ իշխանին, թող ուտե՛ն,— դառնացած բարձր խոսեց Ամատունին:

— «Ո՞ր են ուղարկում մեզ, ո՞ր ենք գնում»,— կրկնեց մտքում հայոց անկյալ Հազարապետը: Օշականի գաշտում հյուսիսականներին շարդող հին զորավարը դեսպան էր գնում Բյուզանդիա օգնություն մուրալու հույներից: «Մաղրանք կրեքենք ձեզ համար և ոչ թե զորքեր... Տե՛ղն է, տե՛ղն է ինձ, որ զիջում էի բյուզանդական հույսը տաքարյուն ներշապուհին: Ահա՛ Բյուզանդիան, այս լպիրշ զորավա՛րը... «մերազնյա խելացի իշխա՛նը...»:

Ցուրտը սկսեց սաստկանալ: Այլևս չկամեցավ ամուր փաթաթվել իր պատմուճանի մեջ ցրտից դողացող ծերունի Հազարապետը: Միևնույն է, չէր տաքանա ծերացած և հազար ու մի հարված տեսած մարմինը:



Մեծ Տիկնոջը յուրայինների հետ Տարոն գնալու ճանապարհին, հարգանքով և ուրախությամբ հյուրընկալեց Խորխոռունյաց տիկինը՝ Գաղիշոյի կինը: Խորխոռունյաց բնավայր բաղաբը Բզնունյաց ծովի եզերքին տոնական կերպարանք առավ Մամիկոնեից տիկինների, Արտակի և Անահիտի հյուր գալու առթիվ: Խորխոռունյաց տիկինը խնդրեց հյուրերին իր մոտ անցկացնել աշնանամուտը: Մամիկոնեից տիկինը շատ էր շտապում հասնել տուն և աշնան պատրաստությունները տեսնել, քանի որ ձմեռը ահագին բազմություն կգար հյուր Մամիկոնեից ամրոցը: Բայց Խորխոռունյաց տիկինը թախանձեց մնալ: Եվ մի այսպիսի զվարճալի միտք.

— Արտակիս ու Անահիտին կպսակենք՝ հետո աստված ձեզ հետ:

Մամիկոնեից տիկինը դժվարացավ:

— Միտքդ բարի, տիկին,— բայց պատերազմ է հիմի, օրե՛նք է, որ ուրախություն անենք:

— Պատերա՛զմ է, որ ուրախությունն էլ օրե՛նք է,— պնդեց Խորխոռունյաց տիկինը,— պատերազմ՝ պատերազմ, պսակ անենք՝ ուրախանանք:

— Խորխոռունյաց տիկին,— առարկեց Մամիկոնեից տիկինը,— իշխանին վաղը մյուս օր պատերազմ կկանչեն:

— Ի՛նչ, թող երիտասարդի աչքը կարոտ շննա,— նորից պընդեց Խորխոռունյաց տիկինը:

— Իսկ օրիորդի հա՞յրը, որ այստեղ չէ, առանց նրան կարո՞ղ ենք:— ասաց Շուշանիկ տիկինը,— շամփո՞ւրը կշարի մեղ...

— Հորը կկանչեմ,— ասաց Խորխոռունյաց տիկինը,— հեռուները չէ, Աղթամար է:

Խորխոռունյաց տիկինը պատմեց. Գեղեոնը իր ռազմական առաքինությունը կատարելուց հետո նրան հայտնել էր իր նոր նախատակը, վանք մտնել և ցույց տալ, թե ինչպես պետք է հավատարե պաշտպանել: Քանի որ բոլորն էլ գիտեին Գեղեոնի տարօրինակությունները՝ փոխանակ ջերմեռանդ վերաբերմունքի ծիծաղեցին միայն:

Իր հարսի ուրախ ձեռնարկին միանգամայն հավան լինելով Գաղիշոյի մայրը, կոտրած ժպիտը հանգիստ լիալուսին կլոր դեմքին՝ ասաց.

— Արե՛ք, արե՛ք, պսա՛կ արեք, գուցե Գաղիշոս լսելով ուրախանա՛ գա:

Խորխոռունյաց տիկինը սկսեց հարսանիքի պատրաստությունները այնպիսի լուրջ կատակ հանդիսավորությամբ, որ զվարճանք պատճառեց բոլորին: Իր ուրախ կատակներով նա բարձրացրեց հյուրերի տրամադրությունը:

Մամիկոնեից տիկինը տրամադիր շէր և գոհ շէր այս հանդեսի պատրաստություններից: Նա հիշեցրեց Գաղիշոյի և Ռըշտունյաց Արտակի արարքները, ջանում էր մի կերպ խափանել հարսանիքը: Բայց Շուշանիկ տիկինը իր մորը ուրիշ բան ասաց.

— Թող ընտանիքներին մեջ միաբանության ուխտ հաստատվի, և թող կանայք մեզ հետ լինեն իրենց ամուսինների դավաճանության դեմ: Ո՞վ գիտե, բան է, աշխարհ է...

— Սպարապետը պատեբազմ է գնում, անպատշաճ է, դըստրիկս,— առարկեց Մամիկոնեից տիկինը:

— Այլևս ուշ է, մայրիկ:

— Ծա չգիտեմ, դատրիկս,— թող Մեծ Տիկինը հրաման տա:

Գնացին Մեծ Տիկնոջ մոտ: Նա հանգիստ լսեց և ապա բացատրեց.

— Մինը պիտի գա, ծինն էլ ի՛ր հրամանն ունի, զավակներս: Որ պատերազմ է՝ գարունը չի՞ գալիս, հողը չի՞ բերում. պսակեցե՛ք, աշխարհի շենութունն է:

Խորխոռունյաց տիկինը նվիրակներ ուղարկեց Արծրունիք, Մոկք, Ռշտունիք, որ նախարարների տիկիներն ու սեպուհները զան Արտակի և Անահիտի հարսանիքի կոշունքին: Հատուկ նավ գնաց Աղթամար Գեղեցունի կոշելու: Խնդրակ գնաց Արտակի մորը հրավիրելու:

— Գեղեցունի համոզելը իմ պարտքը, — վստահացրեց Խորխոռունյաց տիկինը:

Հրավերն ընդունվեց: Ըստ երևույթին ծովեզրյա նախարարութունների մեջ ամենքին հայտնի էր Խորխոռունյաց տիկնոջ բարբի և կատակասեր բարքը: Եկան բոլորը, բացի Ռշտունյաց Արտակը, որ պատասխան անգամ չտվեց:

— Պտուղ է, հա՛,— ասաց Խորխոռունյաց տիկինը, — բայց բերել կտամ:

Արտակը տեղյակ չէր այս նորութուններին: Նա գնացել էր Տարոն գորական գործերով: Նա միայն սպասում էր, որ Մամիկոնյան տիկիները կամք հայտնեն տուն հասնելու, որով և Արտակի պարտավորությունը Վարդանի հանդեպ կատարված կլիներ: Մովեզրյա նախարարութունների տիկիները՝ Արծրունյաց տիկինը, Մոկաց տիկինը, Մամիկոնեից երեք տիկիները համաձայնվեցին և եկան Անահիտի ամուսնության: Չէր եկել Ռշտունյաց տիկինը, որովհետև Արտակ Ռշտունին տուն էր վերադարձել: Խորխոռունյաց տիկինը նրան կրկին հրավեր ուղարկեց, որ շնորհ բերի իր տիկնոջ հետ:

Արտառուչ էր Արտակ Մոկացի մայրը, Մոկքի տիկինը, հեզաբարո մի կին՝ թորշոմած սալորի տեսքով, լուռ ժպտացող բարակ շրթունքներով:

— Ո՛ւր է իշխանիկս, — ասաց նա ներս մտնելով դահլիճ:

— Գնացել է Տարոն, տիկին Մոկաց, սուրհանդակ ենք ուզարկել, որ հրամայի գալ:

— Տուն չպիտի՞ գա, — տարակուսեց Մոկաց տիկինը, — տեսնվի պատերազմից առաջ...

— Ի՛նչ պատերազմ, տիկին, հարսանիք ենք բերել իշխանին, — ասաց Խորխոռունյաց տիկինը ծիծաղելով:

Մոկայ տիկինը շվարեց, երբ Խորխոռունյաց տիկինը հայտնեց իր արտակարգ մտադրութիւնը:

— Խորխոռունյաց տիկին... Մոկայ իշխանը տո՛ւն ունի, ծնո՛ղ ունի... — սկսեց մեղմ դժգոհել թե զարմանալ տիկինը:

— Մոկայ իշխանի տունը հիմա սա է, ծնողն էլ ես եմ, — զվարճախոսեց Խորխոռունյաց տիկինը, — Արտակա՛ ինձ, Ողիմպիաս՝ քեզ: Համաձայն չե՛ս, տիկին Մոկայ:

Տիկինները ծիծաղեցին:

— Իհարկե, Ողիմպիաս իմ զավակն է, Խորխոռունյաց տիկին, միայն... Մի՞թե Մոկայ տունը շէր կարող Խորխոռունյաց տանը նեղութիւն չտալ: Խնայի՛ր պատվիս:

— Կգա՛նք, Մոկայ տիկին, Մոկայ տունն է՛լ կգանք, այսպես բոլորս մեծով-փոքրով, — զվարճախոսեց Խորխոռունյաց տիկինը:

— Օրիո՞րդն ով է, ա՛յդ իմանամ զոնե, — հուզվեց Մոկայ տիկինը՝ սրտում վիրավորված:

— Օրիորդը ծովափին է: Ռշտունյաց Գեղեոն սեպուհի դուստրն է:

Մոկայ տիկինը խորտակվեց: Իր նախարար զավակը կին առնի մի որեէ սեպուհի դստե՞ր... Բայց նա բարվոք համարեց լռել Մամիկոնեից Մեծ Տիկնոջ ներկայութեանը: Մանավանդ որ հարկ կար սպասել Արտակի գալուն, որը ամեն բան կբացատրեր: Միայն հարսանեկան հանդեսի պատրաստութիւնները վիրավորեցին. Մոկայ տիկնոջը:

— Բայց դարձյալ իր տանը որ լինե՛ր՝ ավելի պատշաճ կլիներ, — եզրակացրեց Մոկայ տիկինը:

Մամիկոնեից Մեծ Տիկինը ձեռը բարձրացրեց.

— Տունը տուն է, տիկին Մոկայ, աշխարհն ես՝ տանն ես: Արտակիս բախտն էլ այս հարկի տակ խնդաց, աղջիկս: Բախտին չեն զարկի:

— Է՛, Մեծ Տիկինը որ հրամայեց՝ ծառա եմք, — ասաց Արծրունյաց տիկինը հանդարտաբար և հաշտ, — հնազանդիր, Մոկայ տիկին:

— Հնազանդ եմ հոգով, սրտով, — գլուխը խոնարհեցրեց Մեծ Տիկնոջ կողմը Մոկայ տիկինը և հաշտվեց:

Խորխոռունյաց տիկինը իր ողջ սպասավորութիւնը դրեց հարսանեկան հանդեսի պատրաստութեան վրա: Խոհարարապետը

գնաց դաշտերը արշաւոներ ու ոչխար ջոկելու: Մառուսապետը բացւցնց դինիների մառանները: Արդեն կանչվել էին գյուղ գնացած տանու գուսանները:

Նույն օրը իրիկնադեմին տիկիները գնացին ծովափ: Ցանկութուն հայտնեց գնալ նաև Մեծ Տիկինը: Նստեցին խիճերին փռած գորգերին և բարձերին, ծովից հազիվ մի քայլ հեռու: Ամբողջի երեխաները, որոնց հսկում էին նաժիշտները՝ բռերը խփելցնելով նետում էին ափ վազող ալյակների վրա: Ոմանք հաց էին նետում ճայերին, որ օդի մեջ ծվծվալով խլում էին իրարից:

— Ահա գալիս է հարանացուդ, Մոկա՛ց տիկին,— ասաց խորխոռունյաց տիկինը՝ ցույց տալով շորս օրիորդների, որ գալիս էին հեռու ափից: Դրանք՝ Անահիտն էր, Ողիմպիան, մյուսը՝ ներշապուհի դուստրը՝ Շամունեն, իսկ չորրորդը՝ Աստղիկն էր: Ներանք գալիս էին ձեռ-ձեռի և զխներին աշնան ծաղկեպսակներ անցկացրած: Անահիտը գունատ էր մի փոքր:

Երբ օրիորդները մտեցան՝ խորխոռունյաց տիկինը շշնջաց Մոկաց տիկնոջը.

— Ահա սրանցից մեկն է, ընտրի՛ր:

Մոկաց տիկինը՝ զննեց շորս օրիորդներին և հայացքը կանգ առավ Անահիտի վրա: Նրա իմաստությամբ լցված աչքերում կար կյանքի ապրումների խոր կնիք:

— Ինչի՞ է գունատ,— հարցրեց Մոկաց տիկինը:

— Անզղի կովում վիրավորվեց:

— Հայրենիքի զինվո՛ր է... հասակի՛ն մեռնեմ,— խանդազատեց Մոկաց տիկինը և երեսը խաշակնքելով վեր կացավ տեղից, գնաց դեպի Անահիտը, գրկեց և աչքերը համբուրեց: Հետո արցունքները սրբելով՝ Անահիտի ձեռից բռնեց տարավ իր բարձի մոտ նստեցրեց գորգին:

Մյուսները շփոթվեցին և շիմացան ինչ անեն:

— Ինչո՞ւ մնացիք կանգնած,— ասաց խորխոռունյաց տիկինը,— եկեք նստեցեք Անահիտի մոտ:

Օրիորդները քաշվելով առաջ եկան և նստեցին:

Աշնան հեղ ու ջերմ երեկոն մեղմորեն հանգչում էր ծովափին ու ծովի վրա: Զուրը լրջանում էր: Միայն տեղ-տեղ անհամբեր մի ալիք արծաթե թևեր թափ ծափ էր տալիս՝ շտապելով շուտ հասնել ափ:

— «Շամիրամը» ծո՛վ հանեցեք,— հրամայեց Խորխոռուն-  
յաց տիկինը սպասավորներին:

— Հա՛, հա՛, հա՛,— կանչեցին երեխաները և ծափ տվին:

Մի փոքր անց բլուրի հետևից, ուր նավերի ծովախորշն էր, դեպի ծովը սահեց մի գորգազարդ, պնդաշեն, հաստակազմ նավ: Նա մի փոքրիկ շրջան գործեց դիմացը և ապա ցուրկն ուղղեց դեպի ափը, ուր նստած էին իշխանուհիները: Նավը սուրաց մի պահ և եկավ ուղիղ կանգ առավ ափի մոտ: Սև գանգրահեր նավաստին ցատկեց ափը և գլուխը խոնարհելով տիկինների առջև հրավիրեց նավ նստել: Կամրջակ դրին և ճարպիկ նավաստիները տիկինների թևերից բռնած բարձրացրին նավը: Երկարավուն գորգը ծածկել էր նավի հետնամասը: Փոքրիկ ասեղնագործ բարձերը որոշում էին ամեն մեկի բռնելիք տեղը նավի վրա: Նավի ցուրկը ներկայացնում էր մի կնոջ գլուխ, որի գիսակները թափվել էին ծովը: Սա էր «Շամիրամ» նավը:

Բուրբը նստեցին նավի հետնամասում: Միայն ամենից հետև կանգնեց նավավարը՝ կոշտ բեղերով, հուլանի կրծքով քաշառոջ մի նավաստի, իսկ ցուրկի մոտ նստեցին թիավար երիտասարդներ՝ արևառ դեմքերով ու օձալար մկաններով: Նրանց և տիկինների մեջ նստեցին գուսանները:

Նավավարը երեսը խաչակնքեց և դարձավ տիկիններին.

— Սովերս անփո՛րձ, տիկիննե՛ր:

— Աստվա՛ծ պահապան,— ասացին տիկինները և նույնպես երեսները խաչակնքեցին:

— Է՛, օրհնյա՛լ է աստված, առավե՛լ,— ձայնեց նավավարը:

Նավը ցնցվեց թիբրի հարվածից. օրորվեց ու սուրաց դեպի ծովի բացերը:

Ջրերն սկսեցին իրենց բազմազալար հոլովումը վարից վեր ու շուրջանակի: Նավն սկսեց պարել ու սուրալ, դեպի կապուտակ հեռուն:

Նախարարական տան երեխաները գլուխները գերծած և մի մի փունջ գագաթներին՝ եկան լցվեցին Մեծ Տիկնոջ շուրջը:

— Մեզ բա՛ն ասա, Մեծ Տիկին,— խնդրեցին նրանք գրկելով Մեծ Տիկնոջը:

— Ի՛նչ ասեմ, ձագուկներս,— մոռացել եմ:

— Ո՛չ, ո՛չ, բա՛ն ասա, Մեծ Տիկին,— պաշարեցին փոքրիկները: Մեծ Տիկինը շուշացրեց.

— Այ, տեսե՛ք՝ կապուտիկ ծովիկը. սա հինգ եղբոր քուրիկ է: Հինգ եղբայրն էլ ուվքե՛ր են. այ, տեսե՛ք,— և Մեծ Տիկինը ցույց տվեց Տարոնի ափերը,— նա Մամզունն է: Նա էլ նրա կողքին՝ Ռշտունը. այն մյուսը, որ ետ է քաշվել՝ Մոկքն է, նրա կողքինը,— այստեղ Մեծ Տիկինը «փի՛շտ» արեց և ձեռքով ետ զարկեց ծովի ալիքի ցալքունը, որ նրա գոգն էր քնկնում,— փի՛շտ, առաջ մի՛ գա, ծովի՛կ:

Երեխաները քրքջացին.

— Փի՛շտ, փի՛շտ, ծովի՛կ...

— Հա,— շարունակեց Մեծ Տիկինը,— այ, տեսե՛ք, Մոկքի կողքին, այս կողմ. նա էլ Արծրունն է, իսկ սա, որտեղ նստած ենք՝ սա էլ Խորխոռն է: Հիմա ի՞նչ է անում ծովիկը, հինգ եղբոր քուրիկը: Ընկել է հինգ եղբոր մեջտեղ, բոլորին շոյում է, ասում է՝ «չկուվե՛ք»:

— Լա՛վ է ասում, եղբայրներդ շփտի կովին,— ասացին երեխաները:

— Հաա՛... Մովիկը դրա համար ընկել է հինգ եղբոր մեջտեղ, սրան է փայփայում, նրան է շոյում, որ հանդարտ լինեն արտերը: Իսկ եթե կուվել եք ուզում, ասում է ծովիկը, կուվեցեք, ա՛յ, ներքովթի դեմ, որ տեսե՛ք՝ խեթ մտիկ է տալիս:

— Այն լե՛ռը,— հարցրին երեխաները:

— Մեր Նահապետ Հալկը, որ զարկեց Ներքովթի Բելին, ներքովթ Բելն ընկավ, միայն մեռնելիս ասաց. «Ծա կմեռնեմ՝ բայց կասեմ, որ հոգիս այս սարի մեջ ապրի, ինչքան նայեք ինձ՝ հիշեք»: Այ, սարը նա է՝ ներքովթը: Տեսեք ո՛նց է մոռվեր կապել ու խեթ-խեթ մտիկ տալիս:

— Ո՛վ է նա,— հարցրին երեխաները փեթ նայելով ներքովթ սարին:

— «Իս ներքովթ Բելի ոտին է: Թամի նա կա, հայոց թշնամին կա, կա ու կա: Ասա՛», փոքրիկներս:

Մեծ Տիկինը զրոյցի ժամանակ աննկատելի, քայց պատշաճ հեռավորության վրա մոտ էին հավաքվել սպասավորներն ու աղա-խիները և ականջ դառած ըսում նրան:

— Ա՛խ, Մե՛ծ Տիկին,— հառաչեց Արծրունյաց տիկինը,— ապա ե՞րբ պիտի վերջանա հայոց ազգի թշնամին:

— Մինչև ո՞ր քամիները ավա՛ղ-ավա՛ղ կհալեցնեն ներքովք սարը,— պատասխանեց Մեծ Տիկինը:

— Այդքան պիտի կովե՛նք, Մեծ Տիկին,— սրտնեղեց Խորխորունյաց տիկինը,— կվերջանանք կգնանք:

— Ապա հողի պահելը հե՛շտ գիտեք,— տխուր ասաց Մեծ Տիկինը,— գիտեք թե՛ Սպարապետս օ՞ր ունի, դադա՞ր ունի: Այ՛րեքե՛քս կուրանան: Մի՛շտ կովի մեջ, մի՛շտ կովի մեջ: է՛, ազգի կամքը սուրբ:

— Ի՛նչ են ուզում մեզանից թշնամիները, Մեծ Տիկին,— հարց տվեց Մոկաց տիկինը:

— Հոգին են ուզում շնչել,— ձգեց Մեծ Տիկինը,— առանց հոգու ի՛նչ ենք:

Երեխաները, որ բան չհասկացան այս վերջին խոսակցությունից՝ ընդհատեցին նրանց և փարվելով Մեծ Տիկնոջը թախանձեցին, որ էլի բան պատմի:

Երեխաներից մեկը մատը մեկնեց դեպի նավի ցուղը.

— Նա ի՛նչ կնիկ է, Մեծ Տիկին,— հարցրեց նա:

— Շամիրամն է, ձագուկս, ծամերի հուլունքները ծովն են ընկել՝ փնտրում է:

— Շամիրամն ո՞վ է, Մե՛ծ Տիկին, ի՛նչ հուլունքներ են,— աշխուժացան երեխաճեղերը,— պատմի՛ր, Մե՛ծ Տիկին:

— Ի՛նչ պատմեմ, գառնուկնե՛րս, — ասաց Մեծ Տիկինը,— պատմությունները ծովի մեջ են. ականջ դրեք՝ ծովը պատմում է: Երեխաները գլուխները դրին նավի եզրին և սկսեցին ականջ դնել:

— Չի պատմում, Մեծ Տիկին,— տրտնջացին երեխաները:

Մեծ Տիկինը պատմեց: Շամիրամը կրծքին ու պարանոցին հուլունքների մանչակ ուներ հուռթաժ (կախարդած). դրանով հաղթում էր քաջ զինվոր երիտասարդներին: Մերունի Նահապետ Ալբունը մի օր Շամիրամի լողացած ժամանակ հափշտակեց մանչակը և վազեց ծովը: Շամիրամը հետևից իր մազերի պարսատիկով քար նետեց Ալբունի վրա, բայց քարը չդիպավ: Ալբունը հուռթաժ հուլունքները ծովք նետեց և ազատեց բոլոր երիտասարդներին Շամիրամի հմայից:

— Այ, հիմա գուսանները կպատմեն,— միաշամտեց Խորխոռունյաց տիկինը և դարձավ դեպի գուսանները, որ արդեն պատրաստվում էին հանելու պատյաններից իրենց բամբիւն ու մյուս գործիքները:

Անահիտը, որ մինչ այդ իր խոհերի մեջ սուզված ընկողմանել էր ասեղնագործ բարձին՝ կանգնեց և սկսեց դիտել հեռուները:

— Ո՞ւմ ես սպասում, Անահիտ,— հարցրեց ոչ առանց երկ-գիմության Խորխոռունյաց տիկինը:

— Մովի ծայրն եմ ուզում տեսնել, տիկին Խորխոռունյաց,— պարզամիտ պատասխանեց Անահիտը:

Նրան հետևելով կանգնեց նաև Գաղիշոյի դուստր Ողիմպիան՝ խաժակն գեղեցկուհի, հրաշեկ մագերով, որ գալարվում էին նրա բարձրահասակ իրանի շուրջը: Երկու գեղեցկուհիները իրար բռնած և գլուխ գլխի տված նայում էին ծովին և շնչում իրար հետ:

Նավավարը, որ հանգիստ ու լուրջ ղեկավարում էր նավը՝ վազուց էր, որ սուր հայացքը նետել էր դեպի հարավ-արևմուտք և դիտում էր անխոս: Հանկարծ նա հրաման տվեց.

— Գաղա՛ա՛ա՛ր:

Նավաստիները դադարեցին թիավարելուց:

— Ի՛նչ կա, Բարթուղ,— հարցրեց Խորխոռունյաց տիկինը:

— Նավ է գալիս,— պատասխանեց Բարթուղը:

Նրա ձայնի մեջ զգացվում էր մի փոքր տագնապ: Եվ իրոք քաղաքից հեռացած, ծովի մեջ մենակ մի նավ այնքան էլ պատշաճ չէր բաց թողնել առանց պահանջների, որոնց չվերցրին՝ կարծելով թե փոքր տեղ պետք է նավին:

— Մեր նավն է, — ասաց վերջապես նավավարը և հանգիստ ձեռն առավ ղեկը:

Հեռավոր կետը խոշորացավ և վերջապես մոտեցավ նավին: Որքան եղավ նավողների ուրախությունը, երբ նրա վրայից լըսվեց Արտակի ձայնը:

— Ողջո՛ւյն տիկնանց, օրիորդա՛ց:

— Ողջո՛ւյն բարի, իշխան,— պատասխանեցին տիկինները և օրիորդները:

— Իշխա՛նը, իշխա՛նը,— ճշացին երեխաները և ծափ տվին: Մոկաց տիկինը վեր կացավ տեղից, կարծես կարող էր վազել իր զավակին գրկելու: — 276 —

— Մի՛ վեր կենա՛, մայր,— ձայնեց Արտակը,— կտեսնես  
ափին, չեմ փախչի:

Արտակի հայացքը լուսնկայի թախժոտ քողի մեջ որոնեց և  
գտավ Անահիտին: Նրանք իրար նայեցին ինչպես երևակայու-  
թյան մեջ, այնքան անիրական էր թվում լուսնկայի լույսը:

Նավում Արտակն էր, իր թիկնապահը և մի քանի զինվոր:  
Նրա հրամանով նավը ետ շրջվեց և սկսեց նավել «Շամիրամ»-ին  
գուգահեռ:

Ափից հեռացել էին բավական: Արևմուտքում ամպերն այր-  
վում էին: Արևն իր հնոցի ոսկեհալըը թափել էր ծովի վրա: Բյու-  
րավոր փրփուրների ծվեմներ կտրատվում, հուլունքների պես  
ձգվում էին ծովի երեսին: Սրանց հետ միասին ալիքների մեջ  
ալլալում էին կրակների անվերջ կայլակներ: Ողջ նավը հրդեհվել  
էր զարդարված տիկիների, աղախիների, նավաստիների ու  
գուսանների կերպարանքներով:

Կոճղանման գիրուկ գուսանապետը պատյանից հանեց բամ-  
բիոը՝ թավաձայն հաստալար մի գործիք և սկսեց լարել: Նրան  
հետևեցին երկու գուսանները, որոնցից մեկը աղեղնավոր լարա-  
վոր գործիք ուներ, մյուսը փոքրիկ թմբուկ: Նրանք իրար նայե-  
ցին և ապա սկսեցին նվագել: Արտակը իր նավը մոտեցրեց «Շա-  
միրամ»-ին և սկսեց ունկնդրել: Նվագը հյուսվում էր ալիքների  
շշունջին և թիերի շափահարումներին: Նվագն օրորվում էր: Օրոր-  
վում էին նավերը: Գուսանապետը ոգի առավ, վեր կացավ և դեմ-  
քի, ծոծրակի երակներն ուռեցնելով սկսեց Շամիրամի երգը:

Գուսանապետը հնչեղ ձայնով սաստեց կարծես ալիքներին,  
խոսեց ծովի հետ: Օրորվում էին նավերը, օրորվում էր ծովը,  
օրորվում էր նվագը:

Գուսանները նախերգ տվին.—

«Չույլք հուլունսն Շամիրամ,  
Չուռութք հուլունսն Շամիրամ,  
Ի ծոց ծովին ծածանեին,  
Ի ծով ծածան ծավալեին»:

Գուսանապետը հնչեցրեց.

«Մանյակ վառել կրծքին վառ,  
Չուռթեր հուլունսն սիրաշար,

Բազում քաջացն այրեր հար  
Հուռութք հուլունան Շամիրամա՞:

**Գուսանները հանկերգեցին.**

«Հուլք հուլունան Շամիրամա,  
Հուռութք հուլունան Շամիրամա...»:

**Հանկարծ Արտակր կանգնեց նավի մեջ և խլեց երգը.**

«Գեղն երեսաց էր արհշող,  
Ստինքն հմա լուսնկա,  
Ոչ զեն, ոչ զորք կարծին  
Կանգնել գլութին գիմակա՞»:

**Տիկինները խլեցին հանկերգը.**

«Հուլք հուլունան Շամիրամա.  
Հուռութք հուլունան Շամիրամա...»:

**Գուսանապետը անցավ իր զեկավար գեթին.**

«Միայն նահապետն Արման  
Խլեց հմայից հման,  
Զգեց ի ծովն մանյակն այն  
Հուռութք հուլունան Շամիրամա՞»:

**Գուսանները ուժեղ հանկերգեցին.**

«Հուլք հուլունան Շամիրամա,  
Հուռութք հուլունան Շամիրամա,  
Ի ծով ծովին ծածանեին,  
Ի ծով ծածան ծավալեին...»:

Լոեց երգը: Բայց դեռ օրորվում էին ալիքները, օրորվում էին նավերն ու նավորդները և ծովի երեսին հազարահյուս օրորվում, ձգվում, կտրատվում էին Շամիրամի փրփուր հուլունքները, փաթաթեիով «Շամիրամ»-ին, կանանց, աղջիկներին, Անահիտին և Արտակին...

Տիրեց ախորժ լուռություն: Օրորուն երազ:

Հանկարծ լուռության մեջ լավեց Մեծ Տիկնոջ պառավաձայն.  
երգը:

«Երկնե՞ր երկին և երկի՞՛ր,  
Նրկներ և ծիրանիի ծով»:

Կարծես քամին էր երգում տարօրինակ և օտարոտի, այնքան Մեծ Տիկնոջ ձայնը անսպասելի հնչյուն ուներ: Բոլորը լռեցին և կիսաժպիտ ունկնդրեցին ծերացած արծվենի այդ երգին, որից հնուժյուն էր բուրում: Անգամ երեխաները պատկառեցին և ուշադիր հետևեցին Մեծ Տիկնոջ խոսքերին, որից ոչնիչ չէին հասկանում:

Երբ Մեծ Տիկինը լռեց՝ Խորխոռուկաց տիկինն ասաց.

— Օրով կյանքո՞վ կշտանաս, Մեծ Տիկին:

Մյուսները նույնը կրկնեցին:

— Ապրե՛ք, զավակնե՛րս,—ասաց Մեծ Տիկինը,— Վահագնի սերո՛ւնդ ծաղկեք, ցեղերդ՝ վիշապաքա՛ղ:

— Մեծ Տիկին, Մեծ Տիկին, ո՞վ էր Վահագնը,—էլի կպան Մեծ Տիկնոջ օձիքից փոքրիկները:

Մեծ Տիկինը պատմեց վիշապներին ոչնչացնող Վահագնի առասպելը:

— Մենք է՛լ կդառնանք վիշապաքաղ,— գոչեցին փոքրիկները:

Մեծ Տիկինը տխրեց սակայն.

— Ա՛խ, մեծ վիշապը դռնե՛րս է, վաղը մյուս օր կմտնի տուն, ե՛րբ պիտի մեծանաք, ձագուկնե՛րս:

— Շուտո՞վ, շուտո՞վ, վա՛ղը կմեծանանք: Մե՛ծ Տիկին, մե՛ծ ծացրո՛ւ մեզ, Մե՛ծ Տիկին:

Բոլորը ծիծաղեցին:

Դեռ երկար նավում էին դեպի ծովի խորքը: Շուտով երեխաները գլուխները դրին բարձերին, տիկինների ծնկներին ու բնեցին: Նրանց ծածկեցին ոսկեթել ծածկոցներով:

Գիշեր էր մանում շորս բոլորը: Ափերը սևատեսիլ խոժոռվում էին հեռվից, իսկ լեռների սավերները շրջվել էին ծովի մեջ:

Մովի արևելակողմը, լեռների հետևի մի այլ լեռնաշխարհում մի խորին խորհուրդ էր կատարվում: Զահակիրների հանդես էր կարծես այնտեղ, որի հրացուլք բարձրացել էր երկինք: Հրացուլքն ուժեղացավ, և հանկարծ լեռան մեջքին ցլաշող պայթեց լուսնկայի պատրույգը և նրա ոսկեշառայլը տարածվեց ծովի երեսին:

Մովը լցվեց լուսնկայի թախծալի խորհրդով: Լեռները կորան աղոտ կիսալույսի մեջ և երազ թվաց ամեն ինչ՝ ալիք, նավ, եզերքներն ու լեռները... Վաղուց լռել էր գուսանների երգ-անոսապելը, և ջրերի շշնջուունը թվում էր մի ավելի դյուլթիչ առասպել:

— Լավ արեց նահապետ ծերունին, խլեց Շամիրամի հուռութքները, — ասաց Անահիտը, — թե չէ՝ բոլոր երիտասարդները կայրվեին:

— Բայց սիրո՞ւց կայրվեին, — երազանքով առարկեց Գաղիշոյի դուստրը:

— Իսկ ո՞վ պաշտպաններ երկիրը, ի՞նչ ես ասում, Ողիմպիա:

— Շամիրամը, — ասաց Ողիմպիան, — ամեն թշնամու զորք կհալեցներ հուռութքով: Ափսոս չէ՞ր հուռութքը, ծովը նետեց:

Անահիտը միտքը տվել էր լուսնկայի ալիքներին և երևակալություն մեջ պատկերացնում էր Արտակին, որի սերը իր սիրո հետ չէր այրում ոչնչացնում իրենցից ոչ մեկին, այլ ուժ էր տալիս ապրելու, կովելու:

Երեխաները վաղուց քնած էին ոսկեթել ծածկոցների տակ, և ծովի խոնավ շունչը ջերմության պահանջ էր զգացնում:

Մովափին ջահեր շարժվեցին: Դրանք սպասավորներն էին, որ գիմավորում էին ուշացած նավին:

Բոլորը իջան նավերից և ուղղվեցին դեպի ամրոցը: Արտակը գիմավորեց մորը և ապա առանձնացավ իր օթևանը: Նա շատ խորթ էր զգում իրեն այդ ամրոցում, որի տերը դավաճանել էր ու թեև հիմա իբրև թե համերաշխել: Նա չէր կարողանում անկեղծ ու վստահ խոսել Գաղիշոյի սեպուհների հետ: Ճիշտ է, ամրոցում ստեղծվել էր օտարոտի վիճակ, սեպուհների մի մասը հավատարիմ էր մնացել Գաղիշոյին և սպասողական, կարելի է ասել հակառակ դիրք էր բռնել Արտակի ձեռնարկումներին: Նրանք ամեն կերպ թաքցնում էին տեղեկությունները խորխուռնյաց զորքի և գինապահեստի մասին: Բայց նրանց մեջ կային և այնպիսիները, որ կողմնակից էին խորհնին, ուրեմն և վարդանանց: Նրանք էին, որ ծածուկ օգնում էին Արտակին, բայց այն էլ առանց հայտնի բարեկամություն ցույց տալու: Արտակը այնպես էր պահում իրեն, իբրև գործ ունի հավատարիմների հետ և չի նկատում ոչ

մի կողմի վերապահութիւնները և ոչ էլ մյուսի վստահութիւնները: Նա իրեն պահում էր իբրև հյուր և Մամիկոնեից տիկիներով ուղեկից իշխան:

Սակայն Խորխուռունյաց տիկնոջ բարեկամական վարմունքները մի պահ մոռացրել էին զորական-իշխանական հակամարտութիւնները և ստեղծել էին ինչ-որ մտերիմ, հաշտ մթնոլորտ:

Արտակին հայտնեցին իրեն պսակելու որոշումը: Նա անապրնկալի եկավ և խիստ հուզվեց: Նա դեռ շատ հեռուններն էր կարծում իր ամուսնութեան օրը, այն էլ ոչ իրական: Այնքան էր Անահիտի սերը ուղեկցվել փորձանքների ու դառնութիւնների շարանով, որ Արտակի հավատալն անգամ չէր գալիս թե ինքը կարող է այդքան շուտ ու դյուրին երջանկանալ: Անգամ այդ մտքով էլ նա իրեն տվել էր զորական գործին, շրջում էր նախարարութիւնները: Հաշվում, չափում էր զորքերի հնարավոր թիւը, զինավորումը և պատերազմ դուրս գալը, երբ օրը հասներ:

Իր հարսանիքի լուրը իսկույն մեղկութիւն լցրեց նրա հոգում: Նա մի քաղցր և հաղթահարող ճմլոց զգաց կրծքի տակ: Անկարող սրտում կրել այդքան մեծ հուզմունքի բեռը, նա դուրս եկավ օթեկանից, բարձրացավ կտուրը: Սովը բացեց իր լայն կուրծքը նրա առջև: Կիալուսինը հանդես էր բացել երկնքում ու երկրի վրա: Հանդիսավոր գիշերը կլանում էր ամեն միտք և տանում էր մաքուր դու դեպի մեծ խորհուրդները:

— Ախր ի՞նչ է պատերազմը, ո՞ւմ է ուրախացնում, — շշուշաց Արտակը, իր դրութիւնից իսկույն անցնելով իր մշտական մտածմունքին: — Զլինե՛ր պատերազմը, ուրախանայի՛նք, — դառնորեն վրա բերեց և գնաց նստեց ամրոցի ատամին:

Պահակը կասկածեց, եկավ անցավ նրա մոտով՝ լուռ զինվորական պատիվ տալով:

Շատ ուշ չէր, և բոլորը քնած չէին: Արտակը ինչ-որ ջշնոց լսեց իր օթեկանի կտուրի եզրին, ներքեկից: Մինչև նա կգնար այն կողմ՝ իրար հետեից քարե սանդուղներից կտուրը բարձրացան ամրոցի օրհորդները: Նրանք զուսպ ծիծաղով մտտեցան Արտակին: Նրանց մեջ էին Ողիմպիան, Անահիտը, Աստղիկը և մյուս նախարարների դուստրերը:

-- Իշխան, — մտտեցավ առաջինը. Ողիմպիան, — ե՛րբ կվերջանա պատերազմը:

— Դեռ ո՞ւր է պատերազմ, օրիորդ, — ծիծաղեց Արտակը, —

տոր է սկսվում:

— Օ՛Ֆ, այնպես վատս գալիս է, որ պատերազմի խոսք է լի-  
նում: Ուզում ենք մի գնալ պտտվել ծովի շուրջը:

— Էլի կարող եք, օրիորդ Խորխոռունյաց, — ասաց Արտա-  
կը, — ծովը տեղից չի փախել:

— Ի՞նչ իմանամ, ասում են շուտով պարսիկները կմտնեն  
Քրկիր:

— Չենք թույլ տա, օրիորդ Խորխոռունյաց:

— Պարսիկներին կարո՞ղ ենք հաղթել որ, իշխան, — ոչ ա-

րանց հեզնանքի հարցրեց Ողիմպիան:

— Կարող ենք թե չենք կարող՝ բացի հաղթելը ուրիշ հնար  
չունենք:

— Այդ ինչպե՞ս պիտի լինի, իշխան, — հարցրեց Արծրուն-  
յաց օրիորդ Շամունեն սե հուլունքների նման աչքերն ամաշկոտ  
Ֆլորով կկոցելով:

— Պիտի զինվորվենք բոլորս՝ այրմարդ-կին, ծեր-երեխա,  
լամիկ-իշխան: Ով կենդանի է, առողջ է, ով կա, ով շնչում է  
Պարսիկը գալիս է ոչնչացնելու մեր հայրենիքը, մեր ոգին, մեր  
լամեն ինչը: Դրա համար էլ մենք պիտի պարսիկի դեմ հանենք  
մեր հուսկ վերջին ուժերը:

— Մեր ամեն ի՞նչը, իշխան, — հարցրեց վախով նորից  
Արծրունյաց օրիորդը, որ թեև լավ չհասկացավ Արտակի ասա-  
նից, բայց ճնշվեց հոգով ինչ-որ ահեղ թան երևակայելով, —  
աչինչ, ո՞չ մի բան չպիտի մնա...

— Ոչինչ, ոչ մի բան, — խստորեն շեշտեց Արտակը, — ոչ  
այս ծովը, ոչ այս երկիրքը, ոչ հողը, ոչ մի բան, ոչ մի կյանք:

Բոլորը լռեցին մտածելով Արտակի ասածների մասին:

— Իսկ եթե պարսիկ դառնանք, իշխան, մեկ չէ՞, էլի ծովը,  
երկիրքը, երկիրը, կյանքը չե՞ն մնա... — հանկարծ հարցրեց  
Ողիմպիան:

— Վա՛յ, — համարյա միասին ցնցվեցին օրիորդները:

— Ապա ի՞նչ: Պարսիկը չի՞ նայում այս բոլորին, չի՞ ուրա-  
խանում: Պարսիկը ծով չունի՞, երկիրք, կյանք չունի՞...

— Ի՞նչ ես ասում, օրիորդ Խորխոռունյաց, — հանդիմանեց  
Շամունեն՝ մի տեսակ քաշվելով Արտակից, որին չէր կարելի

առարկել իբրև գիտուն նախարարի, թեև ինքն էլ կարծես նույնն էր մտածում, ինչ Ողիմպիան:

Զենց այս պահին եկավ Զոհրակը: Նա դեռ ճանապարհի փառջուս և քրտինքի մեջ էր:

— Վա՛յ, իշխա՛նը, իշխա՛նը,— ուրախացան օրիորդները և դեմ վազեցին դիմավորելու Զոհրակին:

Զոհրակը հոգնած ժպտով ողջունեց օրիորդներին և Արտազ կին և առաջ եկավ: Կարճ հարցուփորձից հասկացվեց, որ Զոհրակը շտապ գործով է եկել, բայց նրա խոսելու ձևից երևաց, որ բաներ ունի միայն Արտակին հայտնելու: Ուտոի և Արտակը կարճ կապեց, անցավ իր զրույցին:

— Զեմ ասում պարսիկ դառնանք,— պաշտպանվեց Ողիմպիան՝ շարունակելով վեճը,— ասում եմ՝ այնպես, որ պարսիկ դառնանք, աշխարհը աշխարհ չէ՞:

— Աշխարհ է, օրիորդ՝ խորխոռունյաց,— ասաց մի փոքր խորհելով Արտակը,— բայց ի՞նչ կանես՝ եթե տանից, քաղաքից, գյուղերից, ծովից ողջ աշխարհից դուրս գնան, հեռանան հարապատ, բարեկամ, ժողովուրդ, մարդ-էակ՝ ամենքը: Գնան, տանեն շեները, վանքերը, պապերիդ գերեզմանները, մտքիցդ տանեն ամեն հին ու նոր, նախնիներիդ հուշերը: Ամեն, ամեն բան, մի խոսքով քո հոգին: Կանգնեցնեն դատարկ ծովի, երկնքի ու երկրի առաջ: Ի՞նչ կանես:

— Աստված հեռու տանի, իշխան, ի՞նչ սարսափելի բան ասացիր,— ասաց Շամունեն՝ վախեցած այդ մտքից:

— Կապրենք պարսիկի՝ հոգով,— համառոց Ողիմպիան, որ քստ երևույթին ժառանգել էր հոր մտքի համառությունը:

— Ախր մտածիր ի՞նչ ես ասում, օրիորդ՝ խորխոռունյաց,— կրկին հանդիմանեց Շամունեն Ողիմպիային:

— Ի՞նչ եմ ասում, պարսիկի հոգին հոգի չէ՞:

Արտակը ընդոստ շրջվեց դեպի Ողիմպիան, և սուր նայեց նրան: Ողիմպիայի խաժ աչքերում ինչ-որ դիվական, դավաճան բան կար: Արտակը չէր կարծում թե կհանդիպի այնպիսի մի վտանգավոր հակառակորդի: Ողիմպիան ոչնչացնում էր Արտակի ողջ միտքը, ողջ իմաստությունը: Արտակը լարվեց: Պետք էր ուժեղ հարված տալ: Ողիմպիան հագիվ նկատելի հեգնությունք ժպտա-

կողմ սպասում էր պատասխանի: Արտակը հավաքեց ու լարեց միտքը:

— Պարսիկն էլ է ապրում, նրա հայրենիքն էլ հայրենիք է, կյանքը կյանք: Բայց իմ արյունը մարմնիցս թափեն և ուրիշը լցնեն: Չէ՞ որ իմը կոչնշանա: Ինչո՞ւ ոչնշանա:

— Պարսիկը ուժեղ է, ստիպում է, ի՞նչ կարող ես:

— Աթըլն էլ պարսիկից է ուժեղ: Աթըլից մեծն էլ Աթըլից է ուժեղ:

— Աղվեսը կուտի հավին, գայլը՝ աղվեսին, առյուծը՝ գայլին: Վերջը մնում է էլի կյանքը: Ինչ ուզում է շլինի՞ կյանքը կա ու կա: Ես հարցնում եմ՝ կյանքի՞ն ինչ վնաս:

Բոլորը ծիծաղեցին Ողիմպիայի բերած օրինակից և մրցման թափը կոտրվեց:

Զոհրակը զարմացած նայեց Ողիմպիային և մտածեց. «Ի՞նչ խելացի օրիորդ է»:

Նա միաժամ նկատեց, որ հուզված իրեն է նայում Աստղիկը: Նա ոչ մի նշանակութուն չտվեց այդ հայացքին: Բայց անախորժ եկավ իրեն Աստղիկի համառ հայացքը: Մի կարճ վայրկյան անգամ այն էլ մտածեց, որ Աստղիկը գեղեցիկ չէ:

Վե՛ր տեղի տվեց խաղաղ զրույցի: Արտակը պատմեց իր կյանքից դեպքեր Աղեքսանդրիայում, Բյուզանդիոնում, Սիրիայում: Պատմեց Աղեքսանդրիայի ճեմարանների մասին, ուր փրկի-տփաններն ու աշակերտները խմբված փիլիսոփայում են տիեզերքի մասին:

Օրիորդները լավ էլ չէին հասկանում այդ փրկիսոփայելը: Բայց գուր էր գալիս լսելը այդպիսի մի կյանքի, հեռավոր լուսավոր երկրների մասին: Ողիմպիան էր միայն գլխի ընկնում թե խոսքն ինչի մասին էր:

— Ե՛րբ պիտի ճեմարաններ մեզանում էլ լինեն, որ մենք էք գնանք սովորելու, — ասաց կարոտով Շամունեն օրիորդը:

— Ոչինչ, երբ կհաղթենք՝ մենք էլ բաց կանենք ճեմարաններ, — ասաց Զոհրակը:

— Մեզանում ևս կան ճեմարաններ, — ասաց Արտակը, — բայց նրանք թաքնված են վանքերի պարիսպներում: Մենք ևս ունենք փրկիսոփաներ, որ քննում են մարդն ու տիեզերքը:

— Ովքե՞ր են, իշխան,— հարցրին օրիորդները միասին՝ հետաքրքրված:

— Մովսես խորենացին, Եզնիկ Կողբացին: Նրանք մեծ փառլիստփաներ են, ուսել են Աղեքսանդրիա, Բյուզանդիոն, Սիրիա: Մովսես խորենացին սկսել է Հայոց մեծաց գիրքը: Նոր է տվեց վերջին դրվագները, և արդեն բոլոր իշխանական տները ձեռք են բերում: Ահա Եզնիկ Կողբացին քննում է աշխարհը, բնությունը:

Աստղիկը նայում էր Ձոհրակին մերժվածի և համակերպվածի սիրով: Նա ինքը դատապարտել էր իրեն այդ անփոխադարձ զգացմունքի գաղտնի սրտմաշուկին և հիմա կրում էր դրա տառապանքը: Թե ինչո՞ւ նա իրեն արժանի չհամարեց Ձոհրակին՝ հայտնի չէ: Բայց այդ ինքնապարտված վիճակը նրան խեղճացրեց և ճնշեց: Նա միայն մի իրավունք ուներ հիմա. նայել սիրած էակին, սպասել նրան ծառայելու որևէ առիթի, և այնուհետև մեռնել՝ առանց որ նա իմանա իր գաղտնի վիշտը: Այնպես որ՝ երբ Ձոհրակի հայացքը պատահմամբ առնում էր նրա հայացքին՝ Աստղիկը վիրավոր եղնիկի նման աղաչական արտահայտությամբ դիմում էր կարծես Ձոհրակին, որ սա խնայի իրեն:

Արտակը խոսում էր ոգևորված, մեծ հուզմունքով, կրքով, որ հասկանալի չէր օրիորդներին բոլորին: Նա այնպիսի զայրալի շեշտով էր պատմում Հայոց աշխարհի մասին, կարծես վատ էր, որ այնտեղ կար գիր ու գիտություն, խոսք ու արվեստ: Բայց Ողիմպիան հասկացավ:— Արտակին տիրել էր տագնապը, որ այդ ամենը ոչնչացնելու է գալիս պարսից բռնակալությունը:

Արտակը նկատեց, որ օրիորդները համակվում են այն մի զգացմունքով, որով և ինքն էր տոգորված: Թեև նա իր մեջ խոստովանեց, որ չկարողացավ ուժեղ հարված տալ Ողիմպիայի խորթ մտքերին: Նա ըմբռնեց, որ իր մեջ ուժեղ էր հայրենիքի զգացումը միայն, բայց իմաստը չէր կարողանում ո՛չ գտնել, ո՛չ սլաշտպանել: Նա մի փոքր լռեց և սկսեց խորհել այս մասին:

Մինչ երիտասարդ նախարարներն ու իշխանական տոհմիկ օրիորդները վիճում էին ոգու և աշխարհի, հայրենիքի ու կյանքի առեղծվածի մասին՝ բնությունը դարձնում էր այդ կյանքի ճախարակը իր անհուն երկնքում, լայն երկրի, ծովի վրա՝ լցնելով

Մտառաղ հոգիների մեջ սուր կարիք,— այդ կյանքի կարիքը, նրա վայելքը: Արտակը խոսելիս մեկ-մեկ հայացքը սահեցնում էր Անահիտի գեմքին ու իրական խոսում էր նրա հայացքի միջոց մի տնայիսի ջերմության, որ միայն կարող է կենդանի հոգին ու մտառաղ արյունը տալ: Նա զգում էր, որ թեև այդ պահին նա չէր խոսում Անահիտի հետ, բայց Անահիտը հասկանում է իրեն՝ ոչ մաքուր, բայց սրտով, և դրանից է նրա սերը խորն ու անհուն: Արտակին թվում էր թե այդ պահին (և միշտ է՛լ) ուր ինքն է նա-յում՝ նույն տեղն է նայում նաև Անահիտը, նույնը զգում, որ Անահիտը հոգով իր հետ է ամենուրեք: Եվ դա՛, դա՛ է ավելի խորը կապում իրեն Անահիտի հետ: Այդ հոգեկցությունը...

«Այդպես էլ հայրենիքը,— մտածեց Արտակը,— այդպես էլ կյանքը»:— «Կյա՛նքը— հետո հանկարծ հարց ավեց ինքն իրեն Արտակը,— ինչո՞ւ նաև կյանքը»...»

Այս միտքը եկավ, բայց և թուով իսկույն նրա գլխից: Նա չկարողացավ ըմբռնել, հասնել հետևից: Նա թողեց նրան հետա-ժուա լինելը: Բայց զգաց, որ մի նոր աշխարհ բացվեց իր աչքին մի ակնթարթ, բայց և որը իսկույն ևեթ շքացավ:

Արտակը այս խոհերի հետ էր, որ օրիորդները կարծելով թե նա հոգնած է՝ գիշերային բարեմաղթություններն անելով իջան կտուրից: Արտակին զբաղեցրեց, դուր եկավ Ողիմպիայի վիճաբա-ւեզ հոգին:— «Տե՛ս գավաճանը ի՞նչ դուստր ունի... Ափսո՛ս»:

Երբ մենակ մնացին Ձոհրակի հետ՝ Արտակը հարցրեց Արտա-շատի մասին: Ձոհրակը շատ վրդովիչ բաներ պատմեց վասակ-յանների մասին: Երևաց, որ Ատոմի դիրքը շատ էլ ամուր չէ: Ար-տակը պատմեց իր կատարած գործերի մասին: Որ Ռշտունյաց նախարարի ներկայությունը խանգարում է համերաշխություն ստեղծել Բզնունյաց ժողի նախարարական զորքերի մեջ:

— Իսկ ինչո՞ւ եք հավաքվել այստեղ,— հարցրեց Ձոհրակը: Արտակը պատմեց: Եվ վերջում էլ ծիծաղեց:

— Ինձ այստեղ հարս փեսա են խաղացնում:

— Կա՞մ ժամանակը գտել են,— նեղացած ասաց Ձոհրակը: Կշտամբանքը վերաբերում էր նաև Արտակին: Բայց նա լռեց: Ձոհրակը հոգնած՝ հորանցեց.

— է՛, ես գնամ քնելու, մարմինս դառել է տոպրակն ածած ցակերտի: Բարի գիշեր:— Ձոհրակը գնաց:

Արտակը նայում էր Քզնունչաց ծովին, որ այդ երեկո զարթ  
մանալի խաղաղ էր և խոհուն: Արտակի մտքերը գնացին հեռու, դե-  
պի վաղ մանկութեան կյանքի հուշերն ու պատկերները: Զգիւթ  
ինչպես դուրս լուպաց խոր անցյալի մշուշից նրա տատիկի երազի,  
պեռ երերուն, անիրական կերպարանքը: Մշուշային կիսալույսի  
մեջ նստած է նա սրահը, բարձին, և դեմքը հատակին խոնարհած՝  
խոսում է ինքն իրեն: Արտակը հիշում է, իր մանուկ ժամանակ  
ասում էին, որ տատիկը խոսում է նախնիների հետ՝ ընդունելով  
որ նրանց ստվերները շրջում են ամբողջում և օթևանների ան-  
կյուններում: Արտակը ամբողջ ստվերների մեջ զգում էր նրանց  
ներկայությունը, և խորին ակնածանքով էր նայում իրենց ամբո-  
ցին, որը Արտակի աչքում կյանքի շափ հին էր ու հարատև: Մի  
անգամ, — հիշում է Արտակը, — նա իր տատիկի հետ գնացել էր  
գերեզմանատուն: Գերեզմաններից մեկի կողքի դեղնահողը մեք-  
կացել էր անծրկից: Տատիկը դողահար մրմնջում էր: Մինչդեռ  
Արտակը նայում էր դեղնահողին: Տատիկն ասաց նրան, որ այս  
տեղ հող են գարձել նրա պապերը: Եվ պատմեց նրանց սխրա-  
գործությունների մասին: «Զգո՛ւյշ կոխիր հողը, նախնիների փո-  
շին է», — ասաց տատիկը: Արտակը, որ լսում էր և միաժամ նեղ-  
յում հողին՝ մտածեց, որ դեղնահողը մեռած նախնիներն են: Նա  
երկյուղ զգաց, Երկյուղ դեպի հողը: Ու այնուհետև ուր լինեք, սր-  
բան հողի նայեք՝ նրան թվում էր, թե այդ հողում ապրում են  
նախնիներ, անվերջ նախնիներ: Եվ հողի մեջ տեսնում էր կյանքի  
շարունակական թելը դեպի մի անհայտ, անվերջ սկիզբ: Տարօր-  
նակ էր Արտակի տատիկը, և Արտակը շատ էր կապված նրան  
այդ պատճառով: Քանի՜ անգամ էր տատիկը բարձրացել ամբողջ  
կտուրը, որտեղից սիրում էր դիտել ձորերն ու հովիտները: Լեռ-  
ներին նայելով տատիկը պատմում էր նրանց մասին, թե ո՞րի  
լանջին կամ գագաթին կոխվին են մղել իրենց նախնիները: Հե-  
ռուն, մշուշապատ կապույտի մեջ երևում էին սևինքներ. դա վան-  
քեր էին և ամբողջիկներ: Արտակի տատիկը պատմում էր, որ նը-  
րանց մեջ սեացած գրքեր կան նախնիների սխրագործություննե-  
րի մասին: Արտակը տեսնում էր տեսնել այդ գրքերը: Եվ այնու-  
հետև ամեն սեացած մագաղաթ պատմություն էր նրա համար  
Հետո երեկոն իջնում էր հովտի վրա, ձորերը խոժոպում էին, եր-  
կիրը կապտում, հետո սևանում, երկնքի անդունդից դուրս էին

լողում աստղերը: Աղախինները անկողիններ էին փռում կտրանը, և Արտակի տատիկը երեխաներին պառկեցնում էր քնելու: Մի երեկո էլ, դեռ երեխաները չքնած՝ ցույց տալով մի համաստեղութուն՝ ասաց. «Ա՛յ Հայկը, մեր Նահապետը: Զար Բելին հաղթեց և հիմա երկնքում է ապրում»: Երեխաները նայեցին երկնքին և լավ էլ շտեպան, թե որոնք են այդ աստղերը. միայն Արտակը մի կերպ գտավ տատիկի ցույց տված տեղը և աստղերը: Կրակե զրահներ տեսավ նա և կրակե նետաղեղ: Նա ուղղակի տեսավ բոցեղեն մի մարդ, կրակե մազմորուքով, հոնքերով ու թարթիչներով, բոլորը կրակ և պատկառեց:— «Ինչքա՞ն պիտի մնա երկրնքում Հայկ Նահապետը»,— հարցրեց Արտակը:— «Մի՛շտ, հավիտյա՞նս հավիտենից»,— ծոր տվեց տատիկը: Թեև բնավ չըհասկացավ Արտակը այդ հավիտյանս հավիտենից խոսքերը, բայց չգիտեա ինչու՝ սարսուռ զգաց ողջ մարմնով:

Ինքնամոռացութեան մեջ Արտակը գնացել սուզվել էր հայրենիքի բյուրավոր տեղերի, պատկերների աշխարհում: Ո՞ւր ասես, որ նա չէր ապրել, շփվել մարդկանց հետ, գործել... Որքա՞ն հուշեր... Ամենքը ծանոթ, մտերիմ, հուզիչ... Ու քանի խորն էր թաղվում այդ հուշերի մեջ, այնքան խորանում, մեծանում, անվերջանում էր հայրենիքը:

«Ինչպիսի՞ բան է, ինչպիսի՞ բան է...»,— ասաց մտքում Արտակը չպարզելով սակայն թե այդ ի՞նչն էր և ինչպիսի՞ բան: Եվ աչքերը կրկին փակեց մտքով շրջելու բովանդակ հայրենիքում, աչքի առաջ բերելու մի անվերջ, անհուն կյանք: Կարծես նա հայրենիքում ապրել է երկար դարեր, ապրել նախնիների հետ, Հայկի հետ, կարծես տեսել է նրանց կոիվները, կյանքը:

Արտակը չէր կարողանում իր զգացումներն ու խոհերը որոշել ու ինքն իրեն բացատրել: Նա զգում էր, որ իր հայրենիքը մեծ է, մի անհուն աշխարհ կյանքով լի: Զգում էր, որ այն ամենից թանկը, որ կյանքն է՝ հայրենիքում է միայն ամենից խոր զգացվում: Որ այդ կյանքը հայրենիքում նրա համար է խոր, որ վաղեմի է, ամբոխված է բյուրավոր դեպքերի ու մարդկանց գործերով: Որ երբ հայրենիք ես ասում՝ հանկարծ միանգամից զարթնում են բյուրաբյուր պատկերներ: Եվ որ կյանք ասածդ այդ բյուրաբյուր պատկերներն են, մտերիմ, ծանոթ մարդիկ:

Արեւելոյն յայտնաբերուած ու ճնշուած հեռացել էր իր օթեանը Աստղիկը: Չոհրակի հանկարծ երևալը նրան բոլորովին շփոթեցրեց: Քանի Անգղում էին և զբաղուած էին ճակատամարտով և ապա էլ Անահիտով՝ կարծես դուրին էր ապրել ընդհանուրի կյանքով: Բայց հիմա, երբ մի փոքր կյանքը կարծես խաղաղվեց՝ Աստղիկի հոգին տարվեց երազներով: Ողջ գիշերը նա աչքը բաց նայում էր քարակոփ առաստաղին, և նրա աչքին հազար ու մի շարժումներով նրբորովում էր ռազմիկ իշխանի հրամայական հասակը, արծվենի աչքերը: Ինչպե՞ս պիտի լինի սրանից հետո, ի՞նչ է սպասում իրեն...

Եվ Աստղիկը լռիկ հեկեկաց:



Ամեն բան պատրաստ էր Արտակի և Անահիտի հարսանիքի համար: Միայն անհամբեր սպասում էին Ռշտունյաց նախարարի, Անահիտի ծնողների և քրոջ՝ իշխանուհու, ժամանման: Սա կարեւոր էր Անահիտին ազատելու համար հետագա մեծ անախորժություններից:

Հարսանիքի հանդեսի բոլոր անելիքներն արված էին: Մթերքը շտապուհներն շուրս էր թափած մառաններից ու պահեստներից: Ամբողջում տոնական էր ամեն ինչ:

Երկու օր անց, իրիկնադեմին փողերի հնչյուններն ավետեցին Ռշտունյաց նախարարի և Անահիտի հարազատների գալուստը: Նրանք ճանապարհվել էին ցամաքով: Նրանց մեջ չէր սակայն Գեղեոնը: Շատ անախորժ էր այս բոլորի համար: Առանց նրան հարսանիքը չէր լինի:

Երբ հարցրին, Եսթերը՝ կինը, ասաց, որ Գեղեոնը ինչ հեռացել է Ռշտունիքից՝ դեռ տուն չի վերադարձել, ապրում է Աղթամարում: Նա այս ասաց առանձին տագնապով, որ լավ հասկացավ Անահիտը:

Ռշտունյաց նախարարը ամբողջ մտավ տան մարդու վստահությամբ: Խորխուռունյաց ողջ ցեղը նույն մտերմությամբ ընդունեց նրան: Բոլորի տրամադրությունը բարձրացավ: Ռշտունյաց նախարարի ժամանումը Արտակի և Անահիտի պսակի հանդեսին

մասնակցելու՝ համարվեց մեծ մտերմութիւն երկու նախարար-  
ների համար և հաշտ վերաբերմունք դեպի Խորխոռունյաց տիկ-  
նոջ ձեռնարկաւմը:

Ռշտունյաց նախարարը եկել էր որսի բարակներով, ծառա-  
ներով ու զինվորներով: Նա մտադիր էր ուրեմն երկար մնալ հյուրս  
ժամանակ կար սպասելու Գեղեոնին, որի ժամանումը Ռշտունյաց  
նախարարը համարում էր անհրաժեշտից անհրաժեշտ:

— Առանց սեպուհ հայրիկի թույլտվութեան ոչ մի պսակի  
հանդես, — հայտարարեց Ռշտունյաց նախարարը:

Առանձին մտերմութեամբ նա կատակել սկսեց Անահիտի  
հետ.

— Հը՞, Ռշտունյա՞ց օրիորդ, հայրդ տեսնելով, որ հայ հո-  
գևորականները տասը բյուր են՝ ինքն էլ է հոգևորական դառնում,  
որ դառնան տասը բյուր և մե՞կ:

Անահիտը գլուխը կախեց տխուր ու անխոս:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ, մի՛ տխրիր, Անահի՞տ օրիորդ, — ծիծա-  
ղեց Արտակ Ռշտունին, — Աղթամարի արեղաները դուրս կանեն  
սեպուհին և նա տուն կվերադառնա:

Բոլորը ծիծաղեցին:

Հետևյալ առավոտ վաղ, դեռ ամրոցում բոլորը քնած՝ Գեղեո-  
նը նավով ժամանեց: Արդեն դարբասի մոտից լսվում էր նրա  
աղմկալից հանդիմանութիւնը պահակներին, թե ինչո՞ւ չէին գի-  
շերվանից դարբասը բաց պահել, իմանալով, որ նա պիտի գար:

Պահակները շտոսեցին ոչինչ: Գեղեոնը մտավ ամրոցը և  
աղմկալից հանդիմանութիւններով բարձրացավ սանդուղներից  
օթեանները: Իմանալով թե որտեղ են քնել իր կինն ու աղջիկնե-  
րը՝ նա մոտեցավ դռանը և ուժեղ ծեծեց: Երբ բաց արին դուռը՝  
նա կշտամբեց կնոջն ու աղջիկներին, որ քնել են գիշերը: Խորխո-  
ռունյաց տիկինը տեղեկանալով այս՝ հրամայեց սպասավորներին  
խտույն օթեան հրավիրել Գեղեոնին և նախաճաշ հրամցնել:

Գեղեոնը անցնելով նախաճաշելուն՝ իր մոտ կանչեց կնոջն  
ու աղջիկներին և սկսեց հարցուփորձը.

— Անահի՞տն է որոշել ամուսնանալ:

— Ոչ, քանի՞ գլուխ ունի... — ասաց Եսթերը՝ կինը, — Խոր-  
խոռունյաց տիկինը...

— Խորխոռունյաց տիկի՞նն է վճիռը դրել... — սրվեց Գե-  
գեոնը:

— Քո հրամանից հետո,— վրա բերեց Ծսթերը:

— Ծս հրաման չեմ տվել... — ծանր քարի պես դրեց Գեղեոնը և ձեռները շփելով լվալու ջուր պահանջեց:

Ծսթերը լռեց՝ գիտենալով, որ հակառակ խոսելն ապարդյուն էր և վնաս:

Սակայն շնայած Գեղեոնից սպասվելիք ներհակութուններին՝ հարաանկան պատրաստութուններն ավարտվեցին: Խորխոռունյաց տիկինը բուրբ տիկիներին հավաքեց ամրոցի սրահը և հանդիսավար հրավեր ուղարկեց Արտակ Ռշտունուն և Գեղեոնին «հրամայել շնորհ բերել»: Հեռն էլ հայտնեցին, որ Մամիկոնեից Մեծ Տիկինը կամենում է տեսնվել Գեղեոնի հետ: Այս լսելուն պես Գեղեոնը շտապեց սրահը: Մտնելուն պես վազեց համբուրեց Մեծ Տիկինոջ աչքը և ետ-ետ գնալով կանգնեց: Արտակ Ռշտունին թթի տակ ժպտալով գիտում էր Գեղեոնի խոնարհումները: Արտակի և Անահիտի ամուսնության գործը այնպես արագ վերջացավ, ինչպես որ սկսվեց: Մեծ Տիկինն հայտնեց Գեղեոնին, որ երիտասարդների բախտը խոսել է Խորխոռունիքում, ուրեմն և պետք է ամուսնացնել նրանց:

— Հրամանդ,— Մեծ Տիկին,— ասաց Գեղեոնը խոնարհությամբ և գեաց նստեց դռան մոտ:

— Վե՛ր հրամայիր, Գեղեոն՝ սեպուհ,— հրավիրեց Մեծ Տիկինը:

Գեղեոնը հրաժարվեց գնալու ավելի վեր:

Արտակ Ռշտունուն զվարճացրեց այս տեսարանը:

— Ուրեմն հրաման է, որ այսօր սկսենք պսակադրության հանդեսը, սեպուհ՝ հայրիկ,— գիտավոր հանդիսավորությամբ հարցրեց նա Գեղեոնին:

Գեղեոնը կողքանց խեթ նայեց նրան և ասաց.

— Ինչպես հրամայե՛ց Մեծ Տիկինը...

Բուրբը թեթե շունչ քաշեցին:



Իրիկնադեմին ամրոցը թնդաց փողերի ու թմբուկների դղրդոցից: Բաղաթի բնակչության թույլ տրվեց մասնել ամրոցի բակը և մասնակցել ուրախության:

Սկսվեցին պարերը ամրոցի լայն բակում, ուր սեպուհները թույլ էին տվել զինվորներին ևս մտնել բակը: Զինվորները շուրջ պար բռնեցին և սկսեցին գետինը դոփել մարտական եռանդով:

Օրիորդներն ու Ձոհրակը բակը ելան դիտելու զինվորների պարը: Դա այնքան կենդանի, աշխույժ մի տեսարան էր, որ Աստղիկն անգամ հիացած ու մոռացած նայում էր ու հրճվում: Նա բարձր քրքջաց, երբ զինվորները ծիծաղելի պարերի անցան: Ձոհրակը պատահմամբ նրան նայեց, և երբ Աստղիկը նկատեց Ձոհրակի իրեն նայելը՝ կոտրվեց և այնպիսի հայացք դարձրեց Ձոհրակին, որ կարծես ասում էր. «խնայիր»: Ձոհրակը կնճռոտեց ճակատը և աչքերը հեռացրեց. «ի՛նչ է մի գլուխ նայում ինձ... ի՛նչ է կարծում իրեն», — ասաց մտքում Ձոհրակը: Աստղիկը ըզզաց այդ և խոցված գլուխը կախեց: «Ձի էլ կամենում, որ նայեմ», — մտածեց նա տանջվելով: «Բայց ես նվիրված եմ նրան, — ասաց մտքում Աստղիկը, — ինչ էլ որ անի պիտի կրեմ, հոժարեմ, զոհեմ... նրա համար ամե՛ն, ամե՛ն ինչ կանեմ...»:

Բազմաստեղ կանթնները առատ լուսով ուրախ ողողել էին մատուռի կարմրաքար պատերը: Ամենքը տոգորված էին մի խորին խորհրդով: Այլևս զվարճալի չէր երևում Գեղեցունը իր տարօրինակ լրջությամբ և ոչ էլ Ռշտունյաց նախարարն էր զվարճությամբ գիտում նրան: Սեպուհները, զինվորները և ժողովուրդը, — բոլորը այրմարդիկ, — ներշնչված էին պսակադրության հանդեսի իմաստով: Անահիտը, որի հետ միայն Շուշանիկ տիկինն էր և Աստղիկը, իբրև «հարսնաքույր», զողում էր ճառագայթի պես՝ ամոթխածելով բազմության հայացքներից: Իսկ Արտակը փորձում էր ազատվել երազանքի զգացմունքից, զգոն խորհել, թե ինչ է կատարվում իր հետ: Բայց մի պահ էր այդ զգոնութունը. իսկույն կրկին երազանքը թոցնում էր նրան: Մեքենաբար ունկնդրելով արարողության, մեքենաբար «այո» պատասխանելով իրեն ուղղած «տե՛ր ես» հարցին և լսելով Անահիտի «հավատարիմ եմ» պատասխանին՝ նա շհտևեց, շիմացավ, թե ինչպես վերջացավ պսակադրության հանդեսը: Միայն երբ զույգին դուրս էին բերում մատուռից, նա լսեց բազմության շունչն ու աղմուկը: Մատուռի դռանը մի փոքր կանգ առավ թափորը: Սկսվեցին թեթև պարեր, որից հետո շարժվեցին դեպի սրահը, որ հատկացված էր Արտակին իբրև «փեսայի» տուն: Երբ մոտեցան սրահի դռանը՝ կտու-

րին երևաց գորշամորուս գանձապետը՝ ձեռք գոգնոցը խրած, ուր դրամ էր լցրել: Գուսանները նվագեցին: Գանձապահը նշան տվեց և գուսանապետը բարձրագոչ երգեց.

«Տե՛ղ ոսկի տեղայր ի փեսայությանն Արտաշեսի,  
Տեղա՛յր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկան»:

Բազմությունը որոտաց ու առաջ մղվեց՝ հավաքելու դրամները: Հրմշտկոցին հետևեց մի ընդհանուր ծիծաղ քրքջոց: Մեջ թռավ մի գունդուկժիկ արարած, անմաղ դեմքով, կարճահասակ և կոտրած մեջքով ու կրծքով: Գա ծաղրածուն էր: Նա ինչ-որ բան որոնեց արագ այս ու այն կողմ գետնի վրա և ապա վեր նայեց և ծիծաղեց.

— Այսքան ցանեցին իշխանները՝ մի հատը չբուսավ:

Բազմությունը ծիծաղեց:

— Ցանքը ոամկի բան է. իշխանինը՝ տանելն է: Բանի՞դ կաց...

Կրկին ծիծաղ:

Թափորը դանդաղ շարժվեց տուն: Բարձրացան սրահը՝ ժողովրդին հրավիրելով ամբողջի բակում սփռած սեղանի շուրջը՝ մասնակցելու հարսանիքին: Ժողովուրդը նստեց սեղմվելով իրար՝ շատերը մնալով հետևը կանգնած: Տեսնելով նրանց այս վիճակը՝ ծաղրածուն ճղավեց.

— Վնաս չունի, գետնի՛ն նստեք, ներքևը վերև չի գնա՝ վերևը կգա ներքև:

— Հա՛ա, ափսոս չէ՞ մեր գետինը,— ձայն տվեց մի շինական ու դրփալով նստեց գետնին:

Ջահերի փողփողուն լույսի տակ սկսվեց գինարբուքը: Իսկ վերևը սրահում ուրիշ տեսարան էր: Ուղիղ դիմացը, տիկիները աջ ու ձախն արած, մեջտեղ նստած էր Մեծ Տիկինը: Նորապսակները գնացին շոքեցին նրա առաջ: Տիրեց խորին լուռություն: Մեծ Տիկինը ինչ-որ խորին խորհրդով տոգորված նայեց զույգին և ապա ձեռք դնելով նրանց գլխներին՝ օրհնեց.

— Մլե՛ք, ծաղկե՛ք, զորանա՛ք, ապրե՛ք, ազատությունը տեսներ: — Հետո լռեց ու սպասեց: Սպասեցին նաև բոլորը:

— Նախնի՛նե՛ր, անցյալնե՛ր, հանգի՛ստ, քնեցեք: Տե՛ղն է աշխարհը, ձեռի՛ն է զենքը, չի՛ մարել ազատության կոխվը: Կապտվե՛նք:

Հետո, կարծես զարթնեց երազից, սթափ նայեց ներկաներին և ասաց հանգիստ.

— է՛, նստեցե՛ք, ուրախացե՛ք, աչքնե՛րդ լույս:

— Աչքի լույսո՛վ մնաս, Մե՛ծ Տիկին, — ասացին բազմականները:

— Ուրախութիւ՞ն:

— Ապրի Սպարապե՛տդ, Զոհրա՛կդ:

Արտակն ու Անահիտը մոտեցան Գեղեոնին: Բայց նա ձեռքով մերժեց և ցույց տվեց Մեծ Տիկնոջը, որ խոսքն ու օրհնութիւնը նրան է պատկանում:

Սեղան բաց արին սրահի պատերի երկայնքով, ուր շարված նստած էին բարձերին տիկիները, Ռշտունյաց իշխանը, Գեղեոնը և սեպուհները:

— Հիշենք մեր անձկայա՛ց, նեղելո՛ց, ճանապարհորդա՛ց, պատերազմողա՛ց, — հուզված ասաց Մեծ Տիկի՛նը:

Քոլորը լռեցին մի պահ: Խոսքը բացակա նախարարների մասին էր, որոնց գծտության լուրը դեռ չէր հասել տեղ և եթե որևէ բան լսվել էր, ապա և հարթվել էր վերջին հաշտության լուրով: Քոլոր տիկիները իրենց կապված էին զգում ընդհանուր գործի մեջ և չէին անդրադառնում դեպքերի ներքին վիճակին: Ուստի և նրանք միահամուռ ջերմեռանդությամբ հիշեցին բոլոր բացականերին:

Ներքին շարությամբ լսում էր այս ամենը Ռշտունյաց նախարարը, բայց մեծ վարպետությամբ և ուրախ բնավորությամբ քնական մղոմով նա թաքցնում էր այն: Նա ինչ-որ բանի էր սպասում և ինչ-որ մտադրվել էր: Ապա և այս արտակարգ հարսանիքին, ուր համարյա բացակա էր արական սեռը և մի տեսակ կանանց հանդես էր՝ անպատշաճ էր համարում նա իբրև երկրորդ նախարարը և այրմարդ՝ տխուր և անախտոթ սովերթներ ձգել ընդհանուր ուրախության վրա: Ուստի և նա մեջ ընկավ և սկսեց շատ աշխույժ մասնակցել ուրախության: Նա խմում էր անզուսպ և անընդհատ՝ թեև չէր հարբում: Նրան հակառակ՝ ջերմեռանդ լրջությամբ անշարժ նստել էր իր բարձին Գեղեոնը և շափավոր, ժուժկալ համոես էր անում: Նրան դուր չէր գալիս իր փեսայի սանձարձակ կերուխումը: Բայց զսպում էր իրեն՝ շուգեյով, Մեծ Տիկնոջ մոտ անպատշաճ բան անել:

Մրահում լսվում էր դրսի բազմության երգերն ու աղմուկը։ Ապա նաև պարերի շափահարումները շոր գետնին։ Մրահի դուռն ավարագույրից ներս նայեց ծաղրածուն։

— Մեծ Տիկին, դո՛ւրս գամ, թե նե՛րս գնամ։

— Արի, Խոխոբ, արի, — ծիծաղեց Մեծ Տիկինը, — ծիծաղի՛ր, շենանանք։

— Մեծ Տիկին, ժողովուրդն ուղարկեց, — իշխանաց սեղանին պակտորդություն չի՛նի, — ուրախ նենգությունս սահեցրեց Խոխոբը։

Ծաղրածուն նշան արեց, և դռնից ներս մտան՝ մի դեռահասակ երիտասարդ, գլխին խոնչա՝ վրան մրգեր ու ծաղիկ և մի զվարթադեմ աղջիկ՝ ուսին գինու երկարավիզ գավ։ Նրանք մի առույգ ծերունու առաջնորդությամբ խոնչան դրին Մեծ Տիկնոջ առաջ և կանգնեցին դիմացը։ Ծերունին առաջ եկավ, վերցրեց գավաթը, լցրեց գինով, ասաց.

— Ապրե՛ն թագավոր-թագուհին։

Մեծ Տիկինը օրհնեց.

— Ծեն մնաք, շատ ապրեք, որդիքս։

— Կապրի՛, Մեծ Տիկին, ուսիկը իշխանի բերանով որ ուտում է՝ շատ կապրի, — ասաց Խոխոբը։

— Ա՛յ, չլալի լեզուդ։

Հյուրերը ծիծաղեցին։

Խորխոռունյաց տիկինը դրամներ լցրեց ծերունու խմած գավաթի մեջ։ Ծերունին աչքով արեց, երիտասարդն ու աղջիկը խոնչան ու գավը դրին մեջտեղ։

Արտակն զգաց Խոխոբի խայթոցը, որ խենթ ու խելառ ձևով բաց էր թողնում նա։ Նա խորն զգաց այն ամենը, որ կար այդ խայթոցի մեծախորհուրդ և ծանրակշիռ իմաստի մեջ։ Նա խորթությունս և ակնածանքով նայեց շինականներին, որ խոնարհումներ անելով դուրս գնացին։

Մրահի անաղմուկ ուրախության հակառակ՝ ամբողջ բակում աշխույժ կերուխում էր։ Սեղանը, որ բացված էր ուղիղ գետնին՝ երկու կողմից եզերված էր շինականներով։ Գինին արծակել էր նրանց լեզուն։ Նրանք ձայները բարձրացրել էին։ Խոսքի ու կատակի կենտրոնը մի կարմրաթուշ, ուրախ շինական էր, որին Սա-

մել էին անվանում և ամեն կողմից խոսեցնում: Այնտեղ էր նաև Խոխոբը:

— Սամե՛լ քեռի, տես ո՞ւր են հրավիրել քեզ,— ձայն տվեց սեղանի հեռավոր ծայրից զվարճախոս շինականների խմբի միջից մեկը:

— Մեծունանց է խառնվել, նստել է իշխանական սեղա՛ն,— կպցրեց մյուսը,— քի՛ւ պ կաց, Սամե՛լ, տակիցդ շքաշեն...

— Քի՛ւ եմ. տակինս իշխանի բարձ հո շի, գետին է,— պապատխանեց Սամելը, որ արդեն ազդվել էր գինուց:

— Հազկերտը կգա կհանի տակիցդ:

— Գործի՛դ նայիր, գա՛ շատ շատ՝ բարձեր կհանի, գետինը ո՞նց կհանի:

— Կհանի՛, Սամե՛լ, կհանի՛,— պնդում էր մի շինական,— կքաշի՛ կհանի:

— Քա՛շի թող, էստեղից մինչև՝ աշխարհքի ծերը գետին է:

— Իշխանն էլ գետնի վրա շի՛ նստած, Սամել:

— Իշխանն իսկի գետին տեսնո՞ւմ է, որ նստի վրան: Իշխանը շինքիս է նստած, բ՛հր՛ր՛,— բռունցքով հարվածեց իր վզին Սամելը:

— Պա՛հո, էդպես հո շունչդ կկտրվի, Սամե՛լ:

— Նրա՛ շունչը կկտրվի, որ կարճ է: Նա՛ կվերջանա՝ ե՛ս կմնամ:

— Վա՛յ, մեռնե՛ս դու ոչ, Սամե՛լ, բա մեղք չի՛ իշխանը:

— Ապրի՛ գլուխս.— ցավս իշխա՛նն էր:

Շինականները հռհռացին:

— Դե՛, հերի՛ք է, հերի՛ք լեզուներիդ տաք,— գոչեց զվարճախոս շինականը,— ելեք մի պա՛ր թոնք:

— Դե պար, պապա՛ր, մեջքերդ՝ կո՛ւզ:

Վեր ու ներքև՝ գլղի պլո՛ւզ,— արագախոսեց ու պար թռչելով Խոխոբը փախավ ներս:

— Քո էլ հո՛տը կտրի, հա՛,— ասաց Սամելը, և բոլորը ծիծաղելով վեր կացան պարի:

Հարսանիքի ուրախությունը երկար տևեց. մինչև լույս: Սրահում զվարթ զրույց էր, որ ընդմիջվում էր գուսանների երգով կամ ծաղրածուի հնարքներով ու կատակներով: Ռշտունյաց նախարարը, որին գինին ազդել էր բավական՝ խախտելով պապենական

կարգը՝ մոտեցել էր Արտակին և ուրախ զվարճախոսում էր: Մե-  
պուհները պատշաճը պահելով հանգիստ ուրախանում էին: Իսկ  
տիկիկները այնպես էին տարվել խաղաղ ու անհոգ զրույցին, որ  
թվում էր թե չկա ոչ հոգս, ոչ պատերազմ, ոչ թշնամանք: Կարծես  
համայն Հայոց աշխարհը խաղաղության գրկում ապրելիս լիներ  
մի երջանիկ, անվերջ վայելք: Մեծ Տիկնոջ կողքին բազմել էր Գա-  
ղիշոյի մայրը և իր լիալուսին կլոր դեմքի հուզված ժպիտով դի-  
տում էր նորապսակներին, դառնում Մեծ Տիկնոջը, մի խոսք ասում  
և լողում երջանկության մեջ: Մյուս տիկիկները մի փոքր կամա-  
ցուկ՝ որ Մեծ տիկիկները շլսեն՝ կատակում էին իրար հետ:



Աշնանային պայծառ միջօրեն հանդես էր բացել ծովի երեսին:  
Ալիքները վեր վար էին անում հեթանոսական պարի անըմբռնելի  
շափահարումով: Արտակն ու Անահիտը աշտարակից դիտում էին  
ծովն ու ծովեզերքը:

Արտակը նայում էր հեռավոր ափերին, լեռներին, երկնքում  
հալչող ոսկե ամպիկներին, ծովափին ձյան փաթիլների պես  
խոնավող ճայերին և... ոչինչ չէր տեսնում շոշափելի իսկության  
մեջ: Իսկույն երազը երգի, հովի պես խլում էր նրան, և նա իր  
ուսին զգում էր մի ջերմ թեթե թեթե հպումը: Կյանքն այնքան էր  
խորացել, անդնդախոր անհունացել, որ նրա մեջ կորել էր  
նորապսակ զույգը իր խոհերով, իր երանությամբ:

Երազի մեջ երազ օր էր: Ինչպես նախորդ երկու-երեք օրե-  
յր... Եվ իրոք՝ Արտակը երբեմն փորձում էր սթափվել, խորհել:  
Բայց իսկույն ամեն խոհ, ամեն արթնացում կրկին ընկզմում էր  
երազի մեջ, և Արտակը հոգով գնում լողում էր, ինչպես անա այն  
ալիքը Բզնունյաց ծովի երեսին, որ թավալվում է, սուրում ան-  
խոհ, ազատ:

— Հիմա ես պատրաստ եմ կովելու,— ասաց Արտակը՝ կար-  
ծես քնի մեջ խոսելով, հայացքը հեռաստաններին:

Եվ զգալով իր ուսին Անահիտի դեպ իրեն դարձած դեմքը՝  
նայեց նրան.

— Այնքա՞ն եմ սիրում կյանքը... Պատրաստ եմ նրա համար  
մեռնելու... Շա՞տ են թանկ այս ամենը, այս հազար ու մի բա-

նք, այո՛, այն կապույտ ծուխը շինականի երգիկի, այն սևահողը, որ հերկի տակից դուրս է շրջվել, այս արևը, ժողովուրդը — հայրենիքը:

Երջանիկների գրույցը ընդհատվեց, որովհետև աշտարակ էին բարձրանում Ռշտունյաց նախարարն ու Գեղեոնը: Նախարարը, շարունակ սրախոսելով ու կատակելով Գեղեոնի հետ էր՝ հիմա էլ ցանկութուն էր հայտնել աշտարակ բարձրանալ: Արդեն սանգուղների վրայից լսվում էր նրա փնչոցն ու ծիծաղը:

— Բարեողջուն թագավորին ու թագուհուն,— զվարթ մտեցած նախարարը,— հպատակներիս հոգսը չեք քաշում:

— Գիտե՞նք, որ հոգս չունեք,— ասաց Արտակը՝ վեր կենալով և ընդառաջ գնալով Գեղեոնին՝ իմանալով նրա ձևապաշտ խրատապահանջութունը:

Անահիտը գնաց բռնեց հոր թևը և բերեց նստեցրեց բարձին:

— Հայր չենք, փեսա ենք, պատիվներս մի փոքր սակավ է,— կատակեց Ռշտունյաց նախարարը Անահիտին:

— Դրա փոխարեն էլ պատիվդ կստանաս նոր ազգականից,— ասաց Արտակը և նախարարին նստեցրեց իր բարձին:

— Որսի գնացի երեկ,— ասաց նախարարը,— քեզ չկանչեցի, գիտեի, որ դու արդեն որս արել ես... Բայց որս չկար: Բուլբուլ որսը մեր Խորխոռունյաց տերը քշել թաքցրել է ո՞վ գիտե ո՞ր սաստանայի քունջ ու պուճախում, հա՛, հա՛, հա՛,...

Գեղեոնը լարված լրջությամբ նայում էր իր ոտների տակ սվաղած կտուրին՝ կարծես ամենահետաքրքրական բանը դա լինի արձարհում:

— Նայի՛ր, սեպո՛ւհ հայրիկ,— ասաց Ռշտունյաց նախարարը հեռավոր բլրի զագաթին ցցված մի սուր բանի կողմը ցցելով մատը,— արծիվ է անշուշտ:

Գեղեոնը նայեց ծանրակշիռ ու լուրջ:

— Այժ է,— վճռեց վերջնական ու անառարկ:

— Արծիվ է, սեպո՛ւհ հայրիկ,— պնդեց նախարարը:

— Այժ է,— անայլայլ հաստատեց Գեղեոնը և աչքերը ներքև գցեց անշարժ ու հանգիստ:

— Ի՞նչ ես պնդում,— չհանգստացավ նախարարը,— պարզ պարզեիպարզ արծիվ է: Հիմա կթռչի:

— Թռչի է՛լ՝ ա՛յժ է,— համառեց Գեղեոնը:

Արտակը աչքով արեց նախարարին: Մա տեղի ավեց այլ կերպ.

— Կարո՞ղ է: Ա՛յծ է, բայց կթռչի՛:

Բայց այսչեա ուրախ կատակող նախարարի աչքերում թաքնըված էր մի դաժան ցալք, որ երբեմն շողում էր ու իսկույն կորչում:

Երկար շտեկեց նախարարի այցը աշտարակ: Նա սիրահար չէր տեսարանների: Վեր կացավ: Վեր կացան նաև Արտակն ու Անահիտը, ինչպես և Գեղեղոնը: Իջան և գնացին իրենց օթևանները: Անահիտը հայտնեց Արտակին, որ գնում է Ողիմպիայի մոտ և դուրս եկավ օթևանից: Անցնելով Ռշտունյաց նախարարի օթևանի պատուհանի տակով, նա կանգ առավ ակամա: Նախարարն ու Գեղեղոնը ինչ-որ զրույցի թե վիճաբանության հետ էին: Նախարարը իր սովորության համաձայն քրքչում էր:

— Ասում ես՝ այծ էր, հը՛, հա՛, հա՛, հա՛...

— Ապա ուզում ես, որ արծի՞վ լինէր, — մոմոաց Գեղեղոնը:

— Ապա ինչպե՞ս... ի՞մ կամքն է, թե՞ քո կամքը:

— Ամենքինը ի՛րն է:

Լոեցին մի պահ: Անահիտը հետաքրքրվեց այս տարօրինակ խոսակցությունից:

— Լա՛վ: Տո՛ւն ինչու շես գալիս, ամոթ չի՞նի հարցնելը, — հարցրեց նախարարը:

— Գործ ունեմ:

— Գո՛րծ... գուցե վախենո՞ւմ ես...

— Ինչի՞ց...

— Ես ի՞նչ գիտեմ:

— Չեմ վախենում ոչ մի բանից, — ասաց խուլ ձայնով Գեղեղոնը:

— Վախենո՞ւմ ես, — շեշտ ու բարկացած ասաց նախարարը, — եթե շես վախենում՝ ապա՞ արի տուն:

— Կգա՛մ:

— Չե՛ս գա...

— Կգա՛մ: Հենց հիմա՛ վեր կաց գնանք, — ասաց Գեղեղոնը: Նախարարը լոեց և ապա հասարակ ձայնով ասաց.

— Վաղը գնանք: Եվ պետք է՛լ է գալո: Զորքի կաշվեղենը դու պիտի հավաքես:

— Ես կաշվեղեն հավաքող շեմ: Գու ինձ կանչում ես պատասխան տալու քեզ, թե ինչո՞ւ գունդը տարա Անգղ. կգամ տուն՝ կասե՛մ ինչու:

Նախարարը շխտեց: Անահիտը սպասեց երկար, բայց էլ խոսք չսովեց: Նա հասկացավ շարագույժ՝ զրույցի միտքը: Լցվեց և ետ վազեց օթևանը:

— Հա, ի՞նչ կա, Անահիտ:

Անահիտը ընկավ Արտակի գիրկը, սկսեց հեկեկալ: Երբ հանգրստացավ մի փոքր, պատմեց լսածը.

— Համոզենք հորդ՝ չգնա,— ասաց Արտակը:

— Զո՛ւր է, կգնա՛... —

— Լա՛վ, որ գնա՛ ի՞նչ պիտի լինի:

Անահիտը լաց եղավ: Նա այնպես արտասովալի աչքերով նայեց Արտակին, որ սա լիովին հասկացավ նրա տարակուսանքն ու վիշտը: Եվ խղճաց նրան:

Անահիտը կանչեց սպասուհուն և հրամայեց իրենը կապել:

— Ինչո՞ւ, Անահիտ... — անհանգստացավ Արտակը:

— Ես էլ կգնամ հետը,— ասաց Անահիտը:

— Ոչ, Անահիտ, շեմ թողնի, ո՞ւր... —

— Կգնամ, իշխան,— ասաց տխուր, բայց հաստատ Անահիտը,— ինչպե՛ս կթողնեմ նրան մենակ... —

— Բայց իշխանն ի՞նչ պիտի անի նրան:

— Ես գիտե՛մ... Ոչ, կգնամ, իշխան:

Արտակը լուռ և անհանգիստ նայեց Անահիտին՝ սպասելով, որ նա ուշաքերվի, փոխի մտադրությունը: Անահիտը, որ սկսել էր հավաքել իր զարդերն ու մանրուքները՝ հանկարծ ընդոստ շրջվեց դեպի Արտակը և խստահայաց նայեց նրան.

— Ի՞նչ... նա մարդ չէ՞... նա է՛լ է հայրենիքի զինվոր... —

Ու հեկեկաց:

— Անահի՛տ... ի՞նչ ասացի քեզ որ... —

— Նա է՛լ հոգի ունի... — լրացրեց Անահիտը. և ապա աչքերը սրբելով բոլորովին լուրջ ու հանգիստ ասաց.

— Ես կգնա՛մ, իշխան, դու ինձ իրավո՛ւնք տուր... Մենք երկար չէինք ուրախանալու... Մեր բախտն էլ այս էր... Մի՛ տխրիր, իշխա՛ն... —

Արտակը մի փոքր խղճի խայթ զգաց և ամաչեց Անահիտից։  
Խորհեց, որ նա իրավունք ունի և համաձայնեց։

Կարծես լուսավոր աշխարհը գորշացավ։ Թուավ երջանկու-  
թյան երգը և անապատային լուռությունը թագավորեց ամենուրեք։

Ռշտունյաց նախարարի մեկնումի պատրաստությունները  
կարծես ազդանշան եղավ մյուսներին խորհել մեկնելու մասին։

Նրանք ևս պատրաստվեցին։

Մեծ Տիկինը ցանկություն հայտնեց, որ հրաժեշտը տեղի  
ունենա հարսանիքի մեծ սրահում։ Ամենքը զուգվեցին։

Քուրորդ հավաքվեցին սրահը։ Մեծ Տիկինը նստեց գլխավոր  
բարձին, իր մոտ կանչեց Արտակին, Անահիտին, Զոհրակին ու  
բոլոր օրիորդներին։

— Արի՛ք, ձագուկներս, — ասաց նա մայրական խանդաղա-  
տանքով, — մատա՛ղ ձեր հասակին։

Քուրորդ կանգնեցին բոլորված և լռեցին, թեև Ռշտունյաց նա-  
խարարը ճիգ էր անում սրախոսություններով ավելի տպավորու-  
թյունը։ Բայց Մեծ Տիկնոջ ներշնչված կերպարանքը սաստեց։

— Արհավի՛րք է Հայոց Տան վրա, — ասաց Մեծ Տիկինը, —  
չնչե՛լ են ուզում... Աչքե՛րս կուրանան... Զինվորյալ մանուկներս  
պատերազմի ճանապարհի՛ն, է՛հ, ո՛վ գիտե նե՛ղն են, արձա՛կն  
են... Աստվա՛ծ հասնի... — և Մեծ Տիկինը լցվեց, թաշկինակը  
տարավ աչքերին։

— Աստվա՛ծ հասնի... — խաշակնքեցին երեսները բոլորը։

— Հայրենիի ուխտն է հիմի, — իշխեց ինքն իրեն Մեծ Տիկի-  
նը, — ասում եմ, է՛հ, մենք էլ անմաս շմանք մեր սիրելիների  
արյան... Ո՛ւխտ դնենք, հավատարի՛մ լինենք մեծ նեղության  
մեջ։

— Ուխտ դնենք, Մեծ Տիկին, — ասաց Խորխոռունյաց տիկի-  
կինը ներշնչված, — մեր գլուխների տերերը արյուն են թափում,  
մենք հո չենք մնա անմաս...

— Ծշմարիտ խոսք խոսեցիր. ո՛ւխտ դնենք։ Ո՛ւխտ դնենք, —  
կրկնեցին տիկիները, օրիորդները և երեսները խաշակնքեցին։

Ռշտունյաց նախարարը զարմացած լսեց Գաղիշոյի կնոջ այս  
չերմեռանդ խոսքը և ներքուստ խռովվեց։

— Աստված ուժ ու կարողություն տա մեր սիրելիներին, —  
ասաց Արծրունյաց տիկինը։

— Ամե՛ն,— ձայն տվին մյուսները:

— Է՛հ, հիմի օրը պահանջով է, մենք նահանջով,— ասաց Մեծ Տիկինը,— հիշելի՛ք լինի անցկացրածներս, նորապսակներս ծլե՛ն, ծաղկե՛ն: Տունդ շե՛ն, Խոռխոռունյա՛ց Մարիամ տիկին, Գաղիշոս, Խորենս ապրեն: Գնա՛նք, գնացողաց բարի ճանապարհ, մեացողաց խաղաղություն:

Բոլորը վեր կացան, համբուրեցին Մեծ Տիկնոջ ձեռքը: Հետո իրար հետ ողջագուրվեցին: Հայտնեցին, որ նավը պատրաստ է: Անահիտը վազեց իր օթևանը: Արտակը նրա հետևեց:

— Անահի՛տ... ինչպե՛ս պիտի լինի...

— Ինչպե՛ս պիտի լինի... ես գիտե՛մ ինչպես կլինի:

Եվ արտասովեց: Արտակը գրկեց նրան.

— Մի՛ ընկճվիր. գնաս կտեսնես վիճակը՝ ինձ իմաց կտաս:

— Է՛հ...

Բայց Անահիտն զգաց, որ շատ էր բիրտ այսպիսի բաժանումը:

— Բան չկա, իշխան, ամեն բան լավ կլինի: Կգաս շուտ ինձ տանելու տուն,— և համբուրեց Արտակին:

— Կգա՛մ, շո՛ւտ, անպատճա՛ռ,— համբուրեց նաև Արտակը: Եվ, ինչպես լինում է միշտ՝ շատ կարևոր ու խորն ապրված պահին — հաբարակ ու դյուրին բաժանվեցին:

Բոլորը գնացին ճանապարհ դնելու մեկնողներին: Զոհրակը կանգնել էր մի սեպուհի կողքին, որի հետ մտերմացավ վերջին օրերը: Դա Խորենի կողմնակից շատ հաճելի երիտասարդ էր: Նրանք միասին էին գիտում գնացողներին և զրուցում իրար հետ:

Զոհրակը նայեց Աստղիկին, որ թախծալի աչքերով հոգածու նայում էր Անահիտին և ուղղում նրա զգեստը կամ նավի բարձը, թեև սպասավորուհիները անում էին նույն բանը:

— Ոսկի՛ աղջիկ է,— շնչաց սեպուհը Զոհրակի տեղանքին՝ ակնարկելով Աստղիկին,— ոսկի՛ սրտի տեր աղջիկ է:

Զոհրակը նայեց Աստղիկին: Բայց Աստղիկը չէր նայում իրեն:

— Եվ գեղանի՛... — խուլ շնչաց սեպուհը հառաչանքով:

Զոհրակը նայեց: Հանկարծ կարծես մշուշ էր ցնդեց, և խորքից դուրս ցուլաց հրաշագեղ մի պատկեր: Աստղիկը գեղեցկացավ: Ինչպե՛ս կատարվեց այդ: Հրա՛շք էր: Զոհրակը չգիտեր, որ լի-

նում են այդպիսի հրաշափոխութիւններ, երբ մի էակ չի թվում գեղեցիկ, բայց հարկավոր է կողմնակի մի բառ, որ հանկարծ կրակվելով դեմդ ելնի գեղեցկութիւնը: Գեղեցկութիւնը, որը շատ անգամ առաջին հայացքից թվում է տգեղ, բայց դա էլ նրանից, որ ինքնատիպ է, աննախընթաց, նորանոր...

Զոհրակն զգաց Աստղիկի գեղեցկութիւնը: Ծվ ուրախացավ... Զէ՛ որ Աստղիկը իրեն էր ճգտում: Ու մինչ վստահ, գլուտ արածի ուրախությամբ նա սպասեց, որ Աստղիկը իրեն նայի՝ սա համեստ, թափածալի գեմքը դարձրեց բոլորին, զլուս տվեց և առանց նայելու Զոհրակին, գնաց նստեց նավ, Անահիտի գողքին: Ու գլուխը կախեց մինչև վերջ:

Գեղեցունը հպարտ քայլվածքով գնաց մտավ նա՛վը, որով ուղիղ գծով պիտի գնային Ռշտունիք:

Արտակը հրածեշտի պահին առանձին խոսեց Ռշտունյաց նախարարի հետ.

— Կտեսնվենք շուտով:

— Կսպասե՛մ, սիրելի՛ քենակալ, — ժիծաղեց Ռշտունյաց նախարարը, — ե՛կ մի փոքր «մխիթարվենք»...

Նավը քնցվեց, ճոճվեց ու դանդաղ աուրաց: Արտակը զվարթ նայեց Անահիտին, մյուսներին, առանձին ժպտով Աստղիկին և երկար մնաց կանգնած, մինչև նավը կտրավ ալիքների հետև: Երա հետ միասին կանգնած էր Զոհրակը... Սկսեց երազել Աստղիկին... Խաչն օրը Մամիկոնյան տիկիները ևս մեկնեցին:



Միհրնեհրսեհի կյանքը վտանգվեց: Նրան սպասում էր մահապատիժ: Նա ընկավ Հազկերտի աչքից: Քշնամիների համար գուռ բացվեց շարափոստու նրան: Գլուխ էր անցել նրա մրցորդ ոսոխը՝ Պեղոզ իշխանը, որ նախարարների դատի ժամանակ փղեր կանչել տվեց և վաղուց միտում էր նրա հազարապետութան պաշտանին:

Տագնապ էր ապրում իր մեջ արյաց պետութեան առաջին մարդը: Ճակատագրական սխալը, որ նրա գործն էին համարում — վասակին վստահելը մարգարանութեան պաշտանը — նա չէր կտ-

րող ներել իրեն: Երկար նստում էր գիշերները և խորհում: Բայց  
ելքը չէր գտնում դեռ: Ելքը պիտի ցույց տար ապագան: Իսկ  
ապագան դանդաղում էր:

Հարկավոր էր փրկել իր կյանքը: Բայց ինչպե՞ս...

Տագնապ էր ապրում նաև Վարազդուխտը, որին պահում էին  
Միհրնեբրսեհի տանը՝ մինչև ստուգվեին նրա տված լուրերը:

Տագնապ էր ապրում ոչ պակաս նրանից նաև Վարազվաղա-  
նը: Սպասում էր Միհրնեբրսեհի հրամանին...

Մի անգամ ատյանի ժամին Պերողը պալատականների առաջ  
հարցապնդում արեց նրան.

— Ի՞նչ է կարծում վեհը (Միհրնեբրսեհը), ժամ չէ՞ արդյոք  
դատի տալ նրանց, ովքեր խաբեցին իրեն՝ մարզպանական պաշ-  
տոնի հարմար թեկնածու ներկայացնելով Վասակին:

— Զգիտեմ, տեր իմ, դեռ ոչինչ պարզ չէ. միտքս մշուշ է.  
մտլոր. ձեզ հետ խորհում եմ, որ ուժ տաք մտքիս...

Եվ Միհրնեբրսեհը սուտ կծկվեց ու խեղճացավ:

Պերողը սիրտ առավ և ավելի համարձակ ձայնով դիմեց պա-  
լատականներին.

— Արժանավոր չի՞ լինի, տյա՛րք, որ մենք ամենքս վկայենք  
արքայի առաջ մեր վեհի անձնվիրությունը: Վասակը խաբել է,  
Վասակն է ուրեմն հանցավոր, թող նա կրի պատիժը: Շատ էլ  
սխալվել է վեհը: Մեզ համար թանկ է մերազնյա վեհը:

— Արժանավոր է, հարկ է,— համաձայնեցին զանազան  
կողմից:

Միհրնեբրսեհը զլուխը կախեց նենգավոր խոնարհությունը:

Սակայն պետք էր Հազկերտի առաջ արդյունքներ ցույց տալ:  
Դրա համար հարկ էր կանխել գործերը, վտանգը: Հարկ էր Վա-  
սակին արդարացնել՝ դեռ դեպքերը չկատարված: Եվ՝ ապա՛ միայն  
անցնել հետագա ինքնապաշտպանության:

Խորին գիշերվան մեծ լուսության մեջ եռաստեղյան ջահի լու-  
սավորությունը Միհրնեբրսեհը փսփստում էր Կողակի հետ, որին  
կանչել էր տվել: Կողակը այլևս արհամարհելի չէր...

— Կասես իրեն՝ սրբի՛ր հանցանքդ, կանխի՛ր արքայիդ ցա-  
տումը՝ դեռ Սեբուխտը Հայաստան չմտած՝ իսկույն Պարսկաստան  
ուղարկիր բանտարկյալներին, ոչնչացրու վարդանանց: Հետո ար-  
ժեք չունի, հետո՞ մահապարտ ես և դավաճան:

— Տեր իմ, իսկ եթե մարզպանը չկարողանա մեղադրանքից ազատվել՝ ափսոս չե՛ն շանքերդ:

Միհրնեբրսեհը ծանր նայեց Կողակին և շոր ու սառն պատասխանեց.

— Ես նրան ազատում եմ, որ ազատեմ նրանց, ովքեր ինձ մոլորութեան մեջ գցեցին՝ նրան պաշտպանելով:

Կողակը դողաց... Դա իրեն էր ակնարկում:

Կողակը հեռացավ: Ատելութեամբ նայեց նրա մեջքին Միհրնեբրսեհը և մոռլ մտքերով ծանրացած մնաց անշարժ դիրքում: Վտանգը մեծ էր, գործերը դժվար: Թշնամիները ժնգժնգացնում էին ատամները: Նա տեսնում էր այդ:

— Բե՛ր այն աղչկան,— հանկարծ հրամայեց Միհրնեբրսեհը սենեկապետին:

Ներս մտավ Վարազդուխտը մահվան դալկութեամբ: Ի՞նչն էր ստիպել Միհրնեբրսեհին այսպես տարածամ մոտը կանչել իրեն...

Դռնից ներս նայեց Արամայիդին: Միհրնեբրսեհը գիտեր, որ իր քույրը կհայտնվեր: Ներս հրավիրեց նրան: Արամայիդին նըստեց նրա կողքին:

— Պատասխան տուր,— ասաց Վարազդուխտին Միհրնեբրսեհը,— դու՛ աղջիկ, հայուհի, օտարուհի, մենակ՝ ի՞նչ գործ ունեո այս հեռավոր աշխարհները, ի՞նչ քո բանն է մարզպանների գործ շինել — քանդելը: Ասա, ո՞վ ես դու... մարզպանի սիրեկա՞նը...

— Ես մարզպանի զինվորային եմ,— համարձակ պատասխանեց Վարազդուխտը,— ես նրան ազատում եմ, թեկուզ և մեռնեմ...

Միհրնեբրսեհը դողաց, սփրթնեց և հանկարծ զայրալի գռչեց.

— Այստեղ է՛լ հայի հաստակողությունը՝ «զինվորագրութունը»: Ես քո մարզպանի մեջ խոտ լցնել կտամ, նախքան դու «զինվորյալ» կդառնաս նրան...

Վարազդուխտին այրեց այս մարդախանձ, դաժան խոսքը: Նա մտքում տեսավ իր սիրեցյալի այդ շարագութ, վայրենի խոշտանգ պատժի նպատկերը: Եվ զարհուրանքով մտածեց. չլինի՞ այս շար մարդը արդեն վճռել է ի կատար ածել այդ ոճիրը, որի համար և կանչել է իրեն վերջին քննության: Նա զգաց, որ այս անգամին կամ ինքը գնալու է կառափնարան և Վասակի էլ պատի-

ժը կվճռի կամ, եթե փրկութիւն է լինելու՝ հիմա է ժամը նա  
ընկալ ճատակին ու սկսեց օձի պէս գալարվել:

— Տո՛ւր գլուխս դահճին, տե՛ր Հազարապետ, տո՛ւր ինձ  
անեն մորթազերծ: Միայն հավատա՛ այն ազնիվ մարդուն: Նա  
քեզ է նվիրված, քո անունովն է երդվում: Եթե մարդպանը բան-  
տարկեր ձեր մեծամեծներին՝ Սպարապետը կոտորել կտար նրանց:  
Մարդպանը նրանց կյանքն է ազատել բանտում:

— Ասա մյուս հանցանքներդ է՛լ և զնա մահվան,— ասաց  
Միհրնեբսեհը շարժւալիտ:

— Կասե՛մ... կասե՛մ,— արդեն մահվան դողը սիրտը մտած  
ասաց Վարազդուխտը,— կասեմ, որ ահա հազարավորներ — հա-  
յոց այրուծին, որ փախչելու պատրաստութիւն է տեսել՝ նրանց  
վստահում ես՝ ինձ մահի ես տալիս: Գիտեի այդ և լուում էի...

Միհրնեբսեհը շարժվեց նստած տեղում: Մտածեց մի փոքր և  
ապա ասաց.

— Դա եզա՛վ...

Միհրնեբսեհը նայեց Արամայիդիին, որ լուռ և անմասնակից  
էր մինչ այստեղ: Արամայիդին նշան արեց նրան:

— Տար սրան իր օթեանը, թող սպասի գահճին,— ասաց  
Միհրնեբսեհը սենեկապետին:

Վարազդուխտը դողահար հեռացավ:

— Ի՞նչ միտք ունի սրա մահը, եղբայր իմ,— ասաց Արա-  
մայիդին:

Միհրնեբսեհը լուռ ու մտածկոտ նայեց նրան:

— Ի՞նչ միտք ունի, դու ասա, մարդպանի անկումը, մա-  
տա՛ղ: Վասակն ընկավ թե չէ՝ Վարազվաղանին կբարձրացնեն  
առանց քեզ: Հենց դա էլ քո անկումը կլինի: Ի՞նչ է Վասակը. դա-  
վաճա՛ն, խարբբա՛, սրիկա՛... Ժամ չէ դրա հետեւից ընկնելու: Դու  
նրա՛ն բարձրացրու միշտ, նրա՛ն, մատա՛ղ... Դրանո՛վ միայն  
կբարձրանաս դու: Բարձրացրո՛ւ Վասակին, բարձրացրո՛ւ...

— Ճշմարի՛տ, ճշմարի՛տ, քույրի՛կ, ճշմարի՛տ, ճշմարի՛տ...—  
մրմնջաց Հազարապետը՝ միտքը լուսավորված,— ահա ես նրան  
բռնանում եմ դառնալ իմ զօհը, ոչնչանալ և փրկել իմ կյանքը:  
Բայց ես կյանքս չէ՛ որ փրկում եմ. ես մահից չէ՛ որ վախենում  
եմ: Ես փրկում եմ իմ համարումը,— եթե ես սխալվել եմ՝ դարձյալ  
ես ճիշտ եմ...

— Եվ հայոց այրուձի՞ք գտտաստանն էլ տե՛ս: Լավ առիթ տվեց քեզ այս ազդիկը:

— Բայց նա որտեղի՞ց գիտե այդ բաները և շատ բաներ գիտե:

Արամայիդին բացատրեց Վախթանգի տան հանգամանքները, Վարազդուխտի կապը այդ տան հետ, Արսենի այցելությունները: Միհրնեբսեհը կանչել տվեց Նյուսալավուրտին և հրամայեց վերջ տալ հայոց այրուձիին: Երկար խոսեցին այս մասին: Վերջը Նյուսալավուրտը առաջարկեց ճակատ ուղարկել այրուձին և քուշանաց դեմ մաշել ստույգ վտանգավոր կռիվներում:

Առավոտյան Միհրնեբսեհը կանչեց Վարազդուխտին և հրամայեց ճանապարհվել Հայաստան, Վասակի մոտ, հսկել նրան, համոզել՝ եթե կարող է և միշտ լուրեր ուղարկել իրեն նրա մասին: Վարազդուխտը ազատվեց...



Նյուշապուհ քաղաքից քուշանների ճակատը մեկնող այրուձիի առջև բացվեց ամայի գաշաք՝ իր աղուտների և ճախուտների հաջորդականութամբ և անհայտ ու գարանակալ տիղմի թաղուտներով: Զորագունդը գնում էր գեռ երկար շարքով, երեք-երեք հեծյալ իրար հետևելով: Զորագնդի զլխին խմբվել էին իշխանները: Նրանք մտախոհ էին, անգամ մտահոգ: Ավելի ուրախ էին գինվորները, վերջապես ճամբարից դուրս գալու պատճառով: Նրանք իմացել էին, որ գնում են քուշանների դեմ կռվելու: Սա մի լավ հանգամանք չէր, բայց գոնե մի ելքի դուռ բաց կաներ. քաջ մարտեր մղելով կարող էին տուն վերագառնալու շնորհ ընդունել արքայից: Այս հուսով էլ ջերմացած գինվորները ուրախ, կիսաձայն գրուցում էին և աշխույժ նայում շորս կողմ:

Անբարյացակամ էր նայում դաշտը: Աշունը տխրություն ու մահ էր շնչում ամայություն վրա: Զախում և հեռուն, առաջները, ավազախառն քարակույտ բլուրներն ու լեռները վիժում էին իրենց մաքմինը անապատի վրա: Շրջակայքում ամեն ինչ այրվել գեղնել էր ամառային արևի ս: Կից: Ճանապարհը շատ էլ որոշ չէր: Քամին ամեն օր հարթելով հետքերը, փակում էր նշանները:

Իբրև ուղեցուլց մի գծով շարված էին ուղտերի, ձիերի կմախք-ներն ու լեշերը, որ շնագայլներն ու բորենիները մաքրում են գիշերային խավարում և ցերեկը վրա հասնելուն մի առժամ թաք-նրվում հեռու-մոտիկ հեղեղատների որջերում: Ձախակողմյան բուստներից մեկի վրա մի քարաշեն բուրդակ լայն բուրգ երևաց: Մոտեցան կողքից անցնելու: Բուրգը անդուռ, անպատուհան էր: Ջարմացնում էր թռչունների անթիվ բազմութունը շենքի ու բուրդակ պատերի վրա, շուրջը և օդի մեջ սև թուխպի պես տարածված: Նրանք իրար հետ մրցելով ներքև ու վերև էին թռչում շենքի մեջն ու պատերին:

— Ի՞նչ գեշ բան է, ի՞նչ բան է.— հարցրեց մի երիտասարդ գինվոր: Կողքինը բացատրեց, որ դա պարսիկների գերեզմանատունն է, մեռելների վայրը: Բերում են մեռելներին դնում այս շենքի մեջ, թռչուններին կեր: Դա է նրանց թաղումը: Հենց որ գիակը թողնում են հեռանում՝ թռչունները ական թոթափել մաքրում են միսը, թողնում կմախքը: Ապա մեռելաթաղները գանգը դնում են ներսի պատի խոռոչներում հազարավորների կողքին:

Ավելի մոտեցան շենքին: Գիշակերների տենդային իրարանցումը սաստկացավ: Երևում էր շենքում զստմանլի խրախճան կար: Մեռելների մտով ծանրացած թռչունները թռչելու ունակութունից զրկված հազիվ էին ցատկոտում պատի վրա արձակելով մի կռիչ՝ խռպոտ ու թավ: Նրանց կեռ կտուցներից կախ էին ընկած մսի ջլեր, շորի ծվեններ, կովում փեարած բմբուլով: Օդում թռչունները անշուշտ նորեկներ՝ մոլեգնում, սաստկացնում էին մրցումը: Մահ էր հոտում այդ սարսափելի շենքից:

Արսենը դաժան պատկերացումով մտածեց իրենց գալիքի մասին.

«Ո՞վ գիտե մեզանից քանիսները այդ դաժան անապատում կեր պիտի դառնան այսպիսի զազիր գիշակերներին»,— մտածեց նա:

Մահվան տգեղ պատկերը պղտորեց առանց այն էլ նրա տխրամած սիրտը:

Հանկարծ նրա մշուշված աչքերին երբացեց Խորիշայի պատկերը: Ջերմ, ինչպես արևի ճառագայթը և կենսալից՝ նա մեղմացրեց, չբացրեց մահվան այդ դժնի տեսիլը: Կյանքը, կյանքի հույսը գուրզուրեց Արսենի հոգին: Նա հառաչեց թեթև և ժպտաց յուրովի:

Բայց դեռ որքա՞ն ճանապարհ կար մինչև Խորիշային տեսնելը: Վրկանա ծովի շուրջը պտտվել, մտնել Հայոց աշխարհը, կովել պարսից դեմ, հաղթել նրանց և ապա վերադառնալ Վախթանգի ապարանքը, որ տեսնի իր սիրեցյալին... Ո՞վ գիտի ինչպես կլինի, ի՞նչ կլինի...

Զորագունդն անցավ մահվան աշտարակից և ավելի խորացավ ամայի դաշտերում: Տեղ-տեղ ճանապարհը նեղանում էր երկու ճահիճների արանքում, կարիք կար մեծ զգուշության, չընկղզվելու տիղմի անդնդում:

— Իրենց տերերի պես է երկիրը, խարդա՛խ, դավադի՛ր,— ասաց Գարեգինը՝ հավասարվելով իշխաններին:

— Մենք էլ ունենք «մորուտներ», ո՞վ է մեղավոր, որ չենք բանեցնում,— նկատեց Տաճատ Գնթունին, լուակյաց մի իշխան, հազվագյուտ առիթի խոսող:

— Գուցե և ճշմարիտը դո՛ւ ես...— գլուխը տատանեց Գարեգինը՝ դառնությամբ նայելով նրա աչքերի մեջ:

— Հայ ենք՝ ճշմարիտ ենք,— ասաց Արսենը:

— Նվիրվում ենք անվերապահ, սիրում՝ անկեղծ, թշնամանում՝ աշկարա,— նկատեց կրկին Տաճատը,— խորամանկություն չունենք, մեր ամենամեծ հանցանքը:

— Թերև՛ս, թերև՛ս,— դառնացավ նորից Գարեգինը:

Արդեն դուրս էին եկել ճահիճի նեղ ուղիից և ընկել արձակ դաշտ: Նյուշապուհից բավական հեռացել էին: Գարեգինը մտահոգ նայեց շուրջը, ապա իշխաններին.

— Շրջապատման փորձի դեպքում իսկույն թևերը բաժանվում են երկու մասի և ուղիղ ճակատ հարձակվում թշնամու թևերի վրա: Դե, ո՛ն, իշխանները իրենց զորամասը:

Իշխանները մի կողմ կանգնեցին: Նրանք՝ բացի հրամանատարը՝ հինգ հոգի էին: Զորագունդը գալով հավասարվելով՝ անցան իրենց զորամասի գլուխը: Զորագունդը սեղմվեց և զենքերը պատրաստ վիճակի բերեց: Արևելքում գորշ-փոշեգույն դուրս լուղացին Քուշանաց աշխարհի սահման լեռները:



Վարդանի գորագնդերը արագ անցան Սևանը, գիշեր ցերեկ արշավելով, իշան Սևարդյաց մթին անտառները և ձորերից դուրս գալով, ընկան Աղվանից աշխարհի տափաստանները: Այստեղ նա գիրադասեց արշավել գիշերները՝ եթե ճանապարհները, որ եզերում էին լեռնային անտառները՝ հնար էին տալիս երբեմն էլ ցերեկները երևալ: Վարդանն սպասում էր առաջին հետախույզներին, որ տեղեկացնեին, թե ուր է գտնվում պարսից բանակը: Զորագլուխները կարգված էին և գնդերը բաժանած: Զորագլուխներից էին Արշավիր Արշարունին, սրան զինակից Մուշ Իմաքսյան իշխանը, հորեն հորիստունին՝ զորավիգ ունենալով Քաթուլ Դիմաքսյանը: Իր հետ էր Արտակ Պալունին: Զորագնդումն էր նաև Աղվանից հազարապետը: Վարդանին անմիջապես հետևում էր Դավիթ սեպուհը Մամիկոնյան գնդով: Արտաշատի երիտասարդները այդ գնդումն էին: Նրանք իրար կպած գնում էին գնդի հետևից: Շատ երջանիկ էին. միայն մի բան տխրեցրել էր նրանց: Դավիթ սեպուհը նրանց չէր տեղավորել Վարդանին մոտիկ շարքում, որտեղից նրանք հնար կունենային լսել Սպարապետի զրույցները, լսել ձայնը: Երբ համարձակվելով Կորյունը հասկացրել էր Դավիթ սեպուհին այդ ցանկությունը՝ սա մտրակի մի-մի հարվածով տվել էր պատասխանը:— «Ի՞նչ է, Մահվիռոտներո՞ւմ եք արյուն թափել հետը, որ նրա հին զինվորների տեղը առնեք, լակոտնե՛ր...»: Դրանից հետո համեստացել էին արտաշատցիները: Եվ հիմա ստիպված գոհանում էին՝ հեռվից Վարդանին դիտելով շարունակ: Նրանք կերպարանափոխվել էին. զինվորի ըզգեստներն ու գնեքերը խոշորացրել էր նրանց, և տվել տյրմարդու տեսք ու կեցվածք:

Առավոտյան արշալույսի ոսկեհալոցի խորքից մի սև ծուխ էր ուղորվում դեպի երկինք:

Զորագունդը աշխուժացավ:

— Սերուխտի ասպատակը հասել է տեղ,— ասաց Վարդանը Արշավիրին, — ասել է՝ զորաբանակը մոտ է:

— Լավ կլինե՞ր Կուրն անցնե՞ինք հետո:

— Ընդհակառակը, թող նա անցնի:

Վարդանը կանգ առավ և աչք բարձրացրեց վեր: Իսկույն Դավիթ սեպուհը դուրս թռավ մի կողմ և հրամայեց.

— Դադա՛ս՛ա՛ն՛ր:

Զորագունգը կանգ առավ, սեղմվեց: Դավիթ սեպուհը շտապեց Վարդանի մոտ: Վարդանը նրան հրամայեց բոլոր զորագրողներին մի-մի մաս առաջապահ հանել և մի փոքրիկ զորամասով գնալ հետախուզել պարսից զորագնդի ուժերն ու շարժումը:

Դավիթը Մամիկոնյան գնդից հանեց հետևի տասը շարքը, մյուսներից նույնքան և գլուխ անցնելով դրանց՝ առաջ անցավ: Երիտասարդները այդ զորամասումն էին: Նրանք այնպես շարժվեցին, կարծես իրոք հարսանիք էին գնում:

Առաջին կռիվը...



Գիշերային խավարը հազիվհազ թույլ էր տալիս նշմարել կուր զետի աչ ափով դեպի Տփղիս շարժվող վրացական զորագունգը, որ գնում էր անաղմուկ և հաճախ կանգ առնելով: Զորագնդի հրամանատարը, իշխան Վախթանգը սպասում էր տփղիսամերձ լեռների հետևով դեպի արևմուտք և հարավ գնացած զորամասերի տեղ հասնելու և հարձակման պատրաստ լինելու լուրին: Պարսից կայսերական զորքը Տփղիսում շատ ամուր էր նստած և ուժեղ էր, ձեռնարկը՝ հզի անակնկալներով ու վտանգներով: Երկու օր առաջ պալատում այդ հարձակման և առհասարակ պարսից իշխանության դեմ դուրս գալու մասին կրկին տաք վեճեր էին եղել: Վրաց իշխանների մի մասը դեմ էր եղել ապստամբության՝ մեջ բերելով Ալանաց Դուան և հոների խուժման վտանգը: Սակայն թագավորի վրդովված, վճռական խոսքը ներգործել էր:— Իշխանների մեծամասնությունը Վախթանգի ուժեղ միջամտության ազդեցության տակ՝ վճռել էր ապստամբել և օգնել Վարդանին, որ գնա Սեբուխտի դեմ:

Իշխան Վախթանգը իջավ նժույգից, թևքով սրբեց իր քրտնած գեմքը և նժույգի սանձը զինվորներին տալով՝ գնաց նստեց ճանապարհի եզրին:

Օգնական հրամանատարները շրջապատեցին նրան:

— Վիճում էիր հետս,— դարձավ նա իր դիմաց կանգնած մի այլ իշխանի,— ասում էիր՝ առաջ թող մի Վարդանը ոչնչացնի Սեբուխտին, հետո մենք՝ պարսիկների կայանը:

— էլի եմ ասում,— խոսեց մթան մեջ լավ չերևացող իշխանը,— մենք սրանց կարող ենք փախցնել, գցել Սերուխտի բանակը, իսկ եթե Վարդանը Սերուխտին շարդի՝ սրանց օգնութունը նրան էլ բանի պետք չէ:

— Խելացի է միտքդ, Սուլոմոն,— ասաց Վախթանգը,— բայց Վարդանն էլ ի՛ր կողմից կարող է փախստական զորք բաց թողնել այս կողմ: Ո՞րն է խելացին. պո՞չը ջախջախելը, թե՞ գլուխը: — Ո՞րն է պոչը, ո՞րն է գլուխը,— հարցրեց Սուլոմոնը:

Իշխանները ծիծաղեցին:

— Սատանան խոռով կենա պարսիկերի գլխին,— ասաց մեկը մթան միջից,— գլուխն է՛լ սատկի, պոչն է՛լ նրանց, հա՛:

— Գլուխը Սերուխտն է Աղվանքում,— խոսեց Վախթանգը,— Տփղիսում նստած պարսիկ բանակը պոչ է, և ուրիշ ոչինչ:

— Տեսնենք, տեսնենք,— առարկեց Սուլոմոնը,— որը ուժեղ զուրս գա՛ գլուխը նա է:

— Որին որ շարդեցիր՝ գլուխը նա է՝ թե կուզես ճիշտն իմանալ,— վճռական ձայնով ասաց Վախթանգը,— սա մոտ է, քթնե-րիս տակ, հիմա էլ քնած. զա՛րկ և վերջացրո՛ւ, հերներն անիծած:— Բայց սուրհանդակներն ուշանում են, երկար չենք կարող կանգնել: Գնանք մի փոքր էլ:

Զորագունդը շարժվեց:

Մթան մեջ խավարակուռ արձանի նման խստորեն նայում էր Տփղիսի արևմտյան սարը: Մոտենում էին, և ամեն պահ պարսիկ հետախույզներ կամ պատահական մարդիկ կարող էին հայտնվել:

Սակայն սուրհանդակները հասան և լուր բերին, որ երկու զորամասերն էլ հասել են հարձակման կետերին և սպասում են Տփղիսի կովի աղմուկին, որ իրենք ևս սկսեն:

Լուսադեմին սկսվեց հարձակումը: Հանկարծակիի եկած պարսիկ կայնեական զորքը անկարող եղավ ուշքի գալու և կանոնավոր պաշտպանութուն ցույց տալու: Վրացի զորագունդը լիովին ուշնացրեց Տփղիսում «գալարված օձին», ինչպես ասում էր թագավորը և ազատեց Վրաստանը:

Սուրհանդակները թռան դեպի Վարդանի զորագունդը՝ ավետելու հաղթութունը և ուրախացնելու հայերին եղբայրական օգնության լուրով:



Վարդանը զորագունդը քաշեց անտառի եզրը և դագար տվեց: Հեծյալներն իջան նծուզներից:

Հետևյալ առավոտյան Դավիթն արագ արշավով դարձավ ու հայտնեց, որ թշնամին անցավ Կուր գետը և գալիս է դեպի Խաղ-խաղ: Վարդանը կանգ առավ, հրամայեց ընդունել մարտական կարգ: Արշավիրը Մուշի զինակցությամբ բռնեց աջակողմյան թևը: Զախակողմյանը հանձնվեց Խորեն Խորխոռունուն, զորավիգ՝ Քաթուլ Դիմաքայանը: Ինքը բռնեց կենտրոնը: Պահեստում նշանակեց Արտակ Պալունուն՝ բանիմաց զորականի:

Անտառներն ու բլուրները վերջացել էին, առջևը բացվում էր Կուրի դաշտավայրը: Վարդանի զորագունդը թաքնվեց բլուրների և անտառների հետև: Վարդանն առաջ անցավ անտառի եզրերը և սկսեց դիտել Կուրի կողմը: Թշնամին հաջող հուն էր գտել, անցել գետը և դասավորվում էր: Պարզ էր, նա գտել էր Վարդանի տեղը, հիմա շոշափում էր նրան և պատրաստվում հարձակման: Անտառի խորքից դեպի Վարդանը շարժվեց մի բավական ստվար այրուծի, որ առաջ գալով մի փոքր դանդաղեց ու կանգ առավ: Դրոշները որոշվեցին, դա Աղվանից այրուծին էր, որ կռվով նահանջել էր, անցել գետը, Հայաստան անցնելու մտադրությամբ: Ապա նրանից բաժանվեցին երկու հեծյալներ, որ սրարշավ եկան այս կողմը: Խաժական երիտասարդներ ուրախ ու վստահ մոտեցան Վարդանին, իջան ու ողջունեցին: Վարդանը ձեռքով կանչեց նրանց իր մոտ: Առաջ եկավ.

— Կովե՞լ եք, — հարցրեց Վարդանը:

— Կովել ենք, Սպարապետ, բայց մեծ է թշնամու զորաբազ նակը...

— Իսկ ժողովո՞ւրդը:

— Լեռներն է և անտառները:

— Ասացե՞ք թող այրուծին գա:

Հեծյալները թռան: Մի փոքր անց մոտեցավ Աղվանից այրուծին՝ հրաշալի մարտիկներով, որոնք թեև հոգնած տեսք ունեին, բայց ընկճված չէին: Առաջ եկավ նրանց հրամանատար Վահան իշխանը:

— Ինչո՞ւ չսպասեցիք մեզ, — հարցրեց Վարդանը:

— Չէինք կարող, սկսել էին գյուղերն այրել ու կոտորել շի-  
նականներին:

— Սանր է և դժվարին: Հազկերաը երկրի արմատն է կըտ-  
րում: Գե՛, ինչ եղել՝ եղել է,— Վարդանը զննեց Աղվանից այրու-  
ձին,— ժամանակ չկա, անցնենք գործի:

— Հրամանդ,— ասաց Վահանը:

— Գետի հունն իմացողներին կցիր զորամասերին:

Արագ կատարվեց Վարդանի կարգադրությունը և զորագունդը  
վերջնական մարտակարգ ընդունեց: Վարդանի զորագնդի թևերը  
բավական հեռու էին իրարից: Սերուխտը,— դա կարելի էր նկա-  
տել,— դասավորեց իր զորագնդի համապատասխան մասերը  
Վարդանի դեմ այնպես, որ կազմվում էր ուժեղ կենտրոն և թույլ  
թևեր: Վարդանն անմիջապես իր կենտրոնից ուժեղ մասեր ուղար-  
կեց թևերը և նրանց հրամայեց վճռական թափով հարձակվել  
Սերուխտի թևերի վրա: Խորհնն ու Արշավիրը հանկարծ դուրս  
թռան անտառներից ու շեշտակի սլացան Սերուխտի թևերի վրա:  
Մարտը բորբոքվեց թևերի անհավասար կշռումով: Հայերի ուժեղ  
թևերը արդեն շփոթ էին գցել Սերուխտի թևերի մեջ, որ Սերուխ-  
տը սպասելով Վարդանի ուժեղ կենտրոնի հարձակման կանգնեց  
մի պահ անգործ, մինչև Վարդանի երկու թևերը խժռում էին Սե-  
րուխտի սակավաձեռն թևերին: Սերուխտը տատանվեց՝ հարձակ-  
վի Վարդանի կենտրոնի վրա՞, թե՞ ոչ... Ու մինչ կվճռեր այդ՝ իր  
թևերն սկսեցին քաշվել: Նա հարձակվեց իր ձախ թևին օգնու-  
թյան, բայց այդ պահին Վարդանն իր թևե սակավաթիվ, բայց  
օգի առած զորամասով հարձակվեց նրա թիկունքի վրա: Պարսից  
զորքը մի ակնթարթում շփոթվեց, խառնվեց, կորցրեց իր հրամա-  
նատարներին և սկսեց խուճապահար փախչել դեպի գետը, դեպի  
ուր սեղմում էին նրանց հայ և աղվանից զորամասերը: Սկսվեց  
մի ամոթահար փախուստ, որ քանի զնում դառնում էր աղետա-  
փ: Սերուխտը մի քանի մեծամեծների հետ հազիվ իրեն գցեց  
նավակը և ճիգ էր թափում մյուս ափը գցելու իրեն: Իսկ պարսիկ  
զորքը հալածված՝ սկսեց գետի ափով դեպի ներքև փախչել: Հա-  
յերը և աղվանները ճանապարհը փակեցին: Պարսիկները ազատ-  
վելու համար իրենց գցեցին գետը: Սկսվեց գետամիջի մարտ:  
Վարդանի զորամասերը պարսիկներին կամ կոտորում էին կամ  
ջլում գետի խոր տեղերը, ուր նրանք խեղդվում էին: Պարսից զոր-

քի մի մասը նժույզների վրա դիմանալով անցկացա՛վ մյուս ափը՝  
Մեծ մասը կուլ գնաց գետին։ Սերուխտի նավակը նետահար  
եղավ, որով և նրա հետ պարսիկ մեծամեծներից շատերը ընկան։  
Վերջապես Վարդանը շեփոր փշել տվեց, որ դադարեցնեն հետա-  
պընդումը։ Թշնամին վճռական ջարդ էր կրել։ Նա խորտակվել էր  
անսպասելի դյուրին, աննախընթաց հաջողությամբ։

Զորագունդը հավաքվեց։ Զինվորները փոշու մեջ կորած,  
քրտնամխած, հեկուլվ շարվում էին։ Եկան և հրամանատարները։  
Արշավիրը ծիծաղից խլիխլթում էր թամբի վրա։ Նա մոտեցավ  
Վարդանին, ուզում էր բան ասել, բայց անզուսպ մի ծիծաղ էր  
պայթել նրա մեջ, չէր թույլ տալիս խոսելու։ Նրա ծիծաղը վարա-  
կեց մյուսներին, ապա զորագնդին և ծիծաղի մի փոթորիկ պայ-  
թեց մարտադաշտում։

— Ես այսպիսի բան չեմ տեսել, — ասաց Վարդանը ժպտա-  
լուով և գլուխը օրորելով, — ինչպե՛ս եղավ։

— Մի կարգին մարտ չեղավ, — ասաց Խորենը։

— Ի՞նչ մարտ, — ասաց Թաթուլ Դիմաքսյանը, — բերանները  
բաց նայում էին, թե ինչպես էինք թևերը ջարդում։

— Կարծես ջարդվել էին ուզում՝ եկան ջարդվեցին, — ասաց  
Աղվանից այրուձիի հրամանատարը։

Վարդանը թեթև ժպտում էր և մտածում։

— Սերուխտը քաջ զորավար է, փորձված, — ասաց նա, — և  
դորքը լավ մարզված էր, ուրիշ անգամ կճզմեր մեզ, բայց այս  
անգամ մեր հարվածի հանկարծակիությունը շփոթեց նրան։ Սե-  
րուխտը շկարողացավ կռահել մարտի ընթացքը։ Ոչ, պատահմունք  
էր, հաջող պատահմունք։ Ամեն զորքի հետ կպատահի։ Թերևս  
մեր կյանքում այս մի անդամն էր՝ տեսանք։ Չը՛մ, — քմծիծաղով  
խորհրդածեց Վարդանը, — ինչ էլ որ լինի՝ վատ է, իհարկե, ան-  
վանի զորավարի համար...

— Անվանին անվանի է, խոսք չկա, — լրջացավ Արշավիրը։

— Այս ճակատամարտը եղբայրական ժողովուրդների առա-  
ջին և հաջող հարվածն էր գոռոզ Հազկերտին, հիանալի կովեցիե  
աղվան մարտիկները, — ասաց Վարդանը։

— Լավ էին, լավ կովեցին, — հաստատեցին մյուսները։

Վահանը խոնարհություն արեց Վարդանին։

Վարդանը հանկարծ խստորեն նայեց շուրջը և անհանգիստ  
հարցրեց.

— Մուշ իշխա՛նը... ո՞ւր է նա:

— Այո՞, Մուշ իշխա՛նը...— հարցրեցին շփոթված հրամանատարները:

— Ընկա՛վ, Սպարապետ,— ասաց Գավիթ սեպուհը,— ուղարկել եմ, որ բերեն դին:

Զորավարները լրջացան: Մի փոքր անց բերին սպանված Մուշին: Վարդանը հանեց սաղավարտը, մյուսները հետեցին նրան:

Զորագունդը շարժվեց: Մուշի դին տարան հետները մինչև առաջիկա բնակավայրը և թաղեցին եկեղեցու գավթում:

Վարդանը հանգիստ տվեց զորագնդին: Նա հայտնեց, որ երկու օրից հետո ճանապարհվում է դեպի Ճորա Պահակ:

Այդ օրը երեկոյան սուրհանդակ եկավ Ատոմից, որ գործերը խառնակ են Արտաշատում և սպասվում են դավաճանական դեպքեր:

— Պետք է շտապենք, շա՛տ շտապենք,— ասաց Վարդանը,— վախենում եմ մինչև հայրենիք վերադառնանք՝ ամեն ինչ տակնուվրա լինի այնտեղ:

Սուրհանդակին պատվիրեց դառնալ Ատոմին և հայտնել, որ ներշնչված և ժողովրդի հետ մի կերպ դիմանան, մինչև ինքը վերադառնա:

Նույն օրը երեկոյան հասան Վախթանգի սուրհանդակները և լուր բերին, որ վրացիները ոչնչացրել են Տփղիսի կայանը: Ուրախութունը մեծացավ: Վրաստանի օգնությունը ոչ միայն քաջալերանք էր տալիս, այլև հարվածում էր Հազկերտի հրեշավոր գազափարին՝ բռնանալ ժողովուրդների խղճի և ազատության վրա:



Հայոց այրուձին հասավ ճակատ, ուր տեղավորված էին պարսից զորքերը՝ միշտ ենթակա քուշանների անակնկալ հարձակումներին և պատրաստ նույնը դարձնելու նրանց: Զորքերի ճամբարները թաքնված էին ցրիվ, անապատի իջվածքներում և հովիտներում:

Գլխավոր ճամբարին մոտենալիս նկատեցին իրենց դիմաճորդ մի փոքրիկ գորամաս: Դա Նյուսալավուրտի տեղակալ Զո-

րա զորավարն էր, որ գալիս էր ընդառաջ: Երբ մոտեցան՝ Զորա զորավարը զվարթագեմ ողջուն տվեց այրուձիին, զինվորական ողջագուրանքով գրկվեց Գարեգին իշխանի հետ և ապա բարձրաձայն հարցրեց այրուձիի ողջութունը: Գարեգինը պատասխանեց, որ այրուձին ողջ ու հաջող հասավ տեղ և պատրաստ է ընդունելու մարտական հրամանները: Գնացին ճամբար: Զորավարը հայ իշխաններին հրավիրեց իր տաղավարը:

Ընթրիք տվին: Զորա զորավարը՝ հիսունից անց կորովի և շատ ախորժելի զորական՝ զվարճախոսությամբ զատվում էր հայ իշխաններից: Նա դուրս եկավ շատ մտերիմ և հաճելի զորական: Հիշեց Վարդան Մամիկոնյանին և հատուկ հարգանքով:

— Մենք ունենք շատ մարտական զորավարներ, բայց Վարդան սպասալար շունենք: Ձեր կարելի այդպիսի զորականի բանտարկել... — ցավեց Զորա զորավարը:

Ընթրիքը կարճ տևեց, որովհետև հյուրերը հոգնած էին: Զորավարը արձակեց նրանց և բարեմաղթեց խաղաղ քուն:

Գիշերը մի առժամ խաղաղ էր: Սակայն լուսադեմին պարսից զալարափողը տագնապ հնչեցրեց: Հարևան ճամբարներում պարսիկ զորքը ոտքի ելավ: Գարեգինը վազեց Զորա զորավարի մոտ:

— Քուշանները հարձակման են պատրաստվում, — ասաց Զորա զորավարը, — գնում ենք մարտի:

— Անշուշտ նաև մե՛նք պիտի գանք, — հարցրեց Գարեգինը:

— Ոչ: Դուք հանգստանում եք մի քանի օր:

Պարսից զորքը երկու թևի զատվելով գնաց ճակատի գիծը ճամբարում մնաց միայն հայոց այրուձին:

— Կարգին մարդ է երևում՝ այս Զորան, — նկատեց Արսենը, — թերևս ազնիվ պատերազմ տանի մեզ...

Առավոտյան ճեպագնաց եկավ Զորա զորավարից՝ շտապ արշավով ճակատ հասնել — տագնապ է: Գարեգին իշխանը կանչեց իշխան հրամանատարներին և կտակեց մահվան դեպքում այրուձին ղեկավարողների հաջորդութունը՝ Արսեն Ընծայոց, Տաճատ Կնթունի, Ներսես Քաջբերունի, Արշամ հարյուրապետ: Այրուձին հասավ ճակատ: Անծայր անապատ, ոչ մի նշան թշնամու: Խաղաղութուն՝ ինչպես նախաստեղծման օրերում: Ավազի մեռած ալիքներ և ամայի հորիզոն:

— Հայոց այրուձի՜ր դիրքը որոշվեց պարսից զորագնդերի երկու թե՛ր միջև: Զորքերը շարժվեցին՝ պատրաստ մտնելու մարտ: Սակայն քուշանների և ոչ մի նշան: Հայոց այրուձին սովոր էր քուշանական պատերազմին: Քաջ գիտեին քուշանական անապատի խարդավանքները: Այնպես որ՝ ճակատի ամայությունը չզարմացրեց Գարեգինին:

Զորա զորավարը եկավ ստուգատես, գոհունակ դիտեց այրուձիին, հրամանատարներին, ապա հայացքը պտտեցրեց բոլորին մեկ-մեկ և հանկարծ աչքերը լցվեցին: Նա խեղդված ձայնով ինչ-որ շշնջաց, սրից միայն լսվեց որոշ «ափսո՛ս» բառը: Հետո հրամայեց.

— Կսպասեք մինչև մեր երկու թևերը կգրոհեն, կմտնեն մարտ, ապա միայն կգրոհեք գուբ: Գրոհեցե՛ք շեշտակի, քառասըմբակ, խրվեցե՛ք թշնամու շարքերը:

— Հրամա՛նդ,— առաց Գարեգինը:

Զորա զորավարը ողջագուրվեց՝ Գարեգինի հետ, համբուրեց նրան շերմագին: Հետո դարձավ բոլորին:

— Դե՛, զավակնե՛րս, քաջարի՛ զավակներս, Որմիզըը ձեզ օգնական:

— Ամե՛ն,— առաց ողջ այրուձին հայկական կարգով: Զորա զորավարը հեռացավ:

Մինչ նա կհասներ իր զնդերին՝ անապատի տակից բուսան քուշանական գնդերը: Նրանք փոթորկելով, արագ մեջմեջ կտրելով իրար՝ արագ էլ կանգ առան կիսաբոլորակ՝ չէր հասկացվում՝ հարձակման, թե՛ պաշտպանման պատրաստ:

Պարսից աչ թևը դանդաղ առաջացավ: Նրան հետևեց ձախը: Հայոց այրուձին մնաց կանգնած:

— Տարօրինակ ուզմակարգ է,— մոմոաց Գարեգինը:

Ըստ երևույթին քուշաններն էլ այդ մտածեցին: Չշարժվեցին: Թավական առաջացան պարսից զորամասերը, բայց քուշանները մնացին անշարժ: Ճեպագնաց եկավ Զորա զորավարից. «շեշտակի գրոհե՛լ»:

— Գրո՛հ,— հրամայեց Գարեգինը և առաջ նետվեց:

Այրուձին սլացավ դեպի քուշանները:

Գարեգինը անհանգստացավ և սկսեց արագ լուծել հանելուկե՛նքը՝ ի՛նչ էր այս ուզմակարգը: Հավասարվելով պարսից զորա-

մասերին՝ Գարեգինը նկատեց, որ նրանք հետզհետե դանդաղեց-  
նում են ընթացքը: «Դա՛վ...» — կայծակեց հանկարծ Գարեգինի  
գլխում: Հասկացավ: Զորա զորավարը պատրաստվում էր նույն-  
պես «շեշտակի» հետ շրջվել, ինչպես շեշտակի քուլանների բե-  
րանն էր տալիս հայկական այրուծին: Արդեն մոտենում էին քու-  
շաններին, որ պարսիկները շեշտակի ետ շարժվեցին: Բարեբախ-  
տաբար քուլանները չէին շարժվում: Գարեգինը հրամայեց դան-  
դաղել մի փոքր և կանչելով մյուս հրամանատարներին ասաց.

— Գա՛վ է, իշխաննե՛ր... և հրամայեց. — դանդա՛ւա՛ւ դ:

Այրուծին կտարեց թափը: Իշխանները զարմանալով հետևել  
սկսեցին: Արդեն այրուծին այնքան էր մոտենում քուլաններին,  
որ պարզ տեսնում-տեսնվում էր: Քուլաններից չորս հինգ հեծյալ  
առաջ եկան և կանգ առան:

— Իմ հետևի՛ց, — հրամայեց Գարեգինը և առաջ թռչելով  
այրուծին շրջեց տարավ պարսից վրա:

Պարսիկները գլխի ընկան իսկույն այդ շարժման նպատակը  
և հարձակվեցին հայերի վրա: Գարեգինը կտրեց այդ հարձա-  
կումը ավելի վճռական գրոհով: Առաջին կարճ հարվածներով նա  
մի փոքր կասեցրեց պարսիկների թափը և իսկույն ետ շրջվեց և  
շեշտակի թռավ դեպի քուլանները՝ հանելով սաղավարտը և ճո-  
ճելով օդում: Նույնն արին և զինվորները: Քուլաններն հասկացան  
և ծիծաղով ու վայրի գոչումներով ընդունեցին այրուծին: Պար-  
սիկները կանգ առան անվճռական: Ապա զգալով ուժերի գերա-  
զանցություն քուլանների կողմում՝ արագ տեղի տվին, քաշվե-  
ցին: Գարեգինն իսկույն բուժակներ ուղարկեց մարտադաշտը՝ վի-  
րավորներին օգնության և այրուծին տարավ դեպի քուլաններին  
հրամանատարը: Քուլանները սեղմ օղակի մեջ առան այրուծին և  
լուռ սպասեցին իրենց հրամանատարի կարգադրության: Կար-  
ձոտն, շեղակն, սակավամորուս հեծյալներ՝ նժույգների հետ միա-  
մարմին՝ իրենց խորամանկ և միաժամ միամիտ հայացքներով  
չափեցին նորեկներին:

Քուլանների զորավարը՝ համարյա անմորուս, աներեւակայծա-  
ղի քաջառողջ մի երիտասարդ, սուր, զվարթ նայեց այրուծին և  
պարսկերեն իմացող թարգմանի միջոցով ողջունեց.

— Խաղաղություն և ողջություն քաջարի զինվորներին:

— Անպատի որդիներին խաղաղություն և ողջություն:

Ու սկսվեց հարցուփորձը:

— Ինչո՞ւ փախաք:

— Նրանք մեր թշնամիներն են,— ասաց Գարեգինը:

— Ո՞ր երկնքի տակից եք:

— Արևմտյան երկնքի,— թարգմանեց և հարմարեցրեց Արշամը, որ եղել էր Քուշանիայում և գիտեր նրանց ոճը:

— Ո՞վ է ցեղապետը:

— Զորավար Վարդան Մամիկոնեից տերը:

— Ավարթա՞նը հա՛ հա՛... Քաջարի զորավար է: Ո՞ւր է նա:

— Կովում է պարսիկների դեմ:

— Ինչո՞ւ:

Գարեգինը բացատրեց: Քուշան զորավարը լսեց ուշադիր ու լուրջ, բայց հետզհետե սուր ժպիտը շողաց փոքրիկ աչքերում և նա բարձր քրքշաց.

— Բուրիս երկիրը մեկ շէ՛... Հո՛, հո՛, հո՛, հո՛... Մի քիչ գու՞ շարժվեք, մի քիչ՝ նրանք, հարմարվեք էլի՛:

Քուշանների զորագունդը հռհռաց մի ծայրից մյուսը:

Գարեգինը բացատրեց կրկին: Բայց քուշան զորավարը բան չհասկացավ: Ապա անցան բուն գործին:

— Բախտավո՞ր տեղ է,— հարցրեց զորավարը իր հետև կանգնած բրդոտ շամանին՝

— Բախտավոր է, թող վառեն իրենց կրակը խաղաղությամբ,— ասաց շամանը:

— Է՛, մնացե՛ք մեր երկրում,— ասաց զորավարը:

Գարեգինը հայտնեց իր մտադրությունը՝ Վրկանա ծովի ափերով հայրենիք վերադառնալ և կովել պարսիկների դեմ: Քուշան զորավարը կնճռոտվեց և լռեց:

— Քուշան իշխանը չի՞ վստահում մեզ...:

— Ինչպե՞ս կարող եմ չվստահել,— ասաց քուշան զորավարը լուրջ, — ա՛յ,— մատը մեկնեց ուղամադաշտ, ուր ընկած էին հայ մարտիկները,— արյունը հավատարիմ է. բայց մեր անպատեններով անցնում են միայն գայլերն ու մենք...

— Զորավար, հանձն ենք առել կրակ-շուր, ահ-մահ,— վճրապահան խոսեց Գարեգինը,— միայն տուր մեզ մի ուղեցույց ու մի հավատարմախոսք:

<sup>1</sup> Կրոնավոր, կախարհ:

— Կտամ: Դուք ու ձեր ճակատագիրը:

Քուշան զորավարը բացատրեց, որ Վրկանա ծովից արևելք որոշ տեղ իրենց աշխարհն է, և այրուծին կգնա իջևաններով, այնուհետև սկսվում է հեփթաղների աշխարհը, և այրուծին պետք է նոր դաշինք կռի նրանց հետ:

— Որտե՞ղ է վերջանում ձեր աշխարհի սահմանը, — հարցրեց Գարեգինը:

Զորավարը մինչև ականջները ժպտաց՝ փայլեցնելով իր ըսպիտակ ատամները և ապա անկարող զսպել իրեն՝ բարձր քրքրեց:

— Սահման... հո՛, հո՛, հո՛... Թռչող ավազի, նժույգի, սրի հետ ի՞նչ սահման: Թոցնում են արոտներդ փոխում, — ո՞րն է նրանը, ո՞րը քոնը: Մեր աշխարհը թռչում է: Երևի ձեր աշխարհը կանգնած է, հո՛, հո՛, հո՛...

Գարեգինը ասաց, որ կմեկնի, երբ զորավարը թույլատրի:

— Հանգստացե՛ք դեռ, — պատասխանեց զորավարը, — սըրբազան շամանը կնայի աստղերին, կիմանա գնալու ժամը:

Քուշան զորավարը հրամայեց իր զնդերին քաշվել մոտավոր թիկունք: Թողնելով հայոց այրուծիին մի ուղեցույց, որ հետո հասնեն՝ ինքն իր զնդերով սլացավ քամու պես կորավ անապատի հորիզոնում:

Գարեգինը ճանապարհ ընկնելուց առաջ այրուծին ետ տարավ մարտադաշտը, ուր ընկած էին մի քանի զինվորներ: Նրանց մի մասը վիրավոր էր, որոնց վերցրին նժույգների վրա, իսկ սպանվածներին հավաքեցին թաղելու:

Մի խումբ զինվորներ անցան թաղման գործին: Նրանք մոայլադեմ հևալով սկսեցին փորել գերեզմանները: Այրուծին շրջապատել, տխուր դիտում էր գաջի պես դալկահար սպանվածներին, որ ստոած աչքերով նայում էին օտար երկնքին: Մի աշխույժ՝ համարյա պատանի զինվոր շարաճճի աչքերը պսպղացնելով պինդ գրկում էր դիակները, համբուրում, դնում էր գերեզմանի կողքին: Հասակավոր փորողը՝ քրտինքը սրբելով, խուլ մրթմրթում էր նրա վրա և ամեն անգամ սպանվածներին նայելիս՝ ձեռքը խնամքով քսում էր սպանվածների դեմքին, սրբում արյունը կամ փոշին:

Գարեգինը նայում էր քարացած, ինքնամփոփ: Նա սաղավարտը հանեց և զնաց դեպի բաց գերեզմանները:

— Տղայք,— հանկարծ բորբոքվեց նա,— տղայք... ահա ձեզ հայրենիքի զինվորները... Մենք սրանց կթողնենք հիմա օտար աշխարհի հողի մեջ... — հուզմունքը խեղդում էր նրան,— և դբայրենե՛ր... Մենք կոչում ենք հայրենիքի ազատության համար: Մենք զինվոր ենք: Շատ անգամ եմ ես զինվորին ուղարկել մահվան: Ի՛նքս մահ շատ եմ տեսել: Զինվորը լաց չգիտե: Իայց ես ահա ձեր առջև լաց եմ լինում... Կնոջ պես... Սրանց մայրերի տեղ... Սիրտս է կտրատում, որ սրանց պետք է թողնենք օտար երկրում... որ արժանի շեղան տեսնելու հայրենիքը: Հանեցեք հայրենի հողը, ցանեցեք սրանց սրտին, թող հանգիստ քնեն, աչքները չմնա մեր հետևից...

Զդմացավ և այրուծին: Լավեցին խուլ հեկեկոցներ: Հանեցին քսակները և սկսեցին հող ցանել զոհվածների կրծքին:

Զորագնդի քահանան, որ կեղծ ուրացման ժամանակ ծպտվել էր զինվորի գգեստում՝ կարճառոտ աղոթք ասաց ընկածների վրա: Հետո արագ թաղեցին: Քարեգինք ետ քաշվեց, նստեց նժույզը և դարձավ կրկին զինվորներին.

— Տղայք, եթե այդ էլ հրամայելը ձեռս լիներ, կհրամայեի ձեզ՝ չմեռնե՛ք, մինչև կհասնենք հայրենիք: Ամեն մեկդ թանկ եք ինձ համար: Լա՛վ խնամեցեք, օգնեցեք իրար, դուրս գանք այս ահավոր աշխարհներից:

— Պատվերդ կատար՛ր, զորավար իշխան,— ասաց ամենի փոխարեն Արշամ հարյուրապետը:

— Գե՛, աստված ձեզ պահապա՛ն, գնում ենք անցնելու կրակն ու ջուրը, ահն ու մահը: Առա՛ա՛ա՛ջ...

Այրուծին թեթև վարզով սուրաց անհետացած քուշանների ուղղությամբ: Երևաց նրանց ճամբարը:

— Ինչո՞ւ եք կոչում պարսիկների դեմ,— հարց տվեց Քարեգինը քուշանին:

— Ավազը դուրս է անում մեզ, իշխա՛ն,— պատասխանեց քուշանը:

Քարեգինը սկսեց մտածել ուղեցույցի և նրանց զորավարի ասածների մասին: Իսկ քուշանը ինքն իրեն շարունակեց բարձր.

— Ծածկում է շեները, քաղաքները, արոտները, գետերը... Մահի պես գալիս է հետևներիցս...

— Ամեն ժողովուրդ մի ցավ ունի,— ասաց ինքն իրեն Քարեգինը:



Վարդանի և Ներշապուհի մեկնելուց հետո Արտաշատի վիճակը ծանրացավ: Վասակյանք և վարդանանք արդեն ուշաբերվել էին Անզղի և Արտաշատի անցքերից և սթափ էին նայում վերահաս դեպքերին: Պարսիկ զորքերը թշված էին երկրի բերդերից, տեղ-տեղ շարդված, Դենշապուհը և մյուս մեծամեծները բանտումն էին: Հետզհետե ավելի ու ավելի տագնապալի էին դառնում լուրերը Աղվանքից շարժվող պարսկական զորքի մասին: Վասակյանք և վարդանանք իրար կողքի, իրար խաչաձևած լարում էին իրենց ուշադրութունը և հետևում դեպքերին՝ սպասելով հարմար առիթի պոռթկալու:

Ատոմը անհանգիստ էր: Ճամբարի շուրջը, Արտաշատի հարավային պարիսպների մոտ առանձին ճամբար դրել՝ սկսում էին ստվարանալ նախարարական զորագնդերը: Այնտեղ գնաց նաև Սյունյաց զորագունդը: Ճիշտ է, նախարարներից ոմանք չէին հակված՝ Վասակի կողմը, բայց Վարդանի կողմը ևս չէին: Իժվար էր ասել, թե ի՞նչ կստացվեր՝ եթե Վասակը ապստամբեր, բայց և չէր կարելի հուսալ, որ այդ շեղոք նախարարները օգնեին Ատոմին, եթե շասենք վեր կկենային նրան դեմ:

Ատոմի գործը գծվարացավ: Համազասպ իշխանը գնաց Պարթար՝ նոր զորահավաքի: Հարկավոր էր մեծ զգոնութուն և հնարք՝ դրութունը պահելու: Հավատարիմ և զլխավոր ուժերը գնացին թշնամու դեմ՝ զիջելով իրենց տեղը շատ կասկածելի, իսկ Ատոմի համար միանգամայն թշնամի մարդկանց: Նա ուներ որոշ հենարան՝ վարդանանց զորքերի մասերը, որ չէին գերակշռում վասակյանց ուժերին: Վստահել ժողովրդական բազմության խմբերին, հենվել նրանց վրա՝ իբրև իր դիմադրության ողնաշարի վրա՝ Ատոմը շատ էլ չէր վճռում, սովոր լինելով կանոնավոր զորքի արվեստին: Իր ձեռքի տակ ունեցած զորամասերը բավական կլինեին պահել եղած վիճակը: Բայց վասակյանք հետզհետե աճում էին նոր նախարարական զորագնդերի ժամանումով: Կշռույթը խախտվում էր: Վարդանի և Ներշապուհի արշավանքների ելքը գեռ հանելուկային էր: Ո՞վ գիտե, ինչ վախճան կունենա նրանց առաջիկա մարտը:

Բայց և ամենից շատ գծվարանում էր Վասակի վիճակը: Մո-

գերի, պարսիկ զորքի ջարդը, Դենշապուհի և մյուս մեծամեծների բանտարկումը ահավոր պատասխանատվություն էր Միհրնեբրսեհի առաջ: Պարսից զորքը գալիս է: Ահա կհասնի Հայաստան և կճնշի ապստամբությունը, և իրեն կկանչեն դատի: Ի՞նչ կարող է ասել իրեն արդարացնելու համար: Ո՞վ կհավատա նրա հավաստիացումներին, որ նա շի դավաճանել արքային: Այլևս ի՞նչ արժեք կունենա մի մարգպան, որ թույլ է տվել Անզղի խայտառակ, հանդուգն դեպքերը:

Նախարարները հավաքվում էին նրա մոտ և ջանում պարզել գրությունը: Վասակյանք նրան շտապեցնում էին; իսկ վարդանանք և շեղոքները կաշկանդում էին գործի անցնել:

Կեսգիշերային խավարը թաքցնում էր Վասակի դժգոհ դեմքը: Մայրաքաղաքը քնած էր վաղուց: Բակից լսվեց խլրտոց, դարբասի ճոխնչ: Սենեկապետը զեկուցեց Կողակի գալը:

Վասակը ցնցվեց: Ե՛վ հետաքրքրությունը, և՛ տարակուսանքը պաշարեցին նրան: Վարագույրի միջից ներս սողոսկող Կողակը նրա համար ահեղ լուրեր կունենար:

— Բարեողջույն, տեր իմ, — հոգնաբեկ, սառնաշունչ ձայնով խոնարհվեց Կողակը:

Նա շորացել էր՝ ծառին կպած կապկի կմախքի նման: Աչքերի բոլորքը կապույտ մի օղակ մատնում էր հիվանդություն և տանջալից կյանք: Անբարյացակամ էր նրա հայացքը: Ակամա հանձնարարություն և դավաճանած մարդու սիրտ — ահա այդ հայացքի բովանդակությունը:

— Կենդանի՞ են նրանք... — խռպոտ հարցրեց Վասակը:

— Դեռ կենդանի են, տեր իմ, — պատասխանեց Կողակը դաժան, — Միհրնեբրսեհը քեզ է սպասում...

Վասակը լռեց անմարդկային լուռությամբ: Շատ ուշ միայն խուլ ձայնով խոսեց.

— Պատմի՛ր...

Կողակը պատմեց Պարսկաստանի անցողարձեբը, Միհրնեբրսեհի դիրքը, սպառնալիքը, պահանջը... Վասակը բոլորը լսեց, իբրև մղձավանջի մեջ: Նրան դառնացրեց այդ պատմությունը: Բայց պաղ երկաթի պես քամավում էր նրա հոգուն մի բան, որ նա դժվար էր որոշում թե ինչը: Տարտամ զգում էր միայն այդ

Կողակի օտարացած հայացքի մեջ: Նա զայրացավ և դաժան շեշտով գոչեց.

— Դու ինձ ճշմարիտները պատմիր: Մի ծովովի կապկի պես...

— Ճշմարիտները, իհարկե, այն չէր միայն, որ պատմեցի, տեր իմ,— դաժանացավ Կողակը ներքուստ,— ճշմարիտները դեպքերից դուրս կգան հիմա... Միհրնեբսեհը իր մորթն է ուզում պրծացնել: Կօզնես նրան այդ բանում՝ փրկված ես նաև դու, շեռօզնի...

— Հա, ի՞նչ...

— Չես օզնի՝ ես էլ խոտով կլցվեմ... քեզ պես...

Վասակի շրթունքները ծովովեցին արհամարհալից ատելու-թյամբ:

— Ի՞նչ, քո մորթը և՛ս գին ունեցավ...

— Բարեբախտաբար, այո, տեր իմ,— եթե մորթս պրծացնեմ Միհրնեբսեհի ճանկերից՝ քոնը պրծած հաշվիր...

— Դու կհանդգնե՞ս, անասո՛ւն,— գոչեց Վասակը զայրալի և դոփելով հատակը կանչեց սենեկապետին,— զնդա՛ն տար սրան...

Սենեկապետը լուռ բռնեց Կողակի թևը: Կողակը այնպես հնազանդ ու դառնացած նայեց Վասակին, որ կարծես այդպես էլ սպասում էր: Միայն խուզ նվաց տառապալի ձայնով: Մերուկը հայտնապես խորտակված էր դժվար հանձնարարություններից ու երկար ճանապարհի նեղություններից: Տերեր կղրցրած ստրուկ մորթապաշտը կրում էր իր ստրկահոգության սխալ հաշիվների պատիժը: Ո՞վ կարող էր փրկել նրան, երբ նա բռնել էր ինքն իրեն զավաճանելու ուղին... Խարդավանքն էլ է բթանում:

Կողակի հեռանալուց հետո Վասակը սուզվեց անհանգստացնող մտքերի մեջ: Ի՞նչ կարող էր անել կանխելու համար Սեբուվատին, ինչպե՞ս կարող էր զնդանից հանել Դենշապուհին: Ո՞վ գիտե ինչով կվերջանար Վարդանի և Սեբուվատի ճակատամարտը... Իսկ մյուս կողմից ճշմարիտ և պարզ էր Միհրնեբսեհի պայմանապահանքը՝ կանխել: Հարկ էր Հազկերտի առաջ սրբել հանցանքները, հզոր ամացույց տալ հավատարմության: Ժամանակը սուղ էր, դեպքերը տարաժամ: Ժամեժամ փչսնում էր գործը... Հուսահատությունից ուշինչ չէր դուրս գա սակայն: Պետք էր ելք որոնել փրկել գործը, իրեն, իր զավակներին:

Նա շտապ հրավիրեց իր մօտ Գաղիշոյին: Ուռած աչքերով, քնատ, մոռալ ներս մտալ սա և լուռ նստեց: Վասակը հայտնեց, որ Կողակը եկել է:

— Զի սպանել դեռ երևի... — մոմոաց Գաղիշոն և ինքն իրեն ավելացրեց, — դեռ ժամը չէ: Կգա՛ ժամը, հա՛, հա՛, հա՛...

Վասակը խեթ նայեց այդ դաժան մարդուն և չպատասխանեց, Գաղիշոն շարունակեց իր գուշակութիւնները:

Վասակը հայտնեց Միհրնբերսեհի պահանջը:

— Արյո՛ւն շես թափում, արյո՛ւն, — կշտամբող ձայնով ասաց Գաղիշոն, — մի լա՛ւ վ արյուն, ւր... Ահա քո հանցանքը:

— Արյուն թափեցի Անգղում...

— Ուշացար: Սակա՛վ էր: Ակամա էր:

— Ավերակների՛ն թագա՛վոր դառնամ... Ողջ Հայոց աշխա՛րհը կոտորեմ...

— Ողջ Հայոց աշխարհը... Զարմացրի՛ր: Մտե՛լ ես աշխարհակալութեան խաղ՝ խազա նակ արյան հետ:

Վասակը դառնորեն ժպտաց:

— Արյան հետ խաղ... Իսկ չի՞ լինի, որ այդ արյունը մնա մարդկանց մարմնի մեջ, և խաղը անենք խաղաքարերի հետ...

— Բացի արյան ապացույցը ուրիշ ոչ մի փրկութիւն չունեաւ: Արյունը պիտի վկայի անմեղութիւնդ, արյան պիտի հաճատան վերջը: Եթե ոչ՝ այս խարդավանքների խաղում տանուլ կտաս:

Վասակը երկար ու դառնորեն մտածեց:

— Ուրեմն՝ ես դավաճա՞ն եմ: Հայրէ՛հիքի դավաճա՞ն...



Ավետիք բերդապետին հրամայելով խստացնել հսկողութիւնը՝ Ատոմը իջավ աշտարակից և գնաց արքունի տուն: Երբ մտալ սրահը՝ նրա ուշադրութիւնը գրավեցին իշխանները՝ տարված ինչ-որ լուրջ զրույցով:

— Սպարապետի հաղթութիւնից շեմ սպասում, թե բան դուրս գա, բայց նրա պարտութիւնից բան դուրս կգա: Անախորժ բան, — ասաց Ուրծա Ներսեհը:

— Աղետն այդ չէ: Կարող է և պարտութիւն կրել, — ասաց Տիրոց Բագրատունին, — աղետն այն է, որ Հազարապետն է ուշանում...

— Եվ նրան էլ սպասում ենք,— հարեց Գաբեղենից Արտենը ծուլլ հորանջելով լայնարերան մինչև ականջները:

— Իսկ ո՞ւր է օգնությունը,— հարցրեց Տիրոց Բագրատունին արհամարհանքով,— օգնությունն ուշացավ: Սեբուփաթը գոնեք է ծեծում:

Ատամը թեթևակի հարցրեց Տիրոցին.

— Անպայամա՞ն պետք է հունաց օգնությունը... հույները գուցե շօգնեն, բայց մեզ հետ կլինեն վրացիները և աղվանները:

— Սա՞նք է մեր վիճակը, շատ ծանր... — հորանջելով ծամեց խոսքերը Գաբեղենից Արտենը:

Ատոմին առավել դուր չեկավ, որ անկյունում նստած էր Գյուտը և աչքերը կիսափակ, լուռ հետևում էր զրույցին:

Ատոմը խոհեմություն համարեց լռել: Պարզ էր. նախարարներին վհատություն էր տիրում:

— Հույները չեն գա,— խոսեց կրկին Ուրծա Ներսեհը:— Տեսնենք ի՞նչ կանի Սպարապետը:

— Ինչ էլ որ անի, Արլաց տերությանը հո չի հաղթելու:

Ատոմը մտքում անիծեց այն պարտականությունը, որով կաշկանդել էր նրան վարդանը, եթե ոչ՝ պատրաստ էր արի հարվածներով լռեցնել այս վհատություն սերմանողներին:

— Կավ, որ այսպես է վիճակը,— ծամեց ծուլլ շեշտով Գաբեղենից Արտենը,— ինչո՞ւ ենք զնդանում չորացնում պարսիկ մեծամեծներին,— և հանկարծ ընդոտ շրջվեց դեպի նախարարները,— Հազկերտին ավելի կատաղեցնելու համա՞ր...

— Երևի՞... — մոմոաց մեկը անկյունում նստածներից:

Ատոմը դառնություն և մեծ զժվարություն լսում էր այս ամենը և մտածում, թե ինչպես զսպի իրեն մինչև այս զրույցի վերջը:

Օրը մթնում էր: Նախարարները թթվել նստել էին: Գաբեղենից Արտենը խոսք գցեց որսի գնալու մասին:

— Այդ է մնում, եթե ոչ՝ ձանձրույթ է այստեղ,— ասաց Տիրոց Բագրատունին:

— Ոչ մի որս հարկավոր չէ,— ասաց Ուրծա Ներսեհը,— կգնանք մարզպանի մոտ և կխնդրենք արձակել: Ժամ է տուն գնալու:

— Ժամ է, ժամ է,— խոսեցին այս ու այն կողմից:

Ատոմին զարմացրեց ոչ միայն այն, որ նախարարները չէին թաքցնում իր ներկայութեամբ խոսել այս բաները, այլ առավելապես, որ նրանց չէր զբաղեցնում, թե ինչ պիտի լինի երկրի վիճակը, երբ իրենք մի կողմ են քաշվում և թողնում են երկիրը, իրենց իսկ վիճակը բախտի քմահաճույթին:

Ատոմը ոչինչ չխոսեց: Միայն աչքի տակով զննեց Գյուտին: Նա զգաց, որ պատահմամբ չէր նստել Գյուտը նախարարների մեջ: Եվ ըստ երևույթին միայն այսօր չէր, որ կաթեցրել էր նրանց մեջ քայքայման թույնը: Նշանակալից էր նրա լուսթյունը: Ատոմն իր որոշումն արեց: Պետք էր կասեցնել հարվածը: Բայց ինչպե՞ս: Որոշելը դժվար էր:

Նա գնաց ճամբար և իր ստորադրյալ հրամանատարներին պատվիրեց զորագնդերը շարունակ պահել գաղտնի պատրաստ վիճակում: Ապա եկավ իր օթևանը և շտապ նամակ գրեց Ներշապուհին հետևյալ բովանդակությամբ.

«Իշխանին Արծրունյաց ողջույն: Տեղեկացնում եմ քեզ, որ գործերը շատ խառնակ են: Սպարապետն Հայոց դեռ չի հանդիպել Սեբուխտին, Հազարապետը դեռ չի հասել Բյուզանդիա: Մարզպանը գաղտագողի սիրաշահում է բանտարկյալ պարսիկներին: Եվ այստեղ ժողոված նախարարները շեն վճռում գործի անցնելու մինչև Բյուզանդիան չհասնի օգնության: Նախարարների տատանումը տեսնելով՝ զորացել են դավաճանները: Մարզպանը խմորել է շատերին: Հազիվ եմ զսպում դավադրական ապստամբությունը: Մահու կենաց կույր մեջ եմ: Եթե պարսկական արշավանքի նշան չի երևում՝ ապա վերադարձիր, հակառակ դեպքում առանց արյան ես անկարող եմ պահել դրությունը: Պահանջ եմ դնում ոչնչացնել պարսիկ մեծամեծներին: Ատոմ Գնունյաց տեր»:

Եվ սպասելով Ներշապուհի վերադարձին՝ Ատոմը եռոտ էր տենդային ջանքերի մեջ: Անքուն գիշերներ և անդադար ցերեկներ նա տարված էր արքունական զորքի կազմակերպմամբ: Սա պիտի լիներ բոլոր նախարարական խառն զորագնդերի միավորումը: Ամենատաժանելի գործը: Ոչ միայն դժվար էր զանազան նախարարներից զորք դուրս քաշելը այդ նպատակի համար, այլև նախարարների երկպառակ վիճակը և դավաճանների վտանգը մեծանում էր և կասեցնում էր Ատոմի ձեռնարկները: Նրան զայ-

րացնում էր այն դանդաղկոտութիւնը, որով արձագանք էին տալիս նախարարները նրա կոչին՝ կապվել իր հետ ճեպագնացներով և ապա Արտաշատ գալ իրենց զորքերով: Որոշ ժամանակից հետո սուրհանդակ եկավ Արտակ Մոկացուց, որ Բզնունյաց ծովի գործերը խառնակ են, Ռշտունյաց նախարարը պինդ նստել է իր աշխարհում և այնտեղից կապեր է գցել Խորխոռունյաց հակառակորդ սեպուհներին մեջ և ինչ-որ դավում է:

Ատոմը նամակ գրեց և խորհուրդ տվեց Տարոնի, Արծրունիքի և Մոկաց զորական ուժերը պատրաստ պահել իբրև հակակշիռ թշնամական ուժերի դեմ և զամել Ռշտունիքի և Խորխոռունիքի ուժերը իրենց տեղում:

Այսպիսով Ատոմը իր նվազ ուժերով հարկադրված էր պահել վիճակը Արտաշատում:

Հապշտապ, ճեպով Արտաշատ եկավ Ներշապուհը: Նա եկավ շատ կարճ ժամանակով և խիստ զայրացած Ատոմի վրա: Հազիվ էր իջել նժույգից և ներս գնացել արքունական ապարանքը՝ իր մոտ կանչեց Ատոմին և սկսեց առանց նախաբանի.

— Դու ձիարշավի քաջագործութիւններ ես կամենում անել, թե՛ որսի խենթութիւններ, իշխանիկ...:

— Ո՛չ այն և ո՛չ մյուսը, իշխան, ինչո՞վ արժանի դառա կշտամբանքիդ, — պատասխանեց Ատոմը սառը:

— Դու շտապում ես արյո՞ւն թափել, քեզ շա՞տ է նեղում խաղաղութիւնը...

— Ես արյունը կթափեմ՝ երբ անհրաժեշտ լինի, ի՞նչն է քեզ վրդովել այդքան, իշխան, — ձայնը կարծրացրեց Ատոմը, — «խաղաղութիւնը...»:

Ներշապուհը կարմրեց մինչև քրտնելը.

— Ի՞նչ... քեզ այդքան իրավունք է տված, որ ինքնագլուխ գործե՞ր տեսնես, երբ քեզ հրամայված է պահել վիճակը, ժամանակ շահել:

Ատոմը բացատրեց վիճակը մանրամասն, քան գրել էր Ներշապուհին:

— Հույները դեռ շին հասել տեղ, Սպարապետը դեռ գործեր ունի Աղվանքում, ես զամված եմ սահմանին: Ո՛չ մի արյունահոսութիւն այստեղ, — եզրափակեց Ներշապուհը Ատոմին լսելուց հետո:

Ներշապուհը նույն օրը գնաց ճամբար, ստուգեց ամեն ինչ և ճնշված հեռացավ: Կշտույթը վասակյանց կողմն էր: Կարող էին իշխանությունը խլել: Ներշապուհին տափնապի մեջ գցեց Ատոմը իր հանդուգն բնավորությամբ:

Ապա Ներշապուհը գնաց Վասակի մոտ: Վրա հասավ այն պահին, երբ Վասակի մոտ էին հավաքված բացի վասակյանները՝ նաև Ուրծա Ներսեսը, Գաբեղենից Արտենը և Տիրոց Բագրատունին: Ներշապուհին Վասակն ընդունեց մեծ հարգանքով, զարմանալի հանգիստ և զուսպ: Ներշապուհին դիպավ մի փոքր այսպիսի մտերմական հավաքույթը Վասակի մոտ...

Ներշապուհը պատճառաբանեց իր գալուստը՝ իրրև կամենում է Վասակի հետ խորհրդակցել, թե կարելի չէ՞ արդյոք Ատրպատականից գործը ետ քաշել, քանի որ այնտեղից վտանգ չի երեվում: Վասակը շհամաձայնեց: Ներշապուհը այդպես էլ գիտեր: Բայց Վասակը հասկացավ, որ Ներշապուհը անհանգստացել է Արտաշատի լուրերից: Ներշապուհն էլ իմացավ, որ Վասակը նյութում է ինչ-որ մի գավ և օգտվում է իրեն ընձեռած հարմար իրազրությունից: Սակայն Ներշապուհի ուշադրությունը գրավեց մի այլ հանգամանք: Դա նոր իշխաններն էին:

— Ուշացավ Հաղարապետը, իշխան,— ասաց Ներշապուհին Ուրծա Ներսեսը,— եթե հույները պիտի գան օգնության՝ սպասենք այստեղ. եթե ոչ՝ գնանք տներս:

— Կգան հույները, տե՛ր Ուրծա,— ասաց Գագիշոն նենգորեն,— դեռ մի՛ հուսահատվիր, անպատճա՛ռ կգան...

— Անշո՛ւշտ,— հաստատեց Վասակը՝ շանալով ասել հնարավորին շափ անկեղծ,— ես հավատացած եմ, որ կգան...

— Ավելի՛ լավ,— ասաց Գաբեղենից Արտենը,— կսպասենք համբերությամբ:

— Այո՛, այո՛, տուն գնալու պետք չկա դեռ,— վրա բերեց Տիրոց Բագրատունին:

Այս խոսակցությունը Ներշապուհին համոզեց մի բան, որ ինքը ճշմարիտ էր՝ պնդելով հույների օգնությունը, որի շուրջը միայն կարելի էր համախմբել հայ նախարարներին Հազկերտի գեմ: Միաժամ նա զգաց, թե գործը որքան խախուտ հիմքերի վրա է, երբ այս մարդիկ իրենց գործակցության միակ պայմանը գնում են հույների օգնությանը:

Ծանր քարի պես նստեց Ներշապուհի սրտին այս ամենը, ինչ որ տեսավ ու լսեց նա Վասակի մոտ: Ի՞նչ էր մնում անել: Մաքրագործե՞լ մայրաքաղաքը. վերցնե՞լ Վասակի իշխանութունը, սկսե՞լ կռիվը Վասակի դեմ մի այսպիսի պահի, երբ երկրի վիճակը տազնապալի, սպառնալից էր: Նա կրկին ամրացավ իր ընտրած գործածակին.— ժամանակ շահել, սպասել դեպքերի բերմունքի իմաստության: Ուստի երբ նժույգ հեծած պատրաստվում էր մեկնելու, կրկին հրա՛վիրեց Ատոմին և ասաց.

— Խստագույնա պատվիրում եմ քեզ, իշխանիկ, դեպքեր չստեղծել: Վիճակը ծանր է:

— Դեպքերը իրենք կստեղծվեն, իշխան, բայց վախենամ գան հանկարծ ու մեզ հեղեղի պես քշեն... — ընդդիմախոսեց Ատոմը՝ արդեն այս անգամ զայրացած և ինքնասիրությունը վիրավորված:

— Ես կտրական արգելում եմ զրգոել վասակյանց, անվստահություն ցույց տալ, դիպչել բանտարկյալներին,— ավելի շոր ու հրամայական ասաց Ներշապուհը,— ես հրամայո՞ւմ եմ...

Ներշապուհը կարմրեց, ընդոստ կանգնեց ասպանդակների վրա և ափը զարկեց սրի դաստակին:

Ատոմը սառնագին նայեց նրան և մեղմակի շեշտով ասաց.

— Եթե ավագ նախարար տերն Արծրունյաց սրբազան ուխտի մեջ ես դեռ պահում է իր գահնամակի նախարարական աստիճանը՝ ի՞նչ պահանջենք Ուրծա նախարարից կամ Տիրոց Բագրատունուց: Եվ հետո՞ ինձ վախեցնել... չգիտեմ... ինչո՞վ կարելի է... Մա՞յրս դեմս գա գուցե...

— Ո՛չ, գուցե ինքն իրենից դուրս եկած Ներշապուհը,— դու իմ գլխին քարոզներ մի կարդա: Քեզ այս պաշտոնին գրել է ուխտյալների խորհուրդը, ոչ դու: Դե՛, ինչ որ հրամայեցի:

— Տեր Արծրունյա՞ց... ես ուխտյալ եմ և գինվորյալ. մի՛ մոռանա այդ...

Ատոմը կամեցավ շարունակել, բայց խեղճեց Ներշապուհի հասակն ու աստիճանը և լռեց:

Արտաշատի մոտերքը նրանք՝ բաժանվեցին. Ներշապուհը գնաց դեպի հարավ, իսկ Ատոմը թեթվեց դեպի Արտաշատի ճամբարը:

Ճանապարհից Ներշապուհը կարճ նամակ գրեց Վարդանին և ճեպագնացի հետ ուղարկեց նրան: Նամակում տեղեկացնում էր վիճակի մասին և վերջացնում էր այսպես.

«Շտապի՛ր, տագնապ է, այստեղ մարդ չկա, որ կարողանա հավաքել ուժերը և խոհեմաբար պահել վիճակը: Ատոմդ խելագարի մեկն է, կարող է վիժեցնել գործը»:



Վասակի ուժերը սպառնալից դառան: Ամեն օր կարելի էր սպասել վասակյանց հարձակման:

Ատոմը, որ Անզղի դեպքերից խրատված՝ այժմ արդեն որոշ շափով գնահատում էր ժողովրդական կամավոր զինված ուժերին՝ մտավ Արտաշատի ճամբար և կազմակերպեց երեք զորախմբեր: Մեկը Առաքելի շուրջը հավաքված Բազրեանդի, Տուրուբե-րանի և Տարոնի շինականներն էին, որոնց մեջ Հովհաննես Կարապետը, Պողոսը, Սրապր և ուրիշները: Մյուսը Արտաշատի ժողովրդական զորագունդը՝ Սահակ շինականի ղեկավարությամբ: Այստեղ մտնում էին Հովակիմ դարբինը, Զարեհ եղբայրը, Աբրահամ պապիկը, Վարաժը, Մարկոսը: Մի առանձին զորական խումբ կազմեց կանանցից Խանդութի գլխավորությամբ: Բայց Առաքելը համարվում էր բոլոր ժողովրդական զորախմբերի ընդհանուր ղեկավար:

Շրջակայքից և հեռավոր վայրերից շարունակում էին գալ շինականներ՝ համալրելով այս զորախմբերը: Շուտով սրանք իրենց իսկ ձեռներեցությամբ կազմակերպեցին ժողովրդական զորախմբերի պաշարի ու ուտելիքի գործը. ժողովուրդը բերում էր ամեն կողմից՝ նժուջներ, սարք, հաց, գարի և այլ պաշարեղեն:

Նախարարները սրտապնդվեցին: Սկսեցին եռանդով կազմել իրենց զորախմբերը, որ կամ պահում էին իրենց վայրերում կամ բերում էին Այրարատ:

Զմեռոցը դառավ կենտրոն արքունի զորքի: Այնտեղ կար արդեն շինականներից կազմված մի զորագունդ, իբրև պահեստի զորք: Նախ նա վերածվեց զորական վիճակի՝ զգեստավորվեց, զինվեց՝ պատրաստ արշավանքի ելնելու:

Այսպիսով ուսմիկների ուժը սկսեցին գնահատել նախարարները: Նրանք նկատում էին, որ իրենց զորքերը ոգևորվում են տեսնելով ժողովրդի մասնակցությունը: Սկսեցին հարգել ուսմիկներին:



Արտակ Ռշտունին իր հեռիներով հասավ տուն երկրորդ օրը, երեկոյան: Հստ երևույթին հաշտ տրամադրության էր. հրամայեց խսկույն ևեթ ընթրիք պատրաստեն, և շնայած ճանապարհի հոգնածության՝ հրավիրեց բոլորին ընթրիքի: Ստեղծվեց մտերիմ ու խաղաղ մթնոլորտ: Նախարարը կատակում էր, զվարթ նայում աներոջը՝ Գեղեոնին, որ լուրջ նստած էր ու թեև չէր խոսում, բայց ըստ երևույթին հանգիստ էր: Իշխանուհին մի քանի անգամ կասկածավոր նայեց իր ամուսնուն և հորը և կարծես թե միամըտեց, որ ոչինչ չի պատահի: Անահիտն էր միայն, որ տազնապալի հայացքով գուշակել էր ջանում գալիքը: Եվ բարի բան չէր սպասում: Արտակ Ռշտունին մի երկու օր ուրախ կատակներով անցկացրեց:

Երրորդ գիշերը, երբ իր մոտ նստած էր Գեղեոնը, ընթրիքի վերջում, երբ բոլորը վեր կացան, որ հեռանան իրենց օթևանները՝ Արտակ Ռշտունին աչքով արեց Գեղեոնին՝ որ մնա: Գեղեոնը գլխի թեթև շարժումով հասկացրեց, որ կմնա: Իշխանուհին, մայրը և ջուլրերը գնացին՝ տարակուսանքի և անհանգստության մեջ: Երբ մնացին մենակ՝ Արտակը ինքն իրեն ծիծաղեց, վերցրեց գինու գավաթը և խոր նայելով Գեղեոնին՝ ասաց.

— Սա էլ «արծվի» արևշատության...

— «Այծի»... — ուղղեց Գեղեոնը:

— «Արծվի», — խայթեց աչքերով Արտակ Ռշտունին:

— «Այծի»... — ուղղեց Գեղեոնը:

Արտակը գավաթը ցած դրեց.

— Թող լինի «այծի»... դե, հիմա հաշիվ տուր «այծի» համար, — Ռշտունյաց տիրոջ զորքերը տանում են Ռշտունյաց տիրոջ դեմ... Դու քանի՞ գլուխ ունեիր...

— Մեկ...

— Այդ մեկը գնաց...



ուտից գլուխ, կարծես նայում էր մի առարկայի, որ պիտի տեղավորեր պատյանի մեջ: Ապա նայեց Արտակ Ռշտունուն մի հայացքով, որ ասում էր՝ «հը»: Արտակ Ռշտունին պատասխանեց ուրիշ հայացքով, որ նշանակում էր «հը», — «այո»:

Դահիճը մոտեցավ Գեղեոնին և հանկարծ իր արհեստին վարժ ձեռքով սաստիկ թափով շառաչող մի ապտակ հասցրեց նրա երեսին: Գեղեոնը ցնցվեց, բայց դեմքը չփոխեց: Դահիճը կրկնեց ապտակը: Երեքնեց:

Դուան հետևից լսվեց Աստղիկի հեծկլտոցն ու աղաչական լացի ձայնը:

— Իշխա՛ն... —

Արտակ Ռշտունին ձեռքով նշան արեց դահիճին, որ Գեղեոնին տանի: Դահիճը բռնեց Գեղեոնի ձեռքից և քարշ տվեց դուրս: Դուռը բացեց սենեկապետը և հարգալիբ խոնարհություն արեց Արտակ Ռշտունուն:

Տանեցիք, որ կանգնած էին դուան հետև՝ սարսափած ընկրկեցին և սահմուկած նայեցին արյունոտող Գեղեոնին, շարժպիտ դահիճին, որ անզթորեն քաշում էր նրան: Ավելի զարհուրելի էր Արտակ Ռշտունու ծիծաղադեմ և միաժամ կատաղի դեմքը, որ շողշողաց սպասավորի բռնած ջահի լույսից, ինչպես դաշույնը արևի առաջ:

— Աստվա՛ծ, աստվա՛ծ... — զարհուրած մղկտաց Գեղեոնի կիներ՝ Ծսթերը:

Մյուսները հառաչեցին՝ ձայները խեղդելով երկյուղից ու ցավից: Արտակ Ռշտունին անցավ: Անահիտը գնաց նրա հետևից: Իսկույն իշխանուհին բռնեց նրա թևը:

— Մի՛ գնա...

— Թո՛ղ, — հրամայական ասաց Անահիտը և թեք պոկելով գնաց:

— Իշխա՛ն... — նույն ձայնով ավելի շեշտ ասաց Անահիտը:

— Հա՛, — կանգ առավ սպառնազին և ետ շրջվեց Արտակ Ռշտունին:

— Իշխա՛ն, աստվա՛ծ կա, ճշմարտությո՛ւն կա...

Արտակ Ռշտունին ետ դարձավ: Դահիճը կանգնեցրեց Գեղեոնին:

— Ի՛ի՛նչ... — զարմացած ու զայրացած մոտեցավ Անահիտին Արտակ Ռշտունին:

— Իշխան,— գոչեց կրկին Անահիտը, հաստադելու պես, — աստված կա, ճշմարտութիւնն կա...

Արտակ Ռշտունին շխոսեց: Միայն մի վայրկյան շփեց Անահիտին՝ կարծես որոշելու, թե ինչ թափով հարվածի՝ զարկե նրան գետին և սկսեց ոտնահարել: Զուր տանեցիք իրենց գցեցի կատաղած նախարարի ոտների և Անահիտի միջև: Նա ոտնահարեց և անողոր ծածի տակ արյունլիկ արեց նրան:

Անահիտի ուշքը գնաց: Տանեցիք արտասովալից ազաչանքո փաթաթվեցին Արտակ Ռշտունու ոտներին, որ դադարի հարվածելուց: Վերջապես նա կանգ առավ շարաժպիտ նայեց շուրջը կրկին Անահիտին և ապա դարձավ սենեկապետին:

— Դահճի օգնականը գա՛ թող...

Սենեկապետը վազեց դուրս: Եսթերը, Աստղիկը, իշխանուհի Արտակ Ռշտունու առջև շոքած սկսեցին աղաչել, որ խնայի Անահիտին, միաժամ շանացին ուշքի բերել նրան: Բայց դաժան խոշտանգողը քարի պես պաղ նայեց նրանց միայն: Ներս վազե դահճի օգնականը: Տանեցիք սկսեցին բարձրաձայն ողբալ: Արտակ Ռշտունին կոպիտ նշան արեց դահճի օգնականին, և նա քաշեց Անահիտին, որ դեռ ուշակորույս էր:

Այս բոլոր անցքի պահին լուռ արձանի պես կանգնած դիտում էր Գեղեճունը և ոչ մի շարժում չարեց ի պաշտպանութիւնն ի դստեր: Նրանց տարան: Արտակ Ռշտունին գնաց հետևեցից:

Տանեցիք դուրս եկան պատշգամ: Արտակ Ռշտունին ետ նայեց, գոռաց, որ չհետևեն և ինքը գնաց իջավ զնդան, ուր տարա Գեղեճունին և Անահիտին: Զնդանի փոքրիկ դուռը փակվեց: Տանեցիք լաց ու կոծով ետ դարձան սրահ և սկսեցին ողբալ: Եսթեր միայն լռեց:

Մյուսները հեկեկոցով ընկան հատակին և սկսեցին արցունք ներով թրջել գորգը:



Շինական Սահակը արտակարգ հուզմունքի մեջ էր: Նրա շուրջը նստոտել և պառկած էին զինվորայինները՝ Առաքելը, Սրապը, Զարեհը, Աբրահամ պապիկը, Հովակիմ դարբինը, Մարկոսը, Վարաժը, Հովհաննես Կարապետը, Պողոսը և ուրիշները:

Սրանք ևս անհանգիստ էին և գրգռված:

Աշունը տխրեցնում էր: Շինական և այլ գործի մարդիկ, պարտիկ հարկահանների դաժան խժողժություններից փախած, բախտի քմայքին թողած տուն ու տեղ՝ եկել գամվել էին Արտաշատի ճամբարում: Իսկ գործ չէր կատարվում: Երկրի զանազան կողմերից վրդովիչ լուրեր էին գալիս: Հետո՝ մարզպանը գեռ իշխանության գլուխ էր, բանտարկյալ պարսիկները, ինչպես իմացվեց՝ մեծարվում էին նրա կողմից, իսկ նախարարները անտարբեր դիրք էին բռնել: Ի՞նչ էր լինելու այս ամենի վերջը... Ըստ երեվույթին ոչ բարի բան:

Եվ Սահակը վրդովվում էր:

— Ա՛շքս է խավարում... — զայրալի ձայնով խոսեց նա, — ա՛շքս է խավարում... տեսնելու չեմ ազատությունը... է՛, է՛, է՛, Սպարապետն ասաց՝ չկա իշխան-նամիկ: Ճշմարի՛տ չկա: Կա՛: Կա՛ իշխան էլ, ուսմիկ էլ: Այ, Հազկերտն է գալիս Հայոց աշխարհքը ջնջելու: Կասե՛ք՝ Հայոց աշխարհքը ո՞նց կջնջի, Հայոց աշխարհքը էս հո՛ղն է, — բռունցքը զարկեց գետնին, — մեր պապերի էս արյուն-քրտինքը: Հայոց աշխարհքը էս ժողովուրդն է, էս հոգի՛ն, — բռունցքը զարկեց կրծքին: — Բայց ճշմարի՛տ Հազկերտը չի ջնջի Հայոց աշխարհքը: Կջնջի՛... Թե որ ատամներով չես պահի:

— Կպահե՛նք, Սահակ եղբայր, կպահե՛նք, — ասացին գինվորները, որ հետզհետե հավաքվել էին Սահակի շուրջը:

— Կպահե՛նք, — զայրացավ Սահակը, — հրեն մարզպանը պահո՛ւմ է, իշխանները պահո՛ւմ են...

— Այդպես է. արդարություն են բերում գցում աշխարհք, վերջը էլի տեսնում ես արդարությունը դառավ անարդարություն: Ճշմարիտ արդարություն չկա:

— Պատկե՛րս ջնջխեց պարսիկը... ա՛շքս խավարեցրեց... Բայց նա ի՛նչ էր ջնջխում. պատկե՛րս, աշքե՛րս... չէ՛... հոգի՛ս էր ջնջխում: Հայ ժողովրդի հոգին է ուզում ջնջխել... Հայ ժողովրդի հոգին է գերի: Հայոց ազգի հոգին պիտի ազատենք:

— Դենշապո՛ւս պարսիկ, — սպառնագին բռունցքով գոչեց Սահակը քաղաքի կողմը, — ուզում ես հայ ժողովրդի հոգե՛ն ջնջխել... Դու իմ վայր տաս:

Շինականները իրար մեջ շշնջացին.

— Գլուխը պիտի փորձանք բերի:

— Փորձանք բերել պրծել է, էլ նոր ի՞նչ...

Այդ միջոցին խավարած քաղաքի կողմից գունդուկժիկ մի սեինք շարժվեց դեպի ճամբարը: Նա գալիս էր սայթաքելով, բայց շտապ: Վերջապես մոտեցավ և փնշացնելով կանգնեց:

— Ո՞վ է քրիստոնյա, օգնեցե՛ք,— հնաց նա:

Բանտապետն էր՝ խիստ շփոթված և վախից իրեն կորցրած:

— Հը՞, բանտի՛ հրեշտակ, բանտարկյալդ պակասե՞լ է,— հարցրեց մեկը նստածներից:

Բանտապետը հառաչեց.

— Հիմի ինձ կկախի՞ Ատոմ իշխանը... սյունեցի գինձորնե-  
բը եկել բանտի գաղտնի դուռը կոտրում են, որ պարսիկներին  
տանեն...

— Հանո՞ւն հոր՛ և որդվո և հոգույն սրբո... — գռչեց Սահակը  
խաշակնքելով,— «օրին մեկ օ՛րք»,— ժաղրեց Սահակը ակոռեցի-  
ների փիլիսոփայությունը աշխարհքի բանդվելու, շինվելու մա-  
տին,— Քե մահի օր ունեմ, օրս սա՛ է...

Մյուսները շրջապատեցին Սահակին.

— Սահակ եղբայր, ժամը չէ՛...

— Թողե՛ք, ի՞նչ ժամը չէ,— զայրացավ Առաքելը,— լավ է՛լ  
ժամն է, զարկե՛ք,— գռչեց նա:

Սահակը արդեն ի վիճակի չէր լսելու ոչինչ: Նա վճռական  
թափով, խոշորաքայլ գնաց դեպի քաղաքը: Ի՞նչ էր ուզում անել:  
Շինականները Առաքելի նշանացի շարժումից վեր կացան և գնա-  
ցին Սահակի հետևից: Սրանց էլ միացավ նոր բազմություն, որ  
գնաց անհանգստացած և հետաքրքրված:

Ահեղ էր Սահակի կերպարանքը՝ իր միականի այլանդակ-  
ված դեմքով, խոժոռ հոնքերով և զողզողուն շրթուկներով: Քա-  
ղաքադռան առաջ պահակապետ Լուսինեը կեղծ արգելքներ ցույց  
տվեց, բայց բանտապետից տեղեկացած լինելով ամեն ինչ՝ դու-  
ռը կիսաբաց արեց և հրամայեց փակել կրկին: Դուռը լրիվ չը-  
փակված՝ Սահակը ետ մղեց փակողներին, բազմությունը խու-  
ժեց քաղաք: Քաղաքացիները դուրս թափվեցին տներից և գնա-  
ցին բազմության հետ: Այս հոսանքը լարեց բազմության, որ  
ականատեսի դերից անցավ գործող մասնակցի դերին և գնաց  
դեպի բանտը: Բանտի դուռը փակ էր: Սահակը գետնից պոկեց

մի. քար և սկսեց սաստիկ ծեծել դուռը: Բազմութեան միջից դուրս եկան Հովակիմ դարբինը, Աբրահամ պապիկը, Զարեհ եղբայրը կանգնեցին պաշտպանելու նրան:

— Դենշապո՛ւհ պարսիկ, մա՛հդ եմ բերել, ե՛լ, մահդ տե՛ս... — գոռաց խուպոտ ձայնով Սահակը և սկսեց բանտի դուռը շարժել: Մոտ վազեց բանտապետը, սկսեց աղաչել նրան, որ դուռը ձեռ շտա, հեռանա: Բայց Սահակը խուլ էր: Սահակի վրա հարձակվեցին սյունյաց գնդի զինվորները, որ զարկին:

— Հայրենիքի զինվորի՛ն... — գռչեց մուկգին Զարեհ եղբայրը թափով իրեն մեջ գցելով զինվորների ու Սահակի միջև, — ձեռնե՛րդ կշորանա, սատանի՛ լակոտներ... Քաշվեցե՛ք...

— Զարդե՛ք դռները, — հրամայեց Առաքելը: Բազմությունն սկսեց կոտրել դուռը:

Զինվորները սաստվեցին տեսնելով իրենց դեմ ահռելի բազմությունը: Նրանք հեռացան մի պահ և սկսեցին հեռվից դիտել: Նրանք լցվեցին մի անբացատրելի երկյուղով դեպի Սահակը, որ այդպես հանդուգն շարդում էր բանտի դուռը: Եվ նա շարդում էր խոշոր ձեռքում խոշոր քարը սեղմած, սարսափելի ուժով: Նա շուտով կերպարանափոխվեց այլևս: Սպառնագին վճիռը՝ խորտակել բռնությունը, վրեժխնդրության բոցը, որով բռնկվեց նրա կերպարանքը՝ սրբեց նրա այլանդակած տեսքը՝ շքեղացրեց՝ բռնությունը խորտակելու, սխրագործության հափշտակությամբ: Նա վեհացավ: Նա գեղեցիկ էր այդ պահին: Եվ նա համակեց, հափշտակեց իրեն շրջապատած բազմության:

Մի հասարակ, գրեթե աներևույթ մարդ, որ քարացել նայում էր Սահակին՝ աչքերը հանկարծ խոժոռեց, ինչ-որ մի գյուտով լուսավորված շարժվեց դեպի սա: Նա հասկացավ ինքն իրեն: Նա պահանջը զգաց: ազատ գոչելու, ազատ գործելու. նա պահանջ զգաց ազատության: Զգաց, ինչ որ չէր զգացել իր ողջ հասարակ կյանքի մեջ, սովորական, աներևույթ մարդու վիճակում: Մի քաղցր սարսուռ անցավ նրա մարմնով, մի թռիչք կատարեց նրա հոգին, և նա վճիռ ընդունեց շարժել, փշրել բռնությունը: Նա գիտակցությամբ ճաշակեց ազատության քաղցրությունը:

Եվ մեջ թռավ, սկսեց անօրինակ թափով շարժել դուռը: Նրանով հափշտակվեցին բազմությունից ոմանք և ապա մի ահագին զանգված:

Բազմութիւնը բանտապետից պահանջեց, որ բանա բանտի դուռը: Բայց նա շարունակում էր աղաչել, որ ետ կենան: Սպաննացին: Նա խոստացավ, բայց և իսկույն կորսավ բանտի հետև Այնտեղից գաղտնի անցքով մտավ բանտ և մոտեցավ ներքին գաղտնի դռան, որ կապում էր Վասակի ապարանքի հետ: Այն դռան հետևից ուժգին բախում էին դուռը: Ուրեմն մարդպանն իմացել էր վտանգի մասին: Բաց արեց դուռը: Ներս ընկավ Գյուտր գինվորների հետ և վազեց դեպի բանտարկյալները: Երբ մոտեցավ նրանք սեղմվել էին իրար և սպասում էին մահվան:

— Հրամայեցե՛ք, տյա՛րք,— ասաց նրանց Գյուտրը:

— Ո՛ւր եք տանում մեզ...— հարցրեց Որմիզըր ահաբեկված:

— Ձեր կյանքն ենք փրկում, չի՞ք լսում աղմուկը,— զարմացած գոչեց Գյուտրը,— եկեք իմ հետևից:

Պարսիկ մեծամեծները զնացին: Դուռը փակվեց և բանտապետը հեռացավ, զնաց բանտի մի գաղտնի սենյակ, փակվեց աշխտեղ:

Այդ ժամին Վասակի ապարանքում ընթրիքի էին նստած վասակյաններն ու մյուս նախարարները՝ Ուրծա Ներսեհը, Տիրոց Բագրատունին, Գաբեղենից Արտենը: Ընթրիքը համեստ էր. ոչ երաժշտութիւն և ոչ պարեր: Վասակը արտաքննապես անվրդով և լուրջ բազմած էր սեղանի գլխին և հանդիստ զրուցում էր հյուրերի հետ: Ոչ մի խոսք ներկա դեպքերի մասին՝ կարծես պատերազմ չլիներ:

Բազմութիւնը ջարդեց դուռը և ներս լցվեց բանտ: Մթան մեջ խարխափելով սկսեցին որոնել բանտարկյալներին, բայց ոչ ոքի չգտնելով՝ սկսեցին որոնել բանտապետին:

— Փախցրե՛ց անիծյալը... Բռնեցե՛ք անիծյալին,— լսվեց Հովակիմ դարբնի ահեղ ձայնը:

Բազմութիւնը թափով ընկավ զնդանի խորքերն ու անկյունները, բայց չգտավ բանտապետին: Զայրույթից սկսեց ջարդուփշուր անել բանտի պարագաները, տանջանքի գործիքները, կարասին, դռները:

Ապարանքի դարբասի կողմից, փողոցից լսվեց բազմութիւն աղմուկը առաջ խուզ, հետո հետզհետե բարձրագուշ սաստկութիւնով:

Զինվորները վազեցին դեպի դարբասը: Արտաշէրը դողում էր զայրույթից ու անհամբերութիւնից: Վասակը նախարարների հետ գնաց ապարանքի պատշգամբ: Բազմութիւնը հասավ դարբասին:

Դեռ մարդպանի ղինվորները չէին երևում զսպելու կամ պատժելու հուզված բազմութեան՝ թեև Ատոմը Այրարատի դաշտերումն էր Ավետիք բերդապետի հետ, և շատ էր դյուրին ճգմել ապստամբներին — Վասակի զորագնդի ձեռքով: Արդյոք ի՞նչն էր պատճառը, ոչ ոք չէր մտածում այդ մասին: Եվ մտածմունքի ժամ էլ չէր...

— Դո՛ւրս քաշեք պարսիկներին, — գոչում էր հետևից բազմութիւնը:

— Մարդպանը տարել է մո՛տը, — ձայն տվեց Հովակիմ դարբինը:

— Ո՛ւ ո՛ւհ... — մոռնաց բազմութիւնը ցնցվելով: Սահակը վարապի պես ճեղքեց բազմութիւնը և դուրս սուրաց անխուս:

— Ո՛ւր, ո՛ւր... — լսվեց հետևից:

Բայց սա մի ակնթարթ էր միայն: Բոլորը ընկան նրա հետեւից: Իսկ նա գնում էր դեպի Վասակի ապարանքը: Ահեղ ժամ սկսվեց: Տազնապ: Սպասվեց արյունալի ընդհարում: Բայց ոչ ոք չէր զգում թափի անկում: Բազմութիւնը տարավ իրեն՝ լարելով ու բորբոքելով իրեն: Նա եթե կամենար էլ՝ չէր կարողանա կանգնեցնել իրեն: Առջևից գնում էր Սահակը, նրան շրջապատել գնում էին մյուս շինականները, սրանց հետևից բազմութիւնը: Երբ մըտան Վասակի ապարանքի փողոցը՝ բազմութեան առջև ելան զինվորներ, բայց նրանք ճանապարհ տվին: Բազմութիւնն անարգել հասավ Վասակի ապարանքին, և դեմ ընկավ պարսպի դարբասին: Սահակն սկսեց բախել դուռը:

— Դո՛ւրս եկ, Դենշապո՛ւհ պարսիկ, ահ ու մահդ եմ բերել...

Դենշապուհը ցնցվեց մեջքից խայթված օձի պես: Հասկացավ, որ իրեն էր վերաբերում սպառնալիքը:

Սահակը ուժգնացրեց դարբասի թակումը:

Ոչ մի ձայն:

Ուրծա ներսեհը արագ թափով շրջվեց դեպի Վասակը:

— Հրամա՛ն տուր, տե՛ր մարդպան...

Վասակը լուռ նայեց միայն: Քոլորը սկսեցին իրենք իրենց անբարյացակամ մոմուալ, տրտունջ հայտնել:

Սենեկապետը ներս էր ուզում մտնել վարագույրի: Անդրից, սակայն նրան կանխեց և առաջը կտրելով արագ ներս մտավ Ատոմը:

Նա այնպես վճռական և միաժամ հանգիստ նայեց ներկանե-  
րին, որ բոլորը կարծեցին թե հիմա իսկույն հհարձակվի նրա հետևից եկած մի զորաբանակ:

— Ողջույն, տյարք,— ասաց Ատոմը սառն և նայեց շուրջը:  
Նախարարները ողջունեցին կես-բերան և զարմացած:

— Ողջույն, իշխան,— ասաց Վասակը, որի զարմանքն ու տարակուսանքը կծկվեցին նրա դեմքին, վիրավորված արժանա-  
պատվության հետ խառն,— հրամայիք բազմել...:

Ատոմը շնորհակալության նշան արեց և նստեց:

— Ինչո՞ւ են ազատված բանտարկյալները, տեր մարզպան,— խոսեց Ատոմը հագիվ զսպելով բարձրացող ձայնը,— և նրանք քեզ մոտ են...:

— Միակ ապահով տեղը,— ասաց Վասակը,— ես չէի կարող նրանց հանձնել ամբոխի ճիրաններին:

— Այնժամ մի՛ մեղադրիր ժողովրդին: Նա վեր է կացել դա-  
տաստանի:

Ատոմը նայեց հետև. այնտեղից ներս շարժվեցին Գննչապու-  
հը, մոզպետները և Գարեհ, Արտաշիր հրամանատարները: Ատո-  
մի արյունը գլուխը տվեց՝ տեսնելով նրանց նոր զգեստներով և լվացված կերպարանքներով: Նրանք եկան և Վասակի հարգալիք հրավերքով բազմեցին արահի առաջավոր տեղերում:

— Օ՛տ ուղարկիր սրանց բանտ, տե՛ր մարզպան,— ասաց արդեն շարուռյամբ Ատոմը,— եթե ոչ՝ մենք կկոպենք:

Ատոմը վեր կացավ: Ապա անվրդով, ուղիղ նայեց նախա-  
բարներին և պտրսիկներին: Զգացվում էր, որ նա ամեն բան աշ-  
քըն էր առել և վճռե՞լ վերջնական: Վասակը խիստ անպատշաճ համարեց այս վարմունքն ու խոսքերը պարսիկների ներկայության և միաժամ խոր վիրավորվեց: Սվ իրող... Ո՞ր աստիճան արհա-  
մարհանք էր պետք դեպի մարզպանը, այսքան նախարարները, նրանց զորական ուժերը, որ այս խելագար նախարարը խիզախեր ներս գալ այսպես խոսելու:

— Դու խորհն՞ ինչ ևս վարժունքդ ու խոսքերդ՝ մինչև գալգ այս-  
տեղ, իշխան, — հարցրեց Վասակը հանգիստ շարուքյամբ:

— Ի՞նչ պիտի արժենար իմ խորհելը, տե՛ր մարդպան, —  
անհույզ բժժիծաղ տվեց Ատոմը: — Ես հասարակ զորական մարդ  
եմ. իմ խորհելը կովելն է՝ երբ գործը պահանջում է, և այնժամ  
ով կուզի՝ թող կանգնի մեր դեմ, միևնույն չէ՞...

Ատոմը ազդեց սակայն: Հանդուգն երիտասարդի հանգիստ  
խոսքը կաթվածում էր ամեն միտք՝ հարձակվել նրա վրա և ոչընչ  
չացնել:

Բայց ժամը հնչել էր: Վե՛րջ ամեն բանի՝ տատանման, տա-  
րակուսանքի, ձգձգման, խարդավանքի... Վասակը նշան արեց  
դռան վարագույրի կողմը: Այնտեղ մի բան խլրտաց, և ապա  
լսվեց սրերի զնագոցներ: Ատոմը արագ ետ շրջվեց և մերկացրեց  
սուրը: Հետևյալ ակնթարթին նա պատշգամումն էր: Այստեղ նրա  
վրա հարձակվեց Արտաշիր սեպուհը: Սկսվեց մի կրակոտ սրա-  
մարտ: Ատոմի թիկնապահները մեջ ընկան պաշտպանելու նրան,  
բայց մեջ ընկան նաև Վասակի դռանը կանգնած զինվորները:  
Ատոմի աջ թևը վիրավորվեց: Նա սուրն անցկացրեց ձախ ձեռք և  
սկսեց մարտնչել:

Բազմությունը հարձակվեց զինվորների վրա: Սկսվեց մի  
անօրինակ, արյունալի, հափշտակված կռիվ անհավասար ուժերի  
մեջ: Բազմությունն անվարժ էր, բայց մեծ էր: Առաքելն ու Սա-  
հակը կոպում էին անօրինակ խիզախությամբ: Նույնը և բոլոր շի-  
նականները: Բայց Մահակը վերք ստացավ գլխից. աչքերը լցվե-  
ցին արյունով: Նրան քաշեցին մի կողմ Հովակիմ դարբինն ու  
Վարաժը: Սակայն և այնպես բազմությունը թուլանում էր:

Այդ միջոցին բակի գարբասը շոնդալից բացվեց և ներս լըց-  
վեց հեծյալներից մի խմբակ և խիզախ հարձակվեց Ատոմին շըր-  
ջապատողների վրա: Սա շփոթեցրեց նրանց, ու մինչ ուշքի կգա-  
յին նրանք՝ Ատոմը թռավ մոտ բերված իր նժույզը, և գոչեց  
բազմության.

— Քաշվեցե՛ք այգիները:

Խմբակը սլացավ դուրս: Բազմությունն սկսեց քաշվել: Ար-  
տաշիրը ևս արագ խմբեց իր շուրջը մի տասնյակ զինվոր՝ սլա-  
ցավ Ատոմի հետևից: Նեղ փողոցում իրար խանգարելով միառ-  
ժամանակ զնացին փախչողներն ու հալածողները: Ատոմը շրջա-

սլատված իր խմբակով դուրս թռավ քաղաքից: Արտաշիր սեպուհը հետևեց նրան: Բայց որովհետև երկու կողմն էլ այդ պահից առաջ մտադիր ռազմակարգ շունեին՝ ուշաբերվեցին, երբ դաշտ էլան: Ատոմը իրեն գցեց ճամբար, որ արդեն հեռվից տեսնելով քաղաքադռնից դուրս թափված հեծյալներին իրար անցավ, վազեց զենքի, իսկ Արտաշիր սեպուհը տեսնելով այդ և միաժամ կարևոր համարելով ետ դառնալը և Վասակից հրաման ընդունելը՝ ետ քաշվեց արագ:

Քաղաքադուռը փակվեց:

Ատոմը արդեն ճամբարումն էր: Նա հրամայեց «ի զե՛ն»:  
Ջորագունդը, որ բաղկացած էր Վարդանի տարած զորագնդերի մնացորդներից՝ զինավորվեց և հավաքվեց դաշտում: Կանոնավոր զորագնդին միացան և ժողովրդական զորախմբերը:

Բայց դրուժյունը տագնապալից էր: Ուժերի գերակշռությունը Վասակի կողմն էր: Ատոմը միայն մի պահ վճիռ ընդունեց խենթ քաջության մարտի մտնել՝ մոռանալ հետևանքը: Բայց նրան հանկարծ զսպեց Վարդանի առաջ իր պատասխանատվության զգացումը: Եվ իբրև քաջ զորական իսկույն ի հայտ բերեց նաև ռազմական իմաստություն՝ խելացի տանել գործը: Ուստի և հրամայեց.

— Անզենները թաքնվեն այգեստաններում, մնացածը՝ զորագունդը և հեծյալ շինականները՝ իմ հետևի՛ց...

Ու սրընթաց գնաց դեպի նախարարական ճամբարը և ուժեղ թափով հարձակվեց Սյունյաց զորագնդի վրա: Կարճ մարտը, որ ավելի շփոթ ու քայքայում առաջ բերեց քան կոտորած՝ այն առավելությունն ընձեռեց, որ մինչ ցաք ու ցրիվ Սյունյաց գունդը և շփոթված նախարարական զորամասերը ուշքի կգային և քաղաքից հրամանը կհասնեն գործելու՝ Ատոմը իր զորագունդը հեռացրեց դեպի էջմիածին:

Վասակը բարձրացավ քաղաքի պարիսպը և աշտարակից դիտեց գործողությունները: Նրա գլխում ևս խառնաշփոթ մտքեր զարթնեցին՝ հրաման արձակել հետամտելու Ատոմին: Այդպես էլ թելադրեցին նախարարները: Բայց նրա մեջ ծագեց և այլ նենգավոր միտք. եկավ պատեհը սկսելու վաղուց ծրագրած զինվորյալների ոչնչացումը: Ոչնչացում այդ ահավոր, ամենազոր շարժման, որ կաշկանդում, կաթվածում էր ամեն միտք ու գործողու-

Յյուն, քայքայում իշխանությունը և սառձարձակում ոամկին, դարձնում նրան հանդուգն և անխոցելի: Վճռեց նաև հայտարարել Ատոմին ապստամբ, հանցավոր այս գժտության մեջ և նստել ազատված մայրաքաղաքում ևս մի երկու օր՝ այնուհետև անցնել Էնշումներին, տե՛ր դառնալ «ոչ իր հանցանքով» իր ձեռն ընկած կատարյալ իշխանության: Ուստի և նա հրամայեց ամրացնել քաղաքը, զորագնդերը դնել մարտական վիճակի մեջ:

Քաղաքում սարսափելի խառնաշփոթ էր: Մարդիկ թաքնվում էին խավար նկուղներում, պարսպամերձ այգիների հնձաններում, ոմանք զենք էին ձեռք բերում և կանգնում դռանը՝ սպասելով հարձակման: Լաց ու կոծը, անծժըն ու ողբը բռնեց ողջ քաղաքը:



Նախարարները ներս գնացին ապարանքի սրահը: Վասակը անխոս մտավ ներս և նենդավոր լռությամբ նստեց իր տեղը: Նախարարները խիստ վրդովված, լարված նստեցին և լռությունը ծանրացավ սրահում:

Վերջապես Ուրծա Ներսեհը, նախարարների զայրույթից քաջալերված և ինքն էլ նրանց շափ զայրացած՝ խզեց լռությունը:

— Ինչո՞վ էինք արժանի այս ապերասան խառնիճազանճի անարգանքին, տե՛ր մարզպան:

— Տե՛ր Ուրծա, — դիմեց Գաղիշոն Ներսեհին, — խմենք դառնանուշ գինին՝ օրինակը մեր կյանքի:

— Խմենք՝ եթե այլևս ոչ մի բանի հույս չկա, — ասաց Ուրծա Ներսեհը:

— Ուրախացե՛ք, տյարք, — դիմեց հյուրերին Վասակը, — մի ավրեք ձեր հաճույքը: Չթափվե՛ր արյունը. որ թափվեց, այլևս միևնույն է... Միևնու՛յն է ամեն բան... Գինի՛, — կանչեց նա մատուակին, որ սափորը ձեռին կանգնած էր հյուրերի հետև:

Մատուակը պտտեցրեց գինու սափորը և լցրեց հյուրերի գավաթները:

— Արքայից արքայի արևշատության, — գոչեց Վասակը՝ կըրքից կարմրած և շարախինդ աշխուժով:

Բոլորը հոտընկայս խմեցին Հազկերտի կենացը: Հետո նրստեցին: Սկսեցին գինովնալ ավերի և ավելի: Զվարթությունն օօ

ճառայր խառնվեցին իրար, մարդիկ բաց թողին իրենց կրթերի ասնձը:

Սակայն անհանգիստ էր Վասսակը: Ջանում էր շմատնել ոչինչ՝ խռովյալ հոգին ծածկելով արտաքին ուրախության երևույթով:

Նախարարները հարբեցին: Սկսեցին պահանջել նվազ ու պար: Վասակը աչքով արեց սենեկապետին: Սա գնաց և շուտով հայտնվեց նվագածուներով և պարող գեղուհիներով:

— Մի՛ նյութեք վիրավորանք և վրեժխնդրության զգացմունք, տեր իմ, — բարձրաձայն ու գինով ասաց Ուրծա Ներսեսը և թեթև օրորվելով մոտ գնաց Դենշապուհին:

— Ի՞նչ ես հրամայում, տեր Ուրծա, — կեղծավոր խոնամբ հույսամբ ասաց Դենշապուհը, — մենք միայն և միմիայն շնորհապարտ ենք մեր մարզպանի և ձեր առջև:

Գաղիշոն դարձավ մոգպետներին.

— Ինչպե՞ս է, սրբազան մոգպետներ, ձեր ողջույթյունը:

— Ենորհիվ տեր մարզպանի և ձեր խնամքին միանգամայն քաջառողջ ենք, — ասաց Միհր մոգպետը:

Խոսակցությունը շէր կաշում: Զգացվում էր բանտարկյալների խոր վիրավորանքը և վրեժխնդրության ծարավը: Գաղիշոն սկսեց բացատրել գործերի հանգամանքները և հասկացնել, որ տալիս մայրքանը միայն հնարավոր եղավ բանտարկյալների համար: Իսկական զեկույց էր նրա տվածը՝ խելացի, հետևողական: Քայց զգացվում էր, որ ոչ մի բանով չէր կարելի մեղմել բանտարկյալների ոխը: Խոսեց նաև զորավարների հետ: Խոսում էր Արտաշիրը: Իսկ Պարեհը լուռ ու խոժոռ նայում էր հոնքերի տակից՝ իբրև գառագիղն ընկած գայլ, որ կաշկանդված վիճակում անգամ բռնված է միայն հարձակվելու և խեղդելու բուռն կրթով:

Գաղիշոն զայրացավ՝ շտեմնելով բանտարկյալների մեջ ոչ մի նշույլ երախտագիտության: Նա թեթև հասկացրեց, որ իրենց այս ասցին ու վիրաբերմունքը դյուրին չէր կարելի հնարավոր դարձնել, որ սա կապված է մեծ վտանգների հետ: Նա խոսեց ավելի պարզ, խոցելու համար:

— Գոհ ենք, — վճռական ձայնով ասաց Դենշապուհը, — ինչպե՞ս կարող ենք մոռանալ, որ մարզպանը մեզ փրկեց ամբոխի դատաստանից: Մենք նրան ենք պարտական մեր կյանքը նաև այստեղ: Ոչ, ինչպե՞ս կարող ենք մոռանալ այդ:

Խնջույքը մոլեգնում էր: Վասակը ինքը ևս խմում էր՝ հանգը-  
նելու համար հոգեկան բուռն խռովքը: Նախարարները գինեովցել  
էին: Զուսպ ընթրում և խմում էին պարսիկ մեծամեծները: Նրանց  
մոտ ստորաբարշություններ էր անում Պերոզ-Վշնասպ-Տիզբո-  
նին: Նա նստած էր նրանց մեջ և շարունակ շաղակրատում էր.  
«Շղոմշապուհ իշխանը Տիզբոնում ինձ ասաց՝ «ուժեղ զորքը կը-  
հաղթի»: Շատ խելացի միտք է: Կամ՝ «Որմզտար պալատականը  
միշտ եզան միս է գործածում: Մեծ փրկիստփա է: Դրա համար էլ  
ես միշտ պնդում եմ՝ ուտելով մարդ ապրում է, և ես դրան հա-  
մաձայն եմ»:

Պարսիկ մեծամեծները իրար էին նայում և աչքով անում  
ծաղրական լրջությամբ:

— Քեզ ալեի զարմանալի բան ասեմ,— դարձավ Պերոզ-  
Վշնասպ-Տիզբոնիին Վեհմիհրը,— մի երեխայի արմավ էին ու-  
տեցնում, որ փորի հիվանդությունը բուժվի: Եվ ի՞նչ կասես՝ շնա-  
յած դրան՝ մի օր ծառ բարձրանալիս վայր ընկավ և ոտը կոտրեց:  
Պարսիկները հավանությամբ շարժեցին գլուխները:

Դենշապուհը թեքվեց դեպի Գարեհը.

— Երևի մեջները կարծողներ կան, թե որևէ մեկը պիտի  
ազատվի՝ իմ ճանկերից այս քոսոտ մարզպանից մինչև վերջին  
նախարարը...

Գարեհը շարժւպիտ նայեց հայ նախարարներին:

Վասակը զգաց այդ հայացքը, հասկացավ Դենշապուհին և  
գառնության թույնով լցված շշնջաց իր կողքին բազմած Գադի-  
շոյին.

— Օձը թույն է լցնում խայթոցի մեջ...

Նախարարներն սկսեցին սանձարձակ և լկտի խրախճանք:

Վասակը մոռյլ դիտում էր և կատաղած լուռ:

Կրկին գնաց բարձրացավ աշտարակը և սկսեց նայել հեռում՝  
հասկանալու, թե ինչ հետևանք ունեցավ հետապնդողների գոր-  
ծը: Այնտեղ ոչինչ չէր երևում: Վասակը վերադարձավ սրահ և  
սկսեց զայրալի անցուզարձ անել: Ոչ մի խռովք և ոչ մի ազդե-  
ցություն նախարարների մեջ: Նրանք և՛ հարբած էին, և՛ անտար-  
բեր դեպի կատարվածը: Վասակը զայրույթից գնաց իր տեղը և  
գինի պահանջեց: Մատուցակը լցրեց նրա գավաթը: Նա խմեց,  
կրկին լցրեց, կրկին խմեց: Նա դողում էր զայրույթից: Սկսեց

ապելի խմել՝ խլացնելու համար զայրույթը և դառն խոռվքը: Արդեն հարբում էր, որ ներս մտավ սենեկապետը և մոտենալով նրան՝ զգուշ փսփսաց ականջին.

— Սուրհանդակ, տեր իմ: Այստե՞ղ կընդունես, թե առանձնասնյակում:

Վասակը վեր կացավ, ներում խնդրելով հյուրերից և գնաց առանձնասնյակ: Ներս մտավ սուրհանդակը շար ու շարշարկված: Շատ էր շտապել: Վասակը խոժոռ ու խուլ ձայնով հրամայեց.

— Խոսի՛ր...

— Տեր իմ, Սպարապետը խորտակեց Սերուխտի զորաբանակը:

Վասակը շանթահարի պես ցնցվեց ու մնաց: Մի ականթարթ,— բայց նրա աչքին դեղնեցին երկու մորթազերծ էակներ և նայեցին իրենց խոտե աչքերով...

— Սերուխտը մեծամեծների մեջ մազապուրծ փախավ նավակով: Ասում են ծանր վիրավոր է:

Արագ երևույթք եղան և անցկացան Վասակի աչքի առջևով իր կյանքից շատ մոռացված դեպքեր ու մարդիկ:

— Սպարապետը գնաց արշավանքի ճորա Պահակ:

— Հաստա՞տ գիտես... — շնչատեց Վասակը կապտելով:

— Անցավ Կուրը, ընկավ ճանապարհ: Աշքովս տեսա: Տեղեկացա:

Վասակը մի փոքր ևս հարձուփորձ արեց սուրհանդակին և ճամփեց դուրս:

Ապա գլխիկոր կանգնած մնաց մի փոքր: Հարվածը բուժ էր, շշմեցնող: Համեմատությունները՝ առաջվա և հիմիկվա երկրի վիճակի՝ լայնացան, խորացան: Կորցրեց եզերքի տեսքը, ընկավ ծովի բացերը: Կարծես կայծակը շարագույժ շողունով շանթեց նրա կյանքի վրա և լուսավորեց նրա շարադետ վիճակը: Ի՞նչ էր նա իր ժրգպանական դիրքով այսքան դեպքերի ու մարդկանց մեջ. խաղալի՛ք, անգործ դերասան... Բավ չէ՞, ժամ չէ՞ թողնել ամեն տեսակ նկատառումներ և սկսել վճռական գործ:

Սրահից լսվում էր գինով նախարարների քրթիչն ու երգը: Գործերում կիսատ, անվճռական, հարափոփոխ, փափկամորթ մարդիկ, որ չգիտեն թե ինչ պիտի անել, երբ գալիս է արհավիրքը:

Գնաց սրահը: Նրան դիմավորեցին խոպոտ բացականչու-  
թյուններով և հեթանոսական երգերով, տակավին գործածական:

Վասակը զզվանք զգաց այդ գինով ձայներից, բայց արտա-  
քին անվրդով լրջությամբ նստեց իր տեղը:

— Ի՞նչ նոր լուր է, տեր մարզպան,— հարցրեց Ուրծա Ներ-  
սեհը,— եթե բարի է՝ հրամայիր խմե՛նք. շար է՝ դարձյալ հրամա-  
յիր խմե՛նք:

Վասակը այլայլվեց.

— Բարի է լուրը,— հեզնախանն դառնությամբ ասաց Վասա-  
կը,— Սպարապետը գլխովին խորտակել է Սերուխտին:

— Բա՛հ... ինչպե՞ս... — ձայնեցին նախարարները մի տե-  
սակ սթափվելով գինովությունից:

Պարսիկները լարվեցին և շար նայեցին Վասակին:

— Ուշանալու, շգործելու հետեանքը միշտ այսպես է լի-  
նում,— հռչեց Դենշապուհը դառնաձայն:

— Այնպես որ արդեն կարող եք, տյարք, խմել Սպարապետի  
արևշատության:

— Վերցրե՛ք գավաթներդ,— կատաղի գռչեց Գարեղենից  
Արտենը,— Սպարապետի արևշատության:

Ոմանք վերցրին գավաթները. մատովակը վրա վազեց գինի  
լցնելու: Կուրթյունը ճնշեց. միայն լսվում էր գինու կլկլոցը գավից  
գավաթներն ածվելիս:

— Սպասեցե՛ք, տյա՛րք,— հանկարծ ուշաբերվեց թե տարա-  
կուսեց Ուրծա Ներսեհը,— Սպարապետը հաղթեց Սերուխտին:  
Հետո՞...

— Հետո էլ ի՞նչ... — հարցրեց Տիրոց Բագրատունին:

— Տե՛ր մարզպան,— դիմեց հանդիսավոր ձայնով Ուրծա  
Ներսեհը,— ես հարցնում եմ հետո՞... հետո ինչ կլինի...

Վասակը խոպոտ ու թունավոր խոսեց.

— Հետո՞... Հաղթեց Սերուխտին՝ հետո էլ պիտի հաղթի  
Նյուսալավուրափին...

Վասակը այլևս հաշվի չէր առնում պարսիկների ներկայու-  
թյունը:

— Գու կատակ չե՞ս անում, տեր մարզպան,— հարբածի  
խիստ ձայնով հարցրեց Ուրծա Ներսեհը:

Վասակը խեթ նայեց նրան.

— Կատա՛կ... Արյաց պետութեան դեմ պատերազմը կատա՛կ... Մը, կատակ չէ՛: Լորջ է: Արյունը լո՛ւրջ է, տյարբ: Արյամբ կատակ չե՛ն անում... Մանավանդ երկրի տերերը՝ մարդպաններն ու նախարարները: Մտե՛լ ենք մեծ խաղ՝ պետք է վերջացնենք: Չե՛նք վերջացնի. խաղը ինքը կվերջացնի մեզ: Մատրու՛վա՛կ, լցրե՛լ ես բոլորի գավաթները:

— Այո, այո, լիքն են,— ձայնեցին հյուրերը սթափված:

— Որ լիքն է՝ վերցրեք Սպարապետի արևշատութեան: Թող նա հաղթի նաև Նյուսալավուրտին, որ հուսով եմ չի ուշանա, և թող տերն աստված փրկի Աշխարհն հայոց...

Վասակը արագ բարձրացրեց գավաթը և այս անգամ չձևացրեց, այլ խմեց ողջ գինին: Բոլորը հետևեցին նրան:

Տիրեց կաշկանդիչ լուսթյուն:

Ուրծա ներսեհը վեր կացավ տեղից և օրորվելով գինովի աշքերը հառեց Վասակի աչքերին.

— Ների՛ր ինձ, տեր մարդպան, որ ամբեցի սեղանը... ասն ու տարակուսանքն է լցվում սիրտս քո խոսքերից: Դատապարտություն կա խոսքերիդ մեջ: Դատապարտութեան ես ենթարկում ոչ միայն մեզ, այլ Աշխարհն հայոց: Այդ ինչպե՛ս պետք է Սպարապետը հաղթի արյաց պետութեան: Կատա՛կ ես անում... Մի՛ անիր մեզ հետ այդ կատակը:

— Ես կատակ չե՛մ անում, տե՛ր Ուրծա,— խիստ խոսեց Վասակը,— կատակը դո՛ւք եք անում...

— Ինչպե՛՞ս, տեր իմ... — նույնպես խոսացավ Ուրծա ներսեհը:

— Կատակը դո՛ւք եք անում,— ավելի խոսացավ Վասակը և զայրալի բարձրացրեց ձայնը,— կատակը դո՛ւք եք անում, որ ավել եք զազանի երախը մի՛ բուռն սթափ ու զգոն մարդկանց և ինքներդ քաշվել եք մի կողմ: Սպարապետը հաղթեց Սեբաստիան. կհաղթի թերևս Նյուսալավուրտին: Կհաղթի՞՞ արյաց պետութեան:

— Չի հաղթի, տեր իմ, ճշմարիտ ես,— ձայն տվին նախարարները:

— Չի հաղթի: Կգա արյաց տերությունը իր բովանդակ ուժով. ո՞վ տա պատասխանը: Սպարապետի՛ն ինչ... Կթաքնվի իր Պարխարյան լեռների մեջ: Ո՞վ կմնա կրակի քերտեռ: Ահա թե ո՛ւր է կատակը...

— Ես ոչի՛նչ չեմ տեսնում, ոչի՛նչ չկա շուրջս, միայն անտօճ նական դեմքե՛ր, արբշիռ աչքե՛ր, մշո՛ւշ, արյունային խմո՛ր, ամբոխներ, որ կատաղի վազում են կորստյան անգունդը... Գիտեմ թե ինչ են ուզում ինձանից, տեսնում եմ այն, ինչ որ ուզում են... — և գոչեց դողահար, — հեռացրե՛ք դրանց աչքիցս...

— Ո՛ւմ, տեր մարդպան, — հարցրեց շփոթված Ուրծա ներս սեհր:

— Հեռացրե՛ք, շտեմե՛մ... Այդ խոտե աչքերը: Ասացե՛ք չգան մթան մեջ նայեն, շգա՛ն երազիս քարանալու դիմացս...

— Գնա՛նք, տե՛ր մարդպան, հանգստյան օֆեան, — ասաց Բագրատունի Տիրոցը:

— Թո՛ղ, նա գինադեի մեջ է, — շնչաց Ուրծա ներսեհր:

Գաղիշոն բունեց Վասակի թևը և մեղմ քաշեց գեպի հանգրստյան օֆեանը: Վասակը շգնաց: Նա շնչում էր արագ և դողում:

— Եթե այս մաշոզ տագնապը պիտի լինի միշտ մեր խնջույգը, մեր կերակուրը, բունը՝ ապա մենք շուտով կդառնանք կենդանի մեռելներ... Սարսափելի՛ է զրադաշտական մոլոխը, լափում է և՛ հո՛րը, և՛ զավակի՛ն, և ամեն ի՛նչ: Ո՛վ ունի ազգքան զոհ, ա՞ր սիրաբ պիտի տանի հոր կսկիծը, մոր տառապանքը, խղճի թունոտ խայթը... Եվ ի՛նչ է այս քուչրի վարձը, — մի սարսափելի՛ անուն...

— Տե՛ք մարդպան, մի փոքր մահիճ քնդունիք հանգստյան օֆեանում, — հորդոքեց Գագիշոն:

— Ես հանգիստ եմ: Ներեցեք, իշխաններ, կրքիս հիվանդութունը շարժվեց ակամա... Այո՛, հանգստանա՛նք և սովորե՛նք այդպես ապրել: Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում: Վրդովվելու բան չկա այստեղ: Գնանք, մտնենք անկողին, և թող բարկություն բժիշկը ետ բերի մեր սառնասրտութունը: Սենեկապետ, անկողի՛ն իշխաններին: Տյա՛րք, առավոտ ինձ կտեսնեք կազմողուրված և նորոգ: Բարի՛ գիշեր:

— Լո՛ւյս բարի, տեր մարդպան, — ասացին իշխանները:

Վասակին տարան հանգստյան օֆեան:

Միհրնեբրսեհը ստանալով Սեբուխտի պարտութեան լուրը՝ ինքը կանխեց Հազկերտին, շտապեց բռնել նրան: Նոր էր Հազկերտը կատաղում, որ Հազարապետը ինքը դրեց հարցը.

— Տե՛ր արքա, վե՛րջ տուր մանր գործողութիւններին: Տո՛ւր իբրավունք մեծ գորարանակով վերջացնել գործը:

— Վե՛ե՛րջ տյո՛ւյո՛ւր... իրավունք տյո՛ւր, գորարանակ տյո՛ւր... — բերանը ծումեց Հազկերտը զայրացած, — ինչո՞ւ գործը ձգձգեցիր այսքան...

Միհրնեբրսեհը սփրթնեց, ցնցվեց և սառն շարութեամբ ու հպարտ սպասեց, որ Հազկերտը թույնը թափի վերջացնի:

— Հա՛ա՛, ասա՛ա՛, ի՛նչ ես լում, ասա՛ա՛... — շարունակեց Հազկերտը, — մոգերին ջարդե՛լ տվիր, Սեբուխտին ջարդե՛լ տվիր, հիմա էլ ո՛ւմ ես ուզում ջարդել տալ. Երա՛նը... ի՛նձ... թե՛ քո գլուխը...

— Իմ գլուխը, — թավ ու ցած ձայնով ղուսպ ասաց Միհրնեբրսեհը, — որպեսզի չջարդվի ոչ Երանը, ոչ էլ իմ արքայի մի մագր... Ինչո՞ւմն է բանը, տեր արքա, հա՛րկ էր սպասել հույների մլրթման՝ հայերի օգնութեան դիմումին, հա՛րկ էր, որ Վասակը ուժերն հավաքեր և վերցնէր իշխանութեանը, փրկէր մեր մեծամեծներին, գրավեր բերդերը, հավաքազրեր նախարարներին, ճընշէր հայ ժողովրդին, մոգերը մտցնէր ընտանիքները: է՛, տե՛ր արքա, դժվարը անցկացրի՝ ձեզ թողի, մնաց դյուրինը: Թող հիմա գա Պերոզ իշխանը և ավարտի ավարտվածը... Ուղարկել տուր ինձ կառափնատուն՝ գլուխս ետ ուղարկելու քեզ...

Հազկերտը ծուռ ու կողքանց նայեց Միհրնեբրսեհին.

— Ի՛նչ, պոռնկի լա՛ց ես լալիս... վախեցնո՞ւմ ես... Կտեսնե՞ր առանց քեզ իր գործերը Երանը...

— Միայն այդ կուզեի տեսնել՝ քանի դեռ գլուխս ուսերիս է... Իսկ արքաներին, տեր արքա, շին վախեցնում... Արքաներից վախենում են... խելքս դեռ գլխումս է:

— Եվ կվախենա՛ս, ա՛ղբ, — գոչեց Հազկերտը կատաղի և գարձավ սենեկապետին, — դահճապետին...

Արագ ներս վազեց դահճապետը:

— Տա՛ր, ետ ուղարկել գլուխը, — հրամայեց Հազկերտը:

Դահճապետը դաժան քաղաքավարությամբ սպասեց, որ Միհրնեբրսեհը ինքը շարժվի դեպի դուրս:

— Դո՛ւրս տար... — հրամայեց Հազկերտը:

Դահճապետը բռնեց Միհրնեբրսեհի բազուկը և քաշեց դուրս: Դուռն մեջ միայն բաց թողեց և խոր գլուխ տալով Միհրնեբրսեհին՝ հարցրեց.

— Ապարա՛նքդ առաջնորդեմ, թե՛ ատյան, տե՛ր Հազարապետ:

— Զնդա՛ն,— հրամայեց Միհրնեբրսեհը գոռոզ:

Դեռ չէին շարժվել, որ հետևից հասավ սննեկապետը և հայտնեց, որ Հազկերտը ետ է կանչում:

Միհրնեբրսեհը վերադարձավ շար ու վիրավորված:

Հազկերտը նայեց նրան մեղմ խոժոռությամբ և հպարտ հրամայեց.

— Կանչի՛ր նյուսալավուրտին թող դումարի մեծ զորաբանակ: Վե՛րջ Հայոց աշխարհին:

— Հրամանդ ի կատա՛ր,— ասաց կիսաձայն Միհրնեբրսեհը և լեռլայն սպասեց այլ հրամանի:

— Վե՛րջ Հայոց աշխարհին... Ուրիշ ոչի՛նչ:

Միհրնեբրսեհը գլուխ տվեց և դուրս ելավ:

Մի որոշ պահից հետո բանակում և Ապարում թնդաց Հազկերտի հրամանի լուրը: Ճամբարում մեծ կենդանություն սկսվեց:

Այդ գիշեր ապարանքում զորական խորհուրդ եղավ, ուր ներկա էր նյուսալավուրտը և նրա օգնական Դողվրճը, որ պարսից «մատյան գնդի» և փղերի ուղղմեբրամակի հրամանատարն էր: Երկար տևեց խորհրդակցությունը: Գլխավոր կնճիռն էր ժամանակը,— ե՛րբ տանել զորաբանակը Հայաստան: Քանի որ աշունը խորացել էր և մինչև զորաբանակը կազմվեր և ճանապարհվեր, հասներ տեղ՝ կհանդիպեր Հայաստանի խստաշունչ ձմռան:

— Տարաժամ ենք, տեր Հազարապետ,— ասաց Դողվրճը,— աշունը խորանում է, շտապենք հարվածը տալ մինչև ձմեռ:

— Կարող չե՛նք և ձմեռը տալ հարվածը,— հակաճառեց Միհրնեբրսեհը:

— Ես փղերը չեմ տանի սառեցնելու Հայաստանի անխժյալ սառցարաններում,— ասաց Դողվրճը:

— Բայց եթե ձմեռս չհարվածենք՝ գարնանը դժվար կլինի,— առարկեց Միհրնեբսեհը, որին զարհուրեցնում էր ոչ այնքան ձմեռը, որքան գործի ձգձգումը, պալատական խարդավանք ու դավերը, Հայաստանի գործերի հեղհեղուկ վիճակն ու անակընկալ շրջադարձերը,— պետք է ձմեռս հարվածենք և վերջ տանք:

— Դժվար է շտապել, շենք էլ կարող ուշանալ,— խոսեց Նյուսալավուրտը,— փորձենք շտապել, տալ հարվածը մինչև ձմեռ:

— Կազմեցե՛ք զորաբանակը շտապ, արագ,— հրամայեց Միհրնեբսեհը,— տանք հարվածը՝ վերջանա՛...

Նյուսալավուրտն ու Դողվրճը ոտքի ելան:

— Տանք հարվածը,— մոճուաց Նյուսալավուրտը:



Աշնան ամպերի ձեզքից արևը ճառագում էր սքարօից զորաբանակի գրահավոր շարքերն ու սեռացած դաշտը: Նյուսալավուրտը և Դողվրճը նժույգների վրա ընդունում էին իրենց առջևով անցնող զորագնդերին, որ ստուգվում էին և գնում շարվում դաշտի հեռու ծայրին:

Ահագին ամբոխ Նյուշապուհից եկել լցվել էր մի կողմ և գիտում էր զորական շարժումները: Պալատականները Միհրնեբսեհին շրջապատած նստել էին մի փոքր հեռու գորգերին: Փսփսուկ էր լավում նրանց մեջ: Պերոզ իշխանը պարտվել էր պալատական խարդավանքային արշավում և հիմա օձային հայացքներ էր նետում իր հակառակորդին և մաքում անիծում նրան:

Պալատականների մեջ էր և Վախթանգը, որ չէր կարողանում անտարբեր նայել զորքին: Նրա աչքի առջևով տաղանցում էր Երանի հզոր զորքը.— հպարտ ուժը Երանի... Ուռեց կործորը: Նա ըզգաց իր մեջ կովի մարմաջը և հայերին ոչնչացնելու տարօրինակ, անդիմադրելի մի կիրք, որ դուրս լողաց նրա հոգու ընդերքից և տիրեց նրան: Նա վճռեց մտնել զորաբանակ և գնալ պատերազմ Հայաստանի վրա:

Ճաշին տուն վերադարձավ Վախթանգը և հրամայեց ծառայակետին պատրաստել իր զենքն ու նժույգը: Տանեցիկները սկսե-

ցին լացրի: Յրավաշին՝ գոթանչը, տագնապալի մոտեցեալ նրան և սիրտ արեց հարցնելու.

— Չէ՛ր քինի, որ շքնալիր, ո՛րդի...

— Չգնայի՛,— խեթ նայեց Յրավաշիին Վախթանգը,— ո՛ւշ եմ գլխի ընկել, ո՛ւշ եմ գնում: Ես վաղուց պիտի՛ զորքի մեջ լինեի:

Հետո զայրացած ոտը խփեց գետնին.

— Ի՞նչ, ստրուկ արմին Արսենը սուր բարձրացնի իր տիրոջ՝ Երանի՛ վրա, ի՛մ վրա... Ես նրան չսպանեցի: Եվ այստեղ էլ միտք չունեիր: Ես նրա ոգին կսպանեմ կովում: Դա միտք ունի: Թող իմանա, թե ո՛ւմ ստրուկն է և ինչո՞ւ: Ո՛ւր է Խորիշան...

Կանչեցին Խորիշային:

— Գնում եմ սուրս մխեմ սիրեկանիդ սիրտը: Սրտիցդ հանի՛ր նրան... արմին Արսենը երազ էր՝ զարթեցիր՝ չկա՛: Դե՛...

Եվ համբուրեց Խորիշային: Խորիշան ևս համբուրեց նրան: Եվ մի բան մրմնաց:

— Ի՞նչ ասացիր,— հարցրեց Վախթանգը:

— Սուրդ ի՛մ սիրտը... — լացեց Խորիշան և ընկավ Վախթանգի գիրկը:

Վախթանգը խանդաղատեց, աչքերը՝ թքվեցին.

— Անիծյալ տե՛ր, որդին ոչ մի բան չի հաղթում... — մոմոաց Վախթանգը, ետ հրեց Խորիշային և ապա գրկեց համբուրեց Յրավաշիին, Խորիշայի թրոջը, Դիշտրիային անգամ և նստելով նժույգը՝ դուրս ելաւ իր անտարանքից:

Նա գնում էր միանպուռ այն առաջապահ զորագնդին, որ ըլտապ շարժվում էր դեպի Հայաստան:

Տանեցիները մտան օթևան: Միայն Խորիշան քայլամուր գնաց այգու արևմտյան պարիսպը, և բարձրացավ փոքրիկ աշտարականման հարթակը, նստեց կավե նստարանին: Դիմացը լայն տարածվում էր աշնան գաշտավայրը իր սրտամաշ մերկությամբ: Երեկոյացել էր: Ապարանքը, այգու կավաշեն պարիսպը, ծառերը, առուն ողողվել էին մայր մտնող արևի նարինջով: Նույնագույն լույսով հրդեհվել էր ողջ Նյուշապուհ քաղաքը հարավում:

Խորիշան հայացքը սուզեց հրաշեկ հորիզոնի մեջ, որի ամպեղեն վարագույրը տեղ-տեղ պատառվել, անցքեր էր բացել դեպի կաթող: Հեռաստանի խորքերը: Հեռո՛ւն, հեռո՛ւն հալչում էր

մի ամպեղեն ոսկեմակույկ, հալչում էր հեռանալով ավելի՞ ն ավելի՞ հեռուն: Այնտե՛ղ, ուր նա է, ուր կորել է նա երևի, եթե չի զոհվել արդեն մարդկային սրին, գազաններին, փոթորիկներին...

Ամե՛ն ինչ այդպես գնաց, հեռացավ Խորիշայից: Մերկացավ, ամայացավ նրա կյանքը, գնաց այնպես, ինչպես ահա գնում էր արևը, հանգչելով, հանգչելով հետզհետե:



Հոնաց աշխարհի ուշ աշնանային տափաստանը կորչում էր շորս կողմը լայնածիր, հեռասույգ: Տամկացած գետնի աշնանային զմրուխտը ապրում էր իր վերջին օրերը: Լճակները միամիտ, ակնապիշ նայում էին գունատ երկնքին: Զուրը թաքնվում էր խոտերի ու ճումբերի արանքում՝ տեղ-տեղ պսպղալով ինչպես պարզ գաշույն: Հեռաստաններում ծխում էին հոների ուրթերը, սևին տալիս նժույգների թաբունները և ուղտերի երամակները, տխուր տափաստանի ամայությունը մեղմելով:

Բարակ, անվերջ երկար ճանապարհով գնում էր Վարդանը իր շքախմբի և հոն ուղեցույցների հետ, որոնց մեջ՝ Ճորա Պահակից Վարդանի վերցրած հոն ուղեցույցը՝ Սամղազեմբան: Ուղեկցում էր նաև Մելքոնը, որ ընդառաջ գալով Վարդանին՝ տվել էր վերջին տեղեկությունները Հոնաց աշխարհի գործերի մասին և հիմա առաջնորդում էր դեպի նրանց արքայանիստը Իթըլ գետի Հորդան:

Ճանապարհի աջում և ձախում հանդիպում էին մանր ուրթեր, հոների խմբեր, որոնց մոտից անցնում էին հայերը հանգիստ ու ապահով:

Ցուրտ առավոտը պարզկա գիշերից հետո միտում էր մեղմել արևի ժլատ ջերմությունից: Սկսեցին հաճախել թաբուններն ու երամակները, — պարզ նշան, որ մոտենում են Հորդային:

Անցնում էին ուղտերի երամակի մոտով: Երկու հոն բերանքսիվայր ընկած ուղտերի առաջին կուզի վրա և երեսները թաղիբի մեջ թաղած քնել էին՝ թողնելով ուղտերին արածելով շրջել գնալ ուր որ կուզենային սրանք: Մի փոքր հեռվում մի տասնյակ հեծյալ հոներ մերկ նժույգները թռցնելով ընկել էին ամիսներ

ազատ արձակած և արդեն վայրենացած նժույզների հետև՝ ճիգելով նրանց որսալ օղապարանները վզները գցելով:

— Սկսեցին երևալ հեծյալների զորախմբեր, որ հեռու մոտիկ նկատվում էին, մերթ սլանում, մերթ դանդաղում, երբեմն անսպասելի շրջվում ետ և արագ անհետանում: Մեկընդ բացատրեց, որ դրանք հետախույզ խմբեր են, որ շրջագայում են Հորդայի շորս բոլորը՝ կանխելու համար որևէ թշնամական անսպասելի հարձակում:

Վարդանի շքախումբը այնքան աշկարա և հանգիստ էր գնում, որ նրանով, ըստ երևույթին, շատ շէին զբաղվում հետախույզները: Թեև մեկ-մեկ մի կենտ հեծյալ որևէ տեղ գետնի տակից բրսնելով գալիս էր մոտենում և տեսնելով հոների ուղեկցությունը՝ ետ էր թռչում կորչում:

Վերջապես տափաստանային հեռաստանում ծխալ սկսեցին սևին տալով Հորդայի ուրթերը: Ավելի մոտենալով՝ Վարդանի շքախումբը սկսեց պարզ որոշել Հորդայում մի քանի խմբավորումներ: Մեջտեղը Հորդան էր՝ թաղիքե, ցանցառ տարածված, հսկայական վրանաքաղաքը: Նրա շրջանից դուրս մեկուսի խտանում էին զորքի երկու մեծ զանգվածներ անտառի սևությամբ:

Հորդայի ուրթերի արանքում մեծ հրապարակ էր բացվում, «Կուրենը», որի մեջտեղ բարձրանում էր մի մեծ, բազմակտուր սաղավար, որ ուներ զանազան հարկաբաժիններ: Նա ճերմակ թաղիքե գմբեթներ ուներ և կապույտ մետաքսե պատեր: Նրա դռանը կանգնած էին նիզակավոր պահնորդներ:

Դա արքայի գահանիստ պալատ-ուրթն էր:

Հորդայի արքան գնացել էր ընդառաջ Աթրլին, սև հոների սարսափելի առաջնորդին, որ փոթորկի պես հասնում էր հեռավոր արևելքից:

Իսկ ժամանակը թռչում էր... Այնտեղ, հայրենիքում երեկ ամեն ինչ իրար խառնվեց: Այնտեղ, հայրենիքում իրեն էին սպասում բյուր բյուրավոր աշքեր...

Օրերն անցնում էին անպտուղ: Եվ ահա մի օր էլ ի հավելումն անհաջողության՝ հայտնվեց Անատոլ զորավարը Եղփարիոս Ասորու հետ: Նրանք դեսպան էին եկել Բյուզանդիայի նոր կայսեր՝ Մարկիանոսի կողմից: Ի՞նչ կարող էր ստացվել այդ մարդկանց ներկայությունից: Նրանք բարեկամական դաշինք կնքելով հոնե-

րի հետ՝ արգելք կլինենին Վարդանի և հոների դաշինքին: Քող կըն-  
քին դաշինք հոների հետ, գոնն հայերին շխանդարենին:

Հորդայում օրեցօր սպասում էին Աթըլին: Քանի գնում՝ լար-  
վում էին այնտեղ: Ամենքն սպասելով խաբանին՝ գործերը թողել  
էին: Քյուզանդական ղեսպանները սակայն գործի անցան, և  
առաջին գործն եղավ հայերին զրպարտելը: Հոն ավագ իշխանա-  
վորը ուշադրութայամբ լսեց Եղփարիոս Ասորու հերյուրանքները այն  
մասին, որ հայերը կամենում են Աթըլին կոպեցնել Քյուզանդիայի  
հետ, հեփթաղներին պարսիկների հետ, ինչպես պարսիկներին  
կոպեցնում են քուշանների հետ: Հոն ավագ իշխանափորը լարվեց և  
հետաքրքրությունը սրեց Վարդանի կողմը:

Մի առավոտ հոն հեծյալը նամակ բերեց Վարդանին Ատոմից:  
Տագնապալից էին լուրերը: Առաջինը՝ Քյուզանդիայի կայսրը  
մերժել է օգնությունը: Երկրորդ՝ Վասակը դրժել է ուխտը և ապրս-  
տամբել, գրավել է բերդերը, արձակել պարսիկ մեծամեծներին:  
Ատոմը քաշվել է լեռները և մանր հարձակումներով ջանում է  
կղզիացնել Վասակին Այրարատում:

«Շտապի՛ր, փութա՛, տե՛ր Սպարապետ,— գրում էր Ատո-  
մը,— և ապա իմացած լինես, որ պարսիկների մի մեծ զորաբա-  
նակ շարժվում է դեպի Աղվանք կամ Հայաստան»:

Վարդանը զգաց, որ գունատվում է: Փորձությունը գաժան էր  
գժվարին էր դիմանալը:

— Զգենք հեռանա՛նք, Սպարապե՛տ,— ասաց Արշավիրը:

Վարդանը շխոտեց: Նա վերդիր էր անում,— ե՛րբ վերջացնի  
այստեղ գործը, ե՛րբ գնա հասնի տուն, ե՛րբ ճնշի ապստամբու-  
թյունը և ինչպե՛ս հասցնի կազմել դիմադրական արքունի գոր-  
քը... Փորձությունը գաժան, գաժան էր... Վասակը փոքր էր, և այն  
արհամարհելը աններելի հանցանք էր: Վարդանը խիստ մտահոգ  
էր: Երբեք ռազմերի դաշտերում նա չէր կանգնել այդպիսի լուրջ  
մտահոգության առաջ: Այնտեղ վտանգ էր եղել ճակատամարտը  
տանուզ տալու, ընկնելու: Իրանք հանձնառուելի բաներ էին Վար-  
դանի համար: Բայց այստեղ մարտնչումը պալատական խարդա-  
վանքների մեջ, սառը զրպարտությունների, շարախոտությունների  
գնեքի հանդեպ գտնել զենք, որով հնար լիներ և դիմադրել և  
ազնիվ մնալ — ահա բուն դժգոհությունը, անգամ սարսափը  
Վարդանի համար: Մահեղձից Հազկերտի զնդանը հիշեցնող մի

Հագեկան երկրնտրանք,— ներքին կոփվ, խոր ինքնասիրություն:

Վարդանը անձամբ ժանոթ էր թե Անասուլ զորավարի և թե Սչպարիոս Ասորու հետ: Սրանց ուրթերը հետու չէին Վարդանի ուրթից: Հանդիպումը անխուսափելի էր: Եվ ըստ երևույթին բյուզանդացիք ևս հայերի պես չէին կամենում հանդիպել իրար և դժգոհ էին, որ այսպես անսպասելի հանդիպեցին:

Բայց երկու կողմն էլ զգում էր հանդիսման անխուսափելիությունը և անհանդիստ էին:

Մի քր պերջապես լուսադեմին թմբուկները զրնգացին և շեփորները ժղրտացին սուր ու երկար: Վարդանը զարթնեց և դուրս նայեց: Մեծ իրարանցումը ցույց էր տալիս արտակարգ մի դեպք: Սպասավոր լրտեսը, որ միշտ ուրթի դռանն էր քնում, հայտնեց, որ Աթըլը մոտեցել է, պատրաստվում են դիմավորելու նրան:

Հորդան դատարկվեց համարյա: Հոնական զորագնդերը հոսեցին դեպի արևելք՝ դիմավորելու Աթըլին: Մինչև կեսօր դեռ չէր երևում Աթըլը և ահա կեսօրին թմբուկների որոտի, շեփորների կոնչյունների, ծնծղանների, դափերի, սրինգների աղմուկով Հորդա մտավ Աթըլը իր մեծ զորաբանակով: Առջևից գալիս էր սևադեմ ալեհեր շամանը շախետ նժույգ նստած և հետևից քաշում էր գեղազարդ նժույգի մետաքս սաւնձը: Գա Աթըլի նժույգն էր: Ամպհոժանի պատգարակի մեջ նստած էր Աթըլը՝ հենված կապույտ ոսկեթելած քարձերին: Խաբանի պատգարակը շրջապատված էր ընտրի հեծյալների օղակով: Հետևից գալիս էր մի սպիտակ ուղտ՝ արտասուվոր գեղեցկության: Պատանի մի հոն մետաքսե արկանով քաշում էր նրա սանձը: Ուղտը անբեռն էր և նրա ականջներից ու երկու սապատից քարշ էին գցած դեղին մետաքսի ժապավեններ: Նրա վրա նստած էր աներևույթ աստվածը, որ Աթըլին առաջնորդում էր պատերազմ:

Հորդայի բնակչությունը, որ ընդատաջել էր Աթըլին դիմավորելու՝ ճանապարհի երկու կողմը հնձած արտի պես փովեց գետնին բերանքսիվայր՝ իրավունք շունենալով նայել խաբանին:

Աթըլը ոչ շատ տարեց, ավերի շատ կարճահասակ, թխագեմ գորական էր: Նրա լուսանի աչքերը, շեղ ու նեղ սակայն, նայում էին վայրի ու շար: Նա անտարբեր էր թվում դեպի իրեն ցուցարարած հլու ջերմեռանդ ընդունելությունը: Ավելի շուտ նա ոչ որի չէր նայում, այլ մի անորոշ կետի, որ չգիտես հեռաստաններում

էր, թե մոտիկ մի տեղ: Կատարյալ արհամարհանքը դեպի լայնազանգված բազմութիւնը նրան դարձնում էր ընդմիշտ անհագորդ, անմատչելի: Երբեմն մի ակնթարթ նա լուսանի հայացքը սևեռում էր հարձակման պատրաստ շարժպիտ շողով:

Աթըլի հետևից տեղահանված, շարժված անտառների թանձրութեամբ երկարածիզ գալիս էր նրա գորքը: Դրանք հեծյալներ էին, փոքրիկ, տգեղ, բայց տոկուն նժույգներին հեծած: Այդ լերկերես, լերկակզակ մարդիկ, կարճ հասակի համեմատ մեծագլուխ, կորովանդամ, կարճոտն, երկարիրան, սևամորթ, շեղակն մարդիկ սարսափելի տպավորութիւն էին թողնում: Նրանք զինված էին տեգերով, նետերով և սրերով, թևներին վահան, օղասպարները հագներին:

Նրանց շարքերը երբեմն ընդմիջում էին Հորդայից նրանց դիմավորող գորքերը՝ գրեթե նույն զենքերով:

Սրանց հետևից գալիս էին ծածկավոր սայլերը, ուղտերը, թռնակիր ձիերը հոների ընտանիքներով, բոժոժներով զարդարված ակադեմ, մրկած մորթի կանանցով, որ գնում էին սայլերին նրսած կամ հետիոտն՝ երեխաները մեջքապարկերը գցած:

Ամենից վերջը ձգվում էին ձիերի թաքունները, ուղտերի երամակները և ոչխարի հոտերը:

Այս ամենը այնպես էր ազդում նայողին, կարծես մի աշխարհ ավերվել՝ տեղափոխվում է մի ուրիշ աշխարհ, բերելով իր հետ ավերածութիւն այդ նոր աշխարհին: Այդ ջրհեղեղը, աղետը, սարսափը գալիս էր անվերադարձութեան ծանրութեամբ, ճնշում, ոչնչացնում էր մարդկային կամքը, հոգին: Դա իր հետ բերում էր հուսահատութիւն, մահ:

Թափորը եկավ և կանգ առավ պալատ-ուրթի առջև, ուր ճարպիկ հեծյալները արագ ցած թռան նժույգներից և վազեցին Աթըլին դուրս բերելու պատգարակից: Շամանը սպասեց, ու երբ Աթըլին առան մոտ բերած գահավորակի վրա և բարձր բռնած ներս տարան պալատ՝ նա առաջ ընկավ գնաց ներս: Նրա հետևից ներս գնացին Աթըլի ընդարձակ երկրների արքաները Հորդայի արքայի հետ միասին: Աթըլի գահավորակը դրվեց պալատուրթի մեջտեղ, իսկ արքաները գնացին և կիսաբոլոր կանգնեցին նրա մոտ: Ներս մտան Աթըլի գորքերի զորացուսները, որ կանգնեցին նրա դիմաց: Առաջ եկավ շամանը և հայտարարեց, որ հասած վայրը

բախտավոր է: Աթըլը նշան արեց՝ ձեռը կիսովին բարձրացրած՝ և բոլորը ցրվեցին: Աթըլին տարան հանգստյան օթևան պալատին կպած հարկաբաժնում: Ամենքը զնացին հանգստանալու:



Հակառակ Վարդանի ենթադրությունների՝ ոչ միայն հեփթաղների արքան, այլև ինքը Աթըլը հետաքրքրություն ցույց տրվին դեպի հայկական դեսպանությունը: Վարդանին, Արշավիրին, Արտակ Պալունուն և Խորենին առաջնորդեցին Աթըլի մոտ՝ կանխապես հրահանգելով նրանց մեծ խաբանին ներկայանալու կարգը, որ նրանք պարտավոր էին կատարել: Վարդանը երկմտի էր: Մեկ թվում էր թե գործը հաջող կընթանա, մեկ էլ երբ մտածում էր բյուզանդացիների մասին՝ կասկածում էր:

Անդնելով դրանիկների մոտից հայերը մտան պալատ-ուրթը և դռների մոտ ծունկի եկան: Աթըլը աչքերը սրեց Վարդանի վրա, որ բոլորից բարձրահասակ ու աչհերը լինելով՝ աչքի էր ընկնում: Նա նկատեց, որ պալատական արարողապետը կարգադրեց Վարդանին և մյուս իշխաններին սրերը հանել և հանձնել: Աթըլը ձեռով նշան արեց, որ Վարդանին հարգեն և շառնեն զենքը: Ապա երբ Վարդանին յուրայիններով առաջ բերեց արարողապետը և կրկին հրահանգեց ծունկի գալու՝ Աթըլը ասաց.

— Թող նա առաջ գա առանց այդ ծեսի: Հարգենք մարտերում մոխրացած ալիքը այս զորականի, որին յուրայինները ուղարկել են այսքան հեռուները:

Վարդանը առաջ եկավ և խոնարհաբար գլուխ տվեց Աթըլին:

— Ո՞ր ծով ու ցամաքից ես, ո՞ր աշխարհից իս եկել մեր աշխարհը,— հարցրեց Աթըլը:

Վարդանը Սամղաջեմբայի միջոցով պատասխանեց.

— Հայոց աշխարհից եմ, Վրկանա և Պոնտական ծով ու ցամաքից: Պարսից արքան, որ մեր ու ձեր թշնամին է՝ ոչնչացնել է կամենում...

— Իրավունք է՝ թե կարողանա,— հեզնեց թե լուրջ ընդհատեց Աթըլը:

— Կդիմադրենք, մեծ խաբան, թույլ չենք տառ:

— Իրաւունք է՝ թե կարողանաք,— նույն նշանակով ասաց Աթըլը և ապա սպասելով, թե ինչ կասի Վարդանը՝ հարց տվեց.

— Հիմա ի՞նչ ես որոնում մեր աշխարհում:

— Ես եկել եմ պատերազմի դաշինք կոչելու մեր և ձեր արքայի միջև:

— Դաշինքը սրի ծայրին է, օտա՛ր իշխան: Ունե՞ք սուր:

— Ունենք: Մենք ոչնչացրինք պարսիկ զորագունդը Աղվանքում, եկանք գրավեցինք Ճորա Պահակը:

Վարդանը նոր այդ պահին միայն նկատեց, որ ներս էին բերված նաև բյուզանդական զենապանները, որ լսում էին իր և Աթըլի խոսքերը: Նա զգաց Անատոլ զորավարի խայթիչ հայացքը և հասկացավ, որ իրենից առաջ Աթըլը ընդունել է բյուզանդացիներին:

Աթըլը նողկալի ժպտաց և նայեց Վարդանին: Բա՛ն հիշեց, թե՛ մի բան գիտեր, որ տարակուսանք և կատկած էին հարուցում նրա մեջ:

— Ասում են՝ գուք այնպիսի ցեղ եք, որ կռիւցնում եք ամենքին ամենքի դեմ,— ասաց Աթըլը:

Բոլորը կիսաժպիտ նայեցին Վարդանին: Զարախինդ նայեցին բյուզանդացիները՝ զգալով իրենց բանեցրած թույնի հաշոդ ներգործութիւնը:

— Կարող է ճշմարիտ լինել այդ աշխարհ է, կպատահի, մեծ խաբան,— պատասխանեց Վարդանը հանգիստ,— բայց ի՞նչ օգուտ մեր ցեղին ամենքի կռիվը ամենքի դեմ՝ երբ նրանք իրար հետ պիտի կռվեն մեր երկրում և մեզ ոտնատակ տան: Հետո՞ ի՞նչ օգուտ ունեն ամենքը կռվելու ամենքի դեմ՝ մեր, մի փոքրիկ ցեղի ցուցմունքով: Ամենքը շունե՛ն իրենց խելքը: Մենակ մե՛նք ունենք խելք...

Անատոլ զորավարը խոնարհութիւն արեց Աթըլին:

— Հա՛, ի՞նչ կա,— հարցրեց Աթըլը,— թող խոսի թյուզանդի մարդը:

— Տեր տիեզերքի: Ամենաողոմածորեն բարեհաճիր հարցնել հայ իշխանին, թե ի՞նչ հաղթութիւններ է տարել նա ձեր դեմ պարսից ու ձեր քուշանների կռիվներում...

Աթըլը սպասնազին նայեց Վարդանին:

— Այն հազթութիւնները, որ տարտաւոր ենք տանել իբրև հալատարիմ գորավար մի արքայի... — պատասխանեց Վարդանը:

— Իսկ ի՞նչ օգնութեան դիմում է արել իշխանը Բյուզանդիային իր այդ արքայի դեմ, — հարց տվեց Անատոլ գորավարը:

— Օգնեն, որ ետ մղենք այդ ապերախտ արքայի բռնակալ հարձակումները մեր երկրի դեմ, — պատասխանեց Վարդանը: Եվ հանկարծ բարձրացրեց ձայնը և դիմեց Աթըլին.

— Ամենաողորմածորեն հարց ասուր Բյուզանդ իշխանին, մեծդ խաբան, ինչո՞ւ Բյուզանդիան մերժեց մեր օգնութեան կոչը... Ի՞նչ դաշինք ունի Բյուզանդիան Սրանի հետ ձեր բաշխանների գեմօ Ինչո՞ւ նրանց է իրավունք՝ բարեկամներ որոնել իրենց թշնամիների դեմ, իսկ մեզ, մի բուռ ժողովրդի, արգելված լինի այդ:

Աթըլը մտածում էր: Հետո հանդարտ ասաց.

— Ամենքն իրավունք ունեն: Ինչ որ կարող են: Իսկ դուք ի՞նչ կարող եք պարսից դեմ ու մեզ հետ:

— Մենք կավերենք ձորա Պահաիք, թող ձեք գործը լցվի այդտեղից Սրան:

Աթըլը կրկին մտածեց: Նրան բատ երեւոյթին շատ տվելի մեծ մտքեր ու հոգսեր էին գրազեցնում: Նա հարցրեց.

— Կա՞յ Հիմա աստ ինձ ազնվարեն: Եթե ես կամենամ Բյուզանդիա գնալ նրանց արքային հյար՝ կա՞ նախապարճ ձեր երկրի վրայա՞յ:

Անատոլ գորավարը գունատվեց: Այդ պաշտտական շարքը գերագրգիռ հետաքրքրութեամբ լարվեց:

— Կա նախապարճ, — պատասխանեց Վարդանը ոչ պակաս խոռովյալ հոգով, — բայց միայն գնալուս Վերապարճ չկա: Քեզ կը հանդիպի բո թիկունքում քո պատճառած սովը: Ծակ ձեռքը շատ է երկար:

— Բարի, — ասաց Աթըլը, — մեր Հորդայի արքան կգա ձեր երկիրը ձեզ օգնութեան պարսիկների դեմ:

— Կհրամայե՞ս կանեք դաշինք: Մենք մեր պարաքը պիտի կատարենք, — ասաց Վարդանը:

— Կոնցեք դաշինք, եթե հավատում ես գաշինքին, — ժիծաղեց Աթըլը, — ահա դաշինք ունենք մեր աշխարհի հողմերի հետ, որ քշում են սփառը, սփառն էլ մեզ, մենք էլ կամ ձեզ կամ Բյու-

զանդին: Ամենքը ամենքի թշնամին են, հա', հա', հա': Ապա՞: Մենք էլ ունենք մեր թշնամին. ամենաուժեղից ամենաուժեղը: Ավազը, նա էլ մեզ է դուրս անում: Գնա', դաշինք կոիր հետը: Բարի, թող մեծ շամանը մեր ճանապարհը գծի կամ Պոնտոսի հյուսիսով կամ հարավով:

Աթըլը ունքերը կիտեց: Արարողապետը մոտեցավ Վարդանին, և գլուխ տալով հասկացրեց, որ ընդունելութունը վերջացավ: Վարդանը և մյուս իշխանները խոնարհութուն արին Աթըլին և ընկրկելով ետ-ետ՝ դուրս ելան:

— Վա՛յ մեզ, վա՛յ մեր դաշինքին հողմերի ու ավազի հետ, — քմծիծաղեց Վարդանը, երբ գնում էին իրենց ուրթը:



Հորդայի արքան դուրս եկավ մի շատ համեստ և խելացի մարդ: Նա հրավիրեց Վարդանին նստել իր դիմաց ասեղնագործ թաղիքին, ինչպես և ինքը նստել էր նույնպիսի թաղիքին: Հոգսերի և կյանքի դառն փորձի կնիքը թախծալի մի ստվեր էր դրել նրա դեմքին: Նա Վարդանի հետ դաշինքը կոեց իբրև առօրյա կյանքի մի ձեռնարկում: Դաշինքի պայմանն էր. Վարդանը քանդում է Ճորլա Պահակը և ճանապարհ է տալիս հոներին մտնելու պարսկական գավառները: Վարդանը պայման դրեց, որ գործի հաջողության համար հոները հարձակվեն պարսկական զորքերի վրա և ոչ թե զբաղվեն ասպատակություններով և բնակչության կոլոպուտով: Միաժամ այլ պայման, որ հոները չեն մտնի Աղվանք և Վրաստան: Ապա վերջին պայման, որ հոները առայժմ կվարեն մանր հետախուզական կոիվներ և զորք կգումարեն գլխավոր ճակատամարտի Ֆամար և կճակատեն հայերի հետ միաժամ: Հոն արքան համաձայնվեց. միայն շեշտեց այն հանգամանքը, որ իր զորքը զորք չի դառնա՝ եթե ասպատակություն և ավարառություն չլինի:

— Դա մեր ապրուստն է, — ասաց արքան:

— Դո՛ւք գիտեք, — ասաց Վարդանը, — բայց ավարառությունն ու ասպատակությունը քայքայում է զորքը:

— Ո՛չ մեր զորքը: Ընդհակառակը՝ այդ է, որ ստեղծում է և զորացնում մեր զորքը, — բացատրեց արքան հոգածու և լուրջ:

Դաշինքի կոումը զարմացրեց Վարդանին: Դա շատ պարզ մի պործողութիւն էր հոն արքայի կողմից — նա բերել տվեց մի թաս ջուր և խմելով դրանից՝ առաջարկեց խմել նաև Վարդանին նույն թասից:

Իսկ երբ Վարդանը վստահութիւն ներշնչելու համար հանեց իր ծոցի փոքրիկ ավետարանը, որի վրա երգվեց հավատարիմ կատարել դաշինքի պահանջները՝ հոն արքան ցանկութիւն հայտնեց, որ ինքն էլ կերգվի ավետարանի վրա՝ Վարդանը ոչ փոքր զարմանքով մեկնեց ավետարանը արքային, որը երգվեց նրա վրա:

Այնուհետև արքան պահեց Վարդանին և մյուս դեսպաններին իր մոտ հացկերույթի: Կերակուրների տեսակը՝ որսի միսը՝ ձիերի մեջքի վրա թամբով ծեծած՝ տաքացրած, կումիսն ու կաթնամթերքը, մոխրի մեջ եփած հացն ու պարզ մատուցումները թեև ոսկի ամանեղենների մեջ և հանգիստ զրույցը Վարդանի առջև նկատում էր աստանդական քոչվորի վայրենի կենցաղ ապրող մի նահապետական արքա, որ չի էլ իմանում որն է իր հայրենիքը: Արքան սրտամեց, որ իրենք եկել են «արևելյան երկնքի տակից», որ ինքը հիշում է իր հոր պատմած իրենց արոտավայրերի մասին «ավելի արևելյան երկնքի տակ»:

— Հիմա Երկնայինը ճանապարհ է բաց անում արևմտյան երկինքների տակ, — ասաց արքան:

Վարդանը լսում էր սարսափներով հղի այդ խոսքերը:

— Ապրուստը սղում է օրեցօր, — ասաց արքան, — ցեղերը ոչնչանում են արևելքում, արոտները խլելով ավազից ու իրարից: Գուրս են քշում իրար, դեպի արևմուտք: Եվ ով այստեղ ամենաուժեղն է թվում, որ առաջ է ընկած դեպի արևմուտք տանող ուղիների վրա՝ ամենաթույլ հալածվածն է արևելքից:

— Իսկ մեծ խաքանը, — հարցրեց Վարդանը:

— Երկնայինը միակն է, որ իր ձեռն է առել արևելքն ու արևմուտքը և զսպում է ցեղերին:

Վարդանը կամեցավ իմանալ, թե ինչով վերջացավ բյուզանդացիների բանակցութիւնները: Արքան ժպտաց քթի տակ:

— Ինչո՞վ պիտի վերջանա մի բան, որ նոր պիտի սկսվի: Նրանք ուզում են այստեղ կռիւ դաշինք բարեկամութեան: Երկնայինն ասաց, որ նա դաշինք կկռի Բյուզանդիա, կայսեր պալատում:

Վարդանը նկատեց, որ արքան այնքան էլ պարզամիտ չէ, որ սնի կազող և արշավող ցեղերին հասուկ խորամանկութուն: Ուտի և կանխեց նրան:

— Մենք կռենք մեր դաշինքը այստեղ: Իսկույն հենց որ մեր ճակատամարտն սկսվեց պարսիկների դեմ, ես կբռնդեմ Ճորա Պահակը, և դա կլինի իմ կատարումը: Իսկ դուք կկատարեք՝ երբ ձեզ իմաց կտամ սուրհանդակի միջոցով: Սվ դուք ճակատամարտի օրերին կհարձակվեք Փայտակարան:

Արքան վստահության հայացքով նայեց Վարդանին և ասաց.

— Դու զորքի մարդ ես և քաջ մարդ: Իսկ քաջ մարդուն կարելի է օգնել: Կիսուժենք Փայտակարան՝ հենց որ ճակատամարտն սկսվի: Սկսի՛ր, սկսի՛ր,— նայեց Վարդանին և կրկին,— հա՛, հա՛, սկսի՛ր,— կարծես խաղ էր սկսելու Վարդանը:

Արքան կանչեց Ճորա Պահակ ուղարկելիք զորավորին: Սա եկավ և շոքեց ուրթի մուռքի մեջ: Արքան ձեռով նշան արեց նրան գալ և կանգնել մի փոքր հեռու իրենից: Զորավարը կանգնեց ձեռները փոթին:

— Սա է այն զորավար իշխանը,— ցույց տալով Վարդանի վրա ասաց արքան,— որի հետ պիտի պատերազմես պարսիկների դեմ:

Հոն զորավարը հանդուգն ու սուր նայեց Վարդանին: Խենթ ուրախությունը և տափաստանային վայրի ազատության և արշավների, ասպատակումների միտող կիրքը նրա մեջ եռացնում էին անսանձելի մի քրքիչ, բայց նա դժվարությամբ թե ինչ՝ զբաղեց և թաքուն ժպտաց: Երբ արքան հաղորդեց նրան Ճորա Պահակում նրա անելիքը՝ նա կարմրեց, հարբեց: Արքան մանրամասն հրահանգեց Պարսկաստանի արշավը և ապա Վարդանի հետ լրացուցիչ կազմելով՝ դաշինքի խրատթման պայմաններն ու անելիքների ծրագիրը:

Հետևյալ օրը Վարդանին արձակեց Հորդալի արքան: Նա ճանապարհ ընկավ հոն զորքերի զորավար Թոլգուտի հետ:

Վարդանը Հորդալից դուրս եկավ ծանր զգացմունքներով, ավելի ծանր քան Հազկերտի զնդանում: Ի՞նչն էր պատճառը, նա դեռ տուշին պահին լավ չէր պարզում իր համար: Զէ՞ որ նա այստեղ նվաճեց մի բավական ուժեղ դաշնակից՝ պարսկական արհավիրքի դեմ: Ի՞նչն էր դառնացնում նրան այստեղ ավելի նա

բարձր պահեց իր ժողովրդի պատիվը, նա գնտին չգարկեց իր պատիվն ու ինքնատիրութիւնը: Ուրիմն ինչո՞ւ ժանրացավ նրա հոգու վրա Հորդայի այս ձեռնարկը: Սակայն երբ նա հիշում էր իր և Անատոլ գորավարի վեճը Աթըլի առջե՛ նվաստացում էր ըզգում, որ ինքը կարիքի ստիպմամբ Անատոլի դեմ գործ էր անում համարյա նրա գործած գեները: Թշնամական մերկացումը:

Հասնելով Ճորա Պահակ՝ Վարդանը հրաման արձակեց ազիրի, քերպը, Հոնները, ազվահները և հայ գիւղերները մեծ դժվարութեամբ սովորեցրին գլխավոր մուտքերն ու կարեւոր աշտարակները:

Վերջացնելով գործը՝ Վարդանը կապի համար մտնրամասն պայմանավորվեց հոն գորավարի հետ և Զանապարհ ընկավ դեպի Հայաստան, ավելի ճիշտը՝ վազեց: Շտապում էր.— Վաստիկի ապստամբութիւնը գերաճում էր, դառնում նախաճումն, հասնում էր արհավիրքը — պարսից զորաբանակը:

— Սկսվե՛ց էլի հետույքները թամբի վրա ծեծել տալը, — մրթմրթաց Արշավիրը, — ահնարկելով Վարդանի արագ արշավի հարկադրանքը, — հիմա կհանի՛ հոգիներս օրական շգիտեմ քանի վարսախ... Բուշաննների գայլի վարզն է հոշտեղված: Բարդան մամիկոնյանի վարզը շե՛ն տեսել...

Ճանապարհորդները Աղվանից դաշտավայրերում հանգիտելով Վարդանի գորագնդին՝ ապշած կանգնում էին և երկար նայում նրա հետեից՝ չհասկանալով, թե սա ի՞նչ խելագար վազք է, անսղոք թե՛ դեպի նժույգները և թե՛ դեպի հեծյալները:



— Ասում է՛ ռգամի՛ր թշնամու ուժերը ծովի շուրջը»: Ահա նա էլ գամել եմ: Բայց գամվել եմ նաև ե՛ս, — գանգատվում էր Արտակ Մոկացը, երբ երեկոյան Զոհրակը մտավ նրա օթեանը՝ Ողական ամրոցում, — արա վե՛րջը...

Զոհրակը լուռ նայեց նրան:

— Ահագին ուժեր՝ Մամիկոնեից, Մոկաց, Արծրունյաց՝ կազմել նստեցրել եմ այստեղ, մինչ այնտեղ Արտաշատում վաստեղյանք սպառնում են դավաճանել, — շարունակեց նա:

— Սովի շուրջն էլ հանգիստ չէ: Ռշտունյաց նախարարը դա՞րան է մտել իր աշխարհում, Խորխոռունյացն էլ Արտաշատից է նյութում դավը... Ի՞նչ է շարժվում խավարում՝ չգիտես...

— Մի քանի սեպուհներ Ռշտունիքում ու Խորխոռունիքում քաշել եմ մեր ուխտի մեջ, տեսնեմ, նրանց ձեռքով գուցե ապահովեմ ծովի շուրջը, իսկ ինքս մեր զորագնդերով հասնեմ Ատոմին:

— Բայց երբ հայրիկը մի լա՛վ կշարդի Սեբուխտին, — առանձին հպարտությամբ ասաց Զոհրակը, — դրանց խելքի կրերի:

— Հենց հակառակը: Ավելի եռանդով կպատրաստվեն:

Զոհրակը նստեց պատուհանի գոգի մոտ և հայացքը նետեց դեպի Ռշտունյաց լեռները, որ հագիվ էին կապուտակում հորիզոններում ձուլված:

Այնտեղ գնացել սուզվել էր մի էակ, որի հմայքը նա ճաշակեց վերջին վայրկյանին... Ի՞նչ է անում նա, ի՞նչ է խորհում, ի՞նչ է զգում...

Զոհրակը թախծեց այն մեղմ քաղցրությամբ, որ ավելի է թաքցնում մաշելու իր ուժգնությունը: Զոհրակը տենչում էր մի անգամ ևս գոնե հանդիպել նրան, փոխանակել այս անգամ արդեն ուրիշ զգացմունքով լի հայացքները: Եվ Զոհրակին մաշում էր մի հարց. ինչո՞ւ էր Աստղիկը շարունակ իրեն նայում, ինչո՞ւ էր աղաչում անխոս, հայացքով շոյում, խեղճանում... Եվ ինչո՞ւ վերջին ժամին, ժամանման հանդիսավոր պահին խզեց այդ հոգեկան կապը, չնայեց մի անգամ գեթ... Հպա՛րտ է, վիրավորվե՛ց, թե՛ ոչինչ էլ շունք սրտի մեջ, նայում էր իրեն անգիտակ, անմիտում...

Զոհրակը տխուր ու մեղմ հառաչեց: Արտակը, որ ոչինչ չէր հասկանում նրա ներկա հոգեվիճակից՝ հագիվ հետաքրքրվեց նրանով:

Ավելի երջանիկ հոգեվիճակում չէր նաև ինքը: Ծիշտ է՝ նա Արտակ Ռշտունու և Գեղեոնի գժտության սարսափելի հետևանքը չէր երևակայում, սպասում, բայց գուշակում էր գոնե անհաճո, թերևս մի փոքր ծանր ընտանեկան փոթորիկ, որ ծանր պիտի ազդեր Անահիտին: Եվ ապա Արտակին մաշում էր իր սիրեցյալի կարոտը... Բայց միաժամ անհանգստացնում էր նրան երկրի տագնապալի վիճակը, Սպարապետի զորական հանձնարարություն:

ներ՝ հսկել և կազմել Բզնունյաց ծովի շրջակա նախարարական զորքերից՝ կորիզներ արքունական զորքի համար, որ պիտի աճեր, մեծանար, դառնար գալիք արհավիրքի դիմադիր ուժը ողջ երկրի կողմից:

Այդ հոգսերը ամենևին չէին բռնում Արտակի հոգեկան տարակուսանքների և քնքշանքների հետ: Այլևս հանցանք էր սրանից ավելի զբաղվելու իր անձնական բախտով: Հայրենիքը նրան էր նայում բյուրավոր կշտամբող հայացքներով և սպասում, որ նա ցույց տար, հայտնի պարզեպարզ՝ պիտի ապրե՞ն նրանք, թե՞ պիտի ոչնչանան...

Այս ժանր մտքերով տարված՝ երկու երիտասարդները շնկատեցին իրենց լուսթյունը և շհետաքրքրվեցին իմանալու, թե ինչ տազնապ է ալեկոծում ամեն մեկին:

— Ազատվե՞նք այս գամվածությունից, — ասաց Արտակը վճռական, — գնանք Խորխոռունիք, Ռշտունիք, ոտքի հանենք մեզ համակիր սեպուհներին քանի նրանց նախարարները չեն բացահայտվել իբրև թշնամի և չեն կանգնել մեր դեմ:

— Բայց հարկ էր մեր զորագնդերը պատրաստ պահել, — ասաց Զոհրակը:

— Ես դա արել եմ վաղուց: Վճռել ենք Տարոնի, մեր՝ Մոկաց, և Արծրունիքի սեպուհների հետ: Վճռական օրը անսպասելի հանդես կգանք և կզսպենք մեր թշնամիներին:

Արտակը վեր կացավ տեղից և գլուխն օրորելով, մտահոգ տեսքով դեպի պատուհանը:

— Ժա՛մ է, ժա՛մ է, ժա՛մ է: Հենց վաղվանի՛ց: Ճանապարհ կընկնենք:

— Առաջ ո՞ր աշխարհը, — հարցրեց Զոհրակը սրտատրոփ:

— Ռշտունիք... — ասաց Արտակը՝ հազիվ զսպելով մատնիչ ժպիտը երջանիկ մարդու աչքերին:

Զոհրակի կուրծքը ուռեց հուզմունքից:

Մեկի լիակատար երջանկությունը, մյուսի երազական, անիրական բաղձանքը մղում էր առանձնության և անրջանքի: Ուստի և Զոհրակը հեռացավ իր օթևանը, Արտակն էլ չպահեց նրան:

Առանձնանալով իր օթևանը՝ Զոհրակը զգեստով պառկեց անկողնին և աչքերը հռոած առաստաղին սկսեց երևակայել իրենց ճամփորդությունը Ռշտունիք և Բզնունյաց ծովի աշխարհները.

գորական ձեռնարկները, հայրենական պատերազմի պատրաստութունները, սխրագործության առիթները և սրանց հետ շարունակ զգալը մեկի հոգեթողչ հայացքը, սրտի բարակ քաղցրամաշուկը...

Եվ ինչպես լինում է նման դեպքերում, երբ մի էակ չկար ու ոչինչ էր՝ հիմա եղավ ու դառավ ամեն ինչ, և ինչպես լինում է նման դեպքերում, երբ շես իմանում, թե ինչպես արագ, անտարբեր հեռուներից անցար մտերմագին սրտակցության, Զոհրակն սկսեց տառապել այն զգացումով, որ մարդ ինքն է կամավոր թեժացնում սրտում, բայց և երբ էլ փորձում է նրանից փախչել՝ զգում է նրա կաշկանդիչ թեթև... պողպատը:

Արտակը զբաղված էր Բաղդասար սեպուհի հետ ավելի ծանրակշիռ գործով: Մամիկոնյան բուն գորագունը համալրված էր և պատրաստ մարտական գործողութունների: Արտակը բավական ջանքեր թափել էր դրանում, ուստի և խնամքով ու հոգածու խոսում էր սեպուհի հետ:

— Ռշտունյաց նախարարը լրտեսներ ուղարկած կլինի և կուզարկի էլ: Միշտ խաբել տարբեր վիճակներ ցույց տալով: Բայց գլխավորը, որ եթե տագնապի ձայն լսես և ես ազդանշան ուղարկեմ՝ ողջ գորագունը կհանես Ռշտունյաց սահման՝ զորախաղի պատրվակով և կսպասես հետագա հրամանի:

— Հրամանդ,— ասաց Բաղդասար սեպուհը՝ Արտակի հրամանները ընդունելով իբրև Սպարապետից եկած:

Հեռեկալ օրը, առավոտ վաղ Արտակն ու Զոհրակը թիկնապահների ուժեղացրած խմբով և մի հիսնյակ զինվորով ճանապարհ ընկան Ռշտունիք:

Պարզ աշնան օր էր. ոչ այնքան ջերմ, բայց և ոչ ցուրտ, արևը պահում էր հաճելի ջերմություն: Օդը ազնիվ գինու պես հաճելի արբեցնում էր: Ծանապարհը մաքուր ավլածի պես էր, հարթ ու կոկ և ձիարշավի էր դրդում:

Երիտասարդ իշխանները ուրախ էին ինչպես տոնախմբության գնացող անհոգ հանդիսատեսներ: Զորական հոգսերը մի առժամ կարծես մոռացվել էին: Երիտասարդ կազմվածքը, արևի անուշ ջերմությունը, սիրող սրտի քաղցր ճմլանքը, կենարար օդը մզում էին ուրախության, կյանքի վայելքի:

Պակաս ուրախ չէին և թիկնապահներն ու զինվորները: Առհասարակ Վարդանի և նրա խստաբարո սեպուհների հետ իրենց լուռ ու զգաստ պահող այս երիտասարդները մի փոքր ազատ էին զգում իրենց պես երիտասարդ իշխանների հետ: Երբեմն լսվում էր ճնշված քրքրոց: Ինչ-որ մեկին ձեռ էին առել:

— Հա, ի՞նչ կա,— ետ նայեց Զոհրակը նրանց կողմը:

Այնտեղ լռեցին և լարվեցին:

— Ամեն բան կարգին է, իշխանիկ,— զեկուցեց նրանց ավագը՝ Ալեքսիանոսը, մի փոքր առաջ մղվելով:

Հասան մի աղբյուրի: Արտակը դադար հրամայեց: Անմիջապես գորգ փռեցին աղբյուրի գլխին, նախաճաշ բացին, և իշխանները նստեցին: Գինի խմեցին, որ ավելի թեժացրեց նրանց տրամադրությունը: Զինվորները ուրախ, զգուշ զրուցում էին և նախաճաշում: Բայց հանկարծ մի քրքրոց կրկին պայթեց ակամա, որին հետևեց Ալեքսիանոս ավագի նկատողությունը: Զինվորները լռեցին:

— Ավա՞գ, ի՞նչ է պատահել այնտեղ,— հարցրեց Զոհրակը ուրախ նայելով զինվորների կողմը:

Ալեքսիանոսն առաջ եկավ:

— Հիմարներ են, իշխանիկ, ձեռ են առնում Մաղթոսին:

— Առա՛ջ եկեք, զինվորներ՛, — հրամայեց Զոհրակը:

Զինվորներն առաջ եկան ու կանգնեցին՝ զուսպ հայացքները հառելով իշխաններին:

— Ասացե՛ք, ի՞նչ է պատահել: Ո՞րն է Մաղթոսը:

Առաջ եկավ խիստ լրջճեմ, խաժ աչքերը շոած մի զինվոր:

— Ի՞նչ են ուզում քեզանից,— հարցրեց Զոհրակը:

Մաղթոսը սուր նայեց Զոհրակին և ուղիղ ձգվելով բարձր ասաց.

— Ոչինչ չեն ուզում, իշխանիկ:

— Մի՛ ստիր: Ավագ, դու ասա, ինչո՞ւ են սրան ձեռ առնում: Ալեքսիանոս ավագը ճմլվեց մի փոքր և ասաց.

— Բաներ է պատմում, իշխանիկ:

— Թող մեզ համար էլ պատմի:

Մի զինվոր համարձակվեց բացատրել.

— Այնպիսի բաներ է պատմում, որ մենակ դրանք են ճշմարիտ, մնացածը ինչ որ կա աշխարհքում՝ սուտ է:

Ձինվորները մեղմ ծիծաղեցին: Իսկ Մաղբոսը լուրջ աչքերը շոած նայում էր՝ ձգված պատիվ տալով:

— Պատմիր այդ ճշմարիտ բաներից մեկը:

Մաղբոսը հազաց և բարձր ձայնով, լուրջ սկսեց.

— Մի տարի անցնում էի կանաչ արտով: Տեսնեմ՝ մի կաթավ: Ձեռիս բան չկար՝ հանեցի մաշիկս ու նետեցի վրան: Հեռու չէր, շորս հինգ քայլ: Նետեցի ու մտիկ տվի՝ ո՛չ թռչուն, ո՛չ մաշիկ: Բա՛հ: Թռչունը կորավ. ապա մաշի՞կս: Շատ փնտրեցի, շատ մտածեցի՝ չկար ու չկար: Հենց կորավ ու կորավ: Ես էլ մի մաշիկով ման էի գալիս: Հետևյալ տարին, Նաբուգոդոնոսորը ընկերոջս հետ գնացել էի Եգիպտոս ման գալու: Փողոցով անցնելիս տեսնեմք մի տաճար շուկայի մեջտեղ: Ասում եմ, ա՛յ Նաբուգոդոնոսոր, տաճարը շուկայի մեջտեղ ի՞նչ գործ ունի: Նաբուգոդոնոսորը թե՛ հա՛, է՛: Հարցրինք մի եգիպտացու՝ ասաց՝ երկնքից մի մաշիկ ընկավ շուկայի մեջտեղ, ամոթ չի՞նի ասել՝ միզելու տեղը, մաքրեցի՞նք տաճար շինեցի՞նք, քանի որ մաշիկը սուրբ էր, երկնքից ընկած: Գնանք տեսնենք, ասում եմ Նաբուգոդոնոսորին: Նաբուգոդոնոսորը թե՛ բան չունե՞ս: Զէ՛, գնանք: Գնացինք, քուրմը ասաց՝ մաշիկնիրդ հանեք՝ հետո մտեք տաճար: Հանեցի՞նք, մտանք: Նայում ենք: Մեկ էլ ես նայեմ ի՞նչ տեսնեմ, մաշի՞կս... Ասում եմ՝ Նաբուգոդոնոսոր, հրե՛ն իմ մաշիկը: Ո՞նց թե: Ա՛յ, ասում եմ, մի ընկերը հա, մի ընկերն էլ իմ ձեռին: Նաբուգոդոնոսորը թե՛ Մաղբոս, ճշմարիտ ես ասում: Ճշմարիտը ճշմարիտ՝ քայց ո՞նց է մաշիկս ընկել Եգիպտոս: Ձե՛նք կարողանում գլուխ հանել: Քուրմին ասում եմ՝ կարավանը գցած չի՞նի՞՝ երկնքից: Խե՛նթ ես, ի՞նչ ես, կարավանը երկնքում ի՞նչ գործ ունի: Մարդ կի՞նի բերած, ասում եմ. սա Հայոց աշխարհի մաշիկ է ու ահա դրա ընկերն էլ ձեռիս: Բա՛հ, քուրմը աչքերը շոած, ու շոքեց մաշիկիս առաջին, աղոթք է անում: Եվարել ենք, մնացել: Հենց այդ պահին. ներս մտավ Եգիպտոսի թագավորը թագուհու և իր ազըրկա հետ: Ա՛յ քուրմ, ասում է, ի՞նչ բանի ես՞ քուրմը թե՛ այսպես բան: Տեսնեմ՝ է՛լ թագավոր, թագուհի, ա՛ղջիկ, պալատականներ՝ առջև շոքած աղոթում են: Ա՛յ տղա, Նաբուգոդոնոսոր, ո՞նց անենք. սա լա՞վ եղավ, թե՛ վատ: Ես ասում եմ՝ փորձանք է, նա թե՛ բախտ է: Տեսնեմ թագավորն աչքով արեց քուրմերին: Քուրմերն եկան ինձ բռնեցին տարան սեղանը նստեցրին: Ասացի՞

ես գնում եմ, նրանք թե՛ պրծավ, դու մեր աստվածն ես, պիտի մնաս, որ քեզ պաշտենք: Ասի՛ ձե՛ն քաշեք, ա՛յ քուրմեր: Չէ՛, լսել չեն ուզում: Ա՛յ տղա, Նարուզողոնոսոր, ասում եմ, քաշենք սայլերս: Նա թե՛ սպասի՛ր մի տեսնենք: Այս խոսքի վրա քրմապետը ականջիս փսփսում է. կա՛ց տաճարում, համ աստված կը դառնաս, համ էլ թագավորի միտքը ծուռ է՝ աղջիկն ուզում է քեզ տալ ու քեզ պահել տաճարում: Նարուզողոնոսորը ասաց. փորձանք է, Մաղթոս, ճղենք: Ծա էլ մտածեցի, որ ինքս հայ քրիստոնյա, ի՞նչ գործ օւնեմ կուսպաշտ եզիպտացիների հետ: **Թքեցինք կրնկեքիս, նստեցինք մաշիկիս, մի հատ փշեցի վրան ու աշխու՛տ»** եկանք ընկանք ցորենի խոզանը: Որ նայեցի կաքավի թռած տեղը՝ նոր գլխի ընկա, որ մաշիկս ընկած է եղել կաքավի վրան, կաքավը թոցրել տարել է Եզիպտոս, մնացածն էլ ոնց որ պատմեցի:

Մաղթոսը լռեց ու անշարժ լուրջ հայացքը գամեց Ջոհրակի աչքերի մեջ:

— Այնպես որ՝ ինչ որ պատմեցիր՝ հենց ճշմարի՛տ ճշմարի՛տ էր, — կատակ լրջությամբ հարցրեց Արտակը Մաղթոսին:

— Ամենաճշմարի՛տ, տեր նախարար իշխան Մոկաց, — գոչեց արագ-արագ խիստ լուրջ ու միամիտ արտահայտությամբ և զինվորի պաշտոնական ձայնով Մաղթոսը առանց աչքերը ճպելու Եիծաղից թուպացան:

— Ուրի՛շ, — հարցրեց Ջոհրակը զվարճացած, — մեկն էլ ասա:

Մաղթոսը անշարժ նայելով մի կետի՛ պատմեց.

— Բանը այսպես եղավ: Խորխոռունիքից սեպուհ էր եկել մեր զորագունդը և մեր սեպուհներին պատմում էր, որ ինքը մի փարսախի վրա ծառին նետով կիսփի: Մեր սեպուհն ասաց՝ դա ի՞նչ է. մեր զինվորներից մեկը ավելի հեռուն կիսփի: Վեճ եղավ: Ինձ կանչեցին: Ինչքա՛ն հեռու կիսփես: Ասացի՛ Տարոնից մինչև Խշուունիք: Չհավատաց ու ծիծաղեց վրաս՝ դե՛, ասաց, խփի՛ տեսնենք: Ծա վերցրի նետը, ասացի՛ տեսնո՛ւմ ես Խշուունիքի անտառի ծայրի ծառը: Ասաց՝ չեմ տեսնում: Ասացի՛ ես տեսնում եմ: Ասաց՝ լավ. ի՞նչ կարող ես անել: Ասացի յոթը նետ կնետեմ, յոթն էլ կկպցնեմ: Կպցրո՛ւ: Վերցրի յոթը նետ նետեցի: Ասացի՛

տեսա՞ր: Ասում է՝ ի՞նչ տեսնեմ, ո՞ւր է ծառը: Ասացի՝ գնանք: Նստեցինք նժույգ, մի օր գնացինք, հասանք ծառին: Նայեցինք՝ ծառի բնին մի ծակ: Ասում է՝ ո՞վ գիտե՞ ո՞ւմ նետն է պատահական դիպել, սա քոնը չէ, ու մեկ էլ որ՝ մնացած վեցը ո՞ւր է: Ես էլ շշմեցի: Ասացի՝ մեկ լավ նայեմ: Նայեցի ծառի հետևի հաստ ծառի մեջ մի նետի պոչ: Քաշեցի՝ մեկն էլ երևաց: Կտրել տվի ծառը: Վեց նետն էլ իրար հետևից միևնույն ծակի մեջ: Վա՛յ, ասացի, տես իրար հետևից ուղիղ մի տեղի են դիպել, ծակել ու իրար հետև շարվել՝ ինչպես շամփուրի վրա: Մենակ՝ առաջին նետը մի քիչ կպած էր երկրորդ նետին, այն էլ առաջին թափիցս էր, թե չէ՝ բոլոր վեցն էլ իրար հետևից կեսկես ճկունաշափ հեռու էին նստել:

— Դա էլ հենց այդպես ճշմարիտ, ճշմարի՞տ,— հարցրեց Զոհրակը:

— Ըշմարիտ, ճշմարիտ,— հաստատեց Մաղքոսը առանց աչքերը ճպելու նայելով Զոհրակին, և կանգնելով խիստ լռաբո ռ միամիտ արտահայտությամբ:

Արտակը բարձր քրքշաց:

— Լավ, սեպուհը տեսավ այդ բոլորը, ի՞նչ ասաց,— հարցրեց Զոհրակը:

— Սեպուհն ասաց՝ հիմի էլ ես կնետեմ նետը: Մենակ՝ ասաց՝ գլխներիս խնձոր դնենք, իրար խնձորի խփենք: Տեսա, որ սեպուհիս արդեն դիպել է, ասացի՝ հրամանք ես, խփենք: Համաձայնեցի, մենակ գիտեմ, որ նա ուզում է ինձ խփել: Խնձորները գրինք գլխներիս, կանգնեցինք մի փարսախա: Ու նետում ենք: Ամեն անգամ՝ որ նա նետում է՝ ձեռաց ես նետով խփում եմ նրա նետի ծայրին, վայր եմ գցում: Նա չի տեսնում: Խփում ենք, խփում ենք՝ խնձորները իրենց տեղումն են: Սեպուհը բարկացավ, վազեց եկավ, սա ի՞նչ բան է, ահա խնձորս ասում է: Ես էլ ցույց եմ տալիս իմը: Երկուսն էլ անվնաս: Սա ի՞նչ բան է, գոտում է: Ասում եմ՝ հրամանք քեզ, սեպուհ, երկուսս էլ նշան խփող շենք:

Արտակը փորը բռնած թուլացավ ընկավ խոտի վրա: Զինվորները սիրտ առան և ծիծաղեցին բարձրաձայն: Ոչ մի թե՛լ չխազաց Մաղքոսի լուրջ միամիտ դեմքին:

— Ապրես, գնա տեղդ:

— Յառա եմ հրամանիդ և պատրաստ եմ պաշտպանության Աշխարհին հայոց մինչև վերջին կաթիլս արյան,— արագ շարեց իրար հետևից Մաղբոսը:

— Դե, — խեթեց Մաղբոսին Ալեքսիանոս ավագը, որին գուր չէր գալիս երիտասարդ իշխանների «երես տալը» զինվորին և այդքան ուսմկանալը, որ նա նկատում էր վերջին ժամանակները Արտակի մեջ: Թեև նա սովոր էր այդ տեսնել Վարդանի մոտ և ընդհանրապես Մամիկոնյան ամրոցում:

Մաղբոսը զլուխ տվեց, շուռ եկավ արագ և արագ ու լայն քայլերով գնաց մտավ զինվորների խմբի մեջ:

Արտակը դեռ վխվխում էր ծիծաղից:

— Դե՛, ճանապարհ,— մի փոքր հետո հրամայեց Զոհրակը: Զորախումբը ուրախ զվարթ նստեց նժույգ: Կուշտ կերած նըժույգները սանձերն էին ծամում: Զոհրակի «վիշապը» պսպղացնելով աչքերի ճերմակուցը՝ խենթանում էր ուժից, սլացք էր պահանջում: Արտակը հիացավ նժույգի հպարտ կազմվածքից ու եռքից:

— Ապա՛,— հրամայեց նա ետ նայելով և թեքվելով առաջ խթեց իր նժույգը:

Զորախումբը պոկվեց լարերից պրծած նետերի պես: Նժույգների ոտնատրոփը, ինչպես քարեկարկուտի կոտորակաձայն փշրվեց ճանապարհի վրա հետևից շաղ տալով ձայնը: Արտակ, Զոհրակ, գինի, նժույգ, Անահիտ, Աստղիկ, արև, առողջության խենթացում, Ալեքսիանոս ավագի հպարտութունը, երբ տակից նայում էր իր «սատանի ճուտերին», զինվորների հաճույքը նժույգի թափից... Ամեն ինչ կար այդ երիտասարդական ավյունի մեջ: Աչքերը շողացնելով դեպի Ռշտունիք էին նայում երկու սիրահար իշխանները: Հետևից թիկնապահները հպարտորեն մատ առ մատ անփոփոխելի ճիշտ էին պահում իրենց և իշխանների միջի տարածությունը, ինչպես և զինվորները իրենց հավասար ու կոկ արշավասուլբը: Սակայն ճարպիկ ու զվարճասեր մի զինվոր կուացավ և սատանայի հնարքով քաշեց Մաղբոսի մաշիկը և օդում ճոճեց: Զինվորները նայեցին Մաղբոսին ու խեղդված ծիծաղը ծոմոնց նրանց դեմքերը:

— Հանդա՛րտ,— հրամայեց Արտակը և նժույգի սանձը քաշեց:

Զինախումբը ձեռաց սեղմեց թափը և գնաց քայլքով: Նժույգները միայն փնչացրին հեալով:

Ահա նրանց այդ երջանիկ աչքերի առջև բացվեց — և այդ քանի երրորդ անգամը նրանց կյանքում և որքա՛ն միշտ իբրև բաղձալի և նորույթ, — Բզնուճյաց ծո՛վը: Նա նայեց Անահիտի և Աստղիկի պես՝ հեթիաթային երազանքով:

Երիտասարդ իշխանները լռիկ ընկան անրջանքի մեջ:

«Ես մեռնե՛մ՝ միայն թե նա ապրի՛», — երազեց Զոհրակը և խանդաղատեց աչքերը տամկելու շափ:

Նույն երազանքի մեջ հալվում էր նաև Արտակը:

Ռշտունիքը երազի վայր լինելուց դադարեց: Ահա իրական Ռշտունիքը, նրա անտառները, լեռնաշարը: Մտերիմ գլուխը կարեկանեց վեր Ռշտունյաց նախարարի ամրոցը:

Այնտեղից մի ծուխ էր ոլորվում դեպի երկինք:



Գաղիշոն Արտազի կողմից ճեպով շրջանց կատարելով հասավ Խորխոռունիք՝ վերցնելու իր զորագունդը, տանելու Այրաբատ: Նույնը պատրաստվում էր առաջարկել նաև Արտակ Ռշտունուն: Բայց դյուրին գործ չէր այդ: Նախ՝ հարկ էր խուսափել Ատոմից և որ ամենից դժվարն էր՝ դա կատարել Արտակ Մոկացից գաղտնի կամ արտաքուստ համերաշխ երևույթով: Երկրորդը նախընտրելի էր. բայց պետք էր շտապել, քանի դեռ դավաճանության լուրը չէր հասել Արտակ Մոկացին:

Մտնելով ամրոցը՝ Գաղիշոն տեղեկացավ, որ տանեցիք գընացել են Արծրունիք և պիտի վերադառնային նույն օրը:

Իսկույն հավաքեց իր սեպուհներին և ավագներին: Խոսեց, քննեց գործերը: Գաղիշոյին դուր չեկավ, որ ավագները տատանվում էին և չէին ցույց տալիս մի հաստատ վերաբերմունք դեպի Գաղիշոյի գործը: Ծիշտը՝ դա նրանց համար նոր գործ էր — վասակին գործակցելը: Գասպար սեպուհը, որ այնպես շերմագին խոսեց Զոհրակի հետ Աստղիկի մասին նրա բաժանման օրը, ծովափին՝ վաղուց համակրում էր նաև Աստղիկի գործին՝ վարդառանց պայքարին: Նա հարցրեց.

— Ե՛րբ է սկսվում պատերազմը, իշխա՛ն:

Քաղիշոն լուռ ու խոր նայեց նրան ու լռեց:

Սեպուհները հաշիվ տվին նախարարին Խորխոռունիքի մնացորդ զորքի մասին: Խորենից հետո բավական ուժեր մնացել էին, և կարելի էր նրանցով ուժեղացնել Վասակի զորքը:

Քաղիշոն հրամայեց զորագունդը պահել մարտական դրությամբ:

— Դեռ պարսիկները շերևացած, իշխան,— հարցրեց Գասպար սեպուհը:

— Ի՞նչ պարսիկներ,— ցրիվ ուշադրությամբ հարցրեց Քաղիշոն, հետո զայրացավ,— ինչո՞ւ միայն պարսիկների դեմ...

— Ճշմարիտ է ասում իշխանը,— նկատեց հանդիմանորեն Շապուհը,— ներսն էլ հանգիստ չէ:

Գասպար սեպուհը լռեց ու բազմանշան նայեց մյուսներին, որոնց մեջ կային մի երկուսը վարդանանց համակիր: Նրանք հասկացան, որ Քաղիշոն Վասակի կողմն է և լռելյայն համաձայնեցին հետևել հետագու դեպքերին:

— Ե՛րբ է մեկնում զորագունդը,— հարցրեց Շապուհը:

Քաղիշոն լռեց: Ապա միայն ձեռքով արեց.

— Գնացե՛ք և՛ ինչ որ հրամայեցի:

Սեպուհները հեռացան: Զուր էր ծածկում Քաղիշոն: Բոլորն էլ հասկացան, որ կարող էր զորագունդը մեկնել հենց նույն գիշերը:

— Մենք էլ պատրաստ լինենք,— փսփսաց Գասպարը իր կողմնակից սեպուհին՝ Խոսրովիկին:

— Ուրիշ հնար չկա...— ասաց Խոսրովիկը,— բայց քեզ ասեմ... Բան է պատահել անշուշտ...

— Որտե՞ղ,— հարցրեց Գասպարը հետաքրքրված:

— Արտաշատում: Իշխանը տխուր է և միտքը ծո՛ւռ...

Նրանք գնացին զորագունդ:

Քաղիշոն շնայած հոգնածության՝ նստել էր սրահում և նայում էր զորագնդի հանդերձանքի և դենքի հաշվեմատյանին: Հանկարծ լսեց ամրոցի բակում կանանց ձայներ և նժույզների տրոփ: Նա լարվեց: Գոան մեջ լսվեց Ողիմպիայի ձայնը: Ներս մտան Քաղիշոյի մայրը, կինը և Ողիմպիան:

— Հայրի՛կ, սիրելի հայրի՛կ,— ընկավ նրա գիրկը Ողիմպիան:

Գաղիշոն հուզվեց ուրախությունից: Նա այնքան մեղմ ու գորովալից նայեց իր աղջկան և գրկեց նրան, որ դառավ անճանաչելի: Մայրն ու կինը, որ սպասում էին իրենց հերթին ողջագուրվելու՝ շփոթված մնացին: Ողիմպիան երեսը դրել էր Գաղիշոյի կրծքին և շէր պոկվում: Իսկ Գաղիշոն դողում էր և արցունքոտ աչքերը կախել էր նրա գանգուրներին:

— Լա՛վ, աղջի՛կս, լա՛վ, լա՛վ, թող մենք է՛լ... — աղաչում էր Գաղիշոյի մայրը:

Տեսարանի առջև խանդաղատել էր նաև Գաղիշոյի կինը: Նա լաց էր լինում:

Վերջապես հանդարտվեցին և բոլորն էլ ողջագուրվեցին, նրստեցին Գաղիշոյի շուրջը:

Ողիմպիան խլեց հաշվեմատյանը և մի կողմ շարտեց.

— Հեռացրո՛ւ սա, պատերազմի հոտ է գալիս սրանից:

Գաղիշոն շոյեց Ողիմպիայի գլուխը.

— Լա՛վ, սիրունի՛կս, լա՛վ, քո կամքը, մի՛ նեղանար:

— Գու՛ վարդանի կուսակիցն ես, չէ՞, հայրիկ,— հարցրեց

Ողիմպիան լրջանալով և արագ շրջվելով դեպի նա:

— Այո՛, այո՛,— համբուրեց Ողիմպիային Գաղիշոն:

— Մենք էլ բոլորս Վարդանի զինվորյալներն ենք:

— Ո՛վ՛ բոլորդ,— հարցրեց անհոգ և ներողամիտ ժպիտով

Գաղիշոն:

— Ես, Մեծ Մայրին, Մայրիկը, Ռշտունյաց, Արծրունյաց, Մոկաց և Մարտիկոնեից բոլոր տիկիներն ու օրիորդները: Ասված է բոլոր Հայոց աշխարհի կանայք պիտի դառնան հայրենիքի զինվորյալներ, տիկիներն ու օրիորդները պիտի ուսմկանան: Հիմա ամենքը ուսմկանում են, որ ուժ տան ուսմկին, որ ուսմիկը ազատի աշխարհը: Ռամկանում են նախարարները, սեպուհները: Բռլո՛րը, բռլո՛րը: Մենք էլ ուսմկացել ենք:

— Լա՛վ եք արել, մատա՛ղ,— շոյեց Ողիմպիային Գաղիշոն:

Ողիմպիան սուր նայեց հորը:

— Ես ճշմարիտ եմ ասում, հայրիկ:

— Քո կա՛մքը, անուշի՛կս,— համբուրեց Գաղիշոն հեզ ու գորովալից:

Ընթրիք բերին. ընթրեցին շատ խաղաղ, ուրախ և այնպես հաշտ կարծես աշխարհիս երեսին ոչինչ չէր պատահել: Պատմե-

ցին Արտակի հարսանիքի մասին, Արտակ Ռշտունու սրախոսութիւններէց, Գեղեոնից և այլ զվարճալի բաներ: Գաղիշոն ծիծաղից թուլանում էր: Հետո մայրն ու կինը հեռացան իրենց օթեանները: Մնացին Գաղիշոն և Ողիմպիան: Տանեցիք գիտէին, որ հայր ու աղջիկ իրար բաց շին թողնի մինչև կեսգիշեր և ավելի:

— Հայրիկ,— ասաց Ողիմպիան,— ինչ կուզի թող պատահի, թող Հազկերտը մտնի ներս և այստեղ ինձ գլխատի՛ շեմ ուրանա:

— Հա՛, սիրունիկս,— փայփայեց Նրան Գաղիշոն,— ինչո՞ւ պիտի ուրանաս: Մի՛ ուրանա, կովի՛ր, դու ազատ ես:

— Ա՛յ, դրա համար, լա՛վ ասացիր, հայրիկ, ես շեմ ճտում պարսիկներին, գիտեմ դու էլ շեւ ատում. ես կրոն չունեմ, գիտեմ, դու էլ չունես: Պարսիկ, հայ, հույն, ասորի մեկ են ինձ համար: Գու էլ ես այդպես: Բայց իմ կամքը, ազատութիւնը՝ ամեն բան է. դրա համար էլ շեմ ուրանա:

Գաղիշոն արագ շրջվեց դեպի Ողիմպիան.

— Ես ևս դրա համար...

— Դրա համար ի՞նչ, հայրիկ... — հետաքրքրվեց Ողիմպիան:

— Դրա համար եմ կովում:

Ողիմպիան կասկածով նայեց հորը.

— Հայրիկ, դու Վասակի հետ շեւ լինի, չէ՞...

— Ոչ, ոչ, միամիտ կաց...

• Ողիմպիան լարված նայեց հորը և հանկարծ գոչեց.

— Ես շեմ գա քեզ հետ, ես Վարդանի հետ կլինեմ:

— Ինչ որ կամենում ես՝ այն էլ եղիր, մատաղ, քեզ ազատութիւն:

Գիշեր էր անցել, որ հայր ու դուստր բաժանվեցին:

Ողիմպիան գնաց մոր և տատի մոտ և հայտնեց, որ կասկածում է, թե Գաղիշոն Վասակի հետ է: Գաղիշոյի մայրն սկսեց լռիկ ողբալ: Նրան ձայնակցեց նաև տիկինը:

— Նա, որ միտքը բան դրեց՝ էլ ետ չի կենա,— հեկեկաց Գաղիշոյի մայրը:



Արտակի զինախումբը մոտենում էր Ռշտունյաց ամրոցին: Մտերիմ ու ջերմ նայեց Արտակին ու Զոհրակին վասակյան նախարարի բնակավայրը: Ահա մի փոքրիկ միջոց, և նրանց կշռոյն երկու սիրելի հայացք: Զոհրակն զգաց, որ սիրտը դավաճանում է իրեն: Նա շնչատեց:

Ամրոցի դարբասը բացվեց և պահակապետի հետ մեղմաժպիտ ընդառաջ եկավ ընդունելու հյուրերին սենեկապետը՝ հայտնելով, որ նախարարը հրամայեց սրահը:

Արտակն ու Զոհրակը այնպես վստահ ու տնավարի բարձրացան սանդուղներով դեպի սրահը, որ կարծես նույն ամրոցի բնակիչներ լինեին:

Արտակ Ռշտունին հյուրերին ընդունեց դռան մեջ զվարթագին և մտերիմ ժպիտով:

— Բարեողջո՞ւյն, սիրելի քենակալ, բարեողջո՞ւյն,— գոչեց Արտակ Ռշտունին գրկելով Արտակ Մոկացին մի թևով և ցնցելով կատակ ձևով,— աշխարհը մոռացկո՞ւտ է: Ի՞նձ մոռացար ասենք, իսկ կնոջդ ինչո՞ւ ես մոռացել:

— Ո՞ւր է նա,— սրտատրոփ հարցրեց Արտակ Մոկացը:

— Հը՛, ո՞ւր է նա... Իր հոր մոտ: Ինքնասածին վեցրեց տարավ ուխտ ս. Հակոբա վանքը: Հետո էլ լուր եկավ, որ ընկել է վանքեվանք:

— Չեմ հասկանում... Ի՞նչ նպատակ ունի... — անհանգստացավ Արտակ Մոկացը:

Արտակ Ռշտունին հանգստացրեց.

— Դեռ լվացվեցե՛ք, հանգստացե՛ք, տյա՛րք, կխոսենք: Ես և՛ս անհանգիստ եմ և ունեմ ասելիք:

Արտակ Մոկացը խոռովյալ հոգով լվացումն ընդունեց և սկսեց ալ ու առնել ինքն իրեն ցնդած ուրախության դառնությամբ. «Գնա՛լ Անահիտին որոնելու, թե՛ գործի անցնել»: Իսկ Զոհրակը այրվում էր մի հարցով. այստե՞ղ է արդյոք Աստղիկը... Նա հարցրեց Արտակ Ռշտունուն.

— Ընտանիքո՞վ է գնացել սեպուհը, թե՛ միայն Անահիտի հետ:

— Ընտանիքո՞վ, աղախիններո՞վ, իմ իշխանուհին էլ հե՛ռը... Դատարկել է ամրոցը, նստել եմ բուրի պես մենակ:

Արտակ Ռշտունին կոահեց Զոհրակի հարցմունքի բուն դրդի-  
չը հետաքրքրութեան և լեզուն կծեց: Զոհրակը տագնապի մեջ ըն-  
կալ: Այլևս ե՞րբ կտեսնի նա Աստղիկին, ի՞նչ պատեհ ժամիչ  
Պատեհը հիմա էր, սա էլ այսպես ձախողվեց:

Նստեցին սեղան: Արտակ Ռշտունին սկսեց հեռվից, որ ինքը  
կողմնակից է եղել Վարդանին, բայց կասկածում էր հաջողու-  
թյան: Իսկ Վասակին համարում էր խելացի մարդ, որ կկարողա-  
նա ողորբել Հազկերտի սիրտը, միաբանեցնել նախարարներին:  
Անգղի դեպքերը ցույց տվին, որ նա անընդունակ է դրան, և ին-  
քը հակվում է Վարդանի կողմը: Միայն դեռ կմտածի մի փոքր...

Արտակ Մոկացը անհանգիստ ու մռայլ նայում էր նրան՝  
մտքերն այլուր և ցրիվ: Զգիտեր ինչ անել:

Նստեցին ընթրիքի: Արտակ Ռշտունին սկսեց կատակել և  
ջանում էր ուրախ պահել հյուրերին: Հրամայեց մատուցակին գի-  
նի լցնել գավաթները և բարձրացնելով գավաթը ասաց.

— Մի՛ տխրիր շատ, սիրելի՛ քենակալ, ամեն գիշեր ունի իր  
առավոտը: Քոնն է՛լ կբացվի: Խմե՛նք Անահիտի արևշատութեան:

Արտակ Մոկացը կիսաժպիտ վերցրեց գավաթը:

— Իշխանիկ, տխուր ես,— նկատեց Զոհրակին Արտակ Ռշ-  
տունին,— խմիր, գինին մեզանից խելացի է, նա մի բան կսովո-  
րեցնի: Եվ այրմարդիկա շատ պետք ունենք խելքի:

— Իսկ եթե մեկը արդեն խելո՞ք է, — մի փոքր տարվեց  
զրույցով Զոհրակը:

— Եթե այրմարդ է՝ շատ խելոք չի կարող լինել, քանի որ  
ինչքան խելք ունի ծախսում պակասեցնում է: Ա՛յ, կինմարդը շատ  
է խելոք. չի ծախսում և խելքը անձեռնմխելի մնում է տեղը:

Զոհրակը ծիծաղեց:

Խմեցին:

— Բայց լավը խելք բոլորովին չունենալն է,— շարունակեց  
Արտակ Ռշտունին,— ի՞նչ թեթևություն: Հո՞վ: Զյան վրա էլ ման  
գաս՝ հետք չես դնի:

— Կա՞ն այդպիսի մարդիկ,— հարցրեց Զոհրակը:

— Սիրահարները... Հիշում եմ՝ երբ երիտասարդ էի, ներկա  
իշխանուհու սիրահար՝ այնքան էի անխելք, որ ուզում էի միշտ  
համբուրել նրան:

— Իսկ ի՞նչ վնաս միշտ համբուրելուց:

— Որ համբուրում ես՝ պակասում է:  
— Իսկ ապրելո՞ւն ինչ կասես, իշխան,— զվարճացավ Ջոհ-  
րակը:

— Ապրել ասել է՝ կյանքը պակասեցնել:

— Ասել է՝ լավ է շապրե՞լը:

— Մենք ապրենք՝ թող նա պակասի: Այրմարդ շե՞նք: Ապ-  
րելն էլ մի բաշտեթյուն է:

Արտակ Մոկացն էլ արդեն զվարճանում էր. նա ծիծաղեց.

— Ուտե՞լը, խմե՞լը, քնե՞լը, ծուլանա՞լը...

— Ամե՛ն բան: Ապա՛ թող քա՛րը ուտի, խմի, քնի՛, ծու-  
լանա:

Մտտովակը գինի լցրեց գավաթները: Արտակ Ռշտունին ար-  
տակարգ ուրախության մեջ էր: Միայն մի անգամ բազմանշանակ  
նայեց սենեկապետին.

«Օթևանները ապահովե՞լ ես»...

— Հրամանք ես, պատարկել եմ շուրջը, որ շխանգարեն իշ-  
խանների քունը», — բազմանշանակ պատասխանեց սենեկա-  
պետը:

— Հը՛, այստեղ լինեին տիկիները՝ ինչպե՛ս կխանգա-  
րեին, — ծիծաղեց Արտակ Ռշտունին:

Մի փոքր անց սկսեց բարձրաձայն երազելու պես.

— Է՛, հիշում եմ երիտասարդ օրերից մի օր, գնացել էի գըլ-  
խիս տիրոջը տեսնելու Նրանց տան պարտեզը կախված է անդըն-  
գի վրա: Մտա պարտեզ, տեսնեմ անդնդի եզրին կանգնած է նա,  
հայրը կողքին: Ինչպես վարդը փշի հետ: Նայում եմ՝ սիրուհիս  
հրեղեն վարդ: Տենչացի այնպե՛ս: Ասում եմ՝ մի՛ համբույր միայն  
ե աշխարհը վարդերով կլցվի: Բայց խանգարո՞ւմ է փուշը: Անդըն-  
գին էինք նայում: Հանկարծ ես մատս ուղղեցի ներքև ժայռի  
արանքում բուսած մի ծաղկի: Ասում եմ՝ տե՛ս, տե՛ս, հայրի՛կ,  
«դրախտի համբույր» ծաղիկը ժայռի վրա: Ո՛րը, — կոացավ, որ  
նայի: Ծս այդ պահին մի համբույր կնքեցի սիրուհուս այտին:  
Աներս թե՛ դա «չես խաբուկ» է: — Հայրի՛կ, «դրախտի համբույր  
է»: — Ո՛չ ու ո՛չ, — ասում է, — «չես խաբուկ» է: Ծս այդ, նա ոչ: —  
Լավ, ասում եմ, թող լինի քեզ համար «չես խաբուկ», ինձ համար  
«դրախտի համբույր»:

Արտակ Մոկացը և Զոհրակը ծիծաղեցին: Հյուրընկալ նախա-  
րարը անկեղծ ուրախանում էր: Հետո նա հառաչեց երազանքով:

— Թո՛ւմն այդ օրերը ծտերի պես...

Նա տխրեց: Սկսեց երազել ինչ-որ: Հյուրերը ևս իրենց մըտ-  
քերի հետ էին:

Արտակ Ռշտունին նշան արեց սենեկապետին, որ նվագածո-  
բերի: Եկավ նվագածուն, եռանդուն մի երիտասարդ և ըստ երե-  
վույթին քաջ գիտենալով իր իշխանավորի սովորույթն ու ճաշա-  
կը՝ նստեց սրահի հեռավոր անկյունում և սկսեց նվագել մեղմ ու  
տխուր: Գողտրիկ էր եղանակը, սրտագին, մտերիմ: Արտակ Ռըշ-  
տունին եղանակի հատուկ ոլորքներում գլխով մեղմակի շափ էր  
տալիս և աչքերը մանրաժպիտ հետաքրքրությամբ կկոցած սուր  
նայում նվագածուի մատներին: Նա երեխա էր այդ պահին:

— Ինչ էլ մանր ու բարձկ է քաշում աղեղը մարդու կար-  
ծես սրտից, — ասաց նա մանրաժպիտ աչքերը շողացնելով:

Ընթրիքը ուշ վերջացավ: Եվ նա խանգարեց, որ Արտակ Մո-  
կացը անցնի որոշ ու վճռական գործի, որի համար եկել էր: Նա չէր  
վստահում Արտակ Ռշտունուն, բայց ինչ-որ մի բան մեղմում էր  
այդ անվստահությունը: Գա Ռշտունյաց նախարարի տարօրինակ  
բնավորությունն էր և նրա բռնած գիրքը բոլոր անցքերի ժամա-  
նակ: Թվում էր, թե նա քաշված մեկուսի՝ տատանվելիս լիներ: Եվ  
Արտակը անշուշտ անհուսալի մի մտքի խաղ արեց.

— Տե՛ր Ռշտունյաց: Արհավիրքը մոտեցավ և արդեն դռներս  
է ծեծում: Մի՞թե Հայոց աշխարհը կախված է Մամիկոնյան և  
Սյունյաց տերերից միայն: Համարենք թե նրանք չկալին: Ի՞նչ  
պիտի անեինք: Հայոց աշխարհը քոնն էլ չէ՞, իմն էլ չէ՞: Մի՞թե  
դու ևս դուրս չես գա քո զորքով մեր թշնամու դեմ:

— Որպիսի՞ ճշմարիտ խոսք, — հիացական ձայնով և մտե-  
րիմ եղանակով ասաց Արտակ Ռշտունին, — միակ ճշմարիտ  
խոսքը:

— Պատրաստվիր, գիմավորենք թշնամուն:

— Հոժա՛ր, հոժար եմ, տե՛ր Մոկաց, — նույն պաշտոնական  
լեզվով խոսեց Արտակ Ռշտունին:

Արտակ Մոկացը տարակուսանքով նայեց Ռշտունյաց նախա-  
րարին: Ծշմարիտ է խոսում, նենգո՞ւմ է: Իհարկե, նենգում է:

Թայց ի՞նչ կարող ես անել: Մարդը ասում է. «պատրաստ եմ դիմագրավելու»:

Հոգնութունը թեև չէր կարողանում հաղթահարել Արտակ Մոկացին, բայց նա կարի հույժ պահանջ զգաց հեռանալու և մտքերը կարգի բերելու մեծակության մեջ: Ուստի և ննջարան խնդրեց:

Մի փոքր անց նա և Ջոհրակը առանձին օթեաններում պառկած, բացառք նայում էին կիսախավար օթեանների պատուհանից դուրս, փորձում էին քնել, որ չէր հաջողվում: Եվ քանի որ Ջոհրակն ուներ իր գաղտնի մտատանջումը և Արտակ Մոկացն էլ իր հայտնի, բայց և անհատական տազնապար՝ նրանք շքնացին իրար մոտ: Մեկուսի, մեծակ տանջվում էին նրանք:

Արտակին պաշարած տազնապից զատ՝ նրան այրում էր իր թուլացումը պարտականութունների կատարման մեջ: Վարդանը նրան զորական գործ էր հանձնել, որ պահանջում էր դաժան լաբուման, անընդհատ համառ հետապնդում, իսկ նա զբաղված է հարսանիքով, զրոսանքներով և կնոջ սիրով: Կարո՞ղ էր լինել ավելի ամոթալի նշավակ, խարան, մի զորավարի ճակատին: Ջորավա՞ր... Ջորավար է Ատո՞մը, որ հիմա ո՞վ գիտե ինչ կրակների միջից դուրս է հանում ժողովուրդը...

Արտակ Մոկացը նստել էր ամրոցի ոչ այն մասի օթեաններում, ուր ինքը գիշերել էր մի ժամանակ: Այս օթեանը բոլորովին հակառակ երեսն էր և խուլ էր ինչ-որ: Ոչ մի ձայն, ոչ մի նշան ամրոցի օթեաններից: Կյանքը մեռել էր այնտեղ:

— Ի՞նչ, մի՞թե ինձ և Անահիտին պիտի վիճակվի տանջվել միայն, — շնչաց Արտակ Մոկացը և զգաց, որ մարգարեանում է ինչ-որ մի աղետալի ապագա իր և Անահիտի համար:

Գիշերը խորացած էր բավականին, երբ Արտակ Ռշտունին դահճապետի հետ զգույշ իջավ գնդանը: Դա մի խոր ընկած գետնահարկ նկուղ էր որձաքար պատերով, անպատուհան: Խավարչտին արգելանոցը քարերի իր հազիվ երևացող դաժան խոռոչներով ծամածուռ նայեց ներս մտնողներին: Մխացող ջահի լույսը երևան հանեց մի քստմենլի տեսարան: Պատաքարերին ամրացած շղթաներով կապած էին Գեդեոնն ու Անահիտը: Նրանք դեմառդեմ էին և այնքան կարճ էին շղթաները, որ նրանք չէին կարողանա

իրար մոտենալ, ձեռ մեկնել որևէ օգնութիւն: Նրանք դատապարտ-ված էին համարյա մշտական խափարի: Միակ լույսը, որով նրանք կարող կլինեին իրար տեսնել՝ նախարարի այցելութիւնն պահին հետը բերած ջահի լույսն էր: Նրանք պառկած էին սառը քարերին և գլուխները հենել էին պատին: Արտակ Ռշտունին անխոս նայեց քանտարկյալներին և ծիծաղեց.

— Բարի լուր՝ Մոկաց նախարարը հյուր է եկել: Քնած է:

Ոչ Գեղեոնը և ոչ Անահիտը շնայեցին անգամ նախարարի կողմը:

— Դե՛, — դարձավ Անահիտին Արտակ Ռշտունին, — աստ, շատ ապրի Հազկերտը և զնա ամուսնուդ մոտ:

Անահիտը սառը նայեց նրան:

— Ասա, շա՛տ ապրի Հազկերտը:

— Սպարապե՛տը, — ասաց Անահիտը խուլ ձայնով և վարժ եղանակով, ըստ երևույթին շատ կրկնած լինելով:

— Սպարապե՛տը...

— Սպարապետը:

Արտակ Ռշտունին սկսեց հարվածել Անահիտին: Եվ քանի կրկնում էր, այնքան կատաղում էր և մոլեգնում: Նա թե՛ տանջ-վում էր զայրույթից և անարգանքից և թե՛ զգում էր անասելի հաճույք այդ ծեծից: Թողնելով Անահիտին՝ նա մոտեցավ Գեղեո-նին:

— Շա՛տ պիտի երկար մնաս զնդանում:

— Մինչև կամ դու մեռնես կամ ես... — պատասխանեց Գե-ղեոնը:

— Սպանել կտայի ձեզ հենց առաջին օրը՝ եթե խոսքը դուրս չգար բերանիցս, որ իմ կամքը պետք է կատարել տամ...<sup>11</sup>

Ու մոտեցավ Անահիտին.

— Ամուսնուդ է՞լ շես զիջում, շե՛ս տեսնվելու հետը...<sup>12</sup>

— Ես ամուսին չունեմ... — շեշտ ասաց Անահիտը:

— Իսկ հորդ շե՛ս խզում...<sup>13</sup>

— Ես հայր չունեմ:

— Ապա ի՞նչ են նրանք...

— Հայրենիքի զինվորներ:

Արտակ Ռշտունին կանգնեց տարակուսած՝ թե ինչ անի: Բռնեց Անահիտի հյուսքը.

— Այստեղ ես տեր շեմ, հրամայող շեմ, նախարար շեմ...  
Ապա ո՞ւմ ես հնազանդ, ո՞վ է քո տերը:

— Սպարապետը...

— Սպարապետը, — զարկեց Արտակ Ռշտունին:

— Սպարապետը...

— Սպարապետը:

Գուռը անժամանակ բացվեց, ներս մտավ սենեկապետը:

— Ինչպե՞ս համարձակվեցիր դուռը բանալ, — գոռաց նրա վրա Արտակ Ռշտունին:

— Մեղա՛, իշխա՛ն, — ասաց սենեկապետը, — խորխոռունյաց տերը սպասում է քեզ սրահում, շտապ է և լույսը մոտ է բացվելուն:

Արտակ Ռշտունին դուրս ելավ:

Գնալով նա զգում էր իրեն հուսահատ ու ճնշված: Գանդաղ բարձրանալով սահողուղի աստիճաններով՝ նա կանգ էր առնում երբեմն և մտածում, որ հայր ու աղջիկ բռնել են նրան իրենց երկաթե ձեռքերի մեջ և քաշում են զնդան, և որ նրանք շեն զընդանում, ալլ ինքը: Հանկարծ նա լսեց պատուհանից մի հեծկլտոց և Ծսթերի ձայնը. — «Աստված, աստված, կամ ազատի՛ր կամ հոգիները ա՛ռ»: Արտակ Ռշտունին հարձակվեց օթևանի դռան վրա և զուսպ, սակայն զայրալի բախեց: Գուռը բացվեց և նա ներս գնաց: Օթևանումն էին Ծսթերը, իշխանուհին, Աստղիկը և աղախինը: Նրանք շէին հանված և անկողին մտած: Նա նստեց և նայելով շուրջը՝ հարցրեց.

— է, ինչպե՞ս եք:

Ոչ ոք չխոսեց:

— Արտակն է եկել Զոհրակի հետ: Վերևն էին: Հիմա քնած են: Գործերը լավ են: Աստծով ամեն բան կհանգստանա:

Լուռթյուն:

— Դե՛, դե՛, հանվեցե՛ք, պառկեցե՛ք: Գիշերն ուշ է: Ծս էլ գնամ հանգստանամ:

Եվ հորանջեց մեծ ու լայն: Հեռո բարի գիշեր ասաց և գնաց սրահը: Այնտեղ նրան էր սպասում Գաղիշոն՝ բոլորովին թրջված և կապտած: Նա ծովով էր եկել և հանդիպել ուժեղ փոթորկի: Նա դողում էր:

Ողջագործեցին: Գաղիշոն խիստ նայեց սենեկապետին: Սա հեռացավ: Այնժամ նա մեղմաձայն ասաց.

— Սպարապետը ջարդեց Սերովստին: Մարզպանը բացահայտվեց, բռեց Գնունյաց իշխանին և գրավեց Այրարատի բերդերը: Մեզանից զորք են պահանջում: Ատոմը նեղում է:

— Ըհը՛մ... — արեց Արտակ Ռշտունին:— Ուրեմն սկսվեց...

— Սկսվեց: Վաղն իսկ զորքերը հանենք: Իմը պատրաստ է արշավի: Անհնարին արագ պետք է զորք հասցնենք մարզպանին:

Գաղիշոն արագ լողանք ընդունեց, հագավ Արտակ Ռշտունու պահասները և գնաց սրահ ընթրիքի: Նա շատ անհանգստացավ՝ իմանալով, որ Արտակ Մոկացն ու Զոհրակը ամբողջումն են:

— Ասա՛ գժտվել ես Վասակի հետ:

Եվ Արտակ Ռշտունին ձեռը թափ տվեց:

Գաղիշոն գնաց քնելու: Արդեն լուսանում էր:

Դուռը փակվել էր բանտարկյալների վրա, և խավարը կուլ էր տվել նրանց: Խոշտանգողի և դահճապետի քայլերի ձայնը հենց մարեց, տիրեց անհույս և խեղճող լուսթյունը՝ Անահիտը սկսեց հեկեկալ և միաժամ ճիգ անել խեղճելու հեկեկոցը:

— Իրավո՛ւնք է, աղջի՛կս, լա՛ց,— ասաց Գեղեճոնը,— լա՛ց, թող հոգիդ մաքրվի լացից, թող հոգիդ քար դառնա...

Անահիտը լռեց:

— Ապրե՛ս, աղջի՛կս, մատա՛ղ, աղջի՛կս, հերոս աղջի՛կս... Դու հորդ պատիվը բարձր պահեցիր:

Անահիտը շխտեց:

— Է՛հ, գինվորյալը հուսահատություն չգիտե, — սիրտ տվեց Գեղեճոնը և սկսեց երգել: Նա ուժեղ և գեղեցիկ ձայն ուներ:

«Ասաց՝

Քե՛զ ասեմ, գո՛ն Հայկ, գոռո՛ղ Հայկ, քա՛ջ Հայկ, >  
Մի՛ կենար գոռ, Հա՛յկ, գոռող, Հա՛յկ, Հա՛յկ, Հա՛յկ, քա՛ջ  
Կա՛ սուր՝ կա՛ սուր, կա՛ պատիժ, խե՛նթ Հայկ,  
Ե՛կ ծունկի, տես ո՛վ եմ կանգնած քո առաջ:

«Ասաց՝

Քե՛զ ասեմ, գո՛ն Քել, գոռող Քել, քա՛ջ Քել,  
Մի՛ կենար գոռ, Քե՛լ, գոռող, Քե՛լ, Քե՛լ, քա՛ջ,  
Կա՛ սուր՝ թե կին եմ, պատիժ՝ թե վախկոտ,  
Զե՛մ ճկի, չե՛մ, չե՛մ, չե՛մ վրդս քո առաջ:

Անահիտը լռել էր: Զգացվում էր, որ զգացվել էր նա և գոհ էր: — Հա՛, աղջի՛կս, հա՛, մատա՛ղս, պի՛նդ կաց, մեզ հաղթել չկա, — ասաց Գեղեճունը:

Ու մի փոքր հետո գոչեց.

— Թուչի՛ էլ՝ ա՛ա՛ա՛յժ է՛... հայոց աղզը պիտի ապրի՛... Ազգի դավաճան, ծնած օ՛րը պիտի անիծեմ: Գնա տրաքվի՛ր, ա՛ա՛ա՛յժ է... Անահիտը ծիծաղեց.

— Ասա՛, սիրելի՛ հայրիկ, ասա՛:

— Կասե՛՛ե՛՛մ, ապա՛ա՛ա՛... Հաղթե՛լ ենք, աղջի՛կս: Որ կողմ կուզի՛ ուրովի՛, ճաքի՛, տրաքվի, մեզ հաղթել չկա, — ու մոնչաց շարախինդ, հաղթական. — Ես Գեղեճուն եմ, Արտակ շե՛՛ե՛՛մ:

Գիտի՛ն էր լցնում ականջը ցնորական հնչյուններով, երկա՛ր ժամանակ էր անցել, թե՛ կարճ՝ Արտակ Մոկացի ականջին հասավ մի ձայն. «Աստված, աստված, կամ ազատիր կամ հոգիները առ»: Այդ ձայնը շատ նման էր Եսթերի ձայնին: Հետո ձայնը կուզ գրնաց խաղաղ, անվրդով լռության մեջ և լեճնային ամրոցամերձ անդնդի գետն էր միայն վշշում միապաղաղ: Արտակ Մոկացը շրջվեց մյուս կողքին և քնեց: Թե՛ արթնացավ:

Իր օթևանում երկար անքուն, տարակուսանքների, որոնումների շավիղներն էր քնկած Զոհրակը: Նա այնպես էր կարոտել Աստղիկին, կարծես մի տասը տարի սիրակարոտ սպասել էր և հիմա եկել՝ չէր գտել իր սիրեցյալին:

Արևը բավական բարձրացել էր, որ Արտակ Մոկացը ու Զոհրակը գնացին սրահ: Այնտեղ էր Արտակ Ռշտունին և նայում էր պատուհանից դուրս: Քնատությունն ու գիշերվա լարված վիճակը մի փոքր ազդել էին նրան: Բայց նրա պատուհանից նայելը աննպատակ չէր: Նա շատ էր կասկածում, որ Տարոնի կողմից սուրհանդակ կգա և Արտակ Մոկացին կհաղորդի Վասակի ապստամբությունը: Նա ջանում էր ժամանակ շահել, վճիռներ կայացնել, անտեղյակ պահել Արտակ Մոկացին:

Ներս մտավ Գաղիշոն: Նա բարեկամարար ողջագուրվեց Արտակ Մոկացի և Զոհրակի հետ: Նստեցին նախաճաշի: Գաղիշոն պատմեց Արտաշատի դեպքերի մասին «այնքան, որքան գիտեր մինչև իր դուրս գալը Արտաշատից»:

— Ինչո՞ւ գժտվեցիր մարզպանի հետ, — հարցրեց նենգորեն Արտակ Ռշտունին նրան:

— Ես մարզպանի հետ չեմ գծավի,— նույնպես նենգորեն պատասխանեց Գաղիշոն,— բայց և չեմ գնա նրա հետ. նա կրքի մարդ է: Ինչպես և... Սպարապետը:

Լուեցին: Արտակ Մոկացը զննում էր Գաղիշոյին:

— Վաղվանից զորքը հանիր մարտական վիճակի,— ասաց Գաղիշոն,— Այրարատը խառնակ է...

— Այո, պետք է, այդ պետք է,— հաստատեց Արտակ Ռշտունին:

Արտակ Մոկացը լուռ էր և մտատանջ վիճակում: Ի՞նչ կարելի է վստահել սրանց: Իսկ եթե չվստահես՝ ի՞նչ կարելի է անել: Պատերազմե՛լ սրանց դեմ, երբ կանգնած կլինեն սպառազեն, բայց «չեզոք»: Ո՛հ, ամենազգվելի վիճակը զորական գործի: Կարելի էր հարվածել, ստուգել, բայց այս պահիս ինչո՞վ, ի՞նչ ուժերով:

Ուշանո՞ւմ է, ուշանո՞ւմ է Ատոմը...



Խաղաղ առավոտը քնքուշ նայում էր անդնդից, լեռներից և հեռավոր ծովից: Ամրոցից վեր դեպի լեռները ձգվող հովտի մի լայն հրապարակում շարվում էին զորագնդի մասերը՝ սուտերովոր, տապարակիր և նիզակավոր:

— Զորատե՛ս կատարիր, տե՛ր Մոկաց,— դիմեց Արտակ Ռշտունին կիսահեզնական:

Արտակը հետզհետե կորցնում էր զսպվածութունը: Արտակ Ռշտունին և Գաղիշոն լուռ էին շարունակ: Բայց տեսնում էին իրենց գործը:

Իրիկնադեմին Տարոնի կողմից ամրոցն էին սլանում երկու հեծյալ: Նրանք կանգ առան մի պահ ամրոցի դռան և ապա արագությամբ թռան դեպի զորագունդը:

— Մերոնք են... տեսնես ի՞նչ կա,— անհանգստացավ Արտակ Մոկացը:

Արտակ Ռշտունին կարմրեց զայրութից:

Հեծյալները քրտնամխած, այլայլված կանգ առան նրա առջև և նրանցից մեկը ծոցից հանեց մի նամակ, մատուցեց Արտակ Մոկացուն: Սա վերցրեց, կարդաց և այլայլվեց: Ստեղծվեց գծվար

կացութիւն: Հայտնե՞լ... նրան տարօրինակ: Թվաց- Գաղիշոյի և Արտակ Ռշտունու անտարբերութիւնը: Պատշա՞ճ չէին համարում հարցնել նամակի մասին: Թե՞ նրանք արդեն տեղյակ էին լուրին: Արտակ Մոկացը վճռեց հայտնել: Դա կպարզեր շատ բան: Եվ հայտնեց:

— Ախորժելի չէ, որ այդպես է,— ասաց հանգիստ Գաղիշոն,— շատ վատ բան է:

— Այո՞, այո՞,— հաստատեց Արտակ Ռշտունին:

Արտակ Մոկացը նայեց նրանց անտարբեր դեմքերին և հանկարծ գլխի ընկավ, որ նրանք այդ լուրին տեղյակ էին, և այս զորահավաքը Վասակի օգնութեան համար է: Արյունը զարկեց գլուխը: Ուրեմն այնտեղ՝ Արտաշատում, և այստեղ՝ Ռշտունիքում, լուրջ գործեր են կատարվում, իսկ ինքը քնած է... Վճռեց մեռնել, բայց թույլ չտալ դավադիրներին: Ու մինչ նրանք տարված էին զորագնդի գործով՝ Արտակ Մոկացը մտաւ կանչեց զաղտնի համակիր Վարդ սեպուհին և հայտնեց իր նպատակը: Սեպուհն ասաց, որ հույս չկա զինվորներին: Արտակ Մոկացը ուտում էր ինքն իրեն: Իր աչքի առաջ, «օրինական կարգով» զորագունդ են հանում Վարդանի դեմ... Ինչպե՞ս կարող էր նա դիտել անտարբեր:

Արտակ Մոկացը չէր նկատում մի բան, որ առավոտից սկսած մինչև երեկոյան ժամը շրջակայքից ահագին շինական բազմութիւն էր հավաքվել: Նրանք փոքրիկ վահանիկներով, նիզակներով և կարճ դաշույններով զինված մարդիկ էին: Արտակ Մոկացին այդ շարմացրեց: Իր աշխարհում ողջ շինական բնակչութիւնն անբաժան էր զենքից: Բնագնդիւնը լարված հետևում էր զորահավաքին և շրջապատած դիտում էր:

Արտակ Ռշտունին մտավ ամրոց, մինչ Գաղիշոն ճանապարհի սլաքաբաժնի ճոճվում էր իրեն մատուցած անհանգիստ մի նժույգի վրա:

Արտակ Մոկացին զարմացրեց և զայրացրեց մի բան: Արտակ Ռշտունին և Գաղիշոն չէին խոսում, բայց նկատել էր, համերաշխ գործ էին կատարում: զորագունդը լրջորեն տանում էին Արտաշատ: Նա չէր կարող ոչինչ ասել մի ազատ նախարարի, որ տնօրինում էր իր իշխանական իրավունքը: Բայց կար Անզղի համերաշխութիւնը, Արտաշատի վճիռը տերունական զորքի խառն զո-

բազմազանի մասին, կար Սպարապետի հրահանգը, որ Արտակ Մոկացը պետք է հսկեր Մովի շուրջը կատարվող դեպքերին... Այս ամենը ահա անտեսվում, ի չիք էր դարձվում...

Արտակ Ռշտունին վերադարձավ այլալիված և հեալով: Ինչոր բան էր պատահել այնտեղ ամբողջում: Նրա այտը ցնցվում էր: Արտակ Մոկացը նայեց նրան և պատահամբ նրա կոշիկի վրա արյան բծեր տեսավ: Բայց հենց նոր էր անդրադառնում դրան, որ նրա ուշադրութունը գրավեց այլ բան: Շինականների բազմութունը զորագունդն օղակել, առաջ էր եկել: Նա մոմոում էր և շարափախ նայում նախարարներին: Նրանցից մի փոքր առաջ էր կանգնել մի զինված, ոլորմորուս վեհատիպ ծերունի՝ դեռ ամրակազմ և արծվենիկ աչքերի խայթող հայացքով: Բազմութունը շար նայեց Արտակ Ռշտունուն: Սա հարցականորեն շրջվեց դեպի նրանց:

— Հարե՛լ նահապետ,— լավեց բազմության միջից մի ծերունու ձայնը,— տո՛ւր հարցումը...

Մերունին շնայեց նրա կողմը, բայց ավելի առաջ եկավ դեպի Արտակ Ռշտունին:

— Ծ՛տ քաշվիր, անասո՛ւն,— խեթեց Արտակ Ռշտունին ծերունուն:

Հարել նահապետն ավելի առաջ եկավ.

— Հանուն հոր և որդվո՛ւ և հոգույն սրբո, — խաշակնքեց երեսքը, — աստված ճշմարիտ, մեր իշխանն ես, մեր գլխի տերը: Կ՛եր որդիքը՝ հետ Վարդանի են: Հետ որի՞ ես դու՝ Հազկերտի՞...

— Իի՞նչ, — մոնչաց Արտակ Ռշտունին ապշած:

— Քեզ իմացում, իշխան, — շարունակեց Հարել նահապետը ազատ ու արժանավայել, — թե դեմ հայրենիքի ես՝ ասեմ, ոչ երկնչիմ: — Իշխան չկա, ծառա չկա, — հայրենիք կա հիմի: Չիշխե՛ս մեր զավակները տանես դեմ Վարդանի...

— Ի սո՛ւր ապիրատին, — կատաղի գոչեց Արտակ Ռշտունին գողալով գայրույթից և կասկարմրած՝ ավր զարկեց սրի դաստակին և նժույզը քշելով Հարել նահապետի վրա՝ աքացեց նրա կրծքին, որից Հարել նահապետը ետ ընկավ:

— Ո՛ւմ ի սուր, անա՛զգ, անօրե՛ն, — մոնչաց Հարել նահապետը վեր թռչելով գետնից և ինքը ևս երկաթե ձեռքը սրի դաս-

տակին զարկեց և ապա ընդոստ շրջվելով դեպի բազմութունը՝ շողացրեց ցասումնալի աչքերը.

— Հետ որի՞ եք. Հազկերտի՞, թե՞ հայրենիքի՞: Ելե՛ք...

Ու սուրբ քառեց, հարձակվեց Արտակ Ռշտունու վրա: Թիկնապահները իսկույն վրա ընկան, որ խողխողեն ծերունուն՝ բայց բազմութունը սաստկագին թափով ողողեց նրանց և սկսեց հարվածել: Հնար ու ականթարթ շմնաց զորագնդին հրաման տալու օգնության: Բոլորն իրար խառնվեցին՝ զինվոր, շինական, իշխան, սեպուհներ: Անէրեակայելի, աննախընթաց, ցնորական ու խելագար ընդվզումը, շփոթմունքը, զայրույթն ու զարձանքը խավարեցրին ամեն միտք ու բանականություն: Զորագնդից որոշ հատվածներ սկսեցին դիմադրել ժողովրդին, մյուս հատվածներն իրար վրա հարձակվեցին:

Արտակ Մոկացը և Զոհրակը այնքան շփոթված էին սկզբում, որ զարմացած դիտում էին շհավատալով իրենց աչքերին:

Արտակ Մոկացը մոտեցավ Հաբել Նահապետին և ականջին ցոռեց.

— Խմբի՛ր ժողովուրդը...

Հաբել Նահապետը ձեռը բարձրացրեց.

— Հերի՛ք, իշխան, հերի՛ի՛ք... գնա քո պատերա՛զմը... մեր կամքի տերը մենք ենք: Հայրենին մերն է, արյունը՝ մերը...

Հովիտը լցվեց կռվողներով, դրոշակիրները Արտակ Ռշտունուց պոկվեցին գնացին այլ բազմության հետ, որ խառն էր շինականներով ու զինվորներով: Սեպուհներից ոմանք այնքանը միայն կարողացան, որ Արտակ Ռշտունուն ու Գաղիշոյին փախցրին լեռնային շավիղներով: Նրանց հետևից կռվելով քաշվեց զորագնդի մի մասը՝ հետապնդելով զինվորների և ժողովրդի բազմությունը, որին առաջնորդում էր Հաբել Նահապետը:

Կռվողները իրար հարվածելով շարժվում էին դեպի լեռները: Խառնակարգ ձեռնամարտը մոլեգնում էր փոփոխական հաջողություններով: Անտառներն ու փապարները լցվեցին ցրված մարտիկներով, և անհնարին էր բան հասկանալ, թե ինչ է կատարվում իրոք, և ինչով կվերջանա գործը:

Արտակ Մոկացը ետ դարձավ հովիտ, հավաքեց իր զինվորներին, սակավ մնացած ուշտուն շինականներին և նրանցից կազմեց զորական ուժ:

Նա և ուրախ էր և շփոթված: Երբեք չէր սպասի մի այսպիսի ընթացքի: Մինչ այս պահը նա իր ձեռին էր կարծում դեպքերի սանձերը: Հիմա բաց թողեց դա: Նա զգաց, որ ժողովուրդը հակառակ իր նախարարի ելավ հայրենիքի պաշտպանության:

«Եվ լավն էլ այս էր»,— ձեռը թափ տվեց Արտակ Մոկացը և նայեց Զոհրակին, որ խռովյալ հոգով դիտում էր գնացող բազմությունը:

Նա դարձավ Զոհրակին.

— Դե, գնանք գրահվենք և հասնենք կովին:

Տարօրինակ զգացմունքով նրանք մոտեցան ամրոցին, ուրիշ չի տանը, որ հիմա տիրոջը չէր պատկանում մի տեսակ, այն սրին ուրիշները կարող էին տիրություն անել:

Մթնում էր: Ամրոցը մոայլ էր քարայրի պես: Նայեց Արտակը դարբասի կամարին: Այստեղից էր ելումուտ անում նա... Ո՞վ գիտե ուր է հիմա, ո՞ր վանքի պարիսպների տակ...

Հանկարծ նա զգաց մի այրեցիկ ցավ ուսագլխին և տեսավ ինչպես Զոհրակը շրջվեց մեջքի վրա: Ինչպես իր զինվորները սլացան ներս և շառաչեցրին սրերը: Հետո լսեց կանացի ճիչեր, որ հեռացա՛ն, հեռացա՛ն և լավեցին շա՛տ խորը անդնդից, ողջ աշխարհը շնչաց և ամեն ինչ օրորվեց, հեռացավ մի խավար անէության մեջ:



Լուսերեսը չէր համաձայնում քաղաքադռնից ներս թողնել մի անծանոթ հեծյալի, որ երեսի կեսը կապել էր վիրավորի նման: Եկվորը հավատացնում էր, որ ինքը Վասակի սուրհանդակն էր: Սուրհանդակներ շատ էին ելումտում մայրաքաղաք. բայց նրանք թղթեր ունեին: Այս եկվորը թուղթ չուներ: Երբ եկվորը շատ պընդեց, Լուսերեսը դուրս ելավ և քիպ մոտեցավ հեծյալին.

— Արծվի՛... — շնչաց Լուսերեսը:

— Կամաց,— փսփսաց եկվորը:

Լուսերեսը դուռը բացեց, Արծվին անցավ ու կորավ քաղաքի նեղ փողոցներում: Նա գնաց Վարաժենց այգու հետևի ամայի կողմը և գաղտնի դուռն մոտ իջավ նժույգից, նայեց շորս կողմ և անհետացավ մացառների մեջ:

Երկար ժամանակ մարդ չէր երևում: Մոտ վազեց դամփուր,  
բայց նա փոխանակ հաշելու՝ սկսեց նվալ ու կլանչել ուրախությու-  
նից, և նրա այդ ձայները չէին հասնում տանեցիներին: Հանկարծ  
հաշեց՝ տեսնելով երևի, որ մոտենում են:

Մի մարդ վազեց Արծվիի դեմ և բարձրացրեց մահակը:

— Ո՞վ ես, ո՞ւր...

— Վարաժի մոտ,— պատասխանեց Արծվին:

— Կանգնի՛ր,— հրամայեց զինված մարդը:

Արծվին շուտեց աղմուկ հանել, կանգնեց: Հավաքվեցին մի  
քանի զինվածներ էլ և շրջապատեցին Արծվին: Հանկարծ նրան-  
ցից մեկը բռնեց Արծվիի թևը և աչքերը մոտեցրեց նրա դեմքին:

— Դավաճաններից է,— որոշեց նա:

— Հա՛, գտա՛ր,— ասաց Արծվին,— մենակ նժույգս ներս  
քաշեցեք՝ շտանեն՝ ձեռք մեկնելով դեպի պատի հետևը,— և շուտ,  
ես ժամանակ չունեմ:

Արծվիի այս հանգիստ խոսքը վստահություն ներշնչեց զին-  
վածներին: Նրանցից մեկը թռավ պատի հետև, մյուսները Արծ-  
վին տարան: Վարաժի տունը: Դեմից երևաց լույսը, որ տեսնելով  
Արծվին՝ ետ վազեց և խելագարի պես կանչեց.

— Դժխո՛... Դժխո՛...

Դժխոն վախեցած դուրս թռավ:

— Դժխո՛, Արծվիի՛ ի՛ի՛ն...

Դժխոն խենթացած ընկավ Արծվիի գիրկը: Գրկեց Արծվին  
նաև լույսը: Երկուսով սկսեցին կարոտալի համբուրել նրան:

— Սպասեցեք,— շշնջաց Արծվին,— գործ ունեմ:

— Գնանք, գնանք,— ասացին աղչիկները և Արծվին տա-  
րան ներս:

Վարաժի տունը լիքն էր Վասակի ժամանակվա զանազան  
փախստականներով և վտանգված մարդկանցով: Այդտեղ էին նաև  
Առաքելը և մյուս շինականները: Վարաժն ու Մարկոսը ինչ-որ  
գրույց էին սկսել: Տեսնելով Արծվին՝ բոլորը վեր կացան և շըր-  
ջապատելով նրան՝ սպասեցին, որ խոսի: Արծվին հասկացավ, որ  
և՛թե այս մարդիկ հավաքված են Վարաժի մոտ՝ վստահելի են և  
կարևոր շհամարեց զգուշություն բանեցնելը: Ուստի և ասաց.

— Սպարապետը վաղը գիշեր կհասնի քաղաքին: Պատրաստ-  
վեցե՛ք: Հրամայեց հյուսիսից սուտ կռվի աղմուկ գցեք:

— Աստված օգնական, աստված օգնական,— լսվեց բոլորի բերանից:

Վարածը Դժխոյին աչքով արեց: Դժխոն դուրս վազեց: Մի փոքր անց ներս եկան մի խումբ շինականներ, որոնց մեջ էր Սահակը:

— Բարի լուր, եղբայրներ: Սպարապետը վաղը գիշեր կըհասնի...

— Սպարապետին է՛լ մատաղ, հասնելուն է՛լ մատաղ,— խանդաղատանքով ասաց Մարկոսը,— կռվենք՝ որ հաղթենք:

— Ամեն՛ն,— շնջացին շորս կողմից:

Վարածը նայեց Առաքելին:

— Հը՞, Առաքել, օր բացվեց...

Առաքելը մոայլ նայեց նրան, բոլորին և ասաց ցածրաձայն.

— Հավաքեցե՛ք բոլորին:

— Հավաքվեցին բավական շինականներ և քաղաքացիներ: Նրանք ոչ մեծ զգուշություն էին ցուցաբերում: Անգամ հանգիստ էր նրանց տեսքը: Մեծագույն մասը շինականներ էին և անտարբեր դեպի վտանգն ու մահը:

Հայտնվեց լուսերեսը: Առաքելը նրան հանձնեց մի քանի սուրհանդակ, որ տանի անցկացնի քաղաքադռնից: Նրանց ուղարկեց հեռու շրջանները լուրը հասցնելու: Արծվին մի նամակ տրվեց, որ պետք էր հանձնել Ատոմին:

Առաքելը պատվիրեց բոլորին գնալ թաքնվել այգում և հրակել՝ մինչև հրաման ստանան հարձակման: Բոլորը հեռացան, մընացին ավազները:

Վարածը ընթրիք բերել տվեց Արծվին, թեև Արծվին հրաժարվում էր: Նա շտապում էր վերադառնալ Վարդանի մոտ: Չնայած հոգնածության՝ նա ատամները շողացնում էր բաց շրթունքների միջից և ժպտում մութ դուռնի կողմը կանգնած Դժխոյին ու լույսին: Կարծես ոչինչ չէր պատահել աշխարհում: Նա անհոգ էր և անվրդով առաջվա պես: Ավելին, նայելով նրան թվում էր թե ամեն բան լավ կգնա աշխարհում:

— Ինչպե՞ս շարդեցիք պարսիկներին,— հարցրեց Վարածը:

Արծվին նայեց Վարածին և ժպտաց.

— Եղավ էլի, շարդվեցին:

— Շա՞տ շատ էին:

- Ի՞նչ իմանամ, ինչքան կուզես:
- Աթըլին տեսա՞ր: Ինչպե՞ս է:
- Մարդ է, կա էլի,— ծիծաղեց Արծվին:
- Մե՞ծ գորք ունի:
- Լա՞տ՞վ:

Արծվիի աչքերը փակվում էին: Փաղցր քունը քաշում էր: Վա-  
րածը դիմեց աղջիկներին:

- Տեղաշո՞ր գցեք, թող քնի, հոգնել է Արծվին:

Արծվին՝ աչքերը կիսափակ՝ ժպտաց.

— Զէ, պիտի ետ դառնամ: Մենակ՝ նժույզս մի փոքր հան-  
գրստանա:

- Իսկ որ մի փոքր դու էլ հանգստանա՞ս:

— Սպարապետը կսպասի:— Ու վեր թռավ.— հա՛, նժո՛ւյզը...

Արծվին գնաց նժույզին նայելու: Նժույզն հնձանումն էր: Տեսնելով տիրոջը՝ խրխնջալով դոփեց գետնին: Նա սկսել էր ուտել գարին, որ բերել էր տվել Մարկոսը արքունական ախոռից: Սկան լույսն ու Դժխոն և սկսեցին շոյել և համբուրել Արծվիի նժույզին:

— Աչքերի՞դ մատաղ, ի՞նչ սիրունն է,— գորովալից համբու-  
րեց Դժխոն նժույզի աչքերը: Արծվին շատ ուրախացավ և գոհ ու  
երջանիկ երեխայի պես ժպտալով դիտում էր, թե ինչպե՞ս են քույ-  
րերը սիրաշահում իր նժույզին:

- Շա՛տ լավն է նժույզդ, Արծվի,— ասաց Լույսը:

— Շա՛ա՛ա՛տ,— հուզվեց Արծվին և հաղթական թիկն տվեց  
արթադի կապուկներին՝ ուղղակի հալվեց ինչպես արքան իր գահի  
թիկնակին և սկսեց պատմել իր նժույզի մասին. թե ինչեր պատա-  
հեցին նժույզի հետ ողջ արշավանքի ընթացքում: Մոռացվեց և՛  
Սերուխտը, և՛ Ճորա Պահակը, և՛ Աթըլը: Հոնների աշխարհի վայրե-  
նացած նժույզների և նրանց որսի մասին խոսեց մանկական հա-  
փըշտակությամբ:

— Ասել է՝ հոնների երկիրը լավ երկիր է, հը՞, Արծվի,— հարց-  
րեց Լույսը:

- Շա՛տ լավ:

Լույսը գնաց գուրս: Մնացին Արծվին և Դժխոն: Դժխոն ընկավ  
Արծվիի գիրկը և նրանից կախված սիրակարոտ աչքերով նայեց  
նրան:

— Արծվի, ապա նժուլգից դուրս ուրիշ բան... ուրիշներին չե՞ս սիրում,— հարցրեց Դժխոն:

— Ինչո՞ւ չեմ սիրում, ուրիշներին էլ սիրում եմ,— միամիտ առանհոգ պատասխանեց Արծվին:

— Իսկ ինձ... սիրո՞ւմ ես:

— Ինչո՞ւ չէ:

— Ինչո՞ւ ես ինձ սիրում:

— Ո՞նց թե ինչու: Դու էդքան բարի սիրտ ունես, ինչպե՞՞զ կարող եմ քեզ չսիրեմ:

— Շուտ շուտ կգա՞ս մեր տուն,— հեաց Դժխոն:

— Պատերազմը վերջանա...

— Պատերազմը, ա՛խ...

— Ապաա՛. դու գիտե՞ս, որ հայոց ազգը գերի է: Պիտի ազատենք, չէ՞: Խեղճ Սպարապետս քուն, դադար չունի, նայում եմ՝ սիրտս կտոր-կտոր է լինում:

Արծվիի աչքերը թացացան:

— Վա՛յ, Արծվի՛, լաց ես լինո՞ւմ,— զարմացավ Լույսը ներս գալով և նոր թխած հացեր բերելով՝ մի հատը կտրտեց դրեց նժուլգի առաջ:

Արծվին խանդաղատեց և գրկեց Լույսին: Լույսը ևս ընկավ Արծվիի գիրկը:

— Մատա՛ղ հոգուդ, ո՞նց էինք կարոտել, ո՞նց էինք կարոտե՛լ:

Դժխոն ոչ մի խանդ չզգաց դեպի Լույսը: Գիտեր նրա զգացմունքները դեպի Արծվին:

— Արծվին պատերազմ պիտի գնա,— ասաց Դժխոն Լույսին՝ կարծես նորոթյուն էր ասում:

— Հա՛, հա՛, այդ ասա՛, ի՛նչ տխուր բան է,— ասաց Լույսը,— բա չե՞ս դժվարանում, որ պիտի գնաս պատերազմ:

Արծվին տխուր նայեց.

— Բա չե՞մ դժվարանում: Սպարապետս, էսքան ժողովուրդը մեղք են, չէ՞: Ինչո՞ւ փշանա էսքան մարդը:

Արծվին մտածում էր: Հետո նա գլուխն օրորեց.

— Մի անխիղճ բան կա անիծված պատերազմի մեջ: Մենք, ասենք, մարդ ենք՝ պատերազմ ենք գնում, կարող ենք չգնալ, իսկ եթե գնում ենք՝ մեզ վրա ենք առնում մեղքը: Բա էս անմեղ նժուլգ-

ները, որ տանում ենք, տալիս թրի բերան, շա՛ատ անխիղճ բան է, է՛, շա՛ատ... Աչքս կուրանա, ես ո՞նց տանեմ սրան թրի բերան: Որ մտածում եմ, սիրտս մղկտում է...:

Դարձյալ Արծվիի աչքերը լցվեցին: Նա վեր կացավ մոտեցավ նժույգին, բաշը քաշեց և գլուխը դրեց նրա աչքին: Նժույգը թողեց ուտելը և մնաց սպասողական դիրքում, որ Արծվին իրեն սիրի: Հետո պոկեց երեսը Արծվիի ձեռից և սկսեց ուտել: Շատ էր սոված:

Լույսն ու Դժխոն արտասովախառն ծիծաղեցին:

— Արծվի, շատ ես սիրում դրան,— ասաց Լույսը,— աստված դրան հեռու տանի փորձանքից:

— Է՛՛է՛՛, ասում եք,— եկավ նստեց տեղը Արծվին,— սրա բանը պրծած է: Ես աչքս միշտ պետք է Սպարապետիս վրա պահեմ: Աստված շանի, նրան, որ փորձանք մոտենա՝ ես ի՞նձ եմ խնայելու, թե՛ սրան...

Քույրերը խանդաղատած լռեցին: Արծվին առջվեց ինչ-որ մտքերի մեջ: Հետո վեր նայեց և ինչ-որ մի ուրիշ մարդու նման ասաց.

— Բա ի՞նչ, հենց կարծում եք ես մարդ արարած չեմ, սեր չունե՞մ, երիտասարդ չե՞մ... Շատ բան ունեմ արտիս մեջ, բայց ճիշտը կուզեք՝ ուխտ եմ արել, որ աշխարհ չմտնեմ, սիրտս ու սերս մատաղ անեմ Սպարապետիս: Սպարապետը հայոց ազգն է:

Դժխոն գլուխը կախեց: Լույսը շոյեց Արծվիի մազերը.

— Կավ վռվռո՞ւ ես, չէ՞, Արծվի:

Արծվին էլի ատամները ցույց տվեց և ծիծաղադեմ նայեց Լույսին.

— Ես ի՞նչ գիտեմ:

Մի փոքր հեռու.

— Սպարապետը չի թողնում, թե չէ՝ ուժը ուտում է ինձ: Ախր բանը բանի նման չէ: Ինչացո՞ւ է պատերազմը: Մարդ ու կատորած: Թո՞ղ տային պարսիկները՝ գնայինք ապրեինք:

— Ի՞նչ կանեիր,— հարցրեց Լույսը:

— Կգնայի տուն, նժույգ կպահեի: Մեկ էլ թամբ կկարեի: Կա՞մ թամբ կարել գիտեմ, որ նժույգի մեջքը չի ծեծում:

Ներս եկավ Մագթաղը՝ վարածի կինը.

— Ասում են մարգպանը կոտորած է սարքելու վաղը...

Ինչպես ամպը գա ձածկի լալս, արև օրը, աղջիկները և Արծվին մթնեցին:

Արծվին վեր կացավ:

— Դե, ես գնացի: Սպարապետը հրամայեց շուշանալ:

Շինականները մոտեցան հնձանին: Արծվին թամբում էր նժույզը:

— Լսեցեք, — դիմեց նրանց Արծվին, — Սպարապետն ասաց հենց որ լսեք մեր աղմուկը՝ քաղաքի մեջ սկսեցեք շփոթը:

— Ասա Սպարապետին՝ «հրամա՛նդ», — ասաց հանգիստ ձայնով Սահակը:

Արծվին մեկնեց, Լուսերեսը նրան քաղաքադռնից դուրս տարավ իբրև Վասակի սուրհանդակ:



Մինչ Վասակի զորքերը այդ երկու օրը առանձին ուժով ճգմել էին ջանում Արարատի շրջակա վայրերը և կռիվը սաստկացրել էին Ատոմի դեմ՝ տազնապած այն լուրից, որ ասպետամբած ժողովուրդը Բզնունյաց ծովի բոլորքը և այլուր փոթորկելով շարժվում է դեպի Արտաշատ՝ Վարդանը իր զորագունդը Սոթի լեռնանցքից մտցնում էր Կոտայք: Նա այդ ուղին ընտրեց՝ ենթարկելով զորագունդը անհնարին տանջանքների՝ թույլ տալով, որ Վասակը հետախուզի Արտաշատ — հաղխաղ գիծը՝ Սևանա ծովի հյուսիսային ափերով:

Եվ ահա, երբ Վասակը մի գիշեր սպասում էր Ատոմի դեմ ուղարկած զորագնդի մարտի հետևանքին՝ քաղաքում լուր ընկավ, որ Վարդանը գալիս է:

Շեփորները ծղրտացին՝ գոժելով տազնապ: Ողջ քաղաքը ցնցվեց: Զորագնդերը ոտքի հանվեցին: Ու մինչ հարվածն սպասում էին Սևանի պողոտայից՝ Վարդանի հեծյալները խուժեցին արևելքից: Շփոթն ընկավ Վասակի զորքերի մեջ: Գիշերային խավարը սաստկացնում էր շփոթությունը: Քաղաքի թաղամասերից, քաղաքամերձ այգեստաններից դուրս թափվեցին շինականների և արտաշատցիների խմբեր և իրենց անակնկալ հարձակումներով մոլորեցրին զորագնդերին:

Արտաշիր սեպուհը կատաղի հովաղի պես դես ու դեն էր սլանում կարգի բերելու ցնցված զորագնդերը: Բայց քաղաքի պաշտպաններին շփոթեցրեց Վարդանի հարվածի անսպասելի թուլությունը և ուղղութիւնը՝ արեւելքից:

Վասակն զգաց, որ հարկաւոր էր ամենաարագ վճիռ. կամ մնում է պաշտպանելու քաղաքը՝ հաղթելու հաստատ հույսով կամ հարկ է անմիջապէս հանել զորքը, թեկուզ փախչել, քաղաքի հարավից դեպի Սյունիք տանող ճանապարհով, քանի դեռ օտ կտրված չէր:

Նախարարները շփոթված նրան էին նայում: Վերջապէս Վասակը վճռեց: Հրաման արձակեց թողնել ամեն բան և արագ դուրս գալ Սյունիքի ճանապարհը:

Եվ առանց սպասելու հրամանի կատարման՝ հաղիվ զրահված, զենքը վերցրած՝ նախարարներին ևս նույնը առաջարկելով՝ նժույզ նստեց և արշավեց քաղաքից դուրս: Այստեղ, Սյունիքի ճանապարհին, առանց հրամանի, լուկ բնագրական գրգռումով խառնակարգ ու ցրիվ փախչում էին զորագնդերը:

Սկսեցին վարգել: Դեպի Սյունիք...

Վարդանի զորագունդը մտավ Արտաշատ Ժողովրդի ցնծաւից աղաղակների, օրհնանքների որոտի հետ: Զահերը ամեն կողմից լուսավորեցին քաղաք մտնող հաղթական զորքի ճանապարհը: Բազմութիւնը հետզհետե ծովացած քաղաքում:

Վարդանը իսկույն հետախուզող զորամաս հանեց փախչողների հետևից մինչև գիշերս և վազը կկազմեր նրանց հետապնդող գլխավոր ուժերը: Հաղթողները արագ բռնեցին աշտարակներն ու քաղաքամերձ դիրքերը՝ սպասելով առավոտվա դեպքերին: Միաժամ սուրհանդակներ գնացին Ատոմին և Արտակ Մոկացին լուրը տանելու և հրաման՝ որքան հնարավոր է՝ շուտ խմբվել Արտաշատում:

\* \* \*

Արտակ Մոկացին և Զոհրակին օգնութեան էին հասել շատ ծանր վիրավոր վիճակում: Այն պահին, երբ Արտակ Ռշտունու դարանակալները սրերով հարձակվեցին նրանց վրա՝ օթեկաններից դուրս էին վազել Եսթերը, Արշալույսը, Աստղիկը և տագնապ

բարձրացրել: Արտակ Մոկացը շատ ազոտ հիշում էր, որ իրեն մոտեցավ Անահիտը քողածածկ և տանջված, որ իրեն խնամում էին տիկիները, որ իր կողքին տնքում էր վիրավոր Զոհրակը, որին այցելում էր Աստղիկը: Նա չհարցրեց անգամ թե որտեղ է ինքը. շերմը խլում էր նրա գիտակցությունը: Ինչ-որ երազում, թե արթմնի նա լսում էր Վարդ սեպուհին, որ Գաղիշոն և Արտակ Ռշտունին թաքնվել են Ռշտունյաց լեռներում, թեև լուրեր կան, որ անցել են Սյունիք, ուր հավաքվել են բոլոր դավաճան նախարարները:

Միայն շպատմեց Անահիտի մասին՝ խնայելով նրան: Արտակը լսում էր այս ամենը և իսկույն մոռանում:

Ամբողջին տեր դառավ Վարդ սեպուհը, որ հավաքել էր վարդանանց կողմն անցած զինվորներին և շինականներին, զինել վերջիններին, պատրաստ վիճակում պահելով բոլորին՝ հանկարծակի հարձակման դիմադրելու: Միաժամ նա բուժի խնամքին էր հանձնել բոլոր զինվոր և շինական վիրավորներին:

Շուտով ամբողջ եկավ նաև Արտակ Մոկացի մայրը՝ Մոկաց տիկինը, և Արտակի խնամքը կատարյալ եղավ: Աստղիկի համար ոչ մի դժվարություն և արգելք չկար այցելել Զոհրակին, որպես վիրավորի:

Անահիտը բացել էր դեմքի քողը և չէր ծածկում իր խոշտանգումները Ռշտունյաց նախարարի ձեռքով: Նա տխրությամբ, հավիվ զսպելով արցունքը պատմեց իր հոր զնդանի կյանքը և հոր սպանությունը նույն նախարարի ձեռքով:

Տխուր առօրյան, Վասակի դավաճանության լուրը, Ռշտունիքի անորոշ, վտանգավոր վիճակը ամբողջ կյանքը դարձրել էր անհանգիստ, տազնապալի:

Հետզհետե ուժի գալով Արտակ Մոկացը սկսեց աշխույժ հետաքրքրություն ցույց տալ կատարվող դեպքերին: Սկսեց անհանգրստանալ: Փորձեց վեր կենալ անկողնուց, զգաց, որ այնքան թույլ չէ, բայց թողնել անկողինը մի փոքր վաղաժամ էր:

— Մեծ Տիկի՛նը, Անահի՛տ, մյուս տիկիները... — մի օր եռեկոյան ներս վազելով սրտատրոփ ասաց Աստղիկը:

— Ինչո՞ւ ես վախեցած, աղջի՛կս, — դեմ գնաց Ծաթերը:

— Էլի բորիկ են եկել, տեր աստված, — մրմնչաց Աստղիկը:

Արտակի մայրը, Եսթերը և Արշալույսը դուրս ելան դիմավորելու: Մամիկոնյան, Խորխոտունյաց, Գնունյաց, Ապահունյաց և այլ տիկիհներ, օրիորդներ խառն գեղջկուհիների հետ եկել էին Ռշտունյաց ամրոցը: Բոլորը նժույգների վրա էին, տիկիհները սև սգազգեստով, գեղջկուհիները միայն հերարձակ, բայց բոլորը բորբիկ, շնայած ցրտին: Այդ՝ Մեծ Տիկնոջ հրամանն էր: Բայց և նրանք սկսել էին համակերպվել:

Նրանք ներս եկան: Մեծ Տիկինը առաջինը մոտեցավ Զոհրակին, խիստ հայացքով նայեց, աղոթեց և ապա թեքվեց, համբուրեց նրա ճակատը, նստեց մոտը: Մյուսները ևս նստեցին, լռեցին երկար:

Դուան մեջ երևացին գեղջկուհիները:

— Արի՛, Եղի՛սա, նե՛րս արիք, քույրիկնե՛ր, աղջիկնե՛ր,— մեղմաձայն, տխուր հրավիրեց նրանց Մեծ Տիկինը:

Մեծ արժանապատվությամբ, առանց այլ անգամների անհամարձակության ու քաշվելուն ներս մտավ մի հարգևոր պառավ կին: Մյուսները հետևեցին նրան: Նրանք բոլորը հագել էին Պոնական զգեստներ: Եղիսան լուռ ու ներշնչված համբուրեց Զոհրակի ճակատը և նստեց: Մյուսները մնացին կանգնած ի պատիվ Մեծ Տիկնոջ:

— Աստված կյանքդ խնայեց, ձագուկս, արժանանաս մեծ պատերազմին,— ասաց Մեծ Տիկինը Զոհրակին:

Զոհրակը ցույց տվեց Մեծ Տիկնոջ բորբիկ ոտները.

— Մեծ Մայրի, ի՛նչ ես արել...

Մեծ Տիկինը լուրջ ու տխուր ասաց.

— Աշխարհը սո՛ւզ է, զավա՛կս...

Հետո նայեց Անահիտին.

— Արի՛, աղջիկս,— և գրկեց Անահիտին,— հիմա որ լրի՛վ դուստր ես...

Անահիտը լցվեց:

— Մի՛ լար, աղջիկս, հայրդ հայրենիին լցվեց:

— Հոգին լույս,— ասացին տիկիհները:

Եվ բոլորն արտասովեցին:

Սակայն ամենից մեծ հուզմունքի մեջ Փաղիշոյի մայրն էր, կինը և աղջիկը՝ Ողիմպիան: Նրանք լսել էին Փաղիշոյի և Արտակ Ռշտունու դավաճանությունը և շտապել էին Մեծ Տիկնոջ մոտ:

Ողիմպիան եկավ ընկավ Անահիտի գիրկը և բարձրաձայն հեկեկաց, Անահիտը հասկացավ նրան և ինքն էլ արտասովեց:

Յղիսան դարձավ դեպի Մեծ Տիկինը, խոնարհութիւն արեց և ապա ասաց մյուսներին.

— Մեր որդիքը այրուձի են քուշանաց կովում: Բարի մաղթենք նրանք էլ արժանանան հայրենիքի պատերազմին: Է՛հ, իշխանիկ, դու երանի ես, ապա ի՞նչ անեն մեր սրտի հատորները, որ օտարի հողին պիտի խառնվեն: Նրանց ո՞վ հասցնի հայրենի հող...

— Հայրենին կբաշի, կհանի նրանց, հույսդ ծո՛վ արա, Յղիսա,— մխիթարեց Մեծ Տիկինը:

Տիկիներն ու գեղջկուհիները անցան Արտակ Մոկացի մոտ: Արտակ Մոկացը թեև թույլ, բայց նստեց տեղում և երբ Մեծ Տիկինը մոտեցավ իրեն և ճակատը համբուրեց՝ նա էլ նրա աջը համբուրեց:

Մեծ Տիկինը ասաց.

— Մի՛ նեղվիր, զավա՛կս, կյանքդ մեծ օրվան պահիր:

• — Խոսքդ հրամա՛ն, Մեծ Տիկին,— ասաց Արտակ Մոկացը:

Մեծ Տիկինը՝ ինչպես երևում էր՝ կարևոր գործով էր եկել Ռշտունիք: Նա հավաքել էր և շարունակում էր հավաքել Բզունւյաց ծովի բոլոր նախարարական տների և շրջակա ուամիկ կանանցից մի խումբ ընդհանուր գործի համար: Նա կոչ էր ուղարկել բոլորին, որ հավաքվեն Ռշտունիք՝ Գեղեոնի և վերջին ըմբոստության կռվում Ռշտունի մյուս զինվորների ու շինականների շիրիմներին այցելելու:

Հետևյալ օրը եկան նոր այցելուներ՝ Արծրունյաց տիկինը և նրա դուստր Շամունեն իրենց աշխարհի մի քանի տասնյակ այլ տիկիներին և գեղջկուհիների հետ: Այն ժամանակ Մեծ Տիկինը կարգադրեց, որ վեր կենան և այցելին զոհվածների գերեզմաններին:

Հավաքվեցին նաև շինականներն ու ըմբոստացած զինվորները՝ Հաբել նահապետի և Վարդ սեպուհի հետ:

Ռշտունյաց հանգստարանում առանձին քարակույտերի տակ ծածկված էին զոհվածների շիրիմները: Տիկիները հավաքվեցին նրա շուրջը: Անահիտն ու Ողիմպիան ընկան Գեղեոնի շիրմի վրա

և սկսեցին լաց լինել: Եսթերն ու Արշալույսը լուռ հեկեկում էին հեռու կանգնած: Մեծ Տիկինը խիստ նայեց նրանց և ասաց.

— Մի՛ լաք, ուրախացե՛ք, զոհվածները հաղթեցի՛ն:

Հետո աղոթեց, ապա դարձավ տիկիններին.

— Է՛հ, շմռուններ՝ մենք էլ հասնենք հաղթության: Արժա-  
նիի՛ն արժանանանք: Մեր զինվորյալ մանկունք, մեր Սպարապե-  
տը, մեր զորագլուխները իրենց անձը պիտի զենն մեծ գործին,  
մենք էլ՝ տիկնայքս Հայոց աշխարհի, ուխտ զնենք, անձներս նվի-  
րենք մեծ նեղության, հավատարիմ մնանք հայրենիին:

— Ամե՛ն,— մրմնջացին տիկինները և գեղջկուհիները:

Եղիսան դարձավ Մեծ Տիկնոջը, խոնարհություն արեց և ա-  
պա դառնալով մյուսներին՝ ասաց.

— Չարը բարուց մեծ է: Չարը՝ աժդահա գազան, բարին՝  
մանուկ: Ուզում է խեթել, փշացնել: Մենակ դա նրա կամքը չէ:  
Քանի որ աշխարհքի գրվածքն այն է՝ վերջը բարին պիտի հաղ-  
թի: Ուժ տանք բարուն, թող աշխարհքի տերը բարին դառնա: Մեծ  
Տիկին, աստված սուրբ սուր անի Սպարապետը, որ աշխարհքի  
փրկության համար վեր է կացել: Մենք էլ դիմանանք՝ շատ ենք  
դիմացել, կռվենք՝ շատ ենք կռվել:

— Բերանդ տաճա՛ր, Եղի՛սա,— ասաց Մեծ Տիկինը,— դե,  
ուխտներս ամուր, հավատներս մաքուր: Գնա՛նք ընկնենք աշ-  
խարհ, մեր ուխտը կատարենք:

Նստեցին շուրջանակի, մեջտեղը Մեծ Տիկինը, իր աջ ու ձախ  
կողքին Գաղիշոյի մայրը և Եսթերը: Անահիտը Ողիմպիայի և Շա-  
մունեի հետ առանձնացավ մի անկյուն, ուր Անահիտն ու Շամու-  
նեն սկսեցին մխիթարել Ողիմպիային, որ նրա հոր հանցանքը ըն-  
տանիքի վրա չի ժանրանում:

— Ես իմ ծնողիս եմ ցավում,— լցվեց Ողիմպիան,— իմ  
ծնողս եմ կորցնում. եթե ոչ՝ ես իմը չեմ հոգում: Ա՛խ, այնքա՛ն  
խելոք, մտածող մարդ, ինչպե՛ս ընկավ դավաճանի ձեռքը...

— Ի՛նչ կարող ես, Ողիմպիա,— ասաց Շամունեն,— պիտի  
հրաժարվես ծնողիցդ:

Ողիմպիան հեկեկաց.

— Ինչպե՛ս կրեմ նախատինքը... Դավաճանի դուստր... Ինչ-  
պե՛ս երևամ Սպարապետին, ինչպե՛ս նայեմ մարդկանց երե-  
սի՛ն...

Սրահում սկսվել էր ընդհանուր խոսակցութիւնն Գաղիշոյի և Արտակ Ռշտունու մասին: Գաղիշոյի մայրը արցունքն աչքերին լսեց Մեծ Տիկնոջ խոսքերը Գաղիշոյի մասին:

— Հույ, ապավենս Գաղիշո իշխանս էր, Մեծ Տիկին, կզա, ասում էի, Սպարապետին սատար կլինի:

— Դավաճանեց գնաց, Խորխոռունյաց տիկին,— ասաց Եսթերը,— հիմա հրաժարվիր, այլևս որդի չունես:

— Ա՛խ, մսթեր սեպուհի,— հառաչեց Գաղիշոյի մայրը,— մայրը կասի՞ թե որդի չունեմ:

— Մի վշտանար, Խորխոռունյաց տիկին,— ասաց Մեծ Տիկինը,— մեծ օրեր եկան, սրտներս փոխեցին: Հիմա էլ ո՛չ որդի, ո՛չ մայր: Հիմա հայրենին արինք մայր, հայրենին բոլորին՝ որդի:

— Այդպե՛ս է, այդպե՛ս է,— լսվեց բոլորի հավանութիւնը:

— Ի՞նչ որդի, ի՞նչ ամուսին, ի՞նչ ազգական,— հանկարծ բորբոքվեց Եսթերը,— դավաճանին մահ է պետք, ոչ թե սեր ու արտասուք: Թող ձեռքս ընկնի դավաճան փեսաս՝ կտոր-կտոր կանեմ, կածեմ անդունդը:

— Մի՛ այդպես, մի՛, մայրիկ,— վախի զգացմունքով ասաց Արշալույս տիկինը,— քարերը լուրը կտանեն, կզա գազանը:

— Կասեմ ու բարձր էլ կասեմ,— սպառնաց մինչև հոգու խորքը վիրավորված կինը,— թող գա: Գա՛ ո՛ւմ պիտի սպանի: Նա ինձ սպանել պրծել է:

Եվ քանի Արշալույսը ջանում էր հանգստացնել Եսթերին՝ այնքան սա բորբոքվում էր և ցատումնալի դառնում:

— Թո՛ղ, աղջիկս, թո՛ղ,— ասաց Մեծ Տիկինը,— Եսթերը գինձորյալ է գրվում: Թող կովի՛ իր կոխվը:

— Թող կովի իր կոխվը: Իսկ մեր կոխվը ո՞վ կովի,— փռշոտ եղունգները որդու գերեզմանատեղից դուրս քաշելով և սև ու շոք ձեռքերը շոքելով օդի մեջ շարացած ձայնեց մի գեղջկուհի: Գա հանդուծին օգնող և յուրայիններին ամաչեցնող և ուրացյալ նախարարների դեմ զորքի հանելուն կողմնակից գեղջկուհին էր, Մարիամը,— մեր կոխվը ո՞վ կովի:

Լոեցին բոլորը:

— Տեսե՛ք, մի սեպուհ է սպանվել բռնավորի ձեռքից՝ հիմի ի՛նչ սուգի մեջ եք, ա՛յ տիկիներ, օրիորդներ: Հապա էսքան մատաղ ժողիկները, որ հարյուրներով կորցրել ենք, բա մենք քա՞ր

ենք, ժե՛ռ ենք, հո՛ղ ենք: Ո՞ւմ համար ենք վեր կացել միշտ, ո՞ւմ կոփվն ենք կուվել, ո՞ւմ աշխարհքն ենք պահել: Զե՛ր աշխարհքը, ձե՛ր հողը, ձե՛ր բարիքը շի՛: Մեջն ի՞նչ ենք ունեցել: Թե մենք էլ աշխարհք ունենք՝ մեզ ո՞վ է տվել մեր աշխարհքը: Հողն էլ ձերն է եղել, աշխարհքն էլ: Հիմի էլ վեր կացել՝ ձեզ համար աշխարհքն ենք պահում, բա էս օրը կգցե՛ն, որ գցեցիք մեզ: Բա է՛ս է արդարությունը:

— Մարիամ, — զգուշացրեց նրան մի գեղջկուհի:

— Գիտե՛մ, աղջի՛կս, գիտեմ, Մարիամ գեղջկուհի. համբերիր: Աստված մեզքը իշխանականին տվեց, ցավը՝ շինականին: Գրա համար էլ պատիժը բերեց թափեց իշխանականի գլխին:

Մեծ Տիկինը կարծում էր թե այս ժիշխանականի և շինականին» ուխտը, միացյալ պատերազմը, միատեղ զոհը կարբի, կհավասարեցնի, կհաշտեցնի անհաշտելին՝ տիրոջն ու ծառային: Բայց որքան թափանցում էր նա իր իմաստուն, զգոն խղճով՝ խորթությունը խորանում էր:

— Նահատակվենք՝ հավասարվենք. կյանքներս հայրենիքին զոհ տանք, մեղքներս քավենք: — Ի՞նչ ասեմ, ամենաողորմածն աստված ի՛նքը հասնի՛ առաջ ձե՛զ, հետո մե՛զ:

Երկկոյանում էր: Բոլորը համբուրեցին Գեղեցնի և մյուս գինվորների գերեզմանները և վերադարձան ամրոց:

Մեծ Տիկինը կարգադրեց պատրաստվել հետևյալ օրը ճանապարհ ընկնելու դեպի Մոկք, Արծրունիք, Բզնունյաց ծովի հյուսիսային աշխարհները: Վեր կացնելու «Տիկնայք հայոց աշխարհի» անխտիր իշխանազուն և ռամիկ կանանց՝ հավասար ու հասարակ մի ընտանիքի մեջ:

Տիկնայք Հայոց աշխարհին հավաքվեցին սրահը, ուր Եսթերն ու Արշալույս տիկինը բոլորին ընդհանուր սեղան տվին:



Կեսգիշերին ամրոցի մոտերքից հանկարծակի աղմուկ լսվեց: Քառատրոփեցին նժույզներ, կոփկոփեցին վահաններ, սրբը զնգացին ու շուտով ճիշ, անեծք, գոշեր իրար խառնվեցին: Արտակը շնայած իր թուլության վեր թռավ անկողնից ու սուրը խլելով զուրս վազեց շապկանց: Նրան հետևեց Զոհրակը: Ներս ընկավ Վարդ սեպուհը:

— Տե՛ր Մոկաց, նախարարը հարձակվե՛ց...»

— Գրսի զինվորներին՝ դարբասը, ներսիններին՝ աշտարակը, — գոչեց Արտակ Մոկացը:

Վարդ սեպուհը դուրս վազեց բակը և արագ կատարեց հրամանը: Արտակ Մոկացը և Ջոհրակը շապկանց վազեցին աշտարակ: Հետևից Անահիտն ու Աստղիկը թիկնոցներ հասցրին նրանց: Եվ սրանք աշտարակից սրերը ճոճելով նշաններ էին տալիս զինվորներին, որ ցրիվ ու շփոթված կովում էին, բայց չէին կարողանում համաձայնեցրած հարված հաջողեցնել: Արտակ Ռշտունին լավ էր հաշվի առել գիշերային անակնկալ հարձակման հաջողութայն հավանականությունները:

— Դեպի դարբասը, — գոչեց Արտակ Մոկացը կոկորդային ձայնով և իջավ դարբասի մոտ:

Ձինվորները խմբվեցին դարբասի մոտ և բոունցք կազմեցին օգտվելով աշտարակի ներհակողների տեղացող նետաձգությունից, որ նեղել սկսեց թշնամուն:

Տիկինները պատուհանից դիտում էին մարտը և հառաչում անձկությամբ: Գիշերային խավարը ծածկում էր մարտի տեսարանը, բայց ձայներն ու աղոտ կերպարանքների իրարանցումը թույլ շափով հասկացնում էին, թե ինչ է տեղի ունենում:

— Աստվա՛ծ, աստվա՛ծ, — ողբում էր Արշալույսը, — հիմա ներս կմտնի:

— Ներս չի՛ մտնի... Կխավարե՛մ նրա օրն ու արևը, — զայտարալի շեշտով ասաց Ծսթերը և սուրը վերցնելով իջավ ցած:

— Սեպհուհի՛, սեպհուհի՛, — գնացին նրա հետևից տիկինները:

Ծսթերը կատաղել էր, շէր լսում:

Դուրսը կովողների ձայների հետ խառն լավում էր զանազան տեղերից օղը ճեղքող կանացի սուր ճիշեր, որ կովին տալիս էր անօրինակ, տագնապալի մի անհանգստություն: Լավում էր Մարիամի կոհնըր:

— Մա՛րդ, վրա՛ տվեք, ջարդե՛ք դրա գլուխը...»

Կանանց ճիշերն ուժեղացան, մոտեցան դարբասին: Լավեցին նաև շինականների գոռգոռոցները:

Արտակ Մոկացը զգաց, որ պատեհ պահն է, հրամայեց դարբասը բանալ: Իսկույն նիզերը հանվեցին, փեղկը ետ գնաց, և

ամբողջի բակում հավաքված զինվորները դուրս թափվելով այնտեղի հավաքվածների հետ հարձակվեցին գիշերահարձակների վրա: Եսթերն ու Մարիամը, Եղիսան մյուս գեղջկուհիների հետ գնացին դեպի կովողները:

Հետևանքը մեծ շեղավ: Բայց դա այնքան օգնեց, որ գոնե ձգձգեց գործը և Արտակ Ռշտունուն խանգարեց գիշերային հարձակման անակնկալից օգտվել և կոտորել ամբողջի պաշտպաններին: Նրան կասեցրին՝ արյունահեղ մարտի գնով: Արտակ Մոկացը սակայն տեսնում էր, թե ինչպես Արտակ Ռշտունին այնուամենայնիվ հետզհետե սեղմում է ամբողջը: Վիճակը տագնապալի դառավ:

Եվ Արտակ Ռշտունին կվերցնեք ամբողջը, եթե այդ պահին շենային ձորից չհարձակվեք վրա հասնող շինականների զանգվածը, որ եկավ ու թափով խրվեց Արտակ Ռշտունու զորագնդի մեջ: Սկսվեց կատաղի ձեռնամարտ:

Այդ պահին դեպի զինվորների խտությունն էր գնում Եսթերը: Վտանգը չհասկանալով և արհամարելով՝ նա վազեց, հասավ Արտակ Ռշտունուն, որ այդ միջոցին զինվորների խիտ շարքի միջից դուրս եկավ և առաջ էր մղվում գրավելով իր հետևից զորագունդը: Մինչ շինականների ու Արտակ Ռշտունու ըմբոստացած զինվորները կհարձակվեին նրա վրա, Եսթերը անխոհեմ ու անմատածելի վազեց դեպի նա:

Գեղջկուհիները, որ սուր վրեժխնդրությամբ ծարավի էին՝ հանկարծ զգացին, որ այստեղ, այս պահին արդեն տեղն է ու պատշաճը լուծելու իրենց դառն կյանքի վրեժը:

— Զարկե՛ք մի դրան, շա՛ն սատակ արեք, — ճշաց Մարիամը և Եղիսայի հետ հարձակվեց Արտակ Ռշտունու վրա: Մյուս գեղջկուհիները խելագար թափով վազեցին հետևից: Թիկնապահները հարվածեցին գեղջկուհիներից երկուսին, սակայն սրանց պարզամիտ ու անմտածել հարձակման ձևը գերազանցեց ձեռնամարտի բոլոր ձևերն իմացող զինվորների իմաստությանը: Գեղջկուհիները իրենց մարմնով խցեցին ու խեղդեցին տարածությունը՝ կաշկանդելով թիկնապահների ու Ռշտունու ամեն շարժում: Մարիամի սրի հարվածը վայր գցեց նրան: Ռշտունու զինվորները ուշքի եկան ու թափով հարձակվեցին կանանց վրա: Բայց շինականները ըմբոստացած զինվորների հետ հարվածը խտացրին այստեղ: Մեծ կո-

րուտների գնով թշնամին տեղի տվեց և նահանջեց: Կանայք ամբողջից գուրս վազեցին օգնելու վիրավորներին:

Ցասումնալի Եսթերը քարշ տալով ամբողջ էր բերում վիրավոր, նախարարին: Քարշ էր տալիս, հետը թուփահարում և անիծումը թքում:

— Ո՛ւր ես քաշում, Եսթեր սեպհուհի, թող այստեղ վերջանա,— հորդորեցին մյուս տիկիները և փորձեցին ձեռից խլել վիրավորին:

— Թողեք, ե՛ս քարշ տամ շանը,— մեջ ընկավ կատաղած Մաքրիամը,— սա հոգիներս է վառել, մարմիններս մաշել...

— Մենք է՛լ, մենք է՛լ,— ճշացին գեղջկուհիները ցասումնալից:

Ու հարձակվեցին խելագար, անհագ վրեժի կրքով, խառնաձիշ անեծքներով ու հիշոցներով:

— Արընկե՛ր գազան...

— Շո՛ւն, շնչահավատ...

— Կյանքնե՛րս կերավ...

— Ծապղեցրե՛ց հարկի, տուրքի տակ...

— Հերիք է՛, հերիք է՛, դե գնա ճապղի՛, սատկի՛...

Եվ որ ամենից անսպասելին էր՝ մեջները ամենից կրքոտվածք Եղիսան էր, որը մի փոքր առաջ համբերատար խորհրդածում էր Մեծ Տիկինոջ առջև: Նա վերցրեց քարը և այն է՛ ձեռը թափ առավ, որ զարկի նախարարին՝ ուրիշները նրա առաջը կտրեցին, իրենք ընկան նախարարի վրա:

Շինականներն ու զինվորները հետաքրքրված, ապա հետզհետե իրենք ևս սրտների վրեժը դրսևորելով վազեցին շրջապատեցին ատելի նախարարին: Նրանք տեսնելով, որ կանայք թերևս իրենցից ավելի ատելությամբ ծայր աստիճան բռնկված վերջ են տալու բռնավորին՝ սկսեցին պտտվելով շուրջը՝ կիսաձայն հայհայել նախարարին ու հետևել Եսթերին, որ թևերից բռնած քարշ էր տալիս նրան:

Ուզեցան օգնել նրան՝ թույլ չտվեց:

— Թողե՛ք, իմ վրեժը իմ ձեռքով պիտի հանեմ:

Նա խելագարվում էր: Դա մի նոպա էր կատաղության, և վրեժխնդրության: Մեծ Տիկինը պատշգամից նայում էր և հեռավար սարսափահար:

- Հոգիները կրակն է, պիտի վրեժն առնեն՝ նոր հանգչեն...  
**Ա՛խ**, ինչ օրի հասցրին շինականին:
- Եսթերը քարշ տալով Արտակ Ռշտունուն տարավ զնղանը, նե-  
 անց Գեղեճնի սպանված տեղը:
- Պղծեցի՛ր, սեպհուհի, զինվորյալի՛ն խնայիր,— աղաչում էին տիկիները:
- Հիմա՛ կլվամ պիղծը... — մոռաց Եսթերը և շղթաները անցկացրեց վիրավորի ձեռներն ու ոտքերը: Հետո նայեց նրան: Արտակ Ռշտունին տնքում էր: Սպասեց մի փոքր մինչև լավ ուշ-  
 քի գար: Նայեց կրկին: Վիրավորը աչքերը բացեց: Այդ միջոցին առաջ եկավ Արշալույսը և շոքեց մոր առջև:
- Ի՛նձ խնայիր, մայրիկ, նա իրենն ստացավ, հերի՛ք է:
- Քաշվի՛ր,— գռչեց Եսթերը:
- Արտակ Ռշտունին ուժ հավաքեց և թույլ ձայնով ասաց.
- Դավաճանի տակը մա՛րդ կա: Գոնե մարդո՛ւն ձեռ մի տար:
- Մարդը, որ մեջդ լիներ՝ այսքան արյունը չէիր թափի:
- Դու անպատվում ես հայրենիի զինվորին,— մոռաց Ար-  
 տակ Ռշտունին:
- Դավաճա՛ն, օտարի շո՛ւն, խոսո՞ւմ ես... դե՛, սատկի՛ր քեպուհի շղթաների մեջ: «Ա՛յժ է, ա՛յժ է»,— ասաց Եսթերն ու ակսեց սրով հարվածել: Այնքան հարվածեց, որ վիրավորը մեռավ:
- Դե, չբացա՛ր, թող զինվորյալները հանգիստ քնեն հողի տակ:
- Ցասումնած Մարիամը նետեց քարը նախարարի դիակի վրա: Մյուսները ևս իրենց քարերով ծածկեցին այն:
- Ազատում չկա՛, գազաններից ազատում չկա՛, քրքրեցի՛ն մեզ... Ազատում չկա՛, չկա՛, չկա՛: Մեկը գնում է, մյուսն է գա-  
 լիս, սա էլ գնում է, ուրի՛շն է գալիս... Ազատում չկա՛...
- Կա՛ ազատում, Մարիամ, կա՛, կա՛ դատաստան, կա՛, լցվելուն լցվե՛ց, վերջանալուն վերջացա՛վ,— գռչեց Եղիսան:
- Եսթերը որ դողում էր և նայում դիակը ծածկող քարերին՝ հե-  
 վաց, ծանր շունչ քաշեց ու դուրս եկավ, գնաց օթևան:
- Ախոռապետը, որ հեռուն կանգնած դիտում էր գեղջկուհիների ցասումը՝ մոտ եկավ ու փորձեց սաստել.
- Դե՛, դե՛, դե՛, քաշվե՛ք:

Մարիամը քարը վերցրեց ու շարժեց նրա վրա:

— Դե՛, իշխանի շո՛ւն...

Կանայք վերցրին քարերը, բայց ախոռապետը նապաստակի արագությամբ փախավ:

Եսթերը մտավ սրահը: Բոլոր տիկիները սարսուռ զգացին և ակամա ետ-ետ գնացին: Նրա հետևից եկավ Արշալույսը և շոքելով անկյունում գորգի վրա՝ սկսեց հեկեկալ:

— Դե՛... լաց չկա՛... շնորի համար լաց չեն լինի:

Ոչ ոք չխոսեց: Միայն Եսթերը երկար լուռթյունից հետո ասաց.

— Թշնամի՛ պարսիկին են ասում: Թշնամի պարսիկին են սպանում: Պարսիկից մեծ թշնամուն ինչո՞ւ են խնայում: Ափսո՛ս, առաջ պիտի անեի, ուշացա, այսքան արշունը գնաց:

— Օ՛օ՛ֆ, գնա՛ց, բայց ազատվեցի՛նք,— հառաչեց Մեծ Տիկինը,— արյուն այնքա՛ն պիտի գնա, այնքա՛ն արյուն պիտի գնա...

Ու մինչ տիկիները այս գեպքի ազդեցության տակ հուզված խոսում էին, անկյունում հավաքվել էին Արշալույսը, Անահիտը, Աստղիկը, Ողիմպիան և Խորխոռունյաց տիկինը: Արշալույսը լաց էր լինում և վշտացած խոսում այն մասին, որ կարելի էր նախարարին դարձի բերել: Նրան լսում էին լուռ: Տագնապի մեջ էին Խորխոռունյաց տիկինը և Ողիմպիան՝ մտահոգվելով, թե արդյոք Գագիշոն հարձակվողների մե՞ջ էր և ինչ եղավ նա:

Գիշերը բավական անց էր, որ հեծյալները խլրտացին դարբասի մոտ: Արտակը, որ շէր քնել՝ հրամայեց իր օթևանի դռան մոտ նստած թիկնապահին տեղեկանալ, թե ինչ աղմուկ է դուրսը: Թիկնապահը վերադարձավ հեծյալների գլխավորի հետ, որ հայտնեց թե Խորխոռունյաց նախարարը արշավում է Ռշտունիք:

— Որտեղի՞ց է արշավում,— հարցրեց նա հեծյալների գլխավորին, որ առաջ եկավ:

— Արծրունիքի վրայով,— ասաց հեծյալը,— Տոսպը վեր է կենում պաշտպանվելու:

— Ի՞նչ է անում Գասպար սեպուհը:

— Արշավող զորագնդի մեջ է:

— Մե՞զ վրա է արշավում...

— Հրամանք ես, իշխան:

— Հիմի էլ ուխտյալնե՞րն են դավաճանում...

Արտակը դարձավ զհինվորներին, որ հավաքվել էին.

— Լավ եք կովում, — ասաց Արտակը, — բայց շատ կորուստ եք տալիս: Գա նրանից է, որ կարծում եք թե մի երկու կովով քործը կվերջանա: Ոչ: Գործը նոր է սկսվել: Ահա հորիստուսնյաց դավաճան իշխանը գալիս է մեղ վրա: Սա մեծ կոհիվ է: Հայոց աշխարհի կոհիվն է հայ դավաճանների և պարսիկ բռնավորի դեմ:

— Կոհիվը ժողովրդի կոհիվ է, — ասաց Արթենն քեռին, — ազատութեան կոհիվ է, դավաճան իշխանների դեմ կոհիվ է, որ ուզում են մեզ ծախել պարսից բռնավորին: Հուր հավիտյան չենք ազատվի: Կովեցեք:

— Սուրբ խոսք, — ասաց մի հին զինվոր:

— Կովենք ու գնանք Հայոց աշխարհ վեր կացնենք բռնավորի, իշխանի դեմ:

— Վեր կացնենք, Արթենն քեռի, — ասաց մի հին զինվոր, — մենք քո պատիվը իբրև ազգի պատիվ պահեցինք էն օրը:

— Իշխանը մեզ շատ է տրորել, պլոկել, — ձայն տվեց դառն ձայնով մի շինական:

— Մենք էլ շինականից ենք, քար ավազից չենք, — խոսեց մի այլ զինվոր:

— Դանակը ոսկրին հասավ, — կցեց մի ուրիշը:

Արտակ Մոկացը ձեռով արեց, որ լսեն իրեն:

— Դե, որ այդքան հասկանում եք՝ այս կոհիվը համարեցեք ձեր կոհիվը և միաբան, կարգով կովեցեք:

— Հրամա՛նդ, — պատասխանեցին զինվորները:

— Հիմա գնացեք պատրաստվեցեք, որ վաղը ճանապարհ քիտի ընկնենք հորիստուսնյաց իշխանի դեմ:

Ձգաց Արտակը, որ մեծ հրդեհն ընկավ, և որ այդ հրդեհը կգնա, կճարակի ողջ Աշխարհն հայոց և կհանգչի այն ժամանակ միայն, երբ կհանգցնի երկրում ամեն թշնամական դավ ու խարդավանք, ամեն ոխ ու ատելություն, ամեն բռնակալական գողություն հայ ժողովրդի հանդեպ:

Արտակն իսկույն սուրհանդակներ ուղարկեց Արծրունիք՝ հրամայելով, որ այնտեղ սկսեն թեթև դիմադրություն՝ մինչև Մոկքից և Ռշտունիքից օգնություն հասնի: Հարկ եղած դեպքում նահանջը ուղղել ոչ Մոկք, այլ Ռշտունիք: Այլ հեծյալներ ուղար-

կեց Մոկբ հրամայելով զորագունդը արագութեամբ հասցնել Արծա-  
րունիք օգնութեան: Նաև հեծյալներ գնացին Տարոն, Գնունիք, և  
վերջապես Ատոմին՝ հարկավոր տեղեկութիւններով: Իսկ Արթին  
քեռին շինական ազդեցիկ մարդիկ ուղարկեց շեները վեր կացնե-  
լու ժողովրդին և լրացուցիչ ուժեր բերելու Ռշտունիք:

Զինվորները ցրվեցին: Արտակը վերադարձավ ամրոց և  
Զոհրակին հայտնեց, որ վաղը ինքը պիտի մեկնի: Զոհրակը հուզ-  
վեց, անհանգստացավ:

— Ես էլ կգամ... — ասաց նա և վեր կացավ անկողնից:

— Գու շես կարող,— ասաց Արտակ Մոկացը,— և դեռ չգի-  
տեմ՝ պիտի կարողանամ ես գնալ:

— Ինչ որ դու, իշխան, այն էլ՝ ես: Ես էլ կգամ,— պնդեց  
Զոհրակը,— սրանից հետո էլ ի՞նչ վիրավոր, ի՞նչ առողջ:

Արտակը ուղղակի շպատասխանեց: Նա ուրիշ մտքերով էր  
տարված:

— Սրա ծայրը շեմ տեսնում,— ասաց նա վրդովված,— ի՞նչ  
դուրս եկավ: Վերջ ի վերջո մենք Հազկերտի՞ դեմ ենք կռոււմ,  
թե՞ դավաճանների: Ես տեսնում եմ, որ մենք սկսել ենք մի ծանր  
անվերջ ազգամիջյան կռիւ, որ մեզ պիտի խժռի նախ քան կգտ  
Հազկերտը: Ի՞նչ պիտի լինի վերջը: Գոնե Սպարապետը շուտ  
գար: Եվ շպասելով Զոհրակի խոսքին՝ հեռացավ իր օթեանք  
ներս մտով Աստղիկը: Նա մի մատյան բերեց և նստեց բուժի  
կողքին: Բուժը՝ մի ժիր գեղջկուհի՞ որ սպեղանիից ավելի զվար-  
ճալի պատմութիւններով էր բուժում՝ անկյունում նստել էր լուռ  
Աստղիկը նստեց Զոհրակի դիմաց և սկսեց կարդալ մատյանը:

Աստղիկը Զոհրակի մոտ մտնելու ոչ մի այլ իրավունք չունեց,  
բայց միայն վիրավորին այցելելու ազատ իրավունքը:

Զոհրակը, որ դեռ խորխոռունիքի անջատման պահից մինչև  
հիմա չէր կարողանում հասկանալ Աստղիկի հանկարծակի սառ-  
նութիւնը՝ պահպանում էր Աստղիկի նոր վերաբերմունքի եղա-  
նակը և գոհանում էր միայն գաղտնի երազանքով: Նրան շերմաց-  
նում էր Աստղիկի ներկայութիւնը, գեղեցկութիւնը, մտերմու-  
թիւնը և հոգատար խնամքը: Սրտի խորքում նրան հաճելի էր  
Աստղիկի այցելութիւնները չհամարել միայն վիրավորին տաժաժ  
մի համակրանք, զգալ դրանց տակ թաքնված սիրո զգացմունքը-  
«Անշուշտ մի բան կա նրա սրտի մեջ», — փայփայում էր Զոհ-

ըսկը այս միտքը իր սրտում: Աստղիկը, որ Ջոհրակին հանդիպելու առաջին իսկ պահից համեստորեն տենչում էր միայն նրան 'ծառայել'՝ այժմ նա ևս երջանիկ էր համարում, որ ճակատագիրը թյսպես էլ բերեց հանգամանքը...

Աստղիկը լուռ կարդում էր, իսկ Ջոհրակը նայում էր նրան, որ երկար արտևանունքները կախած մատյանի վրա՝ թվում էր թե նայում է մատյանից այն կողմ մի անդնդային խոր աշխարհ: Արդյոք մատյանի բովանդակությունն էր նրան այդքան հափըշտակել, թե՞ այլ բան: Ջոհրակը շհարցրեց, որ նա չսթափվի: Չըհարցրեց, թե արդյոք քաղցր էր երազելը, թե՞ այդ մատյանի մեջ գրած է մի գեղեցիկ, վեհ պատմություն:

Ջոհրակը դիտում էր Աստղիկի ողջ կերպարանքը — դա մի հպարտություն էր տեղովը: Եվ Ջոհրակը երազեց, որ ահա՛, ահա՛ մեծ պատերազմը կգա կանցնի ինչպես մորիկը, և Աստղիկը կմըհա՛ ինչպես ծաղիկը մորկից հետո, և ինքը կերջանկանա նրա կողքին, «Մ՛հ, կովե՛լ, հաղթե՛լ, սիրե՛լ, ապրե՛լ», — հառաչեց Ջոհրակը լսելի: Բայց Աստղիկը անշարժ, խորասուլզ կարդում էր:

Հեծկլտոցի մի ձայն սթափեցրեց սակայն Ջոհրակին և Աստղիկին: Միջանցքից էր: Մեկը հեծկլտաց ու անցավ: Աստղիկը գնաց միջանցք: Դա Ողիմպիան էր, որ իր մոր հետ գնում էր իրենց հատկացրած օթևանը:

— Ողիմպիա օրիորդ, — հասավ հետևից Աստղիկը:

Ողիմպիան ընկավ նրա գիրկը:

— Ես կմեռնեմ, ես չեմ տանի այս վիշտը, — ասաց Ողիմպիան:

— Ողիմպիա օրիորդ, դու հո քո հոր հանցանքի պատասխանը չպիտի տաս, ինչո՞ւ ես վշտանում:

— Ա՛հ, գիտես թե փո՞քր բան է դավաճան հայրը: Ես չեմ կարողանում սրահում մնալ: Երանի՞ քեզ, երանի՞ քեզ...

Աստղիկը Ողիմպիայի մեջքը գրկած տարավ օթևան և ողջ ժամանակ իզուր մխիթարություններ էր ասում: Մայր ու աղջիկ լալիս էին:

Արտակ Մոկացը և Անահիտը այլ աշխարհում էին: Արտակը աշխուժացել էր, նոր ուժ էր եկել վրան: Վաղվան արշավանքը նրան կենդանացրել էր, երջանկացրել, թեև մեծ հոգսեր և մեծ տարակուսանքներ կային այդ գործի մեջ:

— Անահիտ, լա՞վ է, լա՞վ է ապրելը, — ասաց Արտակը, — հավատում եմ՝ կապրեն այս լեռները, ջրերը, մարդիկ, կապրի այս բոլորը — ասել է՝ ես էլ կապրեմ: Եվ հիմա ես պատրաստ եմ կյանքս զոհելու:

Անահիտն ընկավ նրա ուսին.

— Ո՛չ...

Եվ արտասովեց:

— Մի՛ հուզվիր, ես ուրի՛շ բան եմ ասում:

— Մի՞թե կյանքը չես սիրում, որ ուզում ես...

— Սիրո՞ւմ եմ կյանքը, Անահի՛տ, տենչո՞ւմ եմ տենչալով, այնպե՛ս քաղցր է կյանքը: Հավատում եմ կյանքին, դրա՛ համար էլ պատրաստ եմ մեռնելու:

— Ախր ինչո՞ւ, ինչո՞ւ...

— Անահիտ, շգիտեմ ինչպես ասեմ: Հոգով սիրում եմ կյանքը. մեր հայրենիքը, ժողովուրդը և ասում եմ. թող նա մնա՛, մի՛ ա՛յն թե մնա, ապրի այս բոլորը, հավիտյան ապրի՝ թող այդ լի՛նի թեկուզ իմ կյանքի գնով: Դա կյանք է, այդպես մեռնելը: Այդ հավատով մեռնելը: Դա է կյանքը: Առանց այդ ամենի մարգոս սեփական կյանքը կարճօրյա է և ունայն: Ես ուզում եմ հավիտյան ապրել: Եվ հավիտյան ապրել կարելի է հայրենիքի կյանքով: Չգիտեմ, թե՞րևա դա էլ զաղտնիքն է հոգեկան մի զաղտնի զորության: Քեզ մի դեպք պատմեմ: Զարմանալի դեպք: Մեր մեղվանոցում էր դա: Մեղրը թափվել էր մրջնանոցի վրա և փակել բնի անցքը: Ոչ բնից էին կարողանում դուրս գալ և ոչ հեռացածները օգնություն հասցնել բնին: Եվ գիտե՞ս ինչ եղավ: Դրսի մրջյունները սկսեցին մեկ մեկ ընկնել խեղզվել մեղրի մեջ: Այնքան ընկան, որ իրենց դիակներով ծածկեցին մեղրի երեսը, ճանապարհը գցեցին և դրսի մրջյունները նրանց վրայով անցան հասան բնի մրջյուններին օգնության: Մրջնանոցը փրկվեց: Կա մարդու մեջ մի ներքին զորություն անմահանալու: Ավանդելով կյանքը սերունդին ու մարդկության՝ ապրել նրա մեջ: Կարծում ես զո՛ւր մեռավ Գեղեոն սեպուհը: Ոչ: Տես նրա գերեզմանը ինչ շարժում գցեց մարդկանց մեջ, տես ի՞նչ կոհվ են մղում մարդիկ:

Անահիտը լցվեց: Հասկացավ Արտակին: Նա ինքը պատրաստ էր իր կյանքը նվեր բերելու: Հիշեց իր խոշտանգումները զընդանում:

Հետևյալ առավոտ ամրոցի հրապարակում հավաքվեցին շինականներն ու զինվորները: Տիկնայք Հայոց աշխարհին դուրս եկան քաջալերելու կոխվ գնացողներին: Մեծ Տիկինը օրհնեց բուլորին և զորագունդը՝ զինվոր ու շինական միասին՝ Արտակ Մոկացի, Զոհրակի, Արթեն քեռու և Վարդի գլխավորությամբ ճանապարհ ընկավ դեպի Արծրունիք՝ Գաղիշոյի դեմ:

Գնում էր Արտակ Մոկացը Արթեն քեռու հետ առաջ ընկած: Քայց նա զգում էր, որ այժմ արդեն հրամանատարը Արթեն քեռին է: Դա նրան ուրախացնում էր, բայց և միաժամ մտահոգում:

Այսպիսով, այն աշխարհից, որտեղից ոչ ոք չէր սպասում, — Ռշտունիքից, — հանկարծահաս հեղեղի մեծազանգվածությամբ վեր կացավ արագահաս եկավ, գրկեց, բարձրացրեց ու իր հետ տարավ այդ ամենը ժողովրդական իսկական ապստամբությունը, որ վրայից թափ տվեց նախարարների, տերերի, բռնակալների լուծը: Գնաց նա մրրկասույր, ցնցահարեց Մոկքը, Արծրունիքը, Տարոնը, Խորխոռունիքը, ծավալվեց ավելի հեռուները, իր տարբերային անդիմադրելի ուժով:

Եվ Հայոց աշխարհում ցցվեցին իրար դեմ վարդանանք և վասակյանք: Վասակը վասակյանց հետ բռնեց Այրարատյան դաշտը, Ատոմը՝ վարդանանց կուսակից Արշարունիքը, Տայքը, Տուրուբերանն ու Գնունիքը, Արտակը՝ Տարոնը, Արծրունիքը, Մոկքը և պատրաստվեցին իրար վրա ընկնել ու կործանել իրար իբրև բացահայտված արյունոտուտ թշնամիներ:

Արտաշատում, Այրարատի շեն ու ավաններում կատաղում էր սրածուխունն ու ավերը, որսի բարակների պես սուրում, սողոսկում էին ամենուր հետախույզներն ու լրտեսները, ճոճվում էին կախաղանների պարանները շինականների մարմիններով: Դենշապուհը, Որմիզը ու Միհր մոգպետների հետ երկրում ցանուցրիվ պարսիկ զորքերը հավաքած՝ ամրացնում էին երկրի բերդերը:

Այս իրադարձությունների մեջ, նախարարական ազգամիջյան ճակատների տակ եռում, բարձրանում էր ժողովրդական զանգվածների ծովը՝ և բարձրացնում իր վրա՝ իբրև լաստափայտեր ու տաշեղներ՝ նախարարական դասը իր անձնական ու դասային շահերի, կրքերի ու գործերի հետ: Շինականությունն ու քաղաքային բնակչությունը, զորքը, որ մեծ մասով դուրս էր բերված այս զանգվածներից ամենևին տրամադիր չէին կռվել իրար հետ: Ժո-

զովուրդը իմաստորեն իր հայացքը սևեռել էր երկրից զուրս, այն սևատեսիլ ամպին, ուր արշավում էր Հայոց աշխարհի վրա:

Հենց այս ժողովրդական զանգվածները՝ զորքը և շինականները իրենց հզոր ձեռներով զսպում էին ներքին, միջնախարարական կրթերը և պատրաստվում էին եթե ոչ գլուխ անցնել, բայց և շարժել ներքին ուժերը արտաքին թշնամու դեմ:



Հետևյալ օրն իսկ Վարդանը Քաթուլ Դիմաքսենուն մի մեծ գորագնդով ուղարկեց Վասակին հետապնդելու:

Միաժամ նաև կոչ ուղղեց Հայոց աշխարհի նախարարներին՝ ժողովվել Արտաշատում, և իրար հետևից եկան ավելի մեծ թվով նախարարներ, քան երբևէ տեսել էր մայրաքաղաքը: Եկավ ճակատից ներշապուհը, եկավ Ատոմը, որ վերջացրել էր պարսիկներին նրկրից բռնելու գործը:

Վարդանը իր Արտաշատ գալու օրից շէր խոսում ոչ Վասակի դավաճանության, ոչ էլ վերջին ժամանակվա անցուղարձերի մասին: Երբ նախարարներն ակնարկում կամ խոսք էին բաց անում այդ մասին՝ նա միայն միավանկ բառերով փակում էր խոսակցությունը: Առհասարակ մաղձոտ էր և շար: Միայն մի ժողով արեց:

— Նյուսալավուրտը գալիս է: Կամ կհասնի ձմեռնամերձ պատերազմին, կամ դեմ կառնի ձմռան և գարնան կհասցնի հարվածը: Ժողովենք ուժերս: Տերունի զորքը և դաշնակիցները: Հազարապետը դեռ Բյուզանդիայի ճանապարհին կլինի: Լուր տանք մեր հավատարիմ եղբայրներին՝ վրացիներին և աղվաններին, որ նրանք պատրաստվեն ընդհանուր թշնամու դեմ և գարնան հասնեն Արտաշատ, իսկ հոները հարձակվեն Պարսկաստանի վրա, երբ այստեղ կսկսվի պատերազմը:

Մի քանի օր անց կրկին դեսպաններ ճանապարհ ընկան:



Հայոց Հազարապետ Ամատունին և իր հետի իշխանները Պոնտոս ժովում նավ էին նստել և երկար օրեր ծովի հետ մարտընչելով հասել Բյուզանդիայի մայրաքաղաքը:

Անբարեհամբույր տամկութիւն բուրեց հյուրերի հոտտեղի-  
քին փայտաշեն, քարե ներքնահարկով մոռայ բնակարանից: Նեղ-  
լիկ պատուհաններից թափանցող հիվանդոտ մի լույս հազիվ էր  
երևցնում օթևանների ոչ անշուք կահավորութիւնը, որ խառնուրդ  
էր արևելքի և արևմուտքի պատահական առարկաների: Խայ-  
տաբղետ գորգեր պատերին և հատակներին, սաղաֆազարդ գա-  
հավորակներ կարմիր փայտից, աղավնակերպ ճրագներ, ասեղնա-  
գործ բարձեր: Շիլ աչքերով ծառայապետը սպասավորների զլխա-  
վորութիւնամբ ներս հրավիրելով հյուրերին՝ անմիջապես վառեց  
տվեց օջախը: Կրակը ժպտաց և օթևանի մոռայը փարատվեց:

Շուտով հայտնվեց պալատական պաշտոնյան գանգրամո-  
րուս, կատվի աչքերով և մի ժպիտով, որ տարածվում էր նրա ողջ  
գեմքին, բացի աչքերից՝ բարի գալուստ մաղթեց: Նա հայտնեց, որ  
արգեն տեղեկացված է պալատին հայ դեսպանների ժամանումը:  
Գա Զենոն կոմսն էր:

— Գործերը խառնակ են, և Սիրաճաճինը նեղված, — ասաց  
նա մտահոգ:

Օրեր անցան: Կոմսը սկսում էր հազվադեպ երևալ, և հայ  
դեսպանութեան ընդունելութիւնը ուշանում էր:

— Իսկ այնտեղ սպասո՞ւմ են մեզ, — սրտնեղեց Հմայակ  
սեպուհը:

— Վախենում եմ դադարեն սպասելուց, — ասաց Հազարա-  
պետը:

— Ավելի լավ, կգնանք մեր գործին, — ասաց Մերուժան սե-  
պուհը:

— Ասում ես ավելի՞ լավ, — կրկնեց Հազարապետը տարա-  
կուսանքով և խոհուն:

Պալատի հետ կապը խզվեց լիովին: Գալիս էր միայն շիլ ծա-  
ռայապետը, ստուգում սպասավորների գործը, երկար կանգնում,  
հսկում նրանց գործին և լուռ ալկանջ դնում դեսպանների հատու-  
կտոր զրույցին և ապա գնում: Երբ Հազարապետը սրտնեղ հարց-  
րեց նրան մի անգամ, թե ուր է կոմսը, նա պատասխանեց, որ  
հիվանդ է: Հակառակի պես հենց նույն ակնթարթին կոմսը դուրս  
եկավ Եղիարիոս Ասորու հետ պալատից և դռանը կանգնած նրա  
հետ երկար զրույց սկսեց: Հազարապետը արժան չհամարեց սաս-

անլ ստախոս ծառայապետին: Երբ նա գնաց՝ Հաղարապետն ասաց.

— Կամ կաշառք պիտի տանք կամ իսկույն ևեթ ճամփա ընկնենք տուն:

— Գնանք տուն, Հաղարապետ հայրիկ,— վճռական շեշտով ասաց Մերուժանը,— գոնև կմասնակցենք ճակատամարտին:

— Ասովա՛ծ աղաչեցեք, երե՛ս անկյալ աղաչեցեք, որ մեր կարիքը շունենան այնտեղ... — խորին վշտով ասաց Հաղարապետը,— վախենամ հո՛ւյժ կարի սպասում են մեզ...

Երբ մի օր էլ ծառայապետը եկավ՝ Հաղարապետն ասաց նրան.

— Գնա և իսկույն հայտնիր Զենոն կոմսին, որ սպասում ենք իր այցելության...

Ծառայապետը տրորվեց կանգնած տեղում.

— Իշխան,— ասաց նա քթի տակ,— ժամը տարաժամ է, Միրանածինը վրդովված է, խիստ բարկացել է Եղփարիոս ավագի վրա:

Եվ պատմեց ինչու: Եղփարիոս Ասորին, որ միաժամ հակիչն էր արքունիի հարկահանության՝ հարկերի մեջ պոռնկանոցների հարկը կիսատ էր ցույց տվել կայսրին: Երբ կայսրը հարցրել էր պատճառը՝ Եղփարիոսը անպատշաճ անվանելով այդ հարկը, բացատրել էր, որ կիսատ է հավաքել: Բայց տեսնելով կայսրի զայրույթը հայտնել էր, որ ինքը կլրացնի թերին:

— Եվ լրացնո՞ւմ է... — հարցրեց Մերուժանը:

— Լրացնում է... Բայց իր գրպանն է մնում մի խոշոր մաս, որ ծածուկ է մնում: Զենոն կոմսը գիտե...

— Իսկ Միրանածինը ընդունո՞ւմ է լրացումը,— հարցրեց հեզնանքով Հմայակը:

— Իհարկե, իշխան: Նա ինքն է սահմանել պոռնկանոցների հարկը:

— Իսկ գողերի և ավազակների հարկ չի՞ սահմանում,— հարցրեց Մերուժանը,— մեծ հարստություն կստացվի:

— Կատացվի, ճշմարիտ ես, իշխան, բայց դեռ այդպիսի հարկ չկա,— ասաց ծառայապետը անվրդով:

Հաղարապետը սրտենդեց.

— Իսկույն գնա և Զենոն կոմսին հայտնիր, որ հայ դեսպանները շտապում են կայսեր տեսակցության:

— Անմիջապես, տեր իմ,— ասաց ծառայապետը և դանդաղ հեռացավ:

— Սրանք մեզ պիտի նվաստացնեն մինչև այնտե՞ղ, որ մենք կաշառք տանք նաև այս ծառայապետին... — վրդովված խոսեց Մերուժանը:

— Մինչև գետնի ցեխը,— զայրացած գռչեց Հազարապետը,— բայց պիտի իջնենք... ցեխի մեջ մաքուր լինելն է գովելի, եթե ոչ՝ մաքուր տեղը ամեն մարդ մաքուր է:

— Ապա հիմա ի՞նչ պիտի անենք,— հարցրեց Մերուժանը:

— Պիտի կաշառքը տանք: Թող մենք կեղտոտվենք՝ մեր գործը ապրի՛:

Մյուս օր ծառայապետին կանչեցին և ասացին:

— Իմացիր Զենոն կոմսից, թե որքան պետք է կաշառք տանք իրեն, որ հաշողեցնի կայսեր տեսակցությունը:

Ծառայապետը գնաց և եկավ՝ բերելով Զենոն կոմսի պատասխանը:

— Հինգհարյուր ոսկի:

— Իսկ քեզ կտանք հարյուր ոսկի կաշառք... — ասաց Հազարապետը, կրկին շեշտելով «կաշառք» բառը:

— Շատ շնորհապարտ եմ, մեծ իշխան... շատ շնորհապարտ եմ,— դողաց հաճույքից ծառայապետը և անմիջապես շտապեց Զենոն կոմսի մոտ:

Կայսեր տեսակցությունը հաշողվեց: Զենոն կոմսը հայ դեսպաններին ներս տարավ պալատական սրահը: Ոչ մեծ գահասենյակը շնայած որ ցերեկ էր՝ կիսամութ էր և հեղձուցիչ: Պատերն ու հատակը խեղդված էին փոփածքի ու զարդարանքի մեջ:

Գահի վրա նստած էր փոքրիկ սմբած, հողադեղնագույն մի արարած: Նրա փուխը, լարծուն մատները հանգչում էին գահի հենարաններին: Աչքերի տակ տոպրակներ էին կախվել: Մաղկատար դեմքը և փոքրիկ կլոր աչքերը մեղկանում էին մի թալուկ ժպտի մեռելային լույսով: Անշարժ նայեց նա ներս մտնող դեսպաններին և ոչ մի նշան չարեց: Եղիպարիոս Ասորին ձեռքով հրավիրեց առաջանալու: Գահի կողքին կանգնած էր Անատոլ զորա-

վարը և խոժոռ նայում էր դեպպաններին՝ կարծես անժանոթ լինելու:

Հազարապետը առաջ ընկավ և խոնարհ ողջույն տվեց կայսեր: Սեպուհները կրկնեցին նրան: Կայսրը գլխի թեթև շարժումով նայեց միայն և բերանը կիսաբաց սպասեց, որ նրանք խոսեն: Հազարապետը իբ վարժ հունարենով բացատրեց իրենց գալու նպատակը:

— Հայոց աշխարհը աչքերը այժմ ուղղել է մեծիդ, քրիստոսասերիդ և ակնկալ սպասում է եղբայրական օգնությանդ: Դու կփրկես ոչ միայն ժողովուրդն հայոց, այլև քրիստոնեությունը բարբարոսների գերությունից:

Կայսրը հիվանդագին կիսաժպիտով նայեց Հազարապետին և ապա դարձավ Անատոլ զորավարին.

— Ի՞նչ կասես, զորավար:

Անատոլ զորավարը մինչև գոտիկը խոնարհություն արեց կայսեր և ասաց.

— Ես ճանապարհին բացատրել եմ այս հայերին, որ մենք ունենք խաղաղության դաշինք Արյաց պետության հետ: Պիտի ավելացնում նաև, որ մենք սպասում ենք Աթիլլայի հարվածներին: Սրանից թող հասկանան մեր հավատակից հայերը, որ մենք ոչինչ չենք կարող անել:

Կայսրը քրտնած խմորե ձեռքերը և նիհար ուսերը բարձրացրեց և կրկին թույլ ժպտաց նայելով Հազարապետի աչքերի մեջ, իբրև թե ասելիս լինել՝ «տեսնո՞ւմ ես»:

— Քա՛վ լիցի, Միրանածի՛ն, — ձայնը մի փոքր բարձրացրեց հուզված Հազարապետը, — քա՛վ լիցի, որ մենք պատերազմ առաջարկենք ձեզ: Ձեր բարեկամական մի խոսքը ի պաշտպանություն հայերի՝ միջնորդության ձևով՝ բավ կլինել հեռացնելու արհամարի:

Կայսրը կրկին շրջվեց դեպի Անատոլ զորավարը և արդեն պարզապես ժպտալով՝ նշան արեց, որ նա պատասխանի: Կարծես զորավարը նրա պատգամախոսը լինելու:

Անատոլ զորավարն ասաց.

— Եթե Հազկերտի շահը պահանջում է հայերիդ հնազանդեցնելը՝ ի՞նչ շահ մեզ ձեր պատճառով տհաճություն պատճառել

նրան: Մեր ու պարսիկների գծաման դեպքում ի՞նչ արժեք ունե՞ք հայերդ մեզ համար:

Հազարապետը կարմրեց զայրույթից:

— Հայերը չունեն՛ն արժեք: Թող այդպե՛ս լինի: Թեև եթե հայերը չնչին արժեք լինեին՝ Հազկերտը այդքան չէր ընկնի նրանց հետևելու: Նա շատ լավ գիտե, որ հայերից հետո վրացիներն ու ադվանները, ինչպես և ասորիները կգնան նույն ուղիով: Բայց երբ ողջ Հայաստանը, Վրաստանը, Ադվանքը և բոլոր հյուսիսն ու հարավը կմտնեն արյաց պետութ՛յան մեջ, հերթը ձե՛րն է, Միրանա՞ծի՛ն... Այլևս վե՛րջ, ձեր կարավանները այլևս չեն մտնի Սկյութների, Քուշանաց, Հնդկաց աշխարհները...

Կայսրը ձեռք բարձրացրեց և նվազ ու հանգիստ ասաց.

— Կիտրհենք այս մասին: Կանենք մի բան: Զորավարը կգտնի մի հնար: Եկեք մի քանի օր հետո: Երթայք խաղաղությամբ:

Հազարապետը խոնարհություն արեց և իշխանների հետ դուրս գնաց:

Վիրավորանքի և թեթև հուսադրության զգացմունքով իշխանները հասան իրենց օթևանը:

Երկու օրից հետո կեսգիշերին մի խուլ աղմուկ զարթեցրեց հայ դեսպաններին: Զահերի լույսեր ընկան պատուհաններից: Անհանգիստ շարժում կար պալատի դռանը: Դուրս նայեցին: Հազարապետը ուղարկեց իր թիկնապահին իմանալու, թե ինչ է պատահել: Թիկնապահը վերադարձավ ու հայտնեց, որ կայսրը վախճանվել է:

— Այրունահեղություն կսկսվի,— ասաց Հմայակը:

— Հազիվ թե,— ասաց Հազարապետը,— եթե նորը ուշանա... Ահա՛ և նա՛ կարծես խոսքիս էր սպասում...

Եվ իրոք ջահերի արյունային լույսով պայծառ լուսավորված, զինվորների խիտ շարքերով շրջապատված հայ դեսպանների շենքի առջևով շտապ անցավ մի ղեղնամորուս, կապտաշյա ծերուկ, բավական աշխույժ արտաքինով: Նա համարյա վազում էր և աչքերը վառվում էին տենդային կրակով: Կարծես ինչ-որ բան էին խլում մի տեղ և նա վազում էր ինքը խելու: Զինվորները սրամերկ, նիզակները առջև ցցած վազում էին նրան հավասարվելու ջանքով: Զորականը մտավ պալատ: Իսկույն պալատի պատու-

հաններին դուրս նայեցին սաղավարտներ, ցցվեցին նիզակներ ու աղեղներ: Պալատի դռան փշեց շեփորը: Եկավ մի այլ զորագունդ ևս հակառակ կողմին: Հավաքվեց ամբոխ պարսպից դուրս: Լրսվեց զիւ մի ձայն.

— Հրամանովն աստուծո և հաճությամբ մարդկանց Բյուզանդիո կայսր ընտրվեց Մարկիանոս Թրակացի Սերակուտականը: Հնազանդությունն և փառարանությունն:

Ամբոխը մռնչաց.

— Կեցցե՛ կայսրը... Փա՛ռք կայսեր...

Ողջ գիշեր չէր լուծ մայր խոսքը, որ մունետիկները խելով տարան տարածելու մայրաքաղաքում: Առավոտյան երբ եկա՞ ծառայապետը պատմեց, որ վախճանված կայսեր քույր Պուլքերիան շագանակեց եղբոր անշնչանալուն: Դեռ հոգեվարքի մեջ էր, որ սուրհանդակ ուղարկեց Մարկիանոսին շտապել գալ տիրանալու գահին:

— Սկզբից էր որոշված, որ Պուլքերիան իր իրավունքը զիճուճում է Մարկիանոսին և ամուսին է ընտրում նրան, — ասաց ծառայապետը:

— Կա՛մ շինվեց գործերս, — հառաչեց Հազարապետը, — ե՛րբ թաղեն հանգուցյալին, ե՛րբ օծեն նորին, որ մենք շարունակենք բանակցությունը:

— Միամի՛տ եղեք, — ասաց ծառայապետը ստուն ու հանգիստ, — կայծակի արագությամբ կթաղեն, կմոռանան, կօծեն, կանցնեն գործի... Բյուզանդիայում որքան հեղհեղուկ է ամեն բան, նույնքան էլ արագ է...

Եվ իրոք՝ մի քանի օրից հետո ամեն ինչ կարգի եկավ, կարծես ոչ կայսր էր վախճանվել և ոչ էլ կայսր էր եկել նստել գահին:

Մի օր էլ երեկոյան Հայաստանից տեղ հասավ Ատոմի սուրհանդակը և հանձնեց նրա նամակը Հազարապետին: Նամակը շատ վրդովեց Հազարապետին.

— Նախարարները շեն միանում ուխտին, շեն վճռում դիմադրություն: Սպասում են հունական զորքերին... — Վա՛յ գլխիս, վա՛յ գլխիս, վա՛յ գլխիս... Ինչո՞ւ չմեռա ծնված օրս... — ողբաց բազմատանջ Հազարապետը և ծեծեց գլուխը:

Երիտասարդ իշխանները տխրեցին:

— Ասում է՝ «շտապեցրո՞ւ Բյուզանդիայի օգնութիւնը...»։ Բյուզանդիայի՞ն են սպասում, որ միանան ուխտին... Վա՛յ զըլ-խիս...

Տեսակցութիւնն ուշացնում էին կրկին։ Հարկ եղավ դիմելու նոր կաշառքներին։

Կայսրը նոր էր սկսում ընդունելութիւնը, որ հարցրեց Եղ-փարիոս Ասորուն։

— Որքա՞ն զորութեան տեր են հայերը։ Կարո՞ղ են վտանգել արյաց պետութեան՝ եթե անցնեն մեր կողմը։

— Այդ մասին քաջ տեղյակ է զորավարը, Միրանածի՛ն,— կեղծ համեստորեն խուսափեց Եղփարիոս Ասորին։

Ներս մտավ Անատոլ զորավարը։ Երբ կայսրը նրան դիմեց նույն հարցմունքով՝ Անատոլ զորավարը արհամարհանքով ժըխտեց հայերի զորութիւնն ու վտանգը։

— Մի բանով միայն մեզ համար վտանգավոր են, Միրանածին,— ասաց նա,— պարսիկները գիտեն անշուշտ, որ հայերը դիմել են մեր օգնութեան։ Պետք է պարսիկներին հայտնենք մեր օգնութեան մերժումը։ Այլապես, կգրգուլեն մեր դեմ։

— Բայց հայերին էլ պետք է սփոփել որևէ սին խոստումով։ Քերևս և կատարենք խոստումը։ Իսկ եթե չկատարենք՝ գոնե բարի հուշ կթողնենք հետագա մեր կարիքի դեպքին... Նե՛րս հրաւիրեցեք։

Հազարապետի առջև նստած էր խելացի և նենգավոր աչքերով մի սառնարյուն ծերուկ և ջրի պես անսիրտ նայում էր նրան, ուղիղ աչքերի մեջ։ Որքան հուզված ու համոզիչ խոսում էր Հազարապետը, այնքան անշարժանում, քարանում էր այդ հայացքը։

— Այժմ պատե՛հ չէ մեզ օգնական զորք տալու ձեզ,— խոսեց քարի անզթութեամբ կայսրը,— մենք զբաղված ենք հոներով։ Այդ գիտեք։

— Միրանածինը դժվարանում է օգնութեան գործում նաև և հատկապես նրա համար, որ ինչպես վստահացրին մեզ արևմտյան հայ իշխանները՝ Հազկերտը կրոնի ազատութիւն է շնորհում հայերիդ, բայց դուք խոսք լսել չեք ուզում, ձգտում եք ապստամբել։ Հազարապետը կարմրեց զայրույթից։

— Դա սո՛ւտ է, ստո՛ր սուտ, դավաճան հայերի հերյուրանք է...

Եղիփարիոս Ասորին արտաքուստ շատ մեղմ և ժպտուն՝ միջամտեց.

— Միրանածինք շի զլանա օգնել ձեզ, երբ հնարավոր լինի։ Եվ կլինի շուտով այդ հնարավորությունը։ Մի՛ հուսահատվեք։

Կայսրը հանգիստ ու անշեշտ ձայնով ասաց.

— Կհասնենք ձեզ օգնության հետագայում։ Մի մնաք այստեղ այդ ակնկալությամբ. դա բավականին ուշ կլինի։ Բարի ճանապարհ ձեզ։

— Ների՛ր, Միրանածին,— ընդմիջեց Անատոլ զորավարը.— թող իշխանները պահեն իրենց հիշողության մեջ, որ մենք հայերի տառապանքները լավ գիտենք և միշտ պատրաստ ենք օգնելու նրանց։

— Անշու՛շտ, անշո՛ւշտ,— հարեց Եղիփարիոս Ասորին,— հայերի ցավերը մեր ցավերն են։

Երբ դուրս եկան պալատից՝ Հազարապետը մի պահ կանգնեց և գլուխը շարժեց դառնությամբ։

— Թող տերն աստված ի՛նքը հասնի օգնության Աշխարհին հայոց...

Մովից փշող սառնաշունչ քամին դողացրեց մինչև հոգու խորքը վիրավորված ծերունու աչքերի արցունքը։ Երբ հասան օթևան՝ կանգնեց օթևանի մեջտեղ և բռունցքը ցնցահարեց.

— Կգնամ ուսմիկ հայ զինվորի ոտնե՛րը կլվամ, ջա՛ւրը կըխմեմ, կգնամ նրա հետ քա՛ր կքաշեմ, փո՛ւշ կքաղեմ, այլևս չեմ դիմի այս նենգավորներին... Սրանցից հեռու՛ աստծուն մոտիկ։ Ավա՛ղ, ավա՛ղ, ավա՛ղ... երբ օձն է բարեկամդ։

Անմիջապես հրամայեց իր ծախսարարին՝ կանչել շիլ ծառայակետին և պահանջել հաշիվ ներկայացնել իրենց հյուրասիրության վրա ծախսած գումարների։ Ծառայակետը զարմացավ և տատամսեց.

— Դուք մեր հյուրն եք եղել — լսեց Հազարապետը կողքի սենյակից ծառայակետի ձայնը։

— Տո՛ւր հաշիվը,— գոչեց այս սենյակից Հազարապետը.— ասա ի՛նչ գումար կլինե՞ք ծախսած։ Լեսա կրկնակին, եռակին... Եվ վերցրու գումարը։

Շիլ ծառայակետը ձեռաց խլից գաղափարը։ Ներկայացրեց բավականին պատկառելի գումար։ Հազարապետը վճարել տվեց

ծախսարարին այդ գումարը և նույն օրը ճանապարհ ընկալ շա-  
յաստան իր տխրած ուղեկիցների հետ:



Նրկար ու ձիգ ձգված գնում էր հայոց այրուծին վրկանա  
ծովի արևելյան դժնի տափաստանով: Ձյունը նստել էր ծանր ու  
մահատիպ: Նժույգների շնչառության գոլորշին ծխում էր շար-  
քերի վրա: Հեծյալները կիսամերկ, պատառոտած, կմախքացած  
օրորվում էին ծանր ու լուռ: Գարեգինը բոլոր հրամանատարներին  
շարել էր իրարից հավասար հեռավորության վրա, առջևից գնում  
էր Արսենը, իսկ հետևից ինքն էր Արշամ հարյուրապետի հետ:

Ծանր, անհնարին դառնությունների ու տանջանքների շա-  
րան եղավ այրուծիի կյանքն այն օրից հետո, երբ խորացավ նա  
Քուշանաց անապատների մեջ: Քուշան զորավարի քաղցր ընդու-  
նելությունը փոխվեց դառնադի դաժանության և բռնության: Գե-  
րիվեր թանկ վճարեց այրուծին իր հյուրընկալվելու և սնվելու  
համար քուշան խաբանին: Այրուծին պարտավորվեց կռվել քու-  
շանների ներքին թշնամական ցեղերի հետ շոր, ամայի անապատ-  
ներում, Օքսոսից արևելք: Ճիշտ է, ոչ քուշան հրամանատարը և  
ոչ էլ խաբանը հատուկ ատելություն չնյութեցին ընդդեմ հայ այ-  
րուծիի: Նրանք միայն դրսևորեցին իրենց հեղհեղուկ, անհաստատ  
բնավորությունը, նման իրենց շրջապատող ցեղերի կամ հենց այն  
բնության, որի մեջ ապրում էին: Նրանք ուխտ չդրժեցին և դաշինք  
չխախտեցին, որովհետև և՛ ուխտը, և՛ դաշինքը, և այլ որևէ պայ-  
մանը նրանց համար մի խոսք էր ասված միայն մի ժամի համար,  
որը հետո մոռացվում, տեղի էր տալիս այլ վերաբերմունքի:

Հարավային Քուշանաց երկրում ծառայություններ մատուցե-  
լով և զորագնդի սնումը մի կերպ պահպանելով՝ Գարեգինը կա-  
րողանում էր «գործեր» հանձն առնելու պատրվակով շարժվել դե-  
պի հյուսիս: Նա ձևացնում էր թե այլ և այլ ցեղերի դեմ մարտեր  
է մղում և շատ անգամ անցնելով «թշնամի» ցեղի կողմը՝ առաջ  
էր շարժվում:

Այս դառնադաժան թափառումներին, հոգնասպառ կռիվնե-  
րին ուղեկցում էին սովահարություններն ու մարդկային կորուստ-  
ները: Գիշակեր թռչուններն էին ճախրում զորագնդի գլխավերե-

վում և շախկալները, գայլերն ու բորենիները սողոսկում նրանց կողքերից ու հետևից: Իսկ սրանցից ավելի անհանդուրժելի էր շարագուլթ օտարի լեղի հացը, անսիրտ խորթությունը, անգթությունը:

Տոշորաշունչ ավազաբուքերի, դառնաղի հորաչրերի, անշունչ, անմարդ, ամայի անապատների բավիղ էր դա, որից դուրս գալու հնար չկար այլևս: Աշխարհը կարծես քառսի մեջ էր, ուր բնությունը սանձարձակ ու ինքնիշխան՝ բռնադատում էր, ավերում, ժխտում, խլում մարդու ամեն ապավեն, ամեն հանգրվան, կյանքի կարգ, կյանքի իրավունք, մի տեղ, մի անկյուն, մի ծածկ, մի որջ: Եվ այդ տարեհրային օտար, թշնամի քառսի մեջ մարդու աչքը որոնում էր այդ անկյունը, բունը, մի մտերիմ դուռ, կրակ, ժպիտ, կյանք, մի ջերմացած մարդկային շինվածքի, մարդկային գոյության ներկայությունը՝ այդ անծայրածիր, դժնի ամայության, մահի ահեղ թագավորության մեջ:

Եվ այստեղ էր զգացվում թե ինչ գին ունի մի քողտիկ, մի վրան, մի տնակ, մի շեն, վերջապես բաղաք, մի մարդու կամ ողջ մարդկության սիրելի ճարտարագործ շինվածքը, նրա շնչի, հոգու ներկայությունը:

Կարիքն հաճախ ստիպեց կռվավարձ պահանջել «դաշնակից» ցեղից: Հետո սկսվեց լքած պաշտոններից վերցնելը: Վերջը սովն ու մահվան սպառնալիքը հարկադրեց մարտակից թուշանների հետ ավարը բաժանել, վերջը՝ ավար առնել... Սկսվեց հետզհետե վայրենացման մի ընթացք, որի դեմ սկզբում կռվում էր Գարեգինը, բայց վերջը ինքն էլ զիջեց և դաժանացավ:

Սրվանձտյա Գարեգինը շատ էր տանջվում այս փախուստի ձեռնարկման հետևանքից: Նա զգում էր, որ Հայոց աշխարհի առաջ արյամբ և հոգով պատասխանատու է: Հետի իշխանները ևս իրենց մեջ խոսում էին այս մասին, բայց չկամենալով խոռվել Գարեգինին՝ լուծում էին նրա մոտ: Սակայն և բոլորը հասկանում էին նաև այն, որ բացի այս վտանգի խաղը՝ ուրիշ ոչ մի հնար չէր կար այրուձիի համար, և որ այս անհնարին տառապանքների միջով միայն կարող են նրանք հասնել հայրենիք...

Հոգնաբեկ զինվորների մեջ կային և բազմաթիվ վիրավորներ, որ նժույգների թամբերին կապված կամ նրանց բաշերից բռնած, բերանքսիվայր պառկած տնջալով, երբեմն անտանելի ցավից ճշալով քարշ էին գալիս շարքերի հետ:

Մեկը նրանցից՝ ժանր ու դժվարը՝ երկու ձեռքերով նժույզի բաշը բռնած սեղմում էր ատամները, կրճտում և դեմքը կծկելով զսպում, որ ձայնը չսլփի: Վերքը բացվել էր, մոմոում էր, և հնար չկար երթի ժամին կապելու: Զինվորը վերք էր ստացել քուշանների կռիվներից մեկում, և անդադար թափառումներն ու երթը հնար չէին տալիս խնամել նրան:

Նա հեռու չէր Գարեգինից, որը դիմամաք ընթանում էր վիրավորներից շատ մոտ՝ խստորեն հսկելու նրանց:

Զինվորները չէին խոսում, մրթմրթում էին միայն հատուկենտ և մոռյլ նայում տափաստանին:

Միայն ժանր վիրավորն էր քթի տակ մոմոում մի երգ, որ մերթ փոխվում էր տրտունջի, մերթ ըմբոստ անեծքի, երբեմն էլ իսկական մեղեդիի:

— Դիմացիր Արշա՛կ, — ասաց մի աշխույժ զինվոր հոգնած ու մարած աչքերով, — դիմացիր, որ տեղ հասնենք: Հո չենք թողնելու քեզ գայլի ճաշ:

— Չեմ դիմանում՝ ի՞նչ եմ անում, — տնքած Արշակը և հուսախառն վշտով նայեց ամայի ձյուններին:

Նա սկսեց մոմոալ, քթի տակ: Լա՞ց էր դա, թե՞ անեծք: Եվ այս և այն: Հետո անհնարին ճիգով շտկվեց թամբի վրա, նայեց շուրս կողմ, ընկերներին և սկսեց երգել.

Հայրենի՛ք իմ, հա՛յր իմ, մա՛յր իմ,  
Հայրենի՛ք իմ, հո՛ւյս իմ, լո՛ւյս իմ,  
Ո՞ւր ես, ո՞ւր:

Անձկալի՛դ իմ, հո՛ւր իմ, ըն՛ւր իմ,  
Սիրելի՛դ իմ, բո՛ւքս իմ, սո՛ւն իմ,  
Ո՞ւր ես, ո՞ւր:

Երգեց Արշակը և խոշոր սև աչքերը վառված ու կարոտալի նայեց զինվորներին: Նա հևում էր նկատելի ուժով և դժվարությամբ: Զինվորներն զգում էին — նա կընկնի: Հետևից արագացնելով նժույզի քայլերը եկավ Գարեգինը: Նա անհանգիստ էր:

— Հա, ի՞նչ վիճակի ես վիրավորները, հարցրեց նա զինվորներին:

— Դեռ դիմանում են, իշխան, — պատասխանեցին նրանք:

— Դե՛, արի՛ կացեք, կհասնենք:

— Հրամա՛նդ, իշխան,— բոլորի տեղ թույլ ձայնով խոսեց մի վիրավոր:

Գարեգինը գաղտնի նայեց Արշակին: Վիրավորի աչքերում այրվում էր մի այնպիսի կարոտ, ապրելու տենչ, անհունության մի թախիծ, որ Գարեգինը շրջեց երեսը:

Բայց Արշակը բարձր հառաչեց և ապա նվաղկոտ աչքերը զարձրեց զինվորներին.

— Իջեցրե՛ք, չե՛մ կարող:

Զինվորները լռեցին, շմոտեցան:

Շարունակեցին գնալ: Ոչ ոք չէր նայում Արշակի կողմը: Վիրավորն սկսեց մոռնալ և աղաչական նայեց զինվորներին:

— Իջեցրե՛ք,— հրամայեց Գարեգինը:

Մի խումբ կանգ առավ. Արշակին իջեցրին: Մյուս շարքերը գնացին:

Արշակը խոշոր աչքերը բացեց նրանց վրա, հուզվեց և սկսեց մրմնջալ: Հետո ձեռը բարձրացրեց և սկսեց թափահարել թույլ ու մարող շարժումով.

— Գնացե՛ք, ձե՛զ մատաղ, ինձ թողե՛ք, աչքերս տարեք՝ տեսնեմ նրանց...

Շարքերն անցնում էին լուռ ու խստահայաց:

Արշակը լիովին աչքեր էր դառել, որ մղկտացնում էին նայողին: Արշակը պետք՝ է մեռներ, Արշակը պիտի մնար այս շարագութ, անսիրտ օտարության մեջ:

Բոլորն անցան: Գարեգինը հրամայեց մնացածներին ևս գնալ: Մնացին ինքը, Արշամը, թիկնապահը և մի բուժ զինվոր: Վերջինս գլուխը տարավ բերեց և նայեց Գարեգինին, հասկացրեց, որ շուտ չի մեռնի: Գարեգինի մեջ խոսում էր տանջող ներքին ձայնը: Խստասիրտ զորականը այստեղ նրբազգաց մարդ էր դառել: Նրան տանջում էր ոչ զինվորի կյանքի կորուստը, այլ ազատության զինվորի դժբախտությունը, որի պատճառը ինքն էր կամ իրեն էր հաշվում: Այն օրից, երբ հռչակվեց հայրենիքի պաշտպանությունը, Գարեգինը այլ աչքով էր նայում զինվորին և այլ գին տալիս նրա կյանքին:

Արշակին պառկեցրին ձյան վրա: Եվ լուռ կանգնեցին:

— Գնա՛, իշխա՛ն,— մրմնջաց Արշակը,— գնացե՛ք եղբայրներ՛, ես մենակ է՛լ...

Զխոսեցին: Արշակը իր խոր աչքերը դարձրեց Գարեգինին և աղաչական նայեց նրան: Գարեգինը ևս նայեց նրան: Այլևս անհնար էր նայելը: Գարեգինը գլուխը կախեց: Ապա հանկարծ դարձավ թիկնապահին և բուժին.

— Մնացե՛ք, մինչև...

Եվ նշան անելով Արշամին, որ հետևի իրեն՝ մտրակեց նժույգը: Մի վայրկյան ևս ետ նայեց և նրա աչքերում տպվեց Արշակի իրեն հառած հայացքը: Մենակի, լքվողի. ' ամեն տեղ ու կարոտ սրտում մեռնողի աչքերը: Մի սուր խայթ խրվեց Գարեգինի սիրտը խորը, խորը: Նրան նայեց մառդը, նա լքում էր մի մառդու:

Գարեգինը բարձրացավ մոտակա բարձունքը՝ դիտելու համար զորագունդը, որ ձգված էր շափազանց բարակ ու կտրտված: Հետո նայեց շուրջը: Անհույս հեռաստաններ, ձյունի անհուն ծով, ամալուխյուն սրտամաշ: Նայեց դեպի արևելք և տեսավ մի բան, որ իր շարագույժ տեսքով նոսրացրեց տափաստանի անապատային տեսքի տիրությունը:

Հեռու հորիզոնից արագ բարձրացավ և մահվան սավանի նման վարագուրվեց մի ճերմակ ամպ: Արևը մայր մտավ արագ, երեկոն սողաց ամեն կողմից: Ամպը արագարշավ եկավ հասավ երկնքի մեջտեղ. և փշրեց սառն ձնաթեփ դեպի երկիրը: Նայեց Գարեգինը բլրի լանջին և տեսավ թե ինչպես այս ու այն տեղ փոքրիկ ձնափոշիներ սկսեցին գեղեցիկ պտույտներով շարաժպիտ պարել օձագալար: Քամի բարձրացավ և նրա շարժումների մեջ արդեն սկսեց մահը վնգալ հեռավոր մանկան լացի ձայներով:

— Շեփո՛ր,— հրամայեց Գարեգինը:

Թիկնապահի մոտ կանգնած զինվորը փշեց: Զորագունդը կանգ առավ:

— Սեղմվե՛՛ե՛՛լ,— հրամայեց Գարեգինը:

Հրամանը ձայնեծայն գնաց մինչև առաջապահ ջոկատը, և զորագունդը սեղմվեց: Գարեգինը հրամայեց օղապարաններով, սանձերով, նիզակներով կապվել իրար, նշան դառնալ, չկորցնել իրար: Օգնական իշխաններին հրամայեց շարունակ ստուգել շարքերը:

Մութն ընկավ:

Եվ ահա վե՛ր կացավ անդրվրկանյան տափաստանային խե՛-

լագար բուքը, բարձրացրեց ձյունների շերտերը, թափահարեց հսկայական ջվալները, ժայթքեց գաջի ամպեր, սկսեց ձաղկել անծայրածիր տարածությունները: Երկինք գետին դառավ միազանգված մի քառս, որի մեջ սանձակոտոր քամին զարկում էր, ծեծկում, ցնցահարում, զզզում: Դիվական սուլլերով մի կոծապար, շարախինդ, շարասուզ, որ դառնում էր կատաղած, ոռնում էր, քրքում, սպառնում, մռնչում: Եվ որը իր մեջ առնելով ողջ զորագունդը՝ կաշկանդեց փակեց ճանապարհը, դուրս քշեց ճանապարհից...

Ո՛ւր են գնում, առա՞ջ, թե՞ ետ, դեպի կյա՞նք, դեպի մա՞հ — ոչ ոք չգիտե:

«Կհասնեն՞ք, թե՞ ոչ», — մտածեց Արսենը նայելով գինվորների, որ լողորդների պես կրծքները դեմ արած բուքին առաջ էին մղվում հարբած աչքերով:— «Ի՞նչ է խորհում այս պահիս նա... Որքա՞ն գուժ, սեր, խնամք պիտի լիներ նրա աչքերի մեջ՝ եթե հանդիպեր նա ինձ... Եվ ոչ միայն ինձ, այլև սրանց...»: Սակայն ի՞նչ խորիշա, ի՞նչ նրա սերը, ի՞նչ գուժը, ի՞նչ խնամքը այս թըշնամի բնությանը գերված վիճակում... Քող որե՛կ մարդ հանդիպեր, թշնամի մարդ, թող մի բորենի, մի գաջլ նայեր ձյուններից, թեկուզ հետևեր դիակի հույսով... Շունչի մի նշա՞ն, մի էակի գոյություն հետք:

Գարեգինը հրամայեց, որ զորագունդը աճելի խմբվի և կանգնի: Ոչ շեփորը լավեց, ոչ էլ որե՛կ ձայն հասավ զորագնդին: Բայց սա կանգ առավ և խմբվեց հարկադրաբար: Գարեգինը հրամայեց, որ օղակապարաններով իրար կապված գինվորների մի շարք դուրս գա մի քանի ուղղություններով, գուշակելու մի հետք, մի ուղղություն, շնչելու մի որե՛կ ծխահոտ, լսելու մի մարդկային ձայն: Զուր ճիգ: Բոլորը վերադարձան ձեռնունախ: Փանգնեցին տեղում: Եվ զգացին, որ ոչնչացումը մոտ էր, մահը ստույգ: Զորագունդը շատեցնելու միակ միջոցը շարժվելն էր: Փա կտաներ կամ որե՛կ բնակավայր կամ մահվան գիրկը: Գարեգինը հրամայեց գնալ մի ուղղությամբ: Բուքը սաստկացավ, սկսեց իրոք խեղդել: Անօրինակ ճիգով հնար էր լինում որե՛կ կարգ պահպանել: Զինվորները միտում էին կանգնել, մնալ: Գարեգինը մտրակում էր, զոռում, սպառնում սրով: Եվ որպեսզի ոչ ոք ետ չմնա՝ կրկին՝ Արսենին պահեց առաջ և ինքը մնաց հետևում: Մի վիրավոր քնկավ: Գարե-

զինը հրամայեց վերցնել նժույգի վրա: Հետո կրկին ընկավ վիրավորը: Գարեգինը հրամայեց բուժին օգնել նրան: Եվ նրա մոտ պահելով նաև իր թիկնապահին՝ ինքը հետևեց զորագնդին, որ սկսել էր հեռանալ և համարյա չէր երևում: Մի փոքր անց թիկնապահի նժույգն ընկավ: Թիկնապահն սկսեց քայլերով գնալ Գարեգինի մոտով: Շուտով հոգնեց, բռնեց Գարեգինի նժույգի ասպանդակից:

Զորագունդը կորավ: Գարեգինը միայն ուղղութիւն էր ճշգրտում պահել նրան հասնելու: Իսկ թիկնապահը ուժասպառովում էր: Բուժը արդեն մնացել էր հետևում, և Գարեգինը զգում էր, որ էլ նա չի հասնի հետևից: Միաժամ զգաց, որ թիկնապահը ևս կմնա: Իսկ մի փոքր հետո պարզվեց իր համար և իր մոտալուտ կորուստը: Հանկարծ նրա մեջ զարթնեց սթափ միտքը — ինչերով է զբաղված ինքը: Զորագունդը կորավ առաջից, իսկ ինքը մի զինվորի համար կորստյան մատնեց նաև իրեն: Զգաստացավ. մտածեց հստակորեն: Մտածեց, որ նա կորցրել էր զորականի հատկութունները, քնքշացել էր, և ահա՛ դրա հետևանքը: Զորագունդը կզոհվի իր հիմարութիւն, ինչպես և ինքը՝ նույն հիմարութիւն հետևանքով: Թիկնապահը թողեց ասպանդակը.

— էլ չեմ կարող, իշխան...

— Քայլի՛ր...

Թիկնապահը ճիգ արեց: Գնաց մի առժամ ևս: Բայց ուժերը լքեցին: Գարեգինը հրամայեց թռչել իր գավակը: Թիկնապահը մեծ դժվարութիւններ ելավ գավակը: Մի փոքր անց նժույգը կանգ առավ:

— Իջի՛ր:

Թիկնապահը իջավ: Պարզ էր. մահվան կերպարանքի նման պարզ էր, որ ոչնչանում էին: Գարեգինը մտածեց, արդեն պարզ և կարճ: Կամ ինքը զորավար է և պետք է փրկի իրեն, հասնի զորագնդին, հասցնի նրան տեղ, կամ ինքը ևս մնում է և ոչնչանում:

— Եկ իմ հետևից որքան կարող ես, — հրամայեց նա և նժույգը նստելով քշեց նրան դեպի զորագնդի հեռացած կողմը, որքան որ կարծում էր թե ճիշտ է իր ուղղութիւնը:

Սակայն բուրք խեղդում էր նրան: Մահը մեկնեց իր ճիրանները դեպի նա: «Անմիտ, հիմար»՝ բացականչեց նա՝ բուրքի որոտների մեջ: Դա իրեն էր վերաբերում: Հիմար գտնվեց և ընկավ մահի վտանգը: Նա սկսեց անգթորեն մտրակել իր նժույգը, որ

հոգնած էր: Նժույզը կանգ առավ: Նա սկսեց մտրակել ամենադա-  
ժան հարվածներով: Նա հանեց փոքրիկ դաշույնը և սկսեց թեթև  
հարվածել նրա ծայրով: Նժույզը մի փոքր գնաց և ապա նստեց  
մնաց: Մի փոքր հանգիստը կարող էր հնար տալ նժույզին շարժ-  
վել առաջ: Բայց այդ մի փոքր պահը կարող էր մահվան սպասում  
լինել երկուսի համար ևս: Գարեգինը դեռ բավական սեփական  
ուժ ուներ: Իջավ նժույզից և նրան ևս լքելով գնաց առաջ: Նա  
սկսեց բարձրաձայն անիծել իշխաններին, որ լքեցին իրեն՝ թեև  
գիտեր, որ այս անհնարին բուքի մեջ հինգ վեց քայլի վրա և՛  
մարդ մարդու կորցնում է: Թերևս իշխանները չգիտեն, որ նա ետ  
է մնացել թերևս գիտեն և շեն կարողանում կապվել հետը, որոնել  
նրան: Թերևս անտարբեր են: Թերևս իրենք ոչնչանում են:

Մի՞թե չկա շրջակայքում ոչ մի կենդանի շուն: Թերևս: Ահա  
ձիգ ու խուլ մի ձայն: Մարդկայի՞ն է արդյոք: Ոչ, դա գայլի ոռ-  
նոց է: Ո՛, երանի՛, երանի՛: Թող գա, հայտնվի: Քանի ինքը ուժ  
ունի՝ թույլ չի տա գայլին ատամ հասցնել իրեն, իսկ եթե կու-  
ժասպառվի՝ միևնույն է՝ բո՛ւքը, թե՛ գայլը: Գոնե մի շունչ կլինի  
մտքը վերջին պահին...

Գարեգինից՝ անհնարին էր իմանալ՝ հեռու թե մոտիկ ոգորում  
էր զորագունդը բուքի դեմ: Դա գերմարդկային գրոհ էր նրա դեմ:

Առջև էր ընկել Արսենը և իրեն զուգընթաց պահելով մի  
հինօրյա զինվորի՝ տանում էր զորագունդը: Զինվորը՝ թավակոշտ  
ոլորոմորուս, առնադեմ և ժայռեղեն մի էակ՝ ճանապարհ էր որո-  
նում և գրոհում առաջ: Նրա նժույզը դանդաղում, ուժերը հավա-  
քում և ապա ալիք տալով բարձրանում գցում էր իրեն առաջ՝  
չկորցնելով հույսը: Նրբեմն հեծյալը շոյում էր նժույզի բաշը,  
ափով սպտպում վիզը և հայրաբար մրմնջում.

— Դե՛, գառնուկ, դե՛, մատաղ, արի՛...

Արսենը նայում էր զինվորին և լցվում հուսով, նրան հուսա-  
դրում էր զինվորի զարմանալի հանգիստ հայացքը, որ բուքի մը-  
թության մեջ նշմարվում էր: Իսկապես նա էր այս պահիս գո-  
լազնդի առաջնորդը և հրամանատարը: Այնպես որ՝ երբ մի փոքր  
գնալով զինվորի նժույզը կանգնեց՝ նա հրամայական ձայնով  
կարգադրեց.

— Իջե՛ք, բռնե՛ք նժույզներից:

Արսենը իջավ, բոլորը հետևեցին նրան: Հիմա գնում էին

նծույզներից բռնած՝ որը բաշից, որը ասպանդակից, որը պոշից:  
— Սարգիս, — գոչեց Արսենը զինվորի կողմը, — ասում ես՝  
կփրկվե՞նք...

— Կփրկվե՛նք, իշխա՛ն, — պատասխանեց Սարգիսը՝ ձեռը  
նծույզի բաշին սեղմած:

Մի փոքր անց Սարգսի նծույզը հոտոտեց օդի մեջ:

— Հա՛, մատաղ, գտա՛ր, — գոչեց Սարգիսը:

Նծույզը ուժ ու կող արեց և քայլերն արագացրեց: Զգաց կողմը:  
Մը: Իս ծխահոտ էր:

— Ի՛նչ է, Սարգիս, — հարցրեց Արսենը:

— Մուխ է, իշխան, պրծա՛նք, — ասաց Սարգիսը և գնաց  
արագ:

— Մո՛ւխ, ծո՛ւխ, — ձայնեցին զինվորները դեպի ետ:

Զորագունդը ուժի եկավ: Գնացին արագ: Եվ Սարգսի նծույզը  
կանգ առավ հոնական ուրթի առաջ: Տագնապ ընկավ շենում:  
Գամփոռները հաշեցին ու հոները զենքով, գոչելով դուրս թափ-  
վեցին: Թարգմանը դիմեց հոներին, որ օգնեն զորագնդին կերով  
ու պաշարով: Հոները դիմադրեցին: Սկսվեց կռիվ, իրարանցում:  
Զորագունդը ստիպվեց ընդունել կռիվը: Կարճատև հարվածը խեղ-  
ճացրեց հոներին. նրանք զիջեցին, և զորագունդը ընկավ ուտելի-  
քի և խոտի պաշարի վրա:

\*\*\*

Ինչպես անտառ ձյունի տակ ծվարել, քնել էր Արտաշատի  
ճամբարը: Վարդանը այդտեղ էր հավաքում բոլոր նախարարա-  
կան զորքերը, կազմում, ցուցակագրում և ապա ուղարկում զա-  
նազան վայրեր կամ տուն՝ սպասելու գարնան: Դեռ չորոշվեց,  
թե ձմեռային պատերազմ լինելո՞ւ էր, թե՞ ոչ: Ճիշտ է՝ Նյուսալա-  
վուրտը շարժվում էր դանդաղ, երկար դադարքներով և ըստ երե-  
վույթին վախենում էր ձմեռային պատերազմից, բայց երկյուղ  
կար, որ դանդաղ մոտենալով կարող էր հանկարծ ճեպուրջով ու  
փոթորկալի խուժել անպատրաստ երկրի վրա: Ուստի և Վարդանը  
խստորեն հրամայել էր միշտ պատրաստ լինել արագ խմբվելու  
Արտաշատում և ըստ այնմ էլ զորքը ցրվել էր տվել երկրի մոտա-  
վոր վայրերում:

Ինքը Վարդանը մշտական այցելութուններ էր անում երկրի զանազան վայրերը՝ ստուգելու զորքերը և ավելացնելու նրա թիվը:

Լուրեր չէին գալիս միայն հայկական այրուձիի մասին: Նրան համարում էին ոչնչացած:

Մայրաքաղաքի աշտարակներից մեկի մի փոքրիկ խցյալում ուր Ավետիք բերդապետն էր ապրում և այնտեղից հսկում ողջ քաղաքին և շրջակայքին, Վարդանը հաճախ լինելով՝ վերջը այնտեղ փոխադրվեց: Այդտեղից իր առջևն էր նախ և առաջ ճամբարը, որի վրա նա հսկում էր անմիջապես, հասարակ զինվորի նման: Ավետիք բերդապետը քաշվել էր հարևան բուրգը, որտեղից հետևում էր Վարդանի շարժումներին և կարիքի դեպքում իսկույն վազում նրա մոտ:

Ամպամած երեկոն իջնում էր Այրարատյան դաշտի վրա: Վարդանը նստած էր փոքրիկ բուխարիկի առջև, որ վառվում էր մեղմ կրակով: Խաղաղ էր խցյակում, այդ անպաճույճ պահակային օթևանում: Խաղաղ էին զենքերը, որսի առարկաները, նկարեն գորգերը, որ Վարդանի համար բերել էին արքունակսն տնից, գինու գավր, մրգեղենի ափսեները: Խաղաղ էր նեղլիկ պատուհանը, որ բացվում էր դաշտի վրա՝ նման միամիտ աչքի: Վերջուպես խաղաղ էր Այրարատյան դաշտը, Մասիսները, Հայկական Պարը, Արագածը, Արաքսը...

Ահա մտածկոտ, հանդարտ իջնել սկսեցին ձյան մանրիկ փաթիլներ: Նրանք այնպես զգույշ էին ոտիկները դնում քնած երկրի վրա՝ կարծես վախենում էին զարթեցնել նրան:

Վարդանը խորհում էր: Նրան հուզում էին մտքեր, որ նոր էին դարձնում վերջին ժամանակները: Ահա մոտենում է գարունը: Ուր է ուր չէ՝ կգա նա, կբանա դռներն ու ճանապարհները: Գալիս է Նյուսալավուրտը: Ճակատամարտը մոտենում է: Հայոց ժողովուրդը Վարդանին տվեց իր բախտի տնօրինությունը: Դավաճանները հեռացան:

Նվ ահա երբ այդ արգելքները վերացան՝ առաջ եկավ նորագույն մի հարցմունք, հարցմունք ինքն իրեն, ի՞նչ ուժեր են գալիս Հայոց աշխարհի վրա և ինչո՞վ պիտի դիմադրել նրանց: Լսեցին ճառախոսությունները արհավիրքի մասին և իրական կերպարանքով Վարդանի առաջ կանգնեց այդ արհավիրքը իբրև իրա-

կան զորաբանակ իր թվով, զենքերի տեսակներով, արշավի ուղ-  
ղությամբ, ռազմակարգով, որոնց դիմաց նա պարտավոր էր հա-  
նել իրական ուժեր նույն ռազմական միջոցներով: Ինչպե՞ս պի-  
տի լինի ճակատամարտը: Ամեն, ամեն տեղ նա դրդել է ապրու-  
տամբության և անհաշտ կովի: Բայց ոչ մի տեղ, ոչ մի անգամ  
շոշափելի չի խոսել, թե ինչպես պիտի լինի դա: Եվ անհա քանի  
մոտենում էր իրական պատերազմը՝ ինքը կանգնած է այդ պա-  
տերազմի պատասխանատվությամբ հայաց ժողովրդի առաջ: Կտա՞  
պատասխանը... Ինչպե՞ս պիտի լինի...

Լինելիքի մոռյլ բողբ ծածկում էր Վարդանից հայոց ժողո-  
վրդի բախտը: Եվ Վարդանն զգում էր, որ ո՛չ ամեն բան կընթա-  
նա իր մտքի և կամքի համաձայն: Թշնամու և իր ռազմակարգի  
խաղերը կօգնեն իրեն մինչև մի որոշ սահման: Այնուհետև կգոր-  
ծի ժողովրդի դարավոր ճակատագիրը, այն ծածուկ իմաստու-  
թյունը, որով այդ ժողովուրդն անցել է փոթորիկներն ու կրակ-  
ները:

Վարդանի խոհերը խզեց ճամբարի կողմը լցվող հեծյալների  
մի մեծ զանգված: Ըստ երևույթին դա սովորական զորքերից չէր,  
որովհետև ամեն կողմից վազեցին եկվորների վրա և շրջապատե-  
ցին: Վարդանը մոտեցավ պատուհանին:

Հանկարծ Վարդանի մեջ կայծեց զվարթ միտքը:

«Այրուծի՛ն...»:

Հեծյալներ արշավեցին դեպի աշտարակը: Արծվին կանգնեց  
բերդի ատամների մեջ: Ներքևից ձայնեցին ինչ-որ: Արծվին շտա-  
պեց ներս:

— Սպարապետ, հայկական այրուծին եկե՛լ է...

Վարդանը կարմրեց հուզմունքից: Ու մինչ նա կորոշեր ինչ  
անելը՝ հեծյալներն իջան նժույգներից և բարձրացան աշտարակը:  
Շուտով հայտնվեցին նրանք բուրգի վրա: Վարդանը մոտեցավ,  
բաց արեց դուռը: Սակավ էր նրա սիրտը այդպեա տրոփել կյան-  
քում: Նա զգաց անհանգիստ սիրտը:

Ներս մտան Սրվանձտյա Գարեգինը, Արսեն Ընծայնոցը, Ներ-  
սեհ Քաջբերունին և Տաճատ Գնթունին: Նրանք լիովին այլակերպ-  
վել էին: Հոնական սուր փափախների և մորթե զգեստների ու աս-  
պարների մեջ նրանք նմանվում էին հենց այն հոների, որոնցից  
ազատված եկել էին: Վարդանը հասկացավ նրանց ուղին, չհարց-

րեց: Նրանք ժպտացին ծամածուռ, կնճռոտ ժպտով: Նրանց մեջ զերն սպիտակել էին, իրենք նիհարել, սևացել: Նրանք անճանաչելի էին:

— Մարդի՛կ աստծո... այս ի՞նչ եք դառել... — ասաց Վարդանը և հուզված ողջագուրվեց նրանց հետ:

— Փառք աստծո, մազապուրծ եղանք,— ասաց Գարեգինը:

— Շե՛տ է կորուստը... — մտահոգ հարցրեց Վարդանը:

— Շա՛տ... — խլածայն պատասխանեց Գարեգինը և գլուխը կախեց:

Վարդանը մոայլվեց:

— Արշակը, Ներսեսը, Պարույրը,— սկսեց թվել Վարդանը:

— Զկա՛ն, Սպարապետ,— ասաց Գարեգինը խղճի խայթով:

— Տաժանելի էր, Սպարապետ,— ասաց Տաճատ Գնթունին:

— Գիտե՛մ, սիրելիս... — տխուր խոսեց Վարդանը,— օտարը օտար է: է՛հ... գնանք ընդունենք այրուձին, հոգնած են:

Դուրս եկան և արշավեցին ճամբար:

Երբ ճանապարհ բացին և Վարդանը մոտեցավ իր առջև բացվող այրուձիին՝ աչքերը մթնեցին, երբ նայեց զինվորներին: Զգեստները հոնական, պատառոտված, մորթիներ, սրածայր զրդակներ, հոնական զենքեր, ոմանք կիսամերկ, բոկոտն, գլխաբաց: Մարդկանց չէին նման, այլ կմախքների, որոնց ոսկորն ու կաշին է մնացել: Սանր, դաժան հիվանդություն քաշած մարդկանց էին նմանվում նրանք իրենց խորն ընկած աչքերով:

— Ողջո՛ւյն, զավակնե՛րս,— ձայնեց Վարդանը և ձեռք թափահարեց օդում:

— Ողջո՛ւտ՛ւյն,— թնդաց կարոտալի, ջերմ ձայնով այրուձին:

— Նրանի՛ է մեզ, քաջերս, տեսանք իրար հայրենի հողի վրա: Շա՛տ ապրեք:

— Երկար արև՛, երկար արե՛նե՛վ,— ձգվեց մի ծայրից մյուսը:

— Հանգիստ տուր,— ասաց Վարդանը Գարեգինին:

— Իջնե՛նե՛լ,— հրամայեց Գարեգինը:

Զորագունդը իջավ նծույզներից և իսկույն անցավ իր ճամբարային գործին: Նրանց օգնելու հասան տեղի զինվորներն ու շինականները:

Գարեգինը Վարդանին հաղորդեց շատ կարևոր տեղեկութիւններ շոնքի մասին: Աթըլը շարժվելու է Պոնտոսի հյուսիսով Բյուզանդիա: Երկյուղ կա, որ Ճորա Պահակը թեթևացնի, թեև Քոյգոլոսը, — Վարդանի անմիջական դաշնակիցը Պարսկաստանի գործերում, — հայտնել էր Գարեգինին, որ կա և ուրիշ նկատառում՝ այն է՝ չթեթևացնել Ճորա Պահակը, որ պարսիկները շնորոգեն այն և հարձակումներ չգործեն շոնքի վրա: Քոյգոլոսը հավաստիացրել էր Գարեգինին, որ կհարձակվեն Ատրպատականի վրա՝ հենց որ Վարդանը ազդանշանը կտա պնդագոսպանների միջոցով:

Վարդանը անմիջապես Մելթոնին ուղարկեց Ճորա Պահակ, Քոյգոլոսին հայտնելու, որ պատրաստ լինեն հարձակվելու կամ ձմռանը կամ ավելի հավանական է՝ գարնանը և որ ինքը շարունակ տեղյակ կպահի հոներին այդ մասին:



Առավոտ էր:

Բնութիւնը ապաքինվող հիվանդի պես նայում էր թախծախառն զգայնիկ ժպտով: Ձմեռը նոր էր թողել նրան, — զեռ նա թույլ էր և դուրաբեկ, գարունը նոր էր լցվում նրա երակների մեջ, — անրջում էր աչքերը տամկությամբ լի: Եվ հետո էր անհուն կարոտից. ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ: Ծառերը լցվել էին թացությամբ, կոկոնները ուռել: Շողը անհագ շնչում էր: Արդեն արևկող տեղերում զարմացած ու միամիտ նայում էր ուշացած ձրեծաղիկը: Գեռատի անփորձ գարունը տեղ-տեղ վախով ասեղնագործում էր գետնի գորգը:

Վարդագույն վանքը ձորափին լռել էր ինքնամոռի: Ձորից հասնում էր գետակի գարնանային շնչառութիւնը, որ երբեմն սաստկանում էր հովից, երբեմն մարում: Ժայռերի արևկող ծերպերի մեջ ճկում էր ինչ-որ մի թռչուն: Խոր ու մեղմ շշնջում էր օդը:

Մի հասակավոր վանական էր նստած վանքի ձորակի ժայռին: Նրա գունատ դեմքը մատնում էր մտավոր, լարված կյանքի տառապանք: Նա գանգրամորուս էր, շիկահեր և թավ հոների տակի կապույտ աչքերով մի փոքր խստահայաց: Համեստ պարե-

գոտը կաշվե գոտիով պարուրված գրկել էր նրա մի փոքր կոր մեջքը: Նրան գուցե չէր գրավում գարունը: Կամ թերևս նա թախ-  
ծոտ էր այդ գարնան երևալով: Նա միայն անշարժ խորասույզ  
նայում էր անդունդը: Այնտեղ գետափին փրփրում էր մի թզուկ  
ջրադաց: Նեղիկ դռնակից մի կորամեջք մարդ էր ելումուտ անում  
մրջյունի պէս և ինչ-որ բանի հետևից էր: Երևի ջրադացպանն էր:  
Երկար նայում էր վանականը նրան և խորհում:

Վանքի մերձակա տնակից դուրս եկավ մի ուրիշ վանական  
ցորենի տուպրակը մեջքին: Նա ուժեղ ու մկանուտ ձեռքերով պինդ  
բռնել էր սոպրակի բուկը և եկավ կանգնեց վանականի առջև: Նրա  
բարի դեմքը ժպտաց, և խոշոր աչքերում շողացին մտերմական  
կայծեր:

— Մազաղաթի կաշին կրերեմ, հայր սուրբ, — ասաց նա:

Առաջին վանականը հանդարտ ու տխուր նայեց նրան և գլը-  
խով շնորհակալություն հայտնեց:

Քեռնավոր վանականը զննեց առաջինին և նկատելով նրա  
տխրությունը՝ գնաց դեպի ձորի մուտք, որի գլխին մի խաչքար  
էր տնկած:

Վանականը հանեց գոտկին խրած մի սևացած մազաղաթի  
փաթեթ և բանալով սկսեց զննել: Այնտեղ հայկական մեհենական  
նշանագրեր կային: Ըստ երևույթին պատառիկը շատ էր ենթարկ-  
վել նրա զննության և կրում էր անվերծանելի մի տող, որ խիստ  
շահագրգռում էր վանականին: Նա հեռացրեց, մոտեցրեց ձեռագի-  
րը, եղունգով քերեց մի նշանագրի ծայրը, կրկին նայեց կողքանց  
և նորից վաթաթելով խրեց գոտկին: Ապա շարունակեց նույն  
տխուր խոհերով նայել հեռուն:

Դաշտից դեպի վանքն եկավ մի այլ վանական: Նա գեր ու  
փիթուն դեմք ուներ և պարարտ փոր: Մշմշալով կանգ առավ վա-  
նականի առջև, սրբեց խմորանման դեմքի և ճմռած լայն քթի  
բրտինքը և նստեց: Նայեց կարոտալի հայացքով հեռուն և ասաց.

— Բուսեղենը հապաղում է: Իսկ ախորժակս մեծ էր, ավա՛ղ:

— Այո... — խուլ հեգնանքով ասաց վանականը:

— Որպե՛ս է Աղեքսանդրիա այս ժամիս, — հարցրեց ծաղ-  
կատար քիթը խպշտելով գեր վանականը և քրտնախաշ դեմքը  
տառապագին դարձրեց դեպի խոսակիցը:

— Ի՛նչը, — անտարբեր հարցրեց վանականը:

— Բանջար բուսեղենը և այլ պարագայք:

— Բարեհաշոդ է:

— Եվ ձեթը որքա՞ն առատ երէ՞լ: — Հառաչեց գեր վանականը, — Գետտ կրկին հառաչեց, — Ի լրո ենք, ոչ տեսանք ձեթը:

Խոսակցութիւնը շէր կաշում:

— Հայր Գրիգորիոսը դարձում է Աղեքսանդրիա և Բյուզանդիա ուսում առնելու: Տգետ տգիտացյալ: Բարիք է այնտեղ ապրելը:

Ձորի շավիղը կենդանացավ: Հեծյալների մի մեծ խումբ սագաբար բարձրանում էր վեր, դեպի վանքը:

— Իշխաններ են, — անհանգստացավ գեր վանականը և վեր կացավ, — գնանք վանք:

— Դու գնա, ես մի առժամ կմնամ, — ասաց վանականը:

Գեր վանականը գնաց: Մյուս վանականը հանդարտ հայացքը գցեց հեծյալների կողմը և մնաց անշարժ իր տեղը մտախոհ, անվրդով:

Վանականները վանահոր հետ դուրս եկան խցերից և եկան դեպի մուտի խաչքարը:

— Հայր Մովսես, հարգուպատշաճը նվիրենք իշխաններին, — ձայնեց վանահայրը վանականին:

Հայր Մովսեսը լուռ վեր կացավ և միացավ վանականներին:

Ձորից բավական ուշ դուրս ելան հեծյալները: Վարդանն էր, Արտակ Մոկացը, Ատոմը, Արշավիրը, Խորենը, Քաթուլը, Ղևոնդ Երեցը, Եղիշեն, Եզնիկ Կողբացին, կաթողիկոսը և այլ նախարարներ, սեպուհներ և վանականներ: Սրանց հետևում էր մի մեծ խումբ թիկնապահների:

— Ողջույն սուրբ հարց, — ասաց Վարդանը մեղմաձայն և առաջ եկավ:

— Ողջույն իշխանաց և սուրբ հարց, — ասաց վանահայրը և ակնածանքով նայեց Վարդանին և կաթողիկոսին:

Գնացին վանք: Մտան տաճարը:

Տաճարի կամարները արծիվների կախած սրաթևերի պես հշնում էին վերևից ներքև, մինչ պատերը մոռալու ու վեհատիպ վեր էին տանում գմբեթը: Ճարտարի իմաստուն արվեստը խիզախել էր մի անիրագործելի թռիչք և այդ թռիչքում խոհական ժուժկալությամբ ներդաշնակել էր մի հրաշակերտ:

Արտակի հայեցողական հափշտակութունը վառվեց ճարտարապետի վսեմ ստեղծագործության հետ: Նա լցվեց ազնիվ հպարտությամբ: Վանահայրը մի փղոսկրյա կազմիկ մատյան բերեց Վարդանին: Բոլորը խմբվեցին Վարդանի մոտ: Մատյանը ծաղկած էր առասպելական ու երևակայության խաղի անթիվ տեսակ կենդանածաղիկներով, թռչնակենդանիներով, կենդանաձկներով: Դա գուլների մի գողտրիկ մրրիկ էր մանրապատկեր շրջանակում փակած:

Եղիշեն մոտեցավ Մովսես անվանված վանականին և մեղմակի քաշեց պատի տակ: Նայեց կարեկցաբար և սիրով նրա դեմքին և հարցրեց.

— Ինչպե՞ս ես, սիրելիդ իմ, ինչպե՞ս ես...

— Աստծո հիշողությունից դեռ չեմ ընկած, ուրեմն և փառք աստծո,— պատասխանեց Մովսես վանականը կիսաժպիտ:

— Գրո՞ւմ ես պատմությունը գոնե...

— Քանի շունչ ունեմ, սիրելիս...

— Գրի՛ր, գրի՛ր, ազգը քեզ է նայում ծարավի:

Մովսես վանականը զուսպ ու շշուջված նայեց Եղիշեին: Նրա աչքերի խորքում թախծում էր մի խորին իմաստություն:

— Շատ ես սգում, սիրելիս, մխիթարվիր, ամոքվիր,— ոտից գլուխ զննելով Մովսես վանականին,— ասաց Եղիշեն:

— Ո՞ւմ եմ վրդովում իմ սգովս, Եղիշեդ իմ սիրելի,— ասաց ոչ թե վիրավորված, ոչ թե գանգատավոր եղանակով Մովսես վանականը և ապա կարծես ինքն իրեն հագիվ լսելի ավելացրեց,— նրանք արժանի են, որ մենք երբեք չմխիթարվենք:

— Ճշմարիտ ես, սիրելիս, ճշմարիտ ես, ես ևս ամեն օր շուրջս եմ նայում որբացած: Քանի կենդանի էին՝ ես ինձ փիլիսոփա էի կարծում: Հիմա որ նրանք չկան՝ մենակ եմ տեսնում ինձ ու մրտաքով տկար: Գործերը չեն ներում, որ հաճախ գնամ գերեզմաններին այցելու:

Մովսես վանականը լուռ էր:

— Տաճարների պես կործանվեցին: Այլևս ո՞ւմ դիմենք, ո՞ւմ ապավինենք: Այլևս ո՞վ պիտի ուսուցանի մեզ կյանքի ուղիք: Ո՞ւմ ուրախացնենք մեր ուսումով, որ բերինք Աղեքսանդրիայից:

Եղիշեի խոսքը թեև հուզեց Մովսես վանականին, միաժամ վրդովեց նրան՝ նորոգելով նրա մեջ նույնանման վիշտը: Այն

անձինք, որոնց մասին խոստում էր Եղիշեն, երկուսի էլ հարազատն ու պաշտելիներն էին՝ Սահակը և Մեարապը՝ հայ ժողովրդի հոգու ճարտարապետները, նրա ստեղծողները, Մովսես վանականի և Եղիշեի ուսուցիչները և խնամատերները, որ նրանց ուղարկեցին Աղեքսանդրիա և Հունաստան բարձրագույն ուսման, որ մեռան՝ դեռ նրանք արտասահմանում:

— Մովսես վանականը հպարտ վշտով նայում էր Եղիշեին և շարունակում էր լռել:

Վարդանը թերթեց մատյանը, նայեց երկար մի նկարի, որ ներկայացնում էր փոքր, որի զարդաբուն աշտարակի մեջ առյուծ էր նստած, իսկ ներքև բույսերի մեջ տուտագալար, գլխացից վեր էր միտում մի ոսկե օձ: Վարդանը ցանկություն հայտնեց տեսնել վանքի մատենադարանը: Վանահայրը առաջնորդեց մի փոքրիկ խուց տաճարի հենց սեղանի կողքին: Այնտեղ պատի խորշերում դասավորած էին մատյաններ՝ մեծ ու փոքրիկ, ծաղկած զարդապատյան, ակնաշարած: Կային և քոթրափան, հռնական, պարսկական ձեռագիրներ, նշանագիրներ, արվեստի առարկաներ: Դա մի գողտրիկ թանգարան էր միաժամ: Վարդանը խորասույզ նայում էր այդ ամենին և գլուխը մեղմ օրորում:

— Փոխանակ այսպիսի բաներ կաղմելո՞՞ գնա պատերա՛զմ վարիր... Դա՛ն ճակատագիր... — խոսեց նա ինքն իրեն:

Տազնապալից էին Վարդանի վերջին օրերը: Բյուզանդիայից և Հոնքից լուրեր չէին գալիս: Մինչդեռ պատերազմը մոռնում էր հորիզոնում:

Դուրս եկան վանքի բակը: Նստեցին քարե նստարաններին, տերևազուրկ ընկուզենու տակ:

— Դե, օ՛ն, մեր գործի՛ն,— հրամայեց Վարդանը:

Բոլորը խմբվեցին նրա առջև: Ծկան նստեցին նաև վանականները: Վարդանը դարձավ նրանց.

— Անցե՛լ է արդյոք զորագունդ վանքի մոտից կամ շրջափայլից:

— Ոչ, Սպարապետ,— պատասխանեց վանահայրը:

— Իսկ լուր չունե՞ք, որ ավելի հեռուներից անցած լինի:

— Ես լսողաց եմ, Սպարապետ,— խոսեց քաղվելով մի երիտասարդ վանական:

— Ի՞նչ զորագունդ է և ո՞ր կողմն է շարժվել:

— Զեմ հիշում... շհարցրի, Սպարապետ:

— Հա՛յ զորագունդ է եղել:

— Որպես հրամայեցիր, Սպարապետ...

Վարդանը գլուխը շարժեց կշտամբանքի ժպիտով:

— Հայ զորագունդ է անցնում, և դուք չեք հարցնում, թե ո՛ւր է գնում:

Վանականները լուսթյամբ Վարդանին հառեցին իրենց խաղաղ, անվրդով հայացքները: Ի՞նչ կշտամբանք հետու, խուլ վայրում իրենց անվրդով կյանքն ապրող վանականներին: Գա զգաց Վարդանը, ուստի և ինքը պատասխանեց.

— Արհավիրքը բախում է Հայոց աշխարհի դռները և հայ վանականներդ չեք վրդովվում, չեք հարցնում, թե ի՞նչ պիտի լինի նրա վիճակը:

— Ի՞նչ պիտի հարցնենք, Սպարապետ,— համարձակվեց վանահայրը,— արհավիրքը մենք չենք բերում, արհավիրքը մենք չենք վանելու: Արհավիրքը ինքը կգա և ինքը կանցնի: Եվ ո՞ր արհավիրքը չի եկել ու անցել:

Վարդանը քմծիծաղով գլուխը շարժեց:

— Եվ արհավիրքին ի՞նչ այլ պատիժ, Սպարապետ, քան սոնցնելը նրա: Այս է օրենքն աշխարհի:

— Իսկ դուք չե՞ք անցնի,— հարցրեց Վարդանը:

Վանահայրը մեղմ ժպտաց:

— Մենք ևս անցավորաց ենք, Սպարապետ:

— Բարի: Արհավիրքը կանցնի, դուք կանցնեք, մենք կանցնենք: Ապա ի՞նչը կմնա:

— Կմնա Հայոց աշխարհը, Սպարապետ:

— Բայց այս անգամ չի մնա, հա՛յր սո՛ւրբ,— վրզովվեց Վարդանը,— այս անգամ թշնամին գալիս է ոչնչացնելու կամ ոչնչանալու: Գուցե տա սրան պատասխան հայր եռբենացին: Ի՞նչը պիտի փրկի Աշխարհն հայոց:

Խորենացին հանգիստ, հպարտ դարձավ Վարդանին:

— Ինչը պիտի փրկի Աշխա՛րհն հայոց:— Աշխա՛րհն հայոց, Սպարապետ:

Այդ միջոցին մի վասպուրականի կատու վեհատիպ ու արքայական շարժումներով եկավ բարձրացավ Վարդանի ծնկանը և նստեց հանգիստ ու հպարտ: Վարդանը թախժալի ժպտաց ու թույլ

տվեց, որ նա մնա իր ծնկանը: Թուրը նայեցին Վարդանին գուր-  
գուրոտ հայացքներով:

Վարդանը հայացքը գետնին՝ ասաց խորենացուն.

— Դյուրին է խորհելն այդպես, հայր սուրբ, երբ մարդ չի  
կանգնած ստույգ մահի դեմ: Դուք կմտնեք քարանձավները, կըս-  
պասեք, որ շարիքն անցնի: Բայց Աշխարհն հայոց՝ ասել է՝ ժո-  
ղովուրդն հայոց, քարանձավները չի մտնի: Նա կանգնած է բա-  
ցը և պիտի հարվածը ընդունի և մեռնի կամ ապրի:

— Մաղթում եմ ի սրտե, որ ապրի: Թեպետ խոովքն ու տագ-  
նապը պաշարում են հոգիս, թե ինչպե՞ս պիտի փրկվի ժողովուրդն  
հայոց: Ո՛ւր են Արշակունիք, ո՛ւր տիրազուլխներն Աշխարհին  
հայոց, զորությունը պետության: Կորցրինք այն, ավա՛ղ: Որով-  
հետև կորցրինք գաղափա՛րը:— Դարավո՛ր շանքերի արդյունքը:  
Գաղափա՛րը, պետությա՛ն, պետական զորությա՛ն: Պետությա՛ն,  
որ կնշանակի զորությո՛ւն:

Վարդանը թափով շրջվեց խորենացու կողմը: Այդ շարժումից  
կատուն պիտի ընկնէր, բայց ճարպիկ թաթերով կախվեց նրա  
տաբատից: Վարդանը բռնեց կատվին ու քաշեց իրեն: Կատուն  
սկսեց մոռալ և լիզեց նրա սրի դաստակը:

— Հայոց ժողովուրդը գնում է գերագույն առաքինության.  
վկայելու ազատությունը,— հառեց վառվուռն աչքերը խորենացուն  
Վարդանը,— մի՞թե չի գոհացնում սա քեզ:

— Ճշմարիտն եմ ասում քեզ, Սպարապետ, որ եթե ժողո-  
վուրդն հայոց չի վկայի բարձրագույն ոգուն՝ ազատությունը նրան  
չի վկայվի: Սրանով կհաղթես,— մատնացույց արեց խորենացին  
մի մատյան,— հրեղեն սրա լեզվով և հրաշակերտ արվեստով:  
Ահա սա ոգի է գերագույն և նշան բարձր ազնվության: Սրանցում  
ոգին քննել է տիեզերքը: Վկայել է ազնիվ խոհ և վերասլաց առա-  
քինություն: Կունենա՞ ժողովուրդն հայոց հպարտությունը սրա...  
Սթե չի ունենա՞ ապա ուրեմն ժողովուրդն հայոց լոկ բույս է հա-  
սարակ, արարած սոսկական: Ի՞նչ շահ է հոգուս խոտը անիմաստ  
Թող այնժամ,— կաղոթեմ,— ապրի նա՛ ուր, ինչպես և որքան  
կամենա: Զեմ հափշտակված նրանով...

Վարդանը վրդովվեց: Սակայն չկամեցավ իր միտքը բռնա-  
գատել իր առջև նստած մի գիտունի և պատմիչ փիլիսոփայի: Ուս-  
տի և ջանալով, որ կատուն չբնկնի վայր, որովհետև մագցում էր,

ներա կուրծքը և թաթիկով խաղում նրա մորուքի հետ՝ նա և կատա-  
վով եղավ: Ոչ ոք փորձ չէր անում հեռացնել կատվին տեսնելով:  
Վարդանի թուլութունը գեպի կենդանին: Միայն զգույշ ժպտում  
էին:

— Այդ հրաշալիքները մեծ են, խոստովանիմ և խոնարհիմ,—  
ասաց Վարդանը,— բայց ո՞չ ապաքեն այդ ծառի ծաղիկները սը-  
նում է հողը:— Դու անտեսում ես հայոց ժողովուրդը: Նրա մեջ  
են հյութերը և նա պիտի տա հյութերն այսուհետ ևս: Միայն թող  
փրկի իր ազատութունը:— Մեզ նոր թագավորութուն է պետք:  
Արշակունիները գնացին: Պետք է նոր թագավորութուն:

— Նոր թագավորութուն... — խիտ հոնքերի արանքներից  
կայծկլտացին խորենացու խստահայաց աչքերը,— այո՛, նոր թա-  
գավորութուն:

— Եվ աստծով դու պիտի լինես գլուխը նրա,— շեշտակի խոս-  
եց Արշավիրը:

— Ես չգիտեմ ով... Ինչո՞ւ ես: Նա, ով որ պիտի կամենա,  
պիտի կարողանա: Դուք, ես, ուրիշները — միևնույն է,— Աշխարհ-  
հըն հայոց:

.... Պետք է վերադառնա... Վերագրավե՞նք մեր ուժը... Թա-  
գավորութունը: Պետք է հավաքենք այս ցրիվը իրարամերժ, իրա-  
րաջինջ ուժերը: Մեր ժողովուրդը: Մեր բոլունցքը...

... Այլապես հողմացրիվ կանեն մեզ, բնաջինջ կանհետացնեն  
երկրի երեսից, կկտրեն մեր հոտն ու ոտը, մեր անունը...

Առաջին անգամ Վարդանը խոսեց այսպիսի մեծ նյութի մա-  
սին: Անշուշտ դրա դրդիչը խորենացու վեհատիպ կերպարանքն էր  
և ազդեցիկ դեմքն ու խոսքերը: Նրան պետք էր հաղորդել այս  
նվիրական գաղտնիքը: Շրջապատողները լցվեցին մի սրբազան  
զգացմունքով: Եվ զգացին, որ նա կարող էր և արժանի էր, և իրոք  
էլ կատարում էր մի իրավասու գործ, ամենքին միացնող մի գործ,  
որ թագավորի գործ էր:

Ներս մտավ Արտակ Մոկացի թիկնապահը:

— Իշխան, հեծյալ ջոկ է երևում ձորի այն կողմում:

Արտակ Մոկացը և Ատոմը դուրս շտապեցին: Նայեցին՝ հեծ-  
յալ ջոկը գնում էր արևելք տանող ճանապարհով:

— Ի՞նչ նշաններ են տեսնես,— հարցրեց Արտակ Մոկացը:

— Խորխոռունյաց,— պատասխանեց թիկնապահը:

Հեծյալ ջոկը հանկարծ կանգ առավ, սկսեց դիտել այս կողմը:

— Ռշտունցի էլ կա, իշխան,— ասաց թիկնապահը:

— Հետապնդե՛լ,— դիմեց Արտակ Մոկացը Ատոմին:

— Կարող է առաջապահ լինել, սպասենք բուն զորագնդին,— ասաց Ատոմը,— իսկ սրան հարվածելն օգուտ չունի:

Երեք հեծյալ անշատվեցին դեմից անցնող ջոկից և մտան ձորը՝ նշան անելով:

Միաժամ եկան թիկնապահները և լուր բերին հետախույզներից, որ շրջում էին վանքի շրջակա լայն տարածությունների վրա: Պարզվեց, որ մոտակայքից դեպի Սյունիք են անցել Գաղիշոյի զորագնդի մնացորդները՝ խառն ուշտունցիների հետ:

— Ուրեմն Սյունիքը հարձակման մարտկոցն է,— ասաց Վարդանը և գլուխը թափ տվեց:

Սպասեցին դիմացի հեծյալներին:

Վերջապես բավական հապաղելով դուրս եկան նրանք ձորից և մոտենալով Արտակին՝ առ Ատոմին ողջանեցին զորական կարգով:

— Գասպար սեպու՛հը... Վարդ սեպու՛հը, Խոսրովիկ սեպու՛հը,— ուրախացավ Արտակը:

Գասպար սեպուհը հայտնեց, որ իրենց ջոկը խորխոտուններ և ուշտուններ՝ Գաղիշոյի զորագնդից փախած գալիս էին միտնալու Խորենին՝ Սպարապետի ծառայության: Պատմեց, որ իրենք Գաղիշոյի զորագնդի հետ գնացել էին հավատարիմ զինվորներ փախցնելու դիտումով:

Արտակը այս մասին հայտնելով Վարդանին՝ հավաստիացրեց, որ նրանք հավատարիմ կմնան: Մի վոթը հետո ջոկը ներկայացավ Վարդանին:

Վարդանը վեր կացավ:

— Գե, օ՛ն, թող ամեն ոք խղճի առջև ինքը լինի մաքուր եվ կանչեց Արծվիին:

— Մի քանի թիկնապահներով արշավեցեք շրջակա շեները և տեղեկություն բերեք, թե ինչ զորագունդ է անցել մոտերքից:

Արծվին շորս հոգով դուրս ելավ վանքի բակից: Վանահայրը հյուրերին հրավիրեց վանքի ճաշարան: Թեթև նախաճաշից հետո Վարդանը առանձնացավ վանքի հյուրատանը՝ հանգստանալու: Արշավիրը, Թաթուրի հետ մտան մի խուց և իսկույն քնեցին: Կա-

թողիկոսը գնաց վանահոր խուցը: Իսկ մյուսներից իշխանները՝ Ատոմը և Արտակը, ինչպես և Ղևոնդ Երեցը, Եղիշեն և Եզնիկը գնացին Խորենացու օթևանը:

Դա մի կիսամութ խուց էր՝ նեղլիկ պատուհանով, որ բացվում էր անդունդի վրա: Մեջտեղ դրած էր մի բարձր գրակալ և բարե սեղան: Պատերի մեջ դարաններ կային՝ մատյաններով և մագաղաթի փաթեթներով խցկած: Մի կողմ ծալած էր հասարակ անկողին: Գարակներից մեկում տեղավորված էր մի մարմարե կոտորած կիսանդրի, որ Տրդատ թագավորի դեմքն էր ներկայացնում:

— Սպարապետը մեծ հոգսերի մեջ է,— ասաց Եղիշեն,— և դյուրագրգիռ է դառել:

— Ցավ է ինձ տեսնելը նրան այսպես ալեկոծ,— ասաց Խորենացին,— սակայն և ցավ է լսելը, որ մարզպանը տաժանագին տվալյանքների մեջ ընկավ:

Ատոմը ցնցվեց և խորթ նայեց Խորենացուն: Այդ նկատեցին բոլորը և սպասեցին, որ կարող էր մի գծտուլթյուն ծագել:

— Սո՛ւրբ հայր, ներողամի՛տ եղիր,— ասաց Ատոմը վրդովված,— մարզպանը դավաճան է և Սպարապետին ո՛չ համեմատու է Խորենացին տխուր նայեց Ատոմին.

— Եվ ի՞նչ մխիթարուլթյուն ինձ, իշխանի՛կ, եթե մարզպանը դավաճան է և Սպարապետը ոչ: Կամ եթե Սպարապետը լինե՞ր դավաճանը և հավատարիմը՝ մարզպանը: Միևնույն ազգի են է միևնույն դավաճանը: Ցավ է ինձ և ափսոսանք: Մարզպանը խոհաական անձն էր և կորովամիտ: Նա հետամուտ էր թագավորության վերականգնման: Եվ եթե ձախողակ եղավ նրա գործը՝ ողբալ է պետք և ոչ անիծել նրան:

— Մենք շենք ողբում, հայր սուրբ, մենք ոչնչացնում ենք,— ասաց Ատոմը վրդովված:

— Առավել՛ ողբալի, որ հարկադիր ենք ոչնչացնելու, իշխա՛նիկ...

Տիրեց անհարմար լուսթյուն: Այնքան մոլեգնոտ, եռանդուն և անհանգիստ մարդիկ ինչպես Ղևոնդ Երեցը, Եզնիկը, Եղիշեն, Արտակը՝ ախրութչամբ լռեցին Խորենացու խոսքերի ազդամամբ: Ինչպես մեծ սզավորի մոտ:

— Հայր սուրբ,— խոսեց վերջապես ներշնչված և հուզված Արտակ Մոկացը, որ մինչև այժմ շարունակ լռելով չէր իմանում

երբ և ինչպես խոսել սկսեր Խորենացու հետ,— մեր ամենի՛ս հայր Մովսես, մի՛ կարծիր թե մեր հոգիները թեթև են մեր աշխարհի ծանր վիճակում: Մենք ևս ոգին ենք որոնում և ոգուն ենք ապավինում մեծ արհավիրքի դիմաց: Մենք ևս պաշտում ենք մեր պանծալի անցյալը վեհանձնյա մարդկանցով: Բայց նրանք հող են այժմ և հուշ մեր հոգու մեջ: Հիմա մենք ձգտում ենք պաշտպանել մեր երկիրը: Սպարապետը մեր առաջնորդն է: Նրա՛ն պիտի հետևի ժողովուրդն հայոց:

— Ոչ, մի՛ անգոսնիր նրան, հայր Մովսես,— ասաց Ղևոնդ Երեցը,— Սպարապետը հանդուրժեց Սյունի դավաճանին ավելի քան հանցավոր ներողամտությամբ: Սյունին արյուն թափեց:

— Ավա՛ղ, հիմա ավելի կթափվի արյունը, ավելի կթայթայվի Աշխարհն հայոց:

— Պետք է թափվի այդ արյունը,— ասաց խրոխտ ձայնով Ղևոնդը,— և դա պիտի սրբի մեր հոգին:

— Դաժա՛ն խոսեցիր, հայր Ղևոնդ,— կշտամբեց Խորենացին:

— Երբ չկա հաշտության եզր՝ դաժանությունը պիտի փռվի մեզ:

Խորենացին լռեց և իր մտքերին գերված խոսեց ակամա.

— է՛, իմը վերջացել է... Ես տկար եմ և մահին գերի: Ողբում եմ ազգիս կործանումը, ուսուցիչներիս մահը: Ինձ մահը կուրախացնի:

— Մի խոսիր այդպես, հայր սուրբ,— խրոխտ ձայնով ասաց Ղևոնդ Երեցը,— խոսքերդ տկար են,— սակայն գործդ կորովի: Կապրես և կտեսնես ազատությունը:

Եզնիկ Կողբացին, որ նույնպես լուռությամբ էր կաշկանդված՝ ասաց.

— Ոգիդ վշտերին ես գերել, հայր Մովսես,— մեր անձկալիքը՝ Սահակ և Մեսրոպ ո՛չ ևս են մեր մեջ: Ես ևս ողբացել եմ շատ: Բայց աշխարհը աշխարհ է, կյանք հավերժական: Ոչ ամեն կործանում վախճանն է բանի: Նյութը անմահ է և մշտապես հզի հրաշալիքներով: Ինչպես հողը՝ դադարում է, մերթ կրկին ծնում, նույնպես և ժողովուրդը: Եվ եթե հողը, որ անշունչ է և ծնում է ապա, ուրեմն որքա՛ն մարդը գանձարան է ոգու:

Երկար խոսեց Եզնիկը: Նրա խոսքը լուրջ էր, խոհական և խորրբ: Նա համոզում էր: Համոզում էր որպես փիլիսոփան փիլիսոփային:

Խորենացին համոզվում էր, ուրախանում:

— Կգա ոգին վերստին,— խրոխտ խոսեց Ղևոնդ Ծրեցը,—  
կհասնի մեր ազգը:

— Կգա՞ ոգին,— կրկնեց Խորենացին կենդանացած,— օն,  
ուրեմն կապրի ժողովուրդն հայոց: Ծս ևս մերթ ու երբեմն գաղտ-  
նի հոււում եմ: Այն ոգին, որ ունեցել է երբեմն մեր ազգը՝ նա  
պետք է, որ լինի անմահ: Պարտավոր է:

— Ճշմարիտ է, հայր սուրբ,— ասաց Արտակ Մոկացը:

Եվ նյութը փոխեց:

— Ե՞րբ ես ավարտում Հայոց Մեծաց գիրքը, հայր սուրբ:

Խորենացին տխուր հպարտությամբ նայեց Արտակ Մոկացին.

— Եթե գիրքը ինքը չի ավարտի ինձ՝ հուսով եմ՝ երկու երեք  
տարում...

— Ավարտի՛ր, հայր սուրբ, հայոց ժողովուրդը այդ գիրքը  
կրժքին բռնած կգնա դեպի ապագան:

— Խորենացին սուր նայեց Արտակ Մոկացին և աչքերը ջեր-  
մացան նրա վրա:

— Ավարտի՛ր, ավարտի՛ր,— շարունակեց ավելի ոգևորված  
Արտակ Մոկացը,— առաջին գիրքդ կրակի պես գնաց վառեց հա-  
յոց ժողովրդի սիրտը: Թող երկրորդը, երրորդը, մյուսները հաս-  
նեն նրան:

Այդ միջոցին ձորից բարձրանում էին երեք հեծյալներ: Նրանց  
գանդաղ և հանգիստ ընթացքն ու շարժումները, ծիծաղկոտ զրույ-  
ցը թողնում էր խաղաղ ճամփորդների տպավորություն: Վարդանը  
սուր նայեց այն կողմ: Նրանք բարձրացան, հասան վանքին և  
նկատելով Վարդանին՝ թողին իրենց զրույցը, մտան վանքի բակը,  
տպա անշտապ իջան նժույզներից և մոտ եկան Վարդանի առաջ,  
պատիվ տվին: Դրանք Վարդանի հետախույզներն էին, որ ուղարկ-  
ված էին հեղավոր սահմանը: Վարդանը հանգիստ հարցրեց:

— Ի՞նչ լուր:

— Պարսից զորաբանակը երևան հանեցինք, Սպարապետ,—  
ասաց նրանցից մեկը, որ ավագն էր երևում:

— Որտե՞ղ,— հանգիստ հարցրեց Վարդանը:

— Մեծ ավազուտներից այս կողմ: Գալիս է մեծ հապշտա-  
պով, թանձր է, խոշոր զորաբաժիններ ունի հեծյալ և բերում է  
մատյան գունդը հիսուն փղերով:

— Որքա՞ն կլինի թիվը:

— Ծրկու-երեք հարյուր բյուր:

— Ասպատակները մինչև ո՞ւր են հասել:

— Ասպատակներին տեսանք Հեր ու Զարևանդ:

— Ո՞ւր են ուզում հարվածել: Արևմուտք:

— Ոչ, Սպարապետ, կերևի թե Այրարատ:

— Ինչո՞ւ ես այդպես ասում:

— Ասպատակները խփում են արևմուտք: Եվ հետո, Սպարապետ, Ատրպատականում անհանգիստ են, լսել են, որ հոները շարժվում են, թե՞ շարժվել են:

— Շատ բարի, — ասաց Վարդանը՝ կարծես խոսքը վերաբերում էր Էի հասարակ բանի և հանգիստ, անշարժ սկսեց մտածել:

— Ուրեմն այս հաշվով ամենաուշը մի ամիս՝ արդեն ճակատամարտ է... — հուզված խոսեց Արտակը:

— Այո, — ասաց Վարդանը:

Իսկ Բյուզանդիայից և Հոնքից դեռ մի լուր...

— Օգնությունը կհասնի... եթե ճանապարհ է ընկել... — ասաց Ատոմը:

— Բայց ի՞նչ... կարող է պատահել, որ շհասնի և ճակատամարտը սկսվի՞, — խոռովվեց Արտակը:

— Ճակատամարտը գթառատ մայրիկ չէ, որ համբերելով սպասի, թե երբ է իր փոքրիկը խաղը վերջացնում և տուն դառնում, — քմծիծաղ տվեց Վարդանը: Եվ ապա դարձավ Արծվիին.

— Կանչիր Առանձար սեպուհին.

Առանձար սեպուհը, մի սաստիկ սև մորուքով զորական, իսկույն կանգնեց Վարդանի առջև:

— Սահմանի պահակազորից պետք է մի շոկատ վերցնես և գնաս Հեր և Զարևանդ, հսկես Նյուսաբալուրտի շարժումներին և լուր ուղարկես:

— Հրամանդ, — ասաց Առանձար սեպուհը:

Հասավ հրաժեշտի ժամը: Վանականները կանգնեցին մի կողմ: Այնժամ առաջ եկավ Խորենացին և ձեռքը կարկառեց դեպի Վարդանը.

— Գտնանդաժան ճանապարհի ես՝ ի խնդիր ոգուն և ազատություն: Եվ առավել մեծ է առաքինությունդ, բանի որ մեծ է հույսդ: Գնա՛, սուրդ սուր, և թող աստված փրկե Աշխարհն հայոց:

Վարդանը համարուրեց Խորենացու աչքը և հրաժեշտի ողջունը տալով մնացած վաճառականներին, իր համհարզով և նոր զինվորներով ճանապարհ ընկավ:

Գնում էր Վաթրանը և տխրութիւնը մթնացնում էր նրա հասցքը: Ի՛նչ լսեց, ի՛նչ իմացավ երկրի իմաստուններից, այդ բոլորը չէր կարող հանդարտեցնել նրա ալեկոծ հոգին: Իսկ արհաւիրքը ահա վերջապես եկավ:



Սարսափը տիրեց ողջ նախարարական և հոգեոր դասերին, որոնց ներկայացուցիչները վերջերս խմբվել էին Արտաշատում: Նրանք ճշմարտորեն համարում էին, որ ոչնչացման առաջին ենթական իրենց իշխանութիւնն էր, թերևս և շատերի կյանքը: Վրա հասավ կյանքի-մահի կոտիլը, և կյանքի ընազղը խոսեց նրանց մեջ:

Տաճարի տագնապալի կոչնահարութիւնը գուժեց բոթքը, որ պարսիկների մի ահեղ զարարտնակ գաշխ է արագ, հապշտապ, և ժողովուրդը շանթահար եղած՝ կարծես առաջին անգամ լսեց մի այնպիսի անսորատեխի, լուր, թե պարսիկները կարող են գալ՝ լքեցվեց հրապարակն ու տաճարը: Սեազգեստ ու խավարողեմ, իբրև շար մղձափանջի մեջ պատահած պատկեր, խիտ շարքով կանգնեցին տաճարի բեմի վրա վանտականները Անտոն վանականի գլխավորութիւնով:

— Օ՛ր ահեղ, եկավ վերջին դատաստանը, վախճանն աշխարհի... — գղջացի՛ք, ապաշխարեցի՛ք, աղոթեցի՛ք...

Բազկատարած կոշիկ սկսեցին նրանք խմբովին՝ կույր սարսափ ազդելով ընակչութեան խավար խավերին: Մարդիկ սկսեցին աղոթել, կուրծքները ծեծել: Մեծերի արանքներում սեղմված սարսափահար ակնապիշ երեխաները սկսեցին լաց լինել:

Տաճարի կոչնահարման, փողոցի աղմուկների մեջ արքունի ապարանքում նախարարները կաթողիկոսի և հոգևորականների հետ նստեցին խորհուրդի: Խոսքն սկսեց Վարդանը:

— Տյա՛րք,— ասաց նա ժողովում,— այլևս երկար խոսելիք չունենք: Չեմ համարձակվում կշտամբել ձեզ ձեր սխալմունքների

համար: Թերևս ես եղա ամենամեծ սխալմունքի տերը: Ես գուցե դաժան վճիռներ պիտի դնեի ձեր, իմ ու թշնամիների առաջ, ես չարի այդ: Բայց հիմա էլ ահա ասում եմ. պատրաստվեցե՛ք կենաց և մահու պատերազմին: Կամ մենք՝ Հազկերտին կամ Հազկերտը՝ մեզ: Ուրիշ ոչ մի հնար չկա:

— Եվ դա՛ է սարսափը,— հուսահատ հառաչեց Շմավոնը: Տիրեց տագնապալի, ծանր լուռություն:

Արշավիրը վեր կացավ և հանդիսավոր, ներշնչված ասաց.

— Ճշմարիտը խոսեցիր, Սպարապետ, այսուհետև քո խոսքը, քո կամքը:

— Հայոց աշխարհի կամքը,— հարեց Վարդանը,— նա է կովոդը:

— Ահա՛ սարսափը,— կրկնեց Շմավոնը:

Գարձյալ ճնշող լուռություն: Վարդանին չչերմացրեց ոչ իր կուսակիցների կույր հնազանդությունը, որ զորական գործի անհրաժեշտությունն էր, ոչ էլ այս հառաչանքները: Նա չէր կամենում ոչ տարակույսներ և ոչ էլ մենակ լինել այս ահավոր գործի մեջ: Եվ տարակուսանքը շհապաղեց երևցնել իր գլուխը:

— Սպասեցե՛ք,— հանկարծ լսվեց հետուն նստած նոթերը կիտած ներշապուհի ոչ բարի ձայնը,— սպասեցե՛ք մի փոքր:— Համայն ազգը պիտի գնա մահվա՛ն... Կռիվ ի բնաջնջո՛ւմն... ես հասու չեմ...— և դարձավ նախարարներին՝ որոնելով հավանություն,— այդ ինչպե՛ս պիտի լինի այդ բնաջնջու՛մը, այդ ո՞վ է համաձայն...

— Ե՛ս,— պրկված շարուքյամբ շեշտեց Վարդանը,— ե՛ս եմ համաձայն: Այդ ընդունեցի ես Հազկերտի գնդանում: Այնտեղ հենց իսկը նա՛ դրեց երկընտրանքը՝ կամ պարսկացում կամ բնաջնջու՛մն: Ես ընդունեցի դիմադրությունը:

Ներշապուհը եփվում էր շարությունից:

— Պատերազմ ի բնաջնջո՛ւմն... արյաց պետությունը կամ Հայոց աշխարհը... կռիվ ի մա՛հ, գինվորագրություն ազգովի՛ն... բանդագուշա՛նքը դա է, ինքնասպան վճի՛ր...

Ոչ ոք չխոսեց:

— ... Բնաջնջվի, ասենք, արյաց պետությունը,— շարունակեց ներշապուհը,— դա կլինի ելք: Իսկ եթե չբնաջնջվի... ուրեմն,

ի՞նչ, պիտի բնաջնջվի: Հայոց աշխարհը... Հասու չե՞մ, չե՞մ հասկանում...

— Կբնաջնջենք թշնամուն, և հասկանալի կլինի,— ձայնը բարձրացրեց համբերությունից ելած Վարդանը:

— Կարող չենք,— զայրալի գռչեց Ներշապուհը:

— Թշնամին չի հարցնում: Թշնամին կարողանալ կտա: Պետք է կարողանանք: Զպետք է դիջենք Հազկերտին, չպատերազմել չենք կարող, բացի հաղթութունը ուրիշ ոչ մի հնար չունենք,— պետք է հաղթենք անպայման:

— Աստված հասնի քեզ,— խաշակնքեց զայրույթով Ներշապուհը և սկսեց սրի դաստակը քաշել ու դնել պատյանը,— Հազկերտին բնաջնջե՞նք...

— Էլ ապա ինչպե՞ս պիտի լինի...— գնաց Ներշապուհի առջև կանգնեց Վարդանը,— ապա եթե չճգմես Հազկերտին՝ դու չե՞ս, որ ճգմված պիտի լինես, և այստեղ չի փրկի քեզ ոչ քո նախարարությունը, ոչ հոգևորականությունը:

— Ապա էլ ինչո՞ւ ենք վեր կացել,— կրկին գռչեց Ներշապուհը:

— Ապա չպե՞տք է վեր կենայինք,— դաշույնի պես նայեց Ներշապուհին Վարդանը,— ապա հայտնի չէ՞ քեզ և սրանց, որ մենք ենք վեր կացել ճգմելու Հազկերտին:

— Մե՞նք Հազկերտին, կրկի՞ն մենք Հազկերտին...

Նրա ձեռքերը դողում էին:

— Այդպի՛ս ասա, այդպի՛ս վերցրու շափո՞...— ձեռք բարձրացրեց Վարդանը:

— Անհնարի՞նն ես պահանջում,— ավելի զայրացավ Ներշապուհը...

— Անհնարի՞նք, այո՞... անհնարի՞նք...

— Դու ամեն ինչ դնում ես վտանգի խաղի մեջ...

— Ո՞րչ Հայոց աշխարհը...

— Տե՛ր Մամիկոնեից,— բողոքի ձայնով խոսեց կաթողիկոսը,— տարակուսանք ես լցնում մեր հոգիները: Եթե նախարարությունը և հոգևորականությունը չեն փրկի, ասա, ո՞վ, ի՞նչը կփրկի մեզ:

— Ողջ հայ ժողովուրդը: Եթե փրկի՛ նա պիտի փրկի մեզ Ապա այլևս ի՞նչ: Ո՞չ ապաքեն համայն ազգը պետք է հանենք

արհամարհի դեմ՝ եթե կամենում ենք հաղթել: Ազգային պետք է զինվորագրվեն և՛ զորքը, և՛ ժողովուրդը:

— Համայն ա՛ղզը...

— Ապա ինչի՞, ո՞ւմ վրա է ձեր հույսը, որ վեր եք կացել արյաց հանդ պետություն դեմ: Մե՞ր զորքի վրա: Ձեր նախարարական զորքերի՞ վրա: Զորականնե՛ր եք, ինչպե՞ս կարելի է գրանցով ջնջել արյաց պետությունը: Ձեր կանոնավոր պապական պատերազմով եթե այդ է՝ հանգիստ նստեցեք տեղներդ, արդեն պարտված եք: Հազկերտը կճզմի ձեզ:— Եվ ապա տեր Արծրունյաց և դուք, տյարք, կհրաժարվե՞ք պատերազմից:

— Ինչպե՞ս կարող ենք, — բարկացավ Ներշապուհը, — դա չէ բանը: Բանն այն է՝ թե ինչպե՞ս կարող ես ճակատ գնալ միայն քո ժողովրդով, առանց դաշնակիցների:

— Ինչպե՞ս առանց դաշնակցի, — բարկացավ Վարդանը, — մեզ հետ կլինեն մեր բարեկամները՝ մեզ պես վտանգված, վրացիները և աղվանները, մենք պայման չունենք հոների հետ:

Կաթողիկոսը լարվեց.

— Հեթանոսնե՞րը փրկեն բրիստոնեությունը: Դու դիմում ես հեթանոսներին...

— Թեկուզ սանդարմատին անդնդոց... Թեկուզ դժոխոց բուրդր դեերին ու սատանաներին, — զայրացավ Վարդանը, — թեկուզ զայլերին ու բորենիներին... Հայրենիքի կյանքն ենք փրկում: Ամենաթանկը... սա կյանքի՛ գործ է: Սատանան անգամ, եթե Հազկերտի թշնամին է, իմ բարեկամն է:

Հետո Վարդանը վիրավորված դարձավ նախարարներին:

— Տյարք, ի վերջո ասացեք՝ ո՞վ եմ ես, դո՞ւք չեք ընտրել ինձ Սպարապետ:

— Մեր Սպարապետն ես, — սթափվեցին նախարարները վերջապես:

— Դե, որ ձեր Սպարապետն եմ, թե որ ես Սպարապետ եմ՝ ինչպե՞ս կարող եմ պատերազմ գնալ առանց դաշնակցի, չկռել ուժերը: Բայց կարո՞ղ եմ չգնալ, երբ նա գալիս է, և եթե դաշնակիցները չեն գալիս, կարո՞ղ եմ զիջել երկիրը: Դաշնակիցներին սպասում եմ, կսպասեմ կրկին, պնդադեսպաններ կուղարկեմ, որ շտապեն հասնել, մեր բարեկամները թող դան և կզան, ինչպես և մյուսները: Բայց ես նրանց այստեղ սպասել չեմ՝ կարող երկար:

Եթե ես իսկույն չմեկնեմ ճակատ, չկանգնեցնեմ թշնամուն սահմանի վրա, եթե թշնամին մտավ երկիր՝ պատերազմը վերջացած է: Հապաղելը մահվան է հանգույն: Գուցե դուք կվճռե՞ք, որ ես սպասեմ այստեղ դաշնակիցներին և ճակատամարտը տամ երկրի սրտում:

— Դա վտանգի խաղ է,— առարկեց Ներշապուհը,— չենք կարող ճակատամարտք առլ երկրի սրտում: Ծակատամարտը պետք է տանք սահմանի վրա:

Վարդանը ազդվեց Ներշապուհի զորական անկեղծությունից:

— Տյարք, ճակատագիրը բռնադատում է մեզ պատերազմի: Պետք է հռչակենք ողջ Հայոց Աշխարհի պատերազմ ընդդեմ պարսից բռնակալության: Մեր մի մասը, ցավոք, պիտի ոչնչանա այնտեղ, որ մեր Աշխարհը փրկվի:

Բոլորը սառած և լուռ լսեցին Վարդանի անողոք խոսքը և լռեցին երկար:

— Որպիսի՞ սարսափ... — շիկահեր գլուխը բռնած խոսեց Ներշապուհը,— գալիս է ահավոր արհավիրք և չկա՞ այլ փրկություն, քան ուամիկը...

— Այդ է միայն առաջժմ և առկա. հայրենի ուամիկը, և նա դուրս է եկել արգեն բռնություն դեմ,— ասաց Վարդանը հուզված,— պիտի գնանք ուամիկական պատերազմ: Դա է մեր վերջին ապավենը, կամենում ենք, թե՞ ոչ: Դե, տյարք, ես ժամանակ չունեմ:— Հնար չկա, ես պետք է գնամ սահման: Եթե մնացի մենակ՝ լավ է սահմանում: Այնտեղից ես մանր կոփվներով կնահանջեմ և կմաշեմ թշնամուն: Իսկ եթե այստեղ մնամ մենակ՝ թշնամուն մաշելու տեղ՝ ինքս կջախջախվեմ: Հնար չկա, պետք է գնամ:

Մանր էր ընդունելը, բայց նախարարները ստիպվեցին ընդունել այս ամենը:

— Ուամի՛կը... ուրիշ հույս չկա՞,— հառաչեց Արշավիրը:

Զարաշուք մենակություն փռեց այս խոսքերից: Անողոք մերկ գծազրկեց ոչնչացման դաժան կերպարանքը նախարարների առաջ, երբ տեսան, որ ժողովուրդն էր վերջին ապավենը, որին միայն կարող էին նրանք ապավինել: Եվ հենց այդ մահի կույր սարսափից և կյանքի ուժեղ բնազդից նրանք կառչեցին այդ վերջին ապավենին:

Արշավիրը վեր կացավ և սպասելով, որ իրեն լավ լսեն՝ ասաց մի առանձին լրջությամբ.

— Բոլոր հանգամանքները մեզ հարկադրում են, որ հռչակենք ողջ Հայոց աշխարհի պատերազմ: Օ՛ն, հռչակենք, եթե չենք կամենում ինքներս շնջվել իսպառ:

— Հարկ է հռչակել, — ասաց Շմավոնը:

Արտակը, որ սովոր չէր խոսել ոչ միայն հանդիսավոր, այլև սովորական պահերին՝ ասաց.

— Հայոց աշխարհի պատերազմը հռչակված է: Հռչակել է ինքը ժողովուրդը: Ես Սպարապետի միտքը այնպես եմ հասկանում, որ ինչ օգնություն էլ որ հասնի մեզ՝ ժողովրդական պատերազմը անհրաժեշտ է:

Վարդանը զսպեց գորովալի հայացքը մատնել՝ նայելով Արտակին:

— Հռչակենք, — կարճ ու վճռական ասաց Ատոմը:

— Լսեցեք, — ասաց Վարդանը, — դե, ինչպե՞ս շատեմ: Ինչ ուզում է թող անի մեր ժողովուրդը, որքան ուժեր կուզի նա կուտակի, ում օգնության կուզի դիմի՝ նա տաժանելիորեն անհավասար կռվի մեջ է մտնելու: Զիջել՝ չի կարող, նահանջի ուղի չկա: Պետք է ընդունի պատերազմը: Եվ մեր հուսկ վերջին... Հայ ժողովրդի ուժը զինվորայլի ուժն է. ահավոր ուժ, զինվորագրական կռիվ ամենուրեք: Դիմադրություն ի մահ: Դիմադրություն ճակատում, նահանջի ժամանակ, դաշտում, տանը, անվերջ, անզիջում: Մաշել, հոգնեցնել, սպառել թշնամուն ողջ Հայոց աշխարհում:

— Եվ ա՛յդ է ճշմարիտը...

— Արդարը խոսեցիր:

Լսվեց այսպես նախարարների կողմից:

Ամենքը ջերմագին, սիրավառ նայեցին իրար և առաջին անգամ իրար մեջ տեսան ընկերը, հարազատը, մարդը...

— Բարի՛, — վեր կացավ տեղից ներշապուհը, — բարի՛... Թող սյդպես... Ես իմ խղճի պարտքը տվի: Ես համաձայն չեմ Սպարապետին: Այդպես՝ կկործանվենք: Բայց ես ևս զորական մարդ եմ, տյարբ: Եկա՛վ պատերազմը՝ պետք է կռվենք: Ես կրո՛վից փախչողը չեմ: Զեր կամքը: Ի՞նչ ունեմ աշխարհում: Մի կյա՛նք: Զե՛զ, հայրենիքի՛ն:

— Ե՛վ կկռվենք,— շեշտով խոսեց Արտակը սրտնեղած,— ապա ի՞նչ, մորթվելու ենք ոչխարների պես:

— Ճճմարի՛տ, ճճմարիտ,— ջերմացած ձայներով խոսեցին նախարարները:

Գալիք ահեղ արհավիրքը, թեև Վարդանի պատկերացրածով ավելի շոշափելի ու մեծ դառավ, բայց մի կողմից սարսափ ազդելով՝ մյուս կողմից առաջ բերեց մի նոր, անհասկանալի, անակնկալ ոգևորութուն, սիրագործելու, հաղթելու բուն պահանջ: Մահվան աչքերի մեջ ուղիղ նայել տալով՝ Վարդանը մոտեցրեց մարդկանց այդ մահին, ընտելացրեց կարծես և դարձրեց նվազ ահռելի, առավել հաղթահարելի:

Եվ ինչ-որ մի ծանր բեռ ընկավ մարդկանց հոգուց: Տարտամբ, սրտմաշուկը, անորոշ վիճակը:

Մթնոլորտը մեղմեց, ջերմացավ: Նախարարները աշխուժացան:

— Տյարք,— ասաց Թաթուլը ոգևորված,— թող այսօրվա մեր թունդ վեճը հաշտության սկիզբ լինի: Հաշտ ու համերաշխ լինենք՝ կապրենք: Մեռնելու ենք՝ թող մեռնենք:

— Մենք չենք ապրի՛ սերունդը կապրի,— ասաց Խորենը:

— Մեր հայրենին կապրի,— ասաց Շմավոնը:

Լեզու կտրեցին բոլորը: Անխոսներն ու տարակուսողները, լքվածներն ու կասկածամիտները կյանքի եկան, բացվեցին:

Դա մի գյուտի, հայտնության օր էր նախարարության համար:

Անգամ ներշապուհը ժպտաց, հետո լուռ վեր կացավ և անխոս մոտենալով Վարդանին՝ սեղմեց ձեռը, թոթվեց ջերմագին:

— Զգիտեմ կկործանե՞նք արյաց պետութիւնը, բայց գիտե՞՞ս որ ես պատրաստ եմ մեռնելու՝ գործի համար: Ո՛ղջ լեր, Սպարապետ:

Թաթուլը վեր կացավ:

— Տյարք, շատ եղանք դավաճաններով, քայքայվեցինք: ձգձգվեցինք, ապականվեցինք, հերի՛ք եղավ, վերջ տանք այդ բարակացավին, գործի՛:

— Հա՛ա՛, ծա՛նր, ծա՛նր եղավ ներքին թշնամին,— հառաչեց կաթողիկոսը:

— Ուրեմն՝ վճռում ենք, — ասաց Վարդանը մի փոքր հանդիսավոր և հուզված, — հռչակում ենք հայրենի պատերազմ:

— Եղիցի՛, — միահամուռ պատասխանեցին նախարարները և հոգևորականները:

— Դե, օն, գնանք ճամբար, հայտնենք ժողովրդին ճշմարտությունը, — ասաց Վարդանը և վեր կացավ:

Նախարարները հետևեցին նրան:

Երբ դուրս եկան քաղաք և փողոցից անցան հետևակ՝ մի տեսակ արտասովոր և հասարակ թվաց այդ, բայց միաժամանակ շեշտեց մի արտակարգ, ազնետավոր դեպքի վերահաս հանդիսավորությունը: Ժողովուրդը և հոգեորականությունը դուրս թափվեցին տաճարից և հետևեցին նախարարներին:

— Ապաշխարեցե՛ք, աղոթեցե՛ք, — ժանգոտ ու մռայլ ձրջվում էր ճամբար հավաքված ժողովրդի բազմության մեջ սև հողերականների ձայնարկումները, և տազնապը սաստկանում էր:

Ժողովրդի բազմությունը սովաբացավ անհամեմատ շափերի հասնելով: Սև հողերականների վայնասունի հետ սկսեցին լսվել նաև մարտակոչ ձայներ: Հանդես եկավ Եղիշեն, որ կոչում էր.

— Ժողովուրդ հայոց, ելե՛ք պաշտպան հայրենի ազատության: Եկա՛վ սուրբ ստրկության... ելեք ընդդեմ բռնակալի...

Հենց նախարարները երևացին ճամբարին՝ զորքերն ու ժողովուրդը ամեն կողմից թափվեցին եկան: Նրանք անհանգստացել էին կոչնահարության տազնապից: Իսկույն թամբերից և վահաններից նստարաններ սարքեցին և նախարարները նստեցին: Կիսաբոլոր կանգնեցին նախարարական և ժողովրդական գնդերի սեպուհները, ավազները, պետերը, նրանց հետև լցվեցին զինվորներն ու շինականները և սպասեցին:

— Թող հայտնի լինի ձեզ, — ասաց Վարդանը, — որ պարսից զորաբանակը երևացել է արդեն և գալիս է: Շուտով դուրս պիտի գանք ընդառաջ: Պատրաստվեցե՛ք:

Հազարավոր աշքեր սևեռվեցին Վարդանի վրա: Բազմությունը քարացավ: Պատերազմի շունչը փչեց. պատերազմը իրականացավ:

— Զորքը կգնա զորական հրամանի տակ, — շարունակեց Վարդանը, — բայց դուք, որ դուրս եք եկել հանուն հայրենիքի և

պիտի գաք պատերազմ՝ իմացեք, որ ձեզ ևս կենթարկենք խրատագույն հրամանի: Եղե՛ք կարգապահ և հնազանդ:

Ըստ երևույթին բազմութիանը ճնշեց Վարդանի զորական այս խիստ խոսքը: Սակայն բազմութիան միջից հանդարտ առաջ եկավ Առաքելը և ասաց.

— Էս կոիվը հայրենիքի կոիվ է. անձներս վրա գնենք՝ աշխարհք ազատենք: Դե, տեսնում ես, Սպարապետ, թշնամին գալիս է ողջ աշխարհքի վրա, ասել է՝ էս կովի բռուն էլ սամկի վրա է ընկնում: Էս կոժում իշխանի, հոգևորի շունչները հերիք չի. էս էն տեղն է՝ ում շունչը երկար է: Մենք կտրենք թշնամու շունչը, կմեռնենք էլ՝ կազատենք: Էս է՝ գնում ենք հաղթելու: Էս մեկը հաստա՛տ, անխախտ:

— Արդա՛ր է,— խոսեց բազմութիւնը:

— Արդա՛ր է,— գնում ենք հաղթելու,— գոչեց Վարդանը,— վեր կացնենք ողջ Աշխարհն հայոց. գնա՛նք հայրենի կոիվը:

— Հրամա՛նդ,— գոչեցին ամեն կողմից:

— Հրամա՛նդ ու մեր վերջին խոսքը: Մեր վերջին խոսքն էլ էս է, Սպարապետ,— շմտնեն մեր արունքը իշխանները, չզավաճանեն մեզ: Թե չէ՝ զինվորյալի սո՛ւրբ խոսք՝ բաց առեմ և ո՛չ երկկրնչիմ,— շենք խնայի ո՛չ տեր-ժառանգ, ո՛չ նենգ-բազմաճան: Կջնջենք, ոնց որ վճռել ենք վճիռը:

— Դա ամենքիս վճիռն է,— աստեց նրան Վարդանը բարկացած:

— Դե, որ ամենքիս վճիռն է, իմացած լինենք ամենքս:

Ներշապուհը մոռայլվեց ավելի, քան վճի ժամանակ: Նրա այտերը ցնցվեցին:

— Տես, տես ո՛ւր հասավ սամկի հանդգնութիւնը,— մոմոաց նա և հենց այն է՝ մղվում էր գեպի Առաքելը, Եմավոնը նկատեց այդ և կանխեց նրան.

— Անց կաց, իշխան, շե՛ս տեսնում ինչ ժամանակներ են, ինչ վտանգավոր է գլուխ բարձրացրել ուսիկը... Սպասիր, թող, նա իր գլուխն է ազատում, մերն էլ հետը: Եթե ոչ, եթե Հազկերտը նրան մեր տակից հանեց՝ կմեռանք դատարկ նստած:

Ներշապուհը հագիվ զսպեց իրեն:

Այնուհետև նախարարների լրիվ կազմով Վարդանը անցավ ողջ ճամբաբը, զննեց ամեն բան, հրահանգեց սեպուհներին և

ավագներին՝ կարգի բերել զորագնդերն ու ժողովրդական գնդերը: Զորատեսը տաճնապ առաջ բերեց քաղաքում և հետզհետե անցավ մոտակա շենքերին: Ամեն կողմից թափվեցին Արտաշատի ճամբարը և սկսեցին անհանգստացած հետևել անցուղարձին:

Քայլում էր Վարդանը Ատոմի՞մ իր աչ կողմն առած և լուռ խորհում էր իր վճիռների և գործերի մասին: Վարդանը, հին պարսկական, բյուզանդական, հայկական ռազմագիտություններին քաջածանոթ զորավարը, շատ լավ հասկանում էր, որ այս գալիք պատերազմը այդ ռազմակարգերի ոչ մեկի պահանջներին չէր դիմանում, որ սա մի պարզունակ պատերազմ էր լինելու, հղի մեծամեծ վտանգներով, անգամ լիակատար ոչնչացման հեռանկարներով: Լի մի գործ, մի վտանգախաղ: Բայց քանի առաջ էր գնում, խորը սուզվում ժողովրդական զանգվածների մեջ, այնքան նրա հոգում ծիլ էր արձակում փրկության մի նոր հույս, որ հետզհետե պարզ բացվում, զծագրվում էր:

— Գու կատա՛կ արիր, Սպարապետ,— հարցրեց Ատոմը,— ռամկական պատերազմ ասելով:

— Ո՛չ, իշխանիկ: Ես մի հասարակ մարդ եմ վերջապես: Ես չեմ կարող լեռներ շարժել: Ինձ տերունական մեծ զորք չեն տվել, սր կովեմ հունական, չգիտեմ՝ պարսկական, անգամ հայկական ռազմակարգերով: Խոստովանենք — նախարարը վախեցած է այս կովից, հոգևորն էլ իր հոգևոր գործերն է հոգում, հոգի փրկում: Նա այդ կարող է անել մի քարանձավում փակվելով և կզոհանա դրանով, եթե մեր Աշխարհը ոչնչանա էլ: Բայց ռամիկը կկովի, ռամիկը կփրկի Աշխարհը, քանի որ հենց ինքն է Աշխարհը:— Մի վհատվիր:

— Չեմ վհատվում, Սպարապետ:

— Այո, մի վհատվիր, երբե՞ք մի վհատվիր,— մեծ հուզմունքով կրկնեց Վարդանը քաջալերելով Ատոմին և հենց ինքն իրեն էլ... Կսի՛ր.— և Վարդանը բռնեց Ատոմի ուսը.— որքան էլ շատ լինեն բարեկամներս, որքան էլ մեծ հույս լինի մեզ հասնող օգնությունը՝ ամենամեծ հույսը դնենք նախ և վերջը մեր զինվորյալ ժողովրդական զորքի վրա: Իհարկե ատամներով կքաշեմ կրեքեմ ջտարների օգնությունը: Եթե մեծղն անգամ կգա մեզ օգնության՝ ես կընդունեմ նրան իմ զորքի մեջ: Բայց լավ ի միտ առեք: Մեզ պետք է մի զորք, որը ոչ մի դեպքում չի զիջի երկիրը, կկովի ի

մահ, կաշաշտպանի ի մահ: Այդպիսի զորքը հայրենիքի զորքն է: Մեր հուսկ վերջին, ամենավերջին բարեկամը — սեփական արյունն է...



Արտաշատի ճամբարը գառավ այն հնոցը, որ վառեց ողջ երկրի դիմադրական ուժերը: Ժողովուրդն սկսեց հոսել ամեն կողմից այնտեղ՝ զինվորագրվելու: Նախարարութիւնն ու հոգևորապետութիւնը տագնապելով և անհանգստանալով հայացքներն ուղղել էին Բյուզանդիային և Հոնքին: Սակայն քար լուծվում էր այդ աշխարհների կողմերում: Ստիպված սկսեցին սեղմվել հայրենի ժողովրդին: Ոմանք արդեն բարձր հայրենասիրական մտքով:

Ժողովրդական զանգվածները տեղահանված գալիս էին լրջվում Արտաշատ, պահանջում, որ իրենց ընդունեն զորաբանակը: Նրանք վատազեն էին, հաճախ անզեն, բայց մեծապես ազդում էր նրանց վճռականութիւնը և անձնվիրութիւնը: Բոլորն զգում էին, որ ժողովուրդը իր ձեռն առավ իր բախտի տնօրինութիւնը: Դա սրտապնդիչ էր: Դա ազդեց ամենից շատ նախարարներին հատկապես Ներշապուհին, որ միշտ ընդդիմացել էր Վարդանին: Դավաճանները շկային: Մնացել էին ուխտյալ հավատարիմները, հավատարիմ զորքը և հավատարիմ ժողովուրդը:

Վարդանի ուժն ու նշանակութիւնը մեծացավ: Նա հրամայում էր արդեն ամեն բան: Նախարարները նրան տվին լրիվ իրավունքներ: Եվ նա հաճախ էր մտածում այդ մասին: Նա տեսնում էր ինչպես մի խոսքի ազդմամբ շարժվում են զանգվածները տեղոցտեղ, ինչպես զորական կերպարանք է առնում ժողովուրդը, ինչպես կազմվում են գնդերը:

Արաքսի կամուրջն անցնելով եկան Գաղիշոյի շինական Սամելը և ծաղրածուն՝ Խոխորը:

— Առանց մեզ հարսանիք եք գնում, շեղա՛վ, — ասաց Սամելը շնոգալով, որ բոլորն անծանոթ էին:

— Հա՛, մենք կերանք, դուք մնացիք, վազե՛ք, — ասաց Պողոսը:

Սամելը ծանրումեծ բազմեց շինականների կողքին և անմիջապես սկսեց.

— Դավաճան իշխանի շինական ենք, խորխոռ, իմացած լինեք:

— Հա՛մ իշխան, հա՛մ դավաճան, դժվար է ձեր բանը. երկու քառասուն տարի պիտի մեղք քավեք:

Բոլորը անբարեհամբույր նայեցին տարօրինակ թվացող ծաղրածուին, որ տխուր ու կծկված նստեց մի քարի:

Սամելը սակայն նշանակութուն չտվեց այդ անբարեհամբույր ընդունելության և զվարթ ձայնով դարձավ ծաղրածուին.

— Գլուխդ թաղեմ, խոխոք, իշխանի ծաղրածու էիր՝ դառար զինվոր. ո՞նց է քո բանը:

Ծաղրածուն կտորած ժպտով՝ անշար նայեց միայն Սամելին և չպատասխանեց: Նա ընկճված էր հոգեկան ծանր ապրումներով: Վճռելով դառնալ զինվոր՝ նա բուրբուխ լրջացել էր, մի տեսակ մերկացել իր ծաղրածուական արհեստից:

— Լա՛վ, լա՛վ, եկեք ճա՛շ համեցեք,— հյուրասիրեց նրանց Պողոսը և թեք ընկնելով գետնին սկսեց երազալի նայել կանաչ դաշտերին:

— Կյանքն անուշ է, ասում եք հա՛... Այ կանաչ-կապույտի աստված, տես ո՞նց է աշխարհք ծաղկեցրել:

— Բարի գարուն էր,— հառաչեց Հովհաննես Կարապետը,— բայց օգո՞ւտն ինչ. հողը մնաց անկերակուր:

— Մնա՞ց, ասում ես հը՞,— տխուր կրկնեց Եզրասը:

— Բա ի՞նչ. հողը ոնց որ անասուն՝ կերակրել է պետք: է՛, ո՞ւր է: Սերմ է. տեղ ունի, արև ունի, ջուր ունի. հողի կարգ է, ուզում է: Ո՞ւր է:

— Կռիվը չիներ՝ հիմի վարը սկսել էինք,— ասաց Մարկոսը:

— Ի՞նչ,— ցնցվեց ու կատաղի աչքերը շոնց Մարկոսի վրա Վարածը, կարծես աշխարհք խորտակվեց անդունդը,— հիմի վարի՞ ժամանակ է...

— Հիմի չէ, բայց մի տասը օր հետո:

Վարածը շանթահար եղավ պինդ բռնելով Մարկոսի ուսը՝ ցնցեց.

— Խեղդ տե՞ղն է, որ ասում ես տասը օր հետո:

— Լավ տեղն է: Իսկ դու բան հասկանո՞ւմ ես:

— Ե՛ս չեմ հասկանում:

— Դու:

Նրանք կպան իրար օձիք ու սկսեցին քաշքշել: Բաժանեցին կամակորներին: Վարածը դողում էր կատաղությունից:

— Շինական մարդ ու շի հասկանում հողի գործը... բա դա մա՞րդ է...



Ճախուտների, թփուտների մեջ լայն դաշտավայրում փոփած էր Փայտակարան քաղաքը: Յեխի տները մեջմեջ, խիտ ու կեղտոտ, խեղդում էին ընդարձակ, անվերջ բնակավայրը: Արդեն ծանրը ծաղկել էին այգիներում և շոգ էր: Թանձր մեզ էր նստել քաղաքի վրա՝ փոշու, գոլորշու և ատրուշանների ծխի: Դեղնատենդով տառապած նիհար մարդիկ մշուշ հայացքներով, թույլ ու ծույլ նայում էին միևնույն կետի: Դանդաղ ու անսիրտ հաշում էին շները և, փողոցներում կանգնած լճակներում լողանք էին ընդունում գիշերամորթ գոմեշները:

Արաքսը դեղնաջուր էր տանում քաղաքի հարավով, դեղնաջուր էր բերում Կուրը հյուսիսով: Քաղաքի արևելյան ծայրամասում հողաշեն բերդ կար, որի ամրակուռ դարբասի մոտ հենց նոր իջան նծույզներից Վասակն ու Գաղիշոն:

Միհրնբերսեհը սկսեց խոսել գործերի վիճակի մասին: Հազկերտի ցասման մասին, մեծ զորաբանակի մասին, որ շարժվում էր դեպի Հայաստան, Վարդանի մասին, որ մեծ հարված հասցրեց արյաց բանակին ու հեշտացրեց հոների գործը, հայկական այրուձիի մասին, որ դավաճանորեն փախավ թշնամի քուշանների կողմը:

Վասակը լսում էր և միաժամ զննում Պերոզին, Վարազվադանին: Նա մտածում էր և չէր հասկանում, թե ինչո՞ւ և ինչպե՞ս էին երկու ոխերիմ թշնամիներ՝ Միհրնբերսեհը և Պերոզը չկել Փայտակարան, միա՞ին գործելու: Չէր հասկանում, թե ինչո՞ւ էր բերել նաև Վարազվադանին, իր՝ Վասակի, մահացու ախոյանին...

Միհրնբերսեհը խոսում էր ջանալով պահպանել խաղաղ, բարեկամական դիրք. բայց եթեմն նրա մթամած աչքերում, խոր հայացքի խորքում, դիվական մի շող էր փայլում սառը դաշույնի նման: Ապա նաև Վասակին խիստ զբաղեցնում էր իր զավակների վիճակը: Ծվ վախենում էր հարցնել այդ մասին:

— ... Անհաջողություններ շատ եղան, — խոսում էր Միհրը-  
նեբրսեհը, — և կարելի էր խուսափել: Բայց բարի գտնվեցիր: Հաս-  
կանալի է... ցեղդ է, պետք է խնայել: Իսկ այժմ երբ կյանքի-  
մահի կռիվ է՝ հարկ է, որ արքային ցույց տաս, թե վերջապես  
ո՞ւմ կողմն ես:

— Ցավ է ինձ, տեր Հազարապետ, եթե մինչև հիմա պարզ չէ,  
թե ում կողմն եմ ես, — ասաց Վասակը վիրավորանքի արտահայ-  
տություններ:

— Անցնենք գործի. այնտեղ կերևա ամեն բան, — ասաց  
Միհրնեբրսեհը, — ի՞նչ ունես պատրաստ օգնության համար մեզ:

— Պատրաստ է այնքան, որքանի խոստովանության կարիքը  
ունի արյաց կողմը, — պատասխանեց զգալի խայթոցով Վասակը:  
Պերոզը խոժոռովեց. նայեց Վախթանգին, Վարազվադանը  
թունավոր ժպիտով գլուխը կախեց, իսկ Միհրնեբրսեհը դաժանո-  
րեն կրճտացրեց ատամները:

— Արյաց արքան միշտ և բազմապատիկ վարձատրել է ամեն  
մի վաստակ, տեր մարզպան, — խոսեց Պերոզը:

— Ջոր օրինակ իմ մարզպանական պաշտոնը, — հարեց Վա-  
սակը, — անշո՞ւշտ, իշխան...:

Վասակն անցավ հաշվետվության:

Միհրնեբրսեհը լսեց լուռ և հոգնած դեմք շինելով և շարտա-  
հայտելով ոչինչ ավելի: Նրան դուր չէր գալիս, որ գործին խառ-  
նըվում է Պերոզը, որ իր հետ պետք է լիներ ողջ պատերազմի  
ընթացքում լոկ Հազկերտի հրամանով:

Պերոզը ավելի առաջ գնաց.

— Ինչպե՞ս եղավ, որ Մամիկոնյան նախարարը իր ձեռքն  
առավ իշխանությունը և այժմ պատրաստվում է մեր դեմ դուրս  
գալ:

— Այնպես եղավ՝ ինչպես կլիներ, եթե ձեր դեմ Բյուզան-  
դիան հարձակվեր, և դու, իշխան, նրա դեմ դուրս գայիր, — խո-  
ցեց Վասակը:

— Թերևս այդպես, — քաշվեց իրեն Պերոզը, — բայց, տեր  
մարզպան, դու կարող էիր ավելի դյուրին գործը վերջացնել. պար-  
զապետ կաշառելիք Մամիկոնյան նախարարին. մեր արքունիքը  
կվճարեր:

Վասակը սուր նայեց Պերոզին.

— Մամիկոնյան նախարարը ապստամբ է և ոչ սրիկա...

— Ապա ինչո՞ւ դու նրա հետ շես...

— Որովհետև նա ինձ նետ չէ...

— Ապա ինչի՞ ես ձգտում դու...

— Այդ կբացատրեմ այնտեղ և այն օրը, երբ շատերի դատը կլինի և ես՝ վկա... Հիմա անցնենք գործին...

Եվ Վասակը հայտնեց, որ Սյունիքում հավաքված նախարարների գորագնդերը պատրաստ են միանալ Նյուալավուրտի զորարանակին:

Միհրնեբսեհը կենդանացավ.

— Այո, դա գործ է...

Եվ Պերոզին խայթելու համար ավելացրեց.

— Եվ հանդես կգաք ձեր նախարարական դրոշներով:

— Այդ անվիճելի պայման է մեր կողմից, — հարեց Վասակը, որով ավելի վիրավորեց Պերոզին:

Եվ Պերոզը, և՛ Միհրնեբսեհը, և՛ Վախթանգը, ինչպես և Վասակը ու Գաղիշոն լավ էին հասկանում, թե ինչու է Միհրնեբսեհը հանդուրժում Վասակի հանդգնությունները Պերոզի հանդեպ: Պերոզը ուտում էր իրեն զայրույթից:

— Սակայն դու մի անհանգստանա այդքան, տեր մարդպան, — շրջեց ուրիշ կողմ Պերոզը, — արքան անհիշաչար է: — Որքան էլ լինեն լավագույն թեկնածուներ մարդպանության՝ արքան իր մի անգամ տվածը ետ չի առնի...

— Ես հանգիստ եմ բախտի ամեն տեսակ փոփոխության հանդեպ: Պետք է վախկոտ լինել խղճի հանդեպ միայն...

Այս տրամախոսությունը՝ եթե մի կողմից դուր եկավ Միհրնեբսեհին, որովհետև Վասակը նվաստիչ պատասխաններ էր տալիս Պերոզին, մյուս կողմից տհաճ էր, որ Վասակը հանդգնություններ է խոսում: Ուստի և նա ուղղում մտքրեց վեճի մեջ:

— Մենք պետական պարտականությունների մասին ենք խոսում...

— Պետությունը բոլորս ենք ծառա հավասար, — ասաց Վասակը, — և հարգելի իշխանը ոչ ինձանից սակավ...

— Իշխանը չի խոսում գործի մասին, — լավեց Գաղիշոյի կոշտ ու թավ ձայնը, — մենք եկել ենք ռազմական գործով, և ժամանակը սուղ է...

— Այո, այո, սուղ է ժամանակը, — շարժվեց Միհրնեբրսեհը և անսպասելի կերպով դիմեց Վարզավազանին, — Ի՞նչ է կարծիքդ հայ զորքերի օգտագործման մասին:

— Եթե տեր մարզպանը փորձի կանխել պատերազմը՝ անգնահատելի ծառայութուն կմատուցի արքային, — ասաց Վարզավազանը, — Իսկ դա հնարավոր է:

Վասակը շպատասխանեց:

— Այդ ինչպե՞ս է հնարավոր, իշխան, երբ ողջ Հայոց աշխարհը վեր է կացել արքայի դեմ, — կոպիտ միջամտեց Գաղիշուն:

— Ինչո՞ւ է վեր կացել, — տաքացավ Պերոզը, — ո՞վ է նա, ի՞նչ է նա. պետութուն, Բյուզանդիա՞, Հոնե՞րը... Այդ մենք ենք, որ խոսում ենք նրա հետ, ապա թե ոչ՝ ստրուկի հետ...

— Իշխան, — ընդհատեց Գաղիշուն, — Հայոց աշխարհը ասա խենթ է, անմիտ, անհաշիվ, բայց երբեք ստրուկ... Եվ մեր խորին հարգանքը, որ տածում ենք դեպի արքան և նրա իմաստուն Հազարապետը ստրկութունից չէ, այլ մի բանից, որ արժե նրան ընծայել — անձնակա՛ն արժանապատվութունից: Անցնենք գործի, որի համար եկել ենք... — գոչեց Գաղիշուն:

Միհրնեբրսեհին դուր եկավ այդ հարվածը ևս Պերոզին: Եվ նա անցավ գործի: Խոսեցին և համաձայնեցին, որ Միհրնեբրսեհը կգնա Սյունիք, տեղում ծանոթանալու Վասակի ուժերին և որոշելու նրա մասնակցության պայմանները: Խոսեցին Հայաստանի վիճակի, Վարդանի զորքի քանակի և վասակյանց ուժերի մասին:

Տեսակցութունը վերջացավ, Վասակն ու Գաղիշուն արձակվեցին: Նրանք պետք է մի երկու օրից վերադառնային Սյունիք, ուստի և հանգստյան օթևան պահանջեցին:

Երեկոյան դեմ ապարանքի պարտեզում զրոսնելիս՝ Պերոզի հետ Վասակին մոտեցավ Վախթանգը:

— Մտողը մի նվիրական բան ունի՞ զավակը, — ասաց մեղմաժպիտ Վախթանգը, — թեզ, տեր մարզպան, ուրիշ ոչնչով չենք կարող ուրախացնել, քան այն լուրով, որ քո մեծ որդին փախել է:

Վասակը զգաց, որ գունատվում է:

— Իսկ մյո՞ւրը, — հարցրեց արտաքին անտարբերությամբ Վասակը, — հույս ունե՞մ խելացի է եղել...

Վախթանգը խոր նայեւ Վասակին ու լռեց:

— Ի՞նչ հարկ լռելու, իշխան,— ասաց Պերոզը,— մենք բոլորս, նաև տեր մարզպանը, ծառա ենք արքայի կամքին...

Վասակը ցնցվեց.

— Այո՛... այդքա՛նը... այդպե՛ս... ուրիշ ո՛չ մի խոսք...

— Մենք բոլորս արքայի զինվորներն ենք,— ասաց Պերոզը:

— Այո՛, ասացի, այդքա՛նը,— շեշտեց Վասակը ընդոտ և գերագույն ճիգով զսպեց իրեն,— շուտ եկավ գարունն այս տա՛րի,— դարձավ Վախթանգին:

— Բավական շուտ,— ասաց Վախթանգը:

Վախթանգը խոսքը փոխեց.

— Հայկական այրուձին հասա՛վ տեղ:

— Հասավ,— պատասխանեց Գաղիշոն:

— Շա՛տ էր թափ տված եղև Քուշանաց աշխարհում:

— Ոչ, մեծ մասը հասավ տեղ և այժմ Վարդանի զորաբա՛ն նակումն է,— զիտմամբ շեշտեց Գաղիշոն:

— Ինչպե՛ս է Արսեն իշխան Ռնծայնոցը:

— Նա ևս պատրաստվում է Վարդանի հետ...

Պերոզը սևացավ, լռեց: Վախթանգը քմծիծաղով նայեց գետնին:

Ողջ գիշերը չէր կարողանում հանգստանալ Պերոզը: Իր հեռ միասին անքուն Վախթանգի հետ կիսամութ օթնատնում նա մաքնու՛ լում էր վիրավոր գազանի պես.

— Ծս չեմ պահանջում, որ նրանք զորք ունենան, լինեն ուժեղ, մեծ ազգ, չեմ պահանջում, որ օգնեն մեզ, չեմ պահանջում, որ սիրեն մեզ: Բայց այդ գոռոզությունը, այդ անկոտրում առավելությունը մեր վերաբերմամբ, այդ խոսելու ձևը, հավակնությունը... Դա է անտանելին, դա է ուտում ինձ... Ի՞նչ ունեն, ինչո՞ւ է են մեծ, ի՞նչն է այդ գոռոզության հիմքը:

— Յույց տամ ես այդ Արսեն հային, որ ինքը ստրուկ է, ասել տամ իրեն, որ ստրուկ է, չնչին է, որ մեր շնորհիվ է նրանց բարիքը, որ մեր շնորհած փշրանքներով են կենդանի և դրան են միայն արժանի — ինձ ոչ մի այլ բան պետք չէ Հայոց աշխարհում,— ասաց Վախթանգը,— չսպանվե՛ր, գե՛րի ընկներ, ձե՛ռ տային նրան...

Չէին քնած նաև Վասակն ու Գաղիշոն:

— Զլինե՛ր ներհակությունը մեր ու վարդանանց, ինձ հեռ լի՛ւ,

ներ նա արյաց դեմ՝ այդ կատաղի ցուլը կտեսներ, թե որքան Վարդանի գոռոզութունը՝ նաև իմ գոռոզութունն է: Վարդանը կործանում է տանում երկիրը, Վարդանը ինձ հետ չէ թագավորության ձգտման մեջ, — այլապես Վարդանը իմ ցեղն է... Տես որտե՞ղ է ճանկերը գցում... աղքատահոգի կապի՛կ...

— Բայց ավելի մտահոգիչը գայլաղվեսն էր, — իր մտքերով գրաղված ասաց Գաղիշոն, — Վարազվաղան է խաղացնում... Իբրև թե՛՝ զգո՛րծ տես, եթե ոչ՝ թեկնածուն պատրաստ է...»: Եվ նա շի ուշանա դավիլ քեզ և լքել, երբ քամած կլինի քեզ: Պարզ է՝ հետևյալ մարդպանը Վարազվաղանն է:

— Վարազվաղանը ոչէ՛, — ձայնը բարձրացրեց Վասակը, — Վարազվաղանը գայլ է, աղվեսութուն է անում: Զի հաջողվի, իսկ Միհրներսեհին խելացի դավաճան է պետք:

— Դո՛ւ ես խելացի դավաճանը...

— Նա կարծում է ինձ խելացի, բայց դավաճան...

Լոնցին: Վասակը շէր կարողանում խելքի գալ իր զավակների լուրը առնելով:

— Բարբիկը փախե՛լ է... իսկ մյո՛ւսը...

— Խոտ է լցրել նրա մեջ պարսիկ ճիմաստունը... ասո՛ւմ էի... — խոսեց իր կոշտ ձայնով Գաղիշոն, — խելք չունի...

Վասակը բռնկեց.

— Իսկ ունի՞ խելք մոլեգնած Տարոնացին, ունի՞ խելք այս աղետալի ժողովուրդը, որ ահա գնում է ինքնառնչացման պատերազմ: Նա խելք չունի և ինձ էլ խելքահան է անելու...

— Վաղուց ժամանակ էր, — վեր թռավ անկողնից Գաղիշոն, — ե՞րբ պիտի թողնես ունայն բաներ խառնելը մեծ գործին...

Վասակը զարմացավ Գաղիշոյի վրա: Նրան շէր տեսել այդպես շարացած իր դեմ ու այդքան հանդուգն:

— Ունայն բանե՞ր...

— Ունայն, մանրուք, շնչին...

— Որո՞նք են...

— Այս որդիները, այս կինը, այս արյուն թափելը, այս ժողովուրդը... չգիտեմ թե այլ ինչ... Ե՛րբ պիտի սկսես անխնա շարքը... շարքը հենց ընտանիքից, ազգականությունից, շրջապատից, հայից, պարսիկից, ամենքից սկսած... շարդ մինչև տակը, մինչև

վերջին մարդը, մինչև կհասնես հլու հնազանդին, կամակատարին, հպատակին... Ձգեցիր հիվանդությունը, ձգեցիր հասցրիք մինչև այստեղ...

Վասակը լուռ լսում էր Գաղիշոյին և հասկանում էր, թե իրեն ինչ էր պակասում:

— Միևնույն շէ՛ վերջը զոհեի, թե սկզբում, երբ զոհ է պահանջում Մոլոխը: Քազավորութիւն ես ուզում, առանց թագավոր լինելու մեջդ: Քազավորը մորթում է, շարդում, ոչնչացնում, թագավորը ոտնատակ է տալիս մարդու ամեն ինչը՝ խիղճը, պատիվը, հպարտութիւնը, գուլթը... Իսկ դո՞ւ... Քազավորը ծախում է իր երկիրը, ժողովուրդը... Այո՛, տեր մարզպան, այո՛, տեր իմ արքա... Եվ ես այսպես եմ խոսում հետդ, որովհետև գիտեմ, որ դու կարող ես մտադրվել, բայց չես կամենում: Արյուն չես ուզում թափել առատորեն, մինչ պետք էր թափել հեղեղներով:

Կարծես ականակիր խավարում շանթեց կայծակը և լուսավորեց սարսափելի անդունդը: Վասակը լռեց:

Զարմանալի հանգիստ նայում էր Գաղիշոն: Նա էլ լռեց և մի փոքր անց անվրդով քնեց: Վասակը խորհեց նրա ասածի մասին: Գաղիշոն խիստ էր, շար, կոպիտ, բայց ճշմարիտն ասաց: Վասակը զգաց, որ ինքը շատ է ուշացել իր ձեռնարկների մեջ: Խնայել է, արյուն չի թափել «հեղեղներով»: Իսկ իր գործը հեղեղներով արյուն էր պահանջում: Ահա և շատ քնքշացավ իր զավակներին կատամամբ: Դժբախտաբար ճիշտ է, որ գործը չի ճանաչում նաև ո՛չ զավակ, ո՛չ հարազատ, ո՛չ ժողովուրդ, ո՛չ մի բան:

Հետևյալ օրը Վասակն ու Գաղիշոն հրավիրվեցին Միհրնեբուսեհի մոտ:

— Վարազվաղանին բերել եմ, որպեսզի արքան իմ բացակայության նրան մարզպան չկարգի Հայոց աշխարհին, — ասաց նա, — և ես կկամենայի, որ այդ պահանջի առաջ չկանգնեիրք երբեք:

Նա երկար նայեց Վասակին:

— Բայց օրը հասավ, տեր մարզպան, եթե նյուսալավուրտը բերում է մեծ զորաբանակ՝ փոքր չի լինի անշուշտ և վարդանինըս Արյուն պիտի հոսի... Մեզ պետք է նախ Հայոց աշխարհի նվաճումը: Ահա քեզ երկընտրանք. կամ համոզիր, որ Վարդանը

հնադանդվի կամ եկ միասին ոչնչացրու մեզ հետ այդ Հայոց օձ-  
թարհը:

— Կամ այն կամ մյուսը, Հազարապետ, վերջացավ սուտն էլ,  
ճշմարիտն էլ,— վճռական շեշտով ասաց Վասակը:

— Դե, ի գործ: Ես կգամ հետո Սյունիք: Մանոթանանք ի  
ժոտո գործին: Այս երկու օրս ճանապարհ ընկնենք:

Վասակը այլայլված կանգնեց մնաց: Միհրնեբսեհը հոնքերի  
տակից նայեց նրան և ասաց հանգիստ.

— Պետության մարդը զավակ չունի... Վճռել ես, որպես թը-  
վում է ինձ՝ արքայական գահ բարձրանալ: Գահը սանդուղի աս-  
տիճաններ չունի: Բարձրանում են զավակների, ծնողների, ժողո-  
վուրդների դիակների վրայով: Այնքան էլ քաղցր չէ գահը...

Հուսադրո՞ւմն էր, կշտամբանք, ծա՞ղր,— չհասկացավ Վա-  
սակը: Թերևս բոլորը միասի՞ն...

— Պետության մարդը ամեն բանի ձգտում է: Դա նրա պա-  
տիվն է ու պատիժը: Կարո՞ղ ես՝ իրավունք ունենա...

Վասակը շխտեց:

— Այն մյուսը փախել է... — խոսեց Միհրնեբսեհը, չես հաս-  
կանում շա՞ր, թե՞ նենգամիտ,— փախել է իմ ապարանքից, բայց  
խսկապես ումնի՞ց է փախել. արքայից... Դա այդպես չի կարող  
անցնել... Հուսով եմ կհասկանաս:

Վասակը շխտեց:

— Միաժամ նաև ժամ է հոգալը Վարդանի հավանական դաշ-  
նակիցներին քայքայելու գործը: Որպես լուր հասավ մեզ՝ վրա-  
ցիներն առ ազվանները պատրաստվում են օգնել նրան: Գործը  
խափանելու պահը միշտ վերջին օրերն է: Գործի՛ անցիր. Բյու-  
զանդ, Հոնք, ինչպես հավաստում ես ուղարկել ես: Ուղարկիր հի-  
մա վրաստան, Աղվանք և Հունաց բաժնի հայ իշխաններին:

— Հասկանում եմ,— դժկամ ասաց Վասակը,— և ուղարկ-  
ված է....

Նա այդ պահին այնքան էր ատում Միհրնեբսեհին, որ եթե  
մեծ գործի կարևորությունը չլիներ՝ պատրաստ էր սրով կիսել  
նրա կոնաձև շարամիտ գլուխը:

Երկու օրից հետո Միհրնեբսեհը, Պերոզը, Վախթանգը և Վա-  
րազվազանը Վասակի և Գաղիշոյի հետ ճանապարհ ընկան դեպի  
Սյունիք:

Վասակը ճանապարհին երկար մտածեց Միհրնեբրսեհի ասած- ների մասին: Մտածեց նաև Գաղիշոյի կշտամբանքի մասին: Շատ վերդիր արեց իր բոլոր գործերը, տարակուսանքները, տառա- պանքները: Եվ զգաց իրեն ուժեղ սեղմիչների մեջ, անողոք երկ- ընտրանքի առաջ. «Կամ ա՛յս, կամ այն մյո՛ւսը»: Կամ ստրկա- ցում, կամ արյուն: Ուր զավակը, հարազատը, ժողովուրդը գին չունեն: Գին ունի միայն նպատակը:

— Կամ ա՛յս, կամ այն մյո՛ւսը,— շեշտեց մտքում Վասա- կը,— վերջացավ սուտն է՛լ, ճշմարիտն է՛լ:



Գարնանային առավոտ էր, Սյունյաց ամրոցի գահավանդին, անդնդի եզրին փռած վագրենու վրա նստած էր Փառանձեմը Զվի- կի հետ և նայում հեռավոր ճանապարհին, որ թաքնվելով, բաց- վելով գալիս էր անդունդից ամրոցը:

Փառանձեմի սգավոր զգեստները տխրաշուք տեսք էին տա- լիս նրա դալուկ դեմքին:

— Երեկ հեծյալ է անցել ամրոցի մոտով, պատմել, որ Սպա- րապետը մեծ զորք է հավաքել,— ասաց Զվիկը:

Փառանձեմը շսեց: Նա հայացքով, մտքերով խորասուզված էր հեռուն, լեռներից էլ այն կողմ: Զվիկը էլ շխոսեց: Ճերմակ ամ- պիկներ արևմուտքից դանդաղ լողում էին լուսաշող կապույտի մեջ: Փառանձեմը նայեց նրանց:

— Տես, այսքան ամպ է գալիս անցնում: Եվ ոչ մեկը այն կողմից...

— Ամպերը շեն գա՛ իրենք կզան, տիկին,— ասաց Զվիկը:

— Ամպը կգա՛ իրենք շեն գա...

Զվիկը հանկարծ այլակերպվեց, աչքերը խելագարի պես բաց ու խուփ արեց և վեր թռավ:

— Ապա որ ասում եմ... ապա որ ասում եմ...

Լեռան կածանով գալիս էին Վարազդուխտը և Բարիկը: Նը- րանք մեջքները դեպի իրենց արած Փառանձեմից աննկատ լինե- լով՝ բալրովին մոտեցել էին: Նրանց ուզեկցում էր մի գինված հեծյալ:

Փառանձեմը չեզուն առնված վեր թռավ տեղից և վազեց դեմ:

Բարիկը վայր իջավ արագ և վազեց ընկավ մոր գիրկը: Փառանձեմը համբույրներով ծածկեց իր զավակի գլուխը: Վարազդուխտը մոտ եկավ և կանգնած տխուր նայում էր մոր ու զավակի գրկախառնության: Չվիկը գունատվեց և բազմանշանակ նայեց Վարազդուխտին: Սա շարագուշակ հայացքը գեցեց գետին:

— Իսկ... նա'... — սրտատրոփ ու տագնապով նայեց Վարազդուխտին Փառանձեմը:

— Ներսիկը մնաց, մայրիկ,— կանխեց Վարազդուխտին Բարիկը:

— Ինչպե՞ս մնաց, ինչո՞ւ մնաց...

— Չկարողացավ փախչել:

Վարազդուխտն առաջ եկավ.

— Տիկին, ո՞վ կա այստեղ պարսիկներից: Մարզպանն այստե՞ղ է...

— Ոչ. բայց պարսիկ մեծամեծներ կան... ինչո՞ւ ես հարցնում...

Վարազդուխտը բացատրեց, որ Բարիկը փախել է Միհրներտեհի ապարանքից, և եթե նրա տեղն իմացվի՝ պարսիկները կըմատնեն:

— Ի՞նչ անենք, տիկին,— տարակուսած հարցրեց Չվիկը:

— Ինչը ինչպես,— զայրացավ Բարիկը,— թող իրենց գլուխները ողջ պահեն իմ տանը... Ես Սպարապետի զինվորային եմ...

— Ի սե՛ր աստծո, իշխանիկ... — վախեցած զգուշացրեց Չվիկը:

Սարսափն ու հիացումը խառնվեցին Փառանձեմի սրտում: Չգիտեր ինչպես խլացներ իր մեջ մայրական սիրո զգացումը, ուժ տար այն հպարտության, որ շոյվեց նրա հոգում, երբ լսեց, որ իր զավակը զինվորային լեզվով է խոսում: Նրան պաշարեց միաժամ և երկյուղը, որ այդ հայտարարությունից հետո Վարազդուխտը Բարիկին կմատնի Վասակին: Մեկ մղվեց հարցնել Վարազդուխտին, թե ո՞վ է փրկել Բարիկին, մեկ էլ շուտեցրեց իր պատվին այդ հարցմունքով մտերմություն մտցնել իր և իր ամուսնու տարփածուի մեջ:

Ամբողջի գոնից գուրս ելավ և դեպի Փառանձեմը շարժվեց Կոգակը: Նա մոտեցավ, նկատեց Վարազդուխտին ու Բարիկին, և զարմանքից նրա մանր ու շարժուն աչքերը կնճիռներ կծկեցին:

— Ենորհավո՞ր լինի, բարի՞ ժամու լինի, իշխանիկս եկե՞ք է,— դիմեց նա Փառանձեմին:

Լռեցին: Նա շարունակեց.

— Երևի փախել է իշխանիկս, դո՛ւ ես, փախցրել,— նայեց Վարազդուխտին:

— Եթե պիտի մատնես զնա ասա, որ Վարազդուխտն է փախցրել և ինքն էլ Սպարապետի մոտ է գնալու,— ասաց Բարիկը:

— Բարի՛կ... — անհանգստացավ Փառանձեմը:

Կողակը շհասկանալու տվեց:

— Ոչ, ոչ, իշխանիկ, ի՞նչ մատնել, ինչպե՞ս կարելի է, իսկույն քեզ կուղարկեն Միհրնեբսեհի մոտ, դեռ Վարազդուխտ օրիորդին է՛լ...

— Կողակ իշխանին է՛լ,— վրա բերեց Վարազդուխտը և լուսանի աչքերը պսպղացրեց Կողակի դեմ:

— Այո՛, այո՛... — խորամանկեց Կողակը:

Փառանձեմը մտատանջվում էր, թե ի՞նչ անի: Թաքցնի՞ Բարիկին: Դա կարող էր: Կոտհեր իր կյանքը և կաներ այդ: Բայց գործը այստեղ թաքուտը հաջողեցնելը չէր, այլ մի շատ ավելի վեճ գաղափար: Կյանքներն ազատելու համար չեն գրվում զինվորայն, այլ վկայելու «առաջին մարդկան»: Դրանով պետք է հաղթեն: Այդ գիտե՞ր Փառանձեմը, գիտե՞ր երևի նաև Բարիկը:

— Գնանք տուն,— ասաց նա Բարիկին և արժանապատվու՞թյամբ նայեց Վարազդուխտին՝ հասկացնելով, որ նա ևս զնա:

Գնացին՝ Փառանձեմն ու Բարիկը առաջ, հետո Չվիկը և ապա Կողակն ու Վարազդուխտը:

Բարիկի հանկարծ հայտնվելը բոլորովին անկոծեց Փառանձեմին: Հանկարծ հայտնվելը, Սպարապետին կողմնակից հայտնելը, Վարազդուխտի հետ զալը, Կողակի ներկայութունը այս ամենը կատարվեց այնպիսի խելապտույտ արագությամբ, որ նա եթե կամենար էլ դրանից հետո թաքցնել Բարիկին՝ անհնար էր: Պարսիկ մեծամեծները գնացել էին Սյունյաց սահմանամերձ մի բերդ, ուր հավաքում էին Այրարատից և Զարեհավանից փախած պարսիկ զինվորներին: Այդտեղ էին Դենշապուհը, Միհր և Որմիզդ մոգպետները, Դարեհը և Արտաշիրը, և նրանք կարող էին ամեն օր,

Գալ ամբողջ... Վերջապես վաղուշ Վասակը կվերադառնար Փայտակարանից:

Առանձնացան Փառանձեմի օթևանում:

Փառանձեմը նոր-նոր ուշքի եկավ և մեծ խոռովքի մեջ ընկած գարձավ Բաբիկին.

— Ինչպե՞ս, ասում ես նձրսիկը մնա՞ց... Ինչպե՞ս մնաց նձրսիկը...

— Մնաց, շկարողացավ փախչել,— ասաց վատ համոզիչ ձայնով Բաբիկը:

Բաբիկը ընկավ մոր գիրկը և զլուխը դրեց նրա կրծքին:

— Ո՛չ, ո՛չ... չի՛ կարող... — վախեցած նայեց Փառանձեմը, հեռացրեց իր կրծքից Բաբիկին և գռչեց,— ո՛չ...

Բաբիկը զլուխը կախեց:

Փառանձեմը ուշագնաց եղավ: Չվիկը վազեց տիկնոջ վրա, տրորեց բունքերը, շուր պահանջեց աղախնից, դեմքը սրսկեց: Բաբիկը ցնցեց մոր ձեռքերը: Տիկինն ուշքի եկավ և սկսեց աչքերով փնտրել ինչ-որ:

— Ի՞նչ ես կամենում, տիկին,— հարցրեց Չվիկը:

— Կանչի՛ր օրիորդին:

Չվիկը գնաց: Բաբիկը հարցական նայեց մորը.

— Մայրիկ, նա ինձ ազատեց Միհրնբրսեհի քրոջը խաբելով, որ հայրիկից հրահանգ է ստացել համոզել ինձ ուրանալ և պիտի տեսնի մեզ առանձին: Ինձ տարան այգին...

Ներս մտավ՝ Վարազդուխտը:

— Դու իմ՝ զավակին ազատեցիր՝ շնորհապարտ եմ...

— Ես քրիստոնյա եմ, տիկին,— ասաց Վարազդուխտը:

— Նա զինվորյալ է... — ասաց Փառանձեմը, որից շհասկացվեց, թե ինչ էր ուզում հասկացնել: Բայց դա այն խոսքն էր, որ կարող էր ասել Փառանձեմը մի երիտասարդ կնոջ, որ մութ գործերով կապված էր իր ամուսնու հետ և սավեր էր գցել տիկնոջ արժանապատվութեան վրա: Նա շատ կկամենար, որ իր զավակի ազատարարը այդ կիեց չլիներ, բայց և իր արժանապատվությունը պահանջում էր ընդունել նրա նվերը՝ իր զավակի կյանքը:

— Նա զինվորյալ է,— աչքերը սարսափով պատին հառած կրկնեց Փառանձեմը,— իսկ մյուսը... ասա, ինչ որ եղել է...

— Տիկին... — տղաչեց Չվիկը:

— Ասա՛, ինչ որ եղել է,— գոչեց Փառանձեմը՝ աչքերը ուղձրելով Վարազդուխտի վրա:

— Տիկին... ի՞նչ իմանաս... իմանաս... — լաց եղավ Վարազդուխտը:

Բարիկը բարձրաձայն հեկեկաց: Փառանձեմը խելագարի պեռնայեց Վարազդուխտին և հանկարծ հասկացավ:

— Մորթագե՛րժ են արել... — այլակերպվեց Փառանձեմը, — մորթագե՛րժ են արել... Ներսիկիս մորթագե՛րժ են արել...

Եվ աչքերը սառած մնաց մի կետի: Երկար ժամանակ այլևս չխոսեց: Մինչդեռ Զվիկը, Վարազդուխտը և Բարիկը ձայնեքք խեղդած լռիկ արտասվում էին:

— էհ, թող այդպես լինի, այդպես էլ պիտի լիներ, — մըքմընչաց հաշտվածի ձայնով Փառանձեմը, — իմ զավակներս կորած էին այն օրից, որ գնացին գաղանների մեջ:

— Տիկին, — ասաց Զվիկը, — հիմա Բարիկը պետք է թաքնվի:

— Ո՛չ, երբեք: Թող նրա հայրը թաքնվի, որ ընկել է դավաճանի ուղին: Զվիկ, առաջնորդիր օրիորդին հանգստյան օթևան: Վարազդուխտը Զվիկի հետ գնաց:



Մի քանի օր անց ամբողջ վերադարձավ Վասակը իր Փայտակարանի հյուրերի հետ: Իսկույն սուրհանդակ գնաց սահմանամերձ բերդը՝ Կանչելու Փենչապուհին, Փարեհին, Արտաշիրին և երկու մոզերին:

Ամբողջ իրար անցավ բարձրաստիճան հյուրերի այցելությամբ: Ամբողջ հազիվ էր տեղավորում այդքան մարդկանց, որոնց մեջ պետք էր հաշվել նաև վասակյան նախարարներին, որոնք իրենց գորագնդերի տեղավորված մտասկա վայրերից հավաքվեցին Սյունյաց ամբոց:

Միհրներսեհը այս հավաքը կազմակերպեց նախ, ինչպես ինքն էր ասել Փայտակարանում՝ «ի մոտո Ժանոթանալու համար գործին» և ապա ամրապնդել և մի կերպարանքի բերել վասակյանց դիմադիր ուժերը, միաժամ մոտիկից հետախառել Վարդանի զորաբանակը:

Վասակը Միհրնբրսեհի ակնարկալից գրույցը Փայտակարանում համարում էր խորհրդավոր բան իր «թագավոր» դառնալու հանգամանքի մասին և ապա իր ամրոցում այդքան բարձրաստիճան մարդկանց հավաքելն ու խորհրդակցության պատրաստությունը մեծ վստահության նշան դեպի ինքը:

Նա ընկավ մեծ հուզումնալից մի կացության մեջ: Բուժ գործիքի հարվածի նման շմեցրել էր նրան ներսիկի սպանությունը և արքայից Բաբելի փախստական դառնալու լուրը: Նրան խորը վիրավորում էր և տագնապի մեջ գցում իր արյունոտ ճակատակորդ Վարազվաղանին այդքան պատիվ տալը և հետը բերելը Պարսկաստանից: Դենշապուհը յուրայիններով արդեն մշտական բանսարկուններն էին, Պերոզը թույն էր տեղովը: Եվ հարց էր տալիս իրեն Վասակը — ի՞նչ էր ուրեմն ինքը Միհրնբրսեհի համար. կարևոր պետական ա՞նձն այս մեծ գործի մեջ, թե՞ ժամանակավոր հագնելու մի լաթ, որ մաշվելուց հետո պիտի մի կողմ նետվեր... Բաբելին պարտավոր էր հանձնել Հազկերտի ձեռքը՝ եթե գտնվեր:

Հյուրերին մեծ շուքով պատվով ընդունեցին ամրոց և տեղավորեցին ամենանուրբ խնամքով: Տոնական կերպարանք առավ ամրոցը և նրա տխուր տուօրյան դառավ մի աղմկալի խնջույք: Իսկապես դա մի հազվադեպ հավաք էր: Քանի՞ անգամ և ե՞րբ պիտի այդպիսի մի պատերազմ լիներ և առիթ ստեղծվեր, որ արյաց Հազարապետը այլ մեծամեծներով հյուր գար Սյունյաց ամրոցը: Հարկ ու պատշաճ կլիներ խնջույքներ սարքել նվազներով ու պարերով՝ եթե չլիներ սպառնալի ամպրոպը, որ քրթմնջում էր հեռուններում և մոտենում:

Վասակը մեծ խնամքով պատվում էր իր բարձրաստիճան հյուրերին և միաժամ ներքին ուժեղ լարվածությամբ հետևում, հետախուզում իր հակառակորդներին, կանխելու համար այն որոգայթները, որ զննելու էին անշուշտ նրանք: Այդպիսի լարում և ալեկոծություն չէր տեսել նա կյանքում:

Գաղիշոն ուշադիր հետևում էր Վասակի այս սուր ապրումներին և հասկանում էր նրա ողբերգական վիճակը: Բայց ջանում էր նրան ուշքի բերել:

— Կամ հիմա՛ է բախտդ, կամ երբե՛ք: Գործի՛:

— Այո՛, այո՛... վե՛րջ բանդագուշանքներին:

Այսպես եղավ վճիռը: Վասակը զգում էր իրեն ալեկոծ ծովի մեջտեղ. կամ լողա՛, կամ խեղդվի՛ր: Եվ նա վճռեց՝ լողալ...

— Եվ հավանական է, որ գայլաղվեսը քեզ է ընտրել: Նա պիտի ապացուցի իր թշնամիներին, որ ինքը չի սխալվել քո մեջքի տակ իր փրկութունն է: Միայն վճռական եղիր:

— Վճռականը ոչնչացնելն է Հայոց աշխարհը, — ասաց Վասակը:

— Ոչնչացրո՛ւ...՝

— Դեպի այդտեղ ենք գնում: Ոչնչացնենք, որ ստեղծենք: Հրաշք բան չէ՞... «Պետության մարդը ժողովուրդ շունի» — հիշեց Վասակը, — խելագարվե՛լ կարելի է...

— Եվ պիտի խելագարվե՛նք...

— Պիտի խելագարվե՛նք...

Վասակը մի անգամ միայն այցելեց տիկնոջը, հարցրեց առողջութունը և հանդիպելով խիստ և հուսահատ աչքերի ու լուսթյան՝ քաշվեց իր օթևանը: Նրանք չխոսեցին Բաբելի և Ներսիկի մասին:

Միհրնհրսեհը ցանկություն հայտնեց տեսնել վասակյանց, ճամբարը: Դա շատ հեռու չէր: Տափակ դարավանդին, վրաններում, տեղավորված էին վասակյանց զորագնդերը: Արտաշիր սեպուհը, մեկ-մեկ առաջնորդեց զորագնդերը: Պարսիկ մեծամեծների առջևից եկան անցան լավ զինված, քաջավարժ հեծյալ զորամասեր՝ Հայաստանի քնտիր նժույզներով և արագոտն հետիոտն զնդեր, ամրակազմ, ջլուտ զինվորներ:

Միհրնհրսեհը մթնած աչքերով նայում էր և ինչ-որ շար բաներ մտածում: Իսկ Պերոզը փնչացնում էր Վախթանգին.

— Տե՛ս, տե՛ս, զորք էլ ունեն, ձիավարժ են, նետածիգ, կարգով տողանցել գիտեն:

— Նյուսալավուրտը թող շոայլ ծախսի, — ծիծաղելով միշտ մըտեց Դենշապուհը:

— Իսկ վարդանա՞նք...

— Նրանց էլ կսրբի:

— Դյուրին չէ մի փոքր, — քմծիծաղեց Դարեհը:

Միհրնհրսեհը իր շուրջը հավաքեց պարսիկ մեծամեծներին և հայ նախարարներին և կարծիք հայտնեց, որ զորագնդերը բավա-

րար են: Միայն երբ վերադառնում էին ամբողջ՝ ճանապարհին վասակին առաջարկեց զգուշացման դիմում ուղարկել Վարդանին, որ ետ կենա պատերազմից:

— Մենք պատերազմից երկյուղ չունենք: Երկյուղը արյունն է: Ո՞վ է դիմ պատասխանատուն... Ես ամենևին չեմ կամենում, որ դոռ լինես...

Վասակը խոցվեց: Մղձավանջային միտքը, արյունոտ միտքը, որ վերջ ի վերջո իրեն պիտի քաշեն դատաստանի՝ խարանեց նրան:— «Տե՛ս, պետութ՜յամբ, ազգով-տակով պատերազմ են սկսել, իսկ պատասխանատուն Վասակը պետք է լինի»: Ճակատագրի շարագուշակութ՜յամբ հետամտում էր Վասակին այդ միտքը և ահա կրկին հնչում էր իբրև մահվան զանգ...

Դյուրագրգիռ էր դառել, ծայր աստիճան պրկվել էին նյարդերը, աչքերն արյունով էին լցվել թաքուն կատաղութ՜յունից, շըրջապատված աեսնելով իրեն անձնական ռիսերիմ թշնամիներով, որ եկել էին ամբողջ կազմակերպելու իր անկումը,— «Կամ ա՛յս, կամ մյո՛ւսը...»: Կամ ստրկութ՜յուն, կամ ոչնչացում: Եվ ինքը պիտի առաջնորդեր հայոց ժողովրդին դեպի այդ երկրնորանքը: Եվ նա վճռել էր: Բայց որքա՛ն դեռ դիմադրական ուժեր կային մեջը, որ տանջում էին նրան...

Երբ վերադարձան ամբողջ և հավաքվեցին սրահում՝ Միհրնբերսեհը կրկնեց իր խորհուրդը՝ գիմել Վարդանին՝ իսկ մյուսներին էլ,— ուղաթիվ քայքայիչ դեսպանութ՜յուններ: Վասակը նամակներ գրեց Վրաստան, Աղվանք, որոնց մեջ ասում էր, որ թող վրացիներն առայժմ սպասեն: Հազկերտը կրոնի ազատութ՜յուն է շնորհելու բոլոր քրիստոնյաներին և թեև Վարդանը պատրաստվում է զնալ սահման, բայց այնտեղ հաշտութ՜յան դաշինք կկոխ պարսից հետ, և նա կանցնի քուշանաց սահմանը կռվելու պարսից օգտին, ուստի և առայժմ ավելորդ կլինի վրացիների Հայաստան զորք բերելը և օգնելը: Միաժամ նա հասկացրեց վրացիներին և ազվաններին, որ ինքը հաշտվելու է Վարդանի հետ:

Հունաց բաժնի հայ իշխաններին էլ Աղձնյաց իշխանի միջոցով հայտնեց, որ ինչպես նախապես Վասակ Մամիկոնյանին դրել էր, կրկին հաստատում է, թե Հազկերտը կրոնի ազատութ՜յուն է տալիս, բայց Վարդանը չի լսում, ուզում է ապստամբել պարսից ղեմ:

Վասակը ճեպագնացի հետ էլ Զանգակ քահանայի գլխավորութեամբ նամակ ուղարկեց Վարդանին։—

«Սպարապետին, իշխանին տան Մամիկոնեից, մարզպանից և իշխանից տանն Սյունյաց ողջուն։

Եվ իմացած լինես, որ արյաց զորաբանակը հասնում է և մոտ է օրը արյունահեղութեան։ Հազկերտը հակամետ է կրոնի ազատութեան, եթե հաշտվես և թողնես պատերազմի պատրաստութիւնները։ Եկ արի՛ հաշտութեան և հնազանդութեան, վերացրու պատերազմի վտանգը, փրկի՛ր Աշխարհն հայոց։

Վասակ մարզպան Աշխարհին հայոց»։

Սպասում էին պատասխանի։ Եղան պահեր, երբ Վասակը հուսադրվեց։ Բայց խորհելով Վարդանի մասին, նա անմիջապես հանգցնում էր հույսի կայծերը։ Եվ իրոք, եկավ բերանացի պատասխան, որով Վարդանը հայտնում էր միակ և մի պայման, որ պարսից զորքը վերադառնա տուն և թող պարսից արքունիքից դեսպան գա խոսելու հաշտութիւն։

Վարդանի այս արհամարհական պատասխանը խելքահան արեց Պերոզին։

— Դրանք ո՛չ թե միայն ուժ չունեն, պետութեան ու բարեկարգութեան չունեն, այլև խելք և շնորհք չունեն։ Ոչնչացնել և վե՛րջ։

— Այո, ոչնչացնել, — վճռեց իր մեջ վերջապես Վասակը և խստասիրտ դառավ։ Մի պահ նրա սրտից կարծես ընկան իր զավակները, իր ընտանեկան, անձնական կրքերը։ Նա սկսեց նայել ապագային, Հայոց աշխարհի կացութեան։ Եվ վճռեց շխնայել ոչինչ, ո՛չ զավակ, ո՛չ իրեն, ո՛չ ժողովուրդ և արյուն, թեկուզ մեծ արյան գնով հասնել իր նպատակին՝ Հայոց աշխարհի պետութեան ստեղծման՝ թեկուզ այդ Աշխարհի կեսը ոչնչացնելով։ Տոչորվում էր փոշիացնել, հողմացրիվ անել իր ամբողջ լցված պարսիկ մեծամեծներին։ Առաջին հերթին Միհրնեբսեհին, ապա Պերոզին, Դենշապուհին, ամբողջի դռնից կախել Վարազվաղանին և ամենքին, ամենքին, որ այսպես օձերի կծիկ են դառել իր շուրջը։ Խոտ լցնել սրանց բոլորի մորթիները, շարել սրահում, նստել կատաղի գինարբուքի և մեկ մեկ խմել դրանց բոլորի խոտե կենացը, հարկադրել նրանց, որ խմեն, երգեն, պարեն։ Եվ կոկորդային քրքիչով

բցնել սրահը, ամբողջը, ողջ Հայոց աշխարհը, այդ անիծյալ Երանը... Դժոխո՛ց բաժին...

Ամբողջն ապրում էր տագնապալի, հրատապ օրեր: Դեպքերն շտապում էին կատարվել...

Միհրնեբսեհը այնպես էր պահում իրեն՝ կարծես Պարսկաստանի իր ապարանքում էր: Նա սխեց բոլորին ունիդրութեան ընդունել՝ սպասեցնել տալով, նստել-վերկենալը հրամայել: Հետըզհետե խստացավ: Սակայն տարօրինակ էր նա վերջերս: Վասակի ականջին պարզ լսեցնում էր թուղիկ խոսքեր, «թագավորութեան վերականգնման» մասին, այն մասին, որ Վասակը միակ ուժն է այս երկրում: Բայց և սակայն չէր թուլացնում իր ուշադիր վերաբերմունքը դեպի Վարազվաղանը, որ միշտ լուռ էր և բազմանշանակ ժպտում էր քթի տակ: Ի՞նչ էր նշանակում այս... Ի՞նչ էր նշանակում նաև Դենշապուհի, Վեհմիհրի, մոզպետների, Դարեհի և Արտաշիրի մշտական լուռթյունը և մշտական ներկայութեանը Միհրնեբսեհի հետ իր տեսակցութեանների ժամանակ:

Մտալ նստել էր Միհրնեբսեհը սրահի բարձրագահին, նրան կիսաբոլորակ պատած նստել էին պարսիկ մեծամեծները, հայ նախարարները և վճռում էին վերջին վճիռը — պատերազմ...

Մի քանի օրից մեկնում են միանալու Նյուսալավուրտին: Արդեն սուրհանդակ եկավ, որ նա շարժվում է դեպի Հեր և Զարևանդ, սահմանային գավառները Հայոց աշխարհի:

— Մենք զինվորներ ենք, — ասաց Միհրնեբսեհը, — մի գործի մեջ ենք, բոլորս մեկ ենք: Ոչ մի հակառակութեան ոգի մեջներս: Մաքրագործվե՛նք: Խոսքս Պերոզ իշխանի մասին է: Տրտընջում է, որ իրենից թաքցնում են այստեղ Բաբիկին: Թող մաքրվի՛ խիղճը...

Բոլորը ծիծաղեցին: Սրտատրոփ շարութեամբ ժնգժնգացրեց ատամները Պերոզը: Օձային շարախնդութեամբ նայեց Դենշապուհը: Միհրնեբսեհը շատ փափուկ ժպտով նայեց Վասակին:

— Հասկանալի է, հայր ես... Թերևս ես է՛լ անեի... — և ծիծաղեց անատամ բերանի բարակ ու շար շրթունքներով:

Վասակը նայեց շփոթված և կարմրած:

— Ես ոչինչ տեղյակ չեմ, տյարք...

— Նա այստեղ է Վարազդուխտի հետ: Զարաճին փախել է... Բայց իզուր... Արքան նրան շնորհ կաներ: Եվ ոչինչ, կարող ենք

ողորբել արքային: Ահա, Պերող իշխան, բոլորը... — աչքերը ոլորեց Պերողի վրա Միհրնեբսեհը:

Վասակը ցնցվեց: Բայց և ուշաբերվեց, հրամայեց Վոամին սնմիջապես գտնել և բերել Բաբիկին: Եվ կարծես երազ սկսվեց, ցնորք...

— Ես կարծում էի թե տեր մարզպանը գիտե... — հեզնական ձայնով ասաց Պերողը:

— Ոո՛ւ... ինչպե՛ս կարող էր գիտենալ և մեջտեղ չհանել արքայի փախստականին... Հը՛մ, շարաճճի՛... — կրկին դաժան ծիծաղեց Միհրնեբսեհը:

Շարունակեցին խոսել գործերի մասին: Բայց Վասակը հոգեկան զարհուրելի խռովքի մեջ՝ չէր լսում: Եվ անհուն կարոտը որդուն, և ցավը, զայրույթը, որով նա բռնվեց, այրող, շար զայրույթը պարսիկների վրա, որ գիշատիչների նման հավաքվեցին փախած որսի գլխին: Եվ ապա իր դիրքը, իր վճիռը, իր գործը...

Խորհուրդը տևում էր երկար, բայց Վոամը դեռ չէր երևում: Վասակը տագնապում էր: Եթե Բաբիկի բռնվելն ու բերվելը սարսափելի պարտականութուն էր արքայի հանդեպ, ապա նրա կորչելը պակաս վիշտ չէր իր համար: Ավելին: Կարող էին կասկածել, որ ինքն է թաքցրել, փախցրել:

Վերջապես գիշերը եկավ Վոամը երկուս գինվորի հետ. նրանք ներս բերին Բաբիկին և քանդեցին կապանքը: Բաբիկը առաջ եկավ ինքնաբերաբար: Վասակի աչքերը մթնեցին: Նա կորցրեց իրեն: Անզուսպ կարոտը մղում էր նրան վազել, գրկել զավակին, բայց զսպեց իրեն: Ամեն բան կվտանգեր: Միհրնեբսեհը ծամածուռ ժպիտով նայեց Բաբիկին:

— Չմնացիր տանը, զավակս, շարութուն արիր:

— Իմ տունն այստեղ է, — կոշտ պատասխանեց Բաբիկը, — ես եկա տուն:

— Դու պիտի սպասեիր արքայի հրամանին, զավակս: Բոլորս նրա հրամանով ենք շարժվում, — ասաց Միհրնեբսեհը:

— Ինձ համար արքա չկա, — հանգիստ ասաց Բաբիկը:

— Բաբի՛կ... — մոմռաց Վասակը:

— Ապա ի՞նչ են ուզում ինձանից... ես եկել եմ տուն, ես չեմ ուզում Պարսկաստան ապրել:

— Դու պատանդ ես,— ասաց Վասակը՝ խայթելով Միհրնեբր-սեհին:

— Չեմ ուզում պատանդ լինել: Ա՛յ, ներսիկը մնաց պատանդ, ի՞նչ արին: Խոտ լցրին մեջը:

Վասակը սեպացավ հուզմունքից:

— Մենք բոլորս արքայի ծառաներն ենք, մարզպանի՛ զավակ,— մի փոքր լրջացավ Միհրնեբրսեհը,— նրա կամքը սուրբ է մեզ համար:

— Մի՛ տար շան անունը,— գոչեց Բաբիկը,— ես արքա չեմ ճանաչում:

Վասակը վրա գնաց Բաբիկին:

— Դո՛ւ... դո՛ւ... դո՛ւ...

— Ես Սպարապետի զինվորյալն եմ, վախ չունեմ ո՛չ քեզանից, ո՛չ սրանցից: Թճել եմ սրանց վրա է՛լ, Հազկերտի վրա է՛լ...

— Հը... Ահրիմա՛ ա՛ա՛նը... Ահրիմանն է խոտում,— գոչեց Որմիզդ մոզպետը սարսափահար:

— Մեղա՛, մեղա՛,— մոմոաց նաև Միհրնեբրսեհը և կատաղած նայեց Վասակին,— պատասխանի՛ր...

Վասակը նշան արեց Վոամին և հասկացրեց, որ տանի դուրս և վերջացնի Բաբիկին: Դա կատաղության, ցավի, խղճի խայթի, սարսափի, անձնական մորթապաշտության և պետական բարձր հաշիվների մի վայրկյան էր: Նա մոտ էր իր կուրծքը խրելու սուրբ:

Վոամը Բաբիկին տարավ:

Պարտիկները ազոթքի խոտքեր էին ասում, փաբատելու համար այն շարը, որ դուրս էր եկել դժոխքից և կանգնել իրենց դիմաց: Նրանք վրդովված և սարսափած մոնչում էին և շար հայացքներ գցում Վասակի վրա: Նրանց համար քիչ էր Բաբիկի մահը:

Վասակն սպասում էր, որ ամրոցում կբարձրանա այն սարսափելի ողբասացությունն ու իրարանցումը, որ լինում է նման դեպքերում: Բայց այնտեղից լսվեցին խեղդված ձայներ և ամեն ինչ լռեց: Նա հասկացավ, որ Բաբիկը շկա այլեւս...

Միհրնեբրսեհը դարձավ պարսիկ մեծամեծներին.

— Կամենում էիք հավատարմություն տեսնել՝ ասա տեսեք... — ցույց տվեց Վասակի վրա,— գուք հոգր եք, կհասկանաք հորը...

Վասակը քարե սյունի պես անշարժ նայում էր մի կետի: Նրա  
րան թվում էր թե ահա հիմա, հիմա կզարթնի և կտեսնի, որ պա-  
տահածը մի դաժան մղձավանջ էր:



Բարիկին շուտ շթաղեցին: Վասակը հրամայեց Վասմին տանել  
նրա դին դնել իր օթեկանում: Եվ գիշերը ուշ, երբ պարսիկները քնել  
էին՝ նա գնաց իր օթեկանը: Բարիկին պառկեցրել էին գորգի վրա,  
յոթնաստեղյան ջահը կախել վերևից, երեսը ծածկել էին նուրբ  
ասեղնագործով, շուրջը ցանկել հովտից բերած համեստ ծաղիկներ  
Մնարին աթոռիկի վրա նստել էր Ջանգալ երեցը և աղոթում էր:  
Ոտների կողմ շոքել էր Ձվիկը և թևերը կախել հատակին՝ տխուր  
նայում էր:

Երբ Վասակը ներս մտավ՝ Ձվիկը կանգնեց և աթոռիկը դրեց  
Բարիկի կողքին: Վասակը նստեց և մնաց անշարժ: Ներս մտան  
սպասավորները, ազախիները, համբուրեցին Բարիկի ծածկոցը,  
խաշակնքեցին և գուրս ելան՝ առանց հարցնելու կարգուպարտաճը:

Վասակը բացեց Բարիկի երեսը: Նա գունատ էր, ճերմակ ա-  
տամների շարքը երևում էր կիսաբաց շրթունքներից: Աչքերը փակ  
էին և կարճես կիսաժպիտ: Նա այնպես խաղաղ էր՝ կարծես սովո-  
րական քնով էր քնած: Բայց մի բան կար զարհուրելի նրա մեջ.—  
անշարժ, միշտ միեւնույն արտահայտությունը, — հավերժության  
դիրքը, որ ճնշում, փոքրացնում է նայողին:

Վասակը փորձեց համբուրել նրան՝ բայց չկարողացավ: Նա  
վախեցավ այլևս որևէ բան փորձել — կարող էր հանկարծ խելա-  
գար գոռոցով լցնել ամրոցը: Ուստի և կրկին արձանացավ, սկսեց  
խորը, խորը նայել Բարիկի դեմքին:

Ներս մտավ Փառանձեմը: Նա դանգաղ աս լուրջ մոտեցավ,  
նստեց իրեն մատուցած աթոռիկին և սկսեց անշարժ նայել Բա-  
րիկին:

Վասակը ծաբավի էր մի որևէ խոսքի, մի ձայնի, որով մի որևէ  
էակ խոսեր իր հետ: Բայց Փառանձեմը լուռ էր: Գոնե նայել իրեն:  
Փառանձեմը չէր նայում: Զարհուրելի գծվարին դառավ այդ պահին  
խոսելը և խոսեցնելը, այդ ամենահասարակ բանը, ըստ երևույթին,  
աշխարհիս երեսին: Որքան բաներ էին պետք այդ ժամին գրա-

Համար... Եվ այդ բաները չկային, վերջացել էին Վասակի և Փառանձեմի մեջ: Դրանք մեռել էին Բաբիկից առաջ:

Վասակը վեր կացավ: Մի անգամ ևս նայեց Բաբիկին, մի անգամ ևս կրեց սոսկալի վիշտը՝ դիտելով մահվան ահեղ անշարժությունը: Եվ գուրս գնաց անդրաշխարհից եկողի պես ու անմիջապես ճանապարհ ընկավ ճամբար:

Ամրոցում սիրեց գերեզմանային լուռություն: Գիշերը Բաբիկին տարան ամրոցամերձ գերեզմանատուն թաղելու: Նրան դրել էին պատգարակի վրա, պատանել էին շքեղ, կողքին տեղավորել սուրբ և ծաղիկներով զարդարել շորս բոլորը: Թաղման գնացին ողջ ամրոցի բնակիչները Փառանձեմից սկսած մինչև վերջին ախոռատան ծառան և տոհմական քահանան Զանգակ երեցի հետ: Եկել էին Կողակն ու Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին: Շուտով հավաքվեցին նաև ամրոցամերձ շենի բնակիչները: Արարողությունը վերջացավ և երբ Բաբիկին իջեցնում էին գերեզման՝ սկսեցին լավել հեծկլտոցներ: Շուտով լացի ձայները բարձրացան: Հեծկլտում էին կանայք, հետո՝ տղամարդիկ և ամենից բարձր Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին:

Ջեր լալիս միայն Փառանձեմը: Նա հպարտ ու վսեմ կանգնած էր անշարժ և անբթիթ նայում Բաբիկին: Միայն խոնարհվեց և մի ափ հող լցրեց իր զավակի երեսին: Գերեզմանը լցրին հողով: Պերոզ-Վշնասպ-Տիգրոնին քարեր բերեց և շարեց գերեզմանի վրա և ծաղիկներով զարդարեց հողաթումբը: Հետո լուռ ցրվեցին հուզարկները և մնացին մի քանի հոգի: Փառանձեմը քարացած կանգնած մնաց մի պահ ևս և ապա վերադարձավ տուն: Նրան շրջապատեցին սեպուհների կանայք և աղախիները, որ անխտիր ներս էին մտել նրա մոտ:

— Աշխարհինն էին, աշխարհին գնացին, — ասաց մի պառավ աղախին և երեսը խաչակնքեց, դուրս ելավ:

Առավոտ վաղ սկսվեց իրարանցում ամրոցում: Մեկնում էին Զորագնդերը եկան ճամբարից, շարվեցին ամրոցի հրապարակում: Բոլորը հագնվեցին և նստեցին նախաճաշի: Սպասվում էր դժվար լեռնանցքներ ու ելևէջներ: Դուրսը այդ միջոցին Արտաշիր սեպուհը, որ Սյունյաց զորագնդի օգնական հրամանատար լինելուց բացի հսկում էր մյուս նախարարների զորագնդերին՝ դադում էր մտրակի հարվածներով զինվորներին շարժումների ուշացման կամ այլ թերացումների համար:

Ամրոցի բնակիչները շրջակա շեների բնակչության հետ կանգնել մի կողմ, դիտում էին լուռ, դաժանադեմ: Զինվորների խստահայաց դեմքերը մտատում էին նրանց դժկամությունը: Նրանք չէին նայում բնակչության կողմը՝ խուսափելով շար ու կշտամբող հայացքներից:

Ամրոցից դուրս եկան մեկնողները գինավառ, զրահված: Միայն Միհրնեբրսեհն ու Վասակը թեթեւ զարդուզեն հագուստ ունեին: Նրանք կանգնեցին դարբասի մոտի բարձրության վրա և դիտեցին զորագնդերը: Միհրնեբրսեհը աչքերի մշուշով նախանձահույզ նայեց նրանց և սկսեց լամլամել բերանի դառնությունը: Ոչ առանց նախանձի նայեցին նաև Պերոզը, Դարեհը, Արտաշիբը և Գենշապուհը: Անգամ չէին կարողանում հանդուրժել, որ այդ զորագնդերը պետք է պարսիկների գործին ծառայեին:

Վասակը նայեց ամրոցի բնակիչների կողմը: Նա որոնում էր Փառանձեմին, որի հետ շէր խոսում, բայց կուզենար, որ գոնե հայացքով հրաժեշտ տա նրան: Նա զգում էր, որ իրենց մեջ խըզված է ամեն կապ:

Սակայն խզված էր ամեն կապ նաև իր և այն բազմության մեջ, որ քարե պատի պես կանգնած էր դարբասի երկու կողմը: Եվ կանգնած էր թշնամական լուռությամբ: Հայացքների մեջ պրսպողում էր, սակայն, այն բուռն ատելությունն ու ցասումը, որ պատրաստ էր ոչնչացնելու և՛ Միհրնեբրսեհին իր մեծամեծներով, և՛ Վասակին իր դավաճաններով: Առանձնապես ուշադրություն էր գրավում մի խորին ծերունի, որի շրթունքները շարժվում էին անլսելի անեծքի և ցասման խոսքերից: Վասակը և ծերունին իրար նայեցին մի վայրկյան, և Վասակը հայացքը փախցրեց:

Պատշգամում կանգնած էր Վարազդուխտը: Վասակը հարեվանցի նայեց նրան և իսկույն մոռացավ: Մի անգամ գոնե շտապեց տեսնվել նրա հետ: Այդ կինը, որ ոչ միակ մի անգամ էր վտանգել իր կյանքը, փրկել նրա կյանքը, պաշտոնը և պատիվը, ազատել էր նրա զավակին՝ անտեսվեց բոլորովին:

Կանգնած էին իրար կողքի Վարազդուխտը և Կողակը, — երկու ախոյանները, որ խարդախության մեջ մրցելով կամենում էին Վասակի կամ Վարազվաղանի շնորհն ու խոստումները վայելել:

Ահա հեռանում էին և՛ Վասակը, և՛ Վարազվաղանը, հեռանում էին առանց մի խոսք ասելու նրանց հետագա վիճակի մասին:

Միհրնեբրսեհը ձեռքով նշան արեց Վասակին, և սա նույն նշանն արեց Արտաշիրին: Եեփորը հնչեց: Երնականները և ամբողջ բնակիչները սկսեցին մոմռալ, ոմանք լաց էին լինում:

Հանկարծ դարբասի կողմում խմբվածները ետ-ետ գնացին՝ ճանապարհ բանալով Փառանձեմին, որ հերարձակ, բորիկ մեջ վազեց և եկավ կանգնեց Վասակի առջև: Ողջ հրապարակը պապանձվեց: Փառանձեմը խելագար հայացքը գամեց Վասակի աչքերի մեջ և ոչ իր ձայնով խապոտ ձայնեց.

— Զավակնե՛րս...

Բազմությունը լարվեց և երեսը խաշակնճեց: Զգաց, որ ճակատագրական բան է սկսվում:

Վասակը սևացավ: Գարձավ Զվիկին և սենեկապետին, որ վազել էին Փառանձեմի հետևից:

— Առաջնորդեցե՛ք իշխանուհուն օթևան...

Փառանձեմը, որ թվում էր հիվանդ և խորտակված և կհնազանդվեր իսկույն՝ շսելու տվեց Վասակի խոսքը և կրկնեց նույն ձայնով.

— Զավակնե՛րս...

— Գնա օթևան, իշխանուհի՛... — խեղդված ձայնով ասաց Վասակը:

— Զավակնե՛րս, — ծածկեց նրա ձայնը Փառանձեմը այս անգամ հրամայական շեշտով:

— Խեչագարվե՛լ ես... — դժվարացավ մի տեսակ Վասակը:

— Զավակնե՛րս... — ոչ իր ձայնով կրկնեց Փառանձեմը:

— Ուշքի՛ արի, — գոչեց Վասակը, — մաածի՛ր ասածդ...

— Զավակնե՛րս, — իբրև սեեռյալ մտքով պաշարված՝ գոչեց ավելի բարձր Փառանձեմը և շարագույժ աչքերը մուխցին խոժոռելով մի քայլ առաջ եկավ դեպի Վասակը: Նա գտնում էր ըսպառնալի:

Վասակը նշան արեց, որ մեկնեն. փողերը փչեցին և զորագնդերը շարժվեցին: Ժողովուրդը քանդվեց գնաց հետևից: Վասակը ձեռք թափ տվեց Փառանձեմի վրա, մտրակեց նժույգը: Պարսիկները հետևեցին նրան: Պետք էր խուսափել տեսարանից: Բայց Փառանձեմը վազեց Վասակի նժույգի կողքով:

— Ո՛ւր ես տանում սրանց,— գոչեց Փառանձեմը:

Վասակը կորցնում էր իրեն: Պարսիկները պապանձվեցին և Անգամ Պերոզը զարմացած նայում էր Փառանձեմին.— «Սա՛ ինչ բան է...» — մտածեց նա: Փառանձեմը շէր նայում քարուկոշտին և բորիկ ոտներով արագ մղվում էր առաջ, Վասակին զուգընթաց:

Վասակը օգուտ չըպացրեց մտրակը և հրամայեց Փառանձեմին...

— Քեզ հրամայում եմ՝ ե՛տ դատիր:

— Ո՛ւր ես տանում սրանց...

Հանկարծ մոլեգնեց Փառանձեմը և սկսեց քարից քար ցատկելով արագ իջնել ձորը զնացողների հետ: Նրա ոտները սուր քարերին դիպչելով արյունոտվեցին: Նա վայր էր ընկնում, հոսող խիճերի հետ քշվում ձորը, քիչ էր մնում դուրս գա ճանապարհից, գահավիժի անդունդը: Բայց նա ոչինչ չէր տեսնում: Վասակը բռնորովին կորցրեց իրեն: Մի քանի պահ լռել էր, որ Փառանձեմը ետ գնա: Բայց նա մղվում էր ու մղվում հափշտակված, անձը վտանգած, մահը աչքն առած: Նրա հետևից դեպի ձորն էր թափվում նաև բազմությունը խիճերի, քարերի ահագին շառաշով և խուլ անեծքների մոմոսցով:

Վասակը նծույզը քշեց նրա վրա: Ողջ զորքն ու պարսիկները կանգ առան ավանա: Բողոքը լռեցին:

— Չե՛ս լսում, որ ասում եմ ետ գնա,— գոչեց Վասակն ըստ պատնալի:

Վասակը դարձավ բազմության և սուրը ճռճելով օգուտ խրատ ձայնով գոչեց.

— Ո՛ւր, ո՛ւր եք գալիս, ե՛տ, անասուննե՛ր, ե՛տ:

Բազմությունը չէր անտում սակայն: Իսկ Փառանձեմը մոլեգնեց ավելի:

— Չավակնե՛րս,— կատաղեց Փառանձեմը,— Բարի՛կը, Ներսի՛կը, սրա՛նք,— ցույց տվեց զինվորներին,— ո՛ւր ես տանում սրանց...

Այլ ընդոստ շրջվեց դեպի գարագունդը.

— Սուրբ Սպարապետի գե՛մ, Հայոց աշխարհի գե՛մ եք գնում,— և դարձավ զինվորներին,— Ղուվեք Սպարապետի գե՛մ: Ներսիկի՛ս, Բարիկի՛ս արյունը հոգի տա թող...

— Ո՛ւհ,— մոռնաց Վասակը դայրագին և սուրը իջեցրեց Փառանձեմի ուսին:

— Վա՛յ,— կարճ ու խեղդ հառաչեցին զորագնդերն ու ժողովուրդը:

Փառանձեմն ընկալ քարերի վրա: Զվիկը և սենեկապետը վազեցին նրա մոտ:

— Աստված հասնի քեզ, աստված հասնի,— մռնչաց ժողովուրդը և մոլեգնած խաչակնքեց ընկածին:

— Ի՞նչ արի՞ր, տե՛ր մարգպան,— շշնջաց Գաղիշոն:

— Տե՛ր մարդպան,— կիսաձայն կշտամբեցին մյուս նախաքարները:

— Թո՛ղք, սա իմ խի՛ղճն է այրել,— դողահար մրմնջաց Վասակը, նայեց Փառանձեմին և ապա սաստիկ մտրակելով նըժույզը՝ սկսեց խելագար ցատկտել քարից քար, վտանգել իրեն:

Նախարարները հետևից հասան և բռնեցին նժույզի սանձը:

Զինվորները մոայլ, հուզված, ոմանք, խեթ ու թշնամական նայեցին Վասակին:

— Վա՛խ,— հառաչեց բարձրաձայն մի հասակավոր դինվոր:

— «Վախո՞ղ» քե՛զ քաշի, շո՛ւն,— մտրակելով նրան՝ սաստեց ավագը:

— Շարվե՛ք, սրիկանե՛ր,— սաստեց Արտաշիր սեպուհը և մտրակեց զինվորներին:

Զորագնդերը շարժվեցին մի ոլորք ևս և նրանք ծածկվեցին ժայռի հետև:

— Վա՛յ, տիկի՛նս,— ողբաձայն վրա ընկալ Զվիկը տիկնոջ գիակին, շոքեց և սկսեց ծնկները ծեծել:

— Վա՛յ, երկուսին է՛լ,— մոմոաց սենեկապետը և գլուխը թափ տվեց:

Ամրոցի և շրջակա շեների բազմութունը հավաքվեց Փառանձեմի շուրջը: Խեղդված հեկեկոցները խզեցին ծանր լուսթյունը:



Առնանցքից իջնում և Սյունիքից դուրս էին գալիս արդեն վասակյան զորագնդերը: Եզերելով այն վայրերը, որտեղից կարող էին անցնել նաև վարդանանց զորքերը՝ Վասակը հետախույզներ և առաջապահ ուղարկեց:

Կեսօրին մոտ հասան Խորենացու վանքը և դազարք արին:

Վանականներն անակնկալի եկած, շփոթված՝ չկարողացան զգուշանալ: Հասկանալով թե ինչ զորագնդեր էին՝ ընդառաջ լեւան: Միայն երբ Վասակը և իր հետիւնները կանգ առան վանքի դռան՝ վանահայրը երկու վանականների հետ դուրս ելավ:

— Կուրացե՛լ էիք, գայիք ընդառաջ, — զայրացավ նրանց վրա Վասակը:

Վանահայրը շպտասխանեց.

— Հիմա էլ կխլանա՞ք, — նոր զայրույթով նժույզը քշեց վանահոր վրա, — բա՛ց արա դուռը:

Վանահայրը կարգադրեց, որ բանան դուռը:

Վասակը Միհրնեբրսեհին ճանապարհ տվեց և նա նժույզը քշեց վանքի բակը: Պարսիկ մեծամեծներն ու հայ նախարարները մտան ներս:

— Հետո՞... — խոժոռվեց վանահոր վրա Վասակը:

— Ի՞նչ ես հրամայում, իշխան, — հարց տվեց վանահայրը:

— Չունե՞ք շնորհք հրավիրելու, մատուցելու ինքնաբերաբար, հարկուպատշաճով:

Վանականը ինչ-որ քրթմնջաց: Հետո շտկվեց և ուղիղ նայեց Վասակին: Ու հանկարծ խստացավ նրա հայացքը: Գա կաշկանդեց Վասակին: Գա այն ծանոթ հայացքն էր, որով նրան հանդիպել էր ամեն հայ ամեն տեղ և ազդարարում էր այն անդիմադրելին, որ միշտ սարսափեցնում էր նրան: «Ահա՛, սկսվո՞ւմ է...» — մոռաց թթի տակ Վասակը և շուզեց ստեղծել քստմնելի տեսարան իր հյուրերի առջև: Ուստի և հրամայեց միայն.

— Ծա՛ջ տվեք հյուրերին:

Վանահայրը կարգադրեց իր երկու վանականներին, որ ճաշ տան և ինքը կանգնեց խստահայաց ու լուռ: Վասակը ևս զսպված բարկությամբ լռեց: Հայ նախարարները զգալով, որ նա չի կամենում վանականների «անշնորհքությունը» ցույց տալ օտարների առաջ՝ իրենք ևս լռեցին և համակերպվեցին:

«Հյուրերը» նստեցին քարե նստարաններին և սկսեցին դիտել վանքը:

— Ծն բոլորին կթափի ձորը, — ասաց Ուրծա ներսեհը:

Մյուսները ժպտալով նայեցին նրան:

— Դուրս հանիր միարանությունը, — հրամայեց Վասակը վանահորը:

Վանահայրը խոժոռվեց և կասկածով նայեց Վասակին:  
— Զլսեցի՞ր... — սաստեց Վասակը, — և բոլորին:

Վանահայրը կարգադրեց, որ վանականները դուրս գան: Վասականները բոլորը եկան և շարվեցին Միհրնբրսեհի առջև:

Պատշաճ խոսք ու զրույց չէր ստեղծվում: Եկողները ծանր հայացքները գամեցին վանականների նույնպիսի ծանր հայացքներին: Ապա պարսիկները սկսեցին դիտել տաճարը, մոգպետները պողծվում էին» տեսնելով իրենց առջև քրիստոնեական տաճար և հիշում էին Անգղի դեպքերը:

— Արվեստ է՛լ ունեն, — մոմոաց Պերոզը Վախթանգին...:

— Այն էլ ինչպիսի՞... — ցավո՞վ, նախանձո՞վ, թե՞ զայրույթով շշնչաց Վախթանգը և հառաչեց զգալով անասելի մի դառնուկ թյուն յեծ ուժի հանդեպ, որի դեմ անկարող էր որևէ բնականական ճնշում գործադրել: Այդ արվեստը կար և չէր կարող եղած չլինել: Պերոզը կատաղեց:

— Բերե՛ք ինչ կա ներսը, դրած ու թաքցրած, ածեցեք մեջտե՛ղ:

Թիկնապահները գործի անցան: Սկսեցին տաճարի զարդերն ու մատյանները քանդել, բերել դուրս: Վանականները սարսափած ու զայրալի խաշակնքեցին երեսները:

Միհրնբրսեհը, որին դուր եկավ Պերոզի վայրենի վարմունքը, սքով վարկարեկվում էր նա և ոչ ինքը՝ Միհրնբրսեհը՝ զննող հացքը պտտեցրեց Վասակի և նախարարների վրա: Վասակը հասկացավ քննությունը և զսպեց իրեն: Նախարարները վերաբերվեցին՝ ոմանք անտարբեր, ոմանք զվարճացած: Գաղիշոն էր պարզապես զայրացած խայթում աչքերով: Վասակին այրեց ինքնասիրության, արժանապատվության վիրավորանքը: Նա կրոնական զգացում չուներ այնքան, որ սարսափ զգար: Բայց այդ վայրենի վարմունքը նրան վիրավորում էր իբրև մարդու, որին վիրավորանք են կամենում հասցնել՝ նրա ազգին հասցրած վիրավորանքով: Բայց զգաց, որ մի անկշռած խո՛սք, և նա կարող էր կորցնել ամեն բան: Ուստի լռեց: Դա պետք էր: Եվ այդպիսի վիրավորանքներ գեռ շատ կային: Դեռ նոր էր գալիս ամենամեծ վիրավորանքը պատերազմի դաշտում: Նա պիտի հանդուրժեր ամեն բան, մինչև հասներ նրա վրեժի օրը: Վրեժի օր, սակայն, որ արդեն ցնորք էր դառնում:

Պարսիկներն սկսեցին թերթել մատյանները, վայր գցել, ուրիշը վերցնել, կոպիտ շոշափել ծաղկած էջերը, եղունգով քերել սօ-կեզօծումները, ներկերը: Սակայն Վախթանգը, մասամբ էլ Պերս-զը, հասկանում էին դրանց արժեքը: Եվ դա էր այս երկուսին էլ վրդովում ավելի, քան Վասակին ու Գաղիշոյին այդ մատյաններին հանդեպ պարսիկների ցուցաբերած արհամարհանքը: Վախթան-գը մի էջ ցույց տվեց Պերոզին: Դա իբար գալարված օձերի, ծա-ղիկների, թռչունների, պտուղների մի բազմերանգ խաղ էր: Կրկին հիացմունք, նախանձ, զարմանք, ատելություն, որ չէր բաց թող-նում երկուսին էլ:

— Ի՞նչ...— մոմոաց Պերոզը,— սրանք շպե՞տք է կամենան վզները ճկել արյաց հզոր պետության ոտի տակ, որովհետև ունեն այսպիսի արվե՞ստ, գիտուննե՞ր... Ինչո՞ւ պետք է շնչն ազատ, օք կառուցեն այսպիսի շենքեր... թող գան մեր աշխարհը կառուցեն մե՛զ համար և ո՛չ թե իրենց...

Կատաղի մատնացույց անելով տաճարը՝ դարձավ մոգպետե-րին.

— Սրբազան մոգպետներ, արդյոք սչատշաճ կլինի՞ այսպիսի մի վայրենի շենքը դարձնել ատրուշան:

Որմիզդ մոգպետը թթվացրեց դեմքը և շրթունքները դառնա-համ լամվորերելով մոմոաց.

— Անիծյալ է շենքը: Կարենք հիմնահատակ և տեղը ատրու-շան կշինենք գեղեցիկ:

Բոլորի առջև կանգնել էր տաճարը վսեմ ու տխուր, իբրև մի գերի՝ ընկած շարաննգ մարդկանց ձեռքը: Եվ ավելի էր գեղեցկա-ցել: Վախթանգին ճնշում էր հրաշակերտը և նա չէր գտնում այն ճիշտ զգացումը, որ այդ պահին արեկոծում էր նրան: Եվ նրան այլ բան էր վրդովում, քան Պերոզին, և նա շարունակ այդ վրդովմուն-քով, խորասույզ խոժոռովում էր տաճարի վրա: Վանականները շո-րունակում էին լռել:

Արդեն շափն անցնում էր վանականների լուսթյան: Դա արդեն դիմադրություն էր, հակահարված, հանդգնություն: Վասակը հաս-կացավ, որ այլևս լռելը դիպչում էր աժեն հարկուպատշաճի:

— Ի՞նչ եք պապանձվել,— միջամտեց Վասակը,— ուրիշ ժա-մանակ հոռորներ, սոխահներ եք կտրում: Խոսեցի՞ք:

— Ի՞նչ է հարկ մեզ խոսել, տե՛ր մարզպան, — խոսեց վանականը, — երբ դու խոսել ես արդեն...

Վասակը վիրավորվեց: Կշտամբանքը ծանր էր...

— Հիմա փոխվեց աշխարհը, — խոսեց նա կարծես մի տեսակ բացատրություն տալով, — հին աշխարհը վերջացավ: Մենք հիմնում ենք նոր պետություն: Հայոց թագավորություն: Մեծն Հազկերտի ձեռնտվություն: Դուք պիտի ուրախ լինեք և ոչ թե ներհակ:

Վանականները կարծես քարեր էին կանգնած: Ոչինչ չխոսեցին: Վասակը բորբոքվեց:

— Խորհեցեք, շե՛ք կարող խորհել: Պետք չէ՞ մեզ ունենալ մեր իշխանությունը: Կործանվեց մեր թագավորությունը: Կհաշտվե՞ք դուք դրան: Ծս չեմ հաշտվում: Անիմաստ չէ՞ դիմադրելը հզոր մի պետության, երբ նա մեզ հնար է ընձեռում ապրել: Ո՞րն է մեզ համար ընտրելին. հույների գեղեցիկ ու խաբուսիկ խոստումնե՞րը, թե՞ պարսիկների իրական առկա տվածը:

Վասակը ավելի զայրացավ:

— Բայց ոչ, հաճելի է ձեզ տարվել մի խելագարի բանդագուշանքներով, կործանվել, դա դյուրին է ձեզ համար առավել, քան ապրելը:

Հանկարծ վեր թռավ, և ոտը զարկեց գետին և գոչեց կատաղի.

— Լո՞ւմ եք ինչպես անբան անասուն: Դուք կ'ս նույն հաստակողն եք, ինչ և ձեր Սպարապետը, որ տանում է հայոց ժողովուրդը դեպի ոչնչացումն: Դուք կ'ս շունեք ոչ մի հասկացողություն, ինչպես և նա, թե ինչ է արյաց պետությունը: Դո՛ւ, — մատը մեկնեց դեպի Խորենացին, — ասում են գիտուն ես և փիլիսոփա: Դո՛ւ ևս հակառակ ես պետության:

Խորենացին լցվեց արժանապատիվ ցասումով:

— Տարապարտուց դսրովեցիր: Չեմ տեսնում իմաստություն հայհոյանքիդ մեջ: Եվ ոչ համեմատ էր դա մեր վշտին՝ հանդեպ հայրենյաց թշվառության: Ստրկության ուղիներո՞վ ես ազգը տանում ոգեկան ազատության և պետության: Ազատության ոչնչացմամբ ազգություն... Եվ սրանի՞ց ես ակնկալում այդ շնորհը... Ունա՞յն է հույսդ և իզուր ջանքդ...

Ցասումնեց և ինքը՝ Վասակը, փորձեց հորդել իր կրթի բուրբ զորությունը և տեղնուտեղը ոչնչացնել իր առջև կանգնած վանա-

կանին, բայց նրան կաշկանդեց այն միտքը, որ մարդկանց առջև դրանով ավելի կոշնշանար ինքը, քան վանականը: Եվ մտայլ ոռ շար մտմուաց միայն.

— Ո՛չ էր իմաստուն խոսքդ: Նաև դու հասու շես բարձր մատ-  
ծողության:

Պերողին կատաղեցրեց այդ հանդուզն դիմադրությունը, և նա հանկարծ շար ձայնով դիմեց Վասակին.

— Ի՛նչ է, շե՛ն հնազանդվում արյաց իշխանության: Արյաց պետությա՛նն են ուզում հաղթել: Ի՛նչ, ո՛ւժ ունեն, զո՞րք, թե՛ բարեկարգություն... Այս վա՛նքը, մատյաննե՛րը... Կկործանենք, կվառենք ամեն ինչ:

Եվ դարձավ զինվորներին.

— Ոչնչացրե՛ք այս բոլորը: Այրեցե՛ք վանքը...

Վասակը ազդվեց, ազդվեցին անգամ մյուս նախարարները: Բայց ոչ մի մկան չշարժվեց վանականների դեմքին: Զինվորներն սկսեցին պատառոտել մատյանները և խոտի դեզը քանդեցին բե-  
րին լցրին վանքը:

Միհրնեբսեհը և ուրախ էր, որ այս ամենը՝ ինչ ինքը ևս կա-  
մենում էր՝ կատարվեց Պերողի ձեռքով և ապա կամենում էր փորձել Վասակին և վարկաբեկել վանականներին: Նա շափազանց ուրախ էր, որ Պերողը նվաստացավ, բայց և միաժամ նա կաժե-  
նում էր վերջ ի վերջո վերականգնել այն ընդհանուր նվաստացու-  
մը, որ հասնում էր իրեն և բոլորին՝ նախ պարսիկներին և ապա նաև հայ իշխանավորներին: Զգում էր, որ պետք էր իր իշխանու-  
թյունը ցույց տալ, ճզմել այս ըմբոստ, անդիմադրելի մարդկանց:

Ուտի և նա շար ու դաժան ձայնով դիմեց վանականներին.

— Զեր պաշտոնը վերջացավ: Կարող եք ցրվել: Զեր վանքն ոռ  
զույքը կոշնշանան:

Առաջ եկավ վանականը և հանդիստ ձայնով ասաց.

— Զունենք մենք զույք, տեր Հազարապետ,— քան ոգին հա-  
վետ կենդանի:

Վախթանգը, որ զսպված շարությամբ և զարմացած հետևում էր կատարվածին՝ ցատկեց և վազեց դեպի վանահայրը և բռունց-  
քը նրա երեսին սեղմելով՝ մոնշաց.

— Հենց այդ ոգին կսպանենք, կտանք ոտնատակ: Գրա հա-  
մար ենք եկել...

— Դժվարի՛նս խնդրեցիր,— մռնչաց իր հերթին Խորենացին,— նախ ձեռք բերեք այդ գերազանց ոգին, ապա և որո՛վ միայն հուսացեք ոչնչացնելու մերը:

— Եվ մի՛ վախեցնեք մեզ,— գոչեց վանահայրը,— մենք ազատ ենք երկյուղից մահի...:

Վասակը բռնկվեց և՛ հպարտության, և՛ միաժամ բռնակալության կրքով՝ այս տեսարանի առջև: Արդեն հրդեհը սկսեց ճարակիչ տաճարը և մատյանները: Հրդեհ ընկավ նաև խցերն ու վանքամերձ շենքերը: Ատամները կրճատելով հետևում էր հրդեհին Պեթրոզը, քարացել էին Վախթանգը, նախարարները: Հավաքվեցին հայ զինվորները և սկսեցին երեսները խաշակնքել: Նրանց սկսեց մըտրակել Արտաշիր սեպուհը, բայց նրանք չէին հեռանում: Շատերը լաց էին լինում:

— Հասի՛ր, տե՛ր արդարություն, բե՛ր սուրդ վրիժուց,— բացականչեց վանահայրը:

— Ամե՛ն,— մռնչացին վանականները:

Ճանապարհին Գաղիշոն անհանգիստ մտառում էր և շարունակ ընթանում Վասակի կողքով: Նրա դեմքի մկանները ցնցվում էին: Նա սկսեց խոսել բարձրաձայն: Վերջը դարձավ Վասակին.

— Դու խորհո՞ւմ ես, որ Այրարատից Ավարայր է գալու այսպիսի բյուրավորների մի բազմություն:

— Նա գալիս է իր արյունը բռնաթափելու... Նա կոչնչանա... — ասաց Վասակը,— բայց դու ասա՛ որ՝ ահա այսպիսի մարդկանց թագավորություն կունենանք... Թող միայն ասոված հաղթանակը տա և շուտով...:

Մտախոհ և խորտակված ձիավարում էին Պերոզն ու Վախթանգը: Նրանք սթափվել էին: Առավելապես Վախթանգը:

— Ի՛նչ ես խորհում, իշխան,— պահանջ զգաց խոսելու Պերոզը:

Վախթանգը իր մտքերը շարունակելու ձևով շշնջաց.

— Ես երկյուղ եմ կրում, որ մեր ուժը մեր թուլությունն է գտանում, իսկ հայերի թուլությունը՝ նրանց ուժը:

— Դա կերևա ճակատամարտում,— ասաց Պերոզը:

— Ես երկյուղ եմ կրում, որ ճակատամարտը արդեն տանուլ ենք տվել... Ճակատամարտը եղավ արդեն...:

— Որտե՞ղ... այս վանքո՞ւմ...  
— Ներսում... հոգիների մեջ...



Որոտում էր Այրարատը, Արտաշատ տանող բոլոր ճանապարհ-  
ների թնդում էր այրուձիի սմբակածեծը և հեօիոտնի ոտնաբռ-  
փը: Ժողովրդական հոծ բազմություններ՝ հայոց ժողովուրդը՝ վեց  
կացած երկրի բոլոր կողմերից ալեկոծ հորձանքով գալիս էր ծա-  
վանում Արտաշատի շուրջը: Այստեղ էին հավաքվել Հայոց աշխարհ  
հին հավատարիմ նախարարները՝ իրենց սեպուհներով, տան մեր-  
ձավորներով, զորագնդերով՝ պատրաստ մեկնելու ճակատ: Այս-  
տեղ էին Վարդան Մամիկոնյանը, Ներշապուհ Արծրունին, Արաակ  
Մոկացը, Արշավիր Արշարունին, Շմավոն Անձևացին, Ատոմ Գեա-  
նին, Խորեն Խորխոռունին, Քաթուլ Վանանդեցին, Գարեգին Սըբ-  
վանձտյան, Արսեն Ընծայնոցը, Ներսե՛հ Քաջբերունին, Արտակ Գա-  
լունին, Տաճատ Գնթունին և այլ նորերը, որ մինչ այդ օրը չէին  
երևում, բայց որոնց տազնապը վեր էր կացրել հիմա:

Հենց ճամբարում թամբերի ու վահանների վրա նստած նա-  
խարարները հսկում էին զորքերի կազմակերպման:



Կեսգիշերից բավական անց ուրհանդակներն եկան Վրաս-  
տանից ու Աղվանից և հայտնեցին, որ վրացական ու աղվանա-  
կան գնդերը պատրաստ են դուրս գալու: Վարդանը այս լուրը հա-  
զորգեց նախարարներին: Բոլորն ուրախացան, բայց Վարդանը  
ասաց, որ մի շարաթ կարող է սպասել: Համաձայնվեցին:



Վրացական զորքը պատրաստվում էր վաղուց: Վարդանի գե-  
պաններն ու սուրհանդակները փարունակ գնում գալիս էին Հայաս-  
տան, Վրաստան և կապ պահպանում երկու երկրների միջև: Վրա-  
ցիները վճռել էին մասնակցել հայերի դիմագրություն, նրանց իշ-

խանների մեծ մասը համերաշխ էր: Որքան էլ որ Վարդանի հետախույզները որոնում էին, չէին կարողանում հայտնաբերել որևէ նշան Վասակի կողմից եկած դեսպանների: Եվ իրոք Վասակը ընդհատել էր դեսպաններ և այլ մարդիկ Վրաստան ուղարկելը, որով և ստեղծել էր այն կարծիքը, որ նա թեև առերես կողմնակից չէ Վարդանին, բայց ցանկանում է, որ Վարդանը կռվի: միայն ինքը զգուշանում է բացեիքադ Հազկերտի դեմ դուրս գալուց, իր որդիներին փրկելու համար:

Սակայն Վասակը լարելով իր վերջին ուժերը, կարողացավ մի չարանենգ խաղով վիժեցնել Վրաստանի և Աղվանքի օգնության գործը: Նա հենց այն օրերը, երբ հայկական բանակը մոտենում էր ճակատամարտի հնարավոր վայրին՝ կարողացավ Բակուրի միջոցով Վրաստան և այլ դեսպանի ձեռքով Աղվանք նամակներ հասցնել վրաց թագավորին և աղվանից իշխաններին, որ հաշտություն եղավ հայերի և պարսիկների մեջ և պատերազմը կասեցվեց:



Իրենց համար անադմուկ, համեստ պատրաստվում էին ժողովրդրդական գնդերը, որոնցից մի մասը Վարդանի հրամանով նժույգ ստացավ:

Առաքելը վաղ առավոտից մինչև ուշ գիշեր շրջում էր գնդի մեջ և կարգավորում զգեստի, զենքի բաշխման գործը: Նա նիհարել էր, հոգնել, ջարդվել, ձայնը խուպոտել, բայց ոչ մի տրտունջ չէր անում: Միայն խստորեն ու մռայլ ստուգում և կարճ ու կտրուկ ցուցումներ էր անում և անցնում հերթով մյուսներին: Նրան օգնում էին Արթեն քեռին, Սահակը, Եզրասը, Աբրահամ պապիկը, Հովակիմ Գարբինը, Սրապը, Պողոսը, Հովհաննես Կարապետը: Գունդը ստվարացած էր Տարոնից, Տուրուբերանից, Զարեհավանից, Ձմերոցից և Այրարատի գավառներից եկած շինականներով: Հանգիստ ու հեղինակավոր եղանակով դասավորում էր իր ուշտունցիների գունդը Արթեն քեռին, այդ երևույթի տակ զգացվում էր լեռնցու ռազմական դաժանությունը: Արտաշատի արհեստավորներից և շրջակա շեների բնակչությունից կազմվել էր Արտաշատի գունդը՝ Աբրահամ պապիկի գլխավորությամբ: Հին զինվորը ուժի էր եկել

և որից, հավաքել իրեն և նա էր միայն, որ աղմկում էր, անհան-  
գիստ ընկնում դեռ դեն, կոպում ամենաթեթև զանցառման համար:

«Կանայք հայոց աշխարհին» ուխտը միացնում էր իր մեջ  
Մամիկոնյան և այլ նախարարական՝ Մոկաց, Արծրունյաց, Արշա-  
րունյաց, Գնունյաց և այլ տների տիկիներին, օրիորդներին: Մեծ  
Տիկնոջ կարգադրությամբ շինական կանանց գլխավորն էր Խան-  
դուբը: Մեծ Տիկնոջ դաժան կրոնական հրամանով, իբրև քրիստո-  
նեական խոնարհություն և իշխանավորների մեղքերի զղջման մի-  
ջոց Խանդուբին ու շինական կանանց էր ենթարկված նախարա-  
րական կանանց գլխավորությունը: Թող «արդարներն առաջ ընկ-  
նեն», — ասում էր նա:

Մի քանի օր ահագին բազմությունները հոծ զանգվածներով  
սևացրել էին Արտաշատի առջևի հրապարակը, եռում էին, հոսում  
մեջքմեջ, կապկպում, սարքում, զենք, նժույգ, պաշար, շտապելով  
կազմվում: Զորս կողմ օդն էին ծակծկում նիզակները, դրոշները,  
սաղավարտները, զրնգուն կափկափում էին վահանները, սրերը,  
բաշերն էին թափահարում նժույգները:

Ցերեկները կատաղի արևի կիզիչ ճառագայթների տակ, գի-  
շերները ջահերի արյունագույն լույսերով ողողված մարդկային  
վերջին շարանները գալիս անցնում էին Վարդանի և Խախաբու-  
րների առջևով, ուր քարտուղարներն ու գիտակները արձանագրում  
էին գորտեգեղերը իրենց: Նախարարական պատկանելիությամբ,  
զենքերի տեսակներով, հրամանատարական կազմով և գնում կանգ-  
նում իրենց նշանակված տեղը: Քրտնամխած ու բորբոքված Վար-  
դանը շնայած անհնարին հոգնության մեկ-մեկ ստուգում, զննում  
և ապա միայն բաց էր թողնում յուրաքանչյուր զորագունդ: Շարու-  
նակ լսվում էր գիտակի խուպոտ ձայնը, օրինակ.

— Ազգից Դիմաքսնից, տանուտեր՝ Հմայակ Դիմաքսյան,  
տոհմական տանից անձ՝ քսան և երկու, այրուձի՝ երկու հազար,  
հետիոտն երեք հազար, ասպարակիր՝ հինգ հարյուր, նետածիգ՝  
հազար երկու հարյուր և այլն:

Անցնում են: Ապա և մյուսները:

Եկան ընդունվելու ժողովրդական գեղերը: Սրանք խայտարղեռ  
էին, խառնազեն, հեծյալ, հետիոտն իրար հետ:

Վարդանը գնաց ընդունման վայրը, ռամիկների կողմը: Նստեց  
թամբերի կույտերի վրա և հրամայեց, որ մոտենան նրանց պե-

տերը: Եկան Առաքելը, Արթնը, Սահակը և Խանդութը: Մոտ վազեցին և սեղմվեցին շինական մարտիկները կիսաբոլորակ, հետո այնքան լցվեցին, որ շուրջանակի պաշարեցին Վարդանին: Մի փոքր անց եկան Ներշապուհը, Արտակ Մոկացը և Ատոմը: Վարդանը սկսեց կարգի բերել ռազմական զորքը՝ ինչպես ինքն ասում էր: Զատեց հեծյալը, հետիտը՝ հարմար՝ ըստ զենքի, հայրենակցության: Վերջապես հաստատեց պետերին: Վարդանը շոյող կիսաժպիտով նայեց զորագունդի շինականներին և ասաց.

— է, սաստիկ էլ մեծ ռազմագետներ շենք, ասենք ճշմարիտ, հը՞, Արթն՞ քեռի: (Արթնն քեռին գլուխը վեր բերեց): Առաքել պետը լավ հասկանում է ինձ (հարգանքով ու լուրջ նայեց Առաքելին): Ի՞նչ կա, սեր լինի, քաջորդություն, հայրենասիրություն: Դուք էլ դրանո՞վ կովեցեք: Դրանո՞վ կովեցեք և կտեսնեք, որ կհաղթենք: Ծշմարիտ շե՞մ ասում, շինական եղբայրներ:

— Ծշմարիտ, ճշմարիտ, — միաբերան գոչեցին աժեն կողմից սգևորված:

Ներշապուհը, որի խորթությունը դեպի ռազմիկները չէր հարթվել և կիսակասկած, կիսահեզնոտ նայում էր տեսարանին՝ անախորժելով նկատեց, որ ռազմիկներին խառնվել են տերունական զորագնդերի զինվորները՝ լքելով իրենց վրաններն ու վայրը:

Դա դեռ բավական չէր՝ նրանցից զատվեց զինվոր Աբգարը և քանդելով ամեն կարգ ու պատշաճ՝ ասաց Վարդանին.

— Սպարապետ, մենք զինվոր ենք, շատ ենք կովել, գիտես էլ անց ենք կովել, բայց սրանք մեզ շատ բան հասկացրին...

— Տեղը կգա, սրանք մեզնից լավ կկովեն, — մեջ ընկավ մի ուրիշ զինվոր:

— Սրանք մեր հայրենին են, մեր հող ու ջուրն են, սրանց հետ հուրն էլ կանցնենք, ջուրն էլ:

— Ա՛յ, ապրեք, ա՛յ, մատաղ ձեզ, — ձայնեցին շինակալները ու մոտ եկան գրկեցին զինվորներին:

«Թամիկը ուժ է տալիս զորքին, լա՛վ է, լա՛վ է», — սիրտ տվեց իրեն Վարդանը:

Ապա վերկացավ տեղից և դիմեց բազմության.

— Շինակա՛ն եղբայրներ, իսկապես որ դուք զորք ու զինվոր չեք: Անզղում ճիշտ է, լավ կովեցիք. բայց սա Անզղ չէ: Սա ճակատամարտ է: Գիտեմ, դուք քաջարի զինվորյալներ եք: Զե՛զ

խրատ, — ամեն տեղ անխել, իզուր, ձեռաց մի՛ վազեք: Բայց որ  
զարկի տեղը եկավ՝ քաշարաջ վրա տվեք՝ միասին, արագ, ուժգին  
զարկեք մինչև տակը, ջնջեցեք, շորացրեք, կորցրեք տեղը...:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, — փրթեց մի ընդհանուր ծիծաղ:

— Իմացե՛ք, պինդ նստեցրե՛ք ձեր հոգու մեջ՝ մե՛նք պիտի  
հաղթենք, — ձայնը բարձրացրեց Վարդանը, — Հրամանն է՝ հաղթել՝:

— Հրամանդ կատա՛ք, — կարճ ու կտրուկ գոչեց բազմու-  
թյունը:

Բայց գործն ընդհատվեց Արտաշատի բոլոր ուղիներից ճամբա-  
րը լցվող նորանոր խմբերի հարձակումով: Ուշացած ժողովրդական  
բազմությունը պահանջում էր իրենց ևս ընդունել: Զինապահներն  
ու հանդերձապահները, որ հետևումն էին՝ սկսեցին մերժել նրանց  
ասելով, որ բուկոտն են, մերկ են, զենք ու հանդերձ չկա այլևս:

— Հեռացե՛ք, չկա՛... տեղ չկա՛:

Եկվորները կատաղեցին:

— Ո՛ւմ չեք տալիս, մե՞զ, բորիկի, մերկի կռվի՞ն... խելք-  
ներդ ո՞ւր է...

— Մենք եկել ենք սրտներս հովացնենք, զարկենք հարկահան  
չո՞ւս պարտիկին ու մեր արենկեր դավաճաններին, մեզ զենք չե՞ք  
տալիս...

— Տե՛ղեք գրանց գրու՞րը շարժե՛ք...:

Սկսվեց ծեծը, եկվոր շինականները մեջ առան հանդերձա-  
պետներին ու գինապահներին ու սկսեցին ինքնադատաստանը:

Աղմուկը գրավեց Վարդանի ուշադրությունը: Նա գլուխը բարձ-  
րացրեց.

— Հա, ի՞նչ է պատահել այնտեղ:

Մեծողներն առաջ եկան.

— Զեն թողնում մտներ զորքը, սա օրե՞նք է, օրերով ճամ-  
փա ենք կտրել, ջարդվել վազելով...:

Վարդանը լուրջ ու մտահոգ տնտղեց նրանց. — Իրոք որ նրանք  
պատառոտված էին անհնարին շափով, բայց ջլապինդ էին, առնա-  
կան: Նրանցից մեկը փոշեթաթախ գլխով առաջ մղվեց, ճեղքեց  
բազմությունն ու ներս ընկավ:

— Սպարապե՛տ, ճշմարի՛տ աստված, եկել ենք ու դաճնաջ  
չկա, սպանի՛ր, զոռո՛վ կգանք:

— Զոռով մի՛ գաք, սիրելիք, կամքով կտանենք,— ասաց Վարդանը ու մեզմ ու լուրջ դարձավ ծեծված հանդերձապետներին ու զինապահներին:

— Քանդեցի՛ք ամենավերջին պահեստները, բերե՛ք սրանց զենք ու հագուստ:

Եվ խստահայաց ներշնչեց կատարել հրամանը իսկույն: Նրանք զնացին: Վարդանը հեռացավ մռաքված ներշապուհի, Արտակ Մոկացի և Ատոմի հետ:

Զորաբանակը սակայն սպառնալի չափերով ուռչում էր ռազմական բազմությունների հեղեղով: Կանոնավոր տերունական զորաբանակը իրեն տեսնում էր շրջապատված, ողողված շինականների, արհեստավորների խառնազեն, խառնամբոխ մի բազմությամբ և կորցնում էր իր զինվորական կերպարանքը: Այս բանի համար նախարարներից ոմանք սկսեցին անհանգստանալ ու տրտընջալ: Ամենից խիստ դեմ էր դրան ներշապուհը:

Նախարարները սովոր չէին տեսնել Վարդանին, այդ-խստապահանջ զորավարին, այդպես մեղմ ու զիջող դեպի ժողովուրդը, որի անկազմակերպ վիճակը նրանցից ոմանց մեջ տարակուսանք էր առաջացնում, թե արդյոք այդ անվարժ բազմությունը օգնելու էր գալիս կազմիկ զորաբանակին, թե՞ խանգարելու: Վարդանը արդեն վաղուց չէր մերժում ոչ մի խմբի, սիրահոժար լսում էր նրանց, կատարում նրանց իղձը, ընդունում զինվոր: Միայն անհանգստանում էր, երբ նրանց մեջ տեսնում էր կիսամերկ, վատազեն մարդիկ, հրամայում էր հանդերձանք և զենք տալ նրանց: Ուրիշ ոչինչ:

Ներշապուհը, որ հիրավի միայն կանոնավոր զորքի մեջ էր տեսնում ռազմական ուժը, իր մեջ մեղադրում էր Վարդանին ու հազիվ էր զսպում իրեն, որ չգժտվի նրա հետ:

Սակայն այլ կերպ էր նայում գործի վրա Վարդանը: Նա անգետ չէր այս ռազմագիտական խնդրին: Սակայն նա տեսնում էր, որ ժողովրդական ալիքը բարձրանալով բարձրացնում էր նաև կանոնավոր զորքի ոգին: Նա թափանցում էր ժողովրդի ցամառն ներքին, խոր իմաստության մեջ և գնահատում էր այն: Եվ եթե մեկ-մեկ էլ տարակուսանքի մի սովեր սողում էր նրա հոգու վրա՝ նա վանում էր այն՝ սիրտ տալով իրեն:

«Ժողովրդի աստվածը կփրկի մեզ»:

Կեսօրից հետո ճամբար մտան անհանգիստ դեմքերով սուր-  
հանդակներ և լուր բերին, որ Նյուաալավուրտը մտել Հեր և Զարե-  
վանդ՝ շտապ երթով գալիս է:

— Պետք է թշնամուն հանդիպենք սահմանի վրա,— ասաց նաև  
Այլևս անհնար էր սպասել: Վարդանը հավաքեց նախարարնե-  
րին և հրաման արձակեց պատրաստվել շարժման:

— Ծարժվե՞նք՝ շապասելով դաշնակիցներին,— ասաց դառն  
ձայնով Ներշապուհը:

— Ծարժվենք, նրանք կգան կհասնեն, ի՞նչ կարող եմ անել:  
Իմ դանդաղելը մեր մահն է,— ասաց Վարդանը:

Ուշ երեկոյան քամին թևերը կախեց, գիշեր եկավ գաղջ ու տո-  
թագին: Վերջին պատրաստություններն էին: Հրամայված էր կազմ  
ու պատրաստ լինել լուսադեմին շարժվելու:

«Մթացյալն» ժամն էր տակավին, և դեռ շատ գործ կար տես-  
նելու: Վարդանին առաջարկեցին գնալ հանգստանալու, բայց նա  
հրաժարվեց: Վերջին օրերի անհնարին լարումը հոգնեցրել էր  
նրան: Աչքերը անքնությունից կարմրել, ուռել էին, դեմքը դեղ-  
նել էր:

Սակայն Վարդանը չկարողացավ հուզմունքը զսպել, երբ եկավ  
անցնելու կանանց գունդը, և Խանդուբի սեպտուպուզ գլուխը ցնցվե-  
լով նժույգի վարգից՝ դարձավ հպարտորեն դեպի նա: Նժույգներին  
կպած հեծյալները վարժ ու լուրջ վարում էին նրանց՝ այրմարդ-  
կանց հավասար:

Աշխույժ ձիավարում էին Անահիտը, Աստղիկը, Լույսը, Դժխոն  
և մյուս գեղջկուհի և իշխանուհի երիտասարդ կանայք ու աղջիկ-  
ները:

— Ո՛ւր է տանում սրանց, ո՛ւր է տանում...— գանգատվեց  
Արշավիրի ականջին Ներշապուհը,— ինչպե՞ս է մտնում սրանց  
արունքը:

— Այնտեղ միտքը կփոխի,— ասաց Արշավիրը, բայց և ավի-  
լացրեց,— վիրակապ կդարձնենք սրանց:

Երբ հասավ գիշերային ժամը՝ «Շողավտոն», զորաբանակին  
հանգիստ տրվեց: Զորագնդերը և ժողովրդական գնդերը արգեն  
իրենց կազմի մեջ հաստատված՝ թափվեցին գետին և խոկույն քուռ  
մտան:

Քեք ընկավ բարձին Վարդանը և նիրհեց:

Չէր քնում Անահիտը: Խարույկի մոտ նստած՝ նա կրկին ու կրկին կարգում էր մի մազաղաթյա գաթեթ: Տխուր էր նա: Ըստ երևույթին ընթերցումից: Դա Ողիմպիայի նամակն էր, որ այն օր ստացել էր Անահիտը Խորխոռունիքից:

«Անահիտին, դատերն Գեղեոնին ողջուն և բարեմաղթութուն»:

Քույր իմ, իժացած եզիր, որ ես և մայրն իմ, տիպիկն Խորխոռունյաց չկամեցանք արատավորել մեր անսքով Սպարապետի սուրբ բանակը: Մոխիր ենք ածում մեր գլուխներին և ողբում ենք մեր դավաճան հորն ու ամուսնուն: Լուր անենք, որ սգավոր քույրը քո նույնպես ողբում է և շի կամենում իր դավաճան ամուսնուն հիշեցնել տալ գալով ձեզ: Աստված օգնական: Վշտացյալ Ողիմպիա, օրհորդ Խորխոռունյաց»:

— Ի՞նչ ես կարդում, ինչո՞ւ շես քնած, Անահիտ,— բարձրացրեց գլուխը Ծաթերը:

— Ողիմպիայի նամակն է, մայր, կարգում եմ,— ասաց Անահիտը:

— Ե՛կ՛ զձ... Բայց քնի՛ր, քնի՛ր, ճանապարհ ենք գնալու:

Առարկաները սկսեցին գորշանալ, երկինքը բացվեց արևելքում, սուր շեփորը զարթեցրեց քնած զորաբանակը: Ձով օղը հաջորդելով տոթ գիշերվան՝ հաճելի դող էր բերում գետնամած զինվորների մարմնին: Աղմկեց ճամբարը հազար ձայներով:

— Պատրաստվե՛լ,—հրամայեց Գուլիթ սեպուհը նժույզը վարելով ամեն կողմ:

Ձորաքանակը բուրակ, շարժվեց ճամբարի հրապարակում՝ մի կողմ կանոնավոր զորագնդերը, մյուս կողմ՝ ժողովրդական գնդերը: Որքան էլ ջանում էին վերջիններս կանոնավոր զորքի կերպարանք առնել՝ կամավորի նրանց անկանոն վիճակը մատնվում էր: Խառն էր զենքը, շատ սակավ զրահավորները, նիզակավորը տապարավորի կողքին, վահանավորը անվահանի հետ: Միայն հեծյալներն ու հետևակներն էին ջոկ-ջոկ: Եվ բոլորը կանգնել էին շատ հոգս ու աշխատանքից կոացած, կոշտացած, լուրջ ու համեստ, իրենց գործին հասարակ նայողի պես, թեև լավ հասկացած թե ուր են գնում: Մրանց շուրջը լցվել էր ճանապարհ գնող հեռու-մոտիկ վայրերի բնակչությունը, որը ճանապարհի պաշարներով, բարեմաղթութուններով, վերջին ու ջերմ խոսքերով զրաքեցնում էր գնացողներին:

Առաքելը նժույգը մտտեցրեց ուսմիկ բազմութիւն, ձեռով արեց, որ մտա գան, լսեն իրեն և ասաց հուզված, բայց հասարակ ձայնով.

— Է՛, ժողովուրդ: Գիտե՞ք, որ սա հող հայրենիքի, հող աշխարհքի կոնիւն է: Հող՝ մենք՝ մեկ ենք: Ինչ բուռ հող վերցնես քամես՝ մեր քրտինքն ու արյունը կկաթի: Հիմի մենք կարող է գնանք, բայց հող հայրենիքն կմնա: Կովենք՝ շտանք հողը, հաղթենք՝ շտանք, մեռնենք էլ շտանք: Սրտապինդ կացեք, մենք կհաղթենք: Դե, եղբայրներ, գնանք ու մեր աշխարհքի երեսը սև լանենք:

— Աստված ճշմարիտ, շենք անի:

— Կհաղթենք, հույս աստվա՛ծ:

Արթին թոսի, որ առհասարակ սակավախոս էր՝ համարելով, որ առանց խոսելու ամեն բան հասկանալի է՝ բայց և այնպես կանգնեց իր գնդի առաջ և ցած ձայնով, որ իր լեռնցի հայրենակիցները համենայն դեպս կլսեին՝ ասաց.

— Ի՛նձ լսեք, ով գալիս է՝ իմանա, գլխներին գդակ է: Թող իշխանները շատածեն թե պատի արանքից ենք: Ռամկի պատիվը գետնով շտաք: Դե՛:

Պողոսը, որ իրեն ուտում էր հուզմունքից՝ շհամբերեց, բարձրացավ մի բարի և գոշեց.

— Ժողովուրդ, մնա՛ս բարով: Գնա՛ւ ենք: Գանք՝ չգանք՝ դո՛ւ ապրիր: Լա՛վ մտիկ արա հալքների հողին. ջրի՛ք, ցանի՛ք: Գնում ենք, հողի պես անմեռ ապրենք:

Ու խառն ձայներ իրար դիպան:

— Մարիա՛մ, Սողո՛, Մաղի՛կ, մնաք՝ լա՛վ օրի ապրեք:

— Դուք էլ հաղթեք՝ տո՛ւն գաք, ազատեք՝ տո՛ւն գաք:

Մնացողներից ձայն սովին.

— Գնանք բարով, երանի որ ազատութեանը պիտի տեսնեք:

Չայնեցին ամեն կողմից ու ոգևորված ցրվեցին իրենց գնդերը:

Վարդանը զինվեց, զրահավորվեց: Մյուս նախարարները ևս զինվեցին: Նրանց մատուցեցին նժույգ և բոլորը հեծան:

Վարդանի հրամանով առաջամարտիկ հեծելազունը եկավ կանգնեց ամպհովանու առջև:

Հանկարծ Վարդանը այլայլվեց, աչքերը ցուլացին և գոշեց.

— Դե, օ՛ն, ժա՛մն է ժամու... .

— Զյո՞ն, զգա՞ստ,— ձայնեցին սեպուհները,— զգա՞ստ...  
զդա՞ստ...— ձայները գնացին շորս կողմ ու հեռուն:

Զորաբանակը լարվեց: Նախարարները, սեպուհները, ավագների բռնեցին զորագնդերի առջև իրենց տեղերը: Վարդանը մի հայացքով գրկեց ողջ զորաբանակը՝ կանոնավոր և ժողովրդական:

Այդ միջոցին Մամիկոնյան տիկինը իր դուստր Շուշանիկի հետ Մեծ Տիկնոջ թևերն ընկած բերին ամպհոսվանու մոտ: Վարդանը ալլալվեց: Երբեք չէր տեսնվել նման վեհ մի պատկեր: Ոգով գորացած այդ ծեր կինը զարմանալի տոկունություն հանդես բերեց, նա ոտաբորիկ՝ մաշված պատմուճանով եկավ, դողահար շրթունքներով մոտեցավ Վարդանին, խաշակնքեց երեսը և առնելով նրա աջը՝ համբուրեց: Վարդանը շփոթված ետ խլեց ձեռքը, որ թույլ շտա կրկնելու նման բաներ, բայց Մեծ Տիկինը այնպես նայեց նրան և վառվեց այնպիսի ներքին ուժով ու համոզմամբ, որ ազդեց և համոզեց նաև բոլորին: Նա Վարդանի մեջ մի նոր խորհուրդ տեսավ և բարեմաղթեց.

— Աշխարհին եկար՝ աշխարհին գնաս, աշխարհ ազատես, աուրդ սո՛ւր, Սպարապետ Հայոց:

Վարդանը խոնարհվեց, որ համբուրի մոր աջը, բայց նա թույլ չտվեց՝ զգացնելով նրան և բոլորին, որ այդ պահին ամենամեծ մարդը իր զավակն է: Մեծ խոնարհությամբ նա կանգնեց պատշաճ հեռավորության վրա և երկյուղած նայեց իր որդուն:

Բազմությունը կարկամեց լռությամբ և բազմահազար հայացքներն ուղղվեցին պատկառազդու կնոջը:

Մեծ Տիկինը դեմքը շրջեց աջ ու ձախ, ոգելից աչքերով շփեց զորքն ու ժողովրդական բազմությունը և հնամենի ձեռքերը կարկառելով նրանց՝ ձայնեց.

— Արդա՛ր աշխարհ, դու կաս, դու կմնաս: Դո՛ւ ես շենը, դո՛ւ ես կյանքը: Շունչդ անհա՛տ, ձայնդ անպակա՛ս, արևդ երկա՛ր: Քնացե՛ք, որդիքս: Խնդրել եմ մեղավոր բերանովս: Ազատությո՛ւն բերեք, հայրենին շենացներ:

— Ամե՛ն,— որոտաց զորաբանակը:

Եվ ապա Մեծ Տիկինը դարձավ դեպի Մասիսը և ձեռով արեց նրան.

— Բարձրի՛կ Մասիս, մաքո՛ւր, ազատ Մասիս, մենք անցավորա՛ց՝ դու մնացողա՛ց. դո՛ւ տես, դո՛ւ պատմիր:

Հետո դարձավ զորաբանակին և բարեմաղթեց.

— Գնացե՛ք, որդիք, թող արդարության աստվածը դատի ձեզ ու թշնամուն:

Մի մտերիմ, լայն շունչ անցավ ողջ զորաբանակին: Մի մայր էր խոսում նրա հետ, մի մեծ մայր, ասես ողջ աշխարհի մայրը, որ պատերազմ է ուղարկում իր այսքան սիրասուն զավակներին: Բոլորը ազդված էին, բոլորը լցված մեծ սիրով դեպի մի էակ, որ մարդկային խոր վիշտ է ապրում, խոցված է հույժ՝ այսքան երիտասարդ կյանքերի լինելիք կորուստից:

Մեծ Տիկինը գնաց: Սեպուհները թևերն ընկան, որ տանեն: Վաղ առավոտյան թեթև հովը դողացրեց մեծավիշտ կնոջ աչքերից կախված երկու կաթիլ արցունքները: Նա դարձավ դեպի Վարդանը և ասաց.

— Գնա գործի՛դ, որդի, ես կհասնեմ:

— Մայր... — անհանգստացավ Վարդանը:

— Մեծ Տիկին, շնորհ արա, խնայի՛ր մեզ, — աղաչեց նրան ներշապուհը:

Մեծ Տիկինը շնայեց նրան, այլ գլուխը կախած մտասույզ և լուրջ շարժվեց դեպի կանանց գունդը: Նա ողջը խելահեղ վճիռ էր և մղումն: Նա գնում էր ճանապարհին մեռնելու կամ մնալու:

— Տիկին, — դիմեց ներշապուհը Մամիկոնյան տիկնոջ, — դո՛ւ, համողիք, տո՛ւն տար...

Միշտ համեստ ու սակավախոս Մամիկոնյան տիկինը, որ ջանում էր աննկատելի մնալ՝ խիստ քաշված և անճարակ նայեց ներշապուհին.

— Ինչպե՞ս տանեմ, չէ՞ որ ես էլ...

Եվ շառագունեց ամոթխած աղջկա պես՝ զգալով իր վրա հառած վաթսուն հազարանոց զորաբանակի աչքերը: Եվ գնաց զբախկոր:

Վարդանը և ամբողջ զորաբանակը աչքերով հետևեցին այս կանանց, որ գնացին միացան «Կանանց Հայոց աշխարհի» կանանց, որ արտասուքն աչքերին հետևում էին Մեծ Տիկնոջը:

Վարդանը հեծավ նժույզը և շուրջանակի վարգելով զորաբանակի առջևով՝ սուրը բարձր բռնած անցավ գնաց Արտաշատի կողմը մուրջի կողմը՝ ձգելով հրամանը.

— Զորաբանակ, ճանապարհ:

Ձորաբանակը ոտ վերցրեց: Առաջ անցավ հեծելազոր բաժինը, որ պիտի առաջ ընկներ իրրև հետախույզ առաջապահ: Ապա շարժվեցին մյուս զորագնդերը՝ Արծրունյաց, Մամիկոնյան, Ամատունյաց, Գնունյաց, Արշարունյաց, մյուս նախարարներինը: Սրանց հետևեցին ժողովրդական գնդերը: Անցան Առաքելը, Արթենը ընդհին, Արարհամ պապիկը, Սահակը և մյուսները: Անցավ Խանգուլթը սաղավարտի տակից սև խոպոպները ցնցելով և իր հետևից տանելով «Կանանց Հայոց աշխարհի» ուխտը:

— Երկար արև՝ Սպարապետին, — գոչեց Պողոսը:

— Ամեն, — որոտացին ամեն կողմից:

— Արժանի՛ լինենք ազատության, — գոչեց Սահակը:

Ու իրանաձայն հյուսվեց իրար.

— Հաղթենք՝ հայրենին ապրի:

— Հայրենի՛ն ապրի՛ մենք կապրենք:

Սվ վաթսուն ու վեց հազարանոց տերունական զորքը հետևից էլ վիթխարի ժողորդական գանգվածները շարժվեցին դեպի սահման՝ դիմագրավելու օրհասին, որ սողում էր Հայոց աշխարհի վրա: Դողդացրեց Արաքսի կամուրջը առաջամարտիկ հեծելազորը և արագ գեաց հեռացավ:

Հեծելադուռը Առանձար սեպուհի զլխավորությամբ անջատվեց զորաբանակի գլխից և առաջ վարգեց: Նա պետք է հետախույզ գելով տեղ հասներ, առանձին ջոկեր հասցնեք անգամ թշնամու թիկունքը, հետախուզեք նրան ամեն կողմից և կարիքի դեպքում լուրեր հասցնեք շարժվող զորաբանակին:

Վարդանը զորաբանակի վերջապահ զորագունդը հանձնեց ներշապուհին, իր և նեքշապուհի միջև ընկած ուժերի շարանը հանձնեց մյուս նախարարներին, ժողովրդական գնդերին պատվիրեց հասնել կազմիկ զորագնդերի հետևից և ինքը առաջ ընկավ՝ համհարզ առնելով Ատոմին, Արտակ Մոկացին և Արշավիրին: Թույլ թվեց նաև Ջոհրակին լինել համհարզի մեջ մինչև նրան փի զորագունդ հանձնելը:

Ներշնչված էր Մամիկոնյան զորագունդը: Գնում էր կանոնավոր կարգով: Դավիթ սեպուհը շուտ-շուտ ետ էր շրջվում դիտելու զինվորներին, որ լրտա էին և մի տեսակ հպարտ իրրև առաջամարտիկ զորագունդ: Աչքի պոշով Արգարին էր նայում Մանուկը և ջախճում նժույզը նժույզից ուղիղ գիծ կազմել: Գետնին էր նայում

մտասույզ ու լուրջ Մաղբոսը: Շուտ-շուտ իրենց զենք ու զրահն էին դիտում և շտկում արտաշատցի երիտասարդները՝ կարծես հանդես էին գնում: Կորյունը ետ-ետ էր նայում Տփզրանին՝ զննելու նրա տրամադրությունը, որովհետև սա լուր էր և չէր կատակում իր հետ: Մյուսները ետ էին նայում, բայց արդեն ոչ իրար, այլ Արտաշատ:

Ամենից դժվարը Արծվիինն էր: Նրա եժույզը կրկին չէր հանդուրժում հետևից գնալ, և խեղճ թիկնապահը շարունակ ձգում էր նրա սանձը:

Մամիկոնյան զորագնդին հետևում էր Հայկական այրուծին, որ արդեն խոնջենքն առած, վերականգնված և այժմ փորձանքների բուրայում ձուլված էր: Սրվանձույա Գարեգինը այդ գիտակցությամբ հպարտ առաջնորդում էր նրան:

Ուսանողն շարժվում էին ժողովրդական գնդերը, մանավանդ կանանց գունդը և սրա մեջ Մեծ Տիկինը: Այդ զարմանալի էակը իր կյանքի վերջում դրսևորեց ոգու և մարմնական ուժի անըմբռնելի, անսպառ լարումն: Ավելի զարմանալին Վարդանն եղավ: Չարգելելով կանանց զինվել գնալ պատերազմ՝ շարգելեց նույնը և իբր ընտանիքին, անգամ իր ծեր մորը: Եվ այդ ոչ միայն հավասարության և անկողմնապահության համար: Նա այդ ամենի մեջ տեսնում էր հայտնաբերումը մի մեծ ոգու, միայն որը կարող էր հաղթթել: Եվ այդ էր պատճառը, որ նա այնքան հակամետ էր ժողովրդական գնդերին, հանդուրժում էր Նրանց զինական թերությունները և պաշտպանում նրանց:

Գնում էին ժողովրդական գնդերը՝ Առաքելի, Աբրահամ պապիկի, Խանդութի զխավորությամբ: Կարծես գնում էին աշխատանքի, շատ չէին խոսում իրար հետ: Փոխանակում էին հասցահատ խոսքեր և գնում էին լուրջ ու համեստ:

Զորաբանակը ձգվեց Մասիսների արևելյան ստորոտում՝ Արաքսի աջափնյա տափարակի վրա: Արևը դուրս եկավ և ճաճանդ շավորեց զինվորների սաղավարտները, վահաններն ու զրահները՝ Վես ու վեհ գլուխները բարձր բռնած եռանդագին սուրացիին Մամիկոնյան զորագնդի նժույզները:

— Ա՛յ, հա՛ա՛յ, կարկտե՛ց մամիկոնյան սմբակաարտփը՜ ձեռնե՛մ իրեն, — բացականչեց Արշավիրը: Վարդանը ժպտաց:

Կաթավել սկսեց Վարդանը իր վեհատիպ «Վիշապի» հետ, ուղ

աչքերը հպարտ ոլորեց այս ու այն կողմ՝ սպիտակուցները լայն-  
լայն շոբելով իմաստուն խենթությամբ:

Վարդանը ետ նայեց և նշան արեց գլխով:

Զինվորները աշխույժի եկած՝ իսկույն խլեցին նշանը և Մա-  
նուկը սաղավարտը թեքելով ետ՝ ձայնը գցեց:

Առյուժ, արի՛ առյուժ,  
Արի՛, առյուժ անպարտ,  
Բացվեց օրն վրիժուց,  
Հրավեր կարգաց՝ ի մարտ:

Երգը գնաց դեպի ետ, կպավ մյուս զորագնդերին, ամեն մեկը  
սկսեց իր երգը: Իսկ ժողովրդական գնդերը լսեցին Սրապի երգը,  
որ զնգաց դաշտային երգի գլգլուցներով:

Հետզհետե զորաբանակն սկսեց կտրտվել: Հեծյալ զորագնդե-  
րը առաջ էին ընկնում և որոշ տեղ հասնելով կանգ առնում և ըս-  
պաստամ հետիոտնին, որ ինչքան էլ արագ էր ընթանում, կրկին  
ետ էր մնում: Ճանապարհին Առանձարի հետախույզները անընդ-  
հատ արշավում էին ետ ու առաջ՝ Վարդանից ճակատ և ճակատից  
Վարդանը և անընդհատ տեղեկացնում էին իրենց ամենաչնչին դի-  
տածները:

Դիմացից հեծյալներ երևացին, որ գալիս էին արագ վարգով:  
Հասկացվեց, որ դա արդեն Առանձարն ինքն է և գալիս է շատ կա-  
րևոր տեղեկությամբ: Եվ իրոք նա մոտեցավ: Փռշեթաթախ, քրո-  
տընախաշ, հեխհե նա վարգեց դեպի Վարդանը և զորական ող-  
ջույն տալով ետ շրջեց նժույզի գլուխը՝ գնալով Վարդանին հավա-  
սար: Նա զեկուցեց առանց ձգձգման.

— Զորաբանակն անցնում է երկու հարյուր հազարից... Եկել  
է ողջ «Մատյան գունդը», հիմնական այրուձին և ծանրագեն ըստ-  
վար հետևակ:

— Եվ ստվա՞ր է շարունակությունը, որ գալիս է, թե՞ նվա-  
զում է,— հարցրեց Վարդանը:

— Լրտեսներն ասում են դեռ ստվար է և դեռ տուտը չի կտր-  
վում: Հրամայեցի՛ շարունակ տեղեկացնել:

Վարդանը մռայլվեց: Նախարարները մոտեցան Վարդանին,  
որը հաղորդեց նրանց այդ տեղեկությունը:

Վարդանը լրջորեն տազնապեց: Այն պատասխանատուութիւնը, որ նա հանձն էր առել և այն էլ իր իսկ պահանջով, այս ժամիս ահա, երբ վեճերի, փորձերի և ապագայի լինելիքների փուլից անցավ և մտավ ծանր փորձանքներով յի ներկա իրականութիւնը՝ խոռովեց Վարդանի հոգին: Իսկ եթե խորտակվի իր զորաբանակը... եթե դաժան ու խարդախ պատահմունքը գա շարժապիտ, խլի նրա ձեռից բոլոր հաջողութիւնն ակնկալումները... դա կնշանակեր վերջ հայոց ժողովրդին: Դա կնշանակեր զրախոսութիւններ էին այն ամենը, որ նա խոսել է հայոց ժողովրդի առաջ:

Այս խոհերը, այս վճիռները, ճակատագրի խաղերով զբաղվելը Վարդանի մեջ ծնեցնում էին որոշակի մի պահանջ, հոգեկան պահանջ՝ խոսել այս խոհերի և տարակուսանքների մասին մեկի հետ, իր հետ հավասար խորհող մարդկանց հետ, հանգստացնել հոգին:

Նա ամենահամեստորեն կլսի երկրի ձայնը, կլսի ամենաանշնչան մարդու խոհական խոսքը: Միայն հանդիպելու այդ մարդուն: Եվ սա առաջինը չէր, որ Վարդանը որոնում է երկրի ձայնը: Նա հենց սկզբին, երբ հեռվից մոմուաց արհավիրքի քամին՝ Աշտիշատի վանքի մոտով անցնելիս մտավ երկրի մեծ մարդկանց հետ՝ Եղիշեի, Եզնիկի, Ղևոնդի հետ՝ խորհելու: Նրա լսելիքը բաց էր երկրի խոնարհագույն զավակների, ուսմիկների առջև: Տղմուտի ափին այն գիշերային շինականին չէր մոռացել նա: Նրա առջև շրջում էին զինվորյալ մյուս շինականները՝ Առաքելը, Սահակը, Արթնն քեռին, Պողոսը, Խանդութը, Աբրահամը, Զարեհը և ողջ ժողովուրդը հայոց: Դրանք երկրի իմաստուններն էին: Ամենքը, ամենքը կոխվ են պահանջում: Ամենքը Վարդանի վրա են դնում վարել այդ կոխվը: Բայց որքա՞ն հաջող կվարի նա այդ կոխվը, և ո՞րն է զբաղեցրույն իմաստութիւնը... Ոչ ոք չի խոսում այդ մասին: Ո՛չ ոք...

Սակայն պետք էր վճռել անելիքը: Ընդունել ճակատամարտը կամ խուսափել:

— Ահա՛ մեծ արհավիրքը... — մոմուաց ներշնչուհի:

— Ապա հիմա ի՞նչ կարող ենք, Սպարապետ, — ոչ առանց տազնապի հարցրեց Արշավիրը:

Վարդանը հասկացավ, որ մյուսներից ոմանք ևս բաժանում էին այս տարակուսանքը:

— Թերևս կա՞ ձեր մեջ մեկը, որ կարծում է թե բարվոք կլինի նահանջել խեղույն և ճակատամարտ տալ երկրում,— հարցրեց նա:

— Ոչ ոք այդ միտքը չի ունեցել,— ասաց Ներշապուհը:

— Ծա ունեցել եմ և ունեմ...— ասաց Վարդանը ի զարմանս նախարարներին,— բայց երկյուղ չեմ կրում, որ մեզ իր տակովն անի ու անցնի վրաներս խուժող ահեղընթաց հեղեղը՝ սահմանագլխին: Անհնարին հզոր կլինի նա երկրի մեջ միայն: Չի օգնի երկրի մեջ մոծակի կոխվր: Մեծ է գազանը, եթե նա իրեն ողջ հասցնի երկրի խորքը: Նա արդեն կհոշոտի մեզ՝ նախքան մենք կկոտենք նրան վերջապես:

— Պետք է գնանք,— հնար չկա,— հառաչեց Ներշապուհը:

— Պետք է գնանք,— կրկնեց Վարդանը,— թերևս նահանջը այնտեղ վճռենք:

— Գնա՛նք, աստվա՛ծ օգնական մեզ,— ասաց Արշավիրը:

— Օգնական աստվա՛ծ,— ասացին նախարարները և՛ տարածկուսանքով, և՛ քաշալերոված:



Վարդանը կազմ գորագնդերը հասցրեց մինչև Արաքսի Մասշայցոտնի դաշտը և հրամայեց դադարք, որ հետիոտներ հասնին: Մանավանդ ար՝ արդեն մի դաշտ ևս, և արդեն թշնամին էր, հարկ էր ամփոփվել: Այգտեղ որոշեց նա միօրյա հանգիստ:

Ձինվորները թափվեցին գետի վրա: Մարավի նժույզները մինչև թոքերն էին քաշում ջուրը: Թեթև տաղավարների տակ նրստեցին հրամանատարները: Վարդանը սեպուհներ ուղարկեց զորագնդերը ստուգելու:

Ու մինչ կհանգստանային հեծյալ զորագնդերը՝ հետևից հասավ հետիոտներ, և ժողովրդական գնդերը եկան խառնվեցին առաջիններին: Լայն հրապարակ բացվեց գետակի եզրերին, որ շրջանաձև պտույտ էր տալիս՝ գոյացնելով մի մեծ թերակղզի:

Գետափին շարվեցին զորագնդերը և նժույզները կապած, սեպի վրա պաշարը բացած՝ սկսեցին ճաշել՝ կատակելով, իրար վրա հողի կոշտեր նետելով և ուշացածներին դիտելով: Մամիկոնյան շորագնդի սեպուհները քաշվեցին հազվագյուտ ուտիների տակ

հանգստանալու: Զինվորները արեւի տակ տոշորվելուն անտարբեր՝ երգում էին, ծիծաղում: Եվ ահա այդ ուրախ պահին եկավ ուշացած Մարտիրոսը՝ Վարսժի հարևանը, քրանաթոր, կարմրած: Նա մշմշում էր, հեռում և մեջքին քարշ տալիս մի հաստ ու ծանր մուշտակ, որ փաթեթ էր արել: Նա զինված էր մի ահագին մկունգով, որ նրա միակ գննքն էր:

— Այ բարո՛վ, բարո՛վ, եղբա՛յր Մարտիրոս, — ձայնեցին արտաշատցի երիտասարդները, — հրամայի՛ր, հրամայի՛ր:

— Հը՛... — հեաց Մարտիրոսը, — գունդս... որտե՛ղ է գունդս...

— Վա՛յ, եղբա՛յր Մարտիրոս, այս ո՛ւր էսպես... ի՞նչ կա, ի՞նչ գործով, — հարցրեց Մաղքոսը մոտենալով:

— Գո՛ւնդս, է՛, գո՛ւնդս, — հեաց ու նվաց Մարտիրոսը:

— Գունդդ ա՛յ խորովվում է դիմացը՝ առանց շամփուրի: Նրստի՛ր, նստի՛ք, հոգնի՛ր մի քիչ, շատ ես հանգստացել ճանապարհին:

Մարտիրոսը նստեց գետափին, արտաշատցի տղաների մոտ: Նրա գեր մարմինը պարզապես տանջվում էր շոգից, բեռից և հոգնությունից:

— է՛, ցուրտ չէ, եղբա՛յր Մարտիրոս, — քաց շէր թողնում խեղճին Մաղքոսը, — դու ինձ ասա, էդ հաստ մուշտակը որ հագնես՝ քա չե՛ս մքսի:

— Ի՞նչ անեմ, — նվաց՝ չհասկանալով Մաղքոսին՝ Մարտիրոսը, — ազգ է կործանվում:

— Որտե՛ղ, — սուտ վախեցավ Մաղքոսը, — ազա՛յք, վե՛ր կացեք, գնանք ազատե՛նք:

Արտաշատցի տղաները Մարտիրոսին դրմաշով ջրը հրամցրին և առաջը հաց ու պանիր դրին: Մարտիրոսի դեմքը մաքրվեց: «Ապրե՛ք», — ասաց ու սկսեց ուտել: Սովել էր սաստիկ:

— Եղբա՛յր Մարտիրոս, տես լա՛վն է, — հարցրեց Տիգրանը, — Սպարապետի խոհարարն է խորովել, — ու խորովածը լցրեց նրա առջև:

— Զե՛ռ ես առնում, — բամբ ծիծաղեց Մարտիրոսը, — հո՛, հո՛, հո՛... Սա Սպարապետի խոհարարի ձեռքը չէ: Մրա խոհարարին Հայոց աշխարհի սահմաններից մի ակ տեղ ներս չպիտի թողնել:

— Ինչո՞ւ:

— Շունը չգիտե խորովածի: Խորովելիս չի հալվել: Կա՛ չորս հարյուր հիսուն, կա՛ երեք հարյուր:

— Երեք հազար,— կցեց Մաղքոսը:

— Հո՛, հո՛, հո՛, հո՛,— վիպխաց Մարտիրոսը,— երեք հազարը ածուխն է, խելքի՛ տոպրակ:

• Վարածն ու Մարկոսը պահեստի նժույգների հոգսով բռնված՝ կռվում էին իրար հետ:

Հանկարծ հրապարակի դիմացը իրար խառնվեցին և կծիկ դառած մեջտեղ եկան մի խումբ զինվորներ: Բոլորը վազեցին տեսնելու թե ինչ կա այնտեղ: Կորյունը գլուխը կոխեց զինվորների արանքը և խցկվեց ներս: Եվ տեսավ մի խումբ գուսաններ սաղավարտով, զրահով, սրերով, բամբիռներն ու փանդիռները ուսերին գնում էին դեպի Վարդանի վրանը: Դժխոն որոնում էր Արծվիին: Նժույգը պարանը վիզը գցած տարավ գետափով բավական տեղ, բայց նրան չգտավ: Գնաց գետի հոսանքով վեր և տեսավ Արծվիին, որ իր օգնականի հետ լվանում էր երկու նժույգ:

— Արծվի՛, ինչո՞ւ ես եկել այտեղ,— հարցրեց Դժխոն:

— Ներքևը պղտորել են,— ժպտաց Արծվին:

— Կթողնե՞ս իմն էլ լվանամ այտեղ:

— Լվա, մենակ ներքևում:

Դժխոն արագ լվաց նժույգը և բաց թողնելով խոտի վրա՝ մոտեցավ Արծվիին, որ լվանում էր Վարդանի նժույգը:

— Քե՞զ մատաղ, հոգյակ «Վիշապ», Սպարապետի՞դ մատաղ,— գուրզուրոտ խոսքերով բռնեց նժույգի բաշը և համբուրեց վիզը Դժխոն:

Արծվին հալվեց խանդաղատանքից:

— Արծվի, ի՞նչ է ասում Սպարապետը, կհաղթե՞նք:

— Կհաղթենք,— հավատով ասաց Արծվին:

Եվ «Վիշապին» տանելով ափից մի փոքր հեռու, բաց թողեց և ինքը առաջ ընկնելով՝ սկսեց վազել: Նժույգն հետևից վազեց այնքան, մինչև չորացավ:

Արծվին վերադարձավ Վարդանի վրանը, նժույգները կապեց ծառին և գարի տվեց: Դժխոն կանգ առավ զարմացած: Զորքը ողջ հրապարակը շրջան արած, ոգևորված լսում էր գուսաններին, որ ընկել հրապարակի մեջ՝ հանդես էին բացել: Վրանում նստած էր Վարդանը շրջապատված նախադարներով, կողքին բազմել էր Մեծ

Տիկինը մյուս տիկիններով և գեղջկուհիներով, իրար գլխի էին հավաքվել արտաշատցիները, աաբոնցիները և մյուսները: Արծվին ու Դժխոն երգախաղի այն տեղին հասան, ուր գուսանները հափըշտակման, հուման կրակի մեջ պատկերացնում էին երկու քաջերի օրհասական կոճվը իրար դեմ: Նրանք մատներով, բռով զարկում, ծեծում էին իրենց բամբիռներն ու փանդիռները, արագ գնում-գալիս էին լայնաքայլ, ընդոստ ետ շրջվում, ոտներով դոփում գետինը, ցնցահարում գործիքները և ոգում բարձրաձայն: Դա հին ռազմական երգ էր քաջության, կռվի հաղթության բերկրանքն ու պարտության դառնությունը պատկերացնող մի վեպ, որ մարտից առաջ նվազում երգում էին գուսանները: Նրանք երգելով, լարերին բռունցքելով՝ դրանց վզոցներին ու փնթփնթոցներին էին նմանեցնում թիվերգի եղանակն ու բառերը՝ դարձնելով այն լարաձայն բառախաղերի մի մրրիկ, որ ազդում, սաստում էր, երբ դրան էլ միանում էր գուսանների հրամայող, շեշտակի դիմախաղերը:

Չկա՛ կովում հաղթող երկու,  
Մե՛կն է հաղթող, պարտվող մե՛կը,  
Քա՛ջն է հաղթում, պարտվում հե՛զը:  
Ժա՛մը ժամե՛ց, տարածամե՛ց,  
Հաղթի-պարտի գամը գամե՛ց.  
Օրհասն ասաց՝ զա՛մրկ,  
Սև բախտն ասաց՝ ա՛մա,  
Սև դիրն ասաց՝ մա՛մհ,  
Սև մահն ասաց՝ եղա՛վ,  
Չափ ու պատժի լրումն առավ,  
Թը՛մբ, թրըմփաց թմբից ի թումբ,  
Գնաց փովեց դաշտովը մեկ:  
Պա՛րտ պարտըվեց, շա՛րդ փշրվեց,  
Կործ կործանվեց, մահ տարածամ,  
Այսպես բամբոի լարը վիպեց:  
Քաջ քաջորդի, թե կովում ես՝  
Հզոր մի զարկ վզին, մի զարկ,  
Թե քաջարանց սուր ունես սուր՝  
Փրթիր՝ փթի փթիթն հասակ:

— Քա՛ջ խոսք...

— Ապրե՛ք, — գոչեց զորաբանակը:

— Սպարապե՛տ, արև՛դ երկար, — ձայն տվեցին ամեն կողմից:

Գուսանները վերջացրին և վզներից կախ բամբիտներն ու փանդիտները թափահարելով եկան գլուխ տվին Վարդանին և կանգնեցին քրտնաթոր, կարմիր:

Վարդանը դարձավ զինվորներին.

— է՛, վախկոտներ՛ր, լա՛վ գովեցին ձեզ գուսանները:

— Վախկոտի հնարը չկա, Սպարապետ,— ասաց Մանուկը:

Զորքը ծիծաղեց: Ավագները ժամածոեցին դեմքերը՝ զգուշահալով շափից ավելի ծիծաղել զինվորների մոտ: Իսկ ժողովուրդը գորովանքով նայեց Վարդանին, որ անհոգ երեխայի պես զվարճանում էր:

Այդ միջոցին ճանապարհին երևացին մի խումբ հեծյալներ: Նրանք գալիս էին հապճեպ ընթացքով:

— Դաշնակիցներից լուր կլինի,— ասաց Շեփաղներ կենդանացած:

Հեծյալները ըստ երևույթին շատ էլ ուժ չունեին իրենց նժույգներին մեծ արագություն հարկադրելու: Երբ մոտեցան՝ Ատոմը բացականչեց.

— Հազարապետ հայրի՛կը:

Եկավ Հազարապետը մաշված, հոգնարեկ, դառնացած: Վարդանը իսկույն կռահեց անհաջող դեսպանությունը և միայն ասաց.

— Ողջ եկար և փա՛ռք աստծո...

— Ողջո՛ւյն զինվորելոց,— ասաց Հազարապետը արտասվալից աչքերով:

— Եկ հանգստացիր, կժարտնչենք և տոռնց Քյուզասդիայի,— ասաց Վարդանը:

Հազարապետը, որ իր վերջին ուժերով մի կերպ հասել էր հեսուկից՝ նստեց ուռնու ստվերի տակ և շատ համառոտ պատմեց իր տվալտանքները Քյուզանդիայում և կայսրի մերժումը օգնության: Հմայակն ու Մերուժան Արծրունին լուսթյամբ վկայեցին Հազարապետի զեկույցը:

Տեսնելով, որ այս տխուր դեպքը ազդեց նախարարների տրամադրությանը՝ Վարդանը ասաց.

— Գուցե հասնեն վրացիները և աղվանները:

Ճաշվա շոգը նեղում էր տակայն: Զորաբանակը ծվարեց քարերի, ծառերի, թփոտների մեջ, գետափին: Զայները լուցին:

Պառկել էր Պողոսը Սրապի, Հովհաննես Կարապետի կողքին և

Նայում էր ծառի տակ արթուն նստած միականի Սահակին, որին ոչ ոք քնած չէր տեսնում: Ավելի հեռուն նստած էին Խանդութը, Անահիտը, Ասողիկը, Մամիկոնյան տիկինները՝ Մեծ Տիկնոջ շուրջը: Պողոսի ուշքն ու միտքը այլ բանի էր: Նայում էր իր առջև խոնված բազմության՝ հարազատ շինականներին, ոտաբորիկ գեղջկուհիներին և սիրտը մղկտում էր: «Ա՛խ, ի՞նչ բան ունեն սրանք այս տեղերքը», — ասաց մտքում Պողոսը: Սովոր էր միշտ նրանց տեսնել շինական ծանր գործի մեջ՝ քամուն, շոգին, ցրտին, անձրևին, արտաքին և ներքին բռնության տակ ճնշված՝ իրենց հավերժական պայքարը մղելիս համառ բռնության դեմ: Հիմա կամաց-կամաց խոտհունձը կհասնի ամենուրեք: Հետո էլ հողը կբերի, կտնքա՝ «բեռը վերցրե՛ք»: Բայց սրանք բոլորը թողել եկել ընկել են սար ու ձոր, կոխվ են դնում պարսիկների դեմ:

Դաշտերից հով փչեց արտերի բույրով: Պողոսը խորը շունչ քաշեց: Հարազատ, անուշ էր այդ շունչը: Պողոսի միտքը գնաց հայրենի Տարոն, խաղաղ անդաստանները, որ լայնորեն հորիզոններից գալիս լցվում են շուրջը ոսկեծուփ արտերի, ջրերի, հովերի շշուշներով: Հիշեց հանդիսավոր անդորրը այդ անգաստանների, ուր ծղրիղները ծղրում են իրենց անվերժանելի լեզվով և ջրերը քրքշում քարերի մեջ: Հողի կյանքը դեզում է առողջությամբ, վայելքով ու բերկրանքով: Պողոսն անգամ առավ հողի բույրը: Եվ այնքա՛ն կենդանի էր այդ բույրը և նրա կարոտ զգացումն այնքա՛ն ուժգին ճմլեց Պողոսի սիրտը, որ չլիներ այս արհավիրքը՝ կթռչեր նժույգի վրա, կսլանար տուն, կընկներ բերանքսիվայր հողի վրա, այդ մութ, լայն, խորախորհուրդ հողի վրա, գլուխը կղներ նրա ջերմ կրծքին և կքներ հողի անուշ քնով: Հողի քնով, որ երբ կաշում ես նրա կրծքին՝ շունչը լցվում է հոգուդ մեջ: Պողոսը հոգեվին գնաց կորավ իր դաշտերում:

Պողոսը հողապաշտ էր. նա այդ գիտեր: Բայց լավ չէր գիտակցում թե ինչու: Նա իրեն երբեք այդ հարցը չէր տվել: Բայց իր հոգու շատ խորը գաղտնարանում զգում էր, որ այդ հողը նրա հոգում միայն հող չէր, այլ շատ և շատ ուրիշ բաներ, որ Պողոսը չէր կարողանում պարզորեն տեսնել իր մեջ:

Ահա հեռվում, շենի երդիկներից խաղաղ գեպի երկինք էին ոլորվում կապույտ ծխի սյունները: Ահա սայլեր են դուրս հոսում շենից: Նախշուն հարսնուկներ, պառավուկ տատիկներ, ջլապինդ

Էրիտասարդներ հանդ են դուրս գալիս: Արտույտը ճխում է ջինջ օդի մեջ: Եղեգնը մտածկոտ կախված է հստակ ջրին: Ահա սևասաթ Սասունի շղթան՝ մարգարտափայլ ամպերի գոտին վրան: Ահա մի ընդարձակ, մռթ օթևան շենում. բուքը կատաղում է երդիկից վերև, բայց տաք է ներսը, նստած են շինականները երկշարք և ունկրնդրում են աշխույժ վիսպասանին, որ ոգի առած վիպում է Արտաշեսի և Արտավազդի ողբերգությունը: Հափշտակված քաղմությունը շնչում է վեպի հետ, նրա հետ ելևէջում: Ահա օրսրվում է արնագույն կանաչը մամոռտ շիրմաքարերի արանքում: Ում շիրիմներն են: Ոչ ոք շենում չգիտես: Բայց խորին ծերունիներն ուսում են թե դրանք իրենց շենի քաջարի նախնիներն են, որոնցից շատերն ընկած են եղել ռազմի դաշտերում: Նրանք փրկել են Տարոնի դաշտը: Հետո ծավալվում է երազը անվերջ: Սևաչիկ երեխաներ են վազելով անցնում գնում շենամիջով, ծիծաղում են աղջիկները աղբյուրի գլխին: Անվերջ, անվերջ մարդիկ, ծառեր, երկինք, մշուշ ու Բզնունյաց ծովը, ալիքների արծաթը... Հանկարծ մի սաբսափ գագաց Պողոսը: Այս ամենը չպիտի լինի, պիտի ոչնչանա, շեները դառնան հրդեհի ճարակ, մարդիկ, անասունները քշվեն գերի, ավերակ մնան շեներն ու վանքերը: Էլ չես տեսնի ո՛չ հայրենի հող, ո՛չ խաղաղ բուն՝ հրաշքներով լցված աստղաշիթ երկնքի տակ: «Ասա աշխարհքը, — խոսեց յուրովի Պողոսը, — ախր աշխարքըն են ոչնչացնում անիծվածները».

սարսափելի բան էր տեսնում Պողոսը այդ դատարկության մեջ աշխարհի ոչնչացումից հետո: «Մարդ որ մենակ ինքն է մեռնում՝ գոնե իրենից հետո աշխարհքն է մնում կենդանի: Մնում է հարազատը, հարազատը չէ՝ հայրենակիցը, օտարը, մարդը, շունը: Աշխարհքը շունը է... Ապա որ ինձ հետ աշխարհքն է մեռնում՝ ա՛յ իսկական մահը... Մարդ իրենով չի մենակ կենդանի, աշխարհքով է կենդանի: Թող աշխարհքը մնա՝ գա էլ կյանք է: Ապրենք աշխարհքով... Աշխարհքը կյանք է...»:

Առանձար սեպուհից մի փոքրիկ շոկատ եկավ Վարդանին հագորդելու, որ թշնամին բանակ է դրել Ավարայրի դաշտում, Տըղմուտ գետի ափին և ըստ երևույթին չի շարժվելու:

Վարդանը հրամայեց անմիջապես ճանապարհ ընկնել. և արագ ընթացքով:

— Այս երեկո հասնենք ճակատ: Թշնամին գիշերային մարտ չի տա, մենք կհանգստանանք:

Զորաբանակը շարժվեց արագ: Փողովորդական գնդերը մեծ աշխույժի մեջ էին՝ դեռ գուսանների ազդեցութեան տակ: Կատակում էին, երգում, ուրախ բացականչում:

Իմացը մի բարձունք ծածկում էր ինչ-որ մի տարածութուն: Վարդանի զորագունդը անցավ: Փողովորդական գնդերը իրենց ուրախ զրույցի հետ էին և ուշադրութուն չէին դարձնում ճանապարհին:

— Հովհաննէս Կարապետ, ձայնդ չի լսվում:

Հովհաննէս Կարապետը վառվռուն աչքերը դարձրեց շորս կողմ: Եւ այն է՝ պատրաստվում էր երգել՝ հաստն բարձունքին և շրջվում էին մյուս կողմը: Բացվեց ընդարձակ մի դաշտ:

— Անտա՛ն, շինականնե՛ր,— բացականչեց Սրապը:

— Անտա՛ն,— ձայնեց Պողոսը,— տո՛ւնդ շեն, թշնամի՛ն է...

— Հա՛ա՛ա՛,— երկարաշունչ ձգվեց գնաց բազմութեան մեջ:

Նայեցին: Հեռուն, լեռներով շրջափակ մի ընդարձակ դաշտավայրում մեծ անտառի պես սևացել էր թշնամու զորաբանակը:

Բոլորը լռեցին և լրջացան: Միայն լսվում էր նժույգների ոտնատրոփը, որ շափով՝ շրջ՝Ֆ, շրջ՝Ֆ՝ ծեծում էր ճանապարհի խճերն ու ավազը:

Պատերազմը շնչեց դիմացի հանդիսարանից: Մենավոր մի մատուռ դուրս լողաց աջակողմյան փոսից: Կույսեր դուրս եկան այնտեղից և խաշակնքեցին զորաբանակին: Վարդանը ինչ-որ բան խոսեց Հազարապետի հետ:

Հազարապետը վճռական շարժումով ետ շրջեց նժույգի գլուխը և արագ հասավ հետևից եկող կանանց գնդին: Հավասարվելով Մեծ Տիկնոջը՝ ասաց ազգու ձայնով.

— Մե՛ծ Տիկին, Սպարապետի հրամանն է, որ մենառ աչա մատուռում, մինչև մեր վերադարձը:

— Աղաշում ենք, Մեծ Տիկին,— շրջապատեցին նրան կանայք:

Մեծ Տիկինը սթափվեց, խիստ նայեց Հազարապետին և հնազանդ գնաց նրա հետևից դեպի մատուռը: Կույսերը հոգատար շարժումով վազեցին ընդառաջ և Մեծ Տիկնոջը տարան մատուռ: Նա նայեց զորաբանակին, Վարդանի կողմը, խաշակնքեց նրանց և գնաց մատուռ: Հազարապետը միացավ զորագնդին:

Երեկոն թանձրանում էր Ավարայրի գաշտավայրում և ստվերները սողոսկում էին Արտազ լեռների ծործորներից դեպի հարթու-

թյան երեսը, ուր լայնագունգված եկել ու ծանրումն՝ շոքել էր պարսից զորաբանակը: Զանգվածներով ամփոփված գուկչնների ու վրանախմբերի մեջ, պարսից զորքը գունդ առ գունդ ափերից ելած զարնան շրերի պես սկսեց թափվել իրաք մեջ, իրար հետև և առաջանալ դեպի ճակատի գիծը, Տղուտ դեռի եզերքը: Գետի այսափնյա եզերքին տարածվեց հայկական զորաբանակը և նա էլ սկսեց տեղաշարժվել, դասավորվել մեջմեջ, իրար կողքի, իրար հետև: Երկու բանակների միջև զոչացավ մի լայն անշրպիտ շամբուտների ու գետի գծով:

Վարդանը՝ շրջապատված նախարարների ու սեպուհների համահարզով բարձրացավ մի բլրակ և հայացքով շափեց պարսից զորաբանակը: Ըձակատը արտակարգ ձգված էր: Հայերի ձախ թևի գիմաց թանձրանում էր զորքերի մի ուժեղ համագունդ՝ բազմաթիվ դրոշների խմբվածությամբ: Դրանից դեպի աջ սկսեց շարվել միջոցը (կենտրոնը), որից դեպի արևմուտք արտը ընդհատումներով շարժավորում էր պարսիկների ձախ թևը: Արջի և միջոցի հետևը համագունդ, առանձնակի կանգնեց պարսից ստապառն գունդը: Իսկ ավելի հեռուն, դրա հետև ամբողջաբն թաղաքի նման կառուցվեց փղերի ռազմաջոկը:

Վարդանը անհասկանալի հանգիստ ու անշտաղ սկսեց դասավորել զորաբանակը: Երկար խորհում էր և խորհրդակցում թե ո՞ւմ նշանակի զորագլուխ ձախում, միջոցում և աջում: Առաջարկեցին ձախում Ատոմին, որը այդպես էլ հույս էր դրել և սրտատրոփ սպասում էր Վարդանի հավանության: Սակայն Վարդանը հարևանցի նայեց Ատոմին և անտարբեր առաջարկեց Թաթուլին և սրան զորավիգ՝ Տաճատ Գնթունուն: Ատոմը վիրավորվեց, բայց շխտեց: Ապա երբ անցան միջոցի և աջի զորագլուխների ընտրության՝ Ատոմը զարմացավ, երբ նշանակվեցին միջոցում Ենրշապուհը և սրան զորավիգ՝ Արտակ Մոկացը: Նա վստահ էր, որ գոնե աջը կստանա ինքը: Բայց աջի համար ընտրվեց Խորենը, զորավիգ Արսենը: Երեք զորքերը որոշվեցին իբրև առաջամարտիկ հիմնաշարք: Հազարապետը մնաց վերջապահում: Նա շառարկեց:

Վարդանը նկատեց Ատոմի վիրավորվելը, բայց ցույց չտվեց ոչինչ: Կազմելով վերջապահը իր գլխավորությամբ՝ Վարդանը զորավիգ նշանակեց Համազասպին և Արշավիրին: Ատոմը մնաց գուրսը կամ ինչպես ինքն էր սպասում՝ եզած զորագնդերից մեկի

աչակից: Ի՞նչ բան էր սա: Մոռացա՞վ, անտեսե՞ց իրեն Սպարապետը: Վճռեց անմոռունչ ընգունել այդ անտեսումը և զնալ մենեւի կռվում իբրև քաջ զինվոր: Ինքնասիրութեան տեղ չէր և ոչ ժամբ...»

Վարդանը խոր նայեց Ատոմին և առաջ կիսաձայն.

— Կլինես վերջապահում, իշխանիկ:

— Հրամանդ, Սպարապետ...— շնչաց Ատոմը հնազանդ:

Այնուհետև մնացած իշխանական տների ներկայացուցիչներին բաժանեց այս շորս գորագնդերին աչակից և ապա սկսեց լռելյայն դիտել պարսից բանակի շարժումները: Զորազուլաներն ու զորավիգներն սպասում էին, որ Վարդանը իրենց արձակի: Նրանք շտապում էին բռնել իրենց դիրքերը, որ թշնամին հանկարծ չհարձակվի: Վարդանը հանգիստ բացատրեց, որ շուտով կմթնի և ճախուտները կվտանգեն գիշերային կռվի ամեն շարժում: Միայն աչակիցներին արձակեց, որ զնան իրենց դիրքերը:

Արտակարգ շարժում սկսվեց պարսից աջում: Զորազուլաները հայացքներն ուղղեցին այն կողմ:

— Սյունի դրոշմե՞րը,— հանկարծ ձայնեց Թաթուլը:

Բոլորն աշխուժացան.

— Ո՞ւր է, ո՞ւր...

Թաթուլը ցույց տվեց պարսից զորագնդերի միջից տառաջացող մի զորասյուն, որ հալիս էր խտուն գրոշներով, որոնք հենց մի փոքր ևս մոտեցան՝ երևաց, որ պատկանում են վասակյանց զորագնդերին: Ընտիր երիվարներ Թափահարելով հպարտ զուլաները՝ եռանդագին, ախորժով եռում էին դեպի ճակատը:

— Քաջամարտիկ են բայց,— խոսեց ինքն իրեն Վարդանը:

— Զախի վրա է ծանրանում,— նկատեց ներշապուհը:

— Այո, ձախի վրա,— կրկնեց Վարդանը խուլ:

Դիմացը ողջ Ավարայրում եռում էր, խլթխլթում պարսից զորարանակը իր կավե աման գլխանոցներով, օդը ծակծկող նիզակներով, գլուխները վերովարող նծուլգներով և բազմազան զանազան զորագնդերով:



Մուժն ընկավ: Մռայլվեց Ավարայրի դաշտավայրը իր շրջափակ լեռներով, իր սևազանգված զորաբանակներով: Ատողերի նվազումն լույսը հազիվ տարտամորեն գծագրեց Տղմուտի շամբուտներ:

բը ու ակերը երկու բանակների միջև: Դետի հայնկուսից շարունակական մի խուլ հեղեղի ձայն էր հասնում՝ մերթ ուժգնացող, մերթ նվազող: Դա թշնամու զորաբանակն էր, որ հարափոփոխ, գավազորոքեն դասավորում էր իր զորսգնդերը: Եվ քանի գնում զանգված առ զանգված մթնում էր նա, լցվում, թանձրանում, տարածվում:

Սավալվում և տեղավորվում էր նաև հայոց զորաբանակը, որ Տղմուտի մատուլցններից առաջացավ և գետափի երկայնքով գնաց ւարածվեց ու կանգնեց թշնամու դիմաց: Վարդանը հրամայեց, որ ժողովրդական գնդերը համագունդ կանգնեն պահեստի զորագրողների հետ իր հետևը, Մամիկոնյան զորագնդի կողքին: Միասին իրար կողքի կանգնեցին Հաբել Նահապետը, Առաքելը, Սահակը, Խանդութը...

Վարդանը մոտեցավ ժողովրդական գնդերին: Նկատեց, որ նրանց ավելի նվազ էր ազդել ճանապարհը, քան զինվորներին: Ամենից առույգ երևացին կանայք, և նրանց նայելով հետզհետե սկսում էր ամրապնդվել իր հավատի մեջ, որ նրանք լավ կկռվեն: Վարդանը ճանաչում էր իր երկրի կանանց, և նրան այդ չէր զարմացնում:

Նայեց նրանց Հազարապետը և չդիմացավ:

— Խնայի՛ր սրանց, Սպարապետ, թող մնան վիրակապ...

Վարդանը բլրակից ջանում էր հետևել խավարի մեջ շարժվող սևինքների տեղաշարժումներին: Միջոցի կողմը նշմարելի էր. աջ թևը շէր երևում:

Վարդանը գնաց ձախ թևը՝ տանելով իր հետ զորագլուխներին՝ Խորենին, Ներշապուհին և Քաթուլին: Այդ միջոցին թշնամու աջում թանձրախիտ մի զանգված համրատատան եկավ մթնեց մնաց:

— Այս որտեղի՞ց բերեց վահանակիրը, — հարցրեց Վարդանը անհանգիստ, — սա աջումն էր:

— Երևի մատյան գնդի հետևից, — ասաց Ներշապուհը:

— Այնտեղ վահանակիր չունի, — ասաց Վարդանը և դարձավ Զոհրակին, — հասի՛ր ա՛յ, հարցրու Ընծայնոց իշխանին՝ ի՞նչ զենքեր շարժվեցին. դեպի ձախը:

Զոհրակը սլացավ թիկնապահի հետ:

— Ի՞նչ դավ է նյութում վահանակիրը նետելով ձախ,—հարց տվեց Խորենը՝ ջանալով ըմբռնել այդ շարժման իմաստը:

— Ծանրանում է ձախի վրա,— ասաց Ներշապուհը:

Անցավ գիշերային ժամը «մթացյալն», եկավ ժամը «շողա-վոտն»: Զորաբանակը հեռում էր, և ձայններ ճնշված էին: Հոգնաբեկ զինվորները միայն հրամալնի ուժով շէին քնում: Բայց քունն անհրաժեշտ էր: Եվ Վարդանը ավելի միամտվելով, որ գիշերը չի սկսվի ճակատամարտը՝ հրամայեց, որ զորաբանակը հանգստանա: Միայն խստիվ հրամայեց քնել հերթով և ամեն արթուն զորագունդ գնա ճակատի գիծը՝ զգոն և պատրաստ ամեն անակնկալի:

Թափանցել, ըմբռնել ողջ ուղղամճակատը, նրանում թաքնված գաղտնիքը,— լարում էր ամենքին: Բայց Վարդանը մի կողմից ճզնելով մտքի գերագույն լարումով գուշակել թշնամու մտադրու-թյունը և լավագույն հակահարվածներ պատրաստել նրա ամեն մի շարժման դեմ՝ միաժամ իր հոգով այլ խոհեր էր անցկացնում: Որ այն գործը, որի համար Ավարայր էր եկել հայ ժողովուրդը՝ թերևս պիտի կատարվի բոլորովին այլ իմաստության տնօրինու-թյամբ, քան կարող է ըմբռնել մի մարդու մարդկային միտքը:

Միայն մի բան հեռավոր կրակի նման պլպլում էր նրա մույլ հոգում: Նա մի իմաստության էր հասու դառնում: Մի գերագույն միտք, որ նրան քաշո՞ւմ էր դեպի հեռավոր ապագան, դեպի հայոց ժողովրդի գերագույն ճակատագիրը: Նա վճռում էր, և այս միտքը վաղուց էր առկայծում նրա հոգում, վաղուց, և՛ Ողականում, և՛ Արտաշատում, և՛ Աղվանքում, և՛ վերագարձին:

Զոհրակը վարգելով եկավ.

— Ընծայնոց իշխանը հայտնեց, որ իր դիմացի վահանակիրը շարժվեց ձախ և այս պահիս իր դիմացը թեթև է:

— Ընթանա՛նք,— ասաց Վարդանը և նստելով նժույգ, վարգեց դեպի միջոցը:

Զորագլուխները հետևեցին նրան: Հասնելով միջոցը՝ նկատեցին մեծ կուտակումն աղեղնավորի, որի հետևը լցվել էր թեթև հեծելազորը: Այդտեղից գետն անցնելու պարզ ցուցադրումն էր գա, որ շարժեց Ատոմի ժպիտը:

— Ուրեմն խաբանքը միջոցում է. այնտեղից է գալու հարվածը,— ասաց Ներշապուհը և սպասեց, թե ինչ կասի Վարդանը: Վարդանը սակայն լուռ և մտասույզ դիտում էր:

— Միջոցից չի հարվածի,— նկատեց Ատոմը մտադրաւ,— կվախենա ճախուտից,— մի պահ մտածեց Ատոմը և ապա լրացրեց,— անշուշտ անտարակույս բուն խաբանքը աշումն է:

Վարդանը խանդաղատանքով նայեց գեղեցիկ ու խելացի երիտասարդին: Ժպտաց յուրովի և լուռ մնաց՝ կրկին:

Զորագլուխներն ևս տագնապով՝ ընկան իրենց տանջող մըտքերի հետևից:

Վերջապես Վարդանը անցավ «գաղանին խոցելու» իր մտքին: Ըանապարհին, որ հույս ուներ այդ իրագործել այնուամենայնիվ կանոնավոր զորքի միջոցով՝ ահռելիորեն մեծ սլարսկական զորաբանակը ստիպեց նրան մի կողմ թողնել այդ մարտակարգը: Եվ արագ:

— Ռամիկի մարտակարգ պետք է ընդունենք, ասենք զինվոր-յալի,— ասաց նա՝ ազատվելով մտքերի ծանր բեռից և թթի տակ ժպտաց՝ կարծես զգալով ներշապուհի մտքերը, երբ սա կշտամբանքով և զարմացած նայեց իրեն՝ իբրև թե. «Ժամանակ ես գտել կատակելու»:

— Այստեղ ոչ մի այլ մարտակարգ չի բանի: Միայն զինվոր-յալի մարտակարգ — կռվել ի մահ...:

— Դա ահավոր վտանգ է,— ասաց ներշապուհը:

— Դրանով միայն կհաղթենք. և կհաղթենք,— գիտմամբ շեշտեց իր ներբուստ համոզված հաստատուն միտքը Վարդանը:

— Տա՛ աստված, տա՛ աստված,— հեզնոտ և հուզված և միս-ժամ հնազանդվելով ասաց ներշապուհը, որի մեջ խոսեց խստակ-չաց զորականի կարգապահ հոգին:

— Տա՛ աստված,— հուզմունքով կրկնեցին զորագլուխները:

— Կտա աստված, ժողովրդի հետ է աստված,— հաստատեց իր միտքը Վարդանը,— պատերազմը ժողովրդինն է...:

Ապա դարձավ զորագլուխներին.

— Մինչև լույս անշուշտ փոփոխմունքներ կլինեն այլևայլ: Մակայն նրա հիմնական ռազմակարգը այս է,— գետի անցուղի-ները պինդ են իր աշում և ձախում, իր աշում նա վճռել է մեզ շթողնել ներս, իսկ իրեն՝ թողնել դուրս: Երկուսիս միջոցը փակ է. ճահիճ, և նա միջոցի ուժերը կտանի երևի կրկին մեր աջը: Բայց նա ձգտում է մեզ միջոցում կուտակել, ապա երկու թևով քաշել իրեն, գրկել, ճզմել: Զգո՛ւյջ՝ թևերում...:

— Մենք էլ շկուտակվե՛նք միջոցում, — ասաց Ներշապուհը:

— Քողնե՛նք նրան այնպես կարծել՝ թե խարում է, — ասաց Վարդանը և ինչ-որ վճռական մտքից թոխչք առած՝ հանկարծ մի շարժումով դարձավ դեպի իրեն շրջապատող նյութաբարներին, ըստ երևույթին ոչ առանց ներքին ալեկոծման:

— Այս գիշեր և վաղը այլևս մենակ ենք այս վիթխարի ուժի առաջ: Որքան և դաժան է, բայց ասեմ ճշմարիտը: Բոլոր հնարքներից մե՛կն է միայն մեր ձեռքին, — տալ թշնամուն անսպասելիք: Այդ մտքով էլ գալիս էի ճանապարհին: Գազանին խոցել, ո՛չ սպանել: Այո, տյարք, նրան սպանելը վեր է մեր ուժերից: Կարե՛վեր խոցումն, հանկարծ, արագ, անհնարին ուժով: Խոցել նրան ի մահ այստեղ, քաշվել և գցել հետև... Քող գա մեր հետևից արյունաքամվելով: Խոցումը կտանք միջոցից, որտեղից նա չի սպասում: Կախվեցե՛ք թևերից այդ պահին ամեն զոհի գնով ու առաջ, ո՛չ ետ: Խոցվելուց հետո արդեն թշնամին կատաղած կընկնի մեզ վրա, և այստեղ է փորձությունն ու հանճարը — սկիզբ գնել կանոնավոր, մաշիչ, արյունաքամ նահանջի: Տոկացեք այստեղ արդեն: Տոկացեք: Քող ողջ Հայոց աշխարհը տոկա և կովի այնուհետ շարունակաբար, անվերջ լեռներում, կիրճերում, ամենուրեք: Ահա մեր վերջին փրկուձյունը, կասեմ՝ հազարթյունը: Հավատացե՛ք սրան:

— Հրամա՛նդ, — ասաց Ներշապուհը զինվորական խոնարհությամբ՝ սկսելով ըմբռնել Վարդանի մտքերը:

— Եթե գազանը խոցվեց այնքան խորը, որ ես եմ մտադիր՝ թող այլևս արյունը շիթելով նա ընկնի հայոց ժողովրդի հետևից: Ժողովուրդը կշոթեցնի նրան մի տեղ: Արդ՝ ինձ է հանձնել ճակատագիրը այդ խոցումը: Կկատարեմ ե՛ս: Իսկ դուք կատարեցե՛ք ձե՛րը՝ գուք էլ արյունաքամեցե՛ք խոցված գազանին...

— Հրամա՛նդ, — կրկնեցին մյուսները՝ արդեն մտնելով ռազմական կարգի մեջ:

Վարդանը հոգեկան մեծ խռովքի մեջ սկսեց կրկին ու կրկին անդրադառնալ իր մտքին: Խոցելուն: Մինչև վերջ, մինչև այստեղ անգամ ողջ կովի արագափոփոխ ընթացքում նա զերազույն ճիգերով վճռում էր հարցը. խոցել՝ զորքի՞, թե՞ ժողովրդի ձեռքով: Քե՞՞ մեկը մյուսի հետևից: Քերևս միասի՞ն: Նա հույս ուներ, որ ճակատագրական առիթը, գերագույն պատենհը կփայլատակի մի վայր:

կյանում, լուսավորելով հարվածի կերպը: Տաժանագի՛ն, մտատա՛նչ ժամ...

Սակայն վերջին վճիռը տալուց առաջ նա որոշեց պրկելով հուակ վերջին հնարը՝ վճռեց պահպանել կանոնավոր զորական ռազմակարգը և ապա միայն երբ կհասնի գերագույն վայրկյանը՝ կատարել կատարելիքը — տալ «ռամկական» հարվածը: Անսպասելիք...

Վարդանը դարձավ սեպուհներին.

— Հավաքեցե՛ք համագունդ՝ Մամիկոնյանը, Այրուծին, Չմբրոցը, մի-մի զորաբաժին Արծրունյաց, Վանանդի զորագնդերից: Թշտունյաց, Խորխոռունյաց մեր կողմն անցածներին և համայն ժողովրդական գնդերը:

Սեպուհները գնացին:

Վարդանը վերջացրեց.

— Գիշերային հարձակում հագիվ լինի: Ճիշտը՝ չի լինի: Բայց համենայն դեպս արթուն, զգո՛ւն, մինչև լույս: Գնացե՛ք, աստված օգնական:

— Օգնական աստվա՛ծ,— ասացին զորագլուխները և մեկնեցին դիրքերը:

Մնացին Վարդանը, Հազարապետը, Արշավիրը, Համազասպը և Ատոմը: Երկար ժամանակ լուռ էին նրանք, ամեն մեկը իր մտքի հետև: Վարդանն սկսեց ավելի սթափ նայել իր վճռի վրա:

«Գազանին խոցել և հետևը զցած արյունաքամել»: Ասե՛լն է գյուրին... Եվ հետո՛՝ Վարդանը ասաց դրա միտքը, վճիռը միայն: Բայց նա կրկին ու կրկին ստուգում էր, որոշում թե ինչպես պիտի կատարվի այդ: Եվ կկատարվի՞ այդ: Չի՞ սխալվում նա արդյոք: Բայց Վարդանը հոգու պայծառատեսուցիամբ ըմբռնեց, որ այդ ստույգ սխրագործությունը— «գազանին խոցելը»՝ պահանջում էր գիտակցորեն զոհի վտանգին ենթարկել որոշ առաջամարտիկների կյանքը: Սակայն ի՞նչ... Ոչնչանալ՝ ոչնչացնելու համա՛ր, հայ ժողովրդին դնել մեծ վտանգի մեջ, հայ ժողովրդին փրկելու համա՛ր: Ո՛չ: Բայց հիմա պետք էր մի մեծ զոհ: Վարդանը տանջվում էր այդ զոհի համար: Եվ Վարդանը վճռեց իր մեծ վճիռը,— հայոց ժողովրդի առաջ պարտական շմնալ: Վճռեց վտանգել իրեն և իրայիններին, և դրանով արժանի լինել վտանգելու հայոց ժողովրդին:

Եվ ահա, կանչեց նա և եկավ այդ առաջամարտիկը.— Խոցող

համագունդը: Վարդանը հրամայեց, որ բոլոր ժողովրդական զորագնդերը իրար մոտ կանգնեն և շարժվեն Առաքելի, Արթևնի, Սահակի և Խանդավազի միացյալ հրամանատարությամբ: Կանչեց իր մոտ վերջիններին և հասկացրեց, որ ամենից պաշտ ու հարմարն այն կլինի, որ սրանք էլ իրենց հերթին հետևեին կանոնավոր զորագնդերին:

— Իմ հետևի՛ց, միասի՛ն, արա՛գ կհարվածեք մինչև վերջին սուրը, վերջին հնարը, վերջին զարկը:

Վարդանը ժպտաց մեղմ և մի փոքր տխուր կատակով ասաց Ատոմին.

— Այդպե՛ս, իշխանի՛կ, հասա՛նք այս օրին: Դե՛, ես ու դու զորականներ ենք, զավակս: Ես՝ հին, դու՝ նոր: Վայել չէ մեզ կանացի քնքշանքը, ոչ ևս է ժա՛մբ: Կտա՞ մեզ աստված հաղթութուն: Կհանի՞ ինքն իրեն հայոց ժողովուրդը անդունդից՝ կերևա ո՛չ այն պահին, երբ մարտը կսկսենք, այլ երբ կվերջացնենք: Եվ կվերջացնենք երևի շատ ժամանակ հետո: Այսօր և այս դաշտում չէ մեր հաղթությունը, այլ մեր լեռների սրտերի մեջ: Եթե կընկնեմ այստեղ և մերոնք կսկսեն խառնաշփոթը՝ հույսս դու ես և քեզ աջակից՝ շինականները և ովքեր կմնան կենդանի: Ամենավճռական թափով վերջապահովդ կմղվես մեջ, կանոնավոր նահանջի կրերես խառնաշփոթը, շարունակ հարվածելով կնահանջես, կքաշես թշնամուն լեռները և կոչնչացնես:

— Հրամանդ, Սպարապետ, — ասաց Ատոմը հանգիստ լսելով Վարդանի ավանդը:

Կոնցին:

Հազարապետը աչքի տակով նայեց Զոհրակին: Նրա աչքերը թացացել էին:

— Խստադատան ես, Սպարապետ, — հանդիմանեց Հազարապետը Վարդանին:

— Հոգ չէ, նա Մամիկոնյան է... — ասաց Վարդանը և մի թվով գրկեց Զոհրակին:

— Զավակս գիտե, որ հարսանիք չի եկել... — ասաց Վարդանը: Զոհրակը գլուխը դրեց Վարդանի կրծքին: Օղասպարի սառը հպումը կոշտ շոյեց նրա ճակատը:

— Ինչո՞ւ ես կանխագուշակում բախտդ, Վարդան, — ասաց Հազարապետը: — Դա աստված գիտե:

Վարդանը տխուր նայեց նրան:

— Հազարապե՛տ հայրիկ: Սրանք դեռ երիտասարդ են, բայց ես՝ ավելի հասակավոր և դու՝ օրերով լցված: Կոխվե՛նք շենք վարել ես ու դու, թե՛ շենք շափել զորաբանակների ուժն ու կշիռը: Կատա՛կ է այս արհա՛վիրքը: Կոխվ ի մահ — ահա մեր հաղթու՛թյունը:

— Աստված քեզ օգնական... — խաշակներեց երեսը Հազարապետը և հռուշեց:

Գիմացը պարսիկների միջոցը շարունակում էր խտանալ: Ժամն սկսում էր անցնել դեպի «կամավոտն», և դեռ Վարդանը վերջնական ռազմակարգ չընդունեց: Նախ՝ սպասում էր Նյուսալապուրտի առաջնության ռազմակարգին: Մեծ շարժումներ շարեց՝ թույլ տալով, որ թշնամին իրոք ստանա այն տպավորությունը թե հայերը անճարակում են կամ չեն գուշակում հարվածների ուղհումները: Եվ ապա նա կամեցնում էր թաքցնելով իր կասկածները թույլ տալ թշնամուն ավելի անզգույշ բացարձակ կացարեղ իր դասավորությունները և վերջապես մատնել փր հարվածների կռահված կարգը: Եվ դիտմամբ մեծ ուժեր կուտակեց միջոցում՝ հրամայելով զորագլուխներին պահանջած դեպքում զգոն պատրաստ լինել անմիջապես արագորեն գատվելու դեպի թևերը:

Թշնամին չէր դադարում այնկոծվելուց: Շարունակ լսվում էր հեռավոր հեծյալ գնդերի ոտնատրոփ, զենքերի զրնգոց, խրխինջ, հրամանների սաստոց և մի մուտոց անդուլ, անընդհատ: Երկարօրջա հանգստի մեջ պահված զորքը կարող էր թույլ տալ իրեն մի անքուն գիշեր:

Արյունագուն շահերի լույսերը ներկեցին թշնամու շարքերի խորքերը: Գրողները խմբվեցին այնտեղ և հրապարակ գոյացավ: Հազիվ նշմարելի կետեր խլրտում էին այնտեղ, որից կարելի էր դուշակել ինչ-որ հանդես կամ արարողություն:

Նայեց Վարդանը: Գա նրան խիստ ծանոթ պատկեր էր: Մովպետը հաղթության մաղթանքն էր կատարում, որին կհետևեր Նյուսալավուրտի հորդորներն ու քաջալերիչ խոսքը զորաբանակին:

— Տե՛ս, տե՛ս, — դառնություն մտաց Առաքելը իր կողքին նստածներին՝ ցույց տալով պարսից բանակի այդ տեսարանը, — զալիս են աշխարհք կործանելու, դեռ աղոթք է՛լանն անում: — Վե՛ր կացեք, մենք էլ մեր խոսքն ասենք զորքին:

Վերցնելով իր հետ Արթենին, Սահակին, Խանդուֆին՝ մոտեցավ Վարդանին։

— Սպարապետ, իրավունք տուր մենք էլ զնանք մեր խոսքն ասենք՝ զորքին։

Վարդանը հասկացավ Առաքելին։ Դա բարձրացրեց նրան։ Ռամիկ մարդը եկել էր կոխով հաստատ ու անխախտ։ Նա ուրախացավ, որ փորձության ալս գերագույն ժամին ճշմարիտ էր դուրս գալիս իր խոսքը, որ պատերազմը ժողովրդինն էր։

— Գնացեք, սիրտ տվեք, — ասաց Վարդանը և ակնածանքով նայեց այդ հասարակ ուսմիկներին։

Նրանք զնացին, մտան միջոցի և թևերի զորքի մեջ։ Անցնելով զինվորների շարքերի միջով և փոխնիփոխ մեկը մյուսի հետևից ձայն էին տալիս։

— Տղա՛յք, լա՛վ կովենք, կյանք շխնայենք հայրենիքի հասար, տղամարդու կոխով տանք։

— Եկել ենք՝ լա՛վ կովենք, լա՛վ հաղթենք։

— Որ եկել ենք, ասել է կհաղթենք։

— Հաղթել ենք, պինդ ուրախ կացեք։

Հետզհետե հրապարակ բացվեց։ Թշնամու հանդեսով զբաղված լինելը միամտացրեց նաև հայկակառն զորաբանակին, և զինվորները առաջ եկան։ Եկան և ուսմիկ գնդերից։

Առաջ եկավ Առաքելը և զիլ ձայնով գոչեց։

— Զինվորեն՛ր, հայրեն՛ր, եղբայրեն՛ր, որդիեն՛ր։ Կտակենք մեր սուրբ հայրենիին։ Կտակենք իրար՝ կենդանի մնացորդը բարով տեսնի, բարով սիրի, բարով պահի հայրենին։

— Մեր աչքի լույսի պես, մեր հոգու շնչի պես, — լսվեց զորքի միջից։

— Ամեն, ապրենք։

— Ապրենք ամենքս։ Արժանի՛ լինենք ազատության։

Ինչ-որ խլրտուն անցավ զորաբանակի շարքերը մի ծայրից մյուսը։ Մի մեծ ջահ՝ լիզելով օդը ոսկի օձի նման և գալարվելով երկինք՝ մոտմոտեց դեպի զորաբանակը։

— Սպարապետ... Սպարապետ... — հարվածեց շշուշջ ծայրեծայր և զորագնդերը ընդոստ ոտքի ելան։

Ջահի լույսով ողողված գալիս էր Վարդանը, հետևից նախաջ

րարները, 'Անոդ Երեցը, կաթողիկոսը, Եղիշեն, Եզնիկը և սեպուհները:

Զորագնդերը սթափ ու զգոն նայեցին Վարդանին: Առաջ անցան ժողովրդական գնդերը: Փայլատակեց Եղիշեն բոցավառ դեմքով և խաղացկուն նժույզը ծառացնելով թռավ դեպի բազմությունը: Եվ գոչեց.

— Ողջո՞ւյն գինվորելո՞ց, եղբա՛րց իմ ի մահ ի կյանս, գինվորյաց հայրենի ազատության: Պատրաստվեցեք հաղթության. վաղը ձեր ձեռքով պիտի մեռնի հայրենյաց մահը: Կովեցե՛ք ի մահ և թող օրհնյա՛լ լինի ձեր սուրն ազատության:

Բազմությունը գոչեց.

— Արդա՛ր, ամե՛ն...

Առաջացավ Վարդանը.

— Զինվորենե՛ր, եղբայրենե՛ր, ժողովո՛ւրդ Հայոց: Վաղը ազատության օրն է: Վաղը պիտի կովենք: Եթե կան մեր մեջ թերահավատներ և վատեր՝, արձակենք՝ թող գնա՛ն մեզնից ի բաց: Իսկ քաջամարտիկները, որ պիտի մնան՝ աղաչում եմ և հրամայում եմ — եղբայրենե՛ր, քաջության հետ վատություն մի՛ խառնեք: Մի՛ նայեք թշնամու մեծության: Մենք կհաղթենք: Կհաղթենք մե՛նք, քանի որ մերն է արդարությունը: Կովենք ի մահ, թող ազատվի հայրենիքը:

— Հրամա՛նդ, ամե՛ն, արդա՛ր... — թնդաց բազմությունը:

— Դե՛, հաղթու՛թյուն, — ասաց Վարդանը և վարդեց դեպի այլ շարքեր, այլ հրապարակներ:

Ժամը «բավական» էր: Պահանջ էր զգացվում զգոն մրափի: Զորաբանակը լռեց: Լռեց նաև թշնամին: Բնությունը հաղթեց ամենբյուն:

Թիկնոց փոսցին բլրակի դալար խոտին, և Վարդանը ընկողմանեց վրան:

Դետերն էին, որ Տղմուտի ափին դեգերում էին՝ որսալով մթան մեջ ամեն մի ստվեր ու շարժում, և առաջապահ արթուն գրնդերը, որ զենքերը պատրաստ նստել էին և դիտում էին թշնամու կողմը՝ պատրաստ ընդոստ ցցվելու նրա դեմ:

Զրաղացի ուռնու տակ, մթության մեջ երկու ստվերներ՝ Ար-

1 Վախկոտներ:

տակն ու Անահիտը՝ կանգնել էին իրար դեմ և հրաժեշտի վրույց էին անում: Մի փոքր հեռու նրանց հսկում էր Յուդաբերը, իսկ քիչ հեռու իրար մոտ նստած լուում էին Ջոհրակն ու Աստղիկը: Եկել էին Արտակի և Անահիտի տեսակցության պատրվակով իրար տեսնելու և չէին համարձակվում խոսել իրար հետ: Եվ իբրև թե Ջոհրակն սպասում էր Արտակին և Աստղիկը՝ Անահիտին: Նստած էին քարերի վրա Աստղիկն ու Ջոհրակը և լուում էին ամենախոր լուսթյամբ: Նրանք չէին համարձակվում նայել անգամ իրար՝ շմատնելու համար այն ամենը, որ լցվել էր նրանց սիրտը:

— Կհանդիպե՞նք իրար, իշխան, թե՞ վերջացավ... — հարցրեց Անահիտը անձկությամբ:

— Կհանդիպենք, Անահիտ, — պատասխանեց մի փոքր ուշացնելով Արտակը:

Անահիտը չհարցրեց թե երբ և որտեղ: Արտակն էլ չբացատրեց թե ինչպես կլինի այդ, բայց երկուսն էլ հոգեկան ինչ-որ անդորր զգացին այդ պատասխանի մեջ: Միայն Անահիտը, որ հույս չունեիր Արտակի կենդանի մնալուն, չհարցրեց թե ի՞նչն է ներշնչում Արտակին այդ հավատը: Բայց նրան բավ էր այդ հավատը, որ նա խաղաղվեր: Եվ նա չհարցրեց Արտակին, թե արդյոք խորհո՞ւմ է մահվան մասին: Չհարցրեց, որովհետև ինքն էլ չէր խորհում: Արտակն էլ իրոք այդ օրը զարմանալի չէր խորհում մահվան մասին: Եվ դա հուսահատությունից չէր: Դա ընդհակառակը՝ ուրախությունից էր և հոգու խաղաղությունից: Նա ինքն իրեն էլ հարց չտվեց թե ինչո՞ւ չէր խորհում մահվան մասին: Նա հույս ուներ Անահիտի հետ հանդիպման ոչ հանդերձյալ աշխարհում: Բայց և որտե՞ղ: Այդ էլ չէր խորհում: Նրան այդ պահին տոգորել էր միայն մի խոր, անըմբռնելի, կարծես տարտամ՝ բայց միաժամ և ուժեղ զգացում — «մենք կհանդիպենք»: Եվ դա այլևս խոհ չէր, որին հաճախ դիմում էր Արտակը և գիտակցորեն իմաստասիրում: Ոչ: Սա չէր հանդուրժում այլևս ոչ մի խորհումն, չէր էլ թույլ տալիս տարակուսանք և կասկած: Սա գալիս էր մի հզոր, ներքին բանից: Արտակն զգում էր այդ բանը: Այնտեղից էր նաև իր սերը, իր ուրախությունը, հավատը, հույսը և աներկյուղությունը մահի: Արտակը այնքան էր ճշմարիտ զգում այդ բանը, այնքան խոր հավատում նրան, որ չէր վախենում մահից: Սահը չի հաղթի նրան, նրան մահ չկա: Նա կա և կմնա, և իրենք էլ — Արտակն ու Անահիտն էլ —

կմնան նրա մեջ, նրա հետ: Կյանքն էր դա, սե՛րը, ուրախութիւնը: Երանանական այս հափշտակութիւնը ցրեց, հաշտեցրեց և խաղաղեցրեց Արտակին ու Անահիտին:

Մի ուրիշ անհունութիւն էին ապրում Ջոհրակն ու Աստղիկը: Նրանք ոչինչ շասացին իրար: Մնացին իրենց հոգեկցական վիճակում, ներքին լեզվի հաղորդակցութեամբ: Երկուսն էլ իրարից իբրև գաղտնիք պահեցին նվիրական զգացմունքը, զգուշանալով խոսել այդ մասին ո՛չ փոխադարձութեան երկյուղից:

Սակայն ժամ էր բաժանման: Արտակն ու Անահիտը գրկախառնվեցին: Եվ միայն այդ վայրկյանին, երբ անջատվում էին՝ Ջոհրակն ու Աստղիկը նայեցին իրար վստահ և հանկարծ մի դուրինութիւն փայլեց նրանց աչքերում և նրանք գրկախառնվեցին: Մի կարճ համբույր և բաժանվեցին...

Ու մինչ այս բարեհամբույր անդորրը հեզիկ շոյել էր մարդկային հոգին՝ երկինքը ինչ-որ տարօրինակ ակնարկներ արեց, դալկացավ: «Հավթափայլն» ժամն էր վերջգիշերային...

Այցելելով ու քաջալերելով ողջ զորաբանակը՝ Վարդանը զորագլուխներին ուղարկեց իրենց դիրքերը: Մնալով գիշերվա իր ուղիղ կարգի վրա՝ նա ցուցադրեց խաբվածութիւն և մեծ ուժեր կուտակեց միջոցում: Թշնամին առաջին շարքը լցրել էր նետածիգներով, հետևը՝ թեթև հեծելագորով: Նույնն արեց նաև Վարդանը:

Անցել էր «Գիղակը», անցել «Լուսաճեմն», բացվեց «Առավոտն»:

Ջորաբանակները նայեցին իրար: Ողջ դաշտավայրը լիքը զո՛րք, զո՛րք, զո՛րք...

— Հա՛-ա՛-ա՛ա՛ա՛ա՛, — զնաց շշուռը ողջ զորաբանակը մի ծայրից մյուսը:

— Պա՛հ, քո տո՛ւնը շեն, — խոսեց Աբրահամ պապիկը, — Պարսկաստանը ողջ դատարկել է մինչև տակը:

— Մենք էլ նույնը շե՛նք արել, — նկատեց Հովակիմ դարբինը:

— Մենք փոքր ազգ ենք, — ասաց Աբրահամ պապիկը:

— Փոքր ենք, բայց տես ո՞նց ենք տեղահան արել պարսիկներին, հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց Սրապը:

Ուղղակի դիմացը, այն ափին երևում էին թեթև վահանավոր, աղեղնավոր պարսիկ զորագնդերը: Նրանք կապարճները նետերով

իցկած՝ սպառնալի նայում էին: Ազգում էին այդ բյուրավոր, երբեմն կնճոտ դեմքերը, սևաձյուժ մազ-մորուքները: Սրանց հետև ծփում էին հեծյալ զորագնդերը, ուր միաձգամից հազարավոր նժույզներ անընդհատ թուփահարում էին գլուխները և տատանում հեծյալների թանձր բազմության, որ օդն էին վերև ծակծկում իրենց նիզակներով: Դրանց աջում, ձախում, հետևը քանդվում լըցվում էին իրար մեջ անտառ-անտառ զորքերը և հետզհետե քարանուս: Դիմացի զորագունդը մի փոքր առաջացել էր եզերքին: Նրանց սապատավոր ավազը ետ-ետ էր ըշում առաջ ցցված շարքը և ուժեղ քացիներ էր տալիս զինվորների սրունքներին, փորին:

— Ետ թունդն է, հա՛,— նկատեց Մանուկը:

— Թունդ քացախը իրա ամանը կճաքեցնի,— ձայնեց Արզաբը կողքից:

— Ե՛ս կճաքեցնեմ դրա գլուխը, հազարս սուտ՝ մեկս ճշմարիտ, հա՛ա՛,— գոչեց Մողղոսը զայրացած:

Թուրը ծիծաղեցին:

— Լո՛ւ՛, — հրամայեց Ալեքսիանոս ավազը:

Եարբը ձայնը կտրեց և շարունակեց լարված դիտել թշնամուկն Դիտում էին նաև Վարդանի համագունդից, և ովքեր թմբերի վրա էին՝ լավ տեսնում էին սլարսից զորքը:

Պողոսը այդ պահին նայում էր գետնին, ուր մի դեղնածաղիկ նրա ուշադրությունը խլել էր: Նա երազում էր: Հետո մտորանքով դրդեց իր կողքի Սահակին.

— Լա՛վ, հողը մի հողը չէ՞, բա ո՞նց է մի հողը բույսի մեկի մեջ դնում դեղինը, կարմիրը, սևը, մյուսի մեջ՝ քաղցրը, դառը, թույնը, կաթը, շինում երկայնքը, հաստը, բարակը... Ի՞նչ կուսես:

Նայեց Սահակին. բայց սա այլայլվել էր և լարված կուրծքը ուռցրել, աչքը խիստ սևեռել էր պատերազմի դաշտին: Պողոսը սթափվեց, նրա մարմնով սարսուռ անցավ. զգաց, որ ճակատամարտը հասվեհաս է: Նայեց շուրջը—բոլորը այլայլվել էին: Եվ ահա պարսից գալարաշեփորը ոռնաց մահասարսուռ դայլայլով: Նրան պատասխանեց հայկական գալարաշեփորը: Վարդանը ձեռքով նշան արեց:

— Զորարանակ, զգա՛ա՛ա՛ա՛ա՛ստ... — խուպոտ, օտար ճալնով գոչեց Դավիթ սեպուհը:

— Զորաբանակ, զգա՛ւ՛ա՛ւ՛ա՛ւ՛ստ...— գնաց քամու պես ողջ  
զորաբանակի վրայով:

— Ի մա՛ւա՛ւրտ,— լսեց ողջ զորաբանակը մեկ Վարդանի  
հրամանը:

Եվ սկսվեց ճակատամարտը Ավարայրի դաշտավայրում: Ինչ-  
պես երկրաշարժ, որ մի հարվածով է ողջը ահագնադուրդում, այն-  
պես միանգամից ցնցահարվեցին զորաբանակները և բազմահա-  
զար զինվորներ ու զենքեր գործի անցան:

Նվացին, սուլեցին նետերը զլիսների վրա, շարքերի մեջ, ամե-  
նուր: Բարձրացան առաջին ճիշերը, դրանից խառնվեցին հրամանի  
սաստոցները, նետածիգների մոմոցները և նետալարերի ճայ-  
թյունները: Եվ մի ուժեղ մուտոց միապաղաղ, ծանր, ինչպես ուժեղ  
կարկուտ տեղատարափեց համաորոտալի:

Քշնամին միջոցում եռուն գործի անցավ: Պարսիկ զինվորները  
աղեղները լարած, ետ ու առաջ էին ցատկոտում, շոքում՝ որոնելով  
ու նշելով թիրախները: Նրանց մրկած դեմքերին խաղում էին նեն-  
գաժպիտ կծկումներ: Քաջավարժ զինվորները իրարից առաջ էին  
քնկնում, մոտենում գեսիին, մտնում գետը:

Բայց դա գրգռեց հայ զինվորներին: Նրանք ևս մտան գետը և  
սկսեցին առաջ կանգնած նետահարել:

— Առավե՛՛ե՛՛ե՛՛լ,— ձայնում էին ավագները:

Հայերի աջ թևում վիճակը շատ էլ թևթև չէր: Պարսից այդ թևը,  
որ թեթևացել էր՝ սկսեց այդտեղ ուժեղանալ մանր ջոկատներով,  
որ արագ-արագ գալիս լցվում էին: Միաժամ սպառնում էր շափա-  
զանց ստվարացած միջոցը, որ ինչպես որոշել էր Վարդանը՝ գետը  
չէր անցնի, բայց կարող էր շրջվել դեպի աջ:

Խորենը սակայն պահում էր պարսիկների ճնշումը: Արսենը  
տենչում էր գրոհել:— «Գրոհն է պարսիկների պատուհասը»: Սա-  
կայն Խորենը չէր վճռում:

Իսկ ներշապուհը միջոցը պահելով՝ մտահոգված էր նետերի  
պաշարով. որ հատնում էր: Նրան մխիթարում էր Արտակ Մոկացը՝  
ասելով, որ այստեղ պարսիկները շեն գրոհի, իսկ աջում, երբ  
միանան՝ կարելի է գրոհել: Նա աշալուրջ հետևում էր մարտին և  
միաժամ տենչում էր գոնե մի անգամ ևս տեսնել բոլորին՝ Վար-  
դանին, Ատոմին, Քաթուլին, Անահիտին, Աստղիկին, Զոհրակին...  
բայց էլ որտե՛ղ: Ամեն ինչ վերջացավ: Հիմա բոլորը սուզվեցին

անհայտութեան ծովը:— «Կհանդիպե՞նք իրար, իշխան»,— հիշեց Անահիտի խոսքերը: «Այո,— պատասխանեց,— մարդկութեան մեջ, ավանդելով, ավանդելով մեր գործը սերունդ-սերունդ...»: Այսպես գտավ նա իր պատասխանը Անահիտին, երբ նա հարցրեց այս մասին և ինքն էլ լռեց:

— Ճգնաժամ է, իշխան,— մտահոգվեց Ներշապուհը:

Արտակը սթափվեց:

Վարդանը Արծվիին հրամայեց արշավել միջոցը և Ներշապուհին պատվիրել, որ շինայի նետը: Արծվին վարդեց: Հասցնելով հրամանը՝ նա կողքանց նայեց նետածիգներին: Զինվորները ժպտացին:

— Արծվի, ի՞նչ կա, Արծվի...

— Մի խնայեք նետը...— և բերանը կիսաբաց մանկական ժրպիտով նայեց պարսիկների կողմը՝ կարծես գնդակախաղ էր տեղի ունենում:

Հետո վարդեց դեպի Վարդանը:

— Կատարվեց, սիրելիս: Ռամկի հույսին մնացինք,— և կիսակատակ ժպիտով Վարդանը փորձեց Ատոմին,— ի՞նչ կլինի մեր վերջը, հը՞...:

— Ինչի հույսին էլ որ մնացինք, կռիվը ինքը մի հույս է, Սպարապետ,— ասաց Ատոմը,— լավ որ կռվենք՝ ի՞նչ վնաս ունի ուսմկի կռիվը:

Վարդանը մի թևով գրկեց Ատոմին և համբուրեց նրան ի պատասխան այդ մտքի:

— Այո, իշխանիկա, ուսմիկը կկռվի, սրան հավատա:

Այդ միջոցին անսպասելիորեն մի ջոկատ երևաց Վարդանի միջոցի և ձախի միջև: Նա արշավում էր դեպի գետը: Վարդանը մի պահ խոթուվեց: Ի՞նչ էր նշանակում սա: Ռազմակարգի հանկարծակի շրջադա՞րձ: Եվ ի՞նչ... Հեծյալը վարդեց և համարձակ մխրճվեց գետը, սրընթաց անցավ և այս ասիին խմբվելով մի տեղ՝ սկսեց նետահարել, դիրք ապահովել, մինչ հետևակի մանրիկ ջոկատներ սկսեցին լցվել դեպի ապահոված դիրքը: Վարդանը այնպես բացատրեց, որ թշնամին միտում է Ներշապուհի շարժումը դեպի ձախ՝ Քաթուլը՝ կասեցնել կամ ձախը պատել ներսից բոլորովին չսպասված դիրքից՝ միջոցի ու աջի միջից: Եվ նա վճռեց: Ոչ մի փոփոխություն իր ուղղակարգի մեջ... ձեռք շտալ ոչ մի

զորագնդի: Նայեց արագ Ատոմին, Համազասպին, Արշավիրին: Ոչ, չի կարելի նրանց գոհել վտանգի խաղին: Իսկ վտանգը ստույգ էր: Նայեց Զոհրակին: Նրան կարող էր միայն վտանգել: Ոչ ոք չէր խորհի կշտամբել իրեն: Եվ նա դարձավ նրան.

— Վերցրո՛ւ Մամիկոնյան զորագնդից մի ջոկատ, շարտի՛ր գրանց մյուս ափը և կա՛ց ցնոր հրաման:

— Սպարապե՛տ, խնայի՛ր... — դիմեց Արշավիրը:

— Լո՛ւտ, — սաստեց Վարդանը նրան անհասկանալի վրդովմունքով:

Զոհրակը սաղավարտն ուղղելով իջավ բլրակից և ցածում միամիտ և հավատող աչքերով մի անգամ վեր նայեց հորը, հեզ ժպտաց և սլացավ իր թիկնապահի հետ: Վարդանը նայեց նրա հետևից, և նրա սիրտը մրմռաց: Այդ ժպիտի և հայացքի մեջ մի բան էար Զոհրակի մանկությունից: Կարծես մանուկ Զոհրակն էր, որին ուղարկեց իր մոտից մահի դեմ, և նա գնաց շիմանալով այգ, միամիտ, վստահելով հոր անվտանգ տնօրինութեան: Վարդանը լավ էր հասկանում այդ — իրո՞ք՝ իր զավակին ուղարկում էր ստույգ մահի դեմ:

Վարդանի բլրակից երևաց Մամիկոնյան ջոկատի հարձակումը Զոհրակի գլխավորութեամբ: Նա մխրձվեց գետը և մարտ սկսեց գետը մտած պարսիկ հեծյալի հետ:

Հայերի թիկունքից լավեց երգի ձայն: Զինվորները հատկացան.

— Տղա՛յք, եկա՛ն առավելները, — գռչեց մի աշխույժ զինվոր և նետը քաշեց կապարճից:

Դա գուսաններն էին, որ եկան առաջին գիծը և ռազմական երգը հնչեցնելով բարձր՝ լայնաքայլ անցան մոլեգնած շարքերի միջով:

Զարկին զա՛րկ, առավե՛ն,  
Մահին մա՛հ, առավե՛ն:

Տարորեն պարզ, միալար հնչեց այդ հին մարտական երգը: Բայց նա ահռելի էր: Մահաշունչ: Բայց և քաջալերիչ: Իսկ երկար կրկնությունից՝ մոլեգնեցնող: Զինվորներն ավելի մոլեգին գործի աւնցան: Եվ սկսվեց այն սարսափախառն հաճույքը, որ մահի դեմ գնացողի հետ է պատահում: Զգալով մահի շունչն ու հավանականությունը՝ ավելի է հուսում կյանքին և զգում կյանքի հավանականությունը:

Հսկեցին զինվորների գոչերը.

— Զարկին զարկ, առավե՛ն՛...

Ու սկսեցին՝ մեկը, երկուսը, բոլորը երգել ու կովել:

Զարկին զարկ, առավե՛ն՛.

Մահին մահ, առավե՛ն՛...

Թշնամին միջոցում ավելի առաջացավ դեպի գետափը: Թըշնամու թևերը ոչ մի շարժում չարին, բացի նետաձգությունից: Շարունակում էր եռալ միայն միջոցը: Վարդանը Համազասպի հետ հատուկ և հաստատ հրաման ուղարկեց Ներշապուհին, որ եթե պարսից միջոցը հանկարծ շարժվի դեպի հայերի աջը՝ հորենի դեմ՝ ինքը ևս այս փոխ նրա հետ շարժվի դեպի հորենը, միանա նրան և վարի տեական մարտ՝ շանցնելով սակայն գետը, բայց գամելով թշնամուն տեղում:

— Եվ խստիվ հրամա՛ն՝ պահել այս ռազմակարգը, չշփոթե՛վե՛լ իր՝ Վարդանի շարժումներից, — հրամայեց Վարդանը:

Վարդանը նայեց թշնամու խորքը: Անշարժ քարացել էր այնտեղ միջոցի և ձախի միջև «մատչան գունդը» և դեռ միևնույն տեղումն էր փղերի ռազմաջոկը: Դավաճանների դրոշները ծածանվում էին ձախի դիմաց:

Նետաձգությունը տևեց, վտանգելով նետերի պաշարը: Իսկ դրան կհետևեր մյուս վտանգը: Թշնամին արդեն պիտի անցնե՞րուն մարտին. ձեռնամերձին: Վճռական հարվածները մոտենում էին:

— Նետաձգությունը տևե՛ց... — անհանգստացավ Արշավիրը:

— Նետաձգությունը տևե՛ց, — կրկնեց Վարդանը նույնպես մտահոգ, — և մե՛նք պիտի վերջ տանք, եթե ոչ՝ նա վերջ կտա և վա՛յ մեզ այնժամ...

Եվ նա լարված նայեց պարսից աջ թևին: Սպասում էր գրոհին: Միաժամ անձկում էր: Եվ արդյո՞ք իրոք կլինե՛ր նրա այդ գրոհը: Եվ արդյո՞ք այնպես կլինե՞ր, ինչպես ինքը գուշակում էր: Մարտում ամեն բան շին սպասի: Պետք էր գործել... Եվ գործել արագ: Երբեմն կայծակի պես պետք է շանթել: Ապա թե ոչ... Հետո նայեց սեպուհներին.

— Պատրա՛ստ. գնացե՛ք զնդերդ:

Սեպուհները վազեցին նժույզներին:

Վարդանը դարձավ Ատոմին.

— Ավանդս քեզ՝ իբրև Հայոց աշխարհի ավանդ: Սրբու-  
թյա՛մբ:

— Հոգո՛ւս պարտքը, Սպարապետ:

— Դո՛ւք ևս, — դիմեց Արշավիրին և Համազասպին:

— Պարտքդ սո՛ւրբ, — ասացին սրանք:

— Իշխանիկի՛ն են բերում... Սպարապե՛տ... — շնչաց Արծը-  
վին տարօրինակ ձայնով:

Վարդանը բնազդաբա՛ր, թե՛ պատահարար, թե՛ դիտամամբ...  
չսեց...

— Սպարապե՛տ... — հևաց Արծվին:

— Հա՛... — սթափվեց Վարդանը և իհարկե, հասկացել էր, —  
բերո՞ւմ են... ի՞նչ է եղել, — հարցրեց այնպես, կարծես Արծվին,  
որ նույնքան այստեղ էր և տեղյակ, որքան և ինքը՝ Վարդանը կա-  
րող էր իմանալ, իսկ ինքը՝ ոչ: Բայց նա հարցնել միայն կարող  
էր, դրա մեջ մի ունայն հույս կար:

Վարդանը նայեց դեպի իրեն եկող մի խումբ զինվորների,  
«րոնք իրոք բերում էին Ձոհրակին: Ճոճվող զինվորների արան-  
քից երևաց Ձոհրակի թևը, որ անբնական քարշ ընկած օրորվում էր  
ոչ իր կամքով: Վիրավո՞ր է, թե՛ սպանված... Վարդանը մի աղըն-  
թարթ կաշկանդվեց տեղում երկու մեծ մտքերով պաշարված՝ մեծ  
ձակատամարտի միտքը, իր զավակի միտքը... Նա չվճռեց առաջ  
գնալ:

Ձինվորներն իրենք արյունաթաթախ ու քրտնած՝ բերին Ձոհ-  
րակին, որ կիսովին ծածկված էր վիրավորի թիկնոցի հապճեպորեն  
պատառած ծվենով: Ձոհրակը մահացու վիրավորվել էր հայտնի չէ  
մարմնի որ մասում: Նրա դեմքը կավիճի գույն էր ստացել, և աշ-  
քերը մի տեսակ զարմացած թե հետաքրքիր նայում էին հանդիսա-  
վոր երկյուղախառն ժպիտով:

Ձինվորները լուռ ցած դրին Ձոհրակին: Վարդանը իջավ բլրա-  
կից, մոտ գնաց: Ձինվորները մոայլ կախեցին զլուխները: Վարդա-  
նը թիկնոցը մի փոքր ետ տարավ: Իսկույն ետ ծածկեց: Տեսածը  
ահեղ մի բան էր: Լուռ խոնարհվեց, համբուրեց նրա ճակատը,  
գանգուրները, հառաչեց...

— Տարե՛ք... — ասաց զինվորներին՝ ձեռքով ցույց տալով  
թիկունքը: -

Զինվորները տարան, Զոհրակը մեռել էր արդեն:

Վարդանը կրկին բարձրացավ բլրակը: Նա երազի մեջ զգաց իրեն: Բայց նայեց մարտագաշտին և ուշքի եկավ: Մեծ գործեր էին կատարվում այդ պահին: Գետն անցնող պարսից ջոկատը ետ էր մղվել, բայց պարսիկների ձախը շարժվեց դեպի գետը, ճնշեց հայերի ձախին: «Շրջապատում է», — մտածեց Վարդանը:

— Սպարապետ... — ձայնեց Արծվին Վարդանի սկանչի տակ: Վարդանը նայեց և լարվեց: Ատոմը, Արշավիրը, Համազասպը առաջ մղված դարձել էին ձախ: Պարսից զորագնդերը լցվեցին այնտեղ և ուժեղ գրոհով եկան Քաթուլի վրա: Քաթուլը վճռական հակահարվածի գնաց առաջ: Ընդամենը մեծ էր, և թշնամին անցավ Տղմուտը, ընկավ Քաթուլի վրա: Թշնամու միջոցը հանկարծ շրջվեց դեպի աջ և գնաց Խորենի դեմ, Վարդանը տագնապով նայեց սուսօր Սեպուհները խստորեն ետ մղեցին: Բայց նրանք տարերայնորեն առաջացան:

Ողջ համազունդը՝ Այրուծին, Զմերոցը, Մամիկոնյանը, ժողովրդականը՝ սեղմվում էին դեպի Վարդանը: Քանդեցին շարքերը և մոտ վազեցին Առաքելը, Արթեն քեռին, Սահակը, Խանդուբը: Նրանք այլակերպվել, անհանգստացել էին:

— Սպարապետ, էս մեկն ու աստված, զա՛րկ, — ձայն տվեց Առաքելը:

— Ժամ ու տեղն է, Սպարապետ, — կցեց Արթեն քեռին, — զա՛րկ:

— Զա՛րկ, զա՛րկ, — մոնշաց բազմությունը:

Ժողովուրդն է խոսում սրանց բերանով, — մտածեց Վարդանը: Երբեք նա այդպես չէր ներշնչվել ռազմագաշտում: Զգաց՝ մի մեծ ուժ բարձրացրեց իրեն: Լցվեց այդ ուժի իմաստով և հաղթության հավատով: Նայեց՝ դեպի իրեն էր գամել իր բազմահազարդ շարքերը ողջ ժողովուրդը:

— Զա՛րկ, — դեպի նա վազեց Առաքելը ցասումնալի, կատաղի, — զա՛րկ, ոչ ու փո՛ւշ արա անիծված բռնավորին: Թող մի տեսցնեն՝ ռամկի ուժը, տեսնի ի՛նչ է ռամիկը: Անասուն է տեսե՞ց մեզ, գազան չի տեսել: Թե գայլ է, թող տեսնի գայլի գայլը: Զա՛րկ:

Նայում է սակայն կշռադատում, վերդիր է անում Վարդանը: Ահա մեծահարուստ իր թշնամին ընդարձակածափալտորեն շոպլում:

է գննք ու գրահ, գորք ու գազան: Ահա նա աճում, լցվում, լեռնա-  
նում, վրա է գալիս շափելու իրեն: Ի՞նչ անել այստեղ հիմա... —  
Կանոնավոր ճակատամարտ: — Ցնորք, բանդագուշա՞նք... Հողվ-  
մեական, պարսկական, հայկական: Ռազմագիտութեան հռչակավոր  
գիտակը դառնագինորեն խոցվեց, երբ նայեց իր մի բուռ ժողո-  
վրդի «աղթատ» զորքին: — Մահտարածա՞մ է, հայոց ժողովրդի  
ժամը ժամեց... Դե, հասավ օրհասը...:

Կրկին նայեց առաջ, շուրջը: Վերջին միտքն է, վերջին ակըն-  
թարթը: «Ժա՛մն է, անսպասելին, հետո ուշ կլինի...»:

Գիրթ շարժումով շրջվեց ետ.

— Իշխա՛ն Գնունյաց, — տանում եմ Այրուձին, Ձմերոցը, Մա-  
միկոնյանը և Շինականը: Վերցրու քո Գնունիքը, Վանանզը, Ար-  
շարունիքը, Խորխոռունիքը, Ռշտունիքը, Արծրունիքը... մնացորդը  
և, — ժպտաց մեղմ, — հայոց ժողովուրդն այնտե՛ղ... Բեկում կըս-  
կըսվի այստեղ: Դաժանագինորե՛ն կկասեցնես, կդնես երկաթե  
գա՛ռն նահանջի մեջ: — Տեր Արշարունյա՛ց, Համազասպ եղբայր  
իմ, — Գնունյաց իշխանի հե՛տ: — Հետո նայեց իրեն շրջապատող  
սեպուհներին, Առաքելին, Սահակին, Արթեն քեռուն:

— Տեղնե՛րդ:

Բոլորը վազեցին իրենց զորամասերը:

— Այսպե՛ս կամեցա՛վ հայոց ժողովուրդը: Դե՛հ, սո՛ւրբ՝ նրա  
կա՛մքը:

— Լո՛ւո՛ւո՛ւտ, — սաստեց զորքին Ալեքսիանոսը, սրի շար-  
ժումներով և կատաղի ձայնով:

Ջորքը լռեց և տեղի ունեցավ այն, որ Վարդանի հին զին-  
վորները գիտեին: — Վարդանը սփրթնեց, ինչպես ցասումնալի  
կայծակ: Աշքերը շողացին մռայլ մի ցուրով, և նա մի վերջին հա-  
յացքով մի ակնթարթում կտրեց, խլեց զորագնդերի կերպարանքը:

Նայեց նրանց, որոնց նա տանում էր դեպի սխրագործություն,  
գեպի մի կռիվ, որ չունի մահի երկյուղ և ուրեմն մահ չունի: Նա  
խիզախորեն նետում էր իրեն մահից այն կողմ, որ մի նպատակ  
ունի միայն, — կռվել մինչև հուսկ վերջին ուժն ու հնարը, միմիայն  
հաղթել, թեկուզ կյանքի գնով:

Նա զգաց այդ ահռելի ուժը իր թիկունքում, և շատ բան պիտի  
ասեր: Բայց միայն զլուփը թափ տվեց.

— Դե՛... իմ հետևի՛ց...

Կիզիչ քամու պես փշեց այս խոսքը, հանկարծ նրա սուրբ կրակին տվեց, աշտանակեց նա «Վիշապին», սլացավ և զորագրնդերն ու համագունդը թոցրեց իր հետևից:

Մի անգամ էլ ընդոստ շրջվեց ետ ու զայրալի.

— Առավե՛քե՛ք... —

Ու զարկեց շիփ շիտակ գետի մեջ, տղմի մեջ, ուղիղ պարսից միջոցին. թաղվե՛լ էր ուզում, խելահեղութիւն հանկարծակի...

Հարվածող զանգվածը նրա հետևից նույն թափով շրջփաց գետը... Բայց արդյոք տի՛ղմը խոր չէր, թե՛ միայն նեղ մի շերտ էր դա, թե՛ Վարդանը կանխապես գաղտնի նայել, գուշակել էք հատակի. պինդ շերտը... Թերևս ոչ մի կանխատեսություն, թերևս դա միայն խորհուրդն էր այն խիզախութեան, հոգու այն թռիչքի, որ ծնում է հրաշք: Գլու՛տը... — Վարդանն անցավ մյուս ափը: Հետևից գորբը: Մի քանի տասնյակ ընկղմվեցին: Վարդանը նայեց աջ ու ձախ, ետ և կուրծքը լցվեց. մրրկի պես թռչում էին աջից Այրուծին, ձախից Չմերոցը, հետևից Մամիկոնյանը: Սրանց հետևից ճիգ էր գործում ժողովրդական գունդը Առաքելի, Արթենի, Սահակի, Խանդութի հետ:

Դուրս գալով ափ՝ Վարդանը նույն սլացիկ թափով զարկեց մխրճվեց պարսիկների թեթևացրած միջոցի վրա: Ռազմադաշտի արևելակողմյան բլրից կովին դիտող պարսիկ մեծամեծները Միհրըններսեսի, Պերոզի և նախարարներից Վասակի և Գաղիշոյի հետ ուշադրութունները բեռեցին Վարդանի այս շարժման վրա: Նյուսալավուրտը այդ համարեց մի դիտավոր հասարակ խաբանք, որին իսկույն կհետևի նրբորեն: մտածված իսկական հարվածը: Մի վայրկյան իսկ մտքով շանցկացրեց, որ հենց այս իսկ էր ամեն ինչ: Այսքան պարզունակ, անճկուն մի շարժում նա երբեք չէր սպասի նշանավոր զորավարից:

Բայց Վարդանը հանկարծահաս դաժան աղետի պես վրա հասցրեց խելահեղ հարվածը: Եվ շփոթն սկսվեց, երբ Վարդանը շարունակեց մխրճվելը պարսից զորքի միջոցի խորքը և շարունակեց առաջանալ այն աստիճան, որ միայն զարմանալ կարելի էր: Ի՛նչ էր կամենում, — շրջապատվե՛լ, խժովե՛լ, ի՛նչ հիմարութուն... —

Նյուսալավուրտը, որ ըստ երևույթին իրոք հրամայել էր իր թևերին շրջապատել հայկական զորաբանակը՝ վարանեց, կամեցավ փոխել մարտակարգը: Դա կսպահանջեր ուժեղ գործողություններ

թևերում: Մինչդեռ այժմ պահանջում էր վերջ տալ Վարդանի այս  
խելագար մխրճման՝ ուժեր վերցնելով հայկական թևերին ճնշող իր  
թևերից: Հենց այդ պահին Քաթուլը կռահելով Վարդանի պահան-  
ջը՝ զարկեց անցավ գետը և ուժեղ հարվածներ սկսեց հասցնել  
պարսից աջ թևին՝ գամելով նրան մի առ ժամ: Նույնն արեց և  
Ներշապուհը հայկական աջում առանց միայն անցնելու գետը: Այս  
շարժումներով նրանք մի տեսակ «կախ ընկան» նյուսալավուրտի  
թևերից, հաղորդելով նրանց միառժամյա տարտամուխյուն: Այս  
միառժամյան կատարեց իր գործը:

Վարդանը սլացավ հենց ուղիղ մատյան գնդի վրա: Սա վեր  
էր ամեն սպասածից: Սա շտեսնված հանդգնություն էր: Մատյան  
գունդն ընդունեց հարվածը, բայց հարձակման թափը կտտրել ան-  
կարող եղավ: Մամիկոնյան և հայկական այրուձիի զորագնդերը  
էլբրճվեցին նրա սիրտը և սկսեցին նախճիրը: Մատյան գունդը  
քնցվեց, չկարողացավ հրաման ընդունել, պատռոտվեց ու սկսեց  
կտ-ետ շրջվել գեպի փղերի ռազմաշուկը, որը իր հերթին շփոթվեց  
և անճոռնի փղերը կնճիթները վեր ուղորած սկսեցին դես ու դեն  
ընկնել:

Վարդանը չհետապնդեց մատյան գնդին: Թեև նա մեկ փոր-  
ձեց այդ անել. բայց՝ ակնթարթ,— կարող էր իր թիկունքում թըշ-  
նամին ուշաբերվել: Նա շրջվեց ետ և սկսեց շրջան գործել պարսից  
աջ թևի կուտակումների մեջ, ուր սյունյաց և այլ դավաճանական  
զորագնդերն էին: Պարսից ողջ աջը շփոթվեց, խառնվեց իրար, և  
Արտաշիր, Գարեհ և այլ զորավարները չկարողացան մի հրամանի  
բերել այդ բոլորը:

Պարսից աջ թևը վերջնապես կորցրեց իր ռազմակարգը և շնա-  
յած իր խմբման և մեծ ուժերի կուտակման՝ անկարող եղավ իս-  
կույն անդրադարձնել ազդու մի հակահարված: Վարդանը խառնեց  
ամեն ռազմակարգային հասկացողություն: Եվ ժամանակ չէր տա-  
լիս սթափվելու՝ արագ հարվածելով, շրջվելով, խրվելով, ուր ամե-  
նից անսպասելին է: Եվ հաղիվ էր գլխի ընկնում թշնամին Վար-  
դանի հարվածների մի միտքը և ուղղությունը՝ Վարդանը շրջում էր  
մի այլ կողմ:

Վարդանը անշուշտ չպիտի կարողանար հաղթահարել պարսից  
ուժերի կուտակումը նրա աջ թևում: Դա գիտեին երկու կողմը ևս:  
Վարդանին ջախջախելու համար բավ էր այդ ուժերի մի քառորդը:

Անշուշտ Վարդանը «իրեն գցեց ծուղակը»։ Նրան սանձահարելը պարզից պարզ էր և դյուրին։ Սակայն թշնամու համար զայրալիք այն էր, որ այդ պարզն ու դյուրինը խճճվեց ու դժվարացավ, և Վարդանը խլեց մարտի ձեռներեցությունը։ Որովհետև իրոք «ք Վարդանն «ընկավ ծուղակը», որ հետզհետե շրջապատվում էր։ Բայց շրջապատվում էր ոչ հարկադրորեն, այլ կամավոր, դիտավորյալ կամքով։ Եվ սա էր անսպասելին, որից շէր կարողանում գլուխ հանել Նյուալավուրտը։ Վարդանը նրան հասցնում էր ամենաանսպասելին — ամենապարզը, ռամկական կոռիվը։ Սա էր ամենաանտանելին։

Եվ ամենից անտանելին սարսափելի նախճիրն էր, Վարդանի նախճիրը, շտեսնված կատաղության։ Երեք զորագնդերը բաժանվում էին, միանում, հյուսվում, հասնում իրար, ճեղքում թշնամու շարքերը, մասնահատում, ճարակում և առաջ էին գնում։

Ահա Զմերոցի, Մամիկոնյանի, Այրուծիի գրոհներին հավասարվելով, հետզհետե նրանցից առաջ ընկնելով իր ահուկի ուժի կուտակումը ցույց տվեց ժողովրդական համագունդը։ Նա սկսեց դրսևորել իր իսկական բնույթը, որ նոր ոգի ու ձև տվեց Վարդանի կռվին։ Մոլեգնել սկսեց նրա ռամկական կռիվը։ Եվ այստեղ էր ահա տեսնելը թե ինչ բան էր և ինչեր էր կարողանում գործել ռամկական կռիվը։ Այդ անարվեստ, բայց ոգելից, ոգեխանձ, ցասումնալի կռիվը։ Այստեղ էր, որ շիկացավ, կնճռեց իր դեմքը ռամկական ցասումը, վրիժառու դարերի կուտակված զայրույթի պոռթկումը իր ճնշողների, բռնակալների դեմ։ Սա էր, որ ոգի տվեց Վարդանի անսպասելի հարվածին։ Առանց դրան անկարելի էր իրագործել այդ հարվածը, որի իմաստը թշնամուն խորը խոցելն էր։ Համագունդն առաջ թռավ՝ անսպասելի՝ անգամ Վարդանի համար, որ տեսել էր անվերջ հարվածներ ու գրոհներ։ Գրոհի կատարի թափը հաղորդվեց նաև Վարդանի զորքին և զորագլուխներին։ Թողորը ցնցվեցին նոր ուժի հարվածից։ Շատերի և Վարդանի ուշադրությունն սկսեց գրավել Առաքելը, որ մերթ կորչելով խառնուրդի մեջ, մերթ դուրս լողալով հենց կռվի մեջ ինքնիրեն կազմված մի համահարգով, որ շրջապատել էր նրան՝ հետևից տանում էր մի ըստվար զանգված։ Նա այլայլվել էր։ Զարաշող ժպիտը աչքերի մեջ, հափշտակված ահա նա ընկավ պարսիկ հետևակի վրա։ Նրա դեմ թռավ պարսիկ ազառանի մի սովոր զորամաս։ Առաքելը իր համ-

Տարդով սկսեց մարտը նրա հետ: Նրանք այնպես էին հարվածում, ինչպես իրենց անձնական թշնամուն, իրենց անձնական կեղեքիչին, իրենց շարաշար կյանքի պատճառ եղողին: Նրանք կռվում էին իրենց կռիվը բռնություն, դարավոր կեղեքիչի, հարկահանի դեմ, իրենց ազատությունը խլողի դեմ: Նրանց դեմ, որ գերություն, ճորտություն և հավիտենական լուծ էին բերում նրանց, զրկում հողից, անունդից, կյանքից: Նրանք կռվում էին իրենց կռիվը, իրենց համար, թափում էին իրենց մաղձը, վրեժը, ատելությունը դեպի բռնակալը և սակայն այդ կռիվի մեջ զգացվում էր նաև այն ատելությունն ու մաղձը դեպի իրենց սեփական իշխանները, որոնք նույնպես կեղեքել էին, զրկել նրանց կյանքի ուրախությունից և գազազեցրել նրանց հորը, նրանց պապերին: Այս դարավոր ցասման, վրեժի պոռթկումն էր, որ ահա հաղորդվեց նաև զորքին, ներշնչեց աամկական բնազդով, ստիպեց նմանվել իր հարազատ ծնող ուսուցիչին, կրկնել նրա հարվածը նրա պես: Սարսափելի դառավ այս աամկական պոռթկումը:

Ռամկական համագունդը տիրեց կռվին: Նա կռվեցրեց նաև զորագլուխներին, սեպուհներին: Նա զարհուրելի դառավ նաև սրանց համար իր ամենի կատաղությանը, գոռոցով ու սաստոցով, որով քոփպում էր շարժվել, թեքվել, դիմել այս ու այն կողմ: Այլևս անզոր էր ռազմական խելքն ու կանոնը, զգուշացումն ու խանգարելը աամիկներին: Նա աճել էր, կռվում էր խելահեղ արագությանը և հափշտակությանը:

Սկսվեց այն «մեծ շփոթը», այն «դեռ շտեմնվածը», որի մասին պատմեցին հետագայում հետնորդները:

Հետզհետե ավելի բարձրացավ, սաստկացավ ահեղ ռազմագոչը:

Զարհուրելի սպանդ էր և իրար ոչնչացումն: Բազմահազարանոց զորաբանակները խժռում էին իրար: Անկարգ, խառնաշփոթ իրար էին գալիս վահանակիրները, նիզակալորները, տապարավորները, հեծյալն ու հետիոտնը: Նրանց զենքերի, վահանների, մարդկանց ու նժույգների խառնափնթորը նմանվում էր զզգզված ջարդուփշուր անտառի, որի միջից ավերելով ու կոտորելով պտըտվում էր անսանձելի մրրիկը՝ Վարդանը: Դա մարտ չէր նրա կողմից, այլ մի մոլեգնումն: Նա վճռապես ոչնչանում էր ոչնչացնելով: Արդեն պարզ երևում էր նրա այդ «ռազմակարգը»: Դա մի

ուազմական գլուտ, ստեղծագործություն էր: Ազդում էր գերագույն  
այն ճիգը, որով հափշտակված գործում էին զորագնդերը— ոչնչաց-  
նել շատ, ավելի շատ, մինչև գերագույն հնարը, մինչև վերջապես  
ընկնելը: Դա նրանց հաղորդում էր մի զարհուրելի դիվական ուժ,  
որ սպառնում էր արդեն... ո՞վ գիտե ինչն' ր անել...

Նայում էր մտայն Վասակը: Ահա իր առաջ, իր դեմ, ամեն  
բանի դեմ, հակառակ ամեն բանի՝ դուրս էր եկել իր զարհուրանքը,  
որի դեմ նա այնքան պայքարեց և արյուն թափեց,— հայոց հա-  
մաժողովրդական սխրագործությունը: Նա ցույց տվեց իր անավոր,  
ոչնչացնող էությունը: Որից դողում էին Նյուսալավուրտի սաները,  
որից սփրթնել էր Միհրնեբսենը, որին ժանտաժպիտ, նախանձա-  
փրփուր դիտում էր Պերոզը, շփոթվել էր Վախթանգը... Նայում  
էր և չէր կարողանում հասկանալ, ընդունել, հաշտվել...

Նյուսալավուրտը, որ իր օգնական Դողվրճի հետ կանգնել էր  
բլրի վրա ու ղեկավարում մարտը՝ դարձյալ երկար ժամանակ  
չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում իր առջև: Նա  
չէր հասկանում այդ գրոհը, նա շփոթվել էր: Չէր տեսել նման  
գրոհ՝ խելքից մտքից վեր: Ի՞նչ իմաստություն էր մի այնպիսի  
փորձված հին զինվորի համար նման գրոհը — խելահեղորեն,  
առանց վերջը մտածելու իր փոքրաթիվ ուժերով խրվելը երեք շրտ  
անգամ մեծաթիվ զորաբանակի մեջ: Ի՞նչ օգուտ Վարդանի այդ  
գրոհից նրա աչ ու ձախ թևերի համար: Չէ՞ որ առանց այդ էլ նա  
արդեն շրջապատման վտանգի մեջ էր:

— Որմիզդը խելք տա ինձ՝ հասկանամ,— մրթմրթաց Նյուսա-  
լավուրտը,— Որմի՞զդը խելք տա ինձ...

— Միևնույն է, նա պաշարված է:

— Դու ջա՛րդը նայիր, ջա՛րդը...

Եվ իրոք՝ Վարդանը ջարդում էր շտեխնված անգթությամբ: Նրա  
ճանապարհը լցվեց դիակներով, վիրավորներով: Նա թաթառի պես  
ճարակելով գնում էր, շրջվում այս ու այն կողմ, և ոչ մի հնար  
չկար նրա առջև կալնելու:

Նյուսալավուրտը, ծանր գեր կապկի պես վազվզում պարում  
էր զայրույթից, նրա ծաղկատար, արնագույն այտերը եռացող ջրի  
պես խլթխլթում էին քրտնաթոր, և նա շրթունքները ծամածռելով  
մռնում էր, լալիս, ծիծաղում և այդ լալագին ծիծաղախառն ձալ-  
նով դիմում էր Դողվրճին.

— Ոտքդ լվամ պագնեմ, հասկացրու ինձ՝ ինչ են անում այդ  
[տեսաուսուները, այդ իշի ծնոտ Արտաշիրը, այդ աղբանոց Գարե-  
հր: Ուհ, ձեր, ձեր, ձեր... Հարամանիի զավակներ, ուղտի կաշի-  
ներ...

— Բաց թող մատյան գունդը,— գոչեց Գողվըճը:

Նյուսալավուրտը վնգաց.

— Ի՞նչ ժամն է մատյանի. իսկ մյուսների՞ վրա ինչ բաց  
թողնեմ. այս դոմաշներին...

Գողվըճը նայեց ձախը.

— Այնտեղ էլ գամվել մնացել են տեղում... Արածո՞ւմ են,  
ի՞նչ են անում...

— Ետ ու առաջ են պարում, հարսանիք են եկել...

Եվ հանկարծ տեսնելով կանանց գունդը՝ Նյուսալավուրտը  
խելազարվեց — մի տես, հոգուդ մեռնեմ, կնանի՞ք են բերել, որ  
հետները կռվեմ,— ու գլխին տվեց.— վա՛յ, կանացի ներքնաշո՞ր  
գլխներիդ, իշի՞ էջեր, խոզանոցներ...

Ու դարձավ սիպահներին.

— Հրաման տարեք՝ այդ աղբի պուտուկներին, խրվեն շար-  
քերի մեջ, կոտրատեն...

Սիպահները վարանոտ արշավեցին:

Դեպի բլուրն եկան Միհրներսեսը, Դենշապուհը, Վասակը, Վա-  
րազվաղանը, Գաղիշոն, Պերոզը, Վախթանգը և մոզպետները:

Միհրներսեսը հագիվ պահելով իրեն նժույգի վրա և հուզմուն-  
քից թուրք շորացած՝ լամլամորեց կերկերաձայն.

— Զորավա՛ա՛ր... դժվարութ՞յուն է... Ի՞նչ է լինում..

Նյուսալավուրտը սիրտ շուներ բացատրելու, բայց հարկադրու-  
ված էր «Հազկերտի ստվերին» հարգել.

— Շիտթ է... պարզում ենք... սպասի՛ր...

— Մատյաա՛ա՛ն գո՛ւտնդը հանեիր...— կերկերաց Միհրը-  
ներսեսը:

— Մատյանին որ հասանք՝ գնամ գլխիս մոխիր ածեմ,—  
չհամբերեց Նյուսալավուրտը՝ շրթունքների մեջ ծամծամելով մի քա-  
նի կոշտ գինվորական հայհոյանքներ:

Սակայն անտեղի էր Նյուսալավուրտի տազնապն ու մեղա-  
դրանքը: Սահմանափակ զորավարի նեղ ուղեգրին հասու չէր այն  
վեհ գաղափարը, որ գրել էր Վարդանը այս մարտի մեջ: Հասու չէր,

որ Վարդանը ջնջել էր մարտավարութեան բոլոր մինչայժմյան շահերն ու ավանդները, որ նա կատարում էր անհասկանալին, անցել էր մարդկային բոլոր հասկացողութիւնները, գործում էր խելահեղ մի սխրագործութիւն: Նա փրկում էր հայրենիքը՝ սխրագործութեան դնելով մի ողջ սերունդ:

Վարդանը խելահեղութիւն էր արել, քնկել շրջապատման մեջ: Նյուսալավուրտը չհասկացավ, որ իրեն ոչինչ չէր մնում, քան զգրկել նրան և ճգմել: Նա չզգաց իր մեծ սխալը, — հաշվի շառնել այն մեծ նախճիրը, որ գործում էր Վարդանը, — զգաց և այդ սըխրագործական ռամկական կովի իմաստը և ուժը: Գեռ սպասում էր շրջապատման վախճանին — Վարդանի ոչնչացման: Բայց դա ուշանում էր ճակատագրորեն:

Դողվըճը նայեց իրենց ձախին.

— Թե երբ ետ քաշենք՝ թող գան շրջապատեն:

— Հարկավոր չէ՞, — գոչեց նյուսալավուրտը, — հարկավոր չէ՞: Թե երբ իրենց գործն ունին: Սրա՛նք պետք է շրջապատեն: Սրանք մի երկիր կարող են շրջապատել: Գալարափող:

Գալարափողը ոլորածայնեց:

— Մատչան գո՛ւնդը, — հրամայեց նյուսալավուրտը:

Սիպահները թռան տանելու հրամանը:

— Մատչան գունդն էլ որ խժոնեն՝ կմնանք մենք խժովելու, — գոչեց նյուսալավուրտը:

Վարդանի բլրակից մատչան գնդի և փղերի շարժումը տեսան Ատոմը, Արշավիրը և Համազասպը: Զորագնդերը կազմ պատրաստ էին. կարող էր Ատոմը հասնել Վարդանին օգնութեան. բայց զորական հրամանին հնազանդ՝ սպասում էր իր ելույթի ժամին և միայն անձկանոք դիտում էր, թե ինչպես է Վարդանը շրջապատվում անհույս:

— Գնա՛ց Սպարապետը Հայոց, — հռուչեց Արշավիրը և արցունքը կաթեց նրա աչքերից:

Համազասպը գլուխը կախեց:

Ատոմը մթնեց, նայեց ներշապուհի և խորենի կողմը: Նրանք դեռ դիմանում էին: Եվ այնտեղ, այնտեղ էր Հայոց աշխարհի հույսը: Եթե ոչ՝ Վարդանը վճարում էր իրենը, ճա պիտի գնար...

Մատչան գունդը եկավ, և պարսից զորքը խելքը գլուխն հավաքեց, կուռ շրջապատեց Վարդանին: Սկսեցին հարվածել ամեն

կողմից: Սակայն Վարդանը չըռնվեց. նա կարողացավ պահել շարքերը և դեռ գետի պես հոսում էր կազմ ու անքակ, հարվածում, թեպետև իբ կորուստը անողոք աճում էր: Ընկնում էին մարտիկները, ընտիրները... Անօրինակ նախճիրը, դեռ երկուստեք ճարակում, սպառնում էր շտեմնված շափով՝ թեև Վարդանի անկումը իբր թե «պարզ» էր ու իբր «վճռված»... Միհրներսեհն ու մյուս մեծամեծները ճնշվել մնացել էին այդ տեսարանի առջև: Վարդանը տևում էր, աճում, կասկած էր զարթեցնում թե կոչնշացնի ամեն բան... Մամիկոնյանը, Ջմերոցը, Այրուձին և այլ նախարարական զորաբաժինները դեռ պահում էին իրենց կազմիկ վիճակը, թեև կորցրել էին իրենց կեսը և ավելին: Նրանցից ավելի էր տուժել ժողովրդրդական համագունդը:

Բայց զգացվում էր, որ անխուսափելին մոտենում է: Սա զգաց Վարդանը: Անվերջ մարտերի վարժությունը նրան ահազանգեց այդ:

Սակայն ահա այստեղ էր ահավոր, բեկման պահին խառնուրդի միջից շարքերը ճեղքեց և առաջ թռավ «Կանանց հայոց աշխարհի» գունդը: Այստեղ երևաց, թե ինչ կարող էին անել գեղջկուհիները, որ սկզբում այնպես համեստ ու լուռ եկել էին կռիվ: Նրանք անճանաչելի էին: Առջևից փետրախոիվ թռչունի նման զարկեց Խանդուբը և կռվի խառնաձայն գոռոցը ճեղքեց նրա խանձված կռիւնը.

— Հի՛ի՛ի՛-մի՛ խավարեմ ձեր արևը... շնջե՛ք բռնավորին...

Մարտիկ կանանց այս զարկը ցնցահարեց զորագնդերին: Նրանք զարհուրելի էին իրենց հետ եկած տիկիկներին և անգամ գինվորների համար: Նրանք և՛ կռվել սկսեցին նոր թափով, և՛ նոր շունչ հաղորդեցին կռվին:

Կանանց դեմ արագ վեր ելավ զարկվելու պարսից մի ընտիր զորագունդ: Միամիտ, անսպասելի կանգնելով կանանց դեմ՝ զորագունդը մի պահ շփոթվեց: Կանանց հերարձակ գլուխները, արյունլվա մարմինները, պատառոտված զգեստները, որոնց միջից երբեմն բացվում էր նրանց կրծքները՝ ահ ու պատկառ ազդեց: Բայց կանայք Խանդուբի հետ ու միասին սաստիկ թափով զնացին պարսիկներին վրա: Սրանք ուշաբերվեցին և հարվածեցին: Կանանց առաջին շարքերը մեղուների նման թափվեցին:

— Տղա՛յք, պատիվներս... — գոչեց Պողոսն այլայլված ու թռավ նրանց վրեժը հանելու: Հասան Սրապը, Հովհաննես Կարապետը, մոլեգնության մեջ վերացած Սահակը, իրենց հետևից տանելով մի խոշոր զանգված: Անխնա հուսահատ գրոհը կասեցրեց սլարսիկներին: Իրար խառնվեցին: Կանանց գունդը ուշաբերվեց ու կրկին գրոհեց կանացի կատաղության ուժով: Մի ակնթարթ դուրս ցայտեց Մամիկոնյան տի՛խնշ Անահիտի ու Յատղիկի հետ: Տիկինը դրոշ էր կրում և վերասլաց հափշտակությամբ գնում էր հանգիստ: Նրան երկու կողմից բռնում էին Անահիտն ու Յատղիկը: Վարդանին ազդեց Անահիտի արյունաներկ խոպոպները և տղմոտած հագուստը: Վարդանը գնաց դեպի կանայք: Բայց պարսիկների մի պատ փակեց առաջը: Զարկեց անցավ: Բայց տիկինն ու օրիորդները չկային: Քստմենլի գործեր էր տեսնում մարտը կանանց հետ, որոնց գիսակներն սկսեցին գզգզվել հազարավոր սմբակների տակ, ըղգեստները խճճվել, նիզակների հարվածներից պատառոտվել: Մի աղջիկ էր սմբակածեծ լինում: Անահիտը չէ՛ր... Կարծես այո, կարծես ոչ: Մի գեղջկուհի խեղդում էր պարսիկ զինվորին, մի պարսիկ զինվոր նիզակը խրեց նրա կողը: Գեղջկուհին ընկավ:

Վարդանը կրկին նայեց շուրջը — չերևացին տիկինը և օրիորդները: Զարմանքով նկատեց... մոռացել էր Շուշանիկ տիկնոջը: Հառաչեց դառն: Զգաց, որ իր մահը միայն կարող էր խլացնել այն կսկիծը, որ այրեց նրա սիրտը: Բայց այդ մտքերը մթագնում էին, երբ Վարդանը տեսնում էր թե ինչպես իր առջև իր կնոջն և դստեր կողքին ուսմիկների կանայք ու դուստրերը անխնա զարկվում էին թշնամու սրբրին, հարվածում իրենք, և վերջը թափվում անխնա, անգթորեն, թանկագին կյանքի անսիրտ ածանությամբ: Սա ավելի էր խոցում Վարդանին: Բայց ահա մի երիտասարդ աղջկա մագերն ընկան պարսիկ հեծյալի ասպանդակը և նա քարշ ընկած գնաց...

— Տղա՛յք, հասե՛ք, — գոռաց Պողոսը իրեն կորցրած:

Պարսիկի հետևից թռավ Տիգրանը և խրվեց մի խումբ պարսիկների շարքի մեջ, թողեց նժույզը և կախվելով ասպանդակից՝ սկսեց սրով զգույշ կտրել կնոջ մագերնը: Հոգատար դանդաղումը թույլ տվեց պարսիկներին հարված հասցնել Տիգրանին: Նա ընկավ՝ իմանալով որ այդպես էլ կլինի: Սա կատաղեցրեց Կորյունին և մյուս երիտասարդներին: Նրանք խմբով խրվեցին պարսիկների մեջ և սկսեցին հարվածել:

— Երեխե՛քս... — ծղրտաց Խանդութը և գնաց մենակ զարկեց պարսիկներին՝ ինչպես փետրացից թռչունը իր ձագերն ազատեցու։

Նա հարվածեց մեկին, բայց և իսկույն ընկավ մի պարսիկ գինվորի սրի հարվածից։ Տղաները վտանգվեցին։ Նրանցից երեքն էլ ընկան։ Ուրիշ կանայք հասան օգնության։ Սրանց հետևից թռան գինվորները և սկսվեց մի տեսարան՝ սարսափելի և գեղեցիկ։ Զոհում էին իրենց, ազատում իրար, խլում իրարից մահը՝ շնորհում իրար կյանք։

Կայծակի պես հափշտակեց սա Վարդանին, բռնորին։ Սա թոխք էր արդեն։ Վարդանն զգաց — լուծվեց երկունքը, ծնվեց այն վեհագույն ոգին, որի վրա դրեց նա իր և հայոց ժողովրդի կյանքը։ Վարդանը ոգիացած գռչեց։ Դա բառ չէր, այլ մի հույժ գերագույն մի բան։ Սլացիկ միտք։ Ոգի։ Զինվորներն ու շինականները խլեցին այդ ոգին։ Ժպտացին ոչ հասարակ առօրյա ժպիտով։ Ժպտացին մեծ սխրագործության հպարտ ու վեհ ժպիտով։ Մարտը դառավ մի վերասլացք առաքինություն և քաջություն։ Վարդանը տեսավ իր գործը—հայոց ժողովրդի գործը—սոսկալի ավեր թշնամու զորաբանակում։ Ու թեև նա մղում էր իր վերջին օրհասականը և մոտենում էր վճարքը, բայց արդեն գոհունակ և վրիժախինդ ժպիտով էր նայում շուրջը։ Կատարվե՛ց։ Հայոց ժողովուրդը հաղթե՛ց։ «Խոցվե՛ց զազանը»։ Խոցվեց կարեվեր, խորը։ Այդպիսի կոտորած չէին տեսել պարսից զորաբանակները։ Եվ հիմա այլևս մնում էին վերջին հարվածները, այն էլ անձնական կյանքի գինը խստիվ թանկացնելու համար։ Այս էլ իրենց համար։ Եվ քանի որ «գործ-աշխատանքը» վերջացավ՝ հիմա կարելի էր «զինամրցել»... Եվ սկսվեց այլ դրվագ, որից գեղեցիկը և զարհուրելին դժվար էր հնարել։ Վարդանը կանգնեց ասպանդակների վրա, շուրջմրջեց և օտրը ճոճեց — հավաքվե՛լ։ Իսկույն շրջապատեցին հավատարիմները, վերջինները։ Եկան՝ Սրվանձտյա Գարեգինը, Քաջբերունի Ներսեսը, Տաճատ Գնթունին, Հաբել Նահապետը, Սահակը, Արծրվին, Այրուձիի Արշամը, Դավիթ սեպուհը, Մելքոնը, Աբգարը։ Զերևացին Հովակիմ դարբինը, Հովհաննես Կարապետը, Սրապը։

Եվ շատերը, որոնց ճանաչում էին սրանք և Վարդանը անձամբ։ Նրանք ընկել էին կամ կորել... Անսպասելի դուրս յողաց Մարտիրոսը իր ծանր գուրզով և հասավ ձեռքը գցեց Վ... լանի

նժույգի ասպանդակին, գնաց հետը: Նրա քրտնամխած դեմքին դուրս էին ցայտել աչքերի բիբերը: Նա զարհուրելի էր: Հայտնվեց կրկին Պողոսը:

Սակայն արդեն՝ ինքը հուսահատ կատաղությամբ՝ վրա հասավ մատյան գունդը, որ թարմ ու կազմ գրոհել էր և ճեղքելով Վարդանի շրջապատ զորագնդերը՝ հասնում էր նրան: Նա եկավ սաստիկ ուժով և բախվելով Վարդանի զորագնդերին՝ խախտեց նրանց կազմաշարքերը: Դա առաջին ազգու հարվածն էր, որ հասցրվեց Վարդանին:

Զորագնդերը կտրատվեցին, պատառոտվեցին և սկսեցին խումբ-խումբ կռվել: Շուտով այդ էլ քայքայվեց և կազմալույծ զորագնդերի խմբերը, անհատ զինվորները, կանայք ու շղամարդիկ խառնվեցին իրար և սկսեցին կրկին ու երբեմն մի ակնթարթ հայտնրվել և անհետանալ իսկույն:

Այժմ արդեն Վարդանի զորագնդերի խառն բեկորներն էին, որ սեղմվեցին նրան: Վախճանը մոտեցավ: Դա զգացին և՛ թշնամին, և՛ վարդանանք:

Վարդանը նշան արեց հոնքերը կնճռելով ու ժպտալով: Միծաղեց, որ շսվեց: Ուժգին թափ տվեց գլուխը: Հասկացան՝ «ամենամեծ կոտորածը հիմա՛»:

Դա արդեն վերջին խիզախությունն էր: Վարդանը տվեց առաջին օրինակը: Նա անձամբ հարձակվեց թշնամու զինվորների վրա և սկսեց սրամարտը: Նրան ախոյան դուրս եկավ մի սևադեմ հաղթանդամ պարսիկ հեծյալ, որ հասավ և սրով հարվածեց նրան: Օղասպարը պատռվեց: Բայց այդ ժամանակ Արծվին թռավ երկուսի մեջտեղ և սրով կասեցրեց նրա երկրորդ հարվածը Վարդանին: Սուրը վրիպեց և իջավ Արծվիի նժույգի գլխին: Արծվին խելագարվեց, թռավ գրկեց պարսիկին: Սկսեցին մրցել: Պարսիկը վայր էր գցում նրան և հենց այն է՝ մի ուրիշ պարսիկ սուրը հասցնում էր Արծվիին՝ Վարդանը հարվածեց նրա դեմքին: Նա ընկավ: Երկրորդ հարվածով Վարդանը վայր գցեց Արծվիի ախոյանին: Վարդանի շրջապատողները ավելի սեղմեցին շարքը: Մի քանիսը կորցրել էին նժույգները, հետիոտն էին գալիս: Վարդանի նժույգն ընկավ թշնամու կացնի հարվածից: Գարեզինը իր նժույգը տվեց Վարդանին: Բայց շրջապատող թշնամին խտացավ, ծանրացավ: Բոլորի նժույգներն ընկան: Ընկավ ներսԵ Քաջբերունին: Վարդանի

տաբատը մի ձեռք էր քաշում: Վարդանը քաշեց, որ ազատի ոտը: Բայց ձեռքը համառում էր: Վարդանը պոկեց: Մի ականթարթ նայեց ներքև: Արշամն էր, որ սողալով շորեքթաթ վազում էր: Նա կարմրել էր ոտից գլուխ արյունաշաղախ: Բայց Արշամը հասավ Վարդանին և կրկին խլելով տաբատը՝ շրթունքները դողացնելով մոտեցրեց, որ համբուրի: Վարդանը կոացավ, ինքը համբուրեց Արշամի արյունոտ գլուխը: Նա բաց թողեց տաբատը:

Վարդանի ճանապարհը փակեցին: Իսկույն նրան ընդհուպ շրջապատեցին Դավիթ սեպուհը, Ձմերոցի, Այրուձիի մամիկոնյան զինվորները և շինականները մի երկու հարյուրյակ: Քշնամին արդեն սպառնալի ուժով գրոհեց: Նույնքան սպառնալի հարվածներով վարդանանք ջանում էին կանխել նրան:

Այնժամ Վարդանը կրկին առաջ ընկավ:

— Դե՛հ,— թափահարեց գլուխը և գնաց: Խումբը գրոհեց կրկին: Գնում էին ու հարվածում: Հանկարծ մի նետ զարկեց Վարդանի ճեղքված օղասպարի արանքից կրծքին: Արյունը ցայտեց: Արծվին և Դավիթ սեպուհը երկու կողմից թևերով գրկեցին նրա մեջքը և սկսեցին տանել: Դիմացից մի փիղ էր գալիս: Պարսիկները միջոց բաց արին, որ փիղն անցնի: Նրա աշտարակին մի սիպահ և երեք զինվոր նետահարում էին հայ զինվորներին:

— Անձնատո՛ւր,— գոչեց պարսիկ սիպահը աշտարակից:

— Դո՛ւ՛ անձնատուր...— գոչեց Գարեգինը:

Դավիթ սեպուհը մեջ ընկավ:

— Ապա՞, ո՞վ է Մամիկոնյան...

— Բուռ՛րս,— գոչեցին Վարդանին շրջապատողները: Այնժամ Դավիթը սաղավարտը հանեց և զարկեց գետին իր հետևը և գոչեց:

— Առա՛ջ:

Առաքելը, Արթնը, Պողոսը նիզակներով կանգնեցին փղի ուղղությամբ: Եարժումը խլեցին Գարեգինը, Տաճատը և մի խումբ նիզակավոր զինվորներ: Եվ գնացին դեպի փիղը, որ հարբած մղվեց դեպի սրանց: Հասնելով փղին բաժանվեցին երկու մասի և մտան ոմանք փղի փորի տակ, ոմանք էլ կողերից հարվածեցին: Փիղը խորդաց, շփոթվեց և սկսեց պտույտներ գործել: Հետո շուռ եկավ և ընկավ մի կողքի վրա շրջելով աշտարակը պարսից զինվորներին գլխին:

Բայց Վարդանը հայտնապես ուժասպառվում էր: Նա հետևում

էր մարտին պղտոր աչքերով: Կորյունը վազեց բռնեց նրան մեջքից: Մոտ եկան և երկաթե օղակով շրջապատեցին նաև արտաշատցի մնացած երիտասարդները: Նրանք հարվածում էին և օղակը պահում, մինչ Արծվին հասավ և գրկեց Վարդանին: Եվ Վարդանը դեռ առաջ էր մղվում, ճիշտ է արդին դանդաղ, երերուն:

Զինվորները հարվածում էին և ընկնում: Արդեն ուժասպառվել էին...

Մուկեանածի պես առաջ էր մղվում և իր սարսափելի մի աչքով և քրտնափայլ դեմքի զարհուրանքով պարսիկներին սահմուկեցնելով՝ կռվում էր Վահակը, կարծես քնի մեջ: Բայց ճապուկ վագրի պես կատաղի, բայց և հաշվով, իբրև փորձված լեռնցի՝ կռվում էր Արթնը: Նա շէր ուզում մեռնել: Դավիթը վրա հասավ և խլեց Արծրվից Վարդանի մեջքը: Վարդանը գունատվեց: Մուրը իջեցրեց և սկսեց քարշ տալ: Կորյունը վերցրեց սուրը և համբուրելով սեղմեց կրծքին: Մարտիրոսը ընկավ առաջ և սկսեց խելահեղորեն աչ ու ձախ հարվածել լինի նպատակին, լինի օդի մեջ: Սի ուժեղամարմին գինվոր Քոսով դեպի Վարդանը: Մարտիրոսը խլեց նրան և իսկույն զարկեց գետին: Բայց թշնամու տապալը իջավ նրա անգրահ մեջքին: Մարտիրոսն ընկավ: Մի նետ եկավ զարկեց Վարդանի կուրդին և մնաց: Վարդանն ուզեց հանել՝ արյունն սկսեց խեղդել: Երիտասարդները նոր կատաղի թափով հարվածներ տեղացին պարսիկների գլխին և առաջ մղվեցին: Ընկավ Պողոսը, ընկավ Տաճատ Գնթունին: Դավիթը ձեռքին նետի հարված ընդունեց, բայց պահեց Վարդանին: Մի նետ ևս զարկեց Վարդանին կրծքից: Վարդանը ուշակորույս կախվեց և գլուխը թեքեց կրծքին: Նրան վայր դրին: Գարեգինը դարձավ նրա կողմը և Արծվիին ու Դավիթին նախեց հարցական, սուր.

— Հա՞...

— Հա՛!...

Կանգ առան: Վերջ: Օրհաս: Վերջին հարվածներ: Թշնամին ողողեց և կատաղի ու արագ՝ սրախողխող արեց վերջամարտիկներին: Բոլորն ընկան:

Նեծյալներ սլացան դեպի բլուրը, ուր Նյուսալավուրտն էր:

— Վարդանն ընկավ...

Դա արդեն տեսել էին բլրից և մոզպետները ձեռքերը կարկանդակեցին օդում ուրախագին ու ջերմեռանդ.

— Փառավորյա՛լ է Որմիզդ, տվիչը հաղթութեան,—բացականչեց Որմիզդ մոգպետը — արքային արքայից փա՛ռք:

— Փա՛ռք,— ձայնեցին բոլորը,— ընկա՛վ Վարդանը:

Մոայլ նայեցին Վասակը, Գաղիշոն, Պերոզը և Վախթանը: Նրանց լավ հասկացավ Նյուսալավուրտը:

— Ընկա՛վ Վարդանը՝ պարտվե՛ց Նյուսալավուրտը,— հեզանանքով ու դառնութեամբ գոչեց նա և զայրույթով սաղավարտը գետին զարկեց,— թյո՛ւ, այսպիսի զորավարներին:

Բայց պետք էր մարտի շարունակությունը վարել: Հայերի աջ թևը դեռ դիմանում էր, ձախը, որ մասնակցել էր Վարդանի հարձակման՝ ետ քաշվեց:

— Գրրո՛՛՛հ,— գազանաձայն հրամայեց Նյուսալավուրտը,— հետպանդե՛լ աջին և ձախին:

Սիպահները սլացան: Ներշապուհը կռահել էր շարժումը: Նա ետ քաշվեց, անցավ գետը: Լուր բերին նրան, որ ընկել են Արսենը, Խորենը, իսկ ձախում՝ Քաթուլը և ճակատը սարսել: Երբ պարսից օգնական ուժերը և մատյան գունդը շարժվեցին՝ խառնաշփոթն ընկավ: Մանավանդ՝ երբ տեսան Քաթուլի թևում փախստի նմանող իրարանցումը:

Ատոմը թուավ նժույգի վրա:

— Ժամ է,— գոչեց Համազասպին և Արշավիրին: Նվ բուռն սլացքով հասավ զարկեց Ներշապուհի և Խորենի զորագնդերին:

— Ո՛ւր... ո՛ւր... — ճոճեց սուրը սպառնալի,— *ե՛տ*, ապիրատներ, *ե՛տ*, *ե՛տ*...

Զինվորները կռվելու կամ խուսափելու երկմտանքի մեջ սկսեցին զարկվել ետ ու առաջ, խուժել մեկ աջ, մեկ ձախ, հրել իրար, հարվածել սրերի կոթերով, վահաններով: Ահավոր վայրկյան էր: Մի շնչին բան կարող էր խուճապը գցել և այն ժամանակ ամեն ինչ կորած էր:

Ներշապուհի և Խորենի զորագնդերը փորձում էին քանդվել՝ ցրվելու համար, բայց Ատոմը վրա էր հասնում և սրի բուժ կողմով հարվածում:

— Ե՛տ, *ե՛տ*, կվտոե՛մ... *ե՛տ*, *ե՛տ*... — ծղրտում էր դևի պես Ատոմը, և սրի պես փայլատակելով մխրճվում ամեն կողմ: Զարհուրելի էր նա այդ պահին:

Դաժանացան Համազասպն ու Արշավիրը ևս:

Զորքը բեկվում էր, շրջվում ետ, դեպի թշնամին:

Քշնամու հետ խառնված, նրա հետ մարտնչելով դուրս եկան շրջապատման մեջ ընկած համազունդի և գլխավորների մնացորդներից, որոնք կոպողների արյամբ ողողված, գետն ընկած անտառամասերի պես ծփալով գալիս էին: Նրանց մեջն էին Սահակն ու Առաքելը: Նրանք վազեցին դեպի զորքը:

— Ի՞նչ, փախչո՞ւմ եք, սրիկաներ, — ծղրտաց Առաքելը, — հի՛ի՛իմի ձեր օրը կանխձեմ...

Ու սկսեց հարվածել սրով աչ ու ձախ: Զինվորներն իրար վրա սկսեցին գոռալ.

— Ծ'տ տվեք, Ե'տ...

Հարվեց Ատոմը և հենց որ որսաց բեկման ակնթարթը՝ պըրկվեց թամբի վրա և զիլ գոչեց.

— Իմ հետևի՛ց, գրո՞հ, ի մա՛ա՛ա՛րտ...

Ու զարկեց մտավ ճակատամարտ: Զորաբանակը գնաց հետևվից: Պարսիկները ետ տվին: Սակայն հայ զինվորները կրկնեցին հարձակումը: Պարսիկները կանգ առան մի վայրկյան, բայց կրկին հարձակվեցին: Հայերը վերցրին իրենց հարվածների իմաստը: Դա հարվածն էր ու նահանջը կրկին ու կրկին:

Ու սկսվեց հարվածն ու նահանջը: Սկսվեց մի տաժանելի դանդաղամարտ: Գրոհում էին թշնամուն, զարկում, ետ քաշվում: Կրկին զարկում, ետ քաշվում: Զկա ոչինչ անիծյալ ավելի՛ քան նահանջը...

Մոտեցավ ներշապուհը:

— Ընկա՞վ...

— Ընկավ... — դառն ու սուռը ասաց Ատոմը:

Համազասպը լաց էր լինում: Արշավիրը գեմքը մի կողմ էր պահում, որ շտեմենն արցունքները:

Բայց ամեն ինչ սկսեց կատարվել հատուկտոր, խառնակ: Եվ կոպում էին և ընթանում, հարցնում, իմանում, որ ընկավ սա, ընկավ նա:

Կոպում էին ինչպես հախուռն մղձավանջի մեջ, մեծ երազում և ապա այլևս չէին թույլ տալիս իրենց որոնելու իրենց մտերիմներին: Ոչ ոք չէր հարցնում մատուռում մնացած Մեծ Տիկնոջը, մյուս տիկիներին, գեղջկուհիներին: Շատերը չիմացան շատերի վիճակը: Փրկվում էր հայոց ժողովուրդը:

Ուրեմն էլ ի՞նչ սա, էլ ի՞նչ նա...

Հայոց ժողովուրդը գործում էր իր գերագույն ճիգը—փրկում էր իրեն... Դաժան էր այդ ճիգը, անգութ, և դրա մեջ էլ էր նրա գերագույն իմաստութիւնը:— Փրկութիւնը: Վարդանի և վարդանանց արյունը տվեց նրան այդ նվերը:— Հնարը: Հնարավոր էր, ուրեմն և պետք է փրկվել: «Գազանը խոցված էր կարելիք»:

Ատոմը, Արշավիրը, Համազասպը երբեմն ետ էին նայում անցած ճանապարհին և տխրութիւնով հիշում այն քաջերին, որ այլ անապարհով եկան այս հաղթութիւնը ձեռք բերելու:

Նայեցին դիմացի մատուռը, ուր թողին Մեծ Տիկնոջը: Եվ սարսափ: Ահա նա: Նահանջող հայ զորաբանակին ընդառաջ էր վազում նա... Մեծ Տիկինը: Նա հերարձակ էր, բոկոտն, տագնապաժպիտ: Նրա հետևից հասնում էր կույսերի խումբը՝ ետ պահելու նրան: Բայց նրա սիրտը վկայել էր արդեն աղետը: Զինվորները գլուխները խոնարհեցին և անցան: Ատոմից հրաման չկար այլ շարժումների: Մեծ Տիկինը կանգ առավ, նայեց Ատոմին, շոքեց և հողը գլխին ածելով խուպուտ կռնչաց.

— Սև հավը կանչե՛ց Մամիկոնյան տան վրա...

— Հայոց աշխարհքն ապրի, Մեծ Մայրի,— գոչեցին զինվորները, կանգ առան, շրջվեցին կրկին դեպի թշնամին՝ պատրաստվելով հերթական գրոհի,— Հայոց աշխարհքն ապրի...

— Ապրի՛, Վարդանիս հոգո՛վ, աշխարհ զինվորյալներիս հոգո՛վ, դո՛ւք ապրեք, զավակնե՛րս...

Եվ ոսկրուտ ձեռքը ուժով զարկեց գետնին խլեց մի բուռ հող և նետեց զինվորների վրա: Բայց հանկարծ երերաց, աչքերը ոլորեց և բերանքսիվայր ընկավ գետին: Վիշտն ու ուժասպառումը հարվածեցին նրան:

Ատոմը վրա հասավ և իջնելով նժույգից թեքվեց, համբուրեց նրա արծաթ մազերը: Զինվորները առանց հրամանի մարմինը դրին երկար վահանի վրա, և շորս ուժեղ մարտիկներ բարձրացրին Սպարապետի մոր դիակը:

— Առավե՛ն՛լ,— գոչում էր Ատոմը,— և նրա ձայնի խրոխտ շեշտի մեջ զգացվում էր պարզ,— «Փրկվա՛ժ ենք, հաղթո՛ւմ ենք»:

Զորքը սկսեց հավատալ, հուսալ, կռվել ավելի մեծ ճիգերով:

— Առավե՛ն՛լ,— գոչում էին ռազմի շունչն առած, վարպետացած Առաքելն ու Սահակը, որոնց ռամկական զորագնդերը ար-

դեն ձուլվել էին Կանոնավոր զորաբանակի մեջ, Կովում ավելի ուժով, ավելի կատաղի:

Գյուղացիական զանգվածներն սկսեցին ազդել իրենց թվով: Զորքն սկսեց սեղմվել նրան, ջերմանալ նրամով:

Սրտապնդիչ էր երկիրը: Ռամկական, ժողովրդական դիմադրությունը ծավալվեց, սկսեց ամեն կողմից հարվածել պարսից զորաբանակին, ցերեկային հարվածներին հաջորդեցին գիշերայինները: Ապա սկսեցին գզգզել թշնամուն, բաժան-բաժան արին, գցեցին իրենց հետևը լեռներն ու կիրճերը, սկսեցին մաշել ամեն ժամ անդադար:

Գնում էին հայոց ժողովրդի հետևից Նյուսալավուրտը, Դողվըճը, հետևից Միհրներսեհը, Պերոզը, Վախթանգը, մոգպետները: Նաև Վասակը՝ իր դավաճանակիցներով:

«Վիրավոր գազանը» սակայն համառ էր ընկել հայոց ժողովրդի հետևից: Մոնչում էր, խորդում էր իր փղերով, խրխնջում էր իր բազմահազար նժույգներով, զրնգում, որոտում էր, թեև գնում էր հաղթանակի երթով, բայց չէր կարողանում հաղթահարել: Պատրանք էր այդ հաղթությունը: Փանակը ձեռքից գնացել էր, մաշվում էր:

Սկսվում էր թշնամու մաշման երկարատև, ժանր շրջանը:

Արյունոտող հայ զորքը իր մեծ զոհերի գնով հիմք էր դրել հաղթության, զոհեր, որ եղան սև դավաճանության շնորհիվ:

---

Հետապնդման տաժանքների մեջ Միհրներսեհին և Նյուսալավուրտին սուրհանդակ հասավ Հազկերտի հրամանով. «Շուտափույթ վերջացրու հայոց գործերը և արշավիր Փայտակարան՝ դիմագրավելու հոներին, որ խուժել են քանդված Ճորա Պահակից»:

Եվ հետապնդող զորաբանակի հետևից նժույգները անկամ վարող Միհրներսեհը, Նյուսալավուրտը և մյուս մեծամեծները Վասակի և մյուս դավաճանների հետ սկսեցին դառն վեճը.

— Ո՞վ թույլ տվեց, որ Վարդանը դաշինք կոխ հոների հետ...

— Ո՞վ էր թաքցնում հայերի ուժը... շէր զգուշացնում արքային...

— Ո՞վ եղավ պատճառ այս պարտված հաղթության...

— Ո՞վ է պատասխանատու...

Միհրնեբրսեհը... Նյուսալավուրտը... Վասակը...

Եվ վիճում, վիրավորում էին իրար, սպառնում էին գոհճիկորեն.

— Դատ կլինի, կդատեն բոլորին...

Իսկ ռազմական գիտակը շարագույժ ձայնով նրանց ականջի տակ շարունակ մրթմրթում էր հաշիվը.

— Միայն ընտրանին՝ ինը մեծամեծ, երեք-չորս հազար՝ հատուկ զորաբաժին, քառասուն հազարի մոտ՝ սպանված... Որքան կլինի վիրավորը... Իսկ հայերը հազիվ ընտրանին հազար մարդ և տասը-տասնհինգ հազար մարտիկ Գասարակ...

— Վերջացրո՞ւ հայոց գործերը, արշավի՞ր Փայտակարան, — մոնչում էր Նյուսալավուրտը, — վերջացրո՞ւ տեսնեմ...

Կովում էր Արտակ Մոկացը և երազում: Կատարվեց կատարվելիքը: Արհավիրքը, որ այնպես դրոգալից եկել էր՝ հիմա փովում էր իր հետապնդած ճանապարհին և սկսում անցնել: Կովում էր Արտակը և շուտ-շուտ ինքն իրեն հարցնում. «ո՞ւր է Անահիտը, Աստղիկը, ո՞ւր են Մամիկոնյան տիկիները, Մեծ Տիկինը, Խանգուժը, ո՞ւր են Պողոսը, արտաշատցի երիտասարդները... Արծվի՛ն», — բարձր ձայնում էր նա, և նրա սիրտը մղկտում էր:

Վերջացավ անձնական ամեն տենչ ու երազ, վերջացան անձերը, եկավ Մեծ Հնդհանրականը՝ Աշխարհն հայոց: Նա սկսեց ապրել: Հաղթում էր նա: Այս բոլոր կովողների հոգու խորքում արդեն կայծում էր փրկության կրակիկը: Նա պլպլում էր մի փոքրիկ աստղիկի շափ, բայց լուսավորում էր ողջ Աշխարհն հայոց:

Նայում էր Արտակը հեռուն, մոտիկ և նրա աչքովն էին ընկնում նրանք, որոնց համար բախտը գրել էր՝ վերապրել և պատմել թե ինչպես եղավ բանը: Մերթ կովող զորագնդերի մեջ երևում էր ներշապուհը՝ համառ ու դիմադրող, մերթ Համազասպը՝ ներքուստ ներհակ ու դիմացկուն, երբեմն վշտահար Հազարապետը՝ հնօրյա ուժերը վերակոչած, երբեմն Արշավիրը՝ հուսադիր. լավատես... Ահա՛ Եղնիկը, Ղևոնդ Երեցը, Եղիշեն՝ իմաստուն ու ոգելից: Արտակ Մոկացը լսում էր Եղիշեին: Եղիշեն պատմաբանում էր.

— ...Յազգէն Մամիկոնէից՝ քաջն Վարդան, յազգէն Խորխոռնեաց՝ Խորէնն կորովի, յազգէն Պալունեաց՝ արին Արտակ, յազգէն Գնթունեաց՝ զարմանալին Տաճատ, յազգէն Դիմաքսենից՝ իմաստունն Համայակ, յազգէն Քաջբերունեաց՝ հրաշակերտն Ներսէհ,

յազգէն Գնունեաց՝ մանուկն Վահան, յազգէն Ընծայնոց՝ արդարն Արսեն, յազգէն Սրվանձտյս՝ յառաջադէմն Գարեգին...

— ...Ե՛վ տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, և՛ գեղշկուհիք քաջակորովք է՛... առհասարակ ժողովուրդն հայոց զինվորյալ...

Լսում էր Արտակ Մոկացը, հիշում անձկալիններին, սիրելիներին, ծանոթ անծանոթ բյուրավորներին, որ ընկան, և իբրև երացում կռվում էր մնացորդների շարքում, որ սիրտը ամոքի:

Հայոց աշխարհի ձորերից ու դաշտերից խումբ-խումբ, մենակ, երբեմն և ստվար զանգվածներով գալիս էին գյուղացիներ զինված ամեն ինչով, որ կարելի էր, գալիս էին անվերջ, սպառնալիորեն անվերջ, համալրում և զորացնում էին կռվող զորամասերը: Քանի գնում, կռիվում էին մարտիկները, դառնում կատաղի, խոցող, հանդուգն:

Այդպես անցան օրեր, տարիներ, անցան դարեր...

---

Մենավոր մի դամբարան է ծածկում իր տակին ամփոփված մի հոգու հավերժական հանգիստը: Ասում են Վարդանն է այդտեղ: Ճշմարիտ է դա, — դժվարին է ասել: Բայց դաշտավայրի վճիտ լռության մեջ երբեմն կլսես մի կոկորդային մեղեդիի մեղմաձայն դեղգեղանք: Դա մի վանական է թերևս, կամ այլ անցորդ, կամ մի խումբ մարդիկ: Այդ մեղեդին երգվում է այն պահին, երբ ոտը դնում են Ավարայրի դաշտավայրը: Դարերի հին երգն է դա վարդանանց նվիրված:

Ահա այդ հավերժական երգի մեջ են արդեն ճշմարտորեն ամփոփված Վարդանը և վարդանանք:

Դեմիրճյան Գեորգի Կարապետի

Վ Ա Ր Գ Ա Ն Ա Ն Ք

Գիրք երկրորդ

Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան

Տեխ. խմբագիր՝ Վ. Մ. Եզանյան

Վերատպագրող սրբագրիչ՝ Լ. Ա. Ղազարյան

Հանձնված է արտագրության 13/111 1968 թ.:  
Ստորագրված է տպագրության 30/VII 1968 թ.:  
Քուղի տպագրական Պ 2, 60×64<sup>1</sup>/<sub>16</sub>, տպագր-  
35,0 մմ.=32,55 պայմ. մմ., հրատ. 31,4  
մմ.+1 ներդիր: Պատվեր 1181, տիրաժ 30.000:

Գինը՝ 1 ա. 10 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—Թ,  
Տերյան 91:

Հ1102 Մինիստրների սովետի մամուլի պետա-  
կան կոմիտեի պոլիգրաֆարգյունարհրության  
գլխավոր վարչության Հակոբ Մեղապարտի ան-  
վան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: